Bible. Armen. (1805)

ԱԾԱՇՈՒՆՉ
ՄԱՏԵԱՆ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Ըստ Ճշգրիտ Թարգմանութեան Նախնեաց մե-
րոց՝ 'ի հելլենականն հաւատարմագոյն ընա-
գրէ 'ի հայկականս բարբառ։

Նորոգապէս 'ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գա-
ղափարէ, համեմատութեամբ այլ եւ այլ օրինակաց, հանդերձ նո-
րոգ ծանօթութեամբք բնաբանին։

Յաշխատասիրութէ Տն Հ. Յովհաննու Զօհրապեան
Վրդպտի, 'ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ Րաբու-
նապետի և առաջին Աբբայի։

Տպագրեալ հրամանաւ Տ. Տ. Ստեփաննոսի Ագոնց Աբբապատի-
Արհիեպս., և Առաջնորդի Ուխտին սբյն Ղազարու։

Բաժանեալ 'ի Չորս Հատորս։

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

Յորում բովանդակի Նոր կտակարան, սկսեալ 'ի
Մատթէոսի աւետարանէն մինչև ցՅայտնութէ։

1805 'Ի ՎԵՆԵՏԻԿ· ՌՄԾԴ
'Ի Գործարանի Սբյն Ղազարու։

43

Digitized by Google

~~III 9693~~
~~OL 42277.5~~
OL 44900.1
OCT 16 [illegible]
LIBRARY.
Pierce fund.

Digitized by Google

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

Բովանդակելոց յայս Չորրորդ Հատոր։

ա. Աւետարան ըստ Մատթէոսի . . . . 5։
բ. Աւետարան ըստ Մարկոսի . . . . 70։
գ. Աւետարան ըստ Ղուկասու . . . . 114։
դ. Աւետարան ըստ Յովհաննու . . . . 183։
ե. Գործք Առաքելոց . . . . 242։
զ. Թուղթ Յակոբայ. կաթուղիկէ . . . . . 320։
է. Թուղթ Պետրոսի. առաջին . . . . . 329։
ը. Թուղթ Պետրոսի. երկր. . . . . . . 339։
թ. Թուղթ Յովհաննու. առաջին . . . . . 346։
ժ. Թուղթ Յովհաննու. երկր. . . . . . . 355։
ժա. Թուղթ Յովհաննու. երրդ . . . . . . 357։
ժբ. Թուղթ Յուդայի. կաթուղ. . . . . . . 359։
ժգ. Պաւղոսի առաքելոյ առ Հռովմայ. Թուղթ . 371։
ժդ. Առ Կորնթացիս. առաջին . . . . 402։
ժե. Առ Կորնթացիս. երկր. . . . . 433։
ժզ. Առ Գաղատացիս . . . . 454։
ժէ. Առ Եփեսացիս . . . . 465։
ժը. Առ Փիլիպեցիս . . . . 476։
ժթ. Առ Կողոսացիս . . . . 484։
ի. Առ Թեսաղոնիկեցիս. առաջին . . . . . 492։
իա. Առ Թեսաղոնիկեցիս. երկր. . . . . . 499։
իբ. Առ Եբրայեցիս . . . . 505։
իգ. Առ Տիմոթէոս. առաջին . . . . 528։
իդ. Առ Տիմոթէոս. երկր. . . . . 537։
իե. Առ Տիտոս . . . . 544։
իզ. Առ Փիլիմոն . . . . 548։
իէ. Յայտնութիւն սրբոյն Յովհաննու առաքելոյ . 553։

Յաւելուած . . . . 1։

Digitized by Google

Digitized by Google

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին որ ըստ Մատթէոսի։

	մատթ	մարկ	ղուկ	յովհ
Վասն մոգուցն	ա			
Վասն կոտորածի մանկանցն	բ			
Վասն յառաջընթացի կարապետին յովհաննու մկրտչին	գ		ե	
Վասն վարդապետութեան փրկչին	դ			
Վասն երանութեանն	ե		ժէ	
Վասն բորոտին	զ	դ	ժբ	
Վասն հարիւրապետին	է		ժը	զ
Վասն զոքանչին պետրոսի	ը	բ	թ	
Վասն բժշկութեան ա̄մ ցաւոց	թ	գ	ժ	
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զկնի	ժ		լգ	
Վասն սաստելոյն 'ի վերայ ջրոյն	ժա	ժ	իգ	
Վասն դիւահարացն	ժբ	ժա	իդ	
Վասն անդամալուծին	ժգ	ե	ժդ	ժդ
Վասն մատթէի	ժդ	զ	ժե	
Վասն դստեր ժողովրդապետին	ժե	ժբ	իե	
Վասն փեսաւորին	ժզ	ժդ	իզ	
Վասն երկուց կուրացն	ժէ			
Վասն խլին և համր դիւահարին	ժը			
Վասն առաքելոցն իշխանութե	ժթ	ժգ	իէ	
Վասն առաքելոցն 'ի յովհաննէ	ի		ի	
Վասն՝ որոյ՞ վասն գրեցեալ էր	իա	է	ժէ	
Վասն կոյր և խուլ դիւահարին	իբ		լթ	
Վասն՝ որ խնդրէին նշան	իգ		խա	
Վասն առակացն	իդ	թ	խթ	
Վասն յովհաննու, և հերովդէի	իե	ժե		
Վասն հինգ հացիցն	իզ	ժզ	իը	ժե
Վասն երթալոյն 'ի վերայ ծովուն	իէ	ժէ		ժզ
Վասն անցնելոյն զպատուիրանաւն ա̄յ	իը	ժը		
Վասն կնոջն քանանացւոյ	իթ	ժթ		
Վասն բժշկելոյ զժողովուրդն	լ			
Վասն եւթն հացիցն	լա	իա		
Վասն խմորոյ փարիսեցւոցն	լբ	իբ	խբ	
Վասն՝ որ 'ի կեսարիա հարցմանն	լգ	իգ	իթ	
Վասն այլակերպութեանն տ̄ն	լդ	իդ	լ	
Վասն լուսնահարին	լե	իե	լա	
Վասն խնդրելոյ զերկդրամեանն	լզ			
Վասն հարցանելոյ՝ թէ ո՞ է 'ի ա̄րք մեծ	լէ	իէ	լէ	

	Մատթ	Մարկ	Ղուկ	Յովհ
Վասն առակին հարիւր ոչխարին	ԼԸ		ԾԵ	
Վասն թողլոյն զեղբօր պարտեացն	ԼԹ			
Վասն հարցանելոյն թէ արժան է արձա-				
կել առն զկին	Խ	ԻԸ		
Վասն հարցանելոյ մեծատանն զՏ	ԽԱ	ԻԹ	ԿԲ	
Վասն վարձկանութեան մշակացն	ԽԲ			
Վասն որդւոցն Զեբեդեայ	ԽԳ	Լ		
Վասն երկուց կուրացն	ԽԴ	ԼԱ	ԿԳ	
Վասն իշուն, և յաւանակին	ԽԵ	ԼԲ	ԿԸ	ԺԴ
Վասն կուրացն, և կաղացն	ԽԶ			
Վասն չորանալոյ թզենւոյն	ԽԷ	ԼԳ		
Վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետա-				
ցն, և ծերոց	ԽԸ	ԼԵ	ԿԹ	
Վասն երկուց որդւոցն՝ առակաց	ԽԹ			
Վասն այգւոյն առակին	Ծ	ԼԶ	Հ	
Վասն կոչեցելոց 'ի հարսանիսն	ԾԱ		ԾԳ	
Վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն	ԾԲ	ԼԷ	ՀԱ	
Վասն սադուկեցւոցն	ԾԳ	ԼԸ	ՀԲ	
Վասն օրինականացն	ԾԴ	ԼԹ		
Վասն զՏն հարցանելոյն զփարիսեցիսն	ԾԵ	Խ	ՀԳ	
Վասն վայ տալոյ դպրացն, և փարիսեց-				
ւոցն	ԾԶ		ԽԴ	
Վասն կատարածի	ԾԷ	ԽԱ	ՀԵ	
Վասն աւուրն և ժամուն	ԾԸ	ԽԲ	ԽԶ	
Վասն տասն կուսանացն	ԾԹ			
Վասն զաւանդեան տալոյ	Կ		ԿԵ	
Վասն գալստեանն Տն	ԿԱ			
Վասն օծանելոյ զՏէրն իւղով	ԿԲ	ԽԳ	ԻԱ	ԺԳ
Վասն պատրաստելոյ զպասեքն	ԿԳ	ԽԴ	ՀԶ	
Վասն օրինաւոր խորհրդոյն	ԿԴ			
Վասն մատնութեան Տն	ԿԵ	ԽԵ		
Վասն ուրացութեան պետրոսի	ԿԶ	ԽԶ		
Վասն յուդայի զղջմանն	ԿԷ			
Վասն խնդրելոյ զպատուականին մարմինն	ԿԸ	ԽԷ	ՁԲ	ԺԷ

Համաձայնութիւն նախասացեալ գլխոցս:

'Ի հինգ տեղւոջ՝ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց:
'Ի հինգ տեղւոջ՝ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց:
'Ի հինգ տեղւոջ՝ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց:
'Ի հինգ տեղւոջ՝ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց:
'Ի Մատթէոս՝ ԽԶ տեղի երեքին համաձայնին:
'Ի Մարկոս՝ ԽԸ տեղի երեքին համաձայնին:
Ղուկաս՝ ԽԵ տեղի երեքին համաձայնին:
Յովհաննէս՝ Ը տեղի երեքին համաձայնին:
Մատթէոս՝ Ե տեղի երկուքին համաձայնին:

Digitized by Google

Մարկոսի՝ ժբ գլուխք երկոսեան համաձայնին ։
Ղուկասու՝ ժբ գլուխք երկոսեան համաձայնին ։
Յովհաննու ոչ ունի ։
Մատթէոսու ՚ի ժե գլուխ՝ միայն ։
Մարկոսու է գլուխ՝ միայն ։
Ղուկասու լթ գլուխ՝ միայն ։
Յովհաննու լէ գլուխ՝ միայն ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ։

Աւետարանս որ ըստ Մատթէոսի գրեալ է. զի ինքն Մատթէոս աշակերտ մի գրեաց զաւետարանս զայս։ Եւ պատմէ մեզ խոնարհեալն զըստ մարմնոյ ծննդեան ցուցանէ ՚ի զաւակէ դաւթի. Որոյ և զազգահամարն ծագեալ մինչև ՚ի քն՟ ազգս քառասուն և երկու։ Բերէ ըստ կարգի և զմկրտութիւն յովհաննու, և՚ի լերինն ՚ի դիւաց զփորձութիւն. և նշանս և արուեստս մեծամեծս ՚ի քրիստոսէ եղեալ. և զընտրութիւն աշակերտացն. և զՏն՟ խորհրդոյ մատնութեան. և զխաչարձն, զի մատնեցաւ զվեղապատի, և խաչեցաւ մարմնով, և մարմինն եդաւ ՚ի գերեզմանի, և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. նոյն և զերկնից առնուլ յարութիւն. և զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամ հեթանոսս և մկրտել զնոսա. պատուիրեաց լինել ընդ նոցա զամ աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի։

Մատթէոս՝ գրեաց զաւետարանս իւր յերուսաղէմ քաղաքի ՚ի մէջու եբրայեցի, զինի ութ ամի համբառնալոյ քրիստոսի, ՚ի խնդրոյ եկեղեցւոյն երուսաղեմի։ Ունի գլուխս յծե։ Վկայութիւնս լբ։ Տունս. ՌՈ։

Մատթէոս Թարգմանի՝ Երգ կենաց։

---

* Յօրինակին՝ վերնագիրք գլխոց աւետարանացս ըստ Եւսեբեայ ինձ անհամաձայն էին գրեալ. զի ՚ի մատթէոսին եդեալ էր. Սկիզբն գլխոց մատթէոսի աւետարանին։ և յովհաննու. Գլուխք Ը յովհաննու աւետարանին։ Իսկ մարկոսի և ղուկասու՝ Սկիզբն գլխոց աւետարանին որ ըստ մարկոսի, կամ ղուկասու։ յորս մեք հայեցեալ յայլ ևս ուղղագոյն օրինակս՝ միացեալ եդաք ըստ պատշաճին։
* ՚Ի գումարումն համաձայնութեանց սոց և ՚ի սկզբանս գլխոց, և ՚ի թուագիրս նոցին՝ գտանէին բազում պարբերութիւնք օրինակացս ՚ի միջանս. զորս առեալ համարեալ մի ըստ միոջ նշանակել տալով, զայսպիսի վրիպակս մեր ամս օրինակի ըստ կարի ուղղագրեցաք ՚ի նոյանս։

Digitized by Google



Երթայք յաշխարհ ամ՟, եւ քարոզեցէք
զաւետարանն ամ՟ արարածոց ։

Digitized by Google

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼ. Ա.

1 ԻՐՔ ԾՆՆԴԵԱՆ ՅԻ-
սուսի քՙի որդւոյ դաւթի որդւոյ
2 աբրահամու: * Աբրահամ ծնաւ զԻ-
սահակ: Իսահակ ծնաւ զյակովբ:
Յակովբ ծնաւ զյուդա, և զեղբարս
3 նր: * Յուդա ծնաւ զփարէս և զզարա 'ի Թամարայ:
4 Փարէս ծնաւ զեզրոմն: Եզրոմն ծնաւ զարամ: * Ա-
րամ ծնաւ զամինադաբ: Ամինադաբ ծնաւ զնաասոն:
5 Նաասոն ծնաւ զսաղմոն: * Սաղմոն ծնաւ զբոոս 'ի
հռաքաբայ: Բոոս ծնաւ զովբէդ 'ի հռութայ: Ովբէդ
6 ծնաւ զյեսսէ: Յեսսէ ծնաւ զդաւիթ արքայ: * Դա-
7 ւիթ ծնաւ զսողոմոն 'ի կնոջէն ուրիայ: * Սողոմոն
ծնաւ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

* Յօրինակին Զբրամ՚այ և յայլս ոմանս պահարէր ձեռագիր ա-
ւետարանիս ձափննսի. զոր Զբր առեալ յայլոց Բաղմայ՝ ըղո-
ցաք համեմատ ձեռագրաց յաջորդ աւետարանացն: Յորս ոսկան
չէ լափննականէն դնէ. Մեյ աւետարանին յնի քնի ըստ
մատթէի, կամ, ը մարկոսի. և ն:
Գլ. ա. (2) Ոսկան. Եւ զեղբարսն նր: (3) Ոսկան. Եւ
զարա 'ի Թամարայ: (5) Ոսկան. 'Ի Հռաքեբայ. կամ. 'ի
Հռաքաբայ: Բոոս ծնաւ զովբեթ 'ի Հռ": (6) Ոսկան յա-
ւելու. Դաւիթ արքայ ծնաւ զսո": (7) Բծշ. Զօրբո.

Digitized by Google

ծնաւ զռոբովամ: Ռոբովամ ծնաւ զաբիա : Աբիա՝
ծնաւ զասափ : * Ասափ ծնաւ զյովսափաթ : Յովսա- 8
փաթ ծնաւ զյովրամ: Յովրամ ծնաւ զոզիա : * Ոզիա 9
ծնաւ զյովաթամ: Յովաթամ ծնաւ զաքազ: Աքազ
ծնաւ զեզեկիա : * Եզեկիա ծնաւ զմանասէ : Մանա- 10
սէ ծնաւ զամովս: Ամովս ծնաւ զյովսիա : * Յովսիա 11
ծնաւ զյեքոնիա, և զեղբարս նր̃ առ գերութ̃ն բաբե-
լացւոց : * Յետ գերութեանն բաբելացւոց ծնաւ յեքոնիա 12
զսաղաթիէլ: Սաղաթիէլ ծնաւ զզօրաբաբէլ : * Զօ- 13
րաբաբէլ ծնաւ զաբիուդ : Աբիուդ ծնաւ զեղիակիմ:
Եղիակիմ ծնաւ զազովր : * Ազովր ծնաւ զսադովկ : 14
Սադովկ ծնաւ զաքին : Աքին ծնաւ զեղիուդ : * Ե- 15
ղիուդ ծնաւ զեղէազար : Եղէազար ծնաւ զմատթան :
Մատթան ծնաւ զյակովբ : * Յակովբ ծնաւ զյովսէփ 16
զայրն մարեմայ՝ որում խօսեցեալ զմարիամ կոյս․ յոր-
մէ ծնաւն Յս̃, որ անուանեցաւ Քս̃ : * Արդ՝ ամ̃ 17
ազգքն յաբրահամէ մինչև 'ի դաւիթ՝ ազգք չորեքտա-
սանք : Եւ 'ի դաւթէ մինչև 'ի գերութեն բաբելացւոց՝
ազգք չորեքտասանք : Եւ 'ի գերութենէն բաբելացւոց
մինչև 'ի քս̃՝ ազգք չորեքտասանք :
* Եւ յս̃ի քս̃ի ծնունդն՝ էր այսպէս : Խօսեցեալ զմայր 18
նր̃ մարիամ յովսեփու, մինչև եկեալ առ միմեանս՝ գը-
տաւ յղացեալ 'ի հոգւոյն սր̃բյ : * Եւ յովսէփ այրն նր̃, 19
քանզի արդա՛ր էր՝ և ո՛չ կամէր առակել զնա, խորհե-
ցաւ լռելեա՛յն արձակել զնա : * Եւ մինչ դեռ նա զայս 20
ածէր զմտաւ, ահա հրեշտակ տն̃ 'ի տեսլեան՝ երևե-
ցաւ նմա՝ և ասէ․ յովսէփ որդի դաւթի, մի՛ երկնչիր
առնուլ առ քեզ զմարիամ կին քո․ քանզի որ 'ի նմայն
ծնեալ է՝ 'ի հոգւոյն սր̃բյ է : * Ծնցի՛ որդի․ և կոչե- 21
ցես զանուն նր̃ յս̃․ զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր
'ի մեղաց իւրեանց : * Այլ այս ամ̃ եղև, զի լցցի որ 22
ասա-

վամ․ կամ, զռոբովամ: ռոբովամ ծնաւ : (8) Ոմանք․ Զյովսափատ․ յովսափատ ծն՛՛: (8) Յօրինակին․ ծնաւ զովրամ: (10) Ոմանք․ Զմանասսէ․ մանասսէ ծն՛՛: (10) Ոսկան․ Զամօն․ ամօն ծնաւ : (12) Ոմանք․ Զզաւրոբաբէլ : (15) Ոմանք․ Զեղիազար․ եղիա՛՛: (16) Ոմանք․ Զայրն մարիամու ․․ ծնաւ յս̃, որ անուանեցաւն : (17) Ոսկան․ Ամ̃ ազգք յաբ՛՛: (17) Ոմանք երիցս ևս․ Ազգ չորեքտասանք : (18) Ոմանք․ Խօսեցեալ զմայրն նր̃ ․․․ 'ի հոգւոյ սր̃բյ : (19) Ոմանք․ Այր նր̃ : (19) Ոսկան․ Եւ ոչ կամեցաւ ա՛՛ (20) Ոմանք․ Նա զայն ածէր ․․ 'ի տեսլեանն երև՛՛․․ որ 'ի նմա ծնեալ է՝ 'ի հոգւոյ սր̃բյ : (21) Ոմանք․ Կոչեսցեն զանուն նր̃ : Ուր օրինակ մի․ Կոչեսցէ զա՛՛: (22) Ոմանք․ Ասացաւ 'ի տնէ ․․ եսայեայ մար՛՛:

Digitized by Google

23 ասացաւն 'ի Տեառնէ 'ի ձեռն եսայեայ մարգարէի: * Ահա
կոյսն յղասցի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա
24 Էմմանուէլ. որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած: * Եւ զար-
թուցեալ Յովսէփ 'ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց
25 նմա հրեշտակն Տեառն, և առ յինքն զկինն իւր: * Եւ ոչ
գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ. և
կոչեաց զանուն նորա Յիսուս:

ԳԼ: Բ.

1 Իսկ 'ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղեհեմ հրէաստանի յա-
ւուրս Հերովդի արքայի: Ահա մոգք յարևելից
2 եկին յԵրուսաղէմ, * և ասեն. ո՞ւր է որ ծնաւ ար-
քայն հրէից. զի տեսաք զաստղն նորա յարևելս, և ե-
3 կաք երկիր պագանել նմա: * Եւ իբրև լուաւ արքայ
Հերովդէս՝ խռովեցաւ, և ամ Երուսաղէմ ընդ նմա:
4 * Եւ ժողովեալ զամ զքահանայապետս և զդպիրս ժո-
ղովրդեանն, հարցանէր 'ի նոցանէ՝ թէ ո՞ւր ծնանիցի
5 Քրիստոս: * Եւ նոքա ասեն ցնա, 'ի Բեթղեհեմ հրէաստա-
6 նի: Զի այսպէս գրեալ է 'ի ձեռն մարգարէին: * Եւ
դու Բեթղեհեմ երկիր Յուդայ՝ ոչինչ կրտսեր ես յիշ-
խանս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուես-
7 ցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: * Յայնժամ Հերովդէս
գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց 'ի նոցանէ զժա-
8 մանակն աստեղն երևելոյ: * Եւ արձակեաց զնոսա 'ի
Բեթղեհեմ, ասէ. գնացէք ստուգեցէք վասն մանկանն,
և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես ե-
9 կեալ երկիր պագից նմա: * Եւ նոքա իբրև լուան 'ի
թագաւորէն՝ գնացին. և ահա աստղն զոր տեսին յա-
րևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց 'ի վերայ
10 ուր էր մանուկն: * Իբրև տեսին զաստղն, խնդացին
11 յոյժ ուրախութիւն մեծ: * Եւ իբրև մտին 'ի տունն, տե-
սին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, և
անկեալ երկիր պագանէին նմա. և բացեալ զգանձս
իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի, և կնդ-
րուկ,

---

(23) Բնաւ. Ահա կոյս յղասցի... Եմմանուէլ: Ի օրինակ Վ. Էմմանուէլ: Ի այլ օրինակ Մ. Եմմանուէլ: (24) Ոմանք. Յինքն զկին իւր: (25) Օրինակ Մ. Զորդին զանդրան": Գլ. Բ. (1)(5) Ոմանք. 'Ի Բեթղեհեմ Հրէաստանի": (2) Ոմանք. Զաստղ նորա... երկիրպագագ": (4) Ոմանք. Զամ քահանայապետս և զդպ": (5) Օրինակ Մ. 'Ի ձեռս մարգարէին: (6) Ոմանք. Ոչինչ կրսեր ես: (7) Ոմանք. Զժամանակ աստեղն: (8) Ոմանք. Եւ արձակեաց զնոսա 'ի Բեթղ": (10) Ոմանք. Եւ իբրև տեսին: (11) Ոմանք. Մտին 'ի տունն... մատուցանէին նմա. և զմուռս:

Digitized by Google

րուկ, և զմուռս։ * Եւ հրաման առեալ ՚ի տեսլեան, 12
չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ
գնացին յաշխարհն իւրեանց։ * Եւ իբրև գնացին նք 13
անտի, ահա հրեշտակ տն երևէր ՚ի տեսլեան յովսե-
փու, և ասէր. արի ա՛ռ զմանուկդ՝ և զմայր իւր՝ և փա-
խիր յեգիպտոս, և անդ լինիջիր՝ ցորժամ ասացից քեզ.
քանզի ՚ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ։
* Եւ նա յարուցեալ ա՛ռ զմանուկն և զմայր իւր գիշե- 14
րի՝ և գնա՛ց յեգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան Հե-
րովդի։ * Զի լցցի ասացեալն ՚ի տնէ ՚ի ձեռն մարգա- 15
րէին որ ասէ. յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ։
Բ * Յայնժամ իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ ՚ի մո- 16
գուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց
զա՛մ մանկունս որ էին ՚ի բեթղահէմ և յա՛մ սահմանս
նր՝ յերկեմենից և ՚ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստու-
գեա՛ց ՚ի մոգուցն։ * Յայնժամ կատարեցա՛ւ ասացեալն 17
՚ի ձեռն երեմիայ մարգարէի՝ որ ասէ. * Զա՛յն գու- 18
ժեաց ՚ի հռա՛մայ, ողբումն և լալումն և աշխարումն
յոյժ. հռաքէլ լա՛յր զորդիս իւր, և ո՛չ կամէր մխիթա-
րել՝ զի ո՛չ էին։ * Եւ ՚ի վախճանել Հերովդի, ահա 19
հրեշտակ տն ՚ի տեսլեան երևէր յովսեփայ յեգիպտոս,
* և ասէր. արի ա՛ռ զմանուկդ և զմա՛յր իւր, և գնա՛ 20
յերկիրն իսրայելի. զի մեռա՛ն որ խնդրէին զանձն մանու-
կանդ։ * Եւ նա յարուցեալ ա՛ռ զմանուկն և զմայր նր, 21
և եկն յերկիրն իէլի։ * Եւ իբրև լուաւ եթէ արքե- 22
ղաոս թագաւորեաց հրէաստանի փոխանակ Հերովդի
հօրն իւրոյ, երկեա՛ւ երթալ անդր. և հրամա՛ն առեալ
՚ի տեսլեան, գնաց ՚ի կողմանս գալիլեացւոց։ * և ե- 23
կեալ բնակեցաւ ՚ի քաղաքին՝ որ կոչէր նազարեթ. զի
լցցի բան մարգարէին, թէ նազովրեցի կոչեսցի։

ԳԼ. Գ.

Գ Յաւուրսն յայնոսիկ գա՛յ յովհաննէս մկրտիչ՝ քարո- 1
զել յանապատին հրէաստանի, * և ասել. ապաշ- 2
խարեցէք՝ զի մերձեալ է արքայութի երկնից։ * զի սա՛ 3
է՝

(12) Ոմանք. Յաշխարհ իւրեանց։ (13) Ոմանք. ՚ի տեսլ-
եան երևէր յովսեփու, և ասէ. արի ... քզի խնդիր է
Հեր"։ (14) Ոմանք. իւր ՚ի գիշերի.. և անդ լինէր մինչև
ցվախճանն։ (15) Յոմանս գրչ. Ասացեալն ՚ի տնէ ՚ի ձեռն։
(17) Ոմանք. Երեմիայի մրգրէի։ (18) Ոմանք. Ռաքէլ լայր։
(19) Ոմանք. ՚ի տեսլեանն երևէր։ (21) Ոմանք. Եւ ըզ-
մայր իւր, և ե"։ (22) Ոմանք. Թէ արքեղայոս.. հօր իւ-
րոյ ... ՚ի տեսլեանն, գնացին ՚ի կողմանս։ (23) Բիբլ.
Բան մարգարէիցն, թէ նազովրեցի։

Digitized by Google

է՝ վն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ա-
սէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք
4 զճանապարհ Տն, և ուղիղ արարէք զշաւիղս նր. * Եւ
ինքն յովհաննէս ունէր հանդերձ 'ի ստևոյ ուղտու, և
գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր
5 մարախ և մեղր վայրենի: * Յայնժամ ելանէին առ նա
ամ Երուսաղէմացիք՝ և ամ Հրէաստան՝ և ամ կողմն յոր-
6 դանանու, * մկրտէին 'ի նմանէ 'ի յորդանան գետ, և
7 խոստովան լինէին զմեղս իւրեանց: * Եւ տեսեալ զբա-
զումս 'ի սադուկեցւոցն և 'ի փարիսեցւոց եկեալս 'ի
մկրտութիւն նր, ասէ ցնս. Ծնունդք իժից՝ ո՞ ցոյց ձեզ
8 փախչել 'ի բարկութենէ որ գալոց է: * Արարէք այ-
9 սուհետև պտուղ արժանի ապաշխարութե: * և մի հա-
մարիջիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զաբրա-
համ. ասեմ ձեզ, զի կարօղ է ած 'ի քարանցս յայսցա-
10 նէ յարուցանել որդիս աբրահամու: * Զի ահաւասիկ
տապար՝ առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ
առնիցէ զպտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի.
11 * Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութեն. բայց որ զկ-
նին իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բա-
ւական բառնալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ զձեզ 'ի
12 հոգին սբ՝ և 'ի հուր: * Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւ-
րում. և արբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն
'ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով:
13 * Յայնժամ գայ յս 'ի գալիլեէ 'ի յորդանան առ յով-
14 հաննէս՝ մկրտել 'ի նմանէ: * Եւ յովհաննէս արգելոյ-
ր զնա՝ և ասէ. Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել՝ և դու՝ առ
15 իս գաս: * Պատասխանի ետ յս՝ և ասէ ցնա. Թո՛յլ
տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամ ար-
16 դարութիւն. և ապա թո՛յլ ետ նմա: * Եւ իբրև մկր-
տեցաւ յս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բա-
ցան նմ երկինք. և ետես զհոգին այ՝ զի իջանէր իբրև
17 զաղաւնի և գայր 'ի վերայ նորա: * Եւ ահա ձայն
յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ
հաճեցայ:

ԳԼ.

Գլ. Գ. (3) Ցօմանս պ̃կոր. Մարգարէի, որ ասէ. Ձայն: (3) Ոմանք. Զճնպ̃հս տն: (4) Ոմանք. Հանդերձ ստև ուղտու: (6) Ոմանք. Եւ մկրտէին 'ի նմէ: (6) 'Ի քա̃ն պ̃կոր. 'Ի յորդանան գետ, և: (7) Ոսկան. Ո՞ եցոյց ձեզ: (8) Ոմանք. Արժանիս ապաշ̃: (9) Ոմանք. Եւ մի համարիք: (10) Ոմանք. Զի ահաւասիկ առ՛՛.. առնիցէ պտուղ: (11) Բ̃ոգ. Զկնի իմ գայ: (12) Ոմանք. Իւրում, արբեսցէ: (14) Օրինակ մի. Արգելոյր զնա՝ և ասէր: (15) Բ̃ոգ. Զամ արդարութի, և: (17) Ոմանք. Որ ասէ. դա է:

Digitized by Google

ԳԼ. Դ.

Յայնժամ վարեցաւ յս՟ յանապատն 'ի հոգւոյն՝ փոր- 1
ձել 'ի սատանայէ ։ * Եւ պահեալ զքառասուն տիւ 2
եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ ։ * Եւ մատու- 3
ցեալ փորձիչն՝ ասէ ցնա. եթէ որդի ես այ՟՝ ասա զի
քարինքս այսոքիկ հաց լինիցին ։ * Նա պատասխանի 4
ետ եւ ասէ. գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ,
այլ ամ՟ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ այ՟ ։ * Յայնժամ 5
առեալ տանէ զնա սատանայ 'ի քաղաքն սուրբ, եւ կա-
ցուցանէ զնա 'ի վր՟ աշտարակի տաճարին, * եւ ասէ 6
ցնա. եթէ որդի ես այ՟՝ արկ զքեզ աստի 'ի վայր. զի
գրեալ է՝ թէ հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վս՟
քո՝ եւ 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ. զի մի երբեք
հարցես զքարի զոտն քո ։ * Ասէ ցնա դարձեալ յս՟. 7
գրեալ է՝ թէ ոչ փորձեսցես զտր՟ ած՟ քո ։ * Դարձեալ 8
առնու տանէ զնա սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ.
եւ ցուցանէ նմա զամ՟ թագաւորութիւնս աշխարհի, եւ զ-
փառս նոցա, * եւ ասէ ցնա. զայս ամ՟ քեզ տաց՝ եթէ 9
անկեալ երկիրպագանիցես ինձ ։ * Յայնժամ ասէ ցնա 10
յս՟. երթ յետս իմ սատանայ. զի գրեալ է՝ տն՟ այ՟ քում
երկիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես ։ * Ապա 11
եթող զնա սատանայ. եւ ահա՝ հրեշտակք մատեան՝ եւ
բբ պաշտէին զնա ։ * Եւ իբրեւ լուաւ յս՟՝ եթէ յովհաննէս 12
մատնեցաւ, մեկնեցաւ գնաց 'ի գալիլեա. * Եւ թողեալ 13
զնազարէթ, եկն բնակեցաւ 'ի կափառնաում 'ի ծովե-
զերին, 'ի սահմանս զաբուղոնի եւ նեփթաղիմայ. * Զի 14
լցցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն եսայեայ մարգարէի.
* երկիր զաբուղոնի եւ երկիր նեփթաղիմայ՝ ճանա- 15
պարհ ծովու՝ յայնկոյս յորդանանու, գալիլեա հեթա-
նոսաց ։ * Ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ ետես լոյս 16
մեծ. եւ որոց նստէին յաշխարհին եւ 'ի ստուերս մահու՝
լոյս ծագեաց նոցա ։ * Յայնմ հետէ սկսաւ քարոզել 17
յս՟՝ եւ ասել. ապաշխարեցէք՝ զի մերձեցաւ արքայու-
թիւն երկնից ։ * Մինչ դեռ գնայր յս՟ ը՟ եզր ծովուն գալի- 18
լեացւոց, ետես երկուս եղբարս զսիմոն զկոչեցեալն
պետ

Գլ. Դ. (1) Օրինակ մի. 'ի հոգւոյն յանապատ"։ (1) 'Ի լուսանց. փորձեալ 'ի սատանայէ. համաձայն ամենից 'ի բնաբ"։ (3) Ոմանք. Հաց լիցին ։ (6) Ոմանք. Եթէ հրեշտակաց ։ (8) Ոմանք. Դարձեալ առեալ ածէ զնա ։ (8) Ոմանք. Թագաւորութիւնս աշխարհիս ։ (9) Օրինակ մի. Եւ ասէ. զայդ ամ՟ քեզ տաց ։ (12) Ոմանք. Մեկնեցաւ եւ գնաց 'ի գալիլեէ ։ (15) Ոմանք. Ճանապարհ ծովուն ։ (16) Ոմանք. Եւ որ նստէին յաշխարհի ։ (18) Ոմանք. Յս՟ յեզր ծովուն ։

Digitized by Google

զՊետրոս, եւ զԱնդրէաս եղբայր նր՝ արկեալ ուռկան ՚ի
19 ծով. քանզի ձկնորսք էին: * Եւ ասէ ցնս. Եկայք զկնի
20 իմ, եւ արարից զձեզ որսորդս մարդկան: * Եւ նք թո-
21 ղեալ վաղվաղակի զգործիսն՝ գնացին զհետ նր: * Եւ
մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ երկուս եղբարս,
զՅակովբոս զԶեբեդեայ եւ զՅովհաննէս զեղբայր նորա ՚ի
նաւի՝ զԶեբեդեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչդեռ
22 կազմէին զուռկանս իւրեանց. եւ կոչեաց զնս: * Նոցա
թողեալ վաղվաղակի զնաւն եւ զհայր իւրեանց, գնա-
ցին զհետ նորա:

23 * Եւ շրջէր յս ընդ ամ կողմն գալիլեացւոց. ուսուցա- Դ
նէր ՚ի ժողովուրդս նց՝ եւ քարոզէր զաւետարանն ար-
քայութե, եւ բժշկէր զամ հիւանդութիւն՝ եւ զամ ախտս
24 ՚ի ժողովրդեանն: * Եւ ել լուր նր ընդ ամ երկիրն
ասորւոց, եւ մատուցին առ նա զամ հիւանդս՝ որ նե-
ղեալ էին ՚ի պէսպէս ցաւս եւ ՚ի տանջանս, եւ զդիւա-
հարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս. եւ բժշկեաց զնս.
25 * Եւ երթային զհետ նր ժողովուրդք բազումք ՚ի գա-
լիլեէ, եւ ՚ի դեկապօլեայ, եւ յէմէ եւ ՚ի հրէաստանէ,
եւ յայնկոյս յորդանանու, եւ բժշկեաց զնս:

ԳԼ. Ե.

1 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն. եւ իբրեւ Ե
նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա. բգ
2 * Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնս, եւ ասէր:
3 * Երանի աղքատաց հոգւով, զի նց է արքայութի երկ-
4 նից: * Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին:
5 * Երանի հեզոց, զի նք ժառանգեսցեն զերկիր: * Ե-
6 րանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութե, զի նք
7 յագեսցին: * Երանի ողորմածաց, զի նք ողորմութի
8 գտցեն: * Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նք
9 զած տեսցեն: * Երանի խաղաղարարաց, զի նոքա որ-
10 դիք այ կոչեսցին: * Երանի որ հալածեալ իցեն վս ար-
11 դարութե, զի նոցա է արքայութի երկնից: * Երանի է
ձեզ՝ յորժամ նախատեսցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ա-
սե-

---

(21) Ոմանք. Եղբայր նր ՚ի նաւին ... մինչ կազմէին: (22) Ոմանք. Եւ նց թողեալ վաղ": (22) ՚Ի լուս". Եւ զհայրն իւրե". համաձայն ոմանց ՚ի բնաբ": (23) Օրինակ մի. Ուսուցանէր զնս՝ եւ քարոզէր: (24) Ոմանք. Եւ ել լուրն նր ... եւ զանդամալուծս:

Գլ. Ե. (1) Ոմանք. Ել ՚ի լեառնն .. աշակերտքն նր: (3) Ոմանք. Արքայութիւն երկնից: (8) Ոմանք. Որ սուրբն են սրտիւք: (10) Ոմանք. Արքայութիւն երկնից: (11) Ոմանք. Նախատեսցեն զձեզ, եւ հալածիցեն եւ ասասցեն.

Digitized by Google

ասիցեն զամ՛ բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ: *ցնծացէք 12
և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.
զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան
զձեզ էին: *Դուք էք աղ երկրի. եթէ աղն անհա- 13
մի՝ լի՛ յաղեսցի. ոչ ինչ ազդիցէ այնուհետև, բայց ե-
թէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել՛ի մարդկանէ:
*Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ 14
որ՛ի վերայ լերին կայցէ: *և ոչ լուցանեն ճրագ՝ և 15
դնեն ը̅ գրուանաւ, այլ՛ի վ̅ր աշտանակի. և լոյս տայ
ամենեցուն՝ որ՛ի տանն իցեն: *այնպէս լուսաւորես- 16
ցէ լոյս ձեր առաջի մարդկան, որ̅պ զի տեսցեն զգործս
ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս
բ գ. է: *Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ 17
զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ: *Ամէն ա- 18
սեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի՝ որ
նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և՛ի մարգարէից՝
մինչև ամ՛ եղիցի: *Որ ոք լուծցէ մի ինչ՛ի պատուի- 19
րանացս յայսցանէ՛ի փոքունց, և ուսուսցէ այնպէս
զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութե՛ երկնից: Իսկ որ
արասցէ՝ և ուսուսցէ, նա՝ մեծ կոչեսցի յարքայութեն
երկնից: *Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելու- 20
ցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփա-
րիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութի՛ երկնից: *Լուա- 21
րուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի՛ սպանաներ. զի որ
սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի: *Ա̅յլ 22
ես ասեմ ձեզ. եթէ ամ՛ որ բարկանայ եղբօր իւրում
տարապարտուց, պարտաւո՛ր լիցի դատաստանի: Եւ
որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւո՛ր լիցի ատե-
նի: Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւո՛ր
լիցի՛ի գեհեն հրոյն: *Եթէ մատուցանիցես զպատա- 23
րագ քո՛ի վ̅ր սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր
քո ունիցի ինչ խէթ զքէն, *թո՛ղ զպատարագն քո առ- 24
աջի սեղանոյն. և երթ նախ հաշտեա՛ց ընդ եղբօր
քում, և ապա եկեալ մատուսջի՛ր զպատարագն քո:
*Լե՛ր

---

(12) Ոմանք. Քան զձեզն էին: (13) Այլք. Երկրի. ապա թէ աղն ան՛՛: (13) Ոմանք. Ի՛՛ յաղեսցի: (16) Օրինակ մի. Եւ փառաւոր արասցեն զհայր ձեր: (18) Օրինակ մի. Ամէն ամէն ասեմ ձեզ: (18) Ոմանք. Մինչև ամն եղիցի: (20) Ոմանք. Ձեզ. եթէ ոչ առաւելուցու: (20) Այլք. Ձեր աւելի քան զդպրացն: (21) Ոմանք. Զի որ սպանանէ.. լինիցի: (22) Ոմանք. պարտական լիցի դա՛՛.. լիցի գեհենն հրոյն: և ոմանք. գեհենի հրոյն: (23) Բազումք. Եւ անդ յիշեսցես՝ եթէ եղ՛՛: (23) Ոմանք. Ունի ինչ խէթ: (24) Ոմանք. Սեղանոյն. երթ նախ:

Digitized by Google

25 * Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ
իցես ընդ նմա 'ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ
ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի. և արկանի-
26 ցիս 'ի բանտ: * Ամէն ասեմ քեզ. ոչ ելանիցես անտի,
27 մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն: * Լուա-
28 րուք զի ասացաւ՝ մի շնար: * բայց ես՝ ասեմ ձեզ. Թէ
ամ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, ան-
29 դէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում: * Եթէ ակն
քո աջ գայթագղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա՝ և ըն-
կեա՛ 'ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կո-
30 րիցէ, և մի ամ մարմինդ քո անկանիցի 'ի գեհեն: * Եւ
եթէ աջ ձեռն քո գայթագղեցուցանէ զքեզ, հատ ըզ-
նա՝ և ընկեա՛ 'ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդա-
մոց քոց կորիցէ, և մի ամ մարմինդ քո արկանիցի 'ի
31 գեհեն: * Ասպաքէն ասացաւ, Թէ որ արձակիցէ զկին
32 իւր՝ տացէ նմա զարձակմանն: * Բայց ես ասեմ ձեզ,
եթէ ամ որ արձակէ զկին իւր առանց բանի պոռն-
կութե, նա տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ՝
33 շնայ: * Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն.
մի երդնուցուս սուտ, բայց հատուսցես տն զերդ-
34 մունս քո: * Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի երդ-
35 նուլ. մի յերկինս՝ զի աթոռ է այ. * և մի յերկիր՝ զի
պատուանդան է ոտից նորա. և մի յեէմ՝ զի քաղաք
36 է մեծի արքայի: * և մի 'ի գլուխ քո երդնուցուս, զի
37 ոչ կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ Թուխ: * Այլ
եղիցի ձեր բան, այոն՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան
38 զայն 'ի չարէն 'է: * Լուարուք զի ասացաւ. ակն ընդ
39 ական, և ատամն ընդ ատաման: * Այլ ես ասեմ ձեզ,
մի կալ հակառակ չարին: Այլ եթէ ոք ածիցէ ապ-
40 տակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն: * Եւ որ
կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, Թո՛ղ 'ի նմա
41 և զբաճկոն քո: * Եւ որ տարապարհակ վարիցէ ըզ-
42 քեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս: * որում խնդրէ
'ի քէն՝ տո՛ւր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դար-
43 ձուցաներ զերեսս: * Լուարուք ասպաքէն զի ասացաւ.
սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զԹշնամին քո:
* Այլ

---

(25) Ոմանք. Լեր իրաւախորհ. . դատաւորին: (30) Ցօրէ
նակին ոչինչ. Ամ մարմինդ քո: (30) Ոմանք. Անկանիցի 'ի
գեհեն: (31) Ոմանք. Եթէ որ արձակէ զկին: (32) Ոմանք.
Զարձակեալն առնու: (34) Ոմանք. Ամենևին մի երդ-
նուր: (37) Ոմանք. Ձեր բանն. . զի աւելի: (39) Բազ.
Հակառակ չարի: (39) Ոմանք. Ածիցէ ոք: (40) Ոմանք.
Թո՛ղ 'ի նմա և զբաճկոն: (41) Ոմանք. Տարապարհակ վա՛ր:
(42) Ոսկան. Որ ոք խնդրէ 'ի քէն:

Digitized by Google

* Այլ ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր. օրհ- 44
նեցէք զանիծիչս ձեր. բարի արարէք ատելեաց ձե-
րոց. և աղօթս 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և
հալածեն: * զի եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինսն 45
է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վ̄ր̄ չարաց և բարեաց,
և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց: * Զի 46
եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք
իցեն, ո՞չ ապաքէն և մաքսաւո՛րք զնոյն գործեն: * և 47
եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ
աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք և մեղաւո՛րք
զնոյն գործեն: * Արդ՝ եղերո՛ւք դուք կատարեա՛լք, 48
որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեա՛լ է:

ԳԼ. Զ.

բե ԶԳՈՅՇ լերուք ողորմութեան ձերում՝ մի առնել առա- 1
ջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա. դուցէ
և վարձս ոչ ընդունիցիք 'ի հօրէն ձերմէ՝ որ յերկինսն
է: * Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկա- 2
նել փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն 'ի ժո-
ղովուրդս և 'ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին
'ի մարդկանէ: Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք
նոցա: * Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի գի- 3
տասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. * որպէս զի եղիցի ո- 4
ղորմութիւն քո 'ի ծածուկ. և հայրն քո, որ տեսանէ 'ի
ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս: * Եւ յորժամ 5
յաղօթս կայցես, մի լինիցիս որպէս կեղծաւորքն. զի սի-
րեն 'ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յա-
ղօթս, որպէս զի երևեսցին մարդկան: Ամէն ասեմ ձեզ՝
այն իսկ են վարձք նոցա: * Այլ դու յորժամ կայցես 6
յաղօթս, մուտ 'ի սենեակ քո՝ և փակեա զդուրս քո,
և կաց յաղօթս առ հայր քո 'ի ծածուկ. և հայրն քո
որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս:
* Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօսք լինիք իբ- 7
րև զհեթանոսսն. զի համարին թէ 'ի բազում խօսից
իւրեանց լսելի լինիցին: * Արդ՝ մի նմանիցէք նոցա. 8
զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչև ձեր
խնդ-

(44) Այս տուն այսպէս. Զթշնամիս ձեր. օրհնեցէք զանիծիչս ձեր: (44) Ոմանք յաւելուն. Եւ աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ որ լլկեն: (46) Ոմանք. Սիրեն զձեզ:

Գլ. Զ. (1) Ոմանք. 'Ի հօրէ ձերմէ որ յերկինս է: (4) Ոմանք. Ողորմութեան քո: (5) Ոմանք. Յաղօթս կացցես: Եւ ոմանք. Կայցէք, մի լինիցիք: (6) Ոմանք. Կացցես յաղօթս.. զդրունս քո... առ հայրն քո: (7) Բիւզ. Մի շատախօսք լի: (7) Ոմանք. Շատախօս լինիցիք.. եթէ 'ի բազում:

Digitized by Google

9 խնդրելոյ ինչ իցէ 'ի նմանէ: * Եւ արդ՝ այսպէս կա-
ցէք դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս ես: Ս'ր եղիցի
10 անուն քո: * Եկեսցէ արքայութիւն քո: Եղիցին կամք քո
11 որպէս յերկինս և յերկրի: * Զհաց մեր հանապազորդ՝
12 տուր մեզ այսօր: * և թող մեզ զպարտիս մեր, որպէս
13 և մեք թողումք մերոց պարտապանաց: * և մի տանիր
զմեզ 'ի փորձութիւն: այլ փրկեա զմեզ 'ի չարէն: զի քո
է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:
14 * Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նց, թող-
15 ցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր: * Ապա թէ ոչ թո-
ղուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր
16 թողցէ ձեզ զյանցանս ձեր: * Եւ յորժամ պահիցէք՝
մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտմերեսք. որ այլա-
կերպեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան
թէ պահեցեն: Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք
17 նց: * Այլ դու՝ յորժամ պահիցես, օծ զգլուխ քո՝ և
18 լուա զերեսս քո, * զի մի երևեսցիս մարդկան իբրև
զպահօղ. այլ Հօր քում 'ի ծածուկ. և Հայրն քո որ
19 տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ: * Մի գանձէք
ձեզ գանձս յերկրի. ուր ցեց և ուտիճ ապականեն,
20 և ուր գողք ական հատանեն և գողանան: * Այլ
գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ու-
տիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գո-
21 ղանան: * զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր
22 լիցին: * Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ բզ
23 է, ամ մարմինդ լուսաւոր եղիցի: * ապա թէ ակն քո
չար է՝ ա՛մ մարմինդ խաւարին եղիցի: Իսկ արդ՝ եթէ
լոյսդ որ 'ի քեզ է՝ խաւար է, խաւարն՝ ո՞րչափ ևս:
24 * Ո՛չ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին
ատիցէ՝ և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ՝ և ըզ-
միւսն արհամարհիցէ. ոչ կարէք այ ծառայել և մա-
25 մոնայի: * Վն այսորիկ ասեմ ձեզ. մի հոգայք վասն
անձանց ձերոց՝ զինչ ուտիցէք՝ կամ զինչ ըմպիցէք. և
մի վն մարմնոց ձերոց՝ թէ զինչ զգենուցուք. ոչ ապա-
քէն

---

(9) Օրինակ մի. Կայցէք դուք: (9) Ոսկան յաւելու. Որ յեր-կինս ես: (13) Օրինակ մի. Եւ մի տար զմեզ: (13) Ոմանք. Այլ փրկեա 'ի չարէ: (13) Ա՛ռ ոսկանայ պակսի. Յաւի-տեանս ամէն: (14) Ոսկան յաւելու. Երկնաւոր զյանցանս ձեր: (15) Ոսկան յաւելու. Հայրն ձեր երկնաւոր թող'': (16) Ոմանք. Իբրև զկեղծաւորքն տրտմ'': (18) Ոմանք յաւելուն. Հօրն քում... հատուսցէ քեզ յայտնապէս: (19) Ոմանք. Եւ գողք ական հա'': (21) Բազումք. Եւ սիրտք ձեր եղիցին: (23) Ոմանք. Ապա թէ ակնդ չար է: (25) Ա՛ռ ոսկանայ պակսի. Ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք, և:

Digitized by Google

քէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան
զհանդերձ: * Հայեցարո՛ւք 'ի թռչունս երկնից՝ զի ո՛չ 26
վարեն և ո՛չ հնձեն, և ո՛չ ժողովեն 'ի շտեմարանս. և
հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնո՛: ո՞չ ապաքէն դուք
առաւե՛լ էք քան զնո՛: * Իսկ արդ՝ ո՛ 'ի ձէնջ առ հո_ 27
գա՛լ իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն
մի: * Եւ վա՛ հանդերձի զի՞ հոգայք. հայեցարո՛ւք 'ի 28
շուշանն վայրենի՝ ո՛րպ աճէ. ո՛չ ջանայ, և ո՛չ նիւթէ:
* ասեմ ձեզ՝ զի և ո՛չ սողոմոն յա՛մ 'ի փառսն իւ_ 29
րում զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ: * Իսկ եթէ զխոտն 30
'ի վայրի, որ այսօր է և վաղիւ 'ի հնոց արկանի, ա՛ծ
ա՛յնպէս զգեցուցանէ. ո՞րչափ ևս առաւել զձեզ թե_
րահաւատք: * Մի՛ այսուհետև հոգայցէք՝ և ասիցէք. 31
զի՞նչ կերիցո՛ւք՝ կա՛մ զի՞նչ արբցուք՝ կա՛մ զի՞նչ զգեցցուք:
* զի զա՛յդ ա՛մ հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ հայրն 32
ձեր երկնաւոր՝ թէ պիտո՛յ է ձեզ այդ ա՛մ: * Խնդրե_ 33
ցէ՛ք նախ զարքայութի՛ ա՛յ և զարդարութի՛ նր, և այդ
ա՛մ յաւելցի ձեզ: * Մի՛ այսուհետև հոգայցէք վասն 34
վաղուի՝ զի վաղիւն վա՛ իւր հոգասցի. շա՛տ է աւուրն
չա՛ր իւր:

ԳԼ. Է.

բ է Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիցիք: * զի որով դատաստա_ 1
նաւ դատիք՝ դատելոց էք. և որով չափով չափէք՝ 2
չափեսցի ձեզ: * Զի՞ տեսանես զշիւղ յականն եղբօր քո, 3
և 'ի քում ականդ զգերանդ ո՛չ նշմարես: * կամ զիա՞րդ 4
ասես ցեղբայր քո, թո՛ղ հանից զշիւղ յականէ քումմէ.
և ահաւասիկ 'ի քում ականդ գերան կայ: * Կեղ_ 5
ծաւոր՝ հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա
հայեսցես հանել զշիւղն յականէ եղբօր քո: * Մի՛ տայք 6
զսրբութի՛ շանց. և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր ա_
ռաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնո՛, և դար_
ձեալ երգիծուցանիցեն զձեզ: * Խնդրեցէ՛ք՝ և տացի 7
ձեզ, հայցեցէ՛ք՝ և գտջի՛ք, բախեցէ՛ք՝ և բացցի ձեզ:
* զի ա՛մ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և 8
որ բախէ՝ բացցի նմա: * Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր 9
խնդ_

---

(26) Ոմանք. Հայեցարուք Ը թռչունս: (28) Ոմանք. 'ի
շուշանս վայրի՝՝.. ո՛րպ աճեն. ոչ ջանան, և ոչ նիւթեն:
(29) Ոմանք. Յա՛մ փառսն: (30) Ոմանք. Եւ վաղիւն 'ի
հնոց: (34) Ոմանք. Վա՛ վաղուին:
ԳԼ. Է. (3) Ոմանք. Զշիւղ յականն.. 'ի քում ականդ:
(3) Այլք. Զգերանդ ո՛չ տեսանես: (4) Ոմանք. Զշիւղդ..
'ի քում ական: (6) Ոմանք. Զմարգարիտս ձեր... խոզ_
զից.. կոխեսցեն զնո՛: (9) Ոմանք. Ո՛վ է 'ի ձէնջ մարդ:

Digitized by Google

10 խնդրեսցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. * և
11 կամ ձուկն խնդրեսցէ, միթէ օձ տայցէ նմա: * Արդ՝
եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ
որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն ձեր որ
յերկինս է տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա:
12 * Զամ զոր միանգամ կամիցիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են
13 օրէնքն և մարգարէք: * Մտէք Ը նեղ դուռն. քանզի
ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ
տանի 'ի կորուստ, և բազումք են որ մտանեն Ը նա:
14 * քանզի անձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի
15 'ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա: * Զգուշ
լերուք 'ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտա-
16 կողք: * 'Ի պտղոյ նց ծանիցիք զնս: Միթէ քաղիցեն
17 'ի փշոց խաղող՝ կամ 'ի տատասկէ թուզ: * Այսպէս
ամ ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: * Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար
18 առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել: * Ամե-
19 նայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի
20 հուր արկանի: * Ապա 'ի պտղոյ նոցա ծանիցիք զնս:
21 * Ոչ ամ որ ասէ ցիս՝ տ՛ր տ՛ր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինսն է:
22 * Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. տ՛ր տ՛ր՝ ոչ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դևս հա-
23 նաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք: * և յայնժամ ասացից ցնս՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ.
'ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէիք զանօ-
24 րէնութիւն: * Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմանեսցէ առն իմաստնոյ, որ շինեաց
25 զտուն իւր 'ի վերայ վիմի: * Իջին անձրևք՝ և խաղացին գետք, շնչեցին հողմք՝ և բախեցին զտունն, և ոչ կոր-
26 ծանեցաւ, քանզի 'ի վ՛է վիմի հաստատեալ էր: * Եւ
ամ

(11) Ոմանք. Որ չարք էք. կամ, չարքն էք. . տայցէ բարիս:
(12) Ոմանք. Զամ որ միանգամ. . . զի այն իսկ են օրէնք
և: (13)(14) 'Ի յերեւման հին և նոր Գրչագիր օրինակաց մերոց՝
երեւին ոմն ոչ այնչափ հնագիրք՝ ունելին. Քանզի ընդարձակ
է. քանզի անձուկ է: Եւ երկոքեան՝ միայն յառաջինում փոխանակ
քանզի: Իսկ այլ ծագնեալք առանձինք՝ համաձայն մերումս տպին
քանի. այսու և էր ընդարձակն, զի ոմանք 'ի սորանէ ունին 'ի
վ՛է պարսմացական ուղղակի. և յետ ընթերցականի. իսկ այլ եւ
ոմանք ղողանցան. ամ մերս: (16) Ոմանք. 'Ի փշոյ խաղողոյ:
(21) Ոմանք. Այլ որ արասցէ զկամս: (22) Ոմանք. Յաւ-
ուր յայնմիկ: (23) Ոմանք. Ոյք գործէք զանօ":

Digitized by Google

ամ որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ զնոսա ,
նմանեսցէ առն յիմարի , որ շինեաց զտուն իւր ՚ի վե
րայ աւազոյ: * Իջին անձրեւք՝ յարեան գետք, շնչեցին հողմք՝ 27
հարին զտունն , եւ անկաւ. եւ էր կործանումն նորա մեծ
յոյժ: * Եւ եղեւ իբրեւ կատարեաց յս զամ զբանս զայսո 28
սիկ , զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա:
* զի իբրեւ իշխանութբ ուսուցանէր՝ եւ ոչ որպէս դպիրքն նոցա: 29

Գլ. Ը.

Զ Եւ իբրեւ էջ ՚ի լեռնէ անտի , գնացին զհետ նորա ժո 1
ղովուրդք բազումք: * Եւ ահա մատուցեալ բորոտ 2
մի , երկիր պագանէր նմ, եւ ասէր. Տէր՝ եթէ կամիս
կարող ես զիս սրբել: * Ձգեաց զձեռն իւր եւ հասոյց 3
՚ի նա յս՝ եւ ասէ. կամիմ՝ սրբեաց: Եւ վաղվաղակի
սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն: * Եւ ասէ ցնա յս, 4
զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո
քահանային. եւ մատո զպատարագն, զոր հրամայեաց
մովսէս ՚ի վկայութի նց:
Է * Եւ մտեալ ՚ի կափառնաում, մատեաւ առ նա հա 5
րիւրապետ մի , աղաչէր զնա , * եւ ասէր. տր՝ մանուկ 6
իմ անկեալ կայ ՚ի տան անդամալոյծ՝ չարաչար տան
ջեալ: * Ասէ ցնա յս. ես եկից՝ եւ բժշկեցից զնա : 7
* Պատասխանի ետ հարիւրապետն՝ եւ ասէ. Տր՝ չեմ 8
բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա
բանիւ , եւ բժշկեսցի մանուկն իմ: * Զի եւ ես այր մի 9
եմ ընդ իշխանութ , ունիմ ընդ իւեւ զինուորս. ասեմ սմա
երթ՝ եւ երթայ , եւ այլում թէ եկ՝ եւ գայ , եւ ծառայի
իմում թէ արա զայս՝ եւ առնէ: * Իբրեւ լուաւ յս՝ զար 10
մացաւ , եւ ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. ամէն
ասեմ ձեզ եւ ոչ յիէլի այսպիսի հաւատս գտի երբեք:
* Բայց ասեմ ձեզ , զի բազումք յարեւելից եւ յարեւմտ 11
ից եկեսցեն՝ եւ բազմեսցին ընդ աբրահամու՝ եւ ընդ սա
հակայ՝ եւ ընդ յակոբու յարքայութե երկնից: * Եւ որ 12
դիքն արքայութե ելցեն ՚ի խաւարն արտաքին. անդ ե
ղիցի լալ եւ կրճել ատամանց: * Եւ ասէ յս ցհարիւ 13
րապետն. երթ՝ եւ որպէս հաւատացեր եղիցի քեզ: Եւ
ողջացաւ մանուկն նր ժամուն յայնմիկ:

* Եւ

(28) Ոմն. Զբանս զայսոսիկ: (29) ՚Ի բազումս գրչի. Որպէս դպիրքն նոցա: Այլ ոմն յունականն. դպիրքն եւ փարիսեցիք:
Գլ. Ը. (1) Ոմանք. Ժողովուրդ բազում: (4) Օրինակ մի. Քո քահանային. եւ մատո զի սրբութե քո զպատարագն զոր: (5) Յունանն գրչի. Մատեաւ առ նա հարիւր: (10) Ոմանք. Իբրեւ լուաւ զայս յս: (10) ՚Ի լատ. ՚Ի նմ Եւ ոչ յիէլի, նշանակի, Այս ուրեք: (11) Ոմանք. Եւ բազմեսցեն ընդ:

14 *Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչն Ը
15 նր անկեալ դնէր տապացեալ։ *Կալաւ զձեռանէ նր՝
եւ եթող զնա ջերմն․ յառնէր եկաց՝ եւ պաշտէր զնա։
16 *Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բա- Թ
զումս, եւ եհան զայսսն բանիւ․ եւ զամ հիւանդսն
17 բժշկեաց։ *Զի լցցի բանն՝ որ ասացաւ․ ՚ի ձեռն Ե-
սայայ մարգարէի․ նա՝ զհիւանդութիւս մեր վերացոյց,
եւ զցաւս մեր եբարձ։
18 *Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրեւ, հրամայ- Ժ
19 եաց երթալ յայնկոյս։ *Եւ մատուցեալ դպիր մի ա- դկ
սէ ցնա․ վարդապետ՝ եկից եւ ես զկնի քո յոր վայր ե-
20 րթիցես։ *Ասէ ցնա յս․ աղուեսուց որջք գոն, եւ
թռչնոց երկնից բոյնք․ այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր
21 դիցէ զգլուխ իւր։ *Եւ մի ոմն յաշակերտաց նր ա-
սէ ցնա․ տր՝ տուր ինձ հրաման՝ զի երթայց նախ թա-
22 ղեցից զհայր իմ։ *Ասէ ցնա յս․ եկ զկնի իմ, եւ թոյլ
տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց։
23 *Եւ իբրեւ եմուտ ՚ի նաւն, գնացին զկնի նորա աշա- ԺԱ
24 կերտքն նր։ *Եւ ահա շարժումն մեծ եղեւ ՚ի ծովուն՝
մինչ նաւուն ծածկել յալեաց անտի․ եւ ինքն ննջէր։
25 *Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ասեն․
26 տր՝ փրկեա զմեզ՝ զի կորնչիմք։ *Եւ ասէ ցնս․ Ըէ՞ր
վատասիրտք էք թերահաւատք։ Յայնժամ յարու-
ցեալ սաստեաց հողմոյն եւ ծովուն, եւ եղեւ խաղաղութի
27 մծ։ *Եւ մարդիկն զարմացան՝ եւ ասէին․ որպիսի ոք
իցէ սա, զի եւ հողմք եւ ծով հնազանդին սմա։
28 *Եւ իբրեւ անցին յայնկոյս յերկիրն գերգեսացւոց, ԺԲ
պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ՚ի գե-
րեզմանացն, չարաչարք յոյժ․ մինչ զի չէր հնար անցա-
29 նել ընդ այն ճանապարհ։ *Եւ ահա՝ աղաղակեցին
եւ ասեն․ զի՞ կայ մեր եւ քո՝ յս որդի այ, եկիր տարա-
30 ժամ տանջել զմեզ։ *Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ ե-
31 րամակ մի խոզից արօտական։ *Եւ դեւքն աղաչէին զնա
եւ ասէին․ եթէ հանես զմեզ աստի, հրամայեա մեզ
32 երթալ յերամակ խոզիցն։ *Եւ ասէ ցնս․ երթայք։

Եւ

(14) Ոմանք․ Զոքանչ նր։ (15) Բազ․ Եւ պաշտէր զնս։ (18) Ոմանք․ Ժողովուրդ բզմ զիւրեաւ։ (20) Ոմանք․ Ոչ գոյ տեղի ուր դի՞։ (22) Ոմանք․ Զմեռեալսն իւրեանց։ (23) Օրինակ մի․ Զկնի նր ժողովք բզմ։ Եւ ահա։ (24) Ոմանք․ Մինչեւ նաւուն ծած։ (25) Ոմանք․ Աշակերտքն զարթուցին եւ ասեն։ (26) Ոմանք․ Եւ ասէ ցնս յս․․ հողմոյն եւ ծովուն։ (27) Ոմանք․ Զարմացան եւ ասեն։ (28) Ոմանք․ Եւ իբրեւ անց յայնկոյս․․․ ելեալ ՚ի գերեզ․․ մինչ զի ոչ էր հնար։ (32) Ոմանք․ Յերամակ խոզիցն․․ անտի

Digitized by Google

Եւ նք ելեալ գնացին յերամակն խոզից։ և դիմեաց ամ
երամակն 'ի դարէ անտի 'ի ծով, և մեռան 'ի ջուրսն։
* Եւ խոզարածքն փախեան, և երթեալ 'ի քաղաքն 33
պատմեցին զամ, և զերս դիւահարացն։ * Եւ ահա 34
ամ քաղաքն ել ընդ առաջ յսի։ իբրև տեսին զնա՝ աղա-
չեցին զի գնասցէ 'ի սահմանաց նց։

ԳԼ. Թ.

ԺԳ. Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս, և եկն 'ի քաղաք 1
իւր։ * Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ 2
մի որ դնէր 'ի մահիճս։ Եւ տեսեալ յսի զհաւատս նց՝
ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։
* Եւ ահա՝ ոմանք 'ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ 3
դա։ * Եւ ծանուցեալ յսի զխորհուրդս նց՝ ասէ ցնս. 4
Ընդէ՞ր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր։ * Զի՞նչ դիւ- 5
րին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝
արի և շրջեա՛ց։ * Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն 6
ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս։ յայնժամ
ասէ ցանդամալոյծն. արի՝ առ՛ զմահիճս քո՝ և երթ 'ի
տունն քո։ * Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր։ * Իբ- 7
րև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւո՛ր առ- 8
նէին զած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։
ԺԴ * Եւ անցեալ ընդ այն յսի՝ ետես այր մի՝ զի նստէր 'ի 9
գբ մաքսաւորութեան, մատթէոս անուն. և ասէ ցնա՝ եկ զկնի
իմ։ Եւ յարուցեալ գնաց զկնի նր։ * Եւ եղև իբրև 10
բազմեալ էր նա 'ի տանն, և ահա մաքսաւորք և մեղա-
ւորք եկեալ և բազմեալ էին ընդ յսի՝ և ընդ աշակերտս
նորա։ * Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասէին ցաշակերտս 11
նր. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ
վարդապետն ձեր։ * Իսկ յս իբրև լուաւ՝ ասէ ցնս. ոչ 12
պիտոյ է բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։ * Երթայք 13
ուսարո՛ւք, զինչ է՝ զողորմութի կամիմ, և ոչ զզոհ։ զի
ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ * Յայնժամ 14
մատեան առ նա աշակերտքն յովհաննու՝ և ասեն. ընդ-
է՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշա-
կերտքդ ոչ պահեն։ * Ասէ ցնս յս. մի՝ եթէ մարթ իցէ 15
իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն

Է

'ի ծովն։ (34) Ոսկան. Աղաչէին զի գնասցէ։
Գլ. Թ. (4) Ոմանք. Չար 'ի սիրտս։ (5) Ոմանք. Եթէ ասել՝ արի։ (8) Ոմանք. Զօրութիւն այնպիսի։ (9) Յօրինակին Ճշոէր. Եւ ասէ ցնա՝ եկ։ (10) Ոմանք յաւելուն. 'Ի տանն. և ահա բազում մաքսաւորք։ (12) Ոմանք. Ոչ է պիտոյ բժ՛։ (15) Բռնք. Մի թէ մարթ իցէ. 'ի Նոցանէն։ (15) Յօրինակին. Մանկաց առագաստի։

Digitized by Google

ընդ նոսա՛ հեց. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի
16 'ի նցանէ փեսայն, և ապա պահեսցեն ։ * Ո՛չ ոք արկա_
նէ կարկատ անթափ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առ_
նու ելանէ զլրումն նր 'ի հանդերձէն, և մեծ չար պա_
17 տառումն լինի ։ * Եւ ոչ արկանեն գինի նոր 'ի տիկս
հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, և գինին հե_
ղու, և տիկքն կորնչին. այլ արկանեն գինի նոր 'ի
տիկս նորս, և երկոքին պահին ։
18 * Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նս, ահա իշխան մի ԺԵ
մատուցեալ երկիր պագանէր նմա՝ և ասէր, դուստր ԳԴ
իմ արդեւս վախճանեցաւ. այլ՝ եկեալ դիցես զձեռն
19 քո 'ի վերայ նր՝ և կեցցէ ։ * Յարեաւ յս՝ և գնայր զհետ
նորա աշակերտօքն հանդերձ ։
20 * Եւ ահա կին մի՝ տեռատեսս երկոտասանամեայ, մա_ ԺԶ
տուցեալ յետոյ մերձեցաւ 'ի գրօշակ հանդերձի նր ։
21 * քանզի ասէր 'ի միտս իւրում, թէ միայն մերձենայցեմ
22 'ի հանդերձս նր՝ փրկիմ ։ * Իսկ յս իբրև դարձաւ և
ետես զնա, ասէ՝ քաջալերեաց դուստր՝ հաւատք քո
կեցուցին զքեզ ։ Եւ փրկեցաւ կինն 'ի ժամէն յայն_
23 մանէ ։ * Իբրև եկն յս 'ի տուն իշխանին, և ետես
զփողահարսն՝ և ամբոխ յոյժ, ասէ ցնս. 'ի բաց գնացէք.
24 * զի ոչ եթէ մեռեալ է աղջիկն՝ այլ ննջէ ։ * Եւ ծաղր
25 առնէին զնա ։ Եւ իբրև ել ամբոխն 'ի բաց, եմուտ՝
26 կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն ։ * Եւ ել
համբաւս այս ընդ ամ երկիրն ընդ այն ։
27 * Եւ մինչդեռ անցանէր ընդ այն յս, զհետ եղեն նորա ԺԷ
կոյրք երկու, աղաղակէին և ասէին, ողորմեաց մեզ ԳԴ
28 որդի դաւթի ։ * Եւ իբրև եկն 'ի տուն, մատեան առ
նա կոյրքն ։ Եւ ասէ ցնս յս. հաւատա՞յք եթէ կարող
29 եմ առնել ձեզ զայդ ։ Ասեն ցնա՝ այո տէր ։ * յայն_
ժամ մերձեցաւ յաչս նց՝ և ասէ. ըստ հաւատոց ձե_
30 րոց եղիցի ձեզ ։ * Եւ բացան աչք նց ։ Եւ սաստեաց
31 նոցա յս՝ և ասէ. զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ ։ * Եւ
նք ելեալ՝ համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ընդ այն ։
32 * Եւ յելանելն նց արկանէին առ նա ԺԸ
33 այր մի համր դիւահար ։ * և յելանել դիւին՝ խօսեցաւ
համրն ։ Եւ զարմացան ժողովուրդքն՝ և ասեն, թէ և
ոչ

(17) Օրինակ մի ընդ ոսկանայ. Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ։ (18) Ոմանք. Մինչդեռ նա զայն խօ" ։ (19) Ոմանք. Յարուցեալ յս և գնայր ։ (20) Ոմանք. 'Ի գրօշակս, հանդ" ։ (21) Ոմանք. Ասէր 'ի սրտի իւրում, թէ միայն մերձանայցեմ 'ի ։ (23) Ոմանք. Զփողահարսն ։ (24) Ոմանք. Զի ոչ թէ մեռեալ է ։ (29) Ոմանք. 'Ի յաչս նոցա ։ (33) Ոմանք. Թէ ոչ յերբէք երևեցաւ ։

Digitized by Google

ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլ։ * Իսկ փարի- 34
սեցիքն ասէին, թէ իշխանաւ դիւաց հանէ դա զդեւս։
դե * Եւ շրջէր յս ընդ ամ քաղաքս եւ ընդ գեղս, ուսու- 35
ցանէր 'ի ժողովուրդս նց, եւ քարոզէր զաւետարանն
արքայութե. եւ բժշկէր զամ ախտս եւ զամ հիւանդու-
թիւս 'ի ժողովրդեանն։ * Եւ տեսեալ զժողովուրդսն՝ 36
գթացաւ 'ի նոսա. զի էին աշխատեալք եւ ցրուեալք
իբրեւ զոչխարս՝ որոց ոչ իցէ հովիւ։ * Յայնժամ ասէ 37
ցաշակերտսն իւր, հունձք բազում են՝ եւ մշակք սակաւ։
* արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի 38
հունձս իւր։

Գլ. Ժ։

ժթ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն 1
իւր, ետ նց իշխանութի այսոց պղծոց հանել զնս,
եւ բժշկել զամ ցաւս եւ զամ հիւանդութիւս։ * Եւ ա- 2
ռաքելոցն երկոտասանից՝ էին անուանք այսոքիկ։ ա-
ռաջին, սիմովն՝ անուանեալն պետրոս, եւ անդրէաս
եղբայր նր։ * յակոբոս զեբեդեայ, եւ յովհաննէս եղ- 3
բայր նր. փիլիպպոս, եւ բարթողոմէոս. թովմաս, եւ
մատթէոս մաքսաւոր. յակոբոս ալփեայ, եւ ղեբէոս՝
որ անուանեցաւ թադէոս։ * սիմովն կանանացի, եւ 4
յուդա սկարիովտացի՝ որ եւ մատնեացն զնա։ * Զնս 5
երկոտասանեսին առաքեաց յս, պատուիրեաց նց եւ ա-
սէ, 'ի ճանապարհ հեթանոսաց մի երթայցէք, եւ 'ի
քաղաք սամարացւոց մի մտանիցէք։ * այլ երթայք ա- 6
ռաւել առ ոչխարսն կորուսեալս տանն Իէլի։ * Եւ իբ- 7
րեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք, թէ մերձեալ
է արքայութի երկնից։ * Զհիւանդս բժշկեցէք, զբո- 8
րոտս սրբեցէք, զդեւս հանէք. ձրի առէք՝ եւ ձրի տուք։
* Մի ստանայք ոսկի, եւ մի արծաթ, եւ մի պղինձ 'ի 9
գօտիս ձեր։ * մի պարկ 'ի ճանապարհ. եւ մի երկուս 10
հանդ-

(34) Ոմանք. Ասեն թէ իշխանաւն դի"։ (35) Ոմանք. Ընդ գեւղս. կամ, գեաւղս (36) Այլ ոմանց օրինակ. Աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ։ (37) Ոմանք. Յաշակերտսն.. բազում են՝ եւ մշակք սակաւք։

Գլ. Ժ. (1) Ոսկան. Եւ կոչեալ առ ինքն զերկոտասան աշա".. եւ բժշկել զամ ախտս եւ զամ հի"։ Այլ յոմանց օրինակ. Եւ բժշկել զամ ցաւս եւ զամ հիւ"։ (2) Ոմանք. Առաջինն սիմոն։ (3) Ոսկան. Բարդուղոմէոս։ (3) Ոմանք. Եւ ղաբբէոս, կամ, ղեբէոս, որ անուանեցաւ։ (4) Ոմանք. Կանանացի։ (5) Ոմանք. 'Ի ճանապարհ հեթա"։ (6) 'Ի տուն". Տանն Իէլի. համաձայն ոմանց 'ի բնաբ"։ (10) Ոմանք. Պարկ 'ի ճանապարհի... մի կօշիկ... կերակրոյ իւ-

Digitized by Google

հանդերձս · մի՛ կօշիկս · մի՛ գաւազան : զի արժանի է մշակն
11 կերակրոյ իւրում: * Յոր քաղաք մտանիցէք կամ 'ի
գեղ, հարցանիցէք թէ ո՞ է 'ի նմա արժանի · և անդ
12 լինիջիք մինչև ելանիցէք անտի : * Եւ իբրև մտանիցէք
'ի տունն, ողջոյն տայջիք նմա՝ և ասասջիք · ողջոյն տանս
13 այսմիկ : * Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն
ձեր 'ի վր նր · ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր
14 առ ձեզ դարձցի : * Եւ որ ոչ ընդունիցի զձեզ՝ և ոչ լուի-
ցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք 'ի քաղաքէն յայն-
15 մանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց : * Ամէն ա-
սեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին սոդոմացւոց և գո-
մորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այն-
16 միկ : * Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս զ զ
'ի մէջ գայլոց · եղերո՛ւք այսուհետև խորագէտք իբ-
17 րև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս : * Զգո՛յշ լինի-
ջիք 'ի մարդկանէ · զի մատնեսցեն զձեզ յատեանս, և
18 'ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ : * Եւ առա-
ջի դատաւորաց և թագաւորաց տանիցեն զձեզ վս իմ,
19 'ի վկայութիւն նց և հեթանոսաց : * Այլ յորժամ մատ-
նիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՞րպէս կամ զինչ խօսիցիք ·
20 զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք : * Զի
ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձե-
21 րոյ որ խօսիցի 'ի ձեզ : * Մատնեսցէ եղբայր զեղբայր
'ի մահ, և հայր՝ զորդի : և յարիցեն որդիք 'ի վերայ
22 հարց՝ և սպանանիցեն զնս : * Եւ եղիջիք ատեցեալք
յամենեցունց վս անուան իմոյ · իսկ որ համբերեսցէ
23 'ի սպառ, նա կեցցէ : * Եւ յորժամ հալածիցեն զձեզ
'ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ · և եթէ յայնմանէ
հալածիցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւսն : Ամէն ասեմ ձեզ,
ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եկեսցէ Որդի մար-
24 դոյ : * Ոչ է աշակերտ վեր քան զվարդապետ, և
25 ոչ ծառայ քան զտէր իւր : * Շատ իցէ աշակերտին՝ ե-
թէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև
զտէր իւր : Եթէ զտանուտէրն բէեղզեբուղ կոչեցին,
որ

րոյ : (11) Ոմանք · Անդ լինիցիք : (13) Ոմանք · Ողջոյն
ձեր 'ի ձեզ դարձցի : (14) Ոմանք յաւելուն · Ելանիցէք
'ի տանէն կամ 'ի քաղաքէն : (16) Ոմանք · Որպէս զոչխարս 'ի
մէջ : (17) Ոմանք · Զգո՛յշ լերուք 'ի մարդ" : (18) 'Ի լա" ·
Տանիցեն զձեզ · համաձայն ոմանց Ն բնաբ" : (19) Ոմանք ·
Մատնեսցեն զձեզ : (20) Ոմանք · Հոգի Հօր ձերոյ խօ-
սեսցի 'ի : (21) Ոմանք · Եւ յարիցեն որդիք : (23) Ոմանք ·
Հալածեսցեն զձեզ · · եսցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւս :
(24) Ոմանք յաւելուն · Քան զվարդապետ իւր, և ոչ ծառայ մե-
քանի : (25) Ոմանք · Շատ է աշակերտին եթէ լինիցի իբ" :

Digitized by Google

որչափ ևս առաւել զընտանիս նր։ * Մի՛ այսուհետև 26
երկնչիցիք 'ի նոցանէ։ զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ
յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ * Զոր ասեմ 27
ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս. և զոր լսիցէք յուն-
կանէ՝ քարոզեցէք 'ի վերայ տանեաց։ * Եւ մի՛ երկն- 28
չիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կա-
րեն սպանանել։ Այլ երկերո՛ւք դուք առաւել յայն-
մանէ՝ որ կարողն է զոգի և զմարմին կորուսանել 'ի
գեհենի։ * Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանգի միոջ 29
վաճառին, և մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց
Հօր ձերոյ։ * Այլ ձեր և տեղ իսկ հեր գլխոյ թուեալ 30
է։ * Եւ արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում 31
ճնճղուկս։ * Ամենայն որ խոստովանեսցի յիս առա- 32
ջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի
Հօր իմոյ որ յերկինսն է։ * Եւ որ ուրասցի զիս առա- 33
ջի՝ մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝
որ յերկինս է։ * Մի՛ համարիք եթէ եկի արկանել 34
խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ
սուր։ * Քանզի եկի քակել զայր՝ 'ի հօրէ իւրմէ, և 35
զդուստր 'ի մօրէ, և զհարսն 'ի սկեսրէ իւրմէ։ * Եւ 36
թշնամիք առն՝ ընտանիք իւր։ * Որ սիրէ զհայր կամ 37
զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի։ Եւ որ
սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ
արժանի։ * Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի 38
իմ, չէ ինձ արժանի։ * Որ գտանէ զանձն իւր՝ կո- 39
րուսցէ զնա, և որ կորուսանէ զանձն իւր վն իմ, գտցէ
զնա։ * Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ըն- 40
դունի՝ ընդունի զառաքիչն իմ։ * Որ ընդունի զմար- 41
գարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ։
Եւ որ զարդար յանուն արդարոյ՝ զվարձս ար-
դարոյ առցէ։ * Եւ որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս 42
յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշա-
կերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր։

ԳԼ. ԺԱ.

գէ Եւ եղև իբրև կատարեաց Յս պատուէր երկոտա- 1
սանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել
և ուսուցանել 'ի քաղաքս նց։

* իսկ

(26) Ոմանք. Ոչինչ է ծածուկ։ (27) Ոմանք. Լսէք յուն-
կանէ։ Որք յօրինակին. լսիցէք յունկանէ։ (28) Ոմանք. Եւ մի
երկնչիցիք 'ի նցնէ որ սպանանիցեն։ (29) Ոմանք. Ոչ ան-
կանիցի։ (31) Ոմանք. Մի երկնչիք։ (33) Յոմանս պակասի. Որ
յերկինսն է։ (35) Ոմանք յաւելուն. 'Ի մօրէ իւրմէ։ (37) Ո-
մանք. Չէ ինձ արժ"։ (39) Ոմանք. Եւ որ կորուսցէ զան"։

2 * Իսկ յովհաննէս իբրեւ լուաւ 'ի բանդին զգործսն, Ի
3 քնի, առաքեաց 'ի ձեռն աշակերտաց իւրոց, * եւ ասէ
ցնա. դու ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալ֊
4 ցուք: * Պատասխանի ետ յս՝ եւ ասէ ցնս. գնացէք
5 պատմեցէք յովհաննու, զոր լուայք եւ տեսէք: * կոյրք՝
տեսանեն կաղք՝ գնան, բորոտք՝ սրբին, եւ խուլք լը֊
սեն, եւ մեռեալք յառնեն, եւ աղքատք աւետարանին:
6 * Եւ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս: * Եւ իբրեւ
7 նքա գնացին, սկսաւ յս ասել ցժողովուրդսն զյովհան֊
նէ: Զի՞նչ ելէք տեսանել յանապատին, եղէ՞գն շար֊
8 ժուն 'ի հողմոյ: * այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդ 'ի
հանդերձս փափկութեան զարդարեալ: Ահաւանիկ որ
զփափկութիւն զգեցեալ են՝ 'ի տունս թագաւորաց են:
9 * Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՛ ասեմ
10 ձեզ, եւ առաւել եւս քան զմարգարէ: * Զի նա է՝ վս
որոյ գրեալն է. ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ ա֊
ռաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանապարհս
11 քո առաջի քո: * Ամէն ասեմ ձեզ, չէ յարուցեալ 'ի
ծնունդս կանանց մեծ քան զյովհաննէս մկրտիչ: Բայց
12 փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա: * Բայց
յաւուրցն յովհաննու մկրտչի մինչեւ ցայժմ՝ արքայու֊
թիւն երկնից բռնադատի, եւ բռունք յափշտակեն զնա:
13 * Քանզի ամենայն օրէնք եւ մարգարէք մինչեւ ցյովհան մար֊
14 գարէացան: * Եւ եթէ կամիք ընդունել՝ նա է եղիա՝
15 որ գալոցն է: * Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
16 * Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկանց՝
որ նստիցին 'ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւր֊
17 եանց, * եւ ասիցեն. փող հարաք ձեզ՝ եւ ո՛չ կաքաւե֊
18 ցէք, ողբացաք ձեզ՝ եւ ո՛չ կոծեցարուք: * Եկն յովհան֊
նէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր. եւ ասեն՝ դև՛ գոյ 'ի նմ:
19 Եկն որդի մարդոյ ուտէ՛ եւ ըմպէ. եւ ասեն, ահա այր
կերող եւ արբեցող, բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւո֊
րաց: եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց:
20 * Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն
21 բազում զօրութիւնք նր, եւ ոչ ապաշխարեցին: * Վայ
քեզ

Գրչ. ձեռ. (4) Ոսկան. Գնացէք եւ պատմեցէք: (6) Ոս֊
կան. Եւ երանի է որ ոչ գայթ": (7) Ոսկան. Զեղեգն:
(10) Ոսկան. Զի սա է, վոյ գրեալ: (10) Ոսկան. Ահաւա֊
սիկ ես առաքեմ.. զճանապարհս քո: (12) Ոսկան. Արքայու֊
թեան երկ": (13) Ոսկան. Մինչեւ ցյովհաննէս մարգա": Ուր
օրինակ մի եղեւեալ համաձայն մերումս, 'ի լուսս" նշանակէ՝ սոսոյգն
այս է: (14) Ոսկան. Եւ թէ կամիք: (19) 'Ի լուսս": 'Ի Հե֊
բրայ՝ Որդւոց իւրոց. նշանակի՝ 'ի գործոց. համաձայն ոմանց:
(21) Յօրինակին. Եւ 'ի սկզբանէ:

Digitized by Google

քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա. զի եթէ 'ի Տիւ-
րոս և 'ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ 'ի ձեզ ե-
ղեն, վաղուց և սարգեւք խորգով և մոխրով ապաշխար-
եալ էր ։ Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկ- 22
րին Տիւրոսի և Սիդովնի յաւուրն դատաստանի՝ քան
ձեզ ։ Եւ դու Կափառնաում, մի՞ մինչև յերկինս բարձ- 23
րացիս. այլ մինչև 'ի դժոխս իջցես ։ Զի եթէ 'ի Սո-
դոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն 'ի քեզ, ապաքէն
կային ևս մինչև ցայսօր ։ Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկ- 24
րին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաս-
դ կ տանի՝ քան քեզ ։ Յայնմ ժամանակի պատասխանի ետ 25
յս՝ և ասէ. Գոհանամ զքէն հայր՝ տէր երկնի և երկ-
րի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և
յայտնեցեր տղայոց ։ Այո հայր. զի այսպէս հաճոյ 26
եղև առաջի քո ։ Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի հօրէ 27
իմմէ ։ Եւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր. և 28
ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ում որդին կա-
միցի յայտնել ։ Եկայք առ իս ամենայն վաստակեալք 29
և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ ։ առէք զլուծ
իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ
սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց ։ զի լուծ 30
իմ քաղցր է. և բեռն իմ փոքրոգի ։

ԳԼ. ԺԲ.

դ բ Յայնժամ գնաց յս ը արտորայսն նդ 'ի շաբաթու. 1
և աշակերտքն նր. քաղցեան, և սկսան հասկ կոր-
զել և ուտել ։ Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. 2
ահաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր ոչ է արժան
գործել 'ի շաբաթու ։ Եւ նա ասէ ցնս. ոչ էցէ ըն- 3
թերցեալ ձեր՝ զոր արար դաւիթ, յորժամ քաղցեաւն,
և որ ընդ նմայն էին ։ զիարդ եմուտ 'ի տունն այ՝ և 4
եկեր զհաց զառաջաւորութեան. զոր ոչ էր օրէն նմա
ուտել, և ոչ՝ որոց ընդ նմայն էին, բայց միայն քա-
հանայից ։ Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի 'ի 5
շաբաթս քահանայքն 'ի տաճարին՝ պղծեն զշաբաթն,
և անմեղք են ։ բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտա- 6
ճարն է աստ ։ Եւ եթէ գիտէիք զինչ է՝ զողորմութիւն 7
կամիմ՝ և ոչ զզոհ. ապա ոչ դատապարտէիք դուք
զան-

(23) Ոմանք. Որ 'ի քեզ եղեն ։ (24) Ոմանք. Քան ձեզ ։
(29) Ոմանք. Խոնարհ սրտիւք ։
ԳԼ. ԺԲ. (2) Ոմանք. Ահաւասիկ աշա" .. զոր չէ արժան գոր" ։ (3) Ոմանք. Չիցէ ընթերցեալ ։ (4) Ոմանք. Զհացն առաջաւո" ։ (5) Ոմանք. Ընթերցեալ ձեր յօրէնս .. պղծեն զշաբաթն ։ (7) Ոմանք. Զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհս ։

Digitized by Google

8 զանպարտսն: * Զի տէր է շաբաթու՝ որդին մարդոյ:
9 * Եւ գնացեալ անտի յս, եկն ՚ի ժողովուրդն նց:
10 * Եւ ահա էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. ԻԱ
հարցին զնա՝ և ասեն, եթէ արժա՞ն իցէ ՚ի շաբաթու
11 բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ: * Եւ նա՝ ասէ
ցնս. ո՞վ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և ան-
կանիցի այն ՚ի խորխորատ ՚ի շաբաթու. միթէ ոչ ու-
12 նիցի և յարուցանիցէ զնա: * Իսկ արդ՝ որչափ ևս՝ ա-
ռաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է
13 ՚ի շաբաթու բարւոք գործել: * Յայնժամ ասէ ցայրն.
ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ո՛ղջ իբրև զմ-
14 իւսն: * Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ
15 առնէին զնմանէ՝ թէ ո՞րպ կորուսցեն զնա: * Եւ յս իբ-
րև գիտաց, մեկնեցաւ անտի: Եւ գնացին զհետ նր
16 ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենեսեան: * Եւ
17 սաստեաց նց՝ զի մի յայտնեսցեն զնմանէ ուրուք: * զի
18 լցցի որ ասացաւն ՚ի ձեռն եսայեայ մարգարէի: * Ահա
մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճե-
ցաւ անձն իմ. եդից զհոգի իմ ՚ի վերայ նր, և իրա-
19 ւունս հեթանոսաց պատմեսցէ: * ո՛չ հակառակեսցի
և ո՛չ աղաղակեսցէ, և ո՛չ ոք լուիցէ ՚ի հրապարակս զբ-
20 արբառ նր: * Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, և
զպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցէ. մինչև հանցէ ՚ի
21 յաղթութիւն զդատաստանն: * և յանուն նր հեթանոսք
յուսասցին:
22 * Յայնժամ մատուցին առ նա դիւահար մի կոյր և ԻԲ
համր, և բժշկեաց զնա. մինչ զի համրն և կոյրն խօսէ- գ գ
23 ցի և տեսանիցէ: * Զարմանային ամ ժողովուրդքն՝ և
24 ասէին. միթէ՝ սա՛ իցէ քն որդին դաւթի: * Բայց փա-
րիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդևս՝
25 եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց: * Իբրև գի-
տաց յս զխորհուրդս նց՝ ասէ ցնս. ամ թագաւորութի
բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամ քաղաք կմ տուն
26 բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ: * և եթէ սատանայ
զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զի-
27 արդ կացցէ թագաւորութիւն նր: * Եւ եթէ ես բէեղ-
զեբուղաւ հանեմ զդևս՝ որդիքն ձեր իւ՞ հանիցեն. վս
այնո-

(9) Օրինակ. ՚Ի ժողովուրդսն նց: (11) Օրինակ. Ո՞վ է ՚ի ձէնջ մարդ: (12) Օրինակ. Ապա պարտ է ՚ի շա": (14) Այլք. խորհուրդ առնէին զնմանէ: (15) Այլք. Զհետ նր ժողովուրդքն, և բժ": (15) Օրինակ. Եւ բժշկեաց զնս: (20) Օրինակ. Զեղէգնն ջախջախեալ... զդատաստանն: (23) Օրինակ. Եւ ասեն, միթէ սա: (26) Բղծ. Թագաւորութի նր: (27) Օրինակ. Վկայագրին նոքա և":

Digitized by Google

այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։ * Ապա եթէ 28
հոգւովն Աստուծոյ հանեմ ես զդևս, ուրեմն հասեալ է ՚ի վե֊
րայ ձեր արքայութիւն Աստուծոյ։ * Կամ զիա՞րդ կարէ ոք մտա֊ 29
նել ՚ի տուն հզօրի՝ և զգործիսն նորա յափշտակել. եթէ
ոչ նախ կապիցէ զհզօրն, և ապա զտունն նորա յափշտա֊
կիցէ։ * Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է. և որ ոչ ժո֊ 30
ղովէ ընդ իս՝ ցրուէ։ * Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն 31
մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն
հայհոյութիւն մի՛ թողցի։ * Եւ որ ոք ասիցէ բան զորդ֊ 32
ւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զհոգւոյն սրբոյ ասի֊
ցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի, և մի՛ ՚ի հան֊
դերձելումն։ * Կամ արարէք զծառն բարի՝ և զպտուղ 33
նորա բարի, կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ նորա չար.
քանզի ՚ի պտղոյ անտի ծառն ճանաչի։ * Ծնունդք ի֊ 34
ժից, զիա՞րդ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք.
քանզի ՚ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։ * Մարդ 35
բարի՝ ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս.
և մարդ չար՝ ՚ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչա֊
րիս։ * Բայց ասեմ ձեզ. թէ ընդ ամենայն դատարկ բանի 36
զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դա֊
տաստանի։ * Զի ՚ի բանից քոց՝ արդարասցիս, և ՚ի 37
բանից քոց՝ պարտաւորեսցիս։
ԻԳ. * Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ՚ի դպրա֊ 38
Դ Դ րացն և ՚ի փարիսեցւոց՝ և ասեն. վարդապետ՝ կամիմք
նշան ինչ տեսանել ՚ի քէն։ * Նա պատասխանի ետ՝ և 39
ասէ ցնոսա. ազգ չար և շնացող նշան խնդրէ. և նշան մի՛
տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի։ * Զի 40
որպէս էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գի֊
շերս, նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի
զերիս տիւս և զերիս գիշերս։ * Արք նինուէացիք յա֊ 41
րիցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատա֊
պարտեսցեն զսա, զի զղջացան ՚ի քարոզութեն Յովնա֊
նու։ Եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան՝ է աստ։
* Դշխոյն հարաւոյ յարիցէ ՚ի դատաստանի ընդ ազգիս 42
ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ զսա. զի եկն ՚ի ծա֊
գաց երկրի լսել զիմաստութիւն Սողոմոնի։ Եւ ահա
մեծ քան զՍողոմոն՝ է աստ։ * Այլ յորժամ այսն 43
պիղծ

(29) Ոմանք. Զտունն նորա։ (31) Ոմանք. Զի ամենայն մեղք և։ (31) Ոսկան. Բայց հոգւոյն հայ՛՛։ (34) Ոմանք. Քանզի յաւելուածոյ սրտին խօսի բերան։ (38) Ոմանք. Ետուն ոմանք... և ասեն ցնա, վար՛՛։ (39) Ոմանք. Յովնանու մարգարէին։ (40) Ոմանք. ՚Ի փոր կէտին զե՛՛։ (41) Ոմանք. ՚Ի քարոզութեն յովնանու։ (42) Ոմանք. Եւ դատապարտեսցէ զսոսա։ (43) Ոմանք. Ելանէ ՚ի մարդոյ։

Digitized by Google

պիղծ ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս ,
44 խնդրէ հանգիստ՝ եւ ոչ գտանէ ։ * Յայնժամ ասէ . դար-
ձայց 'ի տուն իմ՝ ուստի ելին ։ եւ եկեալ գտանէ պա-
45 րապորդ մաքրեալ եւ յարդարեալ ։ * Յայնժամ երթայ
եւ առնու ընդ իւր՝ եւթն այլ այսս չարագոյնս քան
զինքն , եւ մտեալ բնակէ անդ . եւ լինին յետին մարդոյն
այնորիկ չար քան զառաջինսն ։ Այնպէս եղիցի եւ ազ-
46 գիս այսմիկ չարի ։ * Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն
խօսէր , ահա մայր նր եւ եղբարք նր կային արտաքոյ՝
47 եւ խնդրէին խօսել ընդ նմա ։ * Եւ ասէ ոմն ցնա , ահա
մայր քո՝ եւ եղբարք քո՝ կան արտաքոյ , եւ խնդրեն խօ-
48 սել ընդ քեզ ։ * Նա պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն
ցնա , եւ ասէ . ո՞վ է իմ մայր , կամ ո՞վ են իմ եղբարք ։
49 * Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ . ահաւա-
50 սիկ մայր իմ եւ եղբարք իմ ։ * Զի որ առնիցէ զկամս
հօր իմոյ որ յերկինսն է , նա է իմ եղբայր՝ եւ քոյր՝ եւ
մայր ։

ԳԼ. ԺԳ.

1 Յաւուր յայնմիկ ելեալ Յս 'ի տանէն՝ նստէր առ ծո- ԻԴ
2 վեզերն ։ * Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բա- ԻԵ
զումք , մինչեւ մտանել նմա 'ի նաւն՝ եւ նստել . եւ ամ-
3 ժողովուրդն կայր առ ծովեզերբն ։ * Եւ խօսէր ընդ
4 նոսա բազում առակօք , եւ ասէր ։ * Ահա՝ ել սերմա-
նահան սերմանել . եւ 'ի սերմանելն իւրում , էր որ ան-
կաւ առ ճանապարհաւ , եւ եկն թռչուն երկնից՝ եւ ե-
5 կեր զնա ։ * Եւ այլն անկաւ յապառաժի , ուր ոչ գոյր
հող բազում , եւ վաղվաղակի բուսաւ ։ առ 'ի չգոյէ հիւ-
6 թոյ երկրին՝ * 'ի ծագել արեւուն տապացաւ , եւ զի ոչ
7 գոյին արմատք՝ չորացաւ ։ * Եւ այլն անկաւ 'ի մէջ
8 փշոց , եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա ։ * Եւ այլն
անկաւ յերկիր բարի , եւ տայր պտուղ . էր՝ որ հարիւ-
րաւոր , եւ էր՝ որ վաթսնաւոր , եւ էր՝ որ երեսնաւոր ։
9 * Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։ * Եւ մատու-
10 ցեալ աշակերտքն ասեն ցնա . ընդէ՞ր առակօք խօսիս
11 ընդ նս ։ * Նա պատասխանի ետ եւ ասէ ցնս . քանզի
ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեն երկ-
12 նից , եւ նց չէ տուեալ ։ * Զի որ ունիցի՝ տացի նմա
եւ յա

---

(44) Ոմանք . Ուստի ելի . . գտանէ զնա պարապորդ ։ (45) Բազմ . Յետինն մարդոյն ։ (45) Ոմանք . Այսպէս , եւ լիցի ազգիս (48) Ոմանք . Կամ ով իմ եղբարք ։ (49) Ոմանք . Ահա մայր իմ ։

ԳԼ . ԺԳ . (1) Ոմանք . Նստաւ առ ծովեզերբն ։ (2) Ոմանք . Կայր առ ծովեզերն ։ (5) Ոմանք . 'Ի ծագել արեւու ։

եւ յաւելցի. եւ որ ոչն գուցէ՝ եւ զոր ունիցին բարձ-
ցի 'ի նմանէ: * Վն այնորիկ առակօք խօսիմ ընդ նս. 13
զի տեսանեն՝ եւ ոչ տեսանեն, եւ լսեն՝ եւ ոչ լսեն, եւ
ոչ առնուն 'ի միտ: * Եւ կատարի առ նս մարգարէու- 14
թիւն Եսայեայ՝ որ ասէ. լսելով լուիջիք՝ եւ մի իմասջիք.
եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի տեսջիք: * զի թանձրացաւ 15
սիրտ ժողովրդեանս այսորիկ, եւ ականջօք իւրեանց
ծանրանս լուան. եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի
երբեք տեսցեն աչօք՝ եւ ականջօքն լուիցեն՝ եւ սրտիւքն
իմասցին, եւ դարձցին՝ եւ բժշկեցից զնս: * Բայց ձեր 16
երանի է աչացդ՝ զի տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի
լսեն: * Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ 17
արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ եւ ոչ տե-
սին, եւ լսել զոր լսէքդ՝ եւ ոչ լուան: * Եւ արդ՝ լուա- 18
րուք դուք զառակ սերմանացանին: * յամենայնէ՝ որ 19
լսէ զբանն արքայութեան՝ եւ ոչ առնու 'ի միտ, գայ չարն՝
եւ յափշտակէ զսերմանեալն 'ի սրտի նր. այն է՝ որ առ
ճանապարհաւն սերմանեցաւ: * Եւ որ յապառաժին 20
սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ վաղվա-
ղակի խնդութեամբ ընդունի զնա: * Բայց քանզի ոչ ունի 21
արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. 'ի լինել
նեղութեան եւ հալածանաց վն բանին՝ վաղվաղակի գայ-
թագղի: * Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ, այն է՝ 22
որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք
մեծութեան հեղձուցանեն զբանն, եւ լինի անպտուղ. * Իսկ 23
որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՝ որ իբրեւ լսէ
զբանն՝ եւ 'ի միտ առնու, եւ տայ զպտուղ, է՝ որ հա-
րիւր, եւ է՝ որ վաթսուն. եւ է՝ որ երեսուն: Որ ու-
գ ղ նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: * Այլ առակ արկ առ 24
նս՝ եւ ասէ: Նմանեցաւ արքայութիւն երկնից՝ առն որ
սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում: * եւ 'ի 25
քուն լինել մարդկան, եկն թշնամի նր. եւ ցանեաց 'ի
վր որոմն 'ի մէջ ցորենոյն՝ եւ գնաց: * Եւ իբրեւ բու- 26
սաւ խոտն՝ եւ արդիւնս պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն:
* Մատուցեալ ծառայք տանուտեառն ասեն ցնա. 27
տէր՝ ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում,
արդ՝

---

(13) Ոսկան. Վն այդորիկ առա՛՛: (13) Ոմանք. Զի տե-
սանեն, եւ ոչ տեսցեն: (15) Բոլորք. Եւ ականջօք լուի-
ցեն, եւ սրտիւք իմաս՛՛: (18) Ոմանք. Սերմնացանին: (19)
Ոսկան. Ամենայն որ լսէ: (20) Յամենայն գիրս. Ընդունի
զնա: (21) Ոմանք. Վաղվաղակի գայթագղի: (23) Յամենայն գիրս.
Եւ է որ երեսուն: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Այլ:
(24) Ոմանք. Արքայութիւն երկնից: (25) Ոմանք. Եւ եկն
թշնամին նր: (26)(27) Բոլորք. Եւ որոմն... զորոմնն:

Digitized by Google

28 մարդ՝ ուստի ունիցի զորոմն : * Եւ նա ասէ ցնս · այս
թշնամի մարդ արար զայն : ասեն ցնա ծառայքն · կամի՞ս՝ զի
29 երթիցուք քաղեսցուք զայն 'ի բաց : * Եւ նա ասէ ցնս ·
ոչ · գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ
30 նմին 'ի բաց խլիցէք : * Թո՛ղ տուք երկոցունց աճել 'ի
միասին մինչև 'ի հունձս, և 'ի ժամանակի հնձոց ասա-
ցից ցհնձօղսն · քաղեցէ՛ք նախ զորոմնն, և կապեցէ՛ք
զայդ խրձունս առ 'ի յայրել · և զցորեանն ժողովեցէ՛ք
31 'ի շտեմարանս իմ : * Այլ առակ արկ առ նս՝ և ասէ ·
նման է արքայութն երկնից հատոյ մանանխոյ · զոր ա-
32 ռեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում : * որ
փոքր է քան զամ սերմանիս · և յորժամ աճիցէ, մեծ
է քան զամ բանջարս · և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց
33 երկնից և հանգչել յոստս նր : * Այլ առակ խօսեցաւ
ընդ նս՝ և ասէ · նման է արքայութն երկնից խմորոյ,
զոր առեալ կնոջ թաքոյց 'ի գրիւս երիս ալևր՝ մինչև
34 ամ խմորեցաւ : * Զայս ամ խօսեցաւ յս առակօք ըն ժո-
ղովուրդսն · և առանց առակի ինչ ոչ խօսէր ըն նոսա :
35 * զի լցցի ասացեալն 'ի մարգարէէ · բացից առակօք
զբերան իմ, բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխար-
36 հի : * Յայնժամ թողեալ յս զժողովուրդսն՝ եկն 'ի գէ
տուն · մատեան առ նա աշակերտքն և ասեն, մեկնեա՛
37 մեզ զառակ որոմանցն ագարակի : * Նա պատասխանի
ետ՝ և ասէ ցնոսա · որ սերմանէ սերմն բարի՝ է որդի
38 մարդոյ : * և ագարակն աշխարհս է : սերմն բարի՝ նք
են, որ որդիքն արքայութն են · իսկ որոմնն որդիք չա-
39 րին են : * և թշնամին որ սերմանեաց զայն՝ սատանայ է :
և հունձքն կատարած աշխարհիս է, և հնձօղքն՝ հրե-
40 շտակք են : * Որպէս ժողովի որոմնն՝ և 'ի հուր այ-
41 րի, նոյնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս : * առա-
քեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն
յարքայութենէ նր զամ գայթագղութիս՝ և զայնոսիկ որք
42 գործեն զանօրէնութիւն : * և արկցեն զնս 'ի հնոց հրոյ ·
43 անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց : * Յայնժամ ար-
դարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութն երկ-
44 նից : որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ : * Դարձեալ
նման

(30) Օրինակ · Զայդ 'ի խրձունս : (32) Օրինակ · Քան զամ բան-
ջար : (33) Օրինակ · Նմանեցաւ արքայութն երկ" : (34) Օրինակ ·
Ընդ ժողովրդեանն : (35) Օրինակ · 'ի մարգարէէն : (36)
Օրինակ յաւելուած · 'ի տուն իւր . . . աշակերտքն նր : Եւ օրինակ ·
Աշակերտքն իւր և ասեն : (37) Օրինակ · Զսերմն բարի :
(38) Օրինակ · Իսկ որոմն : (41) Օրինակ · Որ գործեն զանօ" :
(43) Բազմ · Ծագեսցեն իբրև : (44) Օրինակ · Երթեալ վա-
ճառէ զամ ինչ զոր ունէր :

Digitized by Google

նման է արքայութիւն երկնից գանձի թաքուցելոյ յագա-
րակի, զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց․ և ՚ի խնդութենէ ան-
տի երթայ վաճառէ զամ ինչ զոր ունի, և գնէ զա-
գարակն զայն։ ✱ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկ- 45
նից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գե-
ղեցիկս։ ✱ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ եր- 46
թեալ վաճառեաց զամ ինչ զոր ունէր՝ և գնեաց զայն
մարգարիտ։ ✱ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից 47
ուռկանի արկելոյ ՚ի ծով՝ և յամ ազգաց ժողովելոյ։
✱ զոր՝ իբրև լցաւ, հանեալ ՚ի ցամաք՝ և նստեալ ժո- 48
ղովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ՚ի բաց ըն-
կեցին։ ✱ Այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհի․ 49
ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդա-
րոց, ✱ և արկցեն զնս ՚ի հնոց հրոյն․ անդ եղիցի լալ 50
և կրճել ատամանց։ ✱ Ասէ ցնս յս․ իմացարուք զայս 51
ամ։ ասեն ցնա․ այո տր։ ✱ Եւ նա ասէ ցնոսա․ վն 52
այսորիկ ամ դպիր աշակերտեալ արքայութեն երկնից,
նման է առն տանուտեառն՝ որ հանէ ՚ի գանձէ իւրմէ
Է Կ զնոր և զհին։ ✱ Եւ եղև իբրև կատարեաց յս զառակս 53
զայսոսիկ՝ փոխեցաւ անտի։ ✱ Եւ եկեալ ՚ի գաւառ իւր՝ 54
ուսուցանէր զնս ՚ի ժողովրդեանն նց։ մինչև զարմա-
նալ նց՝ և ասել․ ուստի՞ իցէ սմա իմաստութիւն և
զօրութիւնք։ ✱ Ո՞չ սա է հիւսանն որդի․ ոչ մայր սորա 55
կոչի մարիամ․ և եղբարք սորա յակովբոս՝ և յովսէփ՝
և սիմոն՝ և յուդա։ ✱ և քորք սորա ոչ ամենեքեան 56
առ մեզ են․ և արդ՝ ուստի՞ է սմա այս ամ։ ✱ և գայ- 57
թագղէին ՚ի նա։ Եւ յս ասէ ցնոսա․ չիք մարգարէ
անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի՝ և յիւրում տան։
✱ Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհա- 58
ւատութեն նոցա։

ԳԼ․ ԺԴ․

ԻԵ Յայնմ ժամանակի լուաւ հերովդէս չորրորդապետս 1
զլուր յսի։ ✱ և ասէ ցծառայս իւր․ նա է յովհան- 2
Է Բ նէս մկրտիչ, նա յարեաւ ՚ի մեռելոց, և վն այնորիկ
զօրութիւնք լինին նովաւ։ ✱ Քանզի հերովդէս կալաւ 3
զյով-․

(46) Բ՛ղմ․ Զամ զոր ինչ ունէր։ (47) Օրինակ մ․ Ազ-
գաց ժողովելոց։ (48) Ոմանք․ Որ իբրև լցաւ։ (54) Ո-
մանք․ Եւ զօրութի։ (55) Օրինակ մ․ Յակովբոս և յովսէփ։
(56) Այլ ոմանց ընդ․ Մի ոչ ամեքեան։ (56) Ոմանք․ Արդ
ուստի։ (58) Ոմանք․ Վն անհաւատութեն նց։
ԳԼ․ ԺԴ․ (2) ՚Ի լուս․ Նա է․․ Նա յարեաւ․ հարցական
ոճով նշանակին։ (3)(6) Յօրինակին ՚ի բնաբանի չէր բա-
ռս՝ հերովդիայ, դարձեալ և չանէրքն նշանակեալ։

Digitized by Google

ղողջունանելս՝ կապեաց զնա՝ և եդ 'ի բանտի վն Հերով-
4 դիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նր : * զի ասէր ցնա յով-
5 հաննէս . չէ՛ արժան քեզ ունել զդա : * և կամէր զնա
սպանանել, բայց երկնչէր 'ի ժողովրդենէ անտի . քան-
6 զի իբրև զմարգարէ ունէին զնա : * Եւ իբրև եղեն
ծննդոցք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ
'ի մէջ բազմականին . և հաճոյ թուեցաւ Հերովդի .
7 * ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմ զինչ և խնդ-
8 րեսցէ : * Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէ իւր-
մէ, տո՛ւր ինձ ասէ այսր՝ 'ի վր սկտեղ զգլուխն յով-
9 հաննու մկրտչի : * և տրտմեցաւ թագաւորն . բայց վն
երդմանցն, և բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա :
10 * Եւ առաքեաց գլխատեաց զյովհաննէս 'ի բանտի :
11 * և բերաւ գլուխն նր սկտեղբ՝ և տուաւ աղջկանն, և
12 տարաւ առ մայր իւր : * Եւ մատուցեալ աշակերտքն
նր՝ բարձին զմարմինն և թաղեցին . և եկեալ պատմե-
13 ցին յի : * Եւ իբրև լուաւ յս, գնաց անտի նաւու Եգ
յանապատ տեղի առանձինն : Իբրև լուան ժողովուրդքն՝
14 գնացին զհետ նորա հետի 'ի քաղաքաց անտի : * Եւ
իբրև ել, ետես ժողովուրդ բազում, գթացաւ 'ի նս,
և բժշկեաց զհիւանդս նց :
15 * Իբրև Ը երեկս եղև, մատեան առ նա աշակերտքն ԻԶ
և ասեն . տեղիս անապատ է, և օրս՝ տարաժամեալ .
արձակեա զժողովուրդսդ՝ զի երթիցեն յագարակս 'ի շէնս,
16 գնեսցեն իւրեանց կերակուրս : * Եւ ասէ յս . ոչինչ
17 պիտոյ է դոցա երթալ . դուք տուք դոցա ուտել : * Եւ
նք ասեն ցնա . ոչինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ
18 և երկուս ձկունս : * Եւ ասէ ցնս . բերէք այսր զայն :
19 * Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդսն 'ի վե-
րայ խոտոյ : և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձը-
կունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց . և եբեկ՝ և ետ ցա-
շակերտսն զնկանակսն, և աշակերտքն ժողովրդեանն :
20 * կերան ամենեքեան՝ և յագեցան, և բարձին զնշխարս
21 կոտորոցն երկոտասան սակառս լի : * Եւ որք կերանն՝
էին արք իբրև հինգ հազար . թող զկանայս և զմանկ-
22 ունս : * Եւ սաստկեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել Եգ
'ի

Բերեալ օրինակին առնել՝ Հերովդիադայ, ըստ Ոսկանայ օրինաց : (5) Ցօրինակին գրեալ . Եւ կամէր զնա մեռուցանել : (6) Ոսկան . 'Ի մէջ բազմականացն : (9) Ոմանք . Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն : (11) Բերեալ . Գլուխն նր : (14) Ոսկան . Եւ գթացաւ : (16) Ոմանք . Ո՛չ է պիտոյ դոցա երթալ : (19) Ոմանք . Զժողովուրդսն 'ի վր : (19) Ոսկան . Զհինգ նկանակսն : (20) Ոմանք . Զնշխարս կոտորոցն : (21) Ոմանք . Էին իբրև արք : (22) Ոմանք . Զժողովուրդ արձակեսցէ :

Digitized by Google

'ի նաւ, եւ յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդսն
արձակիցէ։ * Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն՝ ել
'ի լեառն առանձինն կալ յաղօթս։ Եւ իբրեւ ընդ ե- 23
րեկս եղեւ, անդ էր միայն։
ԻԵ * Եւ նաւն մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպա- 24
րիզօք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն։
* Եւ 'ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նս Յս 25
գնալով 'ի վերայ ծովուն։ * Իբրեւ տեսին զնա աշա- 26
կերտքն զի գնայր 'ի վերայ ծովուն՝ խռովեցան, եւ ա-
սեն թէ աչաչանք ինչ իցէ. եւ առ ահին՝ աղաղակեցին։
* Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նս Յս՝ եւ ասէ. քաջա- 27
լերեցարուք, ես եմ մի երկնչիք։ * Պատասխանի ետ 28
նմա Պետրոս՝ եւ ասէ. Տէր՝ եթէ դու ես, հրամայեա
ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոյս։ * Եւ նա ասէ, եկ։ 29
եւ իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնայր 'ի վերայ ջուրցն, եւ
եկն առ Յս։ * Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. 30
եւ իբրեւ սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց՝ եւ ասէ. Տէր՝
փրկեա՛ զիս։ * Եւ վաղվաղակի Յս ձգեաց զձեռն իւր 31
կալաւ զնա եւ ասէ. Թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր։
* Եւ իբրեւ ելին 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն։ * Եւ 32
որ 'ի նաւին էին՝ մատեան երկիրպագին նմա՝ եւ ասեն. 33
արդարեւ Որդի Այ ես դու։ * Եւ անցեալ եկին 'ի ցա- 34
մաք 'ի Գեննեսարէթ։ * Եւ իբրեւ ծանեան զնա արք 35
տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամ գաւառն՝ եւ ածին
առ նա զամ հիւանդս։ * Եւ աղաչէին զնա, զի գոնէ՝ 36
միայն 'ի քղանցս հանդերձի նր մերձեսցին. եւ որ միան-
գամ մերձեցանն՝ փրկեցան։

ԳԼ. ԺԵ.

ԻԲ Յայնժամ մատեան առ Յս՝ որ յԵրմէ փարիսեցիքն եւ 1
դպիրք՝ եւ ասեն։ * ընդէ՞ր աշակերտքն քո անցա- 2
նեն զաւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուանան զձեռս յոր-
ժամ հաց ուտեն։ * Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնս. 3
իսկ դուք՝ ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն Այ՝ վս
ձերոյ աւանդութեանն։ * Զի Այ ասաց. պատուեա զհայր 4
քո եւ զմայր։ * Եւ որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու 5
վախճանեսցի։ * Եւ դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր 6
կամ

(24) Ոմանք. Ընդդէմ էր հողմն։ (25) Ոմանք. Եւ 'ի չոր-
րորդ պահու։ (28) Ոմանք. Նմա Պետրոս. Տէր եթէ։
(28) Բազումք. Առ քեզ 'ի վրա ջրոցս։ (29) Ոմանք. 'Ի վերայ
ջրոցն։ (32) Ոմանք. Եւ իբրեւ ել 'ի նաւն՝ հանդարտեցաւ
հողմն։ (34) Ոմանք. Եւ անցեալ 'ի ցամաք եկին 'ի գեն-
նէսարէթ։ (36) Ոմանք. Մերձեցան՝ փրկեն"։
ԳԼ. ԺԵ. (6) Ոմանք. Զոր յինէն օգտիր".. եւ խոստք

կամ ցմայր իւր. Թէ պատարագ է՝ զոր յինէն օգտե-
ցիս, և ոչ պատուեսցէ զհայր իւր և զմայր իւր. և խա-
7 փանէք զբանն այ վս ձերոյ աւանդութեանն։ *Կեղծա-
ւորք՝ բարւոք մարգարէացաւ ի վերայ ձեր եսայի՝ և
8 ասէ։ *Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և
9 սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն։ *Զուր
պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւն՝ զմարդ-
10 կան պատուիրեալս։ *Եւ կոչեցեալ առ ինքն զժողո-
11 վուրդսն՝ ասէ ցնս. Լուարուք՝ և ի միտ առէք։ *Ոչ
որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ
12 ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։ *Յայնժամ մա-
տուցեալ աշակերտացն նր՝ ասեն ցնա. գիտես՝ զի փա-
13 րիսեցիքն իբրև լուան զբանն՝ գայթագղեցին։ *Նա
պատասխանի ետ նց՝ և ասէ. ամ տունկ՝ զոր ոչ տըն-
14 կեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի։ *Թոյլ տուք զնո-
սա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք։ կոյր կուրի յոր-
ժամ առաջնորդէ՝ անկանի, և երկոքեան ի խորխորատ
15 անկանին։ *Պատասխանի ետ Պետրոս և ասէ.
16 մեկնեա մեզ զառակս զայս։ *Ասէ յս. տակաւին՝ և
17 դուք անմիտք էք, *և ոչ իմանայք. եթէ ամ որ մտա-
նէ ի բերան, յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ։
18 *Իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի գայ. և
19 այն պղծէ զմարդ։ *Զի ի սրտէ ելանեն խորհուրդք
չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք,
20 սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք։ *Այս ամ է՝ որ պղծէ
զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ։
21 *Եւ ելեալ անտի յս գնաց ի կողմանս տիւրոսի և եղ
սիդոնի։
22 *Եւ ահա՝ կին մի քանանացի ի սահմանացն անտի նց՝ ԽԹ
ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեաց ինձ տր որդի
23 դաւթի, դուստր իմ չարաչար դիւահարի։ *Եւ նա
ոչ ետ նմա պատասխանի։ Եւ մատուցեալ աշակերտքն
նր՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա՝ զի աղաղա-
24 կէ զհետ մեր։ *Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ու-
րեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն
25 իսլի։ *Եւ նա մատուցեալ, երկիր պագանէր նմա և
26 ասէր. տր՝ օգնեա ինձ։ *Պատասխանի ետ նմա և ա-
սէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել
շանց։

զպատուիրանն այ։ (8) Օրինակ. Եւ սիրտ իւրեանց։ կամ, և սրտիւք իւրեանց հե՛՛։ (12) Օրինակ. Մատուցեալ ոմանք յաշակերտացն նր, ասեն. գիտես։ (17) Օրինակ. Որ մտանէ ՚ի բերան։ (18) Օրինակ. Եւ այն պղծէ զմարդն։ (19) Օրինակ. Խորհուրդ չարք։ (24) Օրինակ. Տան իսլի։ (26) Օրինակ. Ոչ է բարիոք։

Digitized by Google

շանց։ * Եւ նա ասէ. այո՛ տէր, քանզի և շունք կերակ- 27
րին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։
* Յայնժամ պատասխանի ետ նմա յս, և ասէ. ո՛վ կին 28
դու՝ մե՛ծ են հաւատք քո, եղիցի քեզ՝ որպէս և կամիս։
Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։
Լ * Եւ գնացեալ անտի յս, եկն 'ի ծովեզրն գալիլեաց- 29
ե է ւոց։ և ելեալ 'ի լեառն նստէր անդ։ * Մատեան առ նա 30
ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս,
կոյրս, համերս, միակողմանիս, և այլս բազումս. և ըն-
կեցին զնս առ ոտս նր՝ և բժշկեաց զնս։ * Մինչև զար- 31
մանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համրքն խօ-
սէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք
տեսանէին, և փառաւոր առնէին զած իսլի։
ԼԱ * Եւ կոչեցեալ առ ինքն յս զաշակերտսն՝ ասէ. գը- 32
թամ 'ի ժողովուրդդ, զի արդ՝ երեք աւուրք են՝ զի
կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. և արձակել
զդոսա նօթիս՝ չկամիմ, գուցէ նկթիցեն զճանապար-
հայն։ * Ասեն ցնա աշակերտքն. ուստի արդ՝ մեզ յանա- 33
պատի աստ՝ ուստի՛ իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցու-
ցանել զայսչափ ժողովուրդ։ * Եւ ասէ ցնոսա յս. քա- 34
նի՛ նկանակ ունիք։ և նոքա ասեն. եւթն, և սակաւ
ձկունս։ * Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմե՛լ 'ի 35
վերայ գետնոյ։ * և առեալ զեւթն նկանակն և ըզ- 36
ձկունսն՝ գոհացաւ և եբեկ, և ետ ցաշակերտսն, և
նք ժողովրդեանն։ * Կերան ամենեքեան և յագեցան. 37
և բարձին զնշխարս կոտորոցն՝ եւթն զամբիւղ լի։ * Եւ 38
որք կերանն՝ էին իբրև արք չորք հազարք. թող զկա-
նայս և զմանկտի։ * Իբրև արձակեաց զժողովուրդսն՝ 39
ել 'ի նաւ՝ և եկն 'ի սահմանս մագդաղենայ։

ԳԼ. ԺԶ.

Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիքն փոր- 1
ձելով խնդրէին 'ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել
նց։ * Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնս. * ազգ չար 2
և շնացող՝ նշան խնդրէ, և նշան մի՛ տացի նմա, բայց 4
նշ

---

(32) Ոսկան. Եւ կոչեաց առ ինքն։ (33) Ոսկան. Արդ մեզ յանապատի։ (33) Ոմանք. Մինչև յագեցուցանել։ (36) Ոսկան. Զեօթն նկանակսն։ (37) Ոմանք. Եւթն զամբիւղ լի։ (39) Ոմանք. Եւ գնաց 'ի սահմանս մա"։
ԳԼ. ԺԶ. (2) Ոսկան առանց 'ի լատինականէն առեալ յաւել-լու. Եւ ասէ ցնս. յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինի-ցի. զի կարմրացեալ է երկին։ (3) * Եւ առաւօտու՝ այսօր ձմեռն. զի կարմրագոյն տրտմեալ երկին. արդ զերեսս երկնի կա-րէք քննել. իսկ զնշանս ժամանակին ոչ կարէք գիտել։ ազգ չար

Նշանն յովնանու մարգարէի: Եւ եթող զնս և գնաց:
5 Գնացին և աշակերտքն յայնկոյս, և մոռացան առ- ԼԲ
6 նուլ հաց: Ասէ ցնս յս. տեսէք և զգոյշ լերուք 'ի
7 խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոց: Նոքա խոր-
8 հէին ընդ միմեանս և ասէին՝ թէ հաց ոչ բարձաք: Գի-
տացեալ յս՝ և ասէ. զի՞ խորհիք 'ի միտս ձեր թերահաւատք՝
9 եթէ հաց ոչ ունիք: տակաւին չիմանայք՝ և ոչ յիշէք
զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և քանի՞ սակառի
10 բարձէք: և ոչ զեւթն նկանակն 'ի չորս հազարսն,
11 և քանի՞ զամբիւղս բարձէք: Արդ՝ զիարդ ոչ իմանայք՝
եթէ ոչ վա՞ն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել 'ի խմորոյ
12 փարիսեցւոցն և սադուկեցւոց: Յայնժամ 'ի միտ ա-
ռին, եթէ ոչ ասաց զգուշանալ 'ի խմորոյ, այլ յաղանդ-
ւոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց:
13 Եւ եկեալ յս 'ի կողմանս փիլիպպեայ կեսարիայն, ԼԳ
հարցանէր ցաշակերտսն՝ և ասէր. զո՞ ոք ասեն զինէն ՂԿ
14 մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ: Եւ նք ասեն. ոմն՝
զյովհաննէս մկրտիչ, և այլք՝ զեղիա, և կէսք՝ զերե-
15 միա, կամ զմի ոք 'ի մարգարէիցն: Ասէ ցնս յս. իսկ
16 դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի
ետ նմա սիմոն պետրոս՝ և ասէ. դու ես քն որդի
17 այ կենդանւոյ: Պատասխանի ետ յս՝ և ասէ ցնա.
երանի՛ քեզ սիմոն որդի յովնանու, զի մարմին և ա-
րիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ հայր իմ որ յերկինս է:
18 Եւ ես՝ քեզ ասեմ. զի դու ես վէմ, և 'ի վերայ այդր
վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա
19 մի յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ զփականս արքայ-
ութեն երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի,
եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի,
20 եղիցի արձակեալ յերկինս: Յայնժամ սաստեաց ա-
շակերտացն, զի մի ումեք ասասցեն՝ թէ նա է քն:
21 Յայնմհետէ սկսաւ յս ցուցանել աշակերտացն, թէ
պարտ

և չէաս": Ըստ որում ասենին և ոմանք 'ի յունական օրինակաց: Սակայն 'ի յեբրեական հայրենական թղթաթերս մեր 'ի միւն միայն է գտանելի զբանս զայս՝ այսպէս նշանակեալ: *Յայնժամ եկեալ ընդնի, ասէ թէ զէր ընենելոց. և փոխել խորհրդոյն խառնեցան եղկեանք: զերեսս երկնից գիտէք զննել, և զնշանս ժամանակաց ոչ կարիցէք: այլ չար: (8) Ոմանք. խորհիք 'ի միտս ձեր: (9)(10) Ոմանք. Նկանակսն: (11) Ոմանք. Զգուշանալ 'ի խմորոյ ասաց": (12) Ոմանք. Զգոյշ լինել 'ի խմորոյ: (15) Յոմանս գիրս. Ցնա յս.. զո՞ ոք ասէք: (16) 'Ի բազում գիրս. Պետրոս եւ ասէ: (16) Ոմանք. Եւ ասէ ցնա: (17) Ոմանք. Երանի է քեզ: (19) Ոմանք. Քեզ փականս արքայութեան: (20) Ոմանք. Ասացին՝ թէ նա: (21) Ոմանք յաւելուն. Ապա

Digitized by Google

պարտ է նմա երթալ յԵմ, և բազում չարչարանս չար-
չարել և անարգել 'ի քահանայապետից և 'ի դպրաց և
'ի ծերոց ժողովրդեանն, և սպանանել, և յերիր ա-
ւուր յառնել: * Եւ առեալ զնա մեկուսի՝ պետրոս, 22
սկսաւ կշտամբել ընդ նմա՝ և ասել. քաւ լիցի քեզ Տր.
մի եղիցի քեզ այդ: * Եւ նա դարձեալ 'ի պետրոս՝ ա- 23
սէ. երթ յետս իմ սատանայ, գայթակղութիւն իմ ես.
զի ոչ խորհիս զոր Այ, այլ զմարդկան. * Յայն- 24
ժամ Յս ասէ ցաշակերտսն իւր. եթէ ոք կամիցի զկնի
իմ գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և եկես-
ցէ զկնի իմ: * Զի որ կամիցի զանձն իւր կեցուցա- 25
նել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վն իմ՝
գտցէ զնա: * Զի՞նչ օգտեսցի մարդ՝ եթէ զաշխարհս 26
ամ շահեսցի, և զանձն իւր տուժեսցի: կամ զի՞նչ տա-
ցէ մարդ փրկանս ընդ անձին իւրում: * Զի գալոց է 27
որդի մարդոյ փառօք հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք
իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս
իւր: * Ամէն ասեմ ձեզ. զի իցեն ոմանք 'ի սոցանէ՝ 28
որ աստ կան. որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսա-
նիցեն զորդի մարդոյ եկեալ արքայութբ իւրով:

ԳԼ. ԺԷ.

ԼԴ Եւ յետ վեց աւուր՝ առնու ընդ իւր Յս զպետրոս և 1
զյակոբոս և զյովհաննէս զեղբայր նր, և հանէ
զնս 'ի լեառն մի բարձր առանձինն: * և այլակերպե- 2
ցաւ առաջի նց. և լուսաւորեցան երեսք նր իբրև զա-
րեգակն, և հանդերձք նր եղեն սպիտակ իբրև զլոյս:
* Եւ ահա՝ երևեցան նց մովսէս և եղիա՝ որ խօսէին 3
ը՛ նմա: * Պատասխանի ետ պետրոս և ասէ ցՅս. Տր՝ 4
բարւոք է մեզ աստ լինել. և թէ կամիս՝ արասցուք
երիս տաղաւարս. մի՝ քեզ, և մի՝ մովսիսի, և մի՝ ե-
ղիայի: * Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսա- 5
ւոր՝ հովանի եղև 'ի վր նց: Զայն եղև յամպոյն՝ և ա-
սէ. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա
լուա-

կերպարանս իւրոց: (21) Ոմանք. Եւ թէ ըստ մ.. չարչարել 'ի քահանայ.: (21) 'Ի չորս.. Եւ անարգել: (23) Յօրինակ պէսի. Ոչ խորհիս զոր: (24) Ոմանք. Կամի գալ զկնի իմ: (24) 'Ի չորս.. 'Ի բաց ուրասցի: (26) Ոմանք. Թէ զաշխարհս ամ.. տուժեսցէ... ը՛ անձին իւրոյ: (27) Ոմանք. Հատուսցանէ իւրաքանչիւր զգործս իւր: (28) Օրինակ. Ոմանք 'ի դոցանէ: (28) Ոմանք. Մինչև տեսցեն:
ԳԼ. ԺԷ. (1) Յօրինակ պէսի. Առնու ընդ իւր Յս: (2) Ոմանք. Սպիտակ իբրև զձիւն: (4) Բազ. Լինել. եթէ կամիս: (5) Ոմանք. Հովանի լինէր 'ի վր նց:

Digitized by Google

6 լուարուք : * Եւ իբրև լուան աշակերտքն, անկան ՚ի վերայ
7 երեսաց իւրեանց՝ և երկեան յոյժ : * Եւ մատուցեալ
յս բուռն եհար զնոցանէ՝ և ասէ . յարուք՝ և մի
8 երկնչիք : * Ամբարձին զաչս իւրեանց, և ոչ զոք տե_
9 սին՝ բայց միայն զյս : * Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռ_
նէ անտի, պատուիրեաց նոցա յս՝ և ասէ . մի՛ ումեք ա_
սիցէք զտեսիլդ զայդ, մինչև որդի մարդոյ ՚ի մեռելոց
10 յարիցէ : * Հարցին ցնա աշակերտքն և ասեն . զիմ՞ դպ
11 պիրքն ասեն, եթէ եղիայի նախ պարտ է գալ : * Պա_
տասխանի ետ յս՝ և ասէ ցնս . եղիա՝ գայ, և հաստա_
12 տեսցէ զամ : * այլ ասեմ ձեզ՝ զի և եղիա եկեալ իսկ
է . և ոչ ծանեան զնա, այլ արարին ը՟ նա՝ զորինչ կա_
մեցան . նոյնպէս և որդի մարդոյ չարչարելոց է ՚ի նո_
13 ցանէ : * Յայնժամ ՚ի միտ առին աշակերտքն, թէ վս
յովհաննու մկրտչի՝ ասաց նոցա :
14 * Եւ իբրև եկին ՚ի ժողովուրդն, մատեաւ այր մի՝ ՚ի ԼԵ
ծունր իջուցանէր և ասէր . տէր՝ ողորմեաց որդւոյ իմում, ՂԲ
զի լուսնոտի է և չարաչար հիւանդանայ . բազում ան_
15 գամ անկանի ՚ի հուր, և երբեմն ՚ի ջուր : * և մատուցի
16 զնա աշակերտացդ քոց, և ոչ կարացին բժշկել : * Պա_
տասխանի ետ յս՝ և ասէ . ով ազգ՝ անհաւատ և թիւր,
մինչև ցե՞րբ իցեմ ը՟ ձեզ . մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ :
17 ածէք զնա առ իս : * Եւ սաստեաց ՚ի նա յս՝ և ել ՚ի
նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմա_
18 նէ : * Յայնժամ մատուցեալ աշակերտքն առանձինն՝ և
19 ասեն ցյս . մեք՝ ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա : * Եւ
նա՝ ասէ ցնս . վս թերահաւատութեան ձերոյ : ամէն աս_
եմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանե_
խոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և
20 փոխեսցի . և ոչինչ անհնարին լիցի ձեզ : * Բայց այս
ազգ ոչ ելանէ, եթէ ոչ՝ աղօթիւք և պահօք :
21 * Եւ մինչ գային շրջէին նք ՚ի գալիլեա, ասէ ցնս յս . ԼԶ
22 մատնելոց է որդի մարդոյ ՚ի ձեռս մարդկան, * և սպա_ ՂԴ
նանեն զնա, և յերիր աւուր յարիցէ : և տրտմեցան
յոյժ :

---

(6) Օրինակ մի . ՚ի վր երեսաց իւրեանց յերկիր : Եւ մա" :
(9) Օրինակ մի . Եւ մինչ իջանէին նք ՚ի լեռնէն, պատ" :
(9) ՚Ի Բզյ Յոյն . Զտեսիլդ զայդ : (12) ՚Ի Բզյ Յոյն . Զի
և եղիա եկեալ : (12) Ոսկան . Արարին ընդ նմա : Ոսկ ամենե .
Ընդ նա զոր կամեցան : (14) Ոսկան . Եւ իբրև եկին ՚ի ժո"
(14) Ոմանք . Մատեաւ առ նա այր մի . . . որդւոյ իմոյ :
(16) Ոսկան յաւելու . Ած իս . և ածին զնա առ յս : (19) Օրի_
նակ մի . Վս անհաւատութե ձերոյ : (19) Ոսկան . Քան_
զհատն մանն" : (19) Բիւզ . Անհնարին լինիցի : (20) Յո_
նան Յոյն . Ոչ ելանէ ելանէ :

Digitized by Google

յոյժ: * Իբրեւ եկին նքա 'ի Կափառնաում, մատեան՝ 23
որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, եւ ա-
սեն. վարդապետն ձեր ոչ տայ զերկդրամեանն, եւ նա
ասէ՝ այո: * Եւ իբրեւ եմուտ 'ի տուն՝ յառաջեաց քան 24
զնա Յս եւ ասէ. զի՞արդ թուի քեզ Սիմովն. թագաւորք
աշխարհի՝ յումմէ՞ առնուն զհարկս կամ զհաս, յորդւոց
իւրեանց՝ թէ յօտարաց: * Եւ իբրեւ ասաց թէ յօտա- 25
րաց, ասէ ցնա Յս՝ ապա ուրեմն ազատ են որդիքն:
* Բայց զի մի՛ գայթագղեցուսցուք զնս, երթ 'ի ծով՝ 26
եւ ընկեա՛ կարթ, եւ զառաջին ձուկնն որ ելանէ՝ առ.
եւ բա՛ց զբերան նր, եւ գտանիցես սատեր. եւ զա՛յն ա-
ռեալ՝ տացես նց ընդ իմ եւ ընդ քո:

ԳԼ. ԺԸ.

ԼԵ Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յս՝ եւ ասեն. 1
ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեն երկնից: * Եւ կո- 2
չեաց առ ինքն Յս մանուկ մի, կացոյց զնա 'ի մէջ նց,
* եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք, եւ լի- 3
նիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութի երկ-
նից: * Արդ՝ որ խոնարհեցուսցէ զանձն իբրեւ զմա- 4
նուկս զայս, նա է մեծ յարքայութե երկնից: * Եւ որ ոք 5
ընկալցի մանուկ մի՝ այսպիսի յանուն իմ, զիս ընդունի.
* Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի 'ի փոքրկանցս յայս- 6
ցանէ յիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի
երկան իշոյ ընդ պարանոց նր՝ եւ ընկղմիցի 'ի խորս ծո-
վու: * Վա՜յ աշխարհի գայթագղութեց. հարկ է գա՛լ 7
գայթագղութեց. բայց վա՛յ մարդոյն այնմիկ յորյ ձեռն
գայցէ գայթագղութի: * Եթէ ձեռն քո կամ ոտն գայ- 8
թագղեցուցանէ զքեզ, հա՛տ զնա՝ եւ ընկեա՛ 'ի քէն. լաւ
իցէ քեզ՝ միաձեռանի կամ կա՛ղ մտանել 'ի կեանս, քան
թէ երկուս ձեռս եւ երկուս ոտս ունիցիս, եւ անկանել
'ի հուրն յաւիտենից: * Եւ եթէ ա՛կն քո գայթագղե- 9
ցուցանէ զքեզ, խլեա՛ զնա եւ ընկեա՛ 'ի քէն. լաւ իցէ
քեզ

---

(23) 'Ի Բրբմ. ձեռ. Եւ նա ասէ՝ այո: (24) Ոսկան. Թագաւորք երկրի յումմէ՞: ընդ որում ոմանք նշանակէին 'ի լուսանցս: (26) Ոմանք. Զձուկն որ ելանիցէ: (26) Ոսկան. Տացես ընդ իմ և: Գլ. ԺԸ. (1) Ոմանք. Յայնժամ մատեան ... յարքայութեն: (2) Ոմանք. Եւ կոչեցեալ առ ինքն Յս: (3) Ոմանք. Եւ եղիցիք իբրեւ զմանուկ": (4) Ոմանք. Որ խոնարհեցուսցէ զանձն իւր որպէս զմա: (6) Ոմանք. Եթէ կախիցէ .. և ընկղմեսցի: (7) Բրբմ. Աշխարհի 'ի գայթագղութեց: (8) Ոմանք. Միաձեռն, հոծ, միաձեռնի կամ կաղ ... քան երկուս ձե".. ոտս ունել և անկանիցիս 'ի հուրն յաւիտենական: Յօրինակին. Երկու ձեռս, և երկու ո":

Digitized by Google

քեզ միականի մտանել 'ի կեանս, քան երկուս աչս ու-
10 նել՝ եւ անկանել 'ի գեհենն հրոյն: * Զգոյշ լերուք՝ մի զ-
արհամարհիցէք զմի 'ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ
ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն
11 զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է: * Զի եկն Որդի մար-
դոյ կեցուցանել զկորուսեալն:
12 * Զինչ թուի ձեզ՝ եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչ- Լը
խար, եւ մոլորեսցի մի 'ի նոցանէ, ոչ թողուցու զիննս-
նասունսն եւ զինն ոչխարսն 'ի լերինս, եւ երթայցէ խնդրե-
13 ցէ զմոլորեալն: * Եւ եթէ լինիցի գտանել զնա. ամէն
ասեմ ձեզ՝ զի ուրախ լինի 'ի վերայ նորա, առաւել քան
'ի վերայ իննսնիցն եւ յիննուցն որ չիցեն մոլորեալ:
14 * Այսպէս՝ ոչ է՛ն կամք առաջի Հօր իմոյ որ յերկինս
15 է, եթէ կորիցէ մի 'ի փոքրկանցս յայսցանէ: * Եթէ մե-
ղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա՛ զնա՝ յորժամ
դու եւ նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար
16 զեղբայրն քո: * Ապա թէ ոչ լուիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ
մի եւս՝ կամ երկուս. զի 'ի բերանոյ երկուց եւ յերից
17 վկայից հաստատեսցի ամենայն բան: * Իսկ եթէ նոցա ոչ
լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ: Ապա թէ եւ եկեղեց-
ւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաք-
18 սաւոր: * Ամէն ասեմ ձեզ. զի զոր կապիցէք յերկրի՝
եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի՝
19 եղիցի արձակեալ յերկինս: * Դարձեալ ասեմ ձեզ.
եթէ երկու 'ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց,
զինչ եւ խնդրեսցեն՝ եղիցի նոցա 'ի Հօրէ իմմէ որ յեր-
20 կինսն է: * Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ
21 յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա: * Յայնժամ մա-
տեաւ առ նա Պետրոս՝ եւ ասէ. Տէր՝ քանիցս անգամ
թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, եւ թողից նմա. մինչեւ
22 ցեւթն անգամ: * Ասէ ցնա Յիսուս. ոչ ասեմ քեզ՝ թէ մին-
չեւ յեւթն անգամ, այլ՝ մինչեւ յեւթանասնեկին եւթն: Լթ
23 * Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թա-
գաւորի, որ կամեցաւ համար առնել 'ի մէջ ծառայից
24 իւրոց: * Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ
նա

---

(11) Ոսկան. Զկորուսեալսն: (12) Ոսկան. Ոչխարսն 'ի լե-
րինս: (12) Ոմանք. Թուեցի ձեզ.. զիննսուն.. եւ երթի-
ցէ խնդրեսցէ: (13) Ոմանք. Եւ իննուցն ոքք: (16) Ոմանք.
Թէ ոչ լուիցէ քեզ... միւս եւս կամ երկուս.. երկուց
եւ երից: (17) Ոմանք. Իսկ եթէ եւ նոցա ոչ լու''... ա-
պա եթէ եկեղեցւոյն.. զհեթանոսս եւ զմաքսաւորս:
(18) 'Ի բազ. գիրս. Ձեզ. եւ զոր կա'': (19) Ոմանք. Զինչ
եւ խնդրիցեն: (22) Ոսկան. Մինչեւ ցեօթն անգամ.. ցեօ-
թանասնեկին: (23) Ոմանք. Համար առնուլ 'ի մէջ:

Digitized by Google

նա պարտապան մի բիւր քանքարոյ : * Իբրեւ ոչ ունէր 25
հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նր, եւ
զկին նր, եւ զորդիս, եւ զամ որ ինչ եւ ունիցի՝ եւ հա-
տուցանել : * Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր 26
նմա՝ եւ ասէր. երկայնամիտ լեր առ իս, եւ զամ հա-
տուցից քեզ : * Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ ար- 27
ձակեաց զնա, եւ զփոխն եթող նմա : * Եւ ելեալ ծա- 28
ռայն՝ եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր
նմա հարիւր դահեկան. եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ա-
սէր. հատո ինձ զոր պարտիս : * Արդ՝ անկեալ ծա- 29
ռայակիցն՝ առ ոտս նր, աղաչէր զնա՝ եւ ասէր. երկայ-
նամիտ լեր առ իս՝ եւ հատուցից քեզ : * Եւ նա ոչ կա- 30
մէր. այլ չոգաւ արկ զնա 'ի բանտ՝ մինչեւ հատուսցէ
զպարտսն : * Իբրեւ տեսին ծառայակիցքն նր որ ինչ 31
եղեւն՝ տրտմեցան յոյժ, եւ եկեալ ցուցին տեառն իւ-
րեանց զամ որ ինչ եղեւն : * Յայնժամ կոչեաց զնա տէրն 32
իւր՝ եւ ասէ. ծառայ չար, զամ զպարտսն թողի քեզ՝
մն զի աղաչեցեր զիս : * Իսկ արդ՝ ոչ էր պարտ եւ քեզ 33
ողորմել ծառայակցին քում, որպ եւ ես քեզ ողորմեցայ:
* Եւ բարկացեալ տէրն նր՝ մատնեաց զնա դահճաց 34
մինչեւ հատուսցէ զամ զպարտսն : * Նոյնպէս եւ Հայր 35
իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք
իւրաքանչիւր եղբօր իւրում 'ի սրտից ձերոց զյան-
ցանս նոցա :

ԳԼ. ԺԹ.

Խ ղե Եւ եղեւ՝ իբրեւ կատարեաց յս զբանս զայսոսիկ, փո- 1
խեցաւ 'ի Գալիլեէ՝ եւ եկն 'ի սահմանս Հրէաստա-
նի յայնկոյս Յորդանանու : * Եւ գնացին զհետ նր ժո- 2
ղովուրդք բազմք, եւ բժշկեաց զնս անդ : * Եւ մատու- 3
ցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ եւ ասէին.
եթէ արժա՞ն իցէ ուրուք արձակել զկին իւր, ըստ ամ
պատճառս : * Պատասխանի ետ նոցա եւ ասէ. չիցէ՞ ըն- 4
թերցեալ ձեր՝ թէ որ Հաստատեացն իսկզբանէ՝ արու
եւ էգ արար զնս՝ եւ ասէ : * Վս այսորիկ թողցէ այր՝ 5
զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղի-
ցին երկոքեան 'ի մարմին մի : * Ապա ուրեմն ոչ են եր- 6
կու՝

---

(25) Ոմանք. Եւ զամ զոր ինչ է : (28) Բազմք յաւելուն. Ծառայն այն եգիտ զմի : (28) Ոմանք. Զոր պարտիսդ : (29) Ոմանք. Անկեալ ծառայակիցն առ : (31) Ոմանք. Տեառնն իւրեանց զամ ինչ որ եղեւն : (32) Ոմանք. Զամ պարտսն : (35) Յօրինակին գրէր. Եթէ ու թողուցուք :
Գլ. ԺԹ. (1) Ոմանք. 'Ի Գալիլեէ՝ եկն : (5) Ոմանք. Վս այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ :

Digitized by Google

կու՛ այլ մի մարմին : Արդ՝ զոր Ած զուգեաց, մարդ՝
7 մի մեկնեսցէ : * Ասեն ցնա · իսկ Մովսէս ընդէ՞ր պա-
տուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ և արձակել :
8 * Ասէ ցնա · Մովսէս՝ վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց
ձեզ արձակել զկանայս ձեր · այլ ի սկզբանէ՝ ոչ եղև
9 այնպէս : * Բայց ասեմ ձեզ, զի ամ որ արձակէ զկին
իւր՝ և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ
10 զարձակեալն առնէ՝ շնայ · * Ասեն ցնա աշակերտքն
իւր · եթէ այդպէս իցէ վնաս ընդ այր և ընդ կին, լաւ
11 է՝ չամուսնանալ : * Եւ նա՝ ասէ ցնա · ոչ ամենեքեան
12 բաւականան են այդմ բանի, այլ որոց տուեալ է : * Զի
են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս : և են ներքինիք՝ որ 'ի մարդկանէ եղեն ներքինիք : և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից · որ կարողն է տա-
13 նել՝ տարցի : * Յայնժամ մատուցան առ նա մանկունս,
զի ձեռն դիցէ 'ի վր նց՝ և աղօթս արասցէ : և աշա-
14 կերտքն նց՝ սաստէին նց : * Ասէ յս, թոյլ տուք ման-
կանցդ՝ և մի արգելուք զդոսա գալ առ իս, զի այդ-
15 պիսեացդ է արքայութիւն երկնից : * Եւ եդեալ ձեռս 'ի
վերայ նց՝ գնաց անտի :

16 * Եւ ահա, մատուցեալ ոմն առ նա՝ ասէ · վարդապետ ԽԱ
բարի՝ զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունեցայց զկեանսն ԶԷ
17 յաւիտենականս : * Եւ նա՝ ասէ ցնա · զի՞ հարցանես
զնէ զբարւոյ, մի է բարի · եթէ կամիս 'ի կեանսն յա-
18 ւիտենականս մտանել, պահեա՛ զպատուիրանսն : * Ա-
սէ ցնա, զո՞րս : Ասէ ցնա յս · զմի՛ սպանաներ, և մի
19 շնար, և մի գողանար, և մի սուտ վկայեր, * պա-
տուեա՛ զհայր քո և զմայր · և սիրեսցես զընկեր քո իբրև
20 զանձն քո : * Ասէ ցնա պատանին · զայդ ամ պա-
հեցի 'ի մանկութենէ իմմէ · արդ՝ ի՞ւ իւիք պակաս ե-
21 ցեմ : * Ասէ ցնա յս · եթէ կամիս կատարեալ լինել՝
երթ՝ վաճառեա զինչս քո՛ և տուր աղքատաց, և ու-
22 նիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ : * Իբրև լուաւ
պատ-

(7) Յօրինակին այսպէս գրեալ՝ Մեկնելոյ և արձակել. այլ · քննեցաք օրինակին բառանալ զխառնիս այդ · համաձայնյայն այլոց թարգ-մանոց : (9) Ոմանք · Որ արձակեսցէ զկին իւր ... առնիցէ՝ շնայ : (11) Ոմանք · Ոչ ամենեքին ... այդմ բանի · այլ որոց տուեալ իցէ : (12) Ոմանք · Որ կարող է առ՛՛ : (13) Ոմանք · Մատուցին առ նա : (13) Ոմանք · Սաստեցին նց : (15) Ոմանք · Եւ եդեալ ձեռն 'ի վր : (16) Ա՛ր օրինակաց · Բայց առ նա ասէ : (17) Ոմանք · Պահեա զպատուիրանսն : (18) Ա՛ր օրինակաց · Եւ մի շնար, և մի գողանար : (20) Ոմանք · Իւ իք պակասեցեմ :

Digitized by Google

պատանին զբանն, գնաց տրտմեալ. զի ունէր ստաց-
ուածս բազումս։ * Ասէ յս ցաշակերտսն. ամէն ասեմ 23
ձեզ. զի դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկ-
նից։ * Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալխոյ մտա- 24
նել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն այ
մտանել։ * Իբրև լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ, 25
և ասեն. իսկ՝ ո՞ կարիցէ ապրել։ * Հայեցաւ 'ի նս յս՝ 26
և ասէ. առ 'ի մարդկանէ այդ անկար է, այլ առ այ
ամենայն ինչ զօրաւոր։ * Յայնժամ պատասխանի ետ 27
պետրոս և ասէ ցնա. ահաւասիկ մեք՝ թողաք զամ, և ե-
կաք զհետ քո. արդ՝ զի՞նչ լինիցի մեզ։ * Ասէ ցնս յս. 28
ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք զհետ իմ, 'ի միւ-
անգամ գալստեանն՝ յորժամ նստցի որդի մարդոյ յա-
թոռ փառաց իւրոց. նստջիք և դուք յերկոտասան ա-
թոռ՝ դատել զերկոտասան ազգ իղի։ * Եւ ամենայն 29
որ ոք եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքորս, կմ
զհայր, կմ զմայր, կմ զկին, կմ զորդիս, կմ զագարակս
վս անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն
յաւիտենականս ժառանգեսցէ։ * Բազումք եղիցին 30
առաջինք յետինք, և յետինք առաջինք։

Գլ. Ի.

Խբ Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանու- 1
տեառն, որ ել ընդ առաւօտս 'ի վարձու առնուլ
մշակս յայգի իւր։ * Եւ արկ վարձս մշակացն աւուրն դա- 2
հեկան, և առաքեաց զնս յայգի իւր։ * Եւ ելեալ զեր- 3
րորդ ժամու՝ ետես այլս զի կային դատարկք 'ի հրա-
պարակս. * ասէ և ցնս. երթայք և դուք յայգի իմ, 4
և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ։ * Գնացին և նոքա։ 5
Եւ դարձեալ՝ ելեալ զվեց ժամու, և զինն ժամու՝ ա-
րար այնպէս։ * Եւ զմետասաներորդ ժամու ելեալ, 6
եգիտ այլս՝ զի կային դատարկք, ասէ ցնս. զէ՞ր կայք
աստ զօրս ցերեկ դատարկք։ * Ասեն ցնա. զի ոչ ոք 7
կալաւ զմեզ 'ի վարձու։ ասէ ցնս. երթայք և դուք
յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք։ * Եւ իբրև 8
երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն ցհազարապետ իւր.
կոչեա զմշակսն՝ և տուր նց վարձս, սկսեալ 'ի յետնոցն
մինչև ցառաջինսն։ * Իբրև եկին որք զմետասաներորդ 9
ժա-

---

(23) Ոմանք. Մտցէ մեծատունն յարքայ"։ (26) Ոմանք. Ա-
յայ ամ։ (27) Ոմանք. Ահաւասիկ մեք։ (28) Ոմանք. Ազգն
իղի։ (29) Ոմանք. Եւ ամ ոք որ ե"։
Գլ. Ի. (3) Ոմանք. Դատարկ 'ի հրապարակս"։ (5) Բ ձեռ. Արար
նոյնպէս։ (6) Ոմանք. Դատարկ. և ասէ ցնս. զօրս ցե-
րեկ։ (7) Ոմանք. Արժան իցէ առ"։ (9) 'Ի [illegible]. Եւ

Digitized by Google

10 ժամուն, և առին մէն մի դահեկան։ * Եկեալ և առա-
ջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն. և առին մէն
11 մի դահեկան և նոքա։ * Իբրև առին՝ տրտնջէին զտա-
12 նուտեառնէն՝ և ասէին. * Թէ դոքա՝ յետինքդ՝ մի ժամ
գործեցին, և հաւասարակիրս մեզ արարեր զդոսա, որ
13 զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ։ * Նա պատաս-
խանի ետ միում ՚ի նոցանէ՝ և ասէ. ընկեր՝ չզրկեմ
14 զքեզ. ոչ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս։ * Առ
15 զքոյդ՝ և երթ. եթէ կամիմ յետնոցս տալ ոպ քեզ։ * Եւ
թէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիւմս առնել զինչ և կամիմ.
16 կամ թէ ակն քո չար է, զի ես առատ եմ։ * Այսպէս
եղիցին յետինքն առաջինք, և առաջինքն՝ յետինք։ զի բա-
17 զում են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք։ * Իբր. դէ
րև ելանէր յԵ͞Ր յէմ, առ զերկոտասանեան առանձինն,
18 և ՚ի ճանապարհին՝ ասէ ցնս։ * Ահաւասիկ ելանեմք
յէմ, և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետից՝
19 և դպրաց. և դատապարտեսցեն զնա ՚ի մահ. * և մատ-
նեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել, և հարկանել, և
՚ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ։
20 * Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն զեբեդեայ՝ ԽԳ
որդւովք իւրովք հանդերձ, երկիր պագանէր՝ և խնդ-
21 րէր ինչ ՚ի նմանէ։ * Եւ նա՝ ասէ ցնա. զի՞նչ կամիս։
ասէ ցնա. ասա՝ զի նստցին սոքա երկու որդիքս իմ,
մի ը աջմէ քումմէ՝ և մի ը ահեկէ յարքայութեն քում։
22 * Պատասխանի ետ յս և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք.
կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ, կամ
զմկրտութիւն զոր ես մկրտելոցն եմ մկրտել։ ասեն ցնա,
23 կարօղ եմք։ * Ասէ՛ ցնս յս. զբաժակն՝ իմ ըմպիցէք,
և զմկրտութիւն զոր ես մկրտիմ՝ մկրտիցիք, բայց նստու-
ցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ
24 որոց պատրաստեալ է ՚ի հօրէ իմմէ։ * Եւ լուեալ տասանցն,
25 բարկացան ՚ի վերայ երկուցն եղբարց։ * Յս կոչեաց
զնս առ ինքն, և ասէ՝ գիտէք՝ զի իշխանք ազգաց տե-
26 րեն նց, և մեծամեծքն իշխեն նց։ * Ո՛չ այնպէս իցէ
և ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝
27 եղիցի ձեր պաշտօնեայ։ * և որ կամիցի ՚ի ձէնջ առաջին
28 լինել՝ եղիցի ձեր ծառայ։ * Որպէս որդի մարդոյ ոչ
եկն

առին մէն մի։ (11) Ոմանք ՚ի նոր օրինակաց գրեն. Զտանուտ-
եառնէն։ (14) Ոսկան. Եթէ կամիցիմ յետնոցս։ (14) Բուն.
Տալ ոպ և քեզ։ (15) Ոմանք. Չիցէ իշխանութիւն յիմս առ-
նել։ (16) Ոմանք. Այնպէս եղիցին։ (16) Բուն. Զի բազումք
են կոչե՛։ (21) Ոմանք. Եւ մի յահեկէ ՚ի յարքայութեն։
(23) Ոմանք. Եւ զմկրտութեն իմ մկրտիցիք։ և ոմանք.
Զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք։

Digitized by Google

եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել. և տալ զանձն իւր
փրկանս փոխանակ բազմաց։
ԽԴ * Եւ յելանելն նց յԵրիքովէ, գնացին զհետ նր ժողո- 29
է կ վուրդք բազումք։ * Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճա- 30
նապարհաւն։ իբրև լուան թէ յս անցանէ՝ աղաղակե-
ցին և ասեն. ողորմեա՛ց մեզ յս որդի Դաւթի։ * Եւ 31
ամբոխն սաստէին նց՝ զի լռեսցեն։ և նոքա ևս առա-
ւել աղաղակէին և ասէին, Տէր՝ ողորմեա՛ց մեզ որդի
Դաւթի։ * Զետեղի՛ առ յս, կոչեաց զնս և ասէ. զի՞նչ 32
կամիք՝ զի արարից ձեզ։ * Ասեն ցնա. Տր՝ զի բացցին 33
աչք մեր։ * Եւ գթացեալ յս մերձեցաւ յաչս նց, և 34
վաղվաղակի տեսին՝ և գնացին զհետ նր։

ԳԼ. ԻԱ.

ԽԵ. Իբրև մօտ եղեն յԵմ, և եկին ՚ի Բեթփագէ մերձ ՚ի 1
լեառն Ձիթենեաց. յայնժամ յս առաքեաց երկուս
յաշակերտացն իւրոց։ * և ասէ ցնս. երթա՛յք ՚ի գեղդ՝ 2
որ առաջի ձեր է, և անդէն գտանիցէք էշ կապեալ.
և յաւանակ ընդ նմին, լուծէք՝ ածէք ինձ։ * Եւ եթէ 3
ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ տեառն իւրեանց
պիտոյ են. և վաղվաղակի առաքէ զնս։ * Բայց այս 4
ամ եղև, զի լցցի բանն մարգարէին՝ որ ասէ։ * ասա- 5
ցէք դստեր սիոնի. ահա՝ թագաւոր քո գայ քեզ հեզ՝
և հեծեալ յէշ և ՚ի յաւանակի իշոյ։ * Գնացին աշա- 6
կերտքն, և արարին որպէս հրամայեաց նց յս։ * և ածին 7
զէշն և զյաւանակն։ և արկին զնոքօք ձորձս, և նս-
տաւ ՚ի վերայ նց։ * Եւ բազում ժողովուրդք տարա- 8
ծեցին զհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին։ և այլք
հատանէին ոստս ՚ի ծառոց՝ և տարածանէին ՚ի ճանա-
պարհին։ * Եւ ժողովուրդն՝ որ առաջին և զկնի եր- 9
թային՝ աղաղակէին և ասէին. օրհնութի որդւոյ Դաւ-
թի, օրհնեա՛լ որ գայ յանուն տն. օրհնութի ՚ի բար-
ձունս։ * Եւ ՚ի մտանելն նր յԵմ՝ դղրդեցաւ քաղաքն 10
ամ, և ասէ՝ ո՞վ իցէ սա։ * Եւ ժողովուրդքն ասեն. 11
սա՛ է մարգարէն յս՝ որ ՚ի Նազարեթէ Գալիլեացւոց։
* Եւ եմուտ յս ՚ի տաճարն, և եհան արտաքս զամե- 12
նե-

---

(29) Ոմանք. Եւ յելանել նորա յԵրիքովէ։
ԳԼ. ԻԱ. (2) Ոմանք. ՚Ի գեաւղդ.. գտանիցէք էշ կապեալ.
և յովանակ։ (3) Բազումք. Եւ վաղվաղակի առաքեսցէ զնոսա։
(5) Ոմանք. Յէշ և յաւանակի ի՛'': (7) ՚Ի յս''. Զնոքօք
ձորձս իւրեանց. համաձայն ամաց ՚ի բնաբ''։ (8) Ոմանք. Տա-
րածանէին. կամ, տարածէին զհանդ''։ (9) Ոմանք. Եւ
ժողովուրդքն որ առաջի և։ (10) Ոմանք. Դղրդեցաւ քա''։
(12) Ոմանք. Անդ ՚ի տաճարին.. աղաւնավաճառացն։

Digitized by Google

նեաց, որ վաճառէինն և գնէինն ՚ի տաճարի անդ. և
զսեղանս հատավաճառացն կործանեաց՝ և զաթոռս
13 աղաւնեվաճառացն ։ * Եւ ասէ ցնս. գրեալ է՝ տուն իմ
տուն աղօթից կոչեսցի. և դուք արարէք զդա՝ այր
աւազակաց ։
14 * Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ՚ի տաճարին, և ԽԶ
15 բժշկեաց զնոսա ։ * Իբրև տեսին քահանայապետքն և
դպիրք՝ զսքանչելիսն զոր արար, և զմանկտին որ աղա-
ղակէին ՚ի տաճարին և ասէին, ովսաննա որդւոյ դաւ-
16 թի, բարկացան. * և ասեն ցնա. լսես զինչ ասեն դո-
քա ։ ասէ ցնս յս, այո. չիցէ ընթերցեալ ձեր՝ եթէ
՚ի բերանոյ տղայոց և ստնդիեաց կատարեցեր զօրհ-
17 նութի ։ * Եւ թողեալ զնս, ել արտաքոյ քաղաքին ՚ի
բեթանիա, և անդ ագաւ ։
18 * Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն ՚ի քաղաքն՝ քաղ- ԽԷ
19 ցեաւ ։ * և տեսեալ թզենի մի ՚ի վերայ ճանապարհին, ԷԲ
եկն ՚ի նա, և ոչինչ եգիտ ՚ի նմա՝ բայց միայն տերև՝ ։
Եւ ասէ ցնա. մի այսուհետև ՚ի քէն պտուղ եղիցի յաւ-
20 իտեան ։ և առժամայն չորացաւ թզենին ։ * Իբրև
տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն, թէ զիարդ
21 վաղվաղակի ցամաքեցաւ թզենին ։ * Պատասխանի ետ
յս՝ և ասէ ցնս. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հա-
ւատս՝ և ոչ երկմտիցիք՝ ոչ միայն զթզենւոյդ առնիցէք,
այլ թէպէտ և լերինդ ասիցէք՝ բարձիր և անկիր ՚ի
22 ծով, եղիցի ։ * Եւ զա՛մ ինչ զոր և խնդրիցէք յաղօթս
հաւատովք՝ առնուցուք ։
23 * Եւ իբրև եկն ՚ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ԽԸ
ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն՝
և ասեն. որով իշխանութ առնես զայդ. և ո՞վ ետ քեզ
24 զիշխանութիդ զայդ ։ * Պատասխանի ետ յս և ասէ ցնս.
հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և
25 ես ձեզ ասացից՝ որով իշխանութ առնեմ զայս ։ * Մկր-
տութին յովհաննու ուստի՞ էր՝ յերկնից՝ թէ ՚ի մարդ-
26 կանէ ։ Եւ նոքա խորհէին ը միմեանս և ասէին ։ * Ե-
թէ ասեմք յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւա-
տացէք նմա ։ և եթէ ասեմք ՚ի մարդկանէ, երկնչիմք
՚ի

(16) Յօրինակին դիւեր. Ասէ ցնս յս ։ (16) Ոմանք. Ստնդ-
դիեացաց. կՏ, ստնդիեցուց հաստատեցեր զօրհ" ։ (19) Ո-
մանք. Եւ եկեալ թզե" ։ (19) Ոսկան. Եւ ոչ եգիտ ՚ի նմա ։
(19) Ոմանք. Ելցէ յաւիտեան ։ (21) Բ՜ձ. Ոչ միայն թզեն-
ւոյդ առ" ։ (23) Ոսկան. Եւ իբրև եկին ՚ի տա" ։ (23) Ոմանք.
Եւ ո՞ ետ քեզ ։ (24) Ոմանք. Եւ ես ձեզ ասեմ, որով ։ (25) ՚Ի
բա". Խորհէին ընդ միմս, և ։ համօրինակն ամենց ՚ի ճնոճ" ։
(26) Բ՜ձ. Իբրև զմարգարէ ունէին ։

Digitized by Google

'ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅովհաննէս իբրեւ ըզ-
մարգարէ ունէին: * Պատասխանի ետուն Յիսուսի եւ ասեն. 27
ոչ գիտեմք: ասէ ցնա եւ նա. եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով
իշխանութեամբ. առնեմ զայս:
ԽԺԹ * Բայց զիարդ թուի ձեզ. այր մի էին երկու որ- 28
դիք, եւ մատուցեալ առ առաջինն՝ ասէ. որդեակ՝ երթ
այսօր գործեա յայգւոջ: * Նա՝ պատասխանի ետ՝ եւ ա- 29
սէ. երթամ տէր՝ եւ ոչ չոգաւ: * Մատեաւ եւ առ միւսն, 30
եւ ասէ նոյնպէս: Նա՝ պատասխանի ետ՝ եւ ասէ. ոչ կա-
միմ: բայց յետոյ զղջացաւ՝ եւ չոգաւ յայգին: * Արդ՝ 31
ո՞ յերկոցունց արար զկամս հօրն. ասեն՝ յետինն: Ասէ
ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք՝
յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից: * Զի եկն 32
Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան՝ եւ ոչ հաւատա-
ցէք նմա. եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա,
եւ դուք տեսէք՝ եւ ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա:
Ծ * Այլ առակ լուարուք. այր մի էր տանուտէր՝ որ 33
Է Գ տնկեաց այգի, եւ ցանգով պատեաց զնա, եւ փորեաց
'ի նմա հնձան, եւ շինեաց աշտարակ. եւ ետ զնա մշակս,
եւ գնաց 'ի տար աշխարհ: * Իբրեւ մերձեցաւ ժամանակ 34
պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ
զպտուղս նորա: * Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն 35
տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին: * Դար- 36
ձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն;
եւ արարին նոցա՝ նոյնպէս: * Յետոյ առաքեաց առ նոսա 37
զորդի իւր, եւ ասէ, թերեւս՝ ամաչեսցեն յորդւոյ աս-
տի իմմէ: * Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն 38
ընդ միմեանս. սա է ժառանգն եկայք սպանցուք զսա, եւ
կալցուք զժառանգութիւն սորա: * Եւ առեալ՝ հանին 39
զնա արտաքոյ քան զայգին, եւ սպանին: * Արդ՝ յոր- 40
ժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն
այնոցիկ: * Ասեն ցնա. զչարս չարաչար կորուսցէ. եւ 41
զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպը-
տուղս 'ի ժամու իւրեանց: * Ասէ ցնոսա Յիսուս. չիցէ՞ եր- 42
բեք ընթերցեալ ձեր 'ի գիրս. զվէմն՝ զոր անարգեցին
շինողք, նա եղեւ գլուխ անկեան. 'ի տեառնէ եղեւ այս, եւ
է սքանչելի յաչս մեր: * Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի 43
բարձցի 'ի ձէնջ արքայութիւն այ, եւ տացի ազգի որ առ-
նի

(27) Յօրինակին գրեալ էր. Ասէ ցնա եւ նա եւ ոչ: (31) Օրի-
նակ մի. Յարքայութիւն այ: (32) Ոմանք յաւելուն. Զի եկն
առ ձեզ Յովհ՛: (33) Ոմանք. 'Ի նմա հնձան... եւ ինքն գնաց
'ի տարաշխարհ: (34) Ոմանք. Զպտուղ նորա: (37) Ոմանք.
Զորդին իւր: (41) Ոմանք. Զչարն չարաչար կո՛՛.. տայցէ..
տացեն: (43) Օրինակ մի. Որ առնիցէ զկամս նորա:

Digitized by Google

44 նիցէ զպտուղս նր։ * Եւ որ անկցի ՚ի վերայ վիմիս այ֊
սորիկ՝ փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։
45 * Իբրեւ լուան քահանայապետքն եւ դպիրքն եւ փարիսե֊
46 ցիք զառակս նր, գիտացին թէ վն նց ասաց։ * Եւ
խնդրէին զնա ունել, բայց երկեան ՚ի ժողովրդոցն.
քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։

ԳԼ. ԻԲ.

1 Պատասխանի ետ Յս, եւ ասէ ցնս առա֊ ԾԱ
2 կօք։ * Նմանեցաւ արքայութիւն երկնից՝ առն թա֊ Է Գ
3 գաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում։ * Եւ
առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ՚ի հար֊
4 սանիս։ եւ ոչ կամէին գալ։ * Դարձեալ՝ առաքեաց
այլ ծառայս՝ եւ ասէ. ասացէք հրաւիրելոցն. ահաւա֊
սիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ եւ պարա֊
րակք զենեալ են, եւ ամ ինչ պատրաստ է. եկայք ՚ի
5 հարսանիս։ * Եւ նոքա յուլացեալ՝ գնացին ոմն յա֊
6 գարակ իւր, եւ ոմն ՚ի վաճառ իւր։ * Եւ այլք՝ կալան
7 զծառայս նր, թշնամանեցին, եւ սպանին։ * Իսկ թա֊
գաւորն իբրեւ լուաւ՝ բարկացաւ, եւ առաքեաց զզօրս
իւր եւ սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, եւ զքաղաքն
8 նց այրեաց։ * Յայնժամ ասէ ցծառայս իւր. հարսա֊
նիքս պատրաստ են, եւ հրաւիրեալքն չէին արժանի։
9 * Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զորս միան֊
10 գամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի հարսանիս։ * Եւ ելեալ
ծառայքն ՚ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զոր
եւ գտին՝ զչարս եւ զբարիս. եւ լցան հարսանիքն բազ֊
11 մականօք։ * Եւ մտեալ թագաւորն հայել զբազմակա֊
նսն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ
12 հարսանեաց։ * Եւ ասէ ցնա. ընկեր՝ զիարդ մտեր այսր,
զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց։ Եւ նա պապան֊
13 ձեցաւ։ * Յայնժամ ասէ թագաւորն սպասաւորացն.
կապեցէք զդա ոտս եւ զձեռս՝ եւ հանէք զդա ՚ի խա֊
ւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։
14 * Զի բազումք են կոչեցեալք՝ եւ սակաւք ընտրեալք։
15 * Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ ԾԲ
զնմա֊ Է Ե

(45) Օրինակ մի ընդ ոսկեայ. Զառակս զայս, գիտացին։
(46) Ոմանք. Եւ խնդրեցին զնա ու՛՛։
Գլ. ԻԲ. (2) Ոմանք. Արքայութիւն երկնից։ (4) Ոմանք.
Զուարակք եւ պարարակք իմ զեն՛՛։ (5) Ոմանք. Եւ նք
յուղացեալ գնա՛՛։ (7) Ոմանք. Եւ զքաղաքս նց այրեաց։
(9) Ոմանք. Երթայք ՚ի յանցս.. եւ զոր միանգամ։ (10) Ո֊
մանք. Եւ ժողովեցին զամենսին զոր գտին։ (14) Ոմանք.
Եւ սակաւք են ընտրեալք։

Digitized by Google

զնմանէ, թէ ո՛րպ գնիցեն նմա որոգայթ բանիւք: * Եւ 16
առաքեն առ նա զաշակերտսն իւրեանց հերովդիանո-
սօքն հանդերձ՝ եւ ասեն. վարդապետ՝ գիտեմք զի ճշ-
մարիտ ես, եւ զճանապարհն այ ճշմարտութբ ուսու-
ցանես, եւ ոչ է քեզ փոյթ զումեքէ, եւ ոչ հայիս յերեսս
մարդոյ: * արդ՝ ասա՛ մեզ, զինչ թուի քեզ, պա՞րտ 17
է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ: * Գիտաց յս զխորա- 18
մանկութիւն նց, եւ ասէ. զի՞ փորձէք զիս կեղծաւորք.
* ցուցէք ինձ զդահեկան հարկին: Եւ նք մատուցին 19
նմա դահեկան մի: * Եւ ասէ ցնս. ո՞յր է պատկերս այս՝ 20
կամ գիր: * ասեն՝ կայսեր: Յայնժամ ասէ ցնս. եր- 21
թայք՝ տուք զկայսեր՝ կայսեր, եւ զայ՝ այ: * Իբրեւ 22
լուան՝ զարմացան. եւ թողին զնա եւ գնացին:

ԾԳ. * Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն, որ աս- 23
էին՝ թէ չիք յարութի. հարցին ցնա՝ * եւ ասեն. վարդա- 24
պետ՝ մովսէս ասաց. եթէ ոք մեռցի անորդի, առցէ
զկին նր եղբայր իւր, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւ-
րում: * Էին առ մեզ եղբարք եւթն. առաջինն՝ արար 25
կին՝ եւ մեռաւ. եւ զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն
իւր՝ եղբօր իւրում: * Նոյնպէս եւ երկրորդն՝ եւ եր- 26
րորդն, մինչեւ ցեւթներորդն: * յետ ամենեցուն՝ մե- 27
ռաւ եւ կինն: * Արդ՝ ՚ի յարութեանն ո՞յր յեւթանցն ե- 28
ղիցի՝ նմա կին. զի ամենեքին կալան զնա կին: * Պա- 29
տասխանի ետ նց յս՝ եւ ասէ. մոլորեալ՝ էք ոչ գիտէք զգ-
գիրս եւ ոչ զզօրութի այ: * զի ՚ի յարութեանն ոչ կանայս 30
առնեն՝ եւ ոչ արանց լինին, այլ են իբրեւ զհրեշտակս
յերկինս: * Բայց վասն յարութե մեռելոց չիցէ՞ ըն- 31
թերցեալ զասացեալն ձեզ յայ. * Ես եմ այ աբրահա- 32
մու, այ իսահակայ եւ այ յակոբայ. եւ չէ՛ այ՝ այ մե-
ռելոց՝ այլ կենդանեաց: * Իբրեւ լուան՝ ժողովուրդքն, 33
զարմանային ընդ վարդապետութե նր:

ԾԴ. * Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան՝ եթէ պապանձեցոյց 34
զսադուկեցիսն, ժողովեցան ՚ի միասին: * Եւ եհարց 35
միոմն ՚ի նոցանէ զնա՝ փորձելով, եւ ասէ: * վարդապետ՝ 36
ո՞ր պատուիրան մեծ է յօրէնս: * Եւ յս ասէ ցնա. սի- 37
րես

(16) Ոմանք. Յերեսս մարդոյն. կամ, մարդկան: (18) Ոմանք. Զխորամանկութիւն նց: (20) Ոմանք յաւելուն. Եւ ասէ ցնս յս. ո՞յր: (21) Ոմանք. Զկայսերն կայսեր, եւ զայն այ: (23) Ոմանք. Որ ասեն, թէ չիք յա'': (25) Ոմանք. Էին առ մեզ: (25) Ոմանք. Զկին իւր: (26) Ոմանք. Եւ երրորդ: (28) Ոմանք. ՚Ի յարութե ո՞յր ՚ի յեւթանցն: (29) Ոմանք. Զզօրութին: (31) Ոմանք յաւելուն. Ընթերցեալ չէք զասացեալսն ձեզ: (32) Ոմանք. Եւ ոչ է այ, այ մե'': (34) Բազումք. Պապանձեցոյց: (36) Ոմանք. Է մեծ յօրէնս:

Digitized by Google

րեսցես զՏր ած քո յամ սրտէ քումմէ, եւ յամ անձնէ
38 քումմէ, եւ յամ մտաց քոց: *Այս է մեծն եւ առաջին
39 պատուիրան: *Եւ երկրորդն՝ նման սմին. սիրեսցես զըն-
40 կեր քո՝ իբրեւ զանձն քո: *Յայս երկուս պատուիրանս
ամ օրէնք եւ մարգարէք՝ կախեալ կան.
41 *Եւ 'ի ժողովել փարիսեցւոցն, եհարց ցնս ՅՍ՝ եւ ա- ԾԵ
42 սէ: *զիարդ թուի ձեզ վն քՍի, ո՞յր որդի է: ասեն
43 ցնա, դաւթի: *Ասէ ցնոսա ՅՍ. իսկ զիա՞րդ դաւիթ
44 հոգւովն՝ կոչէ զնա Տր, եւ ասէ: *ասաց Տր ցՏր իմ.
նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պա-
45 տուանդան ոտից քոց: *իսկ եթէ դաւիթ՝ զնա Տր կո-
46 չէ, զիա՞րդ որդի Նր իցէ: *Եւ ո՛չ ոք կարէր տալ նմա
պատասխանի բան մի. եւ ո՛չ իշխէր ոք յայնմ օրէ հար-
ցանել զնա եւ ո՛չ ինչ:

ԳԼ. ԻԳ.

1 Յայնժամ խօսեցաւ ՅՍ ընդ ժողովուրդսն եւ ընդ ա- ԷՂ
2 շակերտսն իւր՝ եւ ասէ: *յաթոռն մովսիսի նստան
3 դպիրքն եւ փարիսեցիք: *զամ ինչ՝ որ ասիցեն ձեզ՝ պա-
հեսջիք եւ արասջիք. բայց ըստ գործոց նց՝ մի առնէք,
4 զի ասեն՝ եւ ո՛չ առնեն: *Կապեն բեռինս ծանունս եւ
դժուարակիրս, եւ դնեն 'ի վր ուսոց մարդկան. եւ մա-
5 տամբ իւրեանց ո՛չ կամին շարժել զնս: *Եւ զամ գործս
իւրեանց առնեն 'ի ցոյցս մարդկան: լայնեն զգրապա-
նակս իւրեանց, եւ երկայնեն զքղանցս հանդերձից իւ-
6 րեանց: *սիրեն զնախաթոռս յընթրիս, եւ զնախա-
7 թոռս 'ի ժողովուրդս՝ եւ զողջոյնս 'ի հրապարակս: *եւ
8 կոչել 'ի մարդկանէ՝ ռաբբի ռաբբի: *Բայց դուք՝ մի
զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, եւ ա-
9 մենեքին դուք՝ եղբարք էք: *Եւ հայր՝ մի կոչէք ձեզ
10 յերկրի. զի ձեր՝ մի է հայր՝ որ յերկինսն է: *Եւ մի
11 կոչեցիք ուսուցիչք. զի ուսուցիչ ձեր՝ քՍ է: *Եւ մեծն
12 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր: *Որ բարձրացուցանէ
զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի:
13 *Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի ԾԶ
փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք
ո՛չ

(39) Ոմանք. Երկրորդն նման: (40) Ոմանք. Յայս երկու-
պատ": (44) Ոմանք. Ասաց տրն ցՏրն իմ:
Գլ. իգ. (3) Ոմանք. Զամ ինչ զոր ասի": (4) Ոմանք յա-
ւելուն. Կապեն ծանրին բեռինս: (4) Ոմանք. Շարժել
զնա: (5) Ոմանք. Եւ զամ զգործս իւր".. 'ի ցոյց մարդ-
կան, լայնեն զգրապանս: (8) Ոմանք. Մի զոք կոչիցէք:
(13) Ոմանք. Եւ որ մտանենն: Աղտանօք՝ ըստ համեմատութեան

Digitized by Google

ոչ մտանէք, և որոց մտանելն՝ չտայք թողուլ մտանել ։
* Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի 15
յածիք ըզ ծով և ըզ ցամաք՝ առնել եկամուտ մի. և
յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի՝ կրկին ևս
քան զձեզ ։ * Վայ ձեզ՝ առաջնորդք կոյրք. զի ասէք՝ 16
որ երդնու 'ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոս-
կին որ 'ի տաճարին է՝ պարտական է ։ * Մորոսք և կոյրք՝ 17
զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սրբէ զոսկին ։
* Եւ որ երդնու 'ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու 18
'ի պատարագն, որ 'ի վերայ նր̃ է՝ պարտական է ։ * Յիմարք 19
և կոյրք՝ զի՞նչ մեծ է. պատարագն, եթէ սեղանն՝ որ
սրբէ զպատարագն ։ * Իսկ արդ՝ որ երդնու 'ի սե- 20
ղանն, երդնու 'ի նա՛ և յամ որ 'ի վր̃ նր̃ է ։ * Եւ որ 21
երդնու 'ի տաճարն, երդնու 'ի նա՛ և 'ի բնակիչն նր̃ ։
* Եւ որ երդնու յերկինս, երդնու յաթոռն այ՝ և 22
յայն որ նստի 'ի վր̃ նր̃ ։ * Վայ ձեզ դպրաց և փա- 23
րիսեցւոց կեղծաւորաց. զի տասանորդէք զանանուխ
և զսամիթ և զչաման, և թողէք զծանր ծանր օրինացն՝
զդատաստան, և զողորմութիւն, և զհաւատս. զայս ար-
ժան էր առնել՝ և զայն՝ չթողուլ ։ * Առաջնորդք կոյրք, 24
որ զմժղուկս քամէք, և զուղտս կլանէք ։ * Վայ ձեզ 25
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զար-
տաքին զբաժակին և զսկաւառակի, և 'ի ներքոյ լի են
յափշտակութեամբ և անիրաւութեամբ ։ * Փարիսեցի կոյր՝ 26
սրբեա՛ նախ զներքին բաժակին և զսկաւառակին, զի
լինիցի և արտաքինն նց̃ սուրբ ։ * Վայ ձեզ դպրաց և 27
փարիսեցւոց կեղծաւորաց. զի նմանն էք գերեզմանաց
բռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք, և 'ի ներքոյ
լի են ոսկերօք մեռելոց, և ամ պղծութեամբ ։ * Այսպէս 28
և դուք՝ արտաքոյ երևիք մարդկան արդարք, և 'ի ներ-
քոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ ։ * Վայ ձեզ 29
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի շինէք զգե-
րեզմանս մարգարէից, և զարդարէք զգերեզմանս արդա-
րոց ։ * Եւ ասէք՝ եթէ էաք յաւուրս հարցն մերոց՝ ոչ 30
հաղորդէաք արեան մարգարէիցն ։ * Ապա ուրեմն վը- 31
կայ-

լատինականն օրինակաց՝ ուխան յաւելու համար, 14. * Վայ ձեզ
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուտէք զտունս այրեաց.
պատճառանօք երկայնէք զաղօթս. վն̃ զի առաւելի դատաստան ընդու-
նիցիք ։ Այլ զայսու զանց առնէին առհասարակ ամ գրչագիրք մեր. հա-
մաձայն հնագոյն և հաւատարմագոյն յունական օրինակաց ։ (20) Ո-
մանք. Երդնու 'ի նա.. 'ի վր̃ նր̃ ։ (21) Ոմանք. Երդնու
'ի նա և ։ (22) Ոմանք. Եւ որ երդնու յերկին" ։ (25) Ոմանք.
Եւ սկաւառակին ։ (27) Ոմանք. Զի նմանէք ... երևին գե-
ղեցիկ, և ներքոյ ։ (31) Ոմանք. Որ կոտորեցին զմարգա" ։

կայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտորեցին
32 զմարգարէսն: * Եւ դուք՝ լցէք զչափ հարցն ձերոց:
33 * Օ՛ձք՝ ծնունդք իժից, զիարդ փախնուցուք ՚ի դա-
34 տաստանէ գեհենին: * Վասն այդորիկ՝ ահաւասիկ ես
առաքեմ առ ձեզ մարգարէս, և իմաստունս, և դը-
պիրս. ՚ի նոցանէ սպանանիցէք, և ՚ի խաչ հանիցէք, և
՚ի նոցանէ տանջիցէք ՚ի ժողովուրդս ձեր, և հալածի-
35 ցէք ՚ի քաղաքէ ՚ի քաղաք: * Որպէս զի եկեսցէ ՚ի վր ձեր
ամ արիւն արդար հեղեալ յերկրի. յարենէն աբելի
արդարոյ մինչև յարիւնն զաքարիայ որդւոյ բարաքեայ՝
36 զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ: * Ամէն
ասեմ ձեզ. եկեսցէ այն ամ ՚ի վերայ ազգիս այսորիկ:
37 * Երուսաղէմ, Երուսաղէմ. որ կոտորէր զմարգարէս՝ և քարկոծ
առնէր զառաքեալսն առ նա: Քանիցս անգամ կամե-
ցայ ժողովել զմանկունս քո՝ զորօրինակ ժողովէ հաւ
38 զձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցարուք: * Ահա թո-
39 ղեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: * Բայց ասեմ
ձեզ, թէ ոչ ևս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչև ա-
սիցէք՝ օրհնեալ եկեալն յանուն տն:

ԳԼ. ԻԴ.

1 Եւ ելեալ արտաքս յս ՚ի տաճարէն՝ գնայր. և մա- տե-
ան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տա-
2 ճարին: * Եւ նա՝ պատասխանի ետ և ասէ ցնս. տե-
սանիցէք զայդ ամ, ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ մնասցէ
այդր քար՝ ՚ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի:
3 * Եւ մինչ դեռ նստէր ՚ի լերինն ձիթենեաց, մատեան
առ նա աշակերտքն առանձինն՝ և ասեն. ասա մեզ՝ երբ
լինիցի այդ. և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն,
4 և վախճանի աշխարհիս: * Պատասխանի ետ յս և ասէ ցնս.
5 զգոյշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ: * Զի բզմք գալ-
ցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ քս, և զբա-
6 զումս մոլորեցուցանիցեն: * Լսելոց էք պատերազ-
մունս՝

---

(34) Ոմանք. Վս այսորիկ ահաւա"... և դպիրս. և ՚ի նոցանէ: (35) Ոմանք. Որդւոյ բարաքեայ: (37) ՚Ի յեբրէ- ական գրչագրաց մերոց՝ … օրինակ ընդ հին և ընդ նոր՝ առնին. Որ կոտորեիր զմարգարէս և քարկոծ առնեիր զառաքեալսն առ նա: Եւ ՚ի նոցանէ … զառաքեալսն առ քեզ: … հնագոյն և ընտրելագոյն … համաձայն մերումս: (39) Ոմանք. Եկեալ յանուն տն: Գլ. իդ. (1) Ոմանք. Զշինուած տաճարին: (2) Այս. Տեսանէք զայդ ամ: (2) Բզմ. Քանզի … Ամէն ա- սեմ ձեզ: (4) Ոմանք. Զձեզ խաբեսցէ: (5) Բզմ. Եւ մոլորեցեն թէ.. և զբզմս մոլորեցուցանեն: (6) Ոմանք.

Digitized by Google

մունս՝ և զհամբաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի՛
խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամի, այլ չէ՛ է կա-
տարած: * Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւո- 7
րութի՛ 'ի թագաւորութե. և եղիցին սովք և սրածութիւնք,
և սասանութիւնք 'ի տեղիս տեղիս: * սակայն և այն ամե- 8
նայն՝ սկիզբն է երկանց: * Յայնժամ մատնեսցեն ըզ- 9
ձեզ 'ի նեղութի, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք ա-
տեցեալք յամ ազգաց վս անուան իմոյ: * Եւ յայն- 10
ժամ գայթագղեսցին բզմք, և զմիմեանս մատնեսցեն՝
և ատեսցեն զմիմեանս: * և բազում սուտ մարգարէք 11
յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն: * Եւ վս բազ- 12
մանալոյ անօրէնութեն, ցամաքեսցէ սէր բազմաց: * բայց 13
որ համբերեսցէ 'ի սպառ, նա կեցցէ: * Եւ քարոզես- 14
ցի աւետարանս արքայութե ընդ ամ տիեզերս՝ 'ի վկայ-
ութի ամ հեթանոսաց. և ապա եկեսցէ կատարած:
* Այլ՝ յորժամ տեսանիցէք զպղծութի աւերածոյն, որ 15
ասացեալն է 'ի ձեռն Դանիէլի մարգարէի. զի կայցէ
'ի տեղւոջն սրբութե. որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ:
* Յայնժամ որ 'ի հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լե- 16
րինս. * և որ 'ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ 17
'ի տանէ իւրմէ. * և որ յանդի իցէ, մի՛ դարձցի յետս 18
առնուլ զհանդերձ իւր: * Բայց վա՜յ իցէ յղեաց և սնու- 19
տուաց յաւուրսն յայնոսիկ: * Յաղօթս կացէք՝ զի մի՛ 20
լինիցի փախուստն ձեր ձմերանի, և մի՛ 'ի շաբաթու:
* Զի եղիցի յայնժամ նեղութի մեծ, որպիսի ո՛չ ե- 21
ղև 'ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ո՛չ
այլ լիցի: * Եւ եթէ ո՛չ կարճեսցին աւուրքն այնոքիկ, 22
ո՛չ ապրէր ամ մարմին. բայց վս ընտրելոցն՝ կարճես-
ցին աւուրքն այնոքիկ: * Յայնժամ՝ թէ ոք ասիցէ 23
ձեզ՝ ահաւասիկ աստ է քրն կամ անդ, մի՛ հաւատայ-
ցէք: * Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգա- 24
րէք. և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչ
մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ՝ և զընտրեալսն:
* ահա յառաջագոյն ասացի ձեզ: * Արդ թէ ասի- 25
ցեն ձեզ. ահաւանիկ յանապատի է, մի՛ ելանիցէք. և 26
թէ ահա՝ 'ի սենեակս է, մի՛ հաւատայցէք: * Զի 27
որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ և երեւի մինչև յա-
րև-

Եւ համբաւս պա". զգո՛յշ կացէք, մի՛ խռո": (7) Ոմանք յա-
ւելուն. 'ի թգրութե վերայ: (9) Ոմանք. Զձեզ 'ի նեղութիս:
(13) Ոմանք. Որ համբերեսցէ, կամ, համբերէ իսպառ:
(15) Ոմանք. Զպղծութի աւերածին.. 'ի դանիէլէ մար-
գարէէ, զի կացցէ 'ի տեղ": (22) Ոմանք. Այլ վս ընտ-
րելոցն: (24) Ոմանք. Եւ տացեն նշանս ... մինչև մո-
լորեցու".. հնար իցէ: (25) Ոմանք. Արդ եթէ ասիցեն:

Digitized by Google

րեւմուտս, այնպէս եղիցի գալուստ որդւոյ մարդոյ։
28 * Զի ուր դիակն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։
29 * Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արե-
գակն խաւարեսցի և լուսին՝ ոչ տացէ զլոյս իւր. և աս-
տեղք՝ անկցին յերկնից և զօրութիւնք երկնից՝ շարժեսցին։
30 * Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս.
և յայնժամ կոծեսցին ամ ազգք երկրի։ և տեսցեն զոր-
դի մարդոյ եկեալ 'ի վ ամպոց երկնից զօրութ և փա-
31 ռօք բազմօք։ * Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով
մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նր 'ի չորից հողմոց՝
32 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նց։ * 'Ի թզենւոյ ան-
տի ուսարուք զառակն. զի յորժամ նր ոստքն կակղա-
ցին, և տերևն ցցուիցէ, գիտէք թէ մերձ է ամառն։
33 * Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամ, գի-
34 տասջիք թէ մերձ է 'ի դուրս։ * Ամէն ասեմ ձեզ՝ ե-
35 թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամ եղիցի։ * Եր-
կինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։
36 * Բայց վա աւուրն այնորիկ և ժամու, ոչ ոք գիտէ. ծԸ
ոչ հրեշտակք երկնից, և ոչ որդի՝ բայց միայն հայր։
37 * Այլ որպ աւուրքն նոյի, նոյնպէս եղիցի գալուստն
38 որդւոյ մարդոյ։ * Զի որպ էին յաւուրսն որ յառաջ
քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին
և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ նոյ 'ի տա-
39 պանն, * և ոչ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն և եբարձ
զամենեսին, այնպէս եղիցի և գալուստ որդւոյ մար-
40 դոյ։ * Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին
41 առնուցու և միւսն թողուցու։ * և եթէ երկու ա-
ղայցեն 'ի մի երկանս, մին առնուցու և միւսն թողու-
42 ցու։ * Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու
43 տէրն ձեր գայ։ * Զայս գիտասջիք, եթէ գիտէր տա-
նուտէր՝ յորում պահու գող գայ, սկէր՝ և ոչ տայր
44 ակումն հատանել զտանն իւրոյ։ * Վա այսորիկ և դուք՝
եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակնունի-
45 ցիք՝ գայ որդի մարդոյ։ * Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ
ծառայ և իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վ ծա-
46 ռայից իւրոց՝ տալ նց կերակուր 'ի ժամու։ * Երա-
նի

---

(28) Ոմանք. Անդր և արծուիք ժողովեսցին։ (32) Ոմանք. Ոստքն նր կակ՛՛.. ցցուեսցի։ (33) Ոմանք. Զայս ամ եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս։ (37) Բ՛ն. Այնպէս եղիցի գալ՛՛։ (40) Ոմանք. Յայնժամ եթէ։ (41) Օրինակ մի. Երկու աղալ իցեն 'ի։ (42) Ոմանք նշանակեն 'ի լուս՛՛։ Յորում աւուր տէրն ձեր։ (43) Ոմանք. Զայս գիտասջիք... տանուտէրն... զտան իւրոյ։ (43) Օրինակ մի. Յայս գիտասջիք։ (46) Բ՛ն. Երանի է ծա՛՛։

նի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ ա-
րարեալ այնպէս: * ամէն ասեմ ձեզ, զի 'ի վերայ ամե- 47
նայնի ընչից իւրոց կացուսցէ զնա: * Ապա թէ ասասցէ ծա- 48
ռայն չար՝ 'ի սրտի իւրում, ուշ առնէ տէր իմ գալ. * և 49
սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպէ
ընդ արբեցողս. * գայցէ տէր ծառային այնորիկ՝ 50
յաւուր յորում ոչ ակն ունիցի, և 'ի ժամու յորում
ոչ գիտիցէ. * և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին 51
նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճտել
ատամանց:

ԳԼ. ԻԵ.

ծթ. Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կու- 1
սանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին
ընդ առաջ փեսայի և հարսին: * Հինգն 'ի նոցանէ յի- 2
մարք էին՝ և հինգն իմաստունք: * Յիմարքն առին 3
զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: * Իսկ 4
իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապտերս իւ-
րեանց: * Եւ 'ի յամել փեսային, նիրհեցին ամենե- 5
քեան և 'ի քուն մտին: * Եւ 'ի մէջ գիշերի եղև բար- 6
բառ, ահա փեսայ գայ ելէք ընդ առաջ նմա: * Յայն- 7
ժամ յարեան ամ կուսանքն, և կազմեցին զլապտերս
իւրեանց: * Ասեն յիմարքն ցիմաստունսն, տուք մեզ 8
յիւղոյդ ձերմէ, զի ահա՝ շիջանին լապտերքս մեր:
* Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. գուցէ 9
եւ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք 'ի վա-
ճառականս՝ և գնեցէք ձեզ: * Իբրև նոքա գնացին գը- 10
նել՝ և եկն փեսայն և պատրաստականքն մտին ընդ նմա 'ի հար-
սանիսն՝ և փակեցաւ դուռն: * Յետոյ գան և այլ 11
կուսանքն՝ և ասեն. տէր տէր՝ բաց մեզ: * Նա պա- 12
տասխանի ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գի-
տեմ զձեզ: * Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն և 13
ոչ զժամ:

կ * Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, կոչեաց զծա- 14
ռայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր: * Ումեմն ետ հինգ 15
քանքար, և ումեմն երկուս, և ումեմն մի. իւրաքանչիւ-
րում ըստ իւրում կարի, և գնաց: * Չոգաւ վաղվա- 16
ղա-

---

(48) Ոմանք. Ապա եթէ ասիցէ: (50) Ոմանք. Յորում ակն ոչ ունիցին: (51) Ոմանք. Ընդ կեղծաւորսն:
Գլ. ԻԵ. (1) Ոմանք. փեսային և հարս": (4) Ոմանք. Առին ձէթ ամանովք: (6) Ոմանք. Ահա գայ փեսայ: (10) Ոմանք. Իբրև գնացին նոքա գնել, եկն փե": (12) Ոմանք. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ երբէք գի": (13) Ոմանք. Եւ ոչ զժամն: (15) 'Ի բազմ. գրչ. Ետ ումեմն մի:

Digitized by Google

գնաց՝ որ առ զհինգն, գործեաց նոքօք՝, և շահեցաւ
17 այլ ևս հինգ։ * Նոյնպէս և որ զերկուսն շահեցաւ
18 այլ ևս երկուս։ * Իսկ որ զմին առ՝ գնաց փորեաց զեր-
19 կիր, և թաքոյց զարծաթ տեառն իւրոյ։ * Յետ բազում
ժամանակի, գայ տէր ծառայիցն այնոցիկ, և առնէ
20 համարս 'ի միջի նոցա։ * Իսկ մատուցեալ որ զհինգ քան-
քարն առ, մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. տէր՝
հինգ քանքար ետուր ցիս, արդ աՀաւասիկ՝ հինգ այլ
21 ևս քանքար 'ի վերայ շահեցայ։ * Ասէ ցնա տէրն իւր. ազ-
նիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սա-
կաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից
22 զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։ * Մատուցեալ և
որոյ զերկուսն քանքարսն առեալ էր, և ասէ. տէր՝ եր-
կուս քանքարս ետուր ցիս, աՀաւասիկ երկուս ևս այլ
23 քանքարս՝ զոր 'ի վերայ շահեցայ։ * Ասէ ցնա տէրն
իւր. ազնիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև
'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կա-
24 ցուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։ * Մատու-
ցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. տէր՝
գիտէի զի այր մի խիստ ես, հնձես՝ ուր ոչ սերմանե-
25 ցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր. * երկեայ՝ գնա-
ցի և թաքուցի զքանքարդ քո յերկրի. արդ՝ աՀաւասիկ
26 քոյդ՝ քեզ։ * Պատասխանի ետ տէրն՝ և ասէ ցնա.
ծառայ չար և վատ՝ գիտէիր թէ հնձեմ՝ ուստի ոչ
27 սերմանեցի, և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. * պարտ
էր քեզ արկանել զարծաթս իմ 'ի սեղանաւորս, և ե-
28 կեալ ես՝ տոկոսեօք պահանջէի զիմն։ * Արդ՝ առէք
'ի դմանէ զքանքարդ՝ և տուք այնմ որ ունիցի զտասն
29 քանքարն։ * Զի ամենայն որ ունիցի՝ տացի և յաւելցի. և
որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։
30 * Եւ զծառայդ անպիտան հանէք 'ի խաւարն արտա-
քին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։
31 * Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք՝ ԿԱ
և ամ հրեշտակք ԶԻ նմա, յայնժամ նստցի յաթոռ փա-
32 ռաց իւրոց։ * և ժողովեսցին առաջի նՐ ամ ազգք, և
մեկնեսցէ զնս 'ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զոչխս
33 յայծեաց։ * և կացուսցէ զոչխարսն ընդ աջմէ իւրմէ
և

(20) Ոմանք. Արդ աՀաւասիկ։ (21) Բ(?). Կացուսցից զքեզ։ (24) Ոմանք. Մատուցեալ և որ զմին քան" ։ (25) Ոմանք. Զքանքարն քո յերկրի. աՀաւասիկ քոյդ։ (26) Ոմանք. Եթէ հնձեմ։ (29) Ոմանք. Զի ամ որ ունիցի։ (32) Ոմանք. Որպէս հովիւ մի զի։ (32) 'Ի լուսն". Զի մեկնեսցէ զա-ռաջնորդն" համաձայնոյն ամաց 'ի բնաբ"։ (32) Յօրինակին. Յայ-ծեաց։ (33) Ոմանք յաւելուն. 'Ի ձախմէ իւրմէ։

և զայծիսն ՚ի ձախմէ ։ * Յայնժամ ասասցէ Թագաւորն 34
ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. եկա՛յք օրհնեալք Հօր
իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն
ի սկզբանէ աշխարհի ։ * Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ու- 35
տել. ծարաւեցի՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժո-
ղովեցէք զիս. * մերկ՝ և զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ 36
և տեսէք զիս. ՚ի բանտի էի՝ և եկիք առ իս ։ * Յայն- 37
ժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. Տէ՛ր
Երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ ծա-
րաւի՝ և արբուցաք ։ * Երբ տեսաք զքեզ օտար՝ և ժո- 38
ղովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք ։ * Երբ տեսաք զք- 39
եզ հիւանդ՝ կամ ՚ի բանտի, և եկաք առ քեզ ։ * Պա- 40
տասխանի տացէ Թագաւորն՝ և ասասցէ ցնո. ամէն
ասեմ ձեզ, որովհետև արարէք միում յեղբարցս այս-
ցիկ փոքրկանց՝ ինձ արարէք ։ * Յայնժամ ասասցէ 41
և ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. երթա՛յք յինէն՝
անիծեալք՝ ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ
է սատանայի և հրեշտակաց նորա ։ * Զի քաղցեայ՝ և ոչ 42
ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ և ոչ արբուցէք զիս.
* օտար էի՝ և ոչ ժողովեցէք զիս, մերկ էի՝ և ոչ զգե- 43
ցուցէք զիս, հիւանդ՝ և ՚ի բանտի՝ և ոչ տեսէք զիս ։
* Յայնժամ պատասխանի տացեն և նոքա՝ և ասաս- 44
ցեն. Տէ՛ր Երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի, կամ
օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ ՚ի բանտի, և ոչ պաշ-
տեցաք զքեզ ։ * Յայնժամ պատասխանի տացէ նոցա՝ 45
և ասասցէ. ամէն ասեմ ձեզ, որովհետև ոչ արարէք
միում ՚ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարէք ։
* Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս, 46
և արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս ։

ԳԼ. ԻԶ.

Եւ եղև իբրև կատարեաց Յս զամ զբանս զայսոսիկ, 1
ասէ ցաշակերտսն իւր ։ * Գիտէք, զի յետ երկուց 2
աւուրց զատիկ լինի. և որդի մարդոյ մատնի ՚ի խաչ
ԺԶ ելանել. * Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և 3
դպիրք և ծերք ժողովրդեանն ՚ի սրահ քահանայապետի-
ն՝ որում անուն էր Կայիափա. * և արարին խոր- 4
հուրդ՝ զի նենգութ կալցին զՅս՝ և սպանցեն ։ * Բայց 5
ա-

(34) Ոմանք. Ձեզ զարքայութիւն ։ (36) Յօրինակին պակաս է. Զիս. հիւանդ էի՝ և փնտռէք զիս ։ (37) Ոմանք. Պատասխանի տացեն նմա ։ (40) Յօրինակին. Թագաւորն՝ և ասէ ցնո ։ (40) Ոմանք. Յեղբարցս յայսցանէ ։ (43) Ոմանք. Հիւանդ էի և ՚ի բանտի ։ ԳԼ. ԻԶ. (1) Ոմանք. Զբանս զայսոսիկ ։ (4) Ոմանք. Կալցեն զՅս ։ (5) Ոմանք. Լինիցի ժողովրդեանն ։

Digitized by Google

ասէին, թէ մի 'ի տօնի աստ՝ զի մի խռովութիւն լինի-
ցի 'ի ժողովրդեանն։
6 * Իբրեւ եղեն յՍ 'ի բեթանիա 'ի տուն սիմոնի բորոտի, ԿԲ
7 * մատեաւ առ նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծան-
րագնի, և թափեաց 'ի գլուխ նորա 'ի բազմականին.
8 * Իբրեւ տեսին աշակերտքն՝ բարկացան և ասեն. ընդէ-
9 ՞ր է կորուստ այդ իւղոյդ։ * զի մարթ էր վաճառել
10 զդա մեծագնի՝ և տալ աղքատաց։ * Գիտացեալ յՍ՝ և ա-
սէ ցնս. զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ մի բարի գոր-
11 ծեաց դա յիս։ * յամ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք,
12 բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ * Արկանել
դորա զեւղդ 'ի մարմին իմ, առ 'ի թաղելոյ զիս նշանա-
13 կեաց։ * Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր և քարոզես-
ցի աւետարանս այս ընդ ամ աշխարհ՝ խօսեսցի և զոր
14 արարն դա՝ 'ի յիշատակ դորա։ * Յայնժամ գնաց մի
յերկոտասանիցն անուանեալն յուդա սկարիովտացի՝
15 առ քահանայապետսն, և ասէ. * զի՞նչ կամիք տալ
ինձ, և ես մատնեցից զնա ձեզ։ և նոքա կշռեցին նմ
16 երեսուն արծաթի. * Եւ յայնմ հետէ խնդրէր պա-
րապ՝ զի մատնեսցէ զնա նոցա։
17 * Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մատեան ա- ԿԳ
շակերտքն առ յՍ և ասեն. ուր կամիս՝ զի պատրաս-
18 տեսցուք քեզ ուտել զզատիկն. * Եւ նա՝ ասէ ցնոսա.
երթայք 'ի քաղաքն առ այս անուն, և ասասջիք ցնա.
վարդապետն ասէ՝ ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ
19 առնեմ զզատիկ աշակերտօքս հանդերձ։ * Եւ արարին
աշակերտքն որպ հրամայեաց նոցա յՍ, և պատրաստե-
20 ցին զզատիկն։ * Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ կայր բազ-
21 մեալ ընդ երկոտասան աշակերտսն։ * Եւ մինչ դեռ
ուտէին նոքա, ասէ. ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ
22 մատնելոց է զիս։ * Եւ տրտմեցան յոյժ. և սկսան ա-
սել ցնա՝ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ. միթէ ես իցեմ
23 Տր։ * Նա՝ պատասխանի ետ՝ և ասէ. որ մխեաց ընդ
իս

---

(6) Յօրինակին. 'ի տուն սիմոնի բորոտի։ (7) Ոմանք. 'ի գլուխն նր 'ի բազմ"։ (8) Ոմանք. Կորուստ այդ իւ"։ (9) Ոմանք. Զդա մեծագնւոյ։ (13) Ոմանք. Բայց ամէն ամէն ասեմ ձեզ, զի ուր քարո"։ (13) Ոսկան. 'Ի յիշատակի դորա։ (14) Ոմանք. Անուանեալն յուդա սկարովտացի։ (15) Օրինակ մի. Նշանակէ 'ի լուսն". Եւ նք ուխտեցին նմա երեսուն։ (16) Ոմանք. Խնդրէր պարապով, զի։ (17) Օրինակ մի յաւելու. Զի՞ կամիս պատրաստեսցուք.. զզատիկն։ (18) Ոսկան. Վարդապետն ասէ։ (18) Ոմանք. Առնեմ զզատիկս։ (22) 'Ի բազում տպ. Եւ սկսան։ (23) Ոմանք. Զձեռն իւր ընդ իս 'ի սկաւառակս։

Digitized by Google

իս զձեռն իւր 'ի սկաւառակին՝ նա մատնեսցէ զիս ։
* Որդի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա. բայց 24
վայ մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն որդին մարդոյ մատ-
նեսցի ։ լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն ։ * Պա- 25
տասխանի ետ Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝ եւ ասէ.
միթէ ես իցեմ վարդապետ ։ ասէ ցնա՝ դու ասացեր ։
ԿԴ * Եւ մինչդեռ ընթրէին նոքա, առ Յիսուս հաց՝ օրհնեաց եւ 26
եբեկ, եւ ետ աշակերտացն՝ եւ ասէ. առէք կերայք՝ այս
է մարմին իմ ։ * Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա 27
եւ ասէ. արբէք 'ի դմանէ ամենեքին ։ * զի այդ է ար- 28
իւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղու 'ի
թողութիւն մեղաց ։ * Բայց ասեմ ձեզ. ոչ եւս արբից 29
յայսմ հետէ 'ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ
արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ ։ * Եւ 30
օրհնեցին, եւ ելին 'ի լեառն Ձիթենեաց ։
* Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքին դուք՝ գայթագ- 31
ղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է՝ թէ հարից
զհովիւն՝ եւ ցրուեսցին ոչխարք հօտին ։ * Եւ յետ յառ- 32
նելոյն իմոյ, յառաջեցից քան զձեզ 'ի Գալիլեա ։ * Պա- 33
տասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ ցնա. թէպէտ եւ ամե-
նեքեան գայթագղեսցին 'ի քէն, սակայն ես ոչ գայթագ-
ղեցայց ։ * Ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ. զի յայսմ 34
գիշերի՝ մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցես
զիս ։ * Ասէ ցնա Պետրոս. թէ եւ մեռանել հասանի- 35
ցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց ։ Նոյնպէս եւ ամենայն ա-
շակերտքն ասէին ։ * Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա 'ի գեւղ 36
մի՝ որում անուն էր Գեթսեմանի, եւ ասէ ցնոսա, նստա-
րուք այդր՝ մինչեւ երթայց կացից յաղօթս ։ * Եւ ա- 37
ռեալ ընդ իւր զՊետրոս՝ եւ զերկուս որդիսն Զեբեդեայ,
սկսաւ տրտմել եւ հոգալ ։ * Յայնժամ ասէ ցնոսա. տըր- 38
տում է անձն իմ մինչեւ 'ի մահ, կացէք աստ՝ եւ հսկեցէք
ընդ իս ։ * Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ ան- 39
կաւ 'ի վերայ երեսաց իւրոց, կայր յաղօթս՝ եւ ասէ.
Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն.
բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու ։ * Գայ առ աշա- 40
կերտսն, եւ գտանէ զնոսա 'ի քուն, եւ ասէ ցՊետրոս. այդ-
պէս

(24) Ոմանք. Որպէս եւ գրեալ է.. բայց վայ իցէ.. յորոյ ձեռն որդի մարդ՞ ։ (26) Ոմանք. Օրհնեաց եբեկ, եւ ետ աշակերտացն ։ (27) Ոմանք. Եւ առ բաժակ ։ (29) Յօրինակին պակասէ. Զդա ընդ ձեզ նոր յար՞ ։ (31) Յօրինակս պակաս. Ոչխարքն հօտին ։ (33) Ոմանք. Եւ ամենեքին գայթագղեսցին ։ (36) 'Ի լուս՞. Գեթսեմանի. կոխան ձիթոյ 'ի ձոր՞ ։ (38) Օրինակ մի. Տրտում է անձն իմ ։ (39) Ոմանք. Եկաց յաղօթս ։ (40) Ոմանք. Ոչ կարացէք մի ժամ ։

Digitized by Google

41 ոչ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս: * Ար-
թուն կացէք և աղօթս արարէք՝ զի մի մտանիցէք ՚ի
փորձութիւն. Հոգի յօժար է՝ բայց մարմին տկար:
42 * Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ եկաց յաղօթս՝
և ասէ. Հայր իմ՝ եթէ հնար իցէ անցանել յինէն բա-
ժակիս այսմիկ, առանց թէ ոչ արբից զսա, եղիցին կամք
43 քո: * Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ՚ի քուն, զի
44 էին աչք իւրեանց ծանրացեալք: * Եւ թող զնոսա՝ և չոգաւ
կաց յաղօթս երրորդ անգամ, և զնոյն բան
45 խօսեցաւ: * Յայնժամ գայ առ աշակերտսն՝ և ասէ ցնոսա.
Ննջեցէք այսուհետև՝ և հանգերուք. զի ահա՝ հասեալ
է ժամ, և որդի մարդոյ մատնի ՚ի ձեռս մեղաւորաց:
46 * Արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ եհաս որ
մատնելոցն է զիս:
47 * Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յուդա՝ մի յերկո- ԿԶ
տասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և
բրօք՝ ՚ի քահանայապետից՝ և ՚ի ծերոց ժողովրդեանն:
48 * Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նոցա նշան՝ և ասէ.
49 ընդ որում և ես համբուրեցից՝ նա է, զնա ունիջիք: * Եւ
վաղվաղակի մատուցեալ առ Յս ասէ. ողջ եր ռաբբի.
50 և համբուրեաց զնա: * Եւ Յս ասէ ցնա.
ընկեր՝ վա՛ որոյ եկիր դու: յայնժամ մատուցեալ արկին
51 զձեռս ՚ի Յս և կալան զնա: * Եւ ահա մի ոմն յայնցանէ՝
որ էին ընդ Յսի, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝ և ե-
հար զծառայ քահանայապետին, և ՚ի բաց եհան զունկն
52 նորա: * Յայնժամ ասէ ցնա Յս. դարձո՛ զսուր քո ՚ի տե-
ղի իւր, զի ամենեքեան որ առնուն սուր սրով անկա-
53 ցեն: * Թէ համարիցիս թէ ոչ կարիցեմ աղաչել զՀայր
իմ. և հասուսցանիցէ ինձ այժմ աւելի քան
54 երկոտասան գունդս հրեշտակաց: * Այլ զիարդ լը-
55 նուցուն գիրք եթէ այսպէս պարտ է լինել: * Յայն-
ժամ ասաց Յս ցամբոխն. իբրև ՚ի վերայ աւազակի ե-
լէք սուսերօք և բրօք ըմբռնել զիս. հանապազ առ ձեզ
՚ի տաճարին նստէի և ուսուցանէի, և ոչ կալայք զիս:
56 * Այլ այս ամ եղև՝ զի լցցին գիրք մարգարէիցն: Յայն-
ժամ

(41) Ոմանք. Զի մի մտանիցէք ՚ի փորձութիւն: (42) Ոմանք. Կացյաղօթս... եթէ հնար իցէ ինձ: (44) Ոմանք. Եկաց յաղօթս: (45) Օրինակ մի նշանակէ ՚ի լուս՛՛. Մատնի ՚ի ձեռս մարդկան: (47) Ոմանք. Սրօք և բրօվք: (49) Ոմանք. Ողջ լեր: (51) Ոմանք. Որ ընդ Յս էին... զունկն նորա: (52) Այլք. Սրով անկանիցին: (53) Ոմանք. Թէ համարեցիս թէ ոչ կարեմ աղաչ՛՛: (53) Յօրինակին գրեալ. Հասուսցանիցէ ինձ այժմ Ոմանք. Ինձ աւելի քան: (55) Ոմանք. Յս ցամբոխն... առ ձեզ էի ՚ի տաճարին՛՛:

Digitized by Google

ժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան:
* Իսկ նոցա կալեալ զյս՝ ածին առ կայիափա քահա 57
նայապետ՝ ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին: * Եւ 58
պետրոս զհետ նր երթայր բացագոյն մինչև 'ի սրահ քա
հանայապետին. և մտեալ 'ի ներքս նստէր ընդ սպա
սաւորսն տեսանել զկատարածն: * Իսկ քահանայա 59
պետքն և ամ ատեանն խնդրէին սուտ վկայութի ըզ
յսէ. զի սպանանիցեն զնա. * և ոչ գտանէին 'ի բազ 60
մաց սուտ վկայիցն մատուցելոց: Յետոյ մատուցեալ
երկու սուտ վկայք, * ասէին՝ թէ սա ասէր՝ կարօղ 61
եմ քակել զտաճարն այ, և զերիս աւուրս շինել: * Եւ 62
յարուցեալ քահանայապետն ասէ ցնա. չտաս ինչ պա
տասխանի, զինչ դոքա ամբաստանեն զքէն: * Եւ յս 63
լռեալ կայր: Պատասխանի ետ քահանայապետն և ա
սէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ յած կենդանի, զի
ասասցես մեզ՝ թէ դու ես քս որդի այ: * Ասէ ցնա 64
յս. դու ասացեր: բայց ասեմ ձեզ, յայսմ հետէ տե
սանիցէք. զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութն՝
և եկեալ ընդ ամպս երկնից: * Յայնժամ քահանայա 65
պետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ. հայհ
հոյեաց: զիմ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա արդ՝ լու
այք զհայհոյութի դորա. * զինչ համարիք ձեզ: Նոքա 66
պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է: * Յայն 67
ժամ թքին ընդ երեսս նր, և կռփեցին զնա. և ոմանք
ապտակեցին, և ասեն. * մարգարեաց մեզ քս, ով 68
է՝ որ եհարն զքեզ:
ԿԶ * Իսկ պետրոս նստէր արտաքոյ 'ի գաւթին: մատեաւ 69
առ նա աղախին մի՝ և ասէ. և դու ընդ յսի գալիլեացւոյ
էիր: * Նա ուրացաւ առաջի ամենեցուն՝ և ասէ, թէ 70
ոչ գիտեմ զինչ խօսիս: * Եւ իբրև ել նա արտաքս 71
քան զդրունսն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ. ցայնո
սիկ՝ որ անդն կային. և սա ընդ յսի նազովրեցւոյ էր:
* Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ 72
զայրն: * Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային 73
անդ՝ և ասեն ցպետրոս. արդարև և դու 'ի նոցանէ
ես, քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ: * Յայն 74
ժամ սկսաւ նզովել և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն:
և 'իսկոյն՝ հաւ խօսեցաւ: * Եւ յիշեաց պետրոս ըզ 75
բանն

(59) Ոմանք. Զի սպանցեն զնա: (62) Ոմանք. Ամբաստա
նենդ զքէն: (64) Ոմանք. Ասեմ ձեզ. զի յայսմ հետէ:
(65) Յօրինակին. Պիտոյ է մեզ վկայք: (65) Ոմանք. Լուայք:
և ոմանք. Լուարուք զհայհոյութին նր: (71) Բրձ. Նա
զովրացւոյ էր: (73) Ոմանք. Եւ յետ սակաւիկ միոյ...
քզի խօս քո յայտ: (73) Այլ. Անդ. ասեն ցպետրոս:

Digitized by Google

բանին յսի զոր ասաց, թէ մինչչև՝ հաւու խօսեալ իցէ՝
երիցս ուրասցիս զիս: Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ-
նապէս:

ԳԼ. ԻԷ.

1 Իբրև այգ եղև, խորհուրդ արարին ամ քահանայա-
պետքն և ծերք ժողովրդեանն վս յսի՝ սպանանել
2 զնա: * Կապեցին զնա, և տարին գնացին: և ետուն 'ի
ձեռս պոնտացւոյ պիղատոսի դատաւորի:
3 * Յայնժամ տեսեալ յուդայի՝ որ մատնեացն զնա, թէ Կէ
դատապարտեցաւ, զղջացաւ. և դարձոյց զարծաթն առ
4 քահանայապետսն և ծերս ժողովրդեանն՝ * և ասէ,
մեղայ զի մատնեցի զարիւն արդար: և նք ասեն, մեզ
5 զի՞ փոյթ, դու գիտես: * Եւ ընկէց զարծաթն 'ի տա-
6 ճարին՝ և գնաց, և չոգաւ խեղդեցաւ: * Իսկ քահա-
նայապետացն առեալ զարծաթն՝ ասեն. ոչ է արժան
ընդունել զայդ 'ի կորբանն, քանզի գինք արեան են:
7 * Խորհուրդ արարեալ, գնեցին այնու զագարակն
8 բրտի 'ի գերեզման օտարաց: * Վասն այնորիկ կոչեցաւ
9 ագարակն այն, ագարակ արեան՝ մինչև ցայսօր: * Յայն-
ժամ լցաւ՝ որ ասացաւն 'ի ձեռն երեմիայի մարգարէի.
և առին զերեսուն արծաթին զգին վաճառելոյն, զոր
10 արկին յորդւոցն իէլի: * և ետուն զնա յագարակն բրտին
11 որպ հրամայեաց ինձ տր: * Եւ յս եկաց առաջի դատա-
ւորին: եհարց ցնա դատաւորն՝ և ասէ. դու ես թա-
12 գաւորն հրէից: և յս ասէ. դու ասես: * Եւ 'ի չարա-
խօսելն նր 'ի քահանայապետացն և 'ի ծերոց, ոչ ինչ ետ
13 պատասխանի: * Յայնժամ ասէ ցնա պիղատոս. ոչ
14 լսես՝ որչափ դուքս հակառակ քո վկայեն: * և ոչ ետ
նմա պատասխանի՝ և ոչ բան մի, մինչև զարմանալ դատաւո-
15 րին յոյժ: * Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն ար-
16 ձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին: * Ու-
նէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր
17 յեսու բարաբբայ: * Իբրև ժողովեցան, ասէ ցնս պի-
ղա

ԳԼ. ԻԷ. (2) Ոմանք. Զնա, և տարեալ գնացին: (2) Յե-
բբնական՝ անուանս պիղատոս, այլև այլ Եղանակաւ Գրի, ըստ ա-
րաման և մէջ համաձայնեցաք: (3) Ոմանք. Որ մատնեաց զնա...
և առ ծերս. կամ, ցծերսժո": (5) Ոմանք. Զարծաթն 'ի
տաճարն: (6) Ոմանք. Ոչ է արժան արկանել զայդ: (7) Ո-
մանք. Խորհուրդ առեալ՝ գն".. 'ի գերեզմանս օտարաց:
(9) Ոմանք. 'ի ձեռն երեմիայ մար".. զերեսուն արծա-
թի. կամ, արծաթն. ոմ: (9) Ոսկան. Զոր առին յորդւոցն
իէլի: (13) Ոմանք. Ասէ ցնս պիղատոս: (15) Ոմանք. Ըստ
տօնին: (16) Ոմանք. Եւ ունէին յայնժամ.. անուանն էր:

Digitized by Google

պիղատոս . զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ,
զյեսու՞ բարաբբա՞ն՝ եթէ զյս զանուանեալն քս : * Քան- 18
զի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա : * Եւ 19
մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ եւ
ասէ . չկա՛յ ինչ՝ քո եւ արդարոյն այնորիկ, զի բա՛զում անցք
անցին ընդ իս այսօր յանուրջս վս նր : * Իսկ քահա- 20
նայապետքն եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդն, զի
խնդրեսցեն զբարաբբայն՝ եւ զյս կորուսցեն : * Պա- 21
տասխանի ետ դատաւորն՝ եւ ասէ ցնս . զո՞ կամիք զի
արձակեցից ձեզ յերկուց աստի : Եւ նոքա ասեն, զբա-
րաբբա : * Ասէ ցնոսա պիղատոս . իսկ զի՞նչ արարից զյս 22
զանուանեալն քս : * Ասեն ամենեքեան՝ խաչեսցի : Եւ 23
նա՝ ասէ ; զի՞նչ չար արար : Եւ նոքա առաւել եւս աղա-
ղակէին եւ ասէին, խաչեսցի : * Եւ տեսեալ պիղատո- 24
սի թէ ո՛չ ինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի .
առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն՝ եւ
ասէ . քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ .
դո՛ւք գիտասջիք : * Պատասխանի ետ ամ ժողովուրդն՝ եւ 25
ասէ . արիւն դորա՝ 'ի վերայ մեր եւ 'ի վերայ որդւոց
մերոց : * Յայնժամ արձակեաց նց զբարաբբայն . եւ 26
զյս զան հարեալ ետ 'ի ձեռս՝ զի խաչեսցի : * Յայն- 27
ժամ զինուորք դատաւորին առին զյս յապարանս . եւ
ժողովեցին 'ի վերայ նր զամ զգունդն . * Մերկացին 28
զնա, եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր : * Եւ բոլորեալ 29
պսակ 'ի փշոց՝ եդին 'ի գլուխ նր, եւ եղէգն յաջոյ ձե-
ռին նր : 'Ի ծունր իջեալ առաջի նր՝ կատակէին եւ ա-
սէին . ողջ եր՝ թագաւոր հրէից : * Եւ թքեալ 'ի նա՝ 30
առնուին զեղէգնն եւ ծեծէին զգլուխ նր : * Եւ յոր- 31
ժամ ձաղեցին զնա, մերկացուցին 'ի նմանէ զքղամիդն
կարմիր՝ եւ ագուցին նմա զիւր հանդերձն, եւ տարան
զնա 'ի խաչ հանել : * Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի 32
կիւրենացի՝ անուն սիմոն, զնա կալան պահակ՝ զի
բարձցէ զխաչն նր : * Եւ եկեալ 'ի տեղին անուանեալ 33
գողգոթա ; որ է տեղի՛ կառափելոյ, * Ետուն նմա 34
ըմպել գինի ընդ լեղի խառնեալ : Եւ իբրեւ ճաշակեաց,
ո՛չ կամէր ըմպել : * Եւ հանեալ զնա 'ի խաչ, բաժա- 35
նեցին զհանդերձս նր վիճակաւ . զի լցցի բանն՝ որ ա-
սա

(19) Ոսկան . Եւ մինչ դեռ նստէր : (19) Ոմանք . Յանուրջս մս նր : (20) Ոմանք . Զժողովրդեան, զի : (21) Ոմանք . Յեր-կուց այտի : (24) Ոմանք . Արդարոյն այնորիկ : (28) Ո-մանք . Մերկացուցին . կամ, մերկեցին . . եւ արկին զնա-քօք : (29) Ոմանք . Յաջոյ ձեռին նր . . . ողջ լեր թա՛" : (31) 'Ի բ օրինակս . Զքղամիդն կարմիր՝ եւ : (33) Ոմանք . Ա-նուանեալն գողգոթայ : (34) Յոմանս օրինակս . Նմ ըմպել գինիէ

Դ.

ասացաւ 'ի մարգարէէն. բաժանեցին զհանդերձս իմ
ցինքեանս, և 'ի վր̃ պատմուճանի իմոյ վիճակս ար-
36 կանէին: * Եւ նստեալ՝ պահէին զնա: * Եւ եդին 'ի
37 վերայ գլխոյ նր̃ գրեալ՝ զվնաս նր̃, թէ՝ այս է յս̃ թա-
38 գաւորն հրէից: * Յայնժամ հանէին ընդ նմ̃ 'ի խաչ եր-
39 կուս աւազակս, մի՝ յաջմէ նր̃, և մի յահեկէ: * Եւ որ
անցանէինն՝ հայհոյէին զնա. շարժէին զգլուխս իւ-
40 րեանց, * և ասէին. վաշ. որ քակէիր զտաճարն, և զե-
րիս աւուրս շինէիր զնա. ապրեցո՛ զքեզ, թէ որդի
41 ես այ՝ էջ 'ի խաչէդ: * Նոյնպէս և քահանայապետքն
42 ծաղրէին հանդերձ դպրօքն՝ և ասէին. * զայլս ապրե-
ցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագա-
ւոր է Իղի՝ իջցէ այժմ 'ի խաչէդ՝ և հաւատասցուք դ-
43 մա. * եթէ յուսացաւ յած, փրկեսցէ այժմ զդա՝ ե-
44 թէ կամի զդա. քանզի ասաց՝ եթէ այ որդի եմ: * Զնոյն
և աւազակքն՝ որ խաչեալ էին ը̃ նմ̃, նախատէին զնա:
45 * Եւ 'ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղև 'ի վերայ ամ̃
46 երկրի մինչև ցինն ժամ: * Եւ զինն ժամաւն գոչեաց
յս̃ 'ի ձայն մեծ՝ և ասէ. էղի, էղի, ղա՛մա սաբաքթա-
նի. այս ինքն է. ած իմ, ած իմ, ընդէ՛ր թողեր զիս:
47 * Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ա-
48 սէին. զեղիա կարդայ դա: * Եւ վաղվաղակի ընթա-
ցաւ մի ոմն 'ի նոցանէ, առ սպունգ լի քացախով, հա-
49 րեալ յեղեգան՝ ետ ըմպել նմ̃: * Եւ կէսքն ասէին.
50 թո՛ղ տեսցուք եթէ գայ եղիա փրկել զդա: * Եւ յս̃
դարձեալ աղաղակեաց 'ի ձայն մեծ, և արձակեա՛ց զո-
51 գին: * Եւ ահա՝ վարագոյր տաճարին ցելաւ յերկուս,
'ի վերուստ մինչև 'ի վայր: Եւ երկիր շարժեցա՛ւ, և վէմք
52 պատառեցան: * և գերեզմանք՝ բացա՛ն, և բազում մար-
53 մինք ննջեցելոց սրբոց յարեան: * և ելեալ 'ի գերեզ-
մանաց յետ յարութեան նր̃, մտին 'ի քաղաքն սուրբ, և ե-
54 րևեցան բազմաց: * Իսկ հարիւրապետն՝ և որ ը̃ նմա
պահէին զյս̃, իբրև տեսին զշարժումն և զեղեալսն, եր-
55 կեան յոյժ՝ և ասեն. ա՛րդարև՝ այ որդի էր սա: * Էին
անդ կանայք բազումք, կային 'ի հեռաստանէ՝ և հայէին,
56 որք եկին զհետ յս̃ 'ի գալիլեէ պաշտե՛լ զնա. * Յորս
էր

(37) Ոմանք. Թէ սա է յս̃ թա՞: (40) Ոմանք. Եթէ որդի ես: (41) Ոմանք յաւելուն. Դպրօքն և ծերովք՝ և ասէին: (45) Ոմանք. Ցինն ժամն: (46) Յօրինակին. Ղամասաբաքթանի: (46) Ոմանք միանգամ ունին՝ Ած իմ: (47) Յոմանս պակասի. Կարդայ դա: (48) Ոմանք. Ընթացեալ մի ոմն ... և ետ ըմպել: (49) Ոմանք. Տեսցուք, գայ եղիա: (54) Բ̃ղ̃. Զշարժումն: (54) Ոմանք. Որդի այ էր: (55) Ոմանք. Որք եկեալ էին զհետ յս̃ 'ի գալիլեայ:

Digitized by Google

էր մարիամ մագդաղենացի, և մարիամ յակովբայ և
յովսեայ մայր, և մայր որդւոցն զեբեդեայ: * Եւ իբրև 57
երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յարիմաթեայ, ա-
նուամբ անուն էր՝ յովսէփ. որ աշակերտեցաւ իսկ յիի:
* նա մատուցեալ առ պիղատոս խնդրեաց զմարմինն յիի: 58
յայնժամ պիղատոս հրամայեաց տալ զմարմինն: * Եւ 59
առեալ զմարմինն յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւով,
* և եդ ՚ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ՚ի վիմի. և թա- 60
ւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի
մեծ՝ գնաց: * Անդ էր մարիամ մագդաղենացի, և միւս 61
մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին:
* Եւ ՚ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովե- 62
ցան քահանայապետքն և փարիսեցիքն առ պիղատոս,
* և ասեն. տէր՝ յիշեցաք զի մոլորեցուցիչն այն՝ ա- 63
սէր մինչ կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառ-
նեմ: * Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մին- 64
չև ցերրորդ աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝
գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յա-
րեաւ ՚ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւն չար քան
զառաջինն: * Ասէ ցնոսա պիղատոս. ունիք զզօրականն, 65
երթայք զգուշացարուք որպէս և գիտէք: * Եւ նոքա եր- 66
թեալ՝ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն
հանդերձ զօրականօքն:

ԳԼ. ԻԸ.

ԿԸ Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշա- 1
բաթին, եկն մարիամ մագդաղենացի, և միւս մա-
րիամն՝ տեսանել զգերեզմանն: * Եւ ահա շարժումն 2
մեծ եղև. զի հրեշտակ տն իջեալ յերկնից, մատուցեալ
՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրանէ անտի՝ և նստէր ՚ի
վերայ նր: * և էր տեսիլ նր իբրև զփայլակն, և հան- 3
դերձ նր սպիտակ իբրև զձիւն: * Եւ յահէ անտի նր 4
խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալ: * Պա- 5
տասխանի ետ հրեշտակն՝ և ասէ ցկանայսն. մի երկն-
չիք դուք, գիտեմ զի զյս զխաչելեալն խնդրէք. * Չէ 6
աստ. քանզի յարեաւ՝ որպէս ասացն: եկայք տեսէք զտե-
ղին ուր կայր: * Եւ վաղվաղակի երթայք ասացէք ա- 7
շակերտացն նր թէ յարեաւ: և ահա՝ յառաջանայ քան
զձեզ

(57) Ոմանք. Որ և աշակերտէր": (58) Յօրինակին պակաս. Առ մա-
տուցեալ: (60) Ոմանք. Վէմ մի մեծ, և գնաց: (64) Յօրինա-
կին պակաս. Թէ յարեաւ: (65) Օրինակ մի. Ունիք զօրա-
կանս: Եւ ոմանք. Ունիք զզօրականս:
Գլ. ԻԸ. (4) Ոմանք. Եւ եղեն իբրև զմեռեալս: (6) Ո-
մանք. Որպ ասաց: (6) Ոմանք. Եկայք և տեսէք:

Digitized by Google

զձեզ ՚ի Գալիլեա. անդ տեսանիցէք զնա. ահա՛ ասա-
8 ցի ձեզ։ * Եւ ելեալ վաղվաղակի ՚ի գերեզմանէն ան-
տի ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել ա-
9 շակերտացն։ * Եւ ահա՛ պատահեաց նոցա Յիսուս՝ եւ ասէ.
ողջ էք։ Եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, եւ երկիր
10 պագին նմա։ * Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. մի երկնչիք, եր-
թայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ՚ի Գալիլեա՝
11 եւ անդ տեսցեն զիս։ * Իբրեւ նոքա գնացին, ահա՛ ո-
մանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն, եւ պատմեցին քա-
12 հանայապետիցն զամենայն որ ինչ եղեւն։ * Եւ նոքա ժողո-
վեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ
13 յոյժ ետուն զօրականացն՝ * եւ ասեն. ասասջիք՝ եթէ
աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք
14 ՚ի քուն էաք։ * Եւ եթէ լուր լինիցի այդ՝ առ դատա-
ւորն, մեք հաւանեցուցուք զնա, եւ զձեզ անհոգս արաս-
15 ցուք։ * Եւ նոքա առեալ զարծաթն, արարին որպէս ու-
սանէին. եւ ել համբաւս այս ՚ի Հրէից՝ մինչեւ ցայսօր։
16 * Իսկ մետասան աշակերտքն՝ գնացին ՚ի Գալիլեա ՚ի
17 լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։ * Իբրեւ տեսին
18 զնա՝ երկիր պագին նմա. եւ ոմանք յերկուանային։ * Եւ
մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ։ Տուաւ
ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս
19 առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ։ * Գնացէք
այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկր-
տեցէք զնոսա յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյ սըր-
20 բոյ։ * Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ
պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ
զամենայն աւուրս՝ մինչեւ ՚ի կատարած աշխարհի։

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ։

ՄԿԻ.

(8) Ոմանք. ՚ի գերեզմանէն՝ ահիւ եւ։ (10) Ոմանք. Եղբարց իմոց։ (12) Ոմանք. ծերովքն ՚ի խորհուրդ։ առեալ արծաթ։ (13) Ոմանք. Եկեալ ՚ի գիշերի։ (19) Ոմանք. Եւ հոգւոյն սրբոյ։ (20) Ոմանք. Զամենայն զոր ինչ պատուիրեցի։
* ՚Ի վախճան [illegible] [illegible]. Աւետարան ըստ Մատթէոսի. [illegible] մարկոսի. եւն. [illegible] ՚ի [illegible], որք ունին՝ Կատարեցաւ աւետարան ըստ, եւն։ Եւ ոմանք. Կատարեցաւ գլուխք աւետարանին որ ըստ, եւն։ Եւ ոմանք [illegible] ՚ի վախճանի [illegible] նախադրութիւն. Մատթէոս գրեաց. եւն։ Ունի գլուխս։ եւն։ Տունս. եւն։

Digitized by Google

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին որ ըստ Մարկոսի:

	Մարկ	Ղուկ	Յովհ	Մատթ
Վասն դիւահարին	ա	ը	·	·
Վասն պետրոսի զոքանչին	բ	թ	·	ը
Վասն բժշկութեան պէսպէս հիւանդութեանց	գ	ժ	·	թ
Վասն բորոտին	դ	ժբ	·	է
Վասն անդամալուծին	ե	ժգ	ժգ	ժգ
Վասն ղեւեայ մաքսաւորի	զ	ժդ	·	ժդ
Վասն գօսացեալ ձեռինն	է	ժե	·	իա
Վասն առաքելոցն ընտրութեան	ը	ժէ	·	ժթ
Վասն սերմանեացն առակի	թ	իբ	·	իդ
Վասն սաստելոյ ծովուն	ժ	իգ	·	ժա
Վասն լէգէոնացն	ժա	իդ	·	ժբ
Վասն դստեր ժողովրդապետին	ժբ	իե	·	ժե
Վասն տեռատեսին	ժգ	իզ	·	ժդ
Վասն համարոյ առաքելոցն	ժդ	իէ	·	ժթ
Վասն յովհաննու, և հերովդի	ժե	·	·	իե
Վասն հինգ հացին՝ և երկուց ձկանցն	ժզ	իը	ժե	իզ
Վասն ՚ի վերայ ծովուն գնալոյ	ժէ	·	ժզ	իէ
Վասն անցանելոյն պատուիրանաւն	ժը	·	·	իը
Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ	ժթ	·	·	իթ
Վասն համրին և խլին	ի	լթ	·	իբ
Վասն եւթն հացին	իա	·	·	լա
Վասն խմորոյ փարիսեցւոցն	իբ	խգ	·	լբ
Վասն կուրին	իգ	·	·	·
Վասն հարցանելոյն ՚ի կեսարիա	իդ	իթ	·	լգ
Վասն այլակերպութեան Քն̄	իե	լ	·	լդ
Վասն լուսնահարին	իզ	լա	·	լե
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ	իէ	լբ	·	լզ
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին	իը	·	·	խ
Վասն հարցանելոյ մեծատանն զյ̄	իթ	կգ	·	խա
Վասն որդւոցն զեբեդեայ	լ	·	·	խբ
Վասն բարթիմէոսի	լա	կդ	·	խգ
Վասն յաւանակին	լբ	կը	իզ	խե
Վասն չորանալոյ թզենւոյն	լգ	·	·	խզ
Վասն անյիշաչարութեան	լդ	·	·	·
Վասն հարցանելոյ քահանայապետիցն զՔն̄	լե	կթ	·	խը
Վասն այգւոյն	լզ	հ	·	ծ
Վասն հարցանելոյ զդահեկանէն	լէ	հա	·	ծբ

Վասն

	Մարկ	Ղուկ	Յովհ	Մատ
Վասն սադուկեցւոցն	ԼԸ	ՀԲ	. .	ԾԲ
Վասն դպրացն	ԼԹ	. .	. .	ԾԳ
Վասն Քն հարցանելոյ զֆարիսեցին . .	Խ .	ՀԳ	. .	ԾԴ
Վասն երկու լումայիցն	ԽԱ	ՀԴ	. .	. .
Վասն կատարածին	ԽԲ	ՀԵ	. .	ԾԵ
Վասն աւուրն, և ժամուն	ԽԳ	. .	. .	ԾԸ
Վասն օծանելոյ իւղով զՏէրն Յիսուս . .	ԽԴ	ԿԱ	ԿԴ	ԿԲ
Վասն զատկին	ԽԵ	ՀԶ	. .	ԿԳ
Վասն մատնութեան մարգարէանալոյ . .	ԽԶ	. .	. .	ԿԴ
Վասն Պետրոսի ուրացութեանն . . .	ԽԷ	. .	. .	ԿԶ
Վասն խնդրելոյ Յովսեփայ զմարմինն .	ԽԸ	ՁԲ	ԼԷ	ԿԸ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ։

Աւետարանս որ ըստ Մարկոսի, գրեալ է նորին Մարկոսի աշակերտի Պետրոսի, և ընթացակից Պաւղոսի, գրեաց զաւետարանս զայս։ Եւ դնէ սկիզբն և ասէ. Սկիզբն աւետարանի, 'ի յովհաննու քարոզութենէ. և զմկրտութիւն յովհաննու. և առնու վկայութիւն յեսայեայ մարգարէէ. նշանակէ և զփորձութիւն 'ի լերինն, և ո՛չ ասէ զփորձանսն. պատմէ և վասն ընտրութեան աշակերտացն, և նշանս և արուեստս զոր արար. և զխորհուրդ մարմնութեան, և զկատարածն. և որ մատնեցաւ զխաչելութիւն, և խաչելեալ մարմնով. և զի զինն աւուրն բաժանեցին զհանդերձս նր. և զի մարմինն եդաւ 'ի գերեզմանի, և յարեաւ երեքօրեայ. և զի ելանել հրեշտակին, և երևել կանանցն, և զնոյնն պատմել աշակերտացն։

Մարկոս հրամանաւ Պետրոսի Հռոմ գրեաց զաւետարանս իւր՝ յաղէքսանդր քաղաքի 'ի ներքս Եգիպտացի, զինի ԺԵ ամի համբառնալոյ Քրիստոսի։ Ունի գլուխս. ՃԼԴ։ Վկայութիւնս. ԺԶ։

Տունս. ՌՈ։

Մարկոս՝ Բարձր դատաւոր, կամ 'ի վերայ պանեացն։

Digitized by Google

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ.

ԳԼ. Ա.

ՍԿԻԶԲՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ 1
յսի քսի որդւոյ այ։ * Որպէս և գրեալ 2
է ՚ի մարգարէս. Ահաւասիկ ես առա-
քեմ զհրեշտակ իմ առաջի քոյ, որ հան-
դերձեսցէ զճանապարհս քո առաջի քոյ։ * Ձայն բար- 3
բառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ
տն, և ուղիղս արարէք զշաւիղս նր։ * Եւ եղև՝ զի 4
յովհաննէս մկրտէր յանապատի, և քարոզէր մկրտու-
թիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մեղաց։ * Եւ ելանէր 5
առ նա ամ աշխարհն հրէաստանի; և երուսաղեմացիք ամենե-
քեան. և մկրտէին ՚ի նմանէ ՚ի յորդանան գետ՝ խոս-
տովանեալ զմեղս իւրեանց։ * Եւ էր յովհաննէս զգե- 6
ցեալ ստեւ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր.
և կերակուր նորա մարախ՝ և մեղր վայրենի։ * Քարո- 7
զէր և ասէր. գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում
չեմ բաւական խոնարհել՝ լուծանել զխրացս կօշկաց
նր։ * Ես՝ մկրտեցի զձեզ ջրով. և նա մկրտեսցէ զձեզ 8
հոգւովն սրբով։ * Եւ եղև յաւուրսն յայնոսիկ եկն յս ՚ի 9
նազարեթէ գալիլեացւոց, և մկրտեցաւ ՚ի յովհաննէ
՚ի յորդանան։ * Եւ նոյնժամայն ը վերանալ ՚ի ջրոյն, 10
ետես ցելեալ զերկինս, և զհոգին այ իբրև զաղաւնի՝
զի իջանէր ՚ի վերայ նր։ * Ձայն եղև յերկնից՝ և ա- 11
սէ. դու ես որդի իմ սիրելի, ը քեզ հաճեցայ։ * Եւ 12
նոյնժամայն՝ հոգին հանէ զնա յանապատ։ * Եւ էր 13
նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատանայէ։
և

Գլ. ա. (2) Ոմանք. Որպէս և գրեալ է եսայի. կամ, յեսայի մարգարէ . . . զճանապարհս քո։ (3) Ոմանք. Զճանապարհս տն, և ուղիղ արա"։ (5) Ոմանք. Խոստովանել զմեղս իւրե"։ (7) Ոմանք. Զօրագոյն քան զիս . . խոնարհել և լուծա"։ (8) Ոմանք. Ես մկրտեմ զձեզ ջրով . . . հոգւովն սրբով։ Ոմանք. ես մկրտեցից զձեզ։ (9) Ոմանք. ՚Ի յորդանան գետ։ (10) Ոմանք. Ընդ վերանալն ՚ի։ (11) Ոմանք. Ընդ որ հաճեցայ։ (13) Յոմանս գիրս. Եւ էր նա անդ։

Digitized by Google

և էր ընդ գազանս, և հրեշտակք պաշտէին զնա :
14 * Եւ յետ մատնելոյն յովհաննու, եկն յս ՚ի գալիլեա. ԲԲ
15 քարոզէր զաւետարանն այ՝ և ասէր. * Թէ կատարեալ է
ժամանակ, և հասեալ է արքայութիւն այ. ապաշխա-
16 րեցէք՝ և հաւատացէք յաւետարանն : * Իբրև անցա-
նէր առ ծովեզերբն գալիլեացւոց, ետես զսիմոն և
զանդրէաս եղբայր սիմոնի, զի արկեալ էր նց ուռ-
17 կանս ՚ի ծով. քանզի ձկնորսք էին : * Եւ ասէ ցնս յս.
եկայք զկնի իմ, և արարից զձեզ՝ լինել որսորդս մարդ-
18 կան : * և վաղվաղակի թողեալ զուռկանսն, գնացին
19 զհետ նր : * Եւ մատուցեալ անտի՝ սակաւիկ մի յա-
ռաջ, ետես զյակովբոս զզեբեդեայ՝ և զյովհաննէս եղ-
բայր նր, և զնս ՚ի նաւին մինչ կազմէին զուռկանս, և
20 կոչեաց զնս : * Եւ վաղվաղակի թողեալ զհայրն իւ-
րեանց զզեբեդոս ՚ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնա-
21 ցին զհետ նր : * Եւ մտանեն ՚ի կափառնաում. և իսկ ԲԳ
և իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն, ուսուցա-
22 նէր զնս : * Եւ զարմանային ընդ վարդապետութն նր, զի
ուսուցանէր զնս իբրև իշխանութբ՝ և ոչ որպէս դպիրքն :
23 * Եւ էր ՚ի ժողովրդեանն նց այր մի, յորում այս պիղծ Ա
24 դոյր ՚ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ : * Թոյլ տուր,
զի՞ կայ՝ մեր և քո՝ յս նազովրեցի, եկիր կորուսանել
25 զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես, սուրբն այ : * Սաստեաց ՚ի
26 նա յս՝ և ասէ. կարկեաց՝ և ել ՚ի դմանէ : * Եւ զալա-
կոծ զնա այսն պիղծ. և աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և
27 ել ՚ի նմանէ : * Եւ զարմացան ամենեքին, մինչև հծծել
ը միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւս,
զի իշխանութբ և այսոց պղծոց սաստէ, և հնազանդին
28 սմա : * Եւ ել լուր նր ընդ ամ կողմն գալիլեացւոց :
29 * Եւ վաղվաղակի ելեալ ՚ի ժողովրդենէն, եկն ՚ի տուն Բ
սիմովնի և անդրէասու՝ յակովբաւ և յովհաննու հան-
30 դերձ : * Եւ զոքանչ սիմովնի դնէր ջերմացեալ. և վաղ-
31 վաղակի ասեն ցնա վասն նր : * Եւ մատուցեալ յա-
րոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տեն-
դն, և պաշտէր զնոսա :
32 * Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն, բե- Գ
րէին

(16) Ոմանք. Զեղբայր սիմոնի : (19) Ոմանք. Զեղբայր նր.. կազմէին ուռկանս : (20) Ոմանք. Զզեբեդէոս ՚ի նաւին : (23) Ոմանք. ՚ի ժողովրդեան նց : (23) Այս ողջանոյ դիւի. Դողայր ՚ի նմա : (24) Ոմանք. Զի կայ իմ և քո.. սրբդ այ : (27) Ոմանք. Հծծեալ ընդ միմեանս ասել : Ուր նա ոմանք. հեծծել. և ոմանք. հեծեծել : (28) Ոմանք. Ընդ ամ կողմանս : Ուր օրինակ մի. Ընդ ամ սահմանս գալ" : (32) ՚ի լուսն. Բերէին առ նա զամ. համաձայն ոմանց ՚ի ձեռն" :

Digitized by Google

րին առ նա զամ՛ հիւանդս և զդիւահարս ։ * Եւ էր ամ՛ 33
քաղաքն ժողովեալ առ դուրսն ։ * Եւ բժշկեաց բազում 34
հիւանդս 'ի պէսպէս ախտից ։ և դևս բազումս եհան ։
և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա՝ թէ քին
բ գ է ։ * Եւ ընդ այգն ընդ առաւօտն՝ յարուցեալ՝ ել և 35
գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս ։ * Եւ զհե- 36
տոյ եղեն նր Սիմոն՝ և որ ընդ նմայն էին ։ * Եւ իբրև 37
գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ ։
* Եւ ասէ ցնս ։ Եկայք երթիցուք և յայլ մօտաւոր 38
գեղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից ։ զի յայս իսկ ե-
կեալ եմ ։ * Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նց ընդ ա- 39
մենայն Գալիլեացիս, և զդևս հանէր ։
Դ * Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր իջանէր՝ 40
և ասէր ։ Տր՝ եթէ կամիս, կարող ես զիս բժշկել ։ * Իսկ 41
յն գթացեալ՝ ձգեաց ձեռն, մերձեցոյց 'ի նա՝ և ասէ
ցնա, կամիմ՝ սրբեաց ։ * Եւ իբրև ասաց ցնա, վաղ- 42
վաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւն, և սրբեցաւ ։ * Եւ 43
սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ա-
սէ ցնա ։ * Զգոյշ լեր, մի ուրուք ինչ ասիցես ։ այլ երթ 44
ցոյց զքեզ քահանային ։ և մատո՛ վն սրբութե քո պատա-
րագ՝ զոր հրամայեաց Մովսէս՝ 'ի վկայութիւն նց ։ * Եւ 45
նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ, և հռչակ հարկանել
զբանն, մինչ ոչ ևս կարող լինել նմա յայտնապէս 'ի
քաղաք մտանել ։ այլ արտաքոյ յանապատ տեղիս էր ։
և գային առ նա յամ՛ կողմանց ։

ԳԼ. Բ.

բ ե Եւ մտեալ դարձեալ 'ի կափառնաում, յետ աւուրց 1
* լուր եղև եթէ 'ի տանն է ։ և ժողովեցան բազումք՝ 2
մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն ։ և խօսէր
նոցա զբանն ։
Ե * Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ 3
'ի չորից ։ * Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա՝ 4
յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր յն, և բա-
ցեալ զառաստաղն՝ իջուցին զմահիճսն յորում կայր ան-
դամալոյծն ։ * Եւ տեսեալ յն զհաւատս նց, ասէ ցան- 5
դա-

---

(33) Ոմանք. Ժողովեալ առ դրունսն ։ (34) Ոմանք. Զբազում հիւանդս ։ (35) Ոմանք. Ընդ այգն ընդ առաւ" ։ (37) Ոմանք. Թէ ամենեքեան ։ (40) Այլ. Կարող ես զիս սրբել ։ (41) Ոմանք. Եւ Յս գթացեալ ձգեաց զձեռն... և ասէ. կամիմ ։ (43) 'Ի բզմ ոչ կայ. Եւ ասէ ցնա ։ (45) Ոմանք. 'Ի քաղաքս մտանել ։
ԳԼ. Բ. (2) Բզմք. Լուր եղև թէ 'ի ։ Ոմն օրինակ մի. Լուր եղև 'ի տանէ ։ (4) Ոմանք. Մերձենալ 'ի յամբոխէ ան" ։

Digitized by Google

դամալոյծն. Որդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։
6 Եւ էին ոմանք 'ի դպրաց անդ՝ որ նստէին.
7 և խորհէին 'ի միտս իւրեանց. Զի՞նչ է դա՝ որ խօ-
սի սա հայհոյութիւն. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ
8 ոչ՝ մի Աստուած։ Եւ գիտաց յոգւոյ իւրում՝ թէ այնպէս
խորհին 'ի միտս իւրեանց, և ասէ, զի՞ խորհիք զայդ
9 'ի միտս ձեր։ Զի՞նչ դիւրին է ասել ցանդամա-
լոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի
10 առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո։ Այլ զի գի-
տասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ 'ի վերայ
11 երկրի՝ թողուլ զմեղս։ ասէ ցանդամալոյծն. քեզ
12 ասեմ, արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ
յարեաւ. և վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առա-
ջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն՝ և փա-
ռաւոր առնել զԱծ՝ և ասել, թէ այսպիսի ինչ երբեք՝
13 ոչ տեսաք։ Եւ ել դարձեալ 'ի ծովեզրն, և ամ ժո- բգ
ղովուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնոսա։
14 Եւ մինչ դեռ անցանէր, ետես զՂեւի Ալփեայ՝ զի Զ
նստէր 'ի մաքսաւորութեան. և ասէ ցնա, եկ զկնի իմ։
15 և յարուցեալ՝ գնաց զկնի նր։ Եւ եղև 'ի բազմելն
նր 'ի տան նր, և բզմ մաքսաւորք և մեղաւորք բազ-
մեալ էին ընդ յսի՝ և ընդ աշակերտսն նր. քանզի էին
բազումք՝ որ երթային զհետ նր։ Իսկ դպիրքն և փա-
րիսեցիք իբրև տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ
մեղաւորս, ասեն ցաշակերտսն նր. զի՞ է՝ զի ընդ մե-
17 ղաւորս և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք։ Իբրև
լուաւ յս՝ ասէ ցնս. ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ
հիւանդաց և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։
18 Եւ էին աշակերտքն յովհաննու և փարիսեցիքն 'ի
պահս. գան և ասեն ցնա, ընդէ՞ր աշակերտքն յով-
հաննու՝ և փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ ոչ
19 պահեն։ Եւ ասէ ցնս յս. մի եթէ մարթ ինչ իցէ որդ-
ւոց առագաստի՝ մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել.
ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ
20 պահել։ այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վերասցի 'ի
նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն յաւուրն յայն-
միկ։

---

(7) Ոմանք. Ո՞ կարէ թողուլ զմեղս։ (8) Ոմանք. 'Ի յո-
գի իւր թէ, այնպէս խորհէին։ (12) Ոմանք. Եւ յա-
րեաւ վաղվաղակի առ"... ինչ ոչ երբէք տեսաք։ (15)
Ա[illegible] Մաքսաւորք և մեղաւորք բազմեալ։
(16) Ոմանք. Զի ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ և
ըմպէ։ (17) Ոմանք. Ոչ ինչ պիտոյ է բժիշկ ողջոց։ (19) Ո-
մանք. Մի թէ մարթ ինչ իցէ մանկանց։ (20) Ոմանք. 'Ի
նոցանէն, և ապա պահ"։

Digitized by Google

միք ։ * Ո՛չ ոք կարկատան նոր անթափ արկանէ ՚ի վերայ 21
հնացեալ ձորձոյ․ ապա թէ ոչ՝ առնու լրութիւն իւ-
րում նորն ՚ի հնոյ անտի, և չար ևս պատառումն լինի ։
* Եւ ոչ ոք արկանէ գինի նոր՝ ՚ի տիկս հինս․ ապա 22
թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկսն, գինի հեղու, և
տիկքն կորնչին․ այլ գինի նոր՝ ՚ի տիկս նորս արկանե-
բէ լի է ։ * Եւ եղև նմա ՚ի շաբաթու անցանել ընդ արտո- 23
րայս․ և աշակերտքն ՚ի գնալն իւրեանց սկսան հասկ
կորզել և ուտել ։ * Եւ փարիսեցիքն ասէին ցնա․ տե՛ս՝ 24
զինչ գործեն աշակերտքն քո ՚ի շաբաթու զոր ո՛չ է օրի-
նաւ ։ * Եւ ասէ ցնս յս․ ո՛չ երբէք իցէ ընթերցեալ 25
ձեր՝ զոր արար Դաւիթ յորժամ պիտոյ եղև, և քաղ-
ցեաւ՝ նա և որ ընդ նմայն էին ։ * զիարդ եմուտ ՚ի 26
տունն այ առ աբիաթարաւ քահանայապետիւ, և ըզ-
հացսն զառաջաւորութեան եկեր՝ և ետ և այնոցիկ որ ընդ
նմայն էին․ զոր ո՛չ էր օրէն ուտել, բայց միայն քա-
հանայիցն ։ * Եւ ասէ ցնս․ շաբաթ՝ վս մարդոյ եղև, 27
և ո՛չ եթէ մարդ վս շաբաթու, * ապա ուրեմն՝ տէր 28
է որդի մարդոյ՝ և շաբաթու ։

ԳԼ․ Գ․

Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն․ և էր անդ 1
այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր ։ * Եւ սպա- 2
սէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ՚ի շաբաթուն․ զի չարա-
խօսեսցեն զնմանէ ։ * Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօ- 3
սացեալ էր․ արի անց ՚ի մէջ ։ * Եւ ասէ ցնս․ զի՞նչ 4
արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար
առնել, ոգի մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել ։ և
նոքա լռեցին ։ * Եւ հայեցեալ յնս զնոքօք ընդ ցաս- 5
մամբ, տրտմեալ վս կուրութեան սրտից նց, ասէ ցայրն․
ձգեա՛ զձեռն քո․ և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն
գկ նր ։ * Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն 6
հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վս նր՝
թէ զիարդ կորուսցեն զնա ։ * Իսկ յս աշակերտօքն 7
իւրովք գնաց ՚ի ծովեզրն ։ Եւ բազում ժողովուրդ ՚ի գա-
լիլեացւոց երթային զհետ նր․ և ՚ի հրէաստանէ, * և 8
յէմէ ․

---

(21) Ցամոնս ա՞չօր․ Կարկատան նոր անթափ ։ (22) Օրինակ մ․ Պայթեցուցանէ գինին ։ (22) Բ․ ձ՞․ Գինին հեղու ։ (24) Ոմանք․ ՚ի շաբաթու, զոր չէ ։ (26) Ոմանք․ Զիարդ եմուտ նա ․․․ և զհացսն զառաջ՛ ․․․ և ետ այնոցիկ ․․․ միայն քհնյիցն ։
ԳԼ․ Գ․ (1) Ոսկան․ Որոյ ձեռն գօսացեալ ։ (2) Ոմանք․ Եւ թէ բժշկեսցէ զնա ։ (3) Ոմանք․ Որոյ ձեռն գօ՛ ։ (4) Օրինակ մ․ Զինչ դիւրին է ՚ի շաբ՞ ․․ ոգի մի կեցուցանել՝ եթէ կոր՞ ։ (7) Ոմանք․ Բազում ժողովք գալիլեացւոց ։

Digitized by Google

յիդումեայ, և յայնկոյս յորդանանու, և որք 'ի տիւրոսէ և
'ի սիդոնէ. բազում ժողովուրդ եկեալ լուեալ որչափ ինչ
9 առնէր, գային առ նա: * Եւ ասէ ցաշակերտսն իւր,
զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝
10 զի մի նեղեսցեն զնա: * Քանզի զբազումս բժշկեաց.
մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք
11 ունէին ախտս ինչ: * Եւ այսք պղծեք յորժամ տեսա-
նէին զնա, անկանէին առաջի նր, աղաղակէին և ա-
12 սէին. * Թէ դու ես որդի այ. և նա՝ յոյժ սաստէր
նց, զի մի յայտնի առնիցեն զնա:
13 * Ելանէ 'ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամէ- Ը
14 ցաւ. և չոգան առ նա: * Եւ արար երկոտասանս՝ զի գը
15 իցեն ընդ նմա, և զի առաքեսցէ զնոսա քարոզել. * և ու-
նել իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ զդևս:
16 * Եւ եդ անուն սիմովնի՝ պետրոս. * և յակովբու
17 զեբեդեայ՝ և յովհաննու եղբօրն յակովբայ՝ եդ նց ա-
18 նուանս բանէրգէս, որ է՝ որդիք որոտման, * և զանդ-
րէաս, և զփիլիպպոս, և զբարթողոմէոս, և զմատ-
թէոս զմաքսաւորն, և զթովմաս, և զյակովբոս ալ-
19 փեայ, և զթադէոս, և զսիմովն կանանացի. * և զյու-
20 դայ սկարիովտացի, որ և մատնեացն զնա. * Գայն գդ
'ի տուն, և գայ միւսանգամ ընդ նմա ժողովուրդն. մինչ
21 զի և հաց ևս՝ ոչ ժամանել ուտել նց: * Եւ իբրև
լուան որ իւրքն էին՝ ելին ունել զնա, զի համարէին
22 թէ մոլեգնեալ իցէ: * Եւ դպիրքն՝ որ յերուսաղէմէ իջեալ
էին, ասէին թէ բէեղզեբուղ գոյ 'ի դմա, և իշխանաւ
23 դիւացն հանէ զդևս: * Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն,
առակօք խօսէր ընդ նս. զիարդ կարէ սատանայ զսա-
24 տանայ հանել. * և թէ թագաւորութիւն յանձն
իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն:
25 * և եթէ տուն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ
26 տունն: * և եթէ սատանայ 'ի վերայ անձին իւրոյ յա-
րեաւ՝ և բաժանեալ իցէ, ոչ կարէ կալ. այլ վախճան
27 նորա է: * Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ
'ի տուն նր աւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կա-
պէ

(10) Օրինակ. Մինչև գալ": (10) Ոսկան. Գալ և խռնել: (12) Օ-
րինակ. Որդին այ.. առնիցեն զնմանէ: (13) Օրինակ. Եւ ե-
լանէ 'ի լեառնն: (17) Օրինակ. Բանէրգէս: (18) Օրինակ.
Զբարթողիմէոս: Ի. օրինակ զբարթաղոմէոս... և զթ-
թադդէոս. և զսիմոն կանանացի: (20) Օրինակ. Ընդ նմ
ժողովն, մինչև հաց ևս: Ուր ոսկան. Մինչ զի զհաց ևս:
(23) Ոսկան. Եւ կոչեցեալ զնս առ: (26) Օրինակ. Եւ բաժա-
նեալ է.. վախճանեալ իցէ: (27) Օրէնոք Գ. Մտանել 'ի
տուն նր աւ": (27) Օրինակ. 'Ի տունն նր:

Digitized by Google

ղեցէ, և ապա զտուն նր աւար հարկանիցէ: * Ամէն 28
ասեմ ձեզ, զի ամ թողցի որդւոց մարդկան մեղք՝ և
հայհոյութիւնք՝ որչափ և հայհոյեսցեն, * բայց որ հայ- 29
հոյեսցէ զհոգին սբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան,
այլ պարտապան լիցի յաւիտենից մեղաց: * Զի ա- 30
գ գ սէին՝ թէ այս պիղծ գոյ 'ի նմա: * Գան եղբարքն և 31
մայր նր, և արտաքոյ կացեալ՝ յղեցին և կոչեցին զնա:
* Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբ- 32
րև ասացին ցնա, ահաւասիկ մայր քո և եղբարք քո՝
կան արտաքոյ, և խնդրեն զքեզ: * Պատասխանի ետ 33
նց և ասէ. ով է իմ մայր՝ կամ եղբարք: * Հայեցաւ 34
շուրջ զիւրև յաշակերտսն զի նստէին, և ասէ. ահա-
ւասիկ մայր իմ, և եղբարք իմ: * զի որ առնէ զկամս 35
այ, նա է իմ եղբայր՝ և քոյր և մայր:

ԳԼ. Դ.

գ ե Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն. և 1
խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև 'ի նաւ
մտանել նմա, և նստել 'ի ծովուն. և ամենայն ժողո-
վուրդքն զծովեզերբն՝ զցամաքն ունէին: * և ուսուցա- 2
նէր զնոսա առակօք բազում ինչ:
Թ Եւ ասէր նց 'ի վարդապետութեն իւրում: * Լուէք ա- 3
հաւասիկ ել սերմանօղ սերմանել: * և եղև 'ի սերմա- 4
նելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն
և եկեր զնա: * Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ոչ 5
գոյր հող բազում. և վաղվաղակի բուսաւ: քանզի ոչ գոյր խո-
հութ երկրին, * և յորժամ ծագեաց արև՝ ջեռաւ, և 6
զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ: * Եւ այլն անկաւ 7
'ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա, և պտ-
տուղ ոչ ետ: * Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. և 8
ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ՝ ե-
րեսուն, և ընդ միոյ՝ վաթսուն, և ընդ միոյ՝ հարիւր:
* Եւ ասէր. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: * Եւ 9
գ զ իբրև եղև առանձինն, հարցին ցնա որ զնովաւն էին 10
աշակերտօքն հանդերձ՝ զառակսն: * Եւ ասէ ցնս. ձեզ 11
տու-

---

(28) Ոմանք. Որչափ և հայհոյիցեն: (29) Ոմանք. Այլ պարտական լիցի յաւիտենից մեղացն: (31) Ոմանք. Եւ կոչեն. կամ, կոչեցին զնա: (34) Ոմանք. Հայեցեալ շուրջ: (35) Ոմանք. Զի որ առնիցէ զկամս:
ԳԼ. Դ. (1) Բազումք. Եւ ամ ժողովուրդն: (3) Ոսկան. Լուարուք. ահաւաս": (4) Ոմանք. Առ ճանապարհաւն: (6) Ոմանք. Վս զի ոչ գոյին արմ": (8) Ոմանք. Յերկիր բարիոք: (10) Ոմանք. Զառակն: (11) Ոմանք. Զխորհուրդ արքայութեն այ.. որ արտաքինն են:

Digitized by Google

տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան այ ։ բայց
12 նոցա որ արտաքինքն են՝ ամ ինչ առակօք լինի ։ * զի տե-
սանելով տեսցեն՝ և մի տեսցեն, և լսելով լուիցեն՝ և
13 մի իմասցին․ զի մի երբեք դարձցին՝ և թողցի նոցա ։ * Եւ ա-
սէ ցնոսա․ ոչ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ զամ ա-
14 ռակսն գիտիցէք ։ * Որ սերմանէն՝ զբանն սերմանէ ։
15 * Եւ նք են որ առ ճանապարհաւն, ուր բանն սեր-
մանի․ և յորժամ լսեն զնա, գայ սատանայ՝ և հանէ
16 զբանն սերմանեալ ՚ի սիրտս նց ։ * Եւ նք են որ յա-
պառաժին սերմանեցան․ որք յորժամ լսիցեն զբանն,
17 վաղվաղակի խնդութբ ընդունին ։ * և զի ոչ ունին ար-
մատս յանձինս, այլ առ ժամանակ մի են․ ապա ՚ի հա-
սանել նեղութեան կամ հալածման վս բանին, վաղվաղա-
18 կի գայթագղին ։ * Իսկ որ ՚ի մէջ փշոցն սերմանեցան,
19 նոքա են՝ որ զբանն լսեն, * և հոգք աշխարհիս,
և պատրանք մեծութեան մամոնին և հեշտութեանն ըղ-
20 ձանն՝ և անպտուղ լինի ։ * Եւ նոքա են որ յերկիրն
բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն՝ և ընդունին,
և տան պտուղ, ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ՝ վաթ-
21 սուն, և ընդ միոյ՝ հարեւր ։ * Եւ ասէ ցնս․ միթէ՝ գ ե
գայ ճրագ զի ընդ գրուանաւ դնիցի, կամ ընդ մահ-
22 ճօք․ ոչ ապաքէն ՚ի վր աշտանակի դնիցի ։ * Զի ոչ ինչ ՚ի
ծածուկ, որ թէ ոչ յայտնեսցի․ և ոչ եղև ինչ գաղտնի,
23 եթէ ոչ ՚ի յայտ գայցէ ։ * Եթէ որ ունիցի ականջս լսե-
24 լոյ, լուիցէ ։ * Եւ ասէ ցնս․ տեսէք զինչ լսէքդ, և յա-
ւելցի ձեզ որոց լսէքդ․ որով չափով չափէք՝ նովին չա-
25 փեսցի ձեզ ։ * Որ ոք ունիցի տացի նմա․ և որ ոչն ու-
26 նիցի, և զոր ունին՝ բարձցի ՚ի նմանէ ։ * Եւ ասէր․ գ կ
այսպէս է արքայութիւն այ․ որպէս զի այր մի արկանիցէ սեր-
27 մանիս յերկիր․ * և ննջիցէ, և յառնիցէ զցայգ և զցե-
րեկ․ և սերմանիքն բուսանիցին և աճիցեն․ և նա ոչ
28 գիտէ՝ * թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ․ նախ՝ ըղ-
խոտն, և ապա՝ զհասկն, և ապա՝ ցորեան ատոք ՚ի
29 հասկին ։ * այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի
30 առաքի մանգաղ․ զի հասեալ են հունձք ։ * Եւ ասէր․
ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւն այ, կամ որով առա-
կաւ՝

---

(15) Ոսկան․ Եւ հանէ զսերմանեալն ՚ի ։ (16) Ոմանք․ Յոր-
ժամ լսեն․ կամ, լուիցեն զբանն ։ (20) Ոմանք․ Բարւոք
սերման"․․․ և տան զպտուղ ։ (21) Ոմանք․ Միթէ գայ
ճրագ ։ (25) Ոմանք․ Եւ զոր ունիցին՝ բարձ" ։ (26) Ոմանք․
Եւ ասէ․ այսպէս․․․ սերմանիս յերկիր ։ (27) Ոմանք․
Զցայգ և զցերեկ ։ (28) Ոմանք․ Ապա զցորեանն ատոք ։
Բոր օրինակ մի․ Ապա ցորենատոք ՚ի հասս" ։ (29) Ոսկան․
Եւ յորժամ տայցէ ։ (30) Օրինակ մի․ Ո՞ւմ նմանեցու-

Digitized by Google

կաւ՝ առակաւ արկցուք զնա ։ * որպէս հատ մանանխոյ՝ որ յոր- 31
ժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սեր-
մանիսն՝ որ են յերկրի ։ * Եւ յորժամ սերմանիցի, բու- 32
սանի եւ լինի մեծ քան զամենայն բանջար եւ արձակէ ոստս
մեծամեծս, մինչեւ բաւական լինել ընդ հովանեաւ նորա
թռչնոց երկնից բնակել ։ * Եւ այնպիսի առակօք խօ- 33
սէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել ։ * Եւ ա- 34
ռանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա ։ բայց առանձինն
աշակերտացն իւրոց մեկնէր զամ՛ ։
Ժ * Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ՝ իբրեւ ընդ երեկս լի- 35
դ բ նէր ․ Եկայք անցցուք յայնկոյս կողմն ։ * Թողուն զժողո- 36
վուրդն, եւ առնուն զնա նաւաւն հանդերձ, եւ այլ եւս
նաւք որ էին ընդ նմա ։ * Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, 37
եւ զալիսն 'ի նաւն արկանէր մինչ գրեթէ լի իսկ լինել ։
* Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ բարձի ։ Զարթու- 38
ցանէին զնա՝ եւ ասէին ․ վարդապետ՝ ոչինչ է քեզ փոյթ,
զի կորնչիմք առաւել ։ * Եւ զարթուցեալ սաստեաց 39
հողմոյն, եւ ծովուն՝ ասէ ․ դադարեա՛ կարկեա՛ց ։ Եւ դա-
դարեաց հողմն ։ եւ եղեւ խաղաղութիւն մեծ ։ * Եւ ասէ 40
ցնոսա ․ ընդէ՞ր այդպէս վատասիրտ էք, չե՛ւ եւս ունիք հա-
ւատս ։ Եւ երկեան երկիւղ մեծ, եւ ասէին ցմիմեանս ․ ո՞
ոք արդեւք իցէ սա, զի եւ հողմ եւ ծով հնազանդ լինին նմա ։

ԳԼ․ Ե․

ԺԱ Եւ եկն յայնկոյս ծովուն՝ յաշխարհն Գերգեսացւոց ։ 1
* Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի, պատահեաց 2
նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ ։
* որոյ եւ բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր ․ եւ ոչ 3
շղթայիւք ոք եւս՝ կարէր կապել զնա ․ * զի բազում ան- 4
գամ ոտնակապովք եւ շղթայիւք կապեալ լեալ, եւ խզել 'ի
նմանէ զշղթայսն, եւ զոտնակապսն փշրատեալ ․ եւ ոչ
ոք կարէր նուաճել զնա ․ * քանզի հանապազ զցայգ եւ 5
զցերեկ 'ի գերեզմանս եւ 'ի լերինս աղաղակէր, եւ կո-
ծէր զանձն իւր քարամբք ։ * Իբրեւ ետես զՅ՟ 'ի հե- 6
ռաստանէ, ընթացաւ եւ երկիր եպագ նմա ։ * աղաղա- 7
կեաց 'ի ձայն մեծ՝ եւ ասէ ․ զի՞ կայ իմ եւ քո՝ Յ՟ որդի
այ

ցեց զարք" ։ (31) Ոմանք ․ Սերմանեսցէ յերկրի ։ (33) Ո-
մանք ․ խօսէր ընդ զբանն ։ (35) Ոմանք ․ Յաւուրն յայնմիկ ։
(38) Ոմանք ․ Զարթուցանեն զնա եւ ասեն ։ (39) Ոմանք ․
Դադարեա՛ց կարկեա՛ ։ (40) Ոմանք ․ Վատասիրտք էք այդ-
պէս ․ ․ ո՞ արդեւք իցէ ։ (40) Ոսկան ․ Երկեան մեծ ։
Գլ ․ Ե ․ (3) Ոսկան ․ Որոյ բնակութ ․ իսկ ։ (4) Բզնդ ․ Ոտ-
նակապօք եւ շղ" ․ ․ եւ զոտնակապսն խոր" ։ (5) Ոմանք ․
Զցայգ եւ զցերեկ ։ (7) Յոմանս չիք ․ Որդի այ բարձրելոյ" ։

Digitized by Google

ծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յած, մի տան-
8 ջեր զիս։ * Քանզի ասէր ցնա. Ել այսդ պիղծ 'ի մար-
9 դոյ այտի։ * Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո։
և ասէր ցնա. լեգէոն է անուն իմ, զի բազում եմք։
10 * Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի արտաքսեսցէ զնոսա ար-
11 տաքոյ քան զաշխարհն։ * Եւ անդ էր առ լերամբն ե-
12 րամակ մի խոզաց արածական մեծ։ * Աղաչեցին զնա
ամ դեքն՝ և ասեն, առաքեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք
13 'ի նս։ * և հրամայեաց նց։ Եւ իբրև ելին այսքն պիղծ՝
մտին 'ի խոզսն, և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի
ծովն. էին իբրև երկու հազարք, և հեղձնուին 'ի ծո-
14 վուն։ * Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին 'ի քա-
ղաքին և յագարակս՝ և ելին տեսանել զինչ իցէ որ գոր-
15 ծեցաւն։ * Գան առ յս, և տեսանեն զդիւահարն զի
նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն.
16 և զահի հարան։ * Եւ պատմեցին նց՝ որոց տեսեալն
էր, թէ զի՞նչ եղև դիւահարին, և զինչ վս խոզիցն։
17 * Եւ սկսան աղաչել զնա՝ գնալ 'ի սահմանաց նց։ * Եւ
18 իբրև եմուտ նա 'ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի
19 ընդ նմա իցէ։ * և յս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա.
Երթ 'ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նց, որ
20 ինչ միանգամ տր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ։ * Եւ
չոգաւ՝ և սկսաւ քարոզել 'ի դեկապոլիսն, զոր ինչ ա-
21 րար նմա յս. և ամենեքին զարմանային։ * Եւ իբրև — դ դ
անց յս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա
ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն։
22 * Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր, որում ա- ԺԲ
նուն էր Յայրոս. իբրև ետես զնա՝ անկանէր առ ոտս նր.
23 * աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր իմ մերձ է
'ի մահ, զի եկեալ դնիցես նմա ձեռն, որպէս զի ապրեսցի
24 և կեցցէ. * Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ
բազում զհետ նր, և նեղէին զնա։
25 * Եւ կին մի՝ էր 'ի տեռատեսութենէ արեան զերկոտա- ԺԳ
26 սան ամ, * և յոյժ վշտացեալ 'ի բազմ բժշկաց, և ծախ-
եալ

(9) Ոմանք. Եւ հարցանէր զնա.. և նա ասէր, ցնա. լե-
գէոնն անուն է իմ։ (10) Ոմանք. Եւ աղաչեցին զնա յոյժ։
(11) Ոմանք. խոզից արօտս"։ (12) Ոմանք. Աղաչէին զնա
ամ։ (13) Ոմանք. Այսքն պիղծք.. և էին իբրև.. և հեղձ-
նուին 'ի ծովն։ (14) Ոմանք. 'ի քաղքն և յագարս"։ (15) Ո-
մանք. Որ ունէր զլեգէոնն։ (16) Ոսկան. Թէ զինչ եղև
դիւահարին։ (19) Ոսկան. Զոր ինչ միանգամ։ (22) Ոմանք.
Եւ իբրև ետես։ (23) Յօրինակին [illegible]. Աղաչէր զնա յոյժ։
(23) Ոմանք. Մերձ 'ի մահ է.. դիցես նմա ձեռն։ (25) Ո-
մանք. 'ի տեռատեսութեն արեան։

Digitized by Google

եալ զինչս իւր զամ, և չէր ինչ օգտեալ, այլ ևս առ-
աւել զայրացեալ: * Իբրև լուաւ զյսէ, եկն 'ի մէջ 27
ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նր: * Զի 28
խորհէր 'ի միտս, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նր՝
փրկեցայց: * Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբեւր ա- 29
րեան նր. և գիտաց 'ի մարմին իւր՝ թէ բժշկեցաւ 'ի
տանջանացն: * Եւ անդէն վաղվաղակի գիտաց յս յանձն 30
իւր զզօրութիւն որ ել 'ի նմանէ, դարձաւ յամբոխն և
ասէ. ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ: * Եւ ասեն ցնա 31
աշակերտքն. տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ա-
սես թէ՝ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ: * Եւ շուրջ 32
հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն արար: * Եւ կինն՝ զար- 33
հուրեալ և դողացեալ վս որոյ գաղտն արար. զի գի-
տէր զինչ եղև նմա: եկն՝ անկաւ առաջի նր, և ասաց
զամ իրսն ստուգութբ: * Եւ յս՝ ասէ ցնա. դուստր՝ 34
հաւատք քո կեցուցին զքեզ. երթ 'ի խաղաղութիւն, և
Դ Գ եղիջիր ողջ 'ի տանջանաց քոց: * Մինչ դեռ նա զայն 35
խօսէր, գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին՝ և ա-
սեն, թէ դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ առնես
զվարդապետդ: * Իսկ յս իբրև լուաւ զբանն ասաց- 36
եալ, ասէ ցժողովրդապետն. մի՛ երկնչիր. բայց միայն՝
հաւատա: * Եւ ոչ զոք եթող ը իւր երթալ, բայց մի- 37
այն զպետրոս և զյակոբոս և զյովհաննէս՝ զեղբայրն
յակովբայ: * Գայ 'ի տուն ժողովրդապետին, և տե- 38
սանէ ամբոխ յոյժ, և լալականս և աղաղակս յոյժ: * և 39
մտեալ 'ի ներքս՝ ասէ ցնս. զի՞ խռովեալ էք և լայք.
մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ: * և ծաղր առնէին 40
զնա: Եւ նր հանեալ արտաքս զամենեսեան, առնու ը
իւր զհայր մանկանն և զմայր, և զնս որ ը նմայն էին,
և մտանէ ուր դնէր մանուկն: * և կալեալ զձեռանէ 41
մանկանն՝ ասէ ցնա. տալիթա կումի. որ թարգմանի,
աղջիկ դու՝ քեզ ասեմ արի: * Եւ վաղվաղակի յարեաւ 42
աղջիկն, և գնայր. զի էր ամաց իբրև երկոտասանից.
և զարմացան մեծաւ զարմանալեօք: * Եւ պատուէր 43
տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտասցէ զայն. և ասաց՝
տալ նմա ուտել:

ԳԼ.

(28) Ոսկան. Քզի ասէր 'ի միտս թէ: (30)(31) Ոմանք. Ո՞ մերձեցաւ 'ի հան՛՛: (32) Ոմանք. Թէ ո՞վ զայն ար՛՛: (33) Ոմանք. Եղևն նմա: (34) Ոմանք. 'Ի տանջանացդ քոց: (35) Ոմանք. Եւ մինչ դեռ նա.. գան ոմանք 'ի ժողովրդապետէն. կամ, 'ի ժողովրդապետն, և ասեն: (39) Ոսկան. Մանուկդ ոչ է մեռեալ: (42) Ոսկան. Մեծաւ զարմանալեաւ:

Digitized by Google

Գլ. Զ.

1 Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր. եւ երթային ընդ գ ե
2 նմա նոր աշակերտքն իւր: * Եւ եղեւ 'ի շաբաթուն՝
սկսաւ ուսուցանել 'ի ժողովրդեանն: Եւ բազումք իբրեւ լը-
սէին՝ զարմանային ընդ վարդապետութի նր, եւ ասէին.
ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տու-
եալ է սմա. զի զօրութիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լի-
3 նիցին: * ո՞չ սա է մանուկ հիւսանն, եւ որդին մարեմայ,
եղբայր յակոբայ եւ յովսեայ եւ յուդայի եւ սիմոնի. եւ
չիցե՞ն քորքն դորա աստ առ մեզ: Եւ գայթագղէին 'ի
4 նա: * Եւ ասէ ցնս յս. ո՛չ է մարգարէ անարգ, բայց
եթէ 'ի գաւառի իւրում, եւ յազգատոհմի, եւ 'ի տան
5 իւրում: * Եւ ոչ կարէր անդ՝ եւ ոչ մի ինչ զօրութի առ-
նել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկէր
6 զնս: * Եւ զարմանայր ընդ անհաւատութի նց:
7 Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, եւ ուսուցանէր: * Եւ ԺԴ
կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ առաքել գ զ
զնս երկուս երկուս. եւ տայր նց իշխանութի 'ի վր այսոց
8 պղծոց: * Եւ պատուիրեաց նց՝ զի մի ինչ բարձցեն 'ի
ճանապարհ, բայց միայն գաւազան. մի պարկ, մի հաց.
9 մի պղինձ 'ի գօտիս: * այլ ագանել հողաթափս, եւ մի
10 զգենուցուք ասէ՝ երկուս պարեգօտս: * Եւ ասէր ցնս.
յոր տուն մտանիցէք, անդէն օթեվանս կալջիք՝ մինչե
11 ելանիցէք անտի: * Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ո՛չ
լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք
12 զփոշի ոտից ձերոց 'ի վկայութի նց: * Եւ ելեալ քա-
13 րոզէին՝ զի ապաշխարեսցեն. * եւ դեւս բազումս հանէին՝
եւ օծանէին իւղով զբազում հիւանդս, եւ բժշկէին զնս:
14 * Եւ լուաւ արքայ հերովդէս. քանզի յայտնի եղեւ ա- ԺԵ
նուն նր. եւ ասէր, թէ յովհաննէս մկրտիչ յարեաւ 'ի մե- գ ե
15 ռելոց, եւ վն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: * Այլք
ասէին՝ թէ եղիա է. իսկ այլքն՝ թէ մարգարէ է, կամ
16 թէ՝ իբրեւ զմի 'ի մարգարէից: * Իբրեւ լուաւ հերով-
դէս, ասէ. զորոյ՝ ես զգլուխն հատի զյովհաննու, նա՛
17 է՝ նա յարեաւ 'ի մեռելոց: * Զի ինքն հերովդէս առա-
քեաց

Գլ. Զ. (1) Ոմանք. Ելեալ անտի եւ եկն 'ի գա": (2) Ոսկան. Ուստի իցէ սմա այս, կմ զինչ իցէ իմաստ"... 'ի ձեռաց նր լինին: (3) Ոմանք. Քորք դորա: (4) Յոմանս ոչ կայ. Եւ ասէ ցնս յս: (5) Ոմանք. Զօրութիւն առնել.. բժշկեաց զնս: (5) Ոսկանն Սակաւ ինչ հիւանդաց: (6) Ոսկան. Անհաւատութենց նց: (7) Ոմանք. Եւ կոչեցեալ առ ինքն: (8) Ոսկան. Բարձցեն 'ի ճնպրհի: (14) Ոմանք. Եւ ասէ, թէ յովհաննէս: (15) Ոմանք. Թէ մարգարէ. կմ իբրեւ:

Digitized by Google

քեաց կալաւ զյովհաննէս , և կապեաց զնա և եդ ՚ի
բանտի , վա հերովդիայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա ,
զի նա՝ կին արար զնա : * Քանզի ասէր յովհաննէս 18
ցհերովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո :
* Եւ հերովդիա ոխացեալ էր ընդ նմա՝ և կամէր սպա- 19
նանել զնա , և ոչ կարէր : * Զի հերովդէս՝ երկնչէր ՚ի 20
յովհաննէ . քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ . և
պահէր զնա . և լուեալ ՚ի նմանէ բազում ինչ՝ առնէր , և
քաղցրութ՟՝ լսէր նմա : * Եւ եղև օր մի լինէր պատշաճ , 21
յորժամ ընթրիս առնէր հերովդէս՝ յաւուր ծննդոց իւ-
րոց , նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծա-
մեծաց գալիլեացւոց . * Եւ ՚ի մտանել դստերն հերով- 22
դիայ՝ և ՚ի կաքաւել , հաճոյ եղև հերովդի և բազմա-
կանացն : Ասէ թագաւորն ցաղջիկն . խնդրեա յինէն
զոր ինչ կամիս , և տաց քեզ : * Եւ երդուաւ նմա բազում 23
անգամ , թէ զոր ինչ և խնդրեսցես դու յինէն , տաց
քեզ՝ մինչև ցկէս թագաւորութե իմոյ : * Նա՝ ելեալ 24
ասէ ցմայր իւր . զի՞նչ խնդրեցից : Եւ նա ասէ , զգլուխ
յովհաննու մկրտչի : * Եւ մտեալ անդէն փութանա- 25
կի առ թագաւորն՝ ասէ . կամիմ՝ զի այժմ տացես ինձ
վաղվաղակի ՚ի վ՟ր սկտեղ զգլուխն յովհաննու մկրտչի :
* Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն , այլ վա երդմանցն՝ 26
և կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա . * Եւ ա- 27
ռաքեաց վաղվաղակի թագաւորն՝ դահճի , և հրամա-
յեաց բերել զգլուխն նր : Եւ չոգաւ գլխատեաց զնա
՚ի բանտին . * Եւ եբեր զգլուխն նր սկտեղբ՝ և ետ ցաղ- 28
ջիկն : Եւ աղջիկն տարաւ՝ ետ մօր իւրում : * Իբրև 29
լուան աշակերտքն նր , եկին՝ բարձին զմարմինն՝ և եդին
ԵԿ ՚ի գերեզմանի : * Ժողովեցան առաքեալքն առ յս , և 30
պատմեցին նմա զամ ինչ զոր արարին և զոր ուսու-
ցին : * Եւ ասէ ցնս յս . եկայք դուք առանձինն յա- 31
նապատ տեղի , և հանգիչիք սակաւ մի : զի էին բզմք
որ երթային և գային , և հաց անգամ չժամանէին ու-
տել : * Եւ գնացին նաւու յանապատ տեղի առան- 32
ձինն : * Եւ տեսին զնս զի երթային , և զգացին բզմք . 33
և հետի յամ քաղաքաց խուռն ընթանային անդր , և
մեր-

(17) Օրինակ . Վա հերովդիադայ կն՟ . զի նա կին ա՟ :
(19) Օրինակ . Եւ հերովդիադա ոխացեալ է՟ ն՟մ : (21) Օ-
րինակ . Յաւուրս ծննդոց : (22) Օրինակ . Յինէն զոր կա-
միս : (23) Օրինակ . Զոր ինչ խնդրեսցես : (25) Ոսկան . Զի
տացես ինձ վաղ՟ : (29) Օրինակ . Զմարմինն նր , և ե՟ : (31) Օ-
րինակ . Եւ հանգիչիք սակաւիկ մի : (33) Օրինակ . Եւ տե-
սին զնա զի եր՟ . Ն՟ Օրինակ : Եւ տեսին զի երթային , և
գային բզմք . և հետս ՚ի յամ քաղա՟ :

Digitized by Google

34 մերձենային առ նա ։ * Եւ ելեալ ետես ամբոխ բազում,
և գթացաւ ՚ի նա զի էին իբրև ոչխարք՝ որոց ոչ իցէ
հովիւ ։ և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ ։
35 * Եւ իբրև բազում ժամ եղև, մատուցեալ աշակերտքն՝ ԺԶ
36 ասէին . տեղիս՝ անապատ է, մինչ զեռ աւուր կայ, * ար֊
ձակեա՛ զժողովուրդդ, զի երթեալ շուրջ յագարակս
և ՚ի գեղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի պատ՝
37 ինչ ուտել՝ ոչ ունին ։ * Նա՝ պատասխանի ետ՝ և ա֊
սէ ցնոսա . տո՛ւք դուք դոցա՝ ուտել ։ ասեն ցնա՝ երթի֊
ցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, և տացո՛ւք
38 դոցա ուտել ։ * Ասէ ցնոսա . քանի՞ նկանակ ունիք, եր֊
թայք տեսէք ։ իբրև գիտացին, ասեն ցնա՝ հինգ . և
39 երկո՛ւս ձկունս ։ * Եւ հրամայեաց նոցա բազմել երա֊
40 խանս երախանս ՚ի վերայ դալարւոյ խոտոյ ։ * և բազմե֊
41 ցան դասք դասք, ուր հարիւր և ուր յիսուն ։ * Եւ
առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայե֊
ցաւ յերկինս, օրհնեաց . մանրեաց զնկանակսն, և ետ
ցաշակերտսն զի արկցեն նոցա, և զերկուս ձկունսն՝ բաշ֊
42 խեաց ամենեցուն . * Կերան՝ և յագեցան . * և բառ֊
43 ձին զնշխարսն երկոտասան սակառի լի, և ՚ի ձկանց ան֊
44 տի ։ * և էին որք կերանն՝ իբրև արք հինգ հազար ։
45 * Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն մտանել ՚ի Ե Բ
նաւ, և յառաջագո՛յն քան զնա երթալ յայնկոյս ՚ի բեթ֊
46 սայիդա, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ . * Եւ
հրաժարեալ ՚ի նոցանէ՝ ել ՚ի լեառն կալ յաղօթս ։
47 * Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն ՚ի մէջ ծովուն, և ԺԷ
48 ինքն ՚ի ցամաքի ։ * Եւ ետես զնոսա հողմակոծեալս ՚ի
վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա ։ և զչորրորդ պա֊
հու գիշերոյն գայ առ նոսա գնացեալ ՚ի վերայ ծովուն . և
49 կամէր զանց առնել առ նոքօք ։ * Նոքա իբրև տեսին
զի գնայր ՚ի վերայ ծովուն, համարեցան թէ առաչօք
50 ինչ լինիցի, և աղաղակ բարձին ։ * քանզի ամենե֊
քեան տեսին զնա՝ և խռովեցան ։ Եւ նա՝ անդէն վաղ֊
վաղակի խօսեցաւ ընդ նոսա, և ասէ . քաջալերեցարո՛ւք,
51 ես եմ՝ մի՛ երկնչիք ։ * և ել ՚ի նաւն առ նոսա, և դա֊
դարեաց հողմն ։ Եւ առաւել և յիմարեալ էին ՚ի միտս
52 իւրեանց, և զարմանային յոյժ . * քանզի և ՚ի վերայ
հա֊

(35) Ոմանք . Ասեն, տեղիս անապատ" ։ (35) Ոսկան . Մինչ օր
կայ ։ (36) Ոսկան . Ուտել ինչ ոչ ունին ։ (37) Ոմանք յաւե֊
լուն . Ասեն ցնա աշակերտքն, եր" ։ (38) Ոսկան . Երթայք և
տեսէք ։ (42) Ոսկան . Կերան ամենեքին և յագեն" ։ (45) Ո֊
մանք . Զժողովուրդն արձակեսցէ ։ (48) Ոմանք . Եւ տեսեալ
զնա հող" . . զանց առնել զնոքօք ։ (52) Ոմանք . Քանզի
՚ի վր հացի ոչ իմա . . Թմբրեալ ։

Digitized by Google

հացին ոչ իմացան զի էր սիրտ նոցա թմբրեալ ։ * Եւ 53
իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն գեննեսարեթ ։
* Եւ իբրև ելին 'ի նաւէ անտի, իսկ և իսկ ծանեան 54
զնա արք տեղւոյն այնորիկ ։ * և ընթացեալ այսր անդր 55
ընդ ամ գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս,
ուր լսէին թէ անդ իցէ ։ * Եւ ուր և մտանէր՝ 'ի գեղս 56
կամ 'ի քաղաքս կամ յագարակս, 'ի հրապարակս դնէին
զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի գոնէ՝ 'ի քղանցս
հանդերձից նորա մերձենայցեն ։ և որք միանգամ մեր‐
ձեցանն՝ փրկեցան ։

ԳԼ. Է.

ԺԸ ե.գ
Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ և ոմանք 'ի 1
դպրացն որ եկեալ էին յերուսաղեմէ ։ * Եւ տե‐ 2
սեալ զոմանս յաշակերտացն նորա՝ զի խառնակ ձեռօք,
այսինքն է՝ անլուայ ուտէին հաց, բամբասեցին ։ * Զի 3
փարիսեցիքն՝ և ամ հրէայք, եթէ ոչ բռնալիր լուա‐
նան զձեռս, հաց՝ ոչ ուտեն ։ քանզի ունէին զաւանդու‐
թն ծերոցն ։ * և 'ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ 4
մկրտիցին, ոչ ուտեն ։ և այլ ինչ բազում է՝ զոր ընկալեան
ունել, մկրտութիւս բաժակաց, և ստամանաց, և պղն‐
ձեաց, և մահճաց ։ * Ապա հարցանեն զնա փարիսե‐ 5
ցիքն՝ և դպիրք՝ թէ ընդէ՞ր աշակերտքն քո ոչ գնան ըս‐
աւանդութե ծերոցն ․ այլ խառնակ ձեռօք հաց ուտեն ։
* Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնս, թէ բարւոք մար‐ 6
գարէացաւ եսայի վս ձեր կեղծաւորաց, ոպ ասաց ․
Ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և սիրտք նոցա
հեռացեալ 'ի բացեայ են յինէն ։ * զուր պաշտեն զիս ․ 7
ուսուցանեն վարդապետութիւս՝ զմարդկան պատուի‐
րեալս ։ * Թողեալ զպատուիրանն այ, ունիք զմարդ‐ 8
կան աւանդութի ։ * Եւ ասէ ցնս ․ բարւոք խոտէք զպ‐ 9
պատուիրանն այ, զի զձեր աւանդութին հաստատիցէք ։
* Զի մովսէս ասէ ․ պատուեա զհայր քո և զմայր ․ և 10
որ

---

(53) Ոմանք ․ Եկին 'ի գեննեսարեթ ։ (54) Ոմանք ․ Եւ իբ‐
րև ել 'ի նաւէ ։ (55) Ոսկան յաւելու ․ Բերել զամ հի‐
անդս ։ (56) Ոմանք ․ Զի գոնեա 'ի քղանցս հանդերձի նր
մերձենայցեն ․ և որ միանգամ ։
Գլ. Է. (2) Ոմանք ․ Այս ինքն անլուայ ։ (4) Ոմանք ․
Մկրտութի բաժակաց ։ (5) Յօրինակին գրեր ․ Հարցանեն
զնա փարի՛՛ ։ Այլ ոմանք ․ հարցանեն ցնա ։ (6) Ոմանք ․ Թէ
բարիոք մար՛՛ ։ (8) Ոսկան յաւելու ․ Զմարդկան աւան‐
դութիս ․ մկրտութիւնս սափորաց և բաժակաց և այլոց նմանեաց ա‐
ռնին առնէք բազում ։ Որ ոչ գտանի 'ի գրչագիր մեր օրինակս ։ (9) Ո‐
մանք ․ Բարիոք խոտէք ․․ հաստատիցէք ։

Digitized by Google

որ չարախօսիցէ զհայր կամ զմայր, մահու վախճա-
11 նեսցի։ * Եւ դուք ասէք, եթէ ասիցէ ոք ցհայր կամ
ցմայր՝ կորբան, որ է՝ պատարագ, զոր յինէն օգտես-
12 ցիս. * և ոչ ևս տայք թոյլ նմա չառնել ինչ հօրն, կամ
13 մօր։ * և անարգէք զբանն Այ ձերով աւանդութբն,
զոր աւանդեցէք. և բազում ինչ այլ՝ որ այսմ նման է՝ առ-
14 նէք։ * Եւ կոչեցեալ առ ինքն զամ ժողովուրդն՝, ասէ
15 ցնս. լուարուք ինձ ամենեքեան՝ և ՚ի միտ առէք։ * ոչ-
ինչ արտաքուստ ՚ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել
զնա, այլ որ ելանէ ՚ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն։
16 * որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ * Եւ իբրև ե-
17 մուտ ՚ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշա- եգ
18 կերտքն վն առակին։ * Եւ ասէ ցնս. այդպէս և դուք
անմիտք էք. ոչ իմանայք, եթէ ամ որ արտաքուստ ՚ի
19 ներքս մտանէ ՚ի մարդ, ոչ կարէ զնա պղծել. * զի ոչ
եթէ ՚ի սիրտ նր մտանէ, այլ յորովայն. և արտաքս ե-
20 լանէ. և սրբէ զամ կերակուրսն։ * Եւ ասէր, թէ որ
21 ինչ ՚ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ։ * զի ՚ի ներ-
քուստ ՚ի սրտէ մարդկան խորհուրդք չարութե ելա-
22 նեն. շնութիւնք, պոռնկութիւնք, * գողութիւնք, սպանութիւնք,
ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիջութի, չա-
րակնութի, հայհոյութի, ամբարտաւանութի, անզգա-
23 մութի։ * Այս ամ չարիք՝ ՚ի ներքուստ ելանեն, և
պղծեն զմարդ։

24 * Եւ անտի յարուցեալ եկն ՚ի սահմանս տիւրոսի և ԺԹ
սիդովնի. և մտեալ ՚ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել,
25 և ոչ կարաց ծածկել։ * Լուաւ կին մի զնմանէ, որոյ
դուստր իւր ներեալ էր յայսոյ պղծոյ. եկն՝ անկաւ
26 առաջի նր։ * և կինն՝ էր հեթանոս, փիւնիկ ասորի
յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդևն հանիցէ ՚ի դստերէ
27 նր։ * Եւ յս ասէ ցնա. թոյլ տուր, նախ յագեսցին
մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և
28 արկանել շանց։ * Նա՝ պատասխանի ետ և ասէ. տր՝
և շունք ՚ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։
29 * Եւ ասէ ցնա. վն այդր բանի՝ երթ, ել դևն ՚ի դստե-
30 րէ քումմէ։ * Գնաց ՚ի տուն իւր, և եգիտ ելեալ ըզ-
դևն.։

---

(11) Յօրինակին. կամ զմայր՝ կոր": (11) Ոմանք. Օգտեսցիս։
(12) Ոսկան. Թոյլ նմա առնել ինչ։ (13) Ոսկան. Բազում
ինչ որ այսմ նմ": (14) Ոմանք. Եւ կոչեցեալ առ ինքն զամ
ժողովուրդսն։ (15) Ոմանք. Ոչ որինչ արտաքուստ... այլ որ
ելանեն ՚ի նմանէ, այն պղծէ զմարդ։ (17) Ոմանք. Հար-
ցին զնա աշակ": (18) Ոմանք. Անմիտ էք, և ոչ իմա... ոչ
կարէ պղծել զնա։ (24) Ոսկան. Ոչ կամէր յայտնել։
(27) Ոսկան. Թոյլ տուր՝ զի նախ յագ":

Digitized by Google

զևն. և զդուստրն, զի անկեալ կայր 'ի մահիճսն:
Ի * Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիւրոսի և Սի- 31
ԿԵ դոնի, և եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահ-
մանացն 'ի Դեկապօլեա: * Եւ բերեն առ նա խուլ 32
մի և համր. և աղաչէին զնա՝ զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա:
* Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէն առանձին, արկ զմա- 33
տունս իւր ընդ ականջս նորա՝ և եթուք առնոյր. և կա-
լաւ զլեզուէ նորա. * Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և 34
ասէ. եփփաթա, որ է՝ բացիր: * Եւ նոյնժամայն 35
բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և
խօսէր՝ ուղիղ: * Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք 36
ասասցեն: Եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս ա-
ռաւել քարոզէին: * Եւ ևս քան զևս զարմանային և ա- 37
սէին. Զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլեց՝
լսել տայ, և համերց խօսել:

ԳԼ. Ը.

ԻԱ Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, 1
և ինչ՝ ոչ ունէին ուտել. կոչեաց զաշակերտսն իւր՝
ԿԶ և ասէ ցնա: * Գթամ ես 'ի վերայ ժողովրդեանդ. զի 2
արդ՝ երեք աւուրք են՝ մինչ առ իս են, և ոչ ունին
զինչ ուտիցեն: * Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս 'ի 3
տունս իւրեանց, նուաղեսցեն 'ի ճանապարհի. զի ոմանք
'ի դոցանէ 'ի հեռաստանէ եկեալ են: * Պատասխա- 4
նի ետուն նմա աշակերտքն նորա. ուստի՞ կարէ ոք յագե-
ցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ: * Եւ հար- 5
ցանէր զնոսա. քանի՞ նկանակ հաց ունիք: Եւ նոքա ասեն՝
եւթն: * Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել 'ի վե- 6
րայ երկրի: Եւ առեալ զեւթն նկանակն՝ գոհացաւ՝ ե-
բեկ, և տայր ցաշակերտսն զի արկցեն. և արկին ա-
ռաջի ժողովրդեանն: * Եւ ձկունս՝ սակաւ ունէին. և 7
զայն ևս օրհնեաց, և հրամայեաց արկանել: * Կերան 8
և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն՝ եւթն զամ-
բիղ: * Եւ էին որք կերանն՝ իբրև չորք հազարք. և 9
ԿԷ արձակեաց զնոսա: * Եւ նոյնժամայն մտեալ 'ի նաւ հան- 10
դերձ աշակերտօքն՝ եկն 'ի կողմանս Դաղմանութեայ:
* Ելին փարիսեցիքն՝ և սկսան վիճել ընդ նմա, և խնդ- 11
րէին

(31) Ոմանք. Եւ սիդոնի, եկն 'ի ծո": (32) Ոմանք. Խուլ մի համր, և աղաչէին զի: (34) Ոմանք. Եւ ասէ ցնա. եփ-փաթա: (37) Ոմանք. Բարւոք գոր":

Գլ. Ը. (2) Ոմանք. Են՝ զի կան առ իս: (5) Ոմանք. Եւ հարցանէր ցնա. քանի նկանակ հացի ունիք: (6) Ոմանք. Զեւթն նկանակս: (7) Ոմանք. Եւ ձկունս սակաւս ու": (10) Ոմանք. Եկն 'ի սահմանս դաղմա":

Digitized by Google

12 րէին 'ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա ։ * Եւ
հառաչեաց յոգի իւր՝ և ասէ. զի՞ է՝ զի ազգս այս նշան
խնդրէ. ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազգիս այս֊
13 միկ ։ * Եթող զնս. դարձեալ եմուտ 'ի նաւ, և գնաց
14 յայնկոյս ։ * Եւ մոռացան հաց առնուլ. բայց մի նկա֊
նակ ունէին ընդ իւրեանս 'ի նաւին ։
15 * Եւ պատուիրէր նց և ասէր. զգո՛յշ լերուք 'ի խմո֊ ԻԲ
րոյ անտի փարիսեցւոց՝ և 'ի խմորոյ հերովդիանոսաց ։
16 * Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հաց
17 ոչ ունիմք ։ * Գիտացեալ յս՝ և ասէ ցնս. զի՞ խորհիք 'ի
մտաւ ձեր թերահաւատք՝ թէ հաց ոչ ունիք. տակա֊
ւին ոչ իմանայք և ոչ յիշէք. ապշութեան ունիք զսիրտս
18 ձեր. * աչս ունիք՝ և ոչ տեսանէք, ականջս են՝ և ոչ
19 լսէք և ոչ իմանայք տակաւին ։ և ոչ յիշէք, * յորժամ
զհինգ նկանակսն 'ի հինգ հազարսն, և քանի՞ սակառս
բարձէք զկոտորացն լի ։ և ասեն ցնա, երկոտասան ։
20 * Եւ յորժամ զեւթն նկանակսն 'ի չորս հազարսն, և քա֊
նի՞ զամբիղս լի՝ բարձէք զկոտորոցն ։ և նք ասեն, եւթն ։
21 * Եւ ասէ ցնս. իսկ զիարդ ոչ իմանայք ։
22 * Գան 'ի բեթսայիդա. և ածեն առաջի նր կոյր մի. ԻԳ
23 և աղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա ։ * Եւ առեալ
զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս
նր, և ձեռն եդ 'ի վերայ նր. և հարցանէր ցնա՝ թէ
24 տեսանիցէ՞ ինչ ։ * Բացաւ՝ և ասէր. տեսանեմ զմար֊
25 դիկս՝ զի շրջին իբրև զծառս ։ * Դարձեալ եդ ձեռս
'ի վերայ աչաց նր՝ եբաց, և տեսանէր. ողջացաւ և տե֊
26 սանէր համարձակ զամ ։ * Արձակեաց զնա 'ի տուն իւր՝
և ասէ. 'ի շէնդ մի մտանիցես, այլ երթ 'ի տուն քո. և
յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես 'ի շինին ։
27 * Եւ ել յս աշակերտօքն հանդերձ 'ի շէնս կեսարեայ ԻԴ
փիլիպեայ. և 'ի ճանապարհին հարցանէր ցաշակերտ֊ ԳԿ
սն՝ և ասէր. զո՞ ասեն զինէն մարդիկն՝ թէ
28 իցեմ ։ * Նոքա ետուն պատասխանի՝ և ասեն. զյովհան֊
նէս մկրտիչ, և այլք՝ զեղիա, և այլք՝ զմի ոք 'ի մար֊
29 գարէից անտի ։ * Ասէ ցնս. իսկ դուք՝ զո՞ ասէք
ասէք զինէն թէ իցեմ ։ պատասխանի ետ պետրոս, և
30 ասէ ցնա. դու ես քն ։ * Եւ սաստեաց 'ի նս՝ զի ու֊
մեք՝

(14) Ոմանք յաւելուն. Բայց միայն մի նկա'' ։ (15) Ոմանք. Եւ պատուիրեաց նց և ասէր. զգո՛յշ լերուք ։ (17) Ոմանք. Ապշուն կալեալ զսիրտս ձեր ։ (19) Ոմանք. Սակառս լի բար''. . և ասեն. երկոտ'' ։ (23) Ոմանք. Եւ ձեռն եդ 'ի վր գլխոյ նր. և ։ (25) Ոմանք. Եդ ձեռն 'ի վր ա'' ։ (27) Ոմանք. Փիլիպպեայ . . . մարդիկս թէ իցեմ ։ (28) Ոմանք. Զմի 'ի մարգա'' ։ (30) Ոմանք. Զի մի ումեք ասիցեն ։

Digitized by Google

մեք՝ մի ասիցեն զնմանէ։ * Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, 31
թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ըն_
դունել, և անարգել յերիցանց և 'ի քահանայապետաց
և 'ի դպրաց, և մեռանել. և յերիր աւուր յառնել ։
* և համարձակ զբանն խօսեցաւ ։ Եւ առեալ զնա մե_ 32
կուսի պետրոսի՝ սկսաւ սաստել նմա ։ * Եւ նա՝ դար_ 33
ձաւ եւ ետես զաշակերտսն, սաստեաց պետրոսի՝ և ասէ.
Երթ յետս՝ իմ սատանայ. զի ոչ խորհիս դու զայն,
այլ զմարդկանս ։ * Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն 34
աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա. եթէ որ՝ կամի զալ
զկնի իմ, ուրասցի զանձն իւր, և բարձցէ զխաչ իւր՝
և եկեսցէ զկնի իմ ։ * Զի որ կամիցի ապրեցուցանել 35
զանձն իւր, կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն
իւր վասն աւետարանին, ապրեցուսցէ զնա ։ * Զի՞նչ օ_ 36
գուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ ամ շահեսցի, և զանձն
իւր տուժեսցի ։ * քանզի՝ զի՞նչ տացէ մարդ՝ փոխա_ 37
նակ անձին իւրոյ ։ * Զի որոք՝ ամօթ համարեսցի զիս 38
և զբանս իմ 'ի շնացօղ և 'ի մեղաւոր ազգիս յայսմիկ,
և որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ
փառօք հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց ։ * Եւ ասէ ցնոսա. 39
ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ կան,
որք մի ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայու_
թիւն այ եկեալ զօրութեամբ ։

ԳԼ. Թ.

ԻԵ Եւ յետ վեց աւուր՝ առնու Յս իւր յն զպետրոս և 1
զյակովբոս և զյովհաննէս, և հանէ զնոսա 'ի լեառն
մի բարձր առանձինն. և յայլակերպս եղև առաջի նց ։
* և ձորձք նր եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպ թա_ 2
փիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել ։
* Եւ երեւեցաւ նց եղիա մովսիսիւ հանդերձ, և խօ_ 3
սէին ընդ յսի ։ * Պատասխանի ետ պետրոս՝ և ասէ 4
ցյս. ռաբբի՝ բարւոք է մեզ աստ լինել. և արասցուք՝
երիս տաղաւարս՝ մի՝ քեզ, և մի՝ մովսիսի, և մի՝ ե_
ղիայի ։ * քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհու_ 5
րեալ էին ։ * Եւ եղև ամպ մի՝ հովանի 'ի վերայ նց. 6
ձայն եղև յամպոյ անտի՝ և ասէ. դա է որդի իմ սի_

րե_

---

(33) Ոսկան. Դարձաւ և ետես ։ (33) Ոմանք. Աշակեր_
մարդկան ։ (35) Ոմանք. Զի որ կամիցի զանձն իւր կե_
ցուցանել, կոր'' ։ (36) Ոմանք. Զաշխարհս ամենայն...
տուժեսցէ ։ (38) Ոմանք. Ազգիս այսմիկ ։
Գլ. Թ. (1) Ոմանք. Եւ յայլակերպ եղև ։ (2) Ոմանք. Սպի_
տակեցուցանել ։ (3) Ոսկան. Որք խօսէին ընդ յսի ։ (6) Ո_
մանք. Յամպոյն՝ և ասէ ։ Նա ոմանք. յամպոյ անտի՝ դա է ։

Digitized by Google

7 րելի՝ դմա՛ լուարուք։ * Եւ յանկարծակի հայեցեալ
այսր անդր ; ոչ եւս զոք ուրեք տեսանէին, բայց միայն զՅի
8 ընդ իւրեանս։ * Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ ան-
տի, պատուիրեաց նոցա զի մի ումեք պատմեսցեն զոր
տեսանէին, բայց յորժամ Որդի մարդոյ ՚ի մեռելոց յարի-
9 ցէ։ * Եւ նոքա զբանն ՚ի միտ ունէին։ Եւ խնդրէին ը՟ն
10 միմեանս՝ թէ զի՞նչ իցէ ՚ի մեռելոցն յառնելն։ * Հար-
ցին զնա եւ ասեն. զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն՝ ե-
11 թէ նախ Եղիայի պարտ է գալ։ * Նա՛ պատասխանի
ետ նոցա եւ ասէ. Եղիա նախ եկեալ՝ յարդարեսցէ զամ։
իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ, զի բազում ինչ չար-
12 չարեսցի եւ անարգանեսցի։ * Այլ ես՝ ասեմ ձեզ, եթէ
Եղիա եկն, եւ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան. որ
13 եւ գրեալ է վասն նո՟ր։ * Եւ եկեալ առ աշակերտսն, զբ
տեսին ամբոխ շուրջ զնոքօք, եւ դպիրսն՝ զի վիճէին
14 ընդ նո։ * Եւ վաղվաղակի ամ՟ ժողովուրդն իբրեւ տե-
սին զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն
15 տային նմա։ * Եւ եհարց զնո թէ զի՞նչ վիճէիք ընդ նո։
16 * Պատասխանի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն՝ եւ ասէ. ԻԶ
վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս
17 համր. * Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, եւ փրփրէ,
եւ կրճտէ զատամունս իւր՝ եւ ցամաքի. եւ ասացի աշա-
կերտացն քո զի հանցեն, եւ ոչ կարացին հանել զնա։
18 * Պատասխանի ետ նոցա եւ ասէ. ով ազգ անհաւատ՝ մին-
չեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ.
19 ածէք զնա առ իս։ * Եւ ածին զնա առ նա։ Իբրեւ ե-
տես զնա այսն, վաղվաղակի չարչարեաց զնա, եւ ան-
20 կեալ յերկիր թաւալէր եւ փրփրէայր. * Եհարց ցհայր
նո՟ր եւ ասէ. քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ ե-
21 ղեւ դմա։ Եւ նա ասէ. ՚ի մանկութենէ. * բազում անգամ
՚ի հուր արկանէ եւ ՚ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ՝
եթէ կարօղ ինչ ես, օգնեա մեզ տէր՝ գթացեալ ՚ի վ՟ր
22 մեր։ * Եւ յս՟ ասէ ցնա. ասացեր՝ եթէ կարօղ ես. ամ՟
23 ինչ՝ հնարաւոր է այնմ որ հաւատայն։ * Եւ վաղվա-
ղակի աղաղակեաց հայր մանկանն՝ եւ ասէ. հաւատամ,
24 օգնեա անհաւատութեան իմում։ * Իբրեւ ետես յս՟՝ ե-
թէ կուտի ժողովուրդն ՚ի վերայ, սաստեաց այսոյն
պղծոյ՝ եւ ասէ. համրդ՝ եւ խուլ այս՝ ես տամ քեզ հրա-
ման,

---

(9) Ոմանք. ՚ի լեռնէն, պատուէր՟։ (12) Ոմանք. Եւ արա-
րին ը՟ն նմա զոր ինչ կամեցան։ (15) Ոմանք. Եհարց ցնո,
թէ։ (18) Ոմանք. Մինչեւ ցե՞րբ իցեմ առ ձեզ. մինչեւ
ցե՞րբ ան՟։ (19) Ոմանք Եւ փրփրայր։ (21) Ոմանք. Ար-
կանէ զդա եւ ՚ի ջուր։ (23) Ոմանք յաւելու. Հաւատացելոյ.
ինչ. օգ՟։ (24) Ոմանք. Համր դու եւ խուլ... եւ այլ մի եւս։

մտցես, Ել՛ի դմանէ. և այլ և՝ մի մտանիցես ՚ի դա։ * Եւ 25
աղաղակեաց՝ և յոյժ լլկեաց զնա՝ և ել. և եղև մա-
նուկն իբրև զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել՝
թէ մեռաւ։ * Եւ յիսուս կալեալ զձեռանէ նորա յարոյց զնա, 26
և կանգնեցաւ։ * Եւ իբրև եմուտ նա ՚ի տուն, աշա- 27
կերտքն առանձինն հարցին զնա. Ընդէ՞ր մեք ոչ կա-
րացաք հանել զնա։ * Եւ ասէ ցնո. այդ ազգ՝ ոչ իւիք 28
ՂԴ ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։ * Եւ անտի ե- 29
լեալ անցանէին ընդ գալիլեացւոցն. և ոչ կամէր ե-
թէ ոք գիտասցէ։ * Քանզի ուսուցանէր զաշակերտսն 30
իւր՝ և ասէր ցնո, թէ որդի մարդոյ մատնելոց է ՚ի
ձեռս մարդկան, և սպանցեն զնա. և իբրև սպանցի՝
յերիր աւուր յառնէ։ * Եւ նոքա ոչ գիտէին զբանն. 31
և երկնչէին հարցանել զնա։

ԻԵ * Եւ եկն ՚ի կափառնաում. և իբրև եմուտ ՚ի տունն, հար- 32
ցանէր ցնո, զի՞նչ վիճէիք զճանապարհայն ՚ի միմեանս։
* Եւ նոքա լռեալ լինէին. քանզի ընդ միմեանս վիճէին 33
՚ի ճանապարհին թէ՝ ով մեծ իցէ։ * Եւ իբրև նստաւ՝ 34
կոչեաց զերկոտասանսն, և ասէ ցնո. եթէ ոք կամի
առաջին լինել՝ եղիցի ամենեցուն յետին՝ և ամենե-
ցուն սպասաւոր։ * Եւ առեալ մանուկ մի կացոյց ՚ի 35
մէջ նոցա. և ընկալեալ զնա ՚ի գիրկս իւր, ասէ ցնոսա։
* Որ միանգամ յայսպիսի մանկանց ընկալցի յանուն 36
իմ, զիս ընդունի. և որ զիս ընդունի. ոչ զիս ընդու-
նի՝ այլ զայն որ առաքեացն զիս։ * Պատասխանի ետ 37
նմա յովհաննէս և ասէ. վարդապետ՝ տեսաք զոմն զի
յանուն քո դևս հանէր՝ և զկնի մեր ոչ գայր, և ար-
գելաք զնա։ * Եւ նա ասէ. մի արգելուք զնա. զի 38
ոչոք է որ արասցէ զօրութիւն յանուն իմ, և կարիցէ հայ-
հոյել զիս։ * Զի որ ոչ է ընդ մեզ հակառակ, ՚ի մեր 39
կոյս է։ * Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ 40
յանուանս յայս, թէ դուք՝ քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝
մի կորուսցէ զվարձս իւր։ * Եւ որ ոք՝ գայթակղե- 41
ցուսցէ զմի ՚ի փոքրկանցս որ հաւատան յիս, լաւ էր
նմա առաւել՝ եթէ արկեալ էր ընդ պարանոցաւ նորա եր-
կան իշոյ, և ընկեցեալ ՚ի ծով։ * Եւ եթէ գայթակղե- 42
ցուսցէ զքեզ ձեռն քո, հատ՝ ընկեա՛ ՚ի քէն. զի լաւ
է քեզ

(27) Ոմանք. Ոչ կարացաք հանել զդա։ (29) Ոմանք. Ան-
ցանէին ընդ գալիլեացւոցն։ (30) Ոմանք. Եւ սպանա-
նիցեն զնա։ (30) Ոմանք. Յերիր աւուր յարիցէ։ (31) Ո-
մանք. Հարցանել զնա։ (35) Ոմանք. ՚Ի գիրկս իւր, ա-
սէր ցնո։ (36) Ոմանք. Եւ որ զիս ընդունիցի։ (39) Ո-
մանք. ՚Ի մեր կողմն է։ (41) Ոմանք. Թէ արկեալ էր Է
պարանոցաւ նորա։ (42) Ոմանք. Խեղ մտանել ՚ի կեանս։

իցէ քեզ խեղ ՚ի կեանսն յաւիտենից մտանել, քան երկ-
կուս ձեռս ունել՝ և երթալ ՚ի գեհեն ՚ի հուրն անշէջ։
44 * Եւ եթէ ոտն քո գայթագղեցուսցէ զքեզ, հատ ըն-
կեա՛ զնա ՚ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել ՚ի կեանսն
յաւիտենից, քան երկուս ոտս ունել՝ և անկանել ՚ի
46 գեհեն։ * Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ զքեզ,
հա՛ն զնա ՚ի բաց. լաւ իցէ քեզ միով ականբ մտանել
յարքայութիւն այ, քան երկուս աչս ունել՝ և անկանել
47 ՚ի գեհեն։ * Ուր որդն նց ոչ մեռանի՝ և հուրն ոչ
48 շիջանի։ * Զի ամ ինչ հրով յաղեսցի։ * Բարւոք է
49 աղ. եթէ աղն անհամեսցի, ի՞ւ համեմեսցի։ արդ՝ դուք
կալարո՛ւք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն՝ արա-
րէք ընդ միմեանս։

ԳԼ. Ժ.

1 Եւ անտի յարուցեալ գայ ՚ի սահմանս Հրէաստա- ՂԴ
նի, յայնկոյս Յորդանանու։ և երթայր գումարեալ
խուռնամուռ ժողովուրդն առ նա, և որպէս սովոր էր՝
միւսանգամ ուսուցանէր զնոսա։
2 * Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին ԻԲ
զնա՝ և ասէին, եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր ար-
3 ձակել։ * Նա՝ պատասխանի ետ նց՝ և ասէ. զի՞նչ պա-
4 տուիրեաց ձեզ մովսէս։ * և նք ասեն. մովսէս հրա-
5 ման ետ՝ գիր մեկնելոյ գրել, և արձակել։ * Պատաս-
խանի ետ յս՝ և ասէ ցնս. վս խստասրտութե ձերոյ գր-
6 եաց զպատուիրանն զայն. * այլ ՚ի սկզբանէ արարա-
7 ծոց, արու և էգ արար զնս այ, և ասէ։ * Վասն այ-
սորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ
8 կնոջ իւրոյ։ * և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի։ և այ-
9 նուհետև ոչ են երկու՝ այլ մարմին մի։ * արդ՝ զոր
10 այ զուգեաց, մարդ մի մեկնեսցէ։ * Եւ ՚ի տան դար-
11 ձեալ՝ աշակերտքն զնոյն հարցին ցնա։ * Եւ ասէ ցնս.
եթէ

---

* Աստանօր ոմանք առնեն ՚ի լատինականէն յաւելուած համար. 43, և 45. Երիցս գտանելով զբանն. Ուր որդն նց ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի։ զոր ամ գրչագիրք մեր միանգամ ունին ՚ի համարն 48։ (44) Ոմանք. Գայթագղեցուցանէ զքեզ... և արկանել ՚ի գեհեն։ Որ ոմանք յաւելուն. ՚ի գեհեն ՚ի հուրն անշէջ։ (46) Ոմանք. Հատ զնա ՚ի բաց։ (48) Ոմանք ՚ի լատինականէն առնեն յաւելուած. Հրով յաղեսցի. և ամ պա-տարագ աղիւ յաղեսցի։ (49) Բազումք. Եւ եթէ աղն անհամ"։ Գլ. Ժ. (1) Ոմանք. Խռնել ժողովուրդ առ նա։ (5) Յօրինակին պակասէր. Պատասխանի ետ յս։ (5) Ոմանք յաւելուն. Գրեաց ձեզ զայսա"։ (7) Ոմանք. Վս այնորիկ թողցէ։ (10) Ոմանք. Աշակերտքն զնոյն հարցանէին ցնա։

Digitized by Google

եթէ այր՝ արձակեսցէ զկին իւր, և արասցէ այլ, շնայ:
* և կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այ- 12
ԶԵ լում, շնայ: * Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի 13
ձեռն դիցէ նց. իսկ աշակերտքն՝ սաստէին այնոցիկ
որ մատուցանէինն: * Իբրև ետես յս, բարկացաւ 14
սաստկագոյնս և ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ
իս, և մի արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է ար-
քայութիւն այ: * Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ընկալցի զար- 15
քայութիւն այ իբրև զմանուկ, ոչ մտցէ ՚ի նա: * Եւ առ- 16
եալ զնս ՚ի գիրկս ձեռն եդ ՚ի վերայ՝ և օրհնեաց զնս:
ԻԹ * Եւ ը̅ ելանելն նր անտի ՚ի ճանապարհ, ահաւասիկ 17
ոմն մեծատուն՝ ընթացեալ ՚ի ծունր իջանէր, հարցա-
նէր ցնա՝ և ասէր. վարդապետ բարի՝ զի՞նչ արարից
զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից: * Եւ յս՝ 18
ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի
ած հայր: * զպատուիրանս գիտես. մի՛ շնար. մի՛ սպանա- 19
ներ. մի՛ գողանար. մի՛ սուտ վկայեր. պատուեա՛ զհայր
քո և զմայր: * Նա՝ պատասխանի ետ՝ և ասէ ցնա. վարդա- 20
պետ՝ զայդ ամ արարի ՚ի մանկուէ իմմէ, արդ՝ զի՞նչ
ևս պակաս իցեմ: * Եւ յս հայեցեալ ՚ի նա՝ սիրեաց զնա 21
և ասէ ցնա. մի ինչ պակաս է ՚ի քէն, եթէ կամիս կատա-
րեալ լինել, երթ զոր ինչ ունիս վաճառեա՝ և տուր աղ-
քատաց, և ունիցիս գանձս յերկինս, և առ զխաչն՝ և եկ
զկնի իմ: * Եւ նա՝ խոժոռեալ ը̅ բանն՝ գնաց տրտմեալ: 22
զի ունէր ինչս բազում: * Եւ հայեցեալ յայս կոյս՝ յայն 23
կոյս յս, ասէ ցաշակերտսն. զիարդ դժուարին է՝ որ
զինչս ունին, մտանել յարքայութիւն այ: * Եւ աշա- 24
կերտքն զարմացեալ էին ՚ի վերայ բանիցն նր: իսկ յս
դարձեալ պատասխանի ետ նց՝ և ասէ. որդեակք՝ որ-
չափ դժուարին է յուսացելոց յինչս՝ մտանել յարքա-
յութիւն այ: * դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան ան- 25
ցանել, քան մեծատան յարքայութիւն այ մտանել: * Եւ 26
նք առաւել ևս զարմանային՝ և ասէին ընդ միմեանս.
իսկ ո՞վ կարասցէ ապրել: * Հայեցեալ ը̅ նս յս՝ ասէ. 27
առ ՚ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ ՚ի յայ:
ԶԶ * Սկսաւ ասել ցնա պետրոս. ահաւասիկ մեք՝ թողաք 28
զամ,

---

(13) Ոմանք. Ձեռն դիցէ ՚ի վր նց: (14) Ոմանք. Թոյլ տուք մանկտւոյն: (17) Ոմանք. Ահա ոմն մեծա՛՛ ... . զինչ գործեցից զի զկեանս: (18) Սակաւ օրինակք յառաջեալ համաձայն մերումս. Մի ած հայր: (21) Ոմանք. Պակասէ ՚ի քէն: (23) Յօրինակին գրեալ. Յայն կոյս յս, ասէ: (23) Ոմանք. Որ զինչսն ունին: (26) Ոմանք. իսկ ո կարիցէ ապրել: (27) Ոմանք. Ընդ նս յս՝ և ասէ: (27) Ոսկան յառաջեալ. Առ ՚ի յայ. զի ամենեքեան կարելիք են առ ած:

Digitized by Google

29 զամ, և եկաք զհետ քո ։ * Պատասխանի ետ Յս և աս_
է․ ամէն ասեմ ձեզ՝ ոչ ոք է որ եթող զտուն, կամ
զեղբարս, կամ զքորս, կամ զհայր, կամ զմայր, կամ
զորդիս, կմ զագարակս՝ վասն իմ կմ վասն աւետարա_
30 նին ․ * եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ
յայսմ ժամանակի տունս, և եղբարս, և քորս, և մայրս,
և որդիս, և ագարակս հալածանօք հանդերձ, և յաշ_
31 խարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս ։ * Զի
բազումք եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք ։
32 * Եւ էին 'ի ճանապարհի մինչ դեռ ելանէին յԵրմ ․
և երթայր Յս առաջի քան զնս, և զարմացեալ էին որ
զհետն երթային ․ և երկնչէին ։ Եւ առեալ միւսան_ զէ
գամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նց զինչ
33 անցք անցանելոց իցեն ընդ նա ։ * Թէ ահաւասիկ ե_
լանեմք յԵմ ․ և որդի մարդոյ մատնեսցի քահանայա_
պետաց և դպրաց ․ և դատեսցին զնա 'ի մահ, և մատ_
34 նեսցեն զնա հեթանոսաց ․ * և կատակեսցեն զնովաւ,
և հարկանիցեն զնա, և թքանիցեն 'ի նա, և սպան_
ցեն ․ և յերիր աւուր յարիցէ ։
35 * Եւ երթային առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս՝ որդ_ Լ
իքն զեբեդեայ․ և ասեն ցնա․ վարդապետ՝ կամիմք
36 զի զոր ինչ խնդրեսցուք 'ի քէն՝ արասցես մեզ ։ * Եւ
նա՝ ասէ ցնս ․ զի՞նչ կամիք յինէն՝ զի արարից ձեզ ։
37 * Եւ նոքա՝ ասեն ցնա ․ տո՛ւր մեզ՝ զի նստցուք մի՝
38 յաջմէ քումմէ և մի յահեկէ 'ի փառսն քում ։ * Պատաս_
խանի ետ Յս՝ և ասէ ցնս ․ ոչ գիտէք զինչ խնդրէք ․ կա_
րէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ ըզ_
39 մկրտութիւն՝ զոր ես մկրտելոցն եմ մկրտել ։ * և նոքա՝
ասեն ցնա, կարեմք ։ Եւ Յս ասէ ցնս ․ զբաժակն զոր
ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, և զմկրտութիւն՝ զոր ես
40 մկրտելոց եմ՝ մկրտիցիք ․ * այլ նստուցանել ընդ աջ_
մէ իմմէ և Ը ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ
41 իցէ ։ * Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ
42 յակովբայ և յովհաննու ։ * Եւ Յս կոչեաց զնս առ ինքն,
և ասէ ցնս ․ գիտէք ․ զի որ յանուան իշխանքն են հե_
թա_

---

(29) Ոմանք ․ Վն անուան իմոյ, կմ վն աւետարանին ։
(30) Ոմանք ․ Եւ մարս ։ Ի ոմանք ․ և մայր ։ (32) Ոմանք ․
Սկսաւ ասել ցնս, զինչ ․․ Ը նմա ։ (32) Ոսկան ․ Նց որ
ինչ անցք անն' ։ (33) Ոմանք ․ Եւ դատեսցեն զնա 'ի մահ ։
Եւ ոմանք ․ և դատապարտեսցեն զնա 'ի ։ (34) Ոմանք ․
Եւ կատակիցեն ։ (35) Օրինակ մի ․ Եւ երթային զնովաւ ։
(37) Ոմանք ․ 'Ի յահեկէ 'ի փառսն քո ։ (38) Բզնդ ․ Զմկր_
տութիւն մկրտել՝ զոր ։ (40) Այլք ․ Այլ որոց պատրաստ_
եալ իցէ ։ (42) Ոմանք ․ Եւ մեծամեծքն նց ։

Digitized by Google

Թագաւորս, տիրեն նոցա. և մեծամեծք նոցա իշխեն նոցա։
* Ո՛չ նոյնպէս լիցի և 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 43
'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր սպասաւոր. * և որ 44
կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ամենեցուն
ծառայ։ * Քանզի և որդի մարդոյ՝ ոչ եկն առնուլ 45
սպասաւոր, այլ սպասաւորել, և տալ զանձն իւր փրկանս
փոխանակ բազմաց։

ԼԱ * Եւ գան յԵրիքով. և ընդ ելանելն նորա յԵրիքովէ ա- 46
ԵԿ շակերտօքն՝ և բազում ժողովրդովք, որդի տիմէի Բար-
տիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհին։
* Իբրև լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղա- 47
կել՝ և ասել. որդի Դաւթի Յիսուս՝ ողորմեա ինձ։ * Եւ 48
սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ։ և նա՝ առաւել ևս ա-
ղաղակէր. որդի Դաւթի ողորմեա ինձ։ * Զտեղի ա- 49
ռ Յս, և հրամայեաց կոչել զնա։ կոչեն զկոյրն՝ և ասեն
ցնա. քաջալերեաց՝ արի՛ կոչէ զքեզ։ * Եւ նա ընկե- 50
ցեալ զձորձս իւր, յարեաւ եկն առ Յս։ * Պատասխանի 51
նի ետ նմա Յս՝ և ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ։
ասէ ցնա կոյրն. ռաբբունի, զի տեսից։ * Եւ Յս ա- 52
սէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ։ և վաղ-
վաղակի բացաւ, և երթայր զհետ նր 'ի ճանապարհին։

ԳԼ. ԺԱ.

ԼԲ Եւ յորժամ մերձ եղեն յԵմ 'ի Բեթփագէ և 'ի Բե- 1
թանիա մօտ 'ի լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս
յաշակերտացն իւրոց, * և ասէ ցնս. երթայք դուք 'ի 2
գեղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյն ժամայն իբրև մտա-
նէք 'ի նա, գտանիցէք յաւանակ մի կապեալ, յորոյ վե-
րայ մարդ ոչ ոք 'ի մարդկանէ նստաւ, ՚լուծէք զնա՝ և ածէք։
* Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ թէ զի՞ լուծանէք զյա- 3
ւանակդ, ասասջի՛ք՝ թէ տեառն իւրում պիտոյ է։ և
վաղվաղակի առաքեսցէ զնա այսր։ * Չոգան՝ և գտին 4
զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ 'ի փողոցի
անդ, և լուծին զնա։ * Եւ ոմանք յորոց անդ կային, 5
ա-

---

(43) Ոմանք. Ոչ այնպէս լիցի և 'ի ձերում։ (44) 'Ի բաղ-
դ... Եղիցի ձեր ամենեցուն։ (46) Ոմանք. ժողովրդովք.
որդի տիմէի բարտիմէոս. կամ, բատիմէոս։ (48) Ոմանք.
Եւ նա ևս առաւել։ (50) Ոմանք. Յարեաւ և եկն առ։
ԳԼ. ԺԱ. (1) Ոմանք. Առաքեաց երկուս յա՛՛։ (2) Ոմանք.
'Ի գեղդ որ ... իբրև մտանիցէք 'ի նա, գտանէք յաւա՛՛։
(3) Բաղդ 'ի հնագոյն և ցնպուրեալ օրինակաց ունին համա-
ձայն մերումս Ասասցէ ձեզ՝ թէ զի՞։ և ոմանք փոխեն զնոյն՝
ասասցէ ձեզ. կամ, ցձեզ եթէ։ (4) Ոմանք. 'Ի փողոցի
անդր։ (5) Ոմանք. Յորոց անդ կային։

Digitized by Google

ասեն ցնս. զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։
6 * Եւ նոքա՝ ասեն ցնս որպէս ասաց յս. և թոյլ ետուն
7 նց։ * Ածին զյաւանակն առ յս. և արկանեն ՚ի վե-
8 րայ նր զհանդերձս, և նստաւ ՚ի վերայ նր։ * Եւ բազմք
զհանդերձս իւրեանց տարածանէին ՚ի վերայ ճանա-
պարհին։ և այլք ոստս ՚ի ծառոց հատանէին՝ և ար-
9 կանէին զճանապարհաւն։ * Եւ որ առաջին՝ և զկնի
երթային, աղաղակէին և ասէին. ովսաննա բարձրե-
10 լոյն։ * օրհնեալ որ գայ յանուն տն. օրհնեալ թա-
գաւորութիւն եկեալ հօր մերոյ դաւթի. խաղաղութի
11 յերկինս՝ և փառք ՚ի բարձունս։ * Եւ եմուտ յեմ,
՚ի տաճարն, և հայեցեալ շուրջ զամենեքումբք. և զի
էր երեկոյացեալ ժամն, ել ՚ի բեթանիա երկոտա-
սանիւքն հանդերձ։

12 * Եւ ՚ի վաղիւ անդր մինչ դեռ ելանէին ՚ի բեթանիայ՝ ԼԳ
13 քաղցեաւ։ * և տեսեալ թզենի մի ՚ի բացուստ տերևա- ԵԲ
լից. և եկն թէ գտանիցէ ինչ ՚ի նմա. և իբրև եկն ՚ի
նմա ոչինչ եգիտ՝ բայց միայն տերև. զի ոչ խակ էր ժա-
14 մանակ թզոյ։ * Պատասխանի ետ՝ և ասէ ցնա. մի ևս
ոք՝ յաւիտեան ՚ի քէն պտուղ կերիցէ։ և լսէին աշա-
15 կերտքն նր։ * Գան ՚ի յեմ. և մտեալ ՚ի տաճարն՝ սկ-
սաւ հանել զվաճառականսն և զգնօղս՝ որ էին ՚ի տա-
ճարին. և զսեղանս հատավաճառացն ցրուեաց, և զա-
16 թոռս աղաւնեվաճառացն կործանեաց. * և ոչ թո-
ղոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։
17 * ուսուցանէր զնս և ասէր. գրեալ է, թէ տուն իմ
տուն աղօթից կոչեսցի ամ հեթանոսաց, և դուք արա-
18 րէք զդա այր աւազակաց։ * Լուան քահանայապետ-
քն և դպիրք, և խնդրէին թէ որպէս կորուսցեն զնա,
բայց երկնչէին ՚ի նմանէ. զի ամ ժողովուրդն զարմա-
19 ցեալ էր ընդ ուսումն նր։ * Եւ իբրև երեկոյ լինէր՝
20 արտաքոյ քան զքաղաքն ելանէին։ * Եւ մինչ դեռ այ-
գուցն առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամա-
21 քեալ յարմատոց։ * յիշեաց պետրոս՝ և ասէ ցնա. ռաբ-
բի՝ ահաւասիկ թզենին զոր անիծեր՝ ցամաքեցաւ։
22 * Պատասխանի ետ յս և ասէ ցնս. եթէ ունիցիք ըն-
հա-

---

(7) Ոմանք. Ածին զյաւանակն.. և արկին ՚ի վր նր հանդերձս. ՚ի վր նց։ (8) Ոմանք. Ոստս ծառոց հատանէին"։ (10) Այլ ոմանք յիշեն. Թագաւորութիւն եկեալ հօր մերոյ։ Ոմանք. Հօր մերում։ (11) Ոմանք. Եւ հայեցեալ շուրջ։ (12) Ոմանք. Եւ ՚ի վաղիւն մինչ դեռ։ (13) Ոմանք. Եկն ՚ի նմա։ (15) Ոմանք. Գան յեմ։ (17) Ոմանք. Եւ ուսուցանէր և ասէր ցնս, գրեալ է, տուն իմ տուն ա"։ (18) Ոմանք. Ընդ ուսումն նր։ (21) Ոմանք. Եւ յիշեաց պետ"։

հաւատսն Այ , * ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս 23
այսմիկ՝ բարձիր և անկիր 'ի ծով, և ոչ երկմտիցէ 'ի
սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի,
եղիցի նմա զոր ինչ և ասիցէ : * Վն այսորիկ ասեմ 24
ձեզ. զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդ-
րիցէք, և հաւատայցէք թէ առնուք, եղիցի ձեզ :
ԼԴ * Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ու- 25
նիցիք ինչ զումեքէ. զի և հայրն ձեր որ յերկինս է,
թողցէ ձեզ զյանցանս ձեր :
ԼԵ * Գան միւսանգամ 'ի յեմ. և մինչ գնա 'ի տաճարի 27
ԷԳ անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն և դպիրք
և ծերք, * և ասեն ցնա. որով իշխանութբ առնես զայդ, 28
և ով ետ քեզ զիշխանութիւն զայդ : * Պատասխանի ետ 29
յս՝ և ասէ ցնս. հարցից և ես զձեզ բան մի, տուք ինձ
պատասխանի. և ես ասացից ձեզ՝ որով իշխանութբ առ-
նեմ զայս : * Մկրտութիւն յովհաննու յերկնից էր՝ 30
թէ 'ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի : * Խորհ- 31
հէին ընդ միմեանս՝ և ասէին. եթէ ասեմք եթէ յերկ-
նից, ասէ ցմեզ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա : * այլ 32
եթէ ասեմք՝ 'ի մարդկանէ, երկնչէաք 'ի ժողովրդե-
նէն. զի ամենեքին գիտէին զյովհաննէս՝ թէ մարգա-
րէ էր : * Պատասխանի ետուն և ասեն ցյս, չգիտեմք. 33
Եւ յս ետ նց պատասխանի՝ և ասէ. և ոչ ես ասեմ
ձեզ՝ որով իշխանութբ առնեմ զայս :

ԳԼ. ԺԲ.

ԼԶ Եւ սկսաւ խօսել ընդ նս առակօք՝ և ասել : Այր 1
մի՝ տնկեաց այգի, և ած շուրջ զնովաւ ցանգ, և
փորեաց հնձան փորեաց և շինեաց աշտարակ, և ետ զնա
ցմշակս՝ և գնաց 'ի հեռի աշխարհ : * Եւ առաքեաց առ 2
մշակսն 'ի ժամանակի ծառայ մի, զի 'ի մշակաց անտի
առցէ 'ի պտղոյ այգւոյն : * և նց կալեալ՝ զնա հարին 3
զնա, և արձակեցին ունայն, * Դարձեալ առաքեաց 4
այլ ծառայ, և զնա կառափնատեցին՝ և արձակեցին
ա-

(23) Ոմանք. Զոր ասէն՝ լինիցի. եղի՛ : (24) Ոմանք. Զի-
ամ ինչ մն որոյ... թէ առնուցուք, եղիցի. * Այսպանօր
ոչխան առնեալ 'ի լատինականէն յաւելու համար. 26. * Զի
եթէ դուք ոչ թողուցուք. ոչ հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ
ձեզ զյանցանս ձեր : Որ ոչ երևի 'ի գրչագիրս մեր : (27) Ոմանք.
Միւսանգամ յեմ.. 'ի տաճարին զգնայր : Ուր օրինակ
մի. 'ի ճանապարհի անդ գնայր : (32) Ոմանք. Եթէ ա-
սեմք ոթէ 'ի մարդկանէ :
ԳԼ. ԺԲ. (2) Ոմանք. Զի 'ի մշակացն առցէ : (4) Ոմանք.
Առաքեաց առ նա այլ ծառայ. և զնա :

5 անարգեալ։ * Եւ դարձեալ այլ առաքեաց, եւ զնա
սպանին։ Եւ զբազումս այլս, զոմանս՝ հարկանէին, եւ
6 զոմանս՝ սպանանէին։ * Արդ՝ որդի մի էր իւր սիրե-
լի. զնա առաքեաց առ նս̃ յետոյ, եւ ասէ. Թերեւս ա-
7 մաչեսցեն յորդւոյ աստի իմմէ, * Իսկ մշակքն իբրեւ
տեսին զնա զի գայր, ասեն ցմիմեանս. սա է ժառանգն.
եկա՛յք սպանցուք զսա, եւ մեր լիցի ժառանգութիւն։
8 * Եւ կալեալ զնա՝ սպանին, եւ հանին արտաքոյ այգ-
9 ւոյն։ * Արդ՝ զի՞նչ արասցէ տէր այգւոյն։ եկեսցէ
եւ կորուսցէ՝ զմշակսն, եւ տացէ զայգին 'ի ձեռս այլո՛ց։
10 * Եւ ոչ զգիրն զայն՝ իցէ ընթերցեալ ձեր, թէ ըզ-
վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան։
11 * 'Ի տ̃նէ եղեւ այս. եւ է՝ սքանչելի յաչս մեր։ * Եւ
12 խնդրէին զնա ունե՛լ. եւ երկեան 'ի ժողովրդենէ ան-
տի, զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն. եւ
թողին զնա եւ գնացին։
13 * Եւ առաքեն առ նա զոմանս 'ի փարիսեցւոց անտի՝ ԼԵ
14 եւ 'ի հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ։ * Եւ
նոքա եկեալ՝ հարցանէին զնա նենգութ̃՝ եւ ասէին.
վարդապե՛տ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, եւ ո՛չ ինչ փոյթ
է քեզ զումեքէ. զի ո՛չ հայիս յերեսս մարդկան, այլ
ճշմարտութ̃ զճանապարհն ա̃յ ուսուցանես. արդ՝ ա-
սա՛ մեզ, արժա՞ն է հարկ տալ կայսեր՝ եթէ ո՛չ. տացո՞ւք՝
15 թէ ո՛չ տացուք։ * Եւ յս̃ գիտաց զկեղծաւորութիւն նց̃,
ասէ ցնս̃. զի՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դա-
16 հեկան մի զի տեսից։ * Եւ նք̃ բերին։ եւ ասէ ցնս̃.
ո՞յր է պատկերս այս՝ կմ̃ գիր։ Եւ նք̃ ասեն ցնա. կայ-
17 սեր։ * Պատասխանի ետ յս̃՝ եւ ասէ ցնս̃. Երթա՛յք տո՛ւք՝
զկայսեր, կայսեր, եւ զա̃յ՝ ա̃յ։ Եւ զարմացան ընդ նա։
18 * Գան առ նա սադուկեցիքն որ ասեն՝ թէ չիք յա- ԼԸ
19 րութիւն. հարցանէին զնա՝ եւ ասէին։ * Վա՛րդապետ՝ է դ
մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի
եւ թողուցու կին, եւ որդի ո՛չ թողուցու. զի առցէ եղ-
բայր նր̃ զկինն նր̃, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում։
* Արդ՝

---

(5) Ոմանք. Եւ զայլս բազումս։ (6) Օրինակ մի. Ամաչեսցեն յորդւոյս իմմէ։ (7) Ոմանք. Տեսին զնա թէ գայ, ա՛՛։ (8) Ոմանք. Եւ կալան զնա, ապ՛՛։ (12) Ոմանք. 'Ի ժողովրդենէն. զի։ (13) Ոմանք. Որսասցեն բանիւք։ (14) Ոմանք. Եւ ոչինչ է քեզ փոյթ.. հարկս տալ կայսեր՝ թէ ո՛չ։ (14) Յոմանս պակասի բանս. Տացուք՝ թէ ոչ տացուք։ Ընդ որում եւ յօրինակին մերում պակասէր լուսանցին գրեալ էր, եւ յետոյ ջնջեալ։ (17) Ոմանք. Զկայսերն կայսեր, եւ զայն այ։ (18) Ոմանք. Որ ասէին թէ չիք.. հարցանէին զնա՝ եւ։ (19) Ոմանք. Ոչ թողուցու, առցէ եղբայրն նորա զկին նորա։

Digitized by Google

* Արդ՝ եղբարք եւթն էին առ մեզ․ առաջինն առ 20
կին՝ և մեռաւ, և ոչ եթող զաւակ: * Եւ երկրորդն 21
առ զնոյն, և մեռաւ: և ոչ նա եթող զաւակ: նոյնպէս
և երրորդն առ զնոյն․ * և եւթնեքեան իսկ: և ոչ 22
թողին զաւակ․ յետ ամենեցուն՝ մեռաւ և կինն: * Արդ՝ 23
'ի յարութեան յորժամ յառնիցեն, ումը 'ի նոցանէ լինիցի
կինն․ զի եւթնեքեան կալան զնա կին: * Պատասխա- 24
նի ետ յս՝ և ասէ ցնս․ ոչ վասն այդորիկ իսկ մոլո-
րեալ էք․ զի ոչդ գիտէք զգիրս՝ և ոչ զզօրութիւն այ:
* Զի յորժամ 'ի մեռելոց յարիցեն, ոչ արք՝ կանայս 25
առնեն, և ոչ կանայք՝ արանց լինին․ այլ իբրև զհրեշ-
տակս իցեն՝ որ յերկինսն են: * Այլ վասն յարութե- 26
մեռելոց զի յառնեն, ոչ իցէ ընթերցեալ ձեր 'ի գիրսն
մովսիսի, 'ի մորենւոյն ոպ ասաց ցնա ած․ ես եմ ա-
սէ՝ ած աբրահամու, և ած իսահակայ, և ած յակով-
բայ: * և ոչ է ած մեռելոց՝ այլ կենդանեաց: և 27
արդ դուք՝ յոյժ մոլորեալ էք:

ԼԹ * Եւ մատուցեալ մի ոմն 'ի դպրացն՝ լսէր նց մինչ 28
վիճէին․ իբրև ետես թէ բարւոք ետ նց պատասխա-
նանին, եհարց ցնա՝ և ասէ․ ո՞ր պատուիրան է առա-
ջին: * Եւ յս՝ ասէ ցնա․ առաջին քան զամ՝ լուր 29
իէլ՝ տր ած մեր՝ տր՝ մի է, * և սիրեսցես զտր ած 30
քո յամ սրտէ քումմէ, և յամ անձնէ քումմէ, և յամ
մտաց քոց, և յամ զօրութենէ քումմէ: այս է առաջին
պատուիրան: * Եւ երկրորդն՝ նման սմին․ սիրեսցես 31
զընկեր քո՝ իբրև զանձն քո: մեծ քան զսոսա այլ՝ պա-
տուիրան ոչ գոյ: * Եւ ասէ ցնա դպիրն․ բարւոք է 32
վարդապետ․ ճշմարտութբ ասացեր՝ թէ մի է ած,
և ոչ գոյ այլ՝ բաց 'ի նմանէ: * և սիրել զնա՝ յամ 33
սրտէ, և յամ զօրութէ, և յամ մտաց․ և սիրել զըն-
կերն իբրև զանձն, առաւել է քան զողջակէզս և ըզ-
զոհս: * Եւ տեսեալ յս՝ թէ իմաստութբ ետ զպա- 34
տասխանին՝ ասէ ցնա․ չես հեռի յարքայութենէ այ: և
ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել զնա:

Խ * Պատասխանի ետ յս և ասէ, մինչ ուսուցանէր 'ի 35
Է Ե տաճարին․ զիարդ ասեն դպիրքն, թէ քն որդի դաւ-
թի է: * և ինքն դաւիթ հոգւովն սրբով ասէ․ ասաց 36
տր ցտր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշ-
նա-

---

(20) Ոմանք․ Առաջինն առեալ կին՝ և մեռաւ․ կամ, առար
կին՝ և մե": (24) Յօրինակին պէսէր․ Վա այդորիկ իսկ մո-
լոր": (24) Ոմանք․ Զի ոչ գիտէք․․ զզօրութիւն այ: (26) Ո-
մանք․ Չիցէ ընթերցեալ ձեզ 'ի գիրսն: (28) Ոմանք․ Մա-
տուցեալ ոմն 'ի դպ": (32) Ոմանք․ Բաց 'ի նմանէ:
(34) Ոմանք․ Յարքայութենն այ․․ հարցանել ինչ ցնա:

Digitized by Google

37 Թշնամիս քո պատուանդան ոտից քոց ։ * Արդ՝ եթէ ինքն
Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նորա ։ Եւ
38 բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ ։ * Եւ ասէր
ուսուցանելովն 'ի վարդապետութեան իւրում . զգո՛յշ լե-
րուք 'ի դպրաց անտի՝ որ կամին 'ի հանդերձս երկայ-
39 նս շրջել, զողջոյնս խնդրել 'ի հրապարակս , * եւ
զնախաթոռս 'ի ժողովուրդս , եւ զգահաւորակս յընթ-
40 րիս ։ * Որ ուտեն զտունս այրեաց , պատճառանօք յեր-
կարել զաղօթս , զի աւելի եւս դատաստանս ընկալցին ։
41 * Նստեալ յս՜ ընդդէմ գանձանակին , տեսանէր զիա՞րդ ԽԱ
ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գանձանակն . եւ բազում
42 մեծատունք՝ արկին բազում ինչ ։ * եկն այրի մի՝ եւ արկ
43 երկուս լումայս , որ է նաքարակիտ մի ։ * Եւ կոչե-
ցեալ առ ինքն զաշակերտսն իւր՝ ասէ ցնս . ամէն ա-
սեմ ձեզ , զի այրին այն տառապեալ՝ շատ արկ քան զա-
44 մենեսեան որ արկին 'ի գանձանակն ։ * քանզի ամե-
նեքին՝ յաւելորդաց իւրեանց արկին . այլ նա՝ 'ի
չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ ,
զոյն չափ զկեանս իւր ։

ԳԼ. ԺԳ.

1 Եւ ելանելն նորա 'ի տաճարէ անտի , ասէ ցնա մի յա- ԷԶ
շակերտաց նորա . վարդապետ , տե՛ս որպիսի են քա-
2 րինքս , եւ որպիսի շինուածք ։ * Պատասխանի ետ նմա
յս՜ եւ ասէ . տեսանես զայդ ամենայն շինուածս , ա-
մէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր՝ քար 'ի քարի
վերայ որ ոչ քակտեսցի ։
3 * Եւ մինչ նստէր նա 'ի լերինն ձիթենեաց յանդիման ԽԲ
տաճարին , հարցանէին ցնա առանձինն՝ պետրոս եւ յա-
4 կոբոս եւ յովհաննէս եւ անդրէաս ։ * ասա մեզ՝ երբ
լինիցի այդ . եւ զի՞նչ նշան է՝ յորժամ կատարելոց է-
5 ցէ այդ ամ՜ ։ * Պատասխանի ետ յս՜ , եւ ասէ ցնս . զգո-
6 յշ կացէք , մի ոք զձեզ խաբեսցէ ։ * զի բազումք եկես-
ցեն

---

(37) Ոմանք. Զիարդ որդի նր իցէ ։ եւ բազում ժղվրդ լսէին նմ քաղցր" ։ (38) Ոմանք. Զգոյշ եղերուք 'ի դպր" ։ (40) Ոմանք. Յերկարեն զաղօթս . . դատաստան ընդունիցին ։ (41) Ոմանք. Տեսանէր թէ զիարդ ։ (43) 'Ի բազմս օրին. Զաշակերտսն իւր , ասէ ։ (43) Ոմանք. Եւ կոչեալ առ ինքն . . . շատ արկ քան զամեն 'ի գանձանակն ։ (44) Ոմանք. Ամենեքեան 'ի յաւելորդաց իւ" ։

Գլ. ԺԳ. (1) Ոմանք. Նր 'ի տաճարէն . ասէ ցնա մի աշա յաշա" ։ (2) Ոմանք. Ամէն ամէն ասեմ ձեզ ։ (3) Յոմանս օրին. Եւ մինչ նստէր նա 'ի լե" ։ (4) Ոմանք. Կամ զինչ նշան իցէ ։ (6) Ոմանք. Զի բազումք գալոցեն յանուն . . . մի.

Digitized by Google

ցեն յանուն իմ, եւ ասիցեն՝ թէ ես եմ քն․ եւ զբազումս
մոլորեցուսցեն: * Այլ յորժամ լսիցէք պատերազ- 7
մունս, եւ համբաւս պատերազմաց՝ մի՛ խռովիցիք, զի
պա՛րտ է լինել․ բայց չե՛ւ է կատարած: * Զի յարիցէ 8
ազգ՝ յազգի՛ վերայ, եւ թագաւորութիւն ՚ի թագաւո-
րութեան վերայ․ եւ եղիցին շարժմո՛ւնք ՚ի տեղիս տե-
ղիս, սո՛վք, եւ սրածութիւնք, եւ խռովութիւնք․ այլ՝ այն ամ
սկիզբն է երկանց: * Եւ զձե՛զ իսկ՝ մատնեսցեն յա- 9
տեանս, եւ ՚ի ժողովուրդս տանջիցի՛ք, եւ առաջի դա-
տաւորաց եւ թագաւորաց կայցէք վասն իմ, ՚ի վկայ-
ութիւն նց՝ * Եւ ամ հեթանոսաց: բայց նախ՝ պա՛րտ է 10
աւետարանիս քարոզե՛լ: * Այլ յորժամ տանիցին ըզ- 11
ձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք, եւ մի՛ զմտա-
ածիցէք՝ թէ զինչ խօսիցիք․ այլ որ ինչ տացի ձեզ ՚ի
ժամուն յայնմիկ՝ զա՛յն խօսիցիք: զի ո՛չ դուք էք որ խօ-
սիցիքն՝ այլ հոգին սբ: * Մատնեսցէ եղբայր զեղ- 12
բայր՝ ՚ի մա՛հ, եւ հայր՝ զորդի․ եւ յարիցեն որդիք ՚ի
վերայ հարց՝ եւ սպանանիցեն զնս: * Եւ եղիջի՛ք ատե- 13
ցեա՛լք յամենեցունց վն անուան իմոյ: այլ որ համ-
բերեսցէն ՚ի սպառ՝ նա կեցցէ՛: * Եւ յորժամ տեսա- 14
նիցէք զպղծութիւն աւերածին՝ զի կայցէ ՚ի տեղւոջ՝ ուր
չիցէ արժան․ որ ընթեռնուն ՚ի մի՛տ առցէ: Յայնժամ
որ ՚ի հրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս․ * Եւ որ 15
՚ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ՚ի տուն, եւ մի՛ մտցէ
բառնա՛լ ինչ ՚ի տանէ իւրմէ․ * Եւ որ յագարակին իցէ՝ 16
մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր: * Բայց վա՛յ ի- 17
ցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն յայնոսիկ: * Յա- 18
ղօ՛թս կացէք՝ զի մի՛ ձմերանի լինիցի այն: * Եղիցին 19
աւուրքն այնոքիկ նեղութեանց, որպիսի ո՛չ եղեն երբեք
այնպիսիք իսկզբանէ մինչեւ ցայժմ, եւ մի՛ այլ լիցի:
* Եւ եթէ ո՛չ էր կարճեալ տր զաւուրսն զայնոսիկ՝ 20
վասն ընտրելոց իւրոց, ո՛չ ապրէր ամ մարմին․ այլ
վն ընտրելոցն զորս ընտրեաց, կարճեա՛ց զաւուրսն
զայնոսիկ: * Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ՝ եթէ ա- 21
հա-

լորեցուցանիցեն: (7) Ոմանք․ Զի այնմ պարտ է․․ կատարածն: (8) Ոմանք․ Եւ խռովութիւնք․ սակայն ամ ըսկիզբն: (9) Ոմանք․ Մատնեն յատեանս: (10) Յոմանս պակասի․ Եւ ամ հեթանոսաց․ բայց նախ պարտ է: (11) Ոմանք․ Տանիցեն զձեզ․․․ զի ո՛չ դուք իցէ որ: (12) Ոմանք․ Եւ յառնիցեն որդիք: (13) Ոմանք․ Որ համբերեսցէ․ կՆ, համբերէն իսպառ: (17) Ոմանք․ Եւ ստնդուացն: (18) Առ ոմանս պկսի․ Լինիցի այն: (19) Ոմանք․ Որպէս ոչ եղեն երբեք: (19) Բզմ յաւելուն․ Իսկզբանէ արարածոց մինչեւ ցայժմ, եւ մի՛ այլ լիցին: (21) Ոմանք․ Եթէ

Digitized by Google

22 հաւասիկ է Քս՝ կամ անանիկ, մի հաւատայցէք ։ * Զի
յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տա-
ցեն նշանս եւ արուեստս՝ առ ՚ի մոլորեցուցանելոյ եթէ
23 հնար ինչ իցէ եւ զընտրեալսն ։ * Բայց դուք՝ զգոյշ
եղերուք, ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամ ։
24 * Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ՝
արեգակն խաւարեսցի, եւ լուսին՝ ոչ տացէ զլոյս իւր ։
25 * Եւ աստեղք յերկնից թօթափեսցին, եւ զօրութիւնք յեր-
26 կինս՝ շարժեսցին ։ * Եւ յայնժամ տեսցեն զորդի մար-
27 դոյ եկեալ ամպովք, եւ զօրութ՟ եւ փառօք բազմօք ։ * Եւ
յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցէ
զընտրեալս իւր ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկրի մին-
28 չեւ ՚ի ծագս երկնից ։ * Բայց դուք՝ ՚ի թզենւոյ անտի
ուսջիք զառակն. յորժամ ոստք նր՟ կակղա-
նայցեն, եւ տերեւ արձակիցի ՚ի նմ՟, գիտէք թէ մերձ է
29 ամառն. * Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս
ամենայն եղեալ, գիտասջիք՝ թէ մերձ է առ դրուրս ։
30 * Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ
31 այս ամենայն եղիցի ։ * Երկինք՝ եւ երկիր անցցեն,
եւ բանք իմ ոչ անցանիցեն ։
32 * Այլ վա՟ աւուրն այնորիկ եւ ժամու՝ ոչ ոք գիտէ, ոչ ԽՓ
հրեշտակք յերկինս՝ եւ ոչ որդի, բայց միայն հայր ։
33 * Զգոյշ եղերուք, սկեցէք եւ կացէք յաղօթս. զի ոչ
34 գիտէք երբ ժամանակն իցէ ։ * Որպ՟ այր մի գնացեալ
՚ի տար աշխարհ, թողուցու զտուն իւր, եւ տացէ ծա-
ռայից իւրոց իշխանութիւն, եւ իւրաքանչիւր զգործ իւր.
եւ դռնապանին պատուէր տայցէ՝ զի արթուն լինի-
35 ցի ։ * Արդ՝ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր
տանն գայցէ, յերեկորեայ, եթէ ՚ի մէջ գիշերի, եթէ
36 ՚ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս ։ * Գուցէ եկեալ
37 յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ՚ի քուն ։ * Բայց զոր
ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք ։

ԳԼ.

ոք ասիցէ զձեզ, եթէ ։ (22) Ոմանք. Եւ տայցեն նշ՟ ։ (23) Ոմանք. Զգոյշ լերուք ։ (24) Օրինակ մի. Յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեւ ։ (25) Ոմանք. Եւ աստեղք երկնից թօ՟.. եւ զօրութիւնք երկնից շար՟ ։ (26) Ոմանք. Ամպովք զօրութ՟ եւ փառօք ։ (27) Ոմանք. Եւ ժողովեսցեն զընտրեալսն ։ (28) Ոմանք. ՚ի թզենւոյն ուսարուք զառակն ։ (29) Ոմանք. Մերձ է ՚ի դուրս ։ (30) Ոմանք. Մինչ այս ամ՟ եղի՟ ։ (31) Ոմանք. Իմ մի անցցեն ։ (32) Ոմանք. Եւ ժամուն.. բայց հայր միայն ։ (33) Ոմանք. Զգոյշ լերուք, հսկեցէք ։ (34) Ոմանք. Եւ տայցէ ծառայից.. զգործս իւր... պատուէր տացէ ։ (35) Ոմանք. Ոչ գիտէք թէ երբ.. յերեկաւրեայ ։

Digitized by Google

ԳԼ. ԺԴ.

ԷԷ Եւ էր զատիկն և բաղարջակերքն յետ երկուց աւ- 1
ուրց. խնդրէին քահանայապետքն և դպիրքն՝ եթէ զիա՞րդ
զնա նենգաւ կալեալ սպանանիցեն ։ * Բայց ասէին՝ թէ 2
մի՛ ՚ի տօնի աստ, գուցէ մի՛ խռովութիւն լինիցի ժողովրդեանն ։
ԽԴ * Եւ մինչ էր ՚ի Բեթանիա ՚ի տան Սիմոնի բորոտի 3
բազմեալ, եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազ-
նուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ ՚ի վերայ գլխոյ
նորա ։ * Եւ աշակերտքն՝ զայրացեալ և ասէին. ընդէ՞ր է կո- 4
րուստ իւղոյդ այդորիկ ։ * Մարթ էր զայդ եւս վաճա- 5
ռել՝ աւելի՛ քան երեք հարիւր դահեկանի, և տալ աղ-
քատաց ։ և զայրանային նմա յոյժ ։ * Եւ յս՝ ասէ ցնս. 6
Թո՛յլ տուք դմա. զի՞ աշխատ առնէք, զի գործ մի՛ բա-
րի՛ գործեաց դա յիս ։ * Յամ ժամ զաղքատս ը̃ ձեզ ու- 7
նիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նմ բարիս.
այլ զիս՝ ո՛չ յամ ժամ ընդ ձեզ ունիք ։ * Դա՝ զոր ու- 8
նէրդ, արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ՚ի նը-
ջման պատրաստանաց ։ * Ամէն ասեմ ձեզ. ուր և քարոզես- 9
ցի աւետարանս այս ը̃ ամ աշխարհ, և զոր արար դա՝
խօսեսցի ՚ի յիշատակի դորին ։ * Եւ Յուդա սկարիովտ- 10
տացի մի յերկոտասանից անտի, չոգաւ առ քահանայա-
պետսն՝ զի մատնեսցէ զնա նց ։ * Նոքա իբրև լուան՝ 11
խնդացին, և խոստացան նմա տալ արծաթ ։ և խնդ-
րէր՝ թէ զիա՞րդ պարապով մատնեսցէ զնա ։
ԽԵ * Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ յորժամ 12
զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն. ո՞ւր կամիս՝
երթիցուք պատրաստեսցուք, զի կերիցես զզատիկն ։
* Եւ առաքէ երկուս ՚յաշակերտացն անտի՝ և ասէ ցնս. 13
երթա՛յք ՚ի քաղաքն, և իբրև մտանիցէք ՚ի քաղաքն՝ պա-
տահեսցէ ձեզ այր մի, որ սափոր ջրոյ յուս ունիցի,
երթա՛յք զհետ նր ։ * և յոր տուն մտանիցէ, ասասջի՛ք 14
ցտանուտէրն. վարդապետ ասէ՝ ո՞ւր են իջեվանքն,
ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն ։ * և նա ցուցցէ 15
ձեզ

ԳԼ. ԺԴ. (1) Ոմանք. Նենգութ՟ կալեալ սպա՟ ։ (2) Ո-
մանք. Լինիցի ՚ի ժողովրդեանն ։ (3) Ոմանք. Շիշ մի իւ-
ղոյ ։ (4) Բազմք. Ընդէր եղև կորուստ ։ (5) Ոմանք. Քան
երեք հարիւր դենարի ։ (8) Ոմանք. Զոր ունէր արար ։
(9) Ոմանք. Զոր արարդ դա ։ (9) Ոսկան. Խօսեսցի յի-
շատակի դորա ։ (10) Ոմանք. Մի յերկոտանիցն գնաց ։
(11) Բազմք. Տալ նմ արծաթ ։ (12) Ոսկան. Յորում զզա-
տիկն զենուին ։ (13) Ոմանք. Եւ առաքեաց երկուս յա-
շակերտացն և . . . ՚ի քաղաք. և իբրև մտանէք . . . պա-
տահիցէ ։ (14) Ոսկան յաւելու. Իջեվանքն իմ ։ (15) Յոքն-

Digitized by Google

ձեզ վերնատուն մի մեծ՝ զարդարեալ. անդ պատրաս-
16 տեսջիք մեզ: * Եւ գնացին պատրաստել աշակերտքն
նր̃: եկին 'ի քաղաքն, եւ գտին որպէս ասացն նոցա. եւ
17 պատրաստեցին զզատիկն: * Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ
երկոտասանիւքն հանդերձ:
18 * Եւ իբրեւ բազմեցան՝ եւ դեռ ուտէին, ասէ յս̃. ա-
մէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն 'ի ձէնջ՝ մատնելոց է զիս, որ
19 ուտէ ընդ իս: * Իսկ նոքա սկսան տրտմել՝ եւ ասել մի
ըստ միոջէ. մի թէ ես իցեմ, եւ միւսն՝ մի թէ՝ ես ի-
20 ցեմ: * Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնս. մի յերկոտա-
21 սանիցդ այտի, որ մխեաց ընդ իս 'ի սկուտղակդ: * Այլ
որդի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վս̃ նր. բայց վայ
իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն որդին մարդոյ մատ-
նեսցի: լաւ էր նմա՝ եթէ չէր իսկ ծնեալ մարդն այն:
22 * Եւ մինչդեռ ուտէին, առեալ յս̃ հաց՝ օրհնեաց եւ
23 եբեկ՝ ետ նց՝ եւ ասէ. առէք՝ այս է մարմին իմ: * Եւ
առեալ բաժակ՝ գոհացաւ. ետ նց, եւ արբին 'ի նմանէ
24 ամենեքեան: * Եւ ասէ ցնս. այս է արիւն իմ նորոյ
25 ուխտի, որ վասն բազմաց հեղանի: * Ամէն ասեմ
ձեզ, թէ ոչ եւս յաւելից ըմպել 'ի բերոյ որթոյ, մինչեւ
ցօրն յայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայութեան այ̃:
26 * Եւ գոհացեալ ելին 'ի լեառն ձիթենեաց: * Եւ ա-
27 սէ ցնս յս̃, ամենեքեան գայթագղեսջիք յիս յայսմ
գիշերի: զի գրեալ է, թէ հարից զհովիւն՝ եւ ցրուեսցին
28 ոչխարքն: * Այլ յետ յառնելոյ իմոյ՝ յառաջագոյն
29 երթայց քան զձեզ 'ի գալիլեա: * Պատասխանի ետ
պետրոս՝ եւ ասէ ցնա. թէպէտ եւ ամենեքեան գայթագ-
30 ղեսցին, այլ ես՝ ոչ: * Եւ ասէ ցնա յս̃. ամէն ասեմ
քեզ. թէ դու այսօր՝ յայսմ գիշերի մինչչեւ հաւու խօ-
31 սել երկիցս՝ երիցս ուրասցես զիս: * Իսկ պետրոս ա-
ռաւել եւս սաստկէր եւ ասէր. եթէ մեռանել եւս հասա-
նիցէ ինձ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց: Նոյնպէս եւ ամենե-
32 քեան ասէին: * Գան 'ի գեօղն՝ որում անուն էր՝ գե-
թսե-

նաչին. Ձեզ տուն մի մեծ: (16) Օրինակ մի. Եւ արարին
որպէս ասաց նց: (19) Ոմանք. Եւ միւսն ասէ՝ միթէ ես իցեմ:
(20) Ոմանք. Մի յերկոտասանիցդ որ: (21) Ոմանք. Որպէս
գրեալ է... որդի մարդոյ... այնորիկ՝ յոյր ձեռն որ":
(22) Ոմանք. Եւ ցնս եւ ասէ: (23) Ոմանք. Գոհացաւ եւ
նոցա: (25) Ոմանք. 'Ի բերոյ որթու... յորժամ արբից
զդա. կամ, զդա նոր: (28) Օրինակ մի. Այլ յետ յառնե-
լոյն իմոյ: (29) Ոմանք. Գայթագղեսցին 'ի քէն. այլ ես
ոչ: (30) Ոմանք. Ուրասցիս զիս: (32) Ափւէն բառ 'ի ...
... ոմանց նոր օրինակաց՝ գրեալ է ... գրէն.
Գեթսեմանի. կամ, գեսամանի. ... 'Ի ... 36. ...

Digitized by Google

սեմանի : եւ ասէ ցաշակերտսն • նստարո՛ւք աստ՝ մինչ
ես յաղօթս կացից: * Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ 33
զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ սկսաւ տխրել՝ եւ հոգալ:
* Յայնժամ ասէ ցնս̃ • տրտո՛ւմ է անձն իմ մինչեւ 'ի 34
մահ, մնացէ՛ք աստ՝ եւ արթո՛ւն կացէք: * Եւ մատու- 35
ցեալ սակաւիկ մի յառաջ, անկա՛ւ 'ի վերայ երեսաց
իւրոց յերկիր • եւ կայր յաղօթս, զի եթէ հնա՛ր ինչ է՝
անցցէ՛ 'ի նմանէ ժամն: * Եւ ասէ • աբբա՛, հա՛յր, ամ̃ 36
ինչ՝ քեզ հնարաւո՛ր է, անցո՛ զբաժակս զայս յինէն :
բայց ո՛չ զոր ես կամիմ՝ այլ զոր դո՛ւ կամիս: * Եւ գայ՝ 37
գտանէ զնոսա՝ զի ննջէին, եւ ասէ ցՊետրոս • Սիմոն՝
ննջե՞ս • ո՛չ կարացեր ժամ մի արթուն կալ: * Արթո՛ւն 38
կացէք եւ յաղօթս կացէք, զի մի՛ մտջիք 'ի փորձութիւն:
ոգիս յօժա՛ր է՝ բայց մարմինս տկա՛ր: * Եւ դարձեալ՝ 39
չոգաւ եկաց յաղօթս, եւ զնո՛յն բանս ասաց: * Դար- 40
ձաւ միւսանգամ անդրէն՝ եւ եգիտ զնս̃ 'ի քո՛ւն • քան-
զի էին աչք նց̃ ծանրացեալ՝ եւ ո՛չ գիտէին թէ զի՛նչ
պատասխանի տայցեն նմա: * Գա՛յ երրորդ անգամ, եւ 41
ասէ ցնս̃ • ննջեցէ՛ք այսուհետեւ եւ հանգերո՛ւք, զի հա-
սեա՛լ է վախճան: եկն ժամ, եւ ահա մատնի որդի մար-
դոյ 'ի ձեռս մեղաւորաց: * Ա՛ն արիք գնասցո՛ւք • զի 42
ահաւասիկ՝ մերձեցաւ որ մատնելոցն է զիս: * Եւ մինչ- 43
դեռ նա զայն խօսէր, գա՛յ Յուդա սկարիովտացի՝ մի
յերկոտասանիցն անտի, եւ ընդ նմա ամբո՛խ սուսերօք եւ
բրօք՝ 'ի քահանայապետիցն եւ 'ի դպրաց եւ 'ի ծերոց:
* Տուեալ էր նշան մատնչին՝ եւ ասէր • ընդ որում ես 44
համբուրեցից՝ նա՛ է • կալջի՛ք զնա՝ եւ տարջի՛ք զգու-
շութ̃: * Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա • ռա՛բ- 45
բի, ռա՛բբի • եւ համբուրեաց զնա: * Եւ նոքա արկին 46
'ի նա ձեռս՝ եւ կալան զնա: * Եւ մի ոմն յայնցանէ որ 47
զնովաւն կային՝ ձգեաց սուր, եւ եհա՛ր զծառայ քահա-
նայապետին, եւ 'ի բա՛ց եհան զունկն նր̃: * Պատասխա- 48
նի ետ յս̃՝ եւ ասէ ցնս̃ • իբրեւ 'ի վերայ աւազակի ելէ՛ք
սուսերօք եւ բրօք՝ ունե՛լ զիս: * Հանապազ առ ձեզ էի 49
եւ ուսուցանէի 'ի տաճարին, եւ ո՛չ կալարուք զիս • այլ
զի լցցին գիրք մարգարէիցն: * Յայնժամ թողին զնա 50
աշակերտքն ամենեքին՝ եւ փախեան: * Եւ ոմն երիտա- 51
սարդ զհետ երթայր նր̃՝ արկեալ զիւրեւ կտաւ մի 'ի

մեր-

գեթսեմանի: (32) Ոմանք • 'Ի գեաւղն • կամ, 'ի գեւղն . . .
մինչեւ ես յաղօթս: (36) Ոմանք • Աբբա՛ հայր: (38) Ո-
մանք • Հոգիս յօժար է: (39) Ոմանք • Կաց յաղօթս • ՛ բան
ասաց: (41) Ոմանք • Զի ահա հասեալ է: (43) Ոմանք • Մի ի
յերկոտասանից • եւ ընդ: (44) Ոմանք • Մատնչի՝ եւ ասէ:
(49) Ոմանք • Հանապազ ընդ ձեզ էի:

52 մերկութեան · ունէին զնա երիտասարդքն ։ * Եւ նր՟ թողեալ
53 զկտաւն փախեաւ մերկ 'ի նցնէ ։ * Եւ տարան զյս առ
քահանայապետն կայիափա · եւ գային ը՟ նմա ամ՟ քա_
54 հանայապետքն՝ եւ դպիրք եւ ծերք ։ * Եւ պետրոս եր_
թայր 'ի հեռաստանէ զհետ նր՟ մինչեւ 'ի ներքս իսկ 'ի
գաւիթ քահանայապետին , եւ նստէր ը՟ սպասաւորսն ․
55 եւ ջեռնոյր առ լուսովն ։ * Իսկ քահանայապետքն՝ եւ ա_
մենայն ատեանն՝ խնդրէին հակառակ յսի վկայութի՟ ինչ ․
56 զի սպանանիցեն զնա ․ եւ ոչ գտանէին ։ * զի բզ՟մ սուտ
վկայութի՟ վկայէին զնմանէ , եւ նման միաբանք՝ ոչ էին
57 վկայութիւնքն ։ * Ապա՝ յարուցեալ վկայէին սուտ ըզ_
58 նմանէ , եւ ասէին ։ * Թէ մեք լուաք 'ի դմանէ զի ասէր ․
ես քակեցից զտաճարս զայդ ձեռագործ , եւ զերիս ա_
59 ւուրս շինեցից այլ առանց ձեռագործի ։ * Սակայն եւ
60 այնպէս՝ չէր նման վկայութի՟ նց՟ ։ * Ապա յարուցեալ
քահանայապետն 'ի մէջ՝ հարցանէր զյս՟ եւ ասէր ․ ոչինչ
61 տաս պատասխանի , զինչ դոքա զքէն վկայեն ։ * Եւ նա՝
լուռ եւ ոչ կայր՝ եւ չասէր ինչ պատասխանի ։ Դարձեալ
քահանայապետն հարցանէր զնա կրկին անգամ եւ աս
62 ասէր ․ դու ես քս՟ որդի այ՟ օրհնելոյն ։ * Պատասխանի
ետ յս՟ եւ ասէ ցնա ․ դու ասացեր թէ ես եմ ։ բայց տե_
սանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութե՟ , եւ
63 եկեալ ը՟ ամպս երկնից ։ * Եւ քահանայապետն պատա_
ռեալ վաղվաղակի զպատմուճանն իւր՝ եւ ասէ ։ Զինչ
64 ես պիտոյ են մեզ վկայք ․ * ահա՝ լուայք ամենեքին
զհայհոյութի՟ 'ի բերանոյ դորա , զիարդ թուի ձեզ ։ Եւ
ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է ։
65 * Եւ ոմանք՝ սկսան թքանել ընդ երեսս նր՟ ․ ծածկել ըզ_
դէմս կռփահարել՝ կռփել եւ ասել , մարգարեաց մեզ քս՟ .
ով է այն որ եհարն զքեզ ։ եւ սպասաւորքն ապտակս
66 հանէին նմա ։ * Եւ պետրոս մինչ դեռ էր 'ի խոնարհ 'ի
67 գաւթին , գայ աղախին մի քահանայապետին , * եւ տե_
սանէ զնա զի ջեռնոյր ․ հայեցաւ ը՟ նա՝ եւ ասէ ․ եւ
դու ընդ յսի նազովրեցւոյ էիր ։
68 * Նա՝ ուրացաւ եւ ասէ ․ ոչ ճանաչեմ , եւ ոչ գիտեմ ։ Իսկ
զինչ

---

(53) Ոսկան · Ամ՟ քհնյքն եւ դպ՟ ։ (54) Ա... ոսկանայ [illegible] ·
Երթայր 'ի հեռաստանէ զհետ ։ (54) Ոմանք · 'ի ներքս իսկ 'ի
տրան քհնյպ՟ ․․ եւ ջեռնոյր առ լուսին ։ (55) Ոսկան · Վկայ_
ութիւն ինչ զի չարախօսեսցեն զնա ։ (56) Ոմանք · Զի բզ՟մ
սուտ վկ՟ ։ (61) Ոսկան · Եւ յս՟ լուռ եւ ոչ կայր ։ (61) Ո_
մանք · Հարցանէր ցնա կր՟ ․․․ քս՟ որդի օրհնելոյն ։ (62) Ո_
մանք · Ընդ աջմէ զօրութեն ։ Որ ոսկան յաւելու · զօրութե
այ՟ ։ (63) Ոմանք · Զպատմուճանն իւր ։ (66) Ոմանք · 'ի խո_
նարհ գաւթին ։ (67) Ոմանք · Հայեցաւ ը՟ նա եւ ասէր ։

Digitized by Google

[illegible]
[illegible] 69
[illegible]
[illegible] 70
[illegible]
[illegible]
[illegible] 71
[illegible]
[illegible] 72
[illegible]
[illegible]

ԳԼ. ԺԵ.

[illegible] 1
[illegible]
[illegible]
[illegible] 2
[illegible]
[illegible]
[illegible] 3
[illegible] 4
[illegible]
[illegible] 5
[illegible]
[illegible] 6
[illegible] 7
[illegible]
[illegible] 8
[illegible]
[illegible]
[illegible] 9
[illegible]
[illegible] 10
[illegible] 11
[illegible]
[illegible] 12

(69) [illegible] (71) [illegible] (72) [illegible] (72) [illegible]

ԳԼ. ԺԵ. (1) [illegible] (1) [illegible] (2) [illegible] (6) [illegible] (7) [illegible] (12) [illegible]

և ասէ ցնա. իսկ՝ զի՞նչ կամիք թէ արարից զարքայն
13 հրէից։ * Եւ նոքա դարձեալ աղաղակեցին՝ յաւելեալ
14 'ի բարձրաձայնութիւնս, 'ի խաչ հան զդա։ * Ասէ ցնա
պիղատոս. զի՞նչ ինչ չար արարեալ իցէ դորա։ և նոքա
առաւել ևս աղաղակէին և ասէին, 'ի խաչ հան զդա։
15 * Իսկ պիղատոս՝ կամելով զամբոխն կամեցեալ հաճել զամ-
բոխին, արձակեաց նոցա զբարաբբայն. և զյիսուս հա-
16 րեալ՝ ետ 'ի ձեռս զի 'ի խաչ ելանիցէ։ * Եւ զինուորքն
տարան զնա 'ի ներքս 'ի գաւիթն՝ որ հրապարակն էր.
17 և կոչէին զամենայն զգունդն. * և զգեցուցա-
նեն նմա քղամիդ կարմիր և ծիրանիս. և եդին 'ի գլուխ
18 նորա պսակ արարեալ 'ի փշոց։ * և սկսան ողջոյն տալ
19 նմա՝ և ասել. ողջ եր արքայդ հրէից։ * Եւ ծեծէին
զգլուխն եղեգամբ, և թքանէին ընդ երեսս, և 'ի ծունր
20 իջեալ երկիր պագանէին նմա։ * Եւ իբրև կատակե-
ցին զնա, մերկացուցին զքղամիդն և զծիրանիս. և զգե-
ցեցուցին նմա զիւր հանդերձ. և ածին արտաքս զի
21 'ի խաչ հանցեն զնա։ * Եւ ունէին պատահակ զանցաւորն
կիւրենացի՝ որ ընդ մօտ անցանէր եկեալ յագարակէ.
զհայրն աղեքսանդրի և ռուփոսի, զի բարձցէ զխաչն
22 նորա։ * Եւ ածեն զնա 'ի գողգոթայ տեղին մի, որ
23 թարգմանի՝ տեղի կառափելոյ։ * Եւ տային նմա զգի-
նի զմռնեալ, և նա ոչ առ. և հանին զնա 'ի խաչ։
24 * Եւ բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս
25 'ի վերայ՝ թէ ո՛ զինչ առնուցու։ * Էր՛ր ժամ՝ երրորդ,
26 և հանին զնա 'ի խաչ։ * Եւ էր գիր վնասու նորա գրե-
27 ալ, թէ թագաւոր է հրէից։ * Եւ ընդ նմա հա-
նին 'ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ
28 ահեկէ նորա։ * Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօ-
29 րէնս համարեցաւ։ * Եւ որք անցանէին հայհոյէին
զնա՝ շարժեալ զգլուխս իւրեանց, և ասէին. վահ, որ
30 քակէիր զտաճարն՝ և գերիս աւուրս շինէիր. * փրկեա՛
31 զանձն քո՝ և էջ 'ի խաչէդ։ * Նոյնպէս և քահանայապե-
տք

Կամիք զի արարից զար''։ (14) Յօրինակին պէսէր. Զինչ ինչ չար արարեր։ Այլ ոմանք. Զինչ չար արարեր։ (16) Ոմանք. Որ հրապարակն էր։ (18) Ոմանք. Ողջ լեր արքայդ։ (20) Ոմանք. Մերկացին զքղամիդն ... զիւր հանդերձն .. 'ի խաչ հանիցեն զնա։ (21) Օրինակ մի. Աղեքսանդրու և ռուփեայ։ (23) Ոմանք. Եւ հանին զնա 'ի խաչ։ (24) Ոմանք յաւելուն. Եւ իբրև խաչեցին զնա՝ բաժանեցին։ (24) Ոմանք. Զհանդերձ նորա։ (27) Ոմանք. Եւ մի յահեկէ, նորա։ (28) Ոմանք. Գիրն որ ասէր, թէ ընդ անօրէնսն։ (29) Ոմանք. Շարժէին զգլուխս։ (31) Ոմանք. Զայլսն՝ ասէին .. ոչ կարէ. կամ, ոչ կարէր ապրեցուց''։

պետիցն այպն արարեալ՝ ընդ միմեանս հանդերձ դպրա-
ցօքն՝ եւ ասէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարա-
ցէ ապրեցուցանել. * Քս. արքայն Իէլ. իջցէ այժմ 32
'ի խաչէ՝ այտի, զի տեսցուք եւ հաւատասցուք դմա։
Եւ որ ընդ նմա 'ի խաչն եկեալ էին՝ նախատէին զնա։
* Եւ իբրեւ վեց ժամ եղեւ՝ խաւար կալաւ զամ եր- 33
կիր մինչեւ ցինն ժամն։ * Եւ յիններորդ ժամուն ա- 34
ղաղակեաց յս 'ի ձայն մեծ՝ եւ ասէ. էղի՛ էղի՛ լամա
սաբաքթանի. որ թարգմանի, ա՛ծ իմ, ա՛ծ իմ, ընդէ՞ր
թողեր զիս։ * Եւ ոմանք 'ի նոցանէ՝ որ շուրջն կային 35
զնովաւ՝ իբրեւ լուան, ասէին՝ թէ զեղիա կարդայ։ * Եւ 36
ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով, եւ հա-
րեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, եւ ասէ. թոյլ տուք,
տեսցուք՝ գայ եղիա իջուցանել զդա։ * Եւ յս ար- 37
ձակեաց ձայն մեծ՝ եւ եհան զոգի. * Եւ վարագոյր 38
տաճարին պատառեցաւ յերկուս՝ 'ի վերուստ մինչեւ 'ի
խոնարհ։ * Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր անդ՝ 39
թէ աղաղակեաց եւ եհան զոգի, եւ ասէ. արդարեւ՝ այրս
այս որդի այ էր։ * Էին եւ կանայք որ հայէին 'ի հե- 40
ռաստանէ. յորս էր մարիամ մագդաղենացի, եւ մա-
րիամ յակոբայ փոքրկան եւ յովսեայ մայրն. եւ սաղով-
մէ։ * որք յորժամ էրն 'ի գալիլեա՝ զհետ շրջէին 41
նորա, եւ պաշտէին զնա. եւ այլ բազում կանայք՝ որք
ընդ նմա խակ եկեալ էին յեմ։
ԽԲ * Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր՝ որ շա- 42
բաթն մտանէր, * եկեալ յովսէփ որ յարիմաթեայն 43
էր. այր պարկեշտ, նախարար, որ եւ ինքն խակ ակն ու-
նէր արքայութեան այ. համարձակեցաւ եմուտ առ պե-
ղատոս, եւ խնդրեաց զմարմինն յի։ * Եւ պեղատոս 44
զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ։ եւ կոչեցեալ առ
ինքն զհարիւրապետն, եհարց զնա եւ ասէ, թէ արդա-
րեւ՝ այնչափ վաղ մեռաւ։ * Եւ իբրեւ տեղեկացաւ 'ի հա- 45
րիւրապետէն, շնորհեաց զմարմինն յովսեփայ։
* Եւ յովսէփ գնեաց կտաւ, եւ իջուցեալ զնա՝ պա- 46
տեաց

---

(33) Բզմ. Յինն ժամ։ (34) Ոմանք. Էղի էղի՝ լամայ՝ սա-
բաքթանի։ (34) Յօրինակին. Ղամասա՝ բաքթանի։ (35) Ո-
մանք. Ասէին՝ զեղիա կար"։ (36) Ուղղ. Թոյլ տուք,
տեսցուք"։ (37) Ոմանք. Եհան զոգին։ (38) Ոմանք. Մինչ 'ի
խոնարհ։ (39) Ոմանք. Թէ աղաղակեաց.. զոգի, ա-
սէ։ (40) Ոմանք. Էին կանայք.. յակովբայ փոքրկանն։
(41) Բզմ. Որ ընդ նմա խակ եկեալ էին։ (42) Բզմ. Որ
'ի շաբաթն. կամ, 'ի շաբաթ մտա"։ (43) Բզմ. Արքայու-
թեան այ։ (46) Ուղղ. Որ էր փորեալ։ (46) Օրինակ ձ ընդ-
ուղղոյ. Վէմ մի 'ի դուռն գե"։

Digitized by Google

ոխեաց կտաւովն, և եդ 'ի գերեզմանի՝ զոր էր փորեալ
'ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի դուռն գերեզմանին։
47 * Իսկ Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակովբայ
և Յովսեայ՝ տեսին զտեղին ուր եդաւ։

ԳԼ. ԺԶ.

1 Իբրև էանց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի՝
և Մարիամ Յակովբայ՝ և Սողոմէ՝ գնեցին պատրաս-
2 տեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա։ * Եւ ընդ
առաւօտս միաշաբաթւոյն գան 'ի գերեզմանն ընդ ա-
3 րևագալն, * և ասէին ցմիմեանս. ո՞վ թաւալեցուսցէ
4 մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին։ * Եւ հայեցեալ տե-
սին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն.
5 քանզի էր մեծ յոյժ։ * Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզ-
մանն, տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ը աջմէ կող-
մանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրե-
6 ցան։ * Եւ նա ասէ ցնա. մի՛ երկնչիք. զյս խնդրէք զ-
Նազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւա-
7 սիկ տեղին ուր եդին զնա։ * Այլ երթայք ասացէք
աշակերտացն նր և Պետրոսի, եթէ ահա՛ յառաջագոյն
երթայ քան զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝
8 որպէս ասաց ձեզ։ * Եւ իբրև լուան՝ ելին և փախեան
'ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ու-
մեք ինչ ասացին, զի երկնչէին։

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ։

Աւե

Գլ. ԺԶ. (1) Ոմանք. Եկեսցեն և օծցեն։ (2) Բազմ. Միա-
շաբաթուն։ (3) Ոմանք. Ո՛ թաւալեցուսցէ։ (4) Ոմանք.
Թաւալեցուցել էր վէմն։ (7) Ոմանք. Յաշակերտացն նր։
(8) Ոմանք յաւելուն հնագոյն օրինակաց յայս բան՝ Զի երկն-
չէին. աւարտի աւետարանս Մարկոսի, ապա ընդ դնելով վախ-
ճանն, Կատարեցաւ աւետարան ըստ Մարկոսի. որք և
խառնալոյն զանց առնեն զյաւելուածս՝ Յարուցեալ յն, և այլն։ Իսկ
օրինակս մեր՝ համաձայն բազմաց, դրոշմեալ ունին զվախճանականն՝
Աւետարան ըստ Մարկոսի. և անդրէն նորոգ վերնագիր կար-
գեալ յաւելուածին, իբր յաւելուածոյ, Աւետարան ըստ Մար-
կոսի. այնուհետև սկսանի՝ Յարուցեալ յն. և այլն։ Որում և մեք
համաձայնեալ եդաք ըստ այնմ նշանակի։ Որոյ ոմանք միայն ըստ
յօրինակացն առանց ինչ անջրպետութեան շարունակեալ դնեն
զնոյն ընդ վերնոյն։

Digitized by Google

Աւետարան ըստ Մարկոսի։

* Յարուցեալ յո՟, յառաւօտուն առաջին միաշաբա- 9
թուն՝ երեւեցաւ մարիամու մագդաղենացւոյ, յոր-
մէ հանեալ էր զեւթն դեւն։ * Եւ նա՝ երթեալ պատ- 10
մեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչ դեռ լային
եւ սգային։ * Նոքա իբրեւ լուան թէ կենդանի է՝ եւ 11
երեւեցաւ նմա, ոչ հաւատացին։ * Յետոյ՝ երեւեցաւ 12
այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան։
* Նոքա չոգան պատմեցին այլոց, եւ ոչ նք՟ հաւատացին։ 13
* Յետոյ՝ մինչդեռ բազմեալ էին մետասանքն, երեւեցաւ 14
նց՟, եւ թշնամանեաց զանհաւատութիւն նց՟, եւ զխստասր-
տութիւն. զի որ երեւեցաւ նց՟ յարուցեալ՝ ի մեռելոց, եւ նք՟
ոչ հաւատացին։ * Եւ ասէ ցնս՟. երթայք յաշխարհ
ամ՟, եւ քարոզեցէք զաւետարանն ամ՟ արարածոց։ * Որ 15
հաւատայ եւ մկրտիցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ 16
դատապարտեսցի։ * Նշանք այնոցիկ՝ որ հաւատասցեն,
երթիցեն զհետ այսոցիկ։ յանուն իմ՝ դեւս հանիցեն. 17
լեզուս խօսեսցին. * ի ձեռս իւրեանց՝ օձս բարձցեն.
եւ եթէ մահացու ինչ դեղ արբցեն, նց՟ ինչ ոչ վնասես- 18
ցէ. ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ եւ բժշկեսցին։
* Եւ իսկ տր՟ յս՟ յետ խօսելոյն ընդ նս՟՝ համբարձաւ
յերկինս, եւ նստաւ ընդ աջմէ հօր։ * Եւ նք՟ ելեալ՝ 19
քարոզէին ըն՟ ամ՟ երկիր՝ տն՟ գործակցութեամբ. եւ զբանն 20
հաստատէին ամ՟ նշանօք՝ որ երթայր զհետ նց՟։

ՍԿԻԶ.

(9) Յոյն. Զեօթն դեւսն։ (10) Յոմանս. Սգային եւ լայ-
ին։ (11) Յոմանս. Եւ երեւեցաւ նոցա, ոչ հաւ՟։ (12) Յո-
մանս. Երեւեցաւ եւ այլով կեր՟։ (13) Յոմանս. Եւ ոչ նց՟
հաւատացին։ (14) Յոմանս. Եւ ոչ նք՟ հաւատացին։ (15) Յո-
յն յաւելու. Զաւետարանն արքայութեան ամ՟ աշ՟։ (16) Յո-
յն. Որ հաւատասցէ եւ մկրտեսցի.. ոչն հաւատասցէ
դատ՟։ (17) Յոմանս. Նշանք այսոցիկ, կամ, այնոցիկ որ
հաւատան, երթիցեն զհետ այնոցիկ։ (18) Յոմանս. Օձս
բարձցեն, նց՟ ոչինչ մեղիցեն, եւ եթէ մահացու դեղ
ինչ արբցեն. մի վնասեսցէ նց՟։ (20) Յոմանս. Գործակ-
ցութեամբ. զբանն հաստատեցին ամ՟ նշանօք որ երթային
զհետ նոցա։

* Յոմանս առաջէն գրոշմին վախճանականն. Աւետարան ըստ
մարկոսի. կամ, Կատարեցաւ գլուխք աւետարանին որ ըստ
մարկոսի։ Իսկ օրինակս մեր առանձինն ի վախճանի նշանակէ՝
Համբարձմանն կարգաւ զվերջագրեալս։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին որ ըստ Ղուկայ։

	Ղուկ.	Յովհ.	Մատթ.	Մարկ.
Վասն աշխարհագրին	Ա .	. .	. .	. .
Վասն բազմութեանց հովուացն . .	Բ .	. .	. .	. .
Վասն Սիմէոնի	Գ .	. .	. .	. .
Վասն մարգարէին Աննայի	Դ .	. .	. .	. .
Վասն լինելոյ բանին Այ առ Յովհաննէս .	Ե .	. .	Գ .	. .
Վասն՝ որոց հարցանէին զՅովհաննէս . .	Զ .	. .	. .	. .
Վասն փորձութեանց Քրիստոսի	Է .	. .	. .	. .
Վասն՝ որ ունէր զհոգին դիւական . .	Ը .	. .	. .	. .
Վասն զոքանչին Պետրոսի	Թ .	. .	Ը .	Բ .
Վասն՝ որոց բժշկեցին 'ի պէսպէս հիւանդութեանց	Ժ .	. .	Թ .	Գ .
Վասն որսոյ ձկանցն	ԺԱ	. .	. .	. .
Վասն բորոտին	ԺԲ	. .	Զ .	Դ .
Վասն անդամալուծին	ԺԳ	ԺԳ	ԺԳ	Ե .
Վասն Ղեւեայ մաքսաւորին	ԺԴ	. .	ԺԴ	Զ .
Վասն գօսացեալ ձեռինն	ԺԵ	. .	ԻԱ	Է .
Վասն առաքելոցն համարոյ	ԺԶ	. .	ԺԹ	Ը .
Վասն երանութեանցն	ԺԷ	. .	Ե .	. .
Վասն հարիւրապետին	ԺԸ	. .	Է .	. .
Վասն որդւոյ այրւոյն	ԺԹ	. .	. .	. .
Վասն՝ որոց առաքեցանն 'ի Յովհաննէ .	Ի .	. .	Ի .	. .
Վասն օծանելոյ զՏէր մեռոնաւն . . .	ԻԱ	ԻԴ	ԿԲ	ԻԴ
Վասն առակին սերմանողին	ԻԲ	. .	ԻԴ	Թ .
Վասն սաստելոյ ջրոյն	ԻԳ	. .	ԺԱ	Ժ .
Վասն՝ որ ունէր զլէգէոնն	ԻԴ	. .	ԺԲ	ԺԱ
Վասն դստեր ժողովրդապետին . . .	ԻԵ	. .	ԺԵ	ԺԲ
Վասն [illegible] կնոջն	ԻԶ	. .	ԺԶ	ԺԴ
Վասն առաքելոյ զերկոտասանսն . . .	ԻԷ	. .	ԺԹ	ԺԴ
Վասն հինգ հացիցն, և երկուց ձկանցն .	ԻԸ	ԺԵ	ԻԶ	ԺԶ
Վասն [illegible] հարցանելոյ . . .	ԻԹ	. .	ԼԴ	ԻԴ
Վասն այլակերպութեանն Յի	Լ .	. .	ԼԴ	ԻԵ
Վասն լուսնահարին	ԼԱ	. .	ԼԵ	ԻԶ
Վասն խորհելոյն՝ թէ ով մեծ իցէ . .	ԼԲ	. .	ԼԷ	ԻԷ
Վասն [illegible] հրաման զինի երկնաւ . .	ԼԳ	. .	Ժ .	. .
Վասն երեւեցուցանելոյ զեւթանասունսն	ԼԴ	. .	. .	. .
Վասն հարցանելոյ օրինականին . . .	ԼԵ	. .	. .	. .
Վասն անկելոյն 'ի ձեռս աւազակաց . .	ԼԶ	. .	. .	. .

Վասն

Digitized by Google

	Ղուկ.	Յովհ.	Մատ.	Մարկ.
Վասն Մարիամու և Մարթայի	ԼԷ			
Վասն յաղօթս կալոյն	ԼԸ			
Վասն խուլ դիւին	ԼԹ		ԻԲ	
Վասն՝ որ կինն ձայն եբարձ 'ի ժողովրդեանն	Խ			
Վասն նշան խնդրելոյն	ԽԱ		ԻԳ	
Վասն՝ որ ճաշ փարիսեցին կոչեաց զՏէրն	ԽԲ			
Վասն վա՛յ տալոյ օրինականացն	ԽԳ		ԾԳ	
Վասն խմորոյ փարիսեցւոցն	ԽԴ		ԼԲ	ԻԲ
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն	ԽԵ			
Վասն պտղաբերելոյ անդոյ մեծատանն	ԽԶ			
Վասն գալիլեացւոցն՝ և որոց 'ի սելովամ. և վասն թզենւոյն	ԽԷ			
Վասն կորկամեալ կնոջն այսահարի	ԽԸ			
Վասն առակացն	ԽԹ		ԻԳ	
Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն	Ծ			
Վասն՝ որք ասացին ցՏր̄ զհերովդէէ	ԾԱ			
Վասն՝ որ ջրգողեալ էր	ԾԲ			
Վասն՝ որք ընտրէին զնախագահսն	ԾԳ			
Վասն կոչելոյն յընթրիսն	ԾԴ		ԾԱ	
Վասն շինելոյ աշտարակին	ԾԵ			
Վասն հարիւր ոչխարացն	ԾԶ		ԼԸ	
Վասն գնացելոյն յաշխարհ հեռի անառակին	ԾԷ			
Վասն անիրաւ տնտեսին	ԾԸ			
Վասն մեծատանն, և ղազարու	ԾԹ			
Վասն տասն բորոտացն	Կ			
Վասն անիրաւ դատաւորին	ԿԱ			
Վասն փարիսեցւոյն, և մաքսաւորին	ԿԲ			
Վասն հարցանելոյ մեծատանն Տ̄ր	ԿԳ		ԽԱ	ԻԹ
Վասն կուրին	ԿԴ		ԽԴ	ԼԱ
Վասն զաքէոսի	ԿԵ			
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ	ԿԶ			
Վասն առնլոյ զքանքար մնասն	ԿԷ		Կ	
Վասն յաւանակին	ԿԸ	ԻԲ	ԽԵ	ԼԲ
Վասն հարցանելոյ քահանայիցն զՏէր	ԿԹ		ԽԸ	ԼԵ
Վասն առակի այգւոյն	Հ		Ծ	ԼԶ
Վասն դահեկանին	ՀԱ		ԾԲ	ԼԷ
Վասն սադուկեցւոցն	ՀԲ		ԾԴ	ԼԸ
Վասն՝ թէ զիա՞րդ է որդի դաւթի Ք̄ս	ՀԳ		ԾԵ	Խ
Վասն երկու լումայի այրւոյն	ՀԴ			ԽԱ
Վասն հարցման կատարածին	ՀԵ		ԾԷ	ԽԲ
Վասն զատկին	ՀԶ		ԿԴ	ԽԵ
Վասն վիճելոյն՝ թէ ո՞վ մեծ իցէ	ՀԷ		ԼԷ	ԻԷ
Վասն խնդրելոյն սատանայի	ՀԸ			

Digitized by Google

	գլուխ	յովհ	մատթ	մարկ
Վասն նախադասութեանց հերովդէի զօրին . .	ղթ	. .	. .	. .
Վասն կոչելոյ կանանցն	ճ .	. .	. .	. .
Վասն աղաղակելոյ առաքելին . . .	ճա	. .	. .	. .
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն .	ճբ	լէ	կը	խը
Վասն կղէովպեանցն	ճգ	. .	. .	. .
Վասն համբառնալոյն քի	ճդ	. .	. .	. .

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ։

Աւետարանս՝ որ ըստ Ղուկասու գրեալ է։ Նոյն ինքն Ղուկաս՝ աշակերտ էր Պետրոսի, և ձեռնադրեցաւ ընթացակից պաւ-ղոսի, և վկայեցաւ ՚ի նմանէ։ սա գրեաց զաւետարանս զայս։ Սկիզբն առնէ ՚ի ծննդենէն յովհաննու, և զոր ըստ նմին. պատ-մէ՛ և զմարմնանալ Քրիստոսին, ազգաբանէ առնէ՝ և ելանէ ՚ի յով-սեփայ ՚ի դաւիթ, և ՚ի դաւթայ մինչև յադամ։ Պատմէ սա՝ և զմկրտութիւն յովհաննու. և ընթեռնուլ ՚ի [illegible] [illegible] ՚ի տա-[illegible]. և զընտրութիւն աշակերտացն, և այլ եւթանասունս. [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible]. և զխորհուրդ մար-[illegible], և զհրաշափառն՝ որ մարմնեցաւ [illegible] [illegible], [illegible] խաչեցաւ մարմնով. զի զիննորդն [illegible] զհանդերձս նոր. և որք խաչեցան յերկուց աւազակացն մին՝ ապաշխարելով խոստո-վանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ ՚ի գերեզման, և յա-րեաւ յերրորդ աւուրն. և յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տե-սանելով հրեշտակացն։

Ղուկաս՝ Անտիոքացի բժիշկ գոլով. սա՝ աշակերտեցաւ Քրիստոսի. և համարեալ կոչեցաւ ՚ի թիւս եւթանասնիցն։ Իսկ յետոյ՝ աշա-կերտեցաւ պաւղոսի. վասն որոյ սա՝ գոլով նորա յաւետարա-նին։ Սա՝ հրամանաւ պաւղոսի գրեաց զաւետարանս իւր յա-[illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible]՝ զինի ծէ ամի համբառնալոյ տեառ-նն։ Ունի գլուխս · [illegible]։ Վկայութիւնս · ժէ։ Տունս · [illegible]։

Ղուկաս՝ Յարութիւն։

Digitized by Google

վախճան մի լիցի։ * Եւ ասէ մարիամ ցհրեշտակն. զիա– 34
մրդ. լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։ * Պա– 35
տասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա. Հոգի՛ ս՛ր եկես–
ցէ ՚ի քեզ, և զօրութիւն բարձրելոյ հովանի լիցի ՚ի վերայ
քո. քանզի և որ ծնանելոցն է ՚ի քէն՝ ս՛բ է, և որդի
ա՛յ կոչեսցի։ * Եւ ահա՝ եղիսաբեթ ազգական քո, և 36
նա յղի է ՚ի ծերութեան իւրում. և այս՝ վեցերորդ ամիս
է ն՛ր՝ որ ամուլն կոչեցեալ էր։ * զի ոչ տկարասցի առ 37
ա՛յ ամենայն բան։ * Եւ ասէ մարիամ. ահաւասիկ՝ 38
կամ աղախին տ՛ն, եղիցի ինձ ըստ բանի քում։ և գնաց
՚ի նմանէ հրեշտակն։

* Յարուցեալ մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ՚ի 39
լեռնակողմն փութապէս ՚ի քաղաքն յուդայ։ * և ե– 40
մուտ ՚ի տուն զաքարիայ, և ետ ողջոյն եղիսաբեթի։
* Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն մարիամու եղիսաբեթ, 41
խաղաց մանուկն յորովայնի ն՛ր։ Եւ լցաւ եղիսաբեթ
հոգւով սրբով. * և ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ա– 42
սէ. օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ
որովայնի քո։ * և ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր 43
տ՛ն իմոյ առ իս։ * Զի ահաւասիկ՝ իբրև եղև ձայն ող– 44
ջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յո–
րովայնի իմում։ * և երանի որ հաւատայցէ՝ եթէ ե– 45
ղիցի կատարումն ասացելոցս նմա ՚ի տ՛նէ։ * Եւ ասէր 46
մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զտ՛ր. * և ցնծացաւ 47
հոգի իմ յա՛ծ փրկիչ իմ։ * զի հայեցաւ ՚ի խոնարհու– 48
թիւն աղախնոյ իւրոյ։ Զի ահա՝ յայսմ հետէ երանեսցեն
ինձ ա՛մ ազգք։ * զի արար ինձ մեծամեծս հզօրն, և ս՛ր 49
է անուն ն՛ր։ * և ողորմութիւն ն՛ր ազգաց յազգս երկիւ– 50
ղածաց իւրոց։ * Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցր– 51
ուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց։ * քա– 52
կեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս։
* Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձա– 53
կեաց ունայնս։ * Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրում, 54
յիշել զողորմութիւն։ * որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ աբ– 55
րահամու և զաւակի նորա ՚ի յաւիտեան։ * Եկաց մա– 56
րիամ առ նմա իբրև ամիսս երիս ; և դարձաւ ՚ի տուն
իւր։

---

(35) Ոմանք. Հոգին ս՛ր եկեսցէ։ (35) Յոմանս պակսի. Ծնա–
նելոցն է ՚ի քէն սուրբ է։ (36) Ոմանք. Կոչեցեալն է.
զի։ (37) Ոմանք. Զի ոչ տկարանայ առ ՚ի յա՛յ։ (39) Բզմք.
՚ի լեռնակողմն։ (45) Ոմանք. Որ հաւատասցէ.. ասա–
ցելոց նմա։ (46) Ոմանք. Եւ ասէ մարիամ։ (48) Ոմանք.
Երանիցեն ինձ։ (52) Ոսկան. Եւ քակեաց։ (54) Ոմանք.
Ծառայի իւրոյ. յիշելով զո՛։ Ուր ոսկան. Զողորմութիւն
իւր։ (55) Ոմանք. Նորա յաւիտեան։

Digitized by Google

57 իւր: * Եւ եղիսաբեթի լցաւ ժամանակ ծնանելոյ,
58 եւ ծնաւ որդի: * Եւ լուան որ շուրջ զնովաւ էին, եւ
ազգատոհմ նր, զի մեծ արար տր ողորմութի իւր ընդ
59 նմա. եւ խնդային ընդ նմա: * Եւ եղեւ յաւուրն ութե-
րորդի եկին թլփատել զմանուկն, եւ կոչէին զնա յա-
60 նուն հօր իւրոյ զաքարիա: * Պատասխանի ետ մայր նր՝
61 եւ ասէ. ոչ, այլ կոչեսցի յովհաննէս: * Եւ ասեն ցնա.
քանզի ոչ ոք է յազգի քում՝ որոյ կոչի անուն յովհան-
62 նէս: * Ակն արկեալ հօրն նորա՝ թէ զի՞նչ կամիցի կո-
63 չել զնա: * Եւ խնդրեաց տախտակ՝ գրեաց եւ ասէ.
յովհաննէս է անուն դորա: եւ զարմացան ամենեքին:
64 * Եւ բացաւ բերան նր վաղվաղակի՝ եւ լեզու նր, եւ
65 խօսէր՝ եւ օրհնէր զած: * Եւ եղեւ ահ ՚ի վերայ ամե-
նեցուն որ լսէին զայս, եւ որ շուրջ բնակեալն էին զնո-
քօք: եւ ընդ ամ լեռնակողմն հրէաստանի, պատմէին
66 ամ բանքս այսոքիկ: * Եւ եդին ամենեքեան որ լսէին՝
՚ի սիրտս իւրեանց՝ եւ ասեն. զի՞նչ լինիցի մանուկս
67 այս: եւ ձեռն տն էր ընդ նմա: * Եւ զաքարիա հայր նր
68 լցաւ հոգւով սրբով, մարգարէացաւ եւ ասէ: * Օրհ-
նեալ տր ած իէլի, զի յայց ել մեզ՝ եւ արար փրկու-
69 թի ժողովրդեան իւրում: * Եւ յարոյց եղջիւր փրկու-
70 թեան մեզ ՚ի տանն դաւթի ծառայի իւրոյ. * Որպէս խօ-
սեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէիւքն նր
71 էին: * Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, եւ ՚ի ձեռաց ամ
72 ատելեաց մերոց: * Առնել ողորմութիւն ընդ հարս մեր,
73 եւ յիշել զուխտն իւր սբ: * Զերդումն զոր երդուաւ
74 աբրահամու հօր մերում, տալ մեզ * առանց երկիւ-
75 ղի, ՚ի ձեռաց թշնամեաց փրկեալս: Պաշտել զնա * սրբու-
թեամբ եւ արդարութեամբ առաջի նր՝ զամ աւուրս կենաց
76 մերոց: * Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյ կո-
չեսցիս. զի երթիցես առաջի երեսաց տն՝ պատրաստ-
77 ել զճանապարհս նր: * Տալ գիտութի փրկութեան ժո-
78 ղովրդեան նր, ՚ի թողութի մեղաց նց: * Վասն գթու-
թեանց ողորմութեան այ մերոյ, որովք այց արասցէ մեզ
արե-

---

(57) Օրինակ մ. Լցան աւուրք ծնանելոյ: (58) Ոմանք. Զողորմութի իւր. եւ խնդային ընդ նմ: (61) Ոմանք. Որոյ անուն կոչի յով": (65) Ոմանք. Բնակեալ էին... լեռ-նակողմն հր": (66) Ոմանք. Որ լսէինն.. եւ ասէին զի՞նչ: (68) Ոմանք. Ժողովրդեան իւրոյ: (69) Օրինակ մ. Մեզ ՚ի տանն դաւթի: (72) Ոմանք. Ընդ հարս մեր: (73) Ոմանք. Զերդումն զոր... թշնամեաց մերոց փրկ": (76) Ոմանք. Բարձրելոյն կո".. առաջի տն: (77) Ոմանք. Տալ գիտ-կութի ժո".. ՚ի թողութի մեղաց մերոց: (78) Ողորմութ-եան այ մերոյ: (78) Ոմանք. Այց արար մեզ:

Digitized by Google

'արեգական՝ 'ի բարձանց։ * Երեւել որոց 'ի խաւարի և 79
'ի ստուերս մահու նստէին. ուղղել զոտս մեր 'ի ճա-
նապարհս խաղաղութեան։ * Եւ մանուկն աճէր և զօ- 80
րանայր հոգւով. և էր յանապատս մինչև յօր երեւե-
լոյ նորա Իսրայէլի։

ԳԼ. Բ.

Ա Եւ եղեւ ընդ աւուրսն յայնոսիկ ել հրաման յաւ- 1
գոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամ
տիեզերս։ * Այս՝ առաջին աշխարհագիր եղեւ 'ի դա- 2
տաւորութեան Ասորւոց՝ Կիւրենեայ։ * Եւ երթային ա- 3
մենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քա-
ղաքի։ * Ել և Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի քաղաքէ Նազարե- 4
թէ 'ի Հրէաստան, 'ի քաղաքն Դաւթի, որ կոչի Բեթ-
ղեհէմ. վասն լինելոյ նորա 'ի տանէ և յազգէ Դաւթի,
* մտանել յաշխարհագիր Մարեմաւ հանդերձ զոր խօ- 5
սեցեալն էր նմա, և էր յղի։ * Եւ եղեւ 'ի հասանելն նց 6
անդր, լցան աւուրք ծննդեանն նր։ * Եւ ծնաւ զորդին 7
իւր զանդրանիկ, և պատեաց 'ի խանձարուրս, և եդ
զնա 'ի մսուր. զի ոչ գոյր նց տեղի յիջեւանին։
Բ * Եւ հովիւք էին 'ի նմին գաւառի բացօթեայք, 8
որ պահէին զպահպանութիւն գիշերոյ հօտից իւրեանց։
* Եւ հրեշտակ Տն երեւեցաւ նց, և փառք Տն ծագե- 9
ցին առ նս. և երկեան՝ երկիւղ մեծ։ * Եւ ասէ ցնս 10
հրեշտակն. մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ
ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամ ժողովրդեանն.
* զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է՝ օծեալ Տր. 'ի քա- 11
ղաքի Դաւթի։ * Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մա- 12
նուկ պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր։
* Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ 13
բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱծ՝ և
ասէին. * Փառք 'ի բարձունս այ, և յերկիր խաղա- 14
ղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն. * Եւ եղեւ իբրեւ վե- 15

րաց

---

(79) Ոմանք. 'Ի ճանապարհ խաղաղու"։ (80) Ոմանք. Յանա-
պատս.. երեւելոյն նորա Իլի։

Գլ. Բ. (1) Ոմանք. Աշխարհագիր առ"։ (2) Ոմանք. Կիւ-
րենեայ։ (5) Ոմանք. Մտանել յաշխարհագիրն։ (5) Ոսկան.
Որ խօսեցեալ էր նմա։ (6) Ոմանք. Նոցա անդ, լցան։
(7) Ոմանք. Եւ պատեաց զնա 'ի . . . յիջեւանին։ Ուր ոս-
կան. Տեղի իջեւանի։ (8) Օրինակ մի ընդ ոսկանայ. Բացօ-
թեայք։ և այլ. բացօթեայքք։ և այլ. բացօթեայք։ (8) Ո-
մանք. Գիշերուոյ հօ"։ (9) Ոմանք. Յերկիւղ մեծ։ (10) Օ-
րինակ մի ընդ ոսկանայ. Զուրախութիւն մեծ։ (15) Ոմանք.
Մինչև 'ի Բեթղեհեմ, և տեսցուք զինչ է նշանս այս,

Digitized by Google

բարձան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս
հովիւքն. Եկա՛յք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ, և տես-
ցո՛ւք զինչ է բանս այս որ եղև. զոր Տր եցոյց մեզ:
16 * Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅով-
17 սէփ, և զմանուկն եդեալ 'ի մսուր: * Եւ ծանուցին վս
18 բանին՝ որ ասացաւ նց զմանկանէն: * Եւ ամենեքին
որ լսէին՝ զարմանային վս բանիցն՝ զոր խօսեցան ընդ
19 նս հովիւքն: * Եւ Մարիամ զամ զբանս զայսոսիկ պա-
20 հէր, և խելամուտ լինէր 'ի սրտի իւրում: * Եւ դար-
ձան հովիւքն՝ փառաւո՛ր առնէին և օրհնէին զԱծ, վս
21 ամի զոր լուան և տեսին, որպ պատմեցաւ նց: * Եւ
իբրև լցան աւուրքն ութ թլփատել զնա, և կոչեցաւ
անուն նր Յս. որ կոչեցեալ էր 'ի հրեշտակէն, մինչև
22 յղացեալ էր զնա յորովայնի: * Եւ իբրև լցան աւուրք
սրբութե նց ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա յԵմ
23 յանդիման առնել Տն: * որպ և գրեալ է յօրէնս Տն,
թէ ամ արու որ բանայցէ զարգանդ՝ սբ Տն կոչեսցի:
24 * Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս Տն,
զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց:
25 * Եւ ահա՝ էր այր մի յԵմ, որոյ անուն էր Սիմէոն. Գ
և էր այրն այն արդար և երկիւղած, և ակն ունէր
26 մխիթարութեանն Իսրլի, և հոգի սբ՝ էր 'ի նմա: * Եւ
էր նր հրաման առեալ 'ի հոգւոյն սբյ՝ մի տեսանել
27 զմահ, մինչև տեսցէ զօծեալն Տն: * Եւ եկն հոգւովն
'ի տաճարն: Եւ իբրև ածին ծնօղքն զմանուկն Յս.
28 առնել նց ըստ սովորութե օրինացն 'ի վերայ նր. * Եւ
նա՝ ա՛ռ ընկալաւ զնա 'ի գիրկս իւր, և օրհնեաց զԱծ,
29 և ասէ. * Արդ՝ արձակես զծառայս քո Տր ըստ բա-
30 նի քում 'ի խաղաղութի. * զի տեսին աչք իմ զփրկու-
31 թիւն քո. * զոր պատրաստեցեր առաջի ամ ժողո-
32 վրդոց: * Լոյս 'ի յայտնութի հեթանոսաց, և փառս
33 ժողովրդեան քում Իղի: * Եւ էին հայրն և մայր նր
զարմացեալ 'ի վերայ բանիցն, որ խօսէին զնմանէ:
34 * Եւ օրհնեաց զնս Սիմէոն, և ասէ ցՄարիամ մայրն
նորա. ահա սա կայ՝ 'ի գլորումն և 'ի կանգնումն
բազ-

զոր Տր և'': (20) Ոմանք. Զոր լուանն և տես'': (21) Ոմանք. Որ կոչեցեալն էր .. զնա յորովայնէ: (22) Ոսկան. Աւուրք սրբութե նր: (24) Ոմանք. Ըստ ասացելոցն յօրէնս: (25) Ոմանք. Ահա այր մի էր յԵմ, որոյ անուանն էր Սիմէոն: (28) Ոմանք. Առընկալաւ զնա 'ի: (29) Ոմանք հարցական ոճով այսպէս ունին զբանս. Արդ արձակես զծառայս քո: Ոսկ օրինակ մ. Արդ արձակեա՛ զծա'': (32) Ոմանք. Լոյս յայտնութե.. և փառք ժողո'': (33) Ոմանք. Հայրը և մայրն նր .. զոր խօսէին զնմանէ:

Digitized by Google

բազմաց 'ի մէջ Իլի, և 'ի նշան հակառակութեան : * Եւ ընդ 35
քո իսկ անձն անցցէ սուր. զի յայտնեսցին 'ի բա-
զմաց սրտից խորհուրդք :
Դ. * Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուէլի յազ- 36
գէ Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք.
կեցեալ ընդ առն ամս եւթն 'ի կուսութենէ իւրմէ : * և 37
էր՝ այրի ամաց իբրև ութսուն և չորից. որ ոչ մեկ-
նէր 'ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր
զցայգ և զցերեկ : * Եւ սա՝ 'ի նմին ժամու յարու- 38
ցեալ, գոհանայր զՏէ, և խօսէր զնմանէ ընդ ամե-
նեսին՝ որ ակն ունէին փրկութեան Եմի : * Եւ իբրև 39
կատարեցին զամ ըստ օրինացն Տն, դարձան անդրէն
'ի Գալիլեա 'ի քաղաքն իւրեանց Նազարեթ : * Եւ ման- 40
կուկն աճէր և զօրանայր լի իմաստութբ. և շնորհք
այ էին 'ի վերայ նր : * Եւ երթային ծնօղքն նր ամի՝ 41
ամի՝ յԵմ 'ի տօն զատկին : * Եւ իբրև եղեն նր ամք 42
երկոտասան, ելանել նց յԵմ ըստ սովորութե տօնին,
* և կատարել զաւուրսն՝ և դառնալ անդրէն, մնաց 43
յս մանուկն յԵմ. և ոչ գիտացին ծնօղքն նր : * կար- 44
ծէին զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրև
աւուր միոյ ճանապարհ, և խնդրէին զնա ը դրացիս
և ընդ ծանօթս : * և իբրև ոչ գտին, դարձան անդ- 45
րէն յԵմ խնդրել զնա : * Եւ եղև յետ երից աւուրց, 46
գտին զնա 'ի տաճարին զի նստէր ընդ վարդապետսն
լսէր 'ի նոցանէ՝ և հարցանէր զնոսա : Զարմանային
ամենեքեան որ լսէին 'ի նմանէ՝ ընդ իմաստութիւն և
ընդ պատասխանիս նր : * և իբրև տեսին զնա՝ ապշե- 47
ցան : Եւ ասէ ցնա մայրն իւր. որդեակ՝ զի՞նչ գործ
գործեցեր դու ը մեզ. ահաւասիկ հայր քո՝ և ես՝ աշ-
խատեալք՝ խնդրեաք զքեզ : * Եւ ասէ ցնս. զի՞ խնդ- 48
րէիք զիս ոչ գիտէիք եթէ 'ի տան հօր իմոյ պարտ է
ինձ լինել : * Եւ նք՝ ոչ իմացան զբանն զոր խօսե- 49
ցաւ ընդ նս : * Եւ էջ ընդ նս, և եկն 'ի Նազարեթ. 50
և էր նց հնազանդ : և մայրն նր պահէր զամ զբանսն
'ի սրտի իւրում : * Եւ յս զարգանայր իմաստութբ և 51
հասակաւ՝ և շնորհօք յայ և 'ի մարդկանէ :

Գ Լ.

---

(35) Ոմանք. Անձնդ անցցէ . . յայտնեսցին բազմ սրտից : (36) Ոմանք. Կացեալ ընդ առն : (37) Ոմանք. իբր ութսուն . . . և զցերեկ : (41) Օրինակ մի ընդ ոսկեայ. 'ի տօնի զատկին : (44) Ոմանք. Աւուր միոյ ճանապարհս : (46) Ոմանք. Որ լսէին 'ի նմէ : (47) Օրինակ մի. Եւ իբրև գտին զնա սք" : (47) Ոմանք. Տառապեալք և խնդ" : (48) Ոմանք. Զի խնդրէք զիս, ոչ գիտէք թէ 'ի տան հօր իմում : (50) Ոմանք. Եւ մայր նր պահէր զամ բանս :

Digitized by Google

ԳԼ. Գ.

1 'Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն տիբերեայ Ե
կայսեր, 'ի դատաւորութեան հրէաստանի պիղատոսի
պոնտացւոյ, և 'ի չորրորդապետութեան գալիլեացւոց հե_
րովդի, և 'ի փիլիպպոսի եղբօր նորա չորրորդապետութեան
'ի տուրացւոց և 'ի տրաքոնացւոց աշխարհին, և 'ի չոր_
2 րորդապետութեան լիւսանեայ աբիլենացւոց . * և 'ի քահանա_
յապետութեան աննայի և կայիափայ . եղև բանն այ 'ի վերայ
3 յովհաննու որդւոյ զաքարիայ յանապատի անդ : * Եւ ե_
կն յամ կողմն յորդանանու, քարոզել մկրտութիւն ա_
4 պաշխարութեան 'ի թողութիւն մեղաց: * Որպէս և գրեալ է
'ի գիրս պատգամաց եսայեայ մարգարէի . ձայն բար_
բառոյ յանապատի . պատրաստեցէք զճանապարհ
5 տն, և ուղիղ արարէք զշաւիղս նր : * ամ ձորք լցցին,
և ամ լերինք և բլուրք` խոնարհեսցին . և եղիցին զառ_
ւածքն 'ի դիւրինս, և առապարքն` 'ի հարթ ճանա_
6 պարհս . * և տեսցէ ամ մարմին զփրկութիւն այ : * Եւ
7 ասէր ցժողովուրդսն եկեալս մկրտել 'ի նմանէ . ծը_
նունդք իժից` ո՞ ցուցց ձեզ փախչել 'ի բարկութենէ որ գա_
8 լոց է : * արարէք այսուհետև պտուղս արժանիս ա_
պաշխարութեան : Եւ մի սկսանիցիք ասել` եթէ ունիմք
հայր զաբրահամ . զի ասեմ ձեզ, եթէ կարօղ է ած
'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս աբրահա_
9 մու : * Բայց ահաւասիկ տապարդ` առ արմինս ծառոց
կայ : ամ ծառ որ ոչ առնէ պտուղ բարւոք, հատա_
նի և 'ի հուր արկանի :

10 * Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին . Իսկ արդ` Զ
11 զի՞նչ գործեսցուք : * Պատասխանի ետ` և ասէ ցնս .
որ ունի երկուս հանդերձս` տացէ զմին այնմ որ ոչ
12 գոյցէ . և որ կայցէ կերակուր` նոյնպէս արասցէ : * Ե_
կին և մաքսաւորք մկրտել, և ասեն ցնա . վարդապետ`
13 զի՞նչ գործեսցուք : * Եւ նա` ասէ ցնս . մի ինչ աւե_
14 լի քան զհրամայեալն ձեզ առնիցէք : * Հարցանէին
զնա

Գլ. Գ. (1) Ոմանք. 'Ի հնգետասաներորդի . . . և փիլիպ_
պոսի եղ" . . և տրաքոնացւոց աշխ" . . լիւսանեայ աբի_
լենացւոց: Այլ բնաւ համօրէն տպագիր օրինակք գրեն զ'ի
տուրացւոց : (2) Ոմանք. Աննայի և կայիա" : (2) Օրինակ
մի յաւելու . Բանն այ յերկնից 'ի վր" : (4) Ոմանք. Զճանապար_
հն , ուղիղ արա": (5) Ոմանք . 'Ի հարթ ճանապարհ : (7) Ո_
մանք . Եւ ասէ ցժողովուրդսն : (8) Ոմանք . Պտուղ արժանի
ա": (11) Ոմանք . Զմին այնմ որ ոչն գոյցէ : (13) Ոմանք .
քան զհրամայեալսն ձեզ : (14) Օրինակ մի . Մի՛ զոք խռո_
վեցէք, և մի զոք զրկէք" :

Digitized by Google

զնա և զինուորքն՝ և ասէին . և մեք զի՞նչ գործեսցուք :
Ասէ ցնոսա . մի՛ զոք խռովեցէք՝ և մի՛ զոք զրպարտեսջիք .
շատ լիցին ձեզ թոշակքն ձեր : * Մինչ ակն ունէր 15
ժողովուրդն , և խորհէին ամենեքեան 'ի սիրտս իւ-
րեանց վասն Յովհաննու՝ միթէ՝ սա՞ իցէ քն : * Պատաս- 16
խանի ետ ամենեցուն՝ և ասէ . ես մկրտեմ զձեզ ջրով .
բայց գայ զօրաւորն քան զիս , զորոյ՝ չեմ բաւական
լուծանել զկօշկաց . նա մկրտեսցէ զձեզ հոգւովն սրբով
և հրով : * Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում՝ սրբել 17
զկալ իւր , և ժողովել զցորեանն 'ի շտեմարանս իւր ,
և զյարդն՝ այրեսցէ անշէջ հրով : * Բազում և այլ ինչ 18
մխիթարութեամբ աւետարանէր ժողովրդեանն : * Բայց 19
Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ 'ի նմանէ վասն
Հերովդիայ կնոջ եղբօր իւրոյ , և վասն ամ չարեացն զոր
գործեաց Հերովդէս , * յաւել և զայն ևս 'ի վերայ ամ . 20
և եդ 'ի բանտի զՅովհաննէս : * Եւ եղև 'ի մկրտել ամ 21
ժողովրդեանն , և Յիսուսի մկրտելոյ՝ և կալ յաղօթս ,
բանալ երկնից , * և իջանել Հոգւոյն սրբոյ մարմնաւոր 22
տեսլեամբ իբրև զաղաւնի 'ի վերայ նր : և գալ ձայն
յերկնից՝ որ ասէր . դու ես որդի իմ սիրելի , ընդ քեզ
հաճեցայ : * Եւ ինքն Յս՝ էր ամաց իբրև երեսնից 23
սկսեալ՝ որպէս կարծէր որդի Յովսեփայ : Որ Յա-
կովբայն . որ Հեղեայն . որ Մատաթեայն . * Որ Ղե- 24
ւեայն . որ Մեղքեայն . որ Յաննեայն . որ Յովսեփեայն :
* Որ Մատաթեայն . որ Ամովսեայն . որ Նաւումայն . որ 25
Եսղեայն . որ Նագգեայն : * Որ Մաաթեայն . որ Մա- 26
տաթեայն . որ Սեմեայն : որ Յովսեփայն . որ Յուդայն :
* Որ Յովհաննայն . որ Ռեսայն . որ Զօրաբաբելին . որ 27
Սաղաթիելին . որ Ներեայն : * Որ Մեղքեայն . որ Ադ- 28
դեայն . որ Կովսամայն . որ Եղմովդամայն . որ Երայն :
* Որ Յեսուայն . որ Եղիազարայն . որ Յովրամայն . որ 29
Մատաթայն . որ Ղևեայն : * Որ Սիմէոնին . որ Յուդայ- 30
յին , որ Յովսեփայն . որ Յովնանայն . որ Եղիակիմայն :
* Որ Մեղեայն . որ Մենեայն . որ Մատաթայն . որ 31
'Նա-

(15) Ոմանք . Սա իցէ քն : (16) Ոմանք . Զկօշիկս նր . նա : (19) Ոմանք . Վն Հերովդիադայ կնոջ Փիլիպպոսի եղբօր իւ" : (22) Ոմանք . Ձայն 'ի յերկնից : (23) Ոմանք . Որպէս և կարծէր : (23) Յօրինակին 'ի բնաբանի գրի . Որ յակովբայն . և 'ի լուսանցսն՝ ուղղագրէն՝ յակոբայն . համաձայն այլոց . (24) Ոմանք . Որ յովսեփայն : (25) Ոմանք . Որ ամովսայն : որ նաւումայն . . որ նեանգեայն : (26) Ոմանք . Որ մատաթեայն . . մաատաթեայն : Որ ոմանք . Մահաթեայն : (27) Ոմանք . Որ զորոբաբելին . . որ ներեայն : (29) Ոմանք . Որ յեսուեայն : (30) Ոմանք . Որ յովնանայն . որ եղիակիմայն :

Digitized by Google

32 Նաթանայն • որ Դաւթին • * Որ Յեսսեայն • որ Ովբե֊
դայն • որ Բոոսայն • որ Սաղմանայն • որ Նաասոնին :
33 * Որ Ամինադաբայն • որ Արամայն • որ Ադմեայն • որ
Առնեայն • որ Եսրոմայն • որ Փարէսին • որ Յուդային :
34 * Որ Յակովբայն • որ Իսահակայն • որ Աբրահամու •
35 որ Թարային • որ Նաքովրայն : * Որ Սերուքայն • որ
Ռագաւայն • որ Փաղեկայն • որ Եբերայն • որ Սաղային •
36 * Որ Կայնանայն • որ Արփաքսադայն • որ Սեմայն • որ
37 Նոյին • որ Ղամեքայն : * Որ Մաթուսաղային • որ Ենո֊
քայն • որ Յարեդին • որ Մաղաղայելին • որ Կայնանայն :
38 * Որ Ենովսայն • որ Սեթայն • որ Ադամայն, որ Այն :

ԳԼ. Դ.

1 Իսկ Յս լի հոգւով սրբով դարձաւ 'ի Յորդանանէ • Եւ
2 վարէր հոգւովն յանապատ, * աւուրս քառա֊
սուն փորձեալ 'ի սատանայէ : Եւ ոչ եկեր, եւ ոչ արբ
յաւուրսն յայնոսիկ • եւ 'ի կատարելն նց՝ քաղցեաւ :
3 * Եւ ասէ ցնա սատանայ • եթէ որդի ես Այ, ասա
4 քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի : * Պատասխանի ետ նմա
Յս՝ եւ ասէ • գրեալ է՝ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ
5 մարդ, այլ ամ բանիւ Այ : * Եւ հանեալ զնա 'ի լեառն
մի բարձր՝ եցոյց նմա զամ թագաւորութիւնս աշխար֊
6 հի 'ի վայրկեան ժամանակի : * Եւ ասէ ցնա սատանայ •
քեզ տաց զայս ամ իշխանութիւն եւ զփառս սոցա, զի
7 ինձ տուեալ է • եւ ում կամիմ՝ տամ զսա : * Արդ դու՝
եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ, քեզ ե֊
8 ղիցի ամ : * Պատասխանի ետ նմա Յս՝ եւ ասէ • գրեա՛լ
է, երկիր պագցես Տն Այ քում, եւ՝ զնա միայն պաշ֊
9 տեսցես : * Եւ ած զնա յԵմ, եւ կացոյց 'ի վերայ աշ֊
տարակին տաճարին, եւ ասէ ցնա • եթէ որդի ես Այ,
10 արկ զքեզ աստի 'ի վայր : * Զի գրեալ է՝ եթէ հրեշ֊
տակաց իւրոց պատուիրեալ է վս քո, պահել զքեզ •
11 * Զի 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, մի երբէք հար֊
12 ցես զքարի զոտն քո : * Պատասխանի ետ նմ Յս՝ եւ ասէ •
13 ասացեալ է, թէ ոչ փորձեսցես զՏր Այ քո : * Եւ
կատարեալ զամ փորձութիւնս սատանայի, 'ի բաց եկաց
14 'ի նմանէ առ ժամանակ մի : * Եւ դարձաւ Յս զօրութբ
Հոգ֊

(32) Ոմանք • Որ Սաղմոնայն : (34) Ոմանք • Որ Թարային :
(37) Ոմանք • Որ Մաղաղէլեղին • կամ, Մաղաղելեղին :
Գլ. Դ. (2) Ոսկան • Յաւուրս քառասուն" : (2) Ոմանք • Փոր֊
ձել 'ի սատանայէ : (3) Ոմանք • Քարիդ այդմիկ, զի •
(4) Ոմանք • Բանիւն Այ : (6) Ոմանք • Իշխանութիւն եւ ըզ֊
փառսն : (9) Ոմանք • Եւ կացոյց զնա 'ի վր : (11) Ոմանք •
Հարցես քարի : (13) Ոմանք • Զամ փորձութիւնս սա" :

Digitized by Google

հոգւոյն 'ի գալիլեա . և ել համբաւ զնմանէ ընդ ամ՟
կողմանս գաւառին ։ * Եւ նա՝ ուսուցանէր 'ի ժողո- 15
վուրդս նց փառաւորեալ յամենեցունց ։ * Եւ եկն 16
'ի Նազարեթ՝ ուր սնեալն էր . և եմուտ ը՟ սովորու-
թե իւրում յաւուր շաբաթու 'ի ժողովուրդն ։ * Եւ 17
ետուն նմա գիրս զեսայեայ մարգարէի, և յարեաւ ըն-
թեռնուլ ։ և իբրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի
յորում գրեալն էր ։ * Հոգի տն 'ի վերայ իմ, վս ո- 18
րոյ և օծ իսկ զիս . աւետարանել աղքատաց առաքեաց
զիս, բժշկել զբեկեալս սրտիւ . * քարոզել գերեաց 19
զթողութիւն և կուրաց տեսանել . արձակել զվիրաւորս
'ի թողութիւն . քարոզել զտարեկան տն ընդունելի ։ * Եւ 20
խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն՝ և նստաւ ։ և ա-
մենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք՝ 'ի նա հայէին ։
* Եւ սկսաւ ասել ցնս . այսօր լցան գիրքս այս յա- 21
կանջս ձեր ։ * Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմա- 22
նային ընդ բանս շնորհացն որ ելանէին 'ի բերանոյ նր ։
և ասէին, ոչ սա է որդին յովսեփայ ։ * Եւ ասէ ցնս . 23
ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս ։ բժիշկ՝ բը-
ժշկեա զանձն քո . որչափ լուաք՝ զոր արարեր 'ի կա-
փառնաում, արա և աստ 'ի քում գաւառի ։ * Եւ ա- 24
սէ . ամէն ասեմ ձեզ, թէ չէ մարգարէ ընդունելի 'ի
քաղաքի իւրում ։ * Այլ արդարև՝ ասեմ ձեզ . զի բզմ՟ 25
այրիք էին յաւուրս եղիայի 'ի մէջ Իէլի, յորժամ փա-
կեցանն երկինք զերիս ամս և զվեց ամիս . և եղև սով
մեծ ընդ ամ երկիր ։ * և ոչ առ մի 'ի նոցանէ առա- 26
քեցաւ եղիա, բայց միայն 'ի սարեփթա սիդոնացւոց՝
առ կին մի այրի ։ * Եւ բզմ բորոտք էին յԻէլի առ Ե- 27
ղիսէիւ մարգարէիւ . և ոչ ոք 'ի նոցանէ սրբեցաւ, բայց
միայն նէեման ասորի ։ * Եւ լցան ամենեքին բարկութ 28
'ի ժողովրդեանն՝ իբրև լսէին զայս ։ * և յարուցեալ 29
հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև
յարտևանն լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նց շինեալ
էր, զահավէժ առնել զնա ։ * Եւ նա՝ անցեալ ընդ 30
բբ մէջն նոցա գնայր ։ * Եւ էջ 'ի կափառնաում 'ի քա- 31
ղաքն գալիլեացւոց, և ուսուցանէր զնս 'ի շաբաթուն ։

* Եւ

(16) Ոմանք . Յաւուրն շաբաթուց ։ (17) Ոմանք . Գիրք զե-
սայեայ մար" ։ (18) Ի բզմ՟ գրչագր . Առաքեաց զիս . բժշկել
զբեկեալս սրտիւ ։ (19) Ոմանք յաւելուն . Ընդունելի և զօր
հատուցման ։ (22) Ոմանք . Որ ելանէր 'ի բերա" ։ (23) Յօ-
րինակին՝ [illegible] և եւ գրի՝ կափառ-
նաում ։ (26) Ոմանք . Սիդոնացւոյ ։ (28) Ոմանք . Լցան ա-
մենեքեան բար" . իբրև լուան զայս ։ (29) Ոմանք . Յար-
տևան լերինն ։ (30) Բզմ՟ . Ընդ մէջ նց

Digitized by Google

32 * Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի
իշխանութեամբ էր բանն նորա։
33 * Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր՝ այս դիւի Ը
34 պղծոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ * և ասէ. Թո-
ղացո՛ զի՞ կայ՝ մեր և քո Յիսուս Նազովրեցի, եկիր կորու-
35 սանե՞լ զմեզ. գիտեմ զքեզ ով ես՝ սուրբ Աստուծոյ։ * Սաս-
տեաց 'ի նա Յիսուս՝ և ասէ. պապանձեաց՝ և ել 'ի դմա-
նէ։ Զգեցեալ զնա դևն 'ի մէջ անդր, և ել 'ի նմա-
36 նէ, և ոչ ինչ վնասեաց նմա։ * Եւ եղեն զարմանա-
լիք 'ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ա-
սէին. զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ
37 սաստէ այսոց պղծոց՝ և ելանեն։ * Եւ ելանէր հռչա-
կաւ զնմանէ յամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։
38 * Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի, եմուտ 'ի Թ
39 տուն Սիմովնի։ * Զոքանչ Սիմովնի տագնապէր ջեր-
40 մամբ մեծաւ։ Եւ աղաչեցին զնա վասն նորա։ * Եկեալ առ
նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա։ Եւ վաղվաղա-
կի յարեալ՝ և պաշտէր զնոսա։
41 * Եւ ընդ արեւն մտանել՝ ամենեքին որոց էին հիւանդք Ժ
'ի պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա։ Եւ նա՝ իւ-
րաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս, և բժշկէր
42 զնոսա։ * Ելանէին և դևք 'ի բազմաց՝ աղաղակէին և
ասէին. եթէ դու ես որդի Աստուծոյ։ Եւ նա՝ սաստէր և ոչ
տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։
43 * Եւ իբրև տիւ եղև՝ ել գնաց յանապատ տեղի. և ԺԱ
ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչև առ նա՝ և
44 արգելուին զնա, զի մի՛ գնասցէ 'ի նոցանէ։ * Եւ նա՝
ասէ ցնոսա. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարա-
45 նել զարքայութիւն Աստուծոյ, զի յայն իսկ առաքեցայ։ * Եւ
քարոզէր 'ի ժողովուրդսն Գալիլեացւոց։

ԳԼ. Ե.

1 Եւ եղև 'ի խռնել զնովաւ ժողովրդեանն, և լսել
զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին Գեննէսա-
2 րեթայ։ * Եւ ետես երկուս նաւս զի կային առ ծովա-
կին,

---

(32) Օրինակ. Վարդապետութիւն նորա . . բանն նորա։ (33) Օրինակ. Եւ աղա-
ղակեաց 'ի ձայն մեծ. ասէ։ (34) [illegible]
(34) Օրինակ. կորուսանել զմեզ։ (34) Օրինակ. Նազովրեցի 'ի ...
Զքեզ որ ես սուրբ։ (35) Օրինակ. Եւ ինչ ոչ վնասեաց։
(36) Օրինակ. Եւ եղև զարմանալիք 'ի։ (37) Օրինակ. Զնմա-
նէ ընդ ամ տեղիս։ (38) Օրինակ. 'Ի ժողովրդենէն, եմուտ։
(39) Օրինակ. Եւ աղաչէին զնա վասն նորա։ (40) Օրինակ. Յա-
րուցեալ պաշտէր զնոսա։ (41) Օրինակ. Դնէր ձեռն։ (42) Յո-
մանս օրինակս. Ելանէին և դևք։ Այլ օրինակ. Դևքն 'ի։

Digitized by Google

կին, և ձկնորսքն ելեալ ՚ի նոցանէ՝ լուանային զգար-
ծիսն: * Ել նա՝ ՚ի մի նաւուցն որ էր սիմովնի, և աղա- 3
չեաց զնա՝ սակաւ մի ստանել ՚ի ներքս ՚ի ցամաքէն.
Նստաւ՝ և ուսուցանէր ՚ի նաւէ անտի զժողովուրդսն:
ԺԱ * Եւ իբրև լռեաց ՚ի խօսիցն, ասէ ցսիմովն. խաղա- 4
ցի՛ր ՚ի խորն, և արկէք զգործիս ձեր յորս: * Պատասխանի 5
ետ սիմովն՝ և ասէ ցնա. վարդապետ՝ զամ գիշերս աշ-
խատ եղեաք, և ո՛չինչ կալաք. բայց վս քո բանիդ՝ ար-
կցո՛ւք զգործիսս: * Զայս իբրև արարին՝ փակեցին ՚ի 6
ներքս բազմութի ձկանց յոյժ, մինչև պատառէին ուռ-
կանք նց: * և ակնարկէին որսակցացն ՚ի միւս նաւն՝ 7
գալ օգնել նց. և եկին: և լցին երկոքին նաւքն՝ մին-
չև մերձ ընկղմել նց: * Իբրև ետես սիմովն պետրոս՝ 8
անկաւ առ ծունկս յսի՝ և ասէ. ՚ի բաց գնա յինէն
տր, զի այր՝ մեղաւոր եմ ես: * Քանզի ահ պատեաց 9
զնա, և զամենեսեան որ ը նմա էին, վասն որսոյ
ձկանցն զոր ըմբռնեցին: * Նոյնպէս և զյակովբոս և 10
զյովհաննէս՝ զորդիսն զեբեդեայ, որ էին որսակիցք
սիմովնի: Եւ ասէ ցսիմովն յս. մի երկնչիր՝ յայսմ հե-
տէ զմարդիկ որսայցես ՚ի կեանս: * Եւ հանեալ ըզ- 11
նաւն ՚ի ցամաք, թողին զամ, և գնացին զհետ նր:
ԺԲ * Եւ եղև ՚ի հասանելն նր ՚ի մի ՚ի քաղաքացն, ահա 12
ԲԴ այր մի լի բորոտութե՝ իբրև ետես զյս, անկեալ ՚ի
վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. տր՝ եթէ կա-
միս, կարո՛ղ ես զիս սրբել: * Ձգեաց զձեռն իւր՝ հա- 13
սոյց ՚ի նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց: և վաղվաղակի
գնաց ՚ի նմանէ բորոտութիւն: * Եւ նա՝ պատուիրեաց 14
նմա՝ մի՛ ումեք ասել, այլ թէ երթ ցոյց զանձն քո քա-
հանային. և մատո՛ պատարագ վս սրբութե քոյ, որպ
և հրամայեաց մովսէս՝ ՚ի վկայութի նց: * Եւ յորդէր 15
առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բզմք
լսել և բժշկել ՚ի հիւանդութեն իւրեանց: * Եւ նա՝ 16
խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս:
ԺԳ * Եւ եղև ՚ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և 17
ԲԵ փարիսեցիքն և օրէնսդ վարդապետք նստէին. որք

ժո-

Գրչ. Ե. (1) Եւ եղև խռնել զնովաւ: (5) Ոմանք. Զամ գիշերս աշխատեցաք, և ... քո բանից արկ'': (7) Յօրէնակին գրչէր. Ակնարկէին որսակցացն ՚ի միւս: (8) Օրէնակ գ.՚ Զի այր մի մեղաւոր մի եմ: (9) Ոմանք. Զամենեսին որք ը նոսայն էին.. զորս ըմբռնեն'': (10) Ոմանք. Որսացես ՚ի կեանս: (12) Բազումք. ՚Ի մի քղքացն: (12) Ոմանք. Եւ ահա այր մի: (12) Ոմանք. Անկաւ ՚ի վրա երես'': (14) Ոմանք. Մատո քո զոր հրամայեաց: (15) Ոմանք. ՚Ի հիւանդութեց իւրեանց: (17) Ոմանք. Օրինաց վրդպքն:

Digitized by Google

ժողովեալ էին յամ քաղաքաց Գալիլեացւոց՝ և Հրէաս-
տանէ, և Եմի. և զօրութիւն Տն էր 'ի բժշկել զնոսա:
18 * Եւ ահա արք՝ բերէին մահճօք զայր մի՝ որ էր ան-
դամալոյծ, և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս, և
19 դնել առաջի նր: * Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ որ
մուծանիցեն զնա 'ի ներքս՝ վասն ամբոխին, ելին 'ի տա-
նիս, և 'ի ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն
20 հանդերձ 'ի մէջ առաջի յի: * Եւ տեսեալ զհաւատսն
նց՝ ասէ ցնա. այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո:
21 * Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիք՝ և ասեն. ո՞վ է
սա՝ որ խօսի զհայհոյութիւն, ո՞վ կարէ թողուլ զմեղս,
22 բայց միայն ած: * Իբրև գիտաց յս զխորհուրդս նց,
պատասխանի ետ և ասէ ցնս. զի՞ խորհիք 'ի սիրտս
23 ձեր: * Զի՞նչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ
24 մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա: * Այլ զի գիտա-
ջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի՝ թո-
ղուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի առ
25 զմահիճս քո, և երթ 'ի տուն քո: * Եւ առժամայն
յարուցեալ առաջի ամենեցուն, առ զիւրև՝ յորոյ վր
անկեալն դնէր, գնաց 'ի տուն իւր, և փառաւոր առ-
26 նէր զած: * Զարմանք կալան զամենեսեան, և փառա-
ւոր առնէին զած. լի եղեն ահիւ՝ և ասեն, եթէ
տեսաք այսօր՝ նոր նշանս:

27 * Եւ յետ այնորիկ՝ ել անտի, և ետես մաքսաւոր մի՝ ԺԴ
որում անուն էր ղևի, զի նստէր 'ի մաքսաւորութեան. ԲՂ
28 և ասէ ցնա՝ եկ զկնի իմ: * Եւ թողեալ զամ՝ յարեա-
29 գնաց զկնի նր: * Եւ արար ընդունելութիւն մեծ նմա
ղևի 'ի տան իւրում: և էր ժողովուրդ բզմ մաքսաւո-
30 րաց, և այլոց՝ որ էին բազմեալ ը նն: * Եւ տրտըն-
ջէին փարիսեցիքն և դպիրքն նց զնմանէ առ աշակերտս-
ն նր՝ և ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մե-
31 ղաւորս ուտէք և ըմպէք: * Պատասխանի ետ յս՝ և
ասէ ցնս, ոչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց:
32 * ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխա-
33 րութիւն: * Եւ նք ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն յով-
հան-

---

(20) Ոմանք յաւելուն. Եւ տեսեալ յսի զհաւատսն: (21) Ո-
մանք. Ո՞ է սա... ո՞ կարէ: (24) Յօրինակին պկսէր. Ցան-
դամալոյծն, քեզ ասեմ՝ արի: (25) Ոմանք. Զիւրեաւ..
անկեալ դնէր: (26) Ոմանք. Զարմանք կալաւ զամենեսեան:
(28) Ոսկան. Յարեաւ և գնաց: (29) Ոմանք. Եւ էր ժո-
ղով բզմ: (30) Ոմանք. Եւ ասեն. ընդէ՞ր ը: (31) Բզմք.
Ոչինչ են պիտոյ: և ոմանք. ոչ ինչ է պիտոյ բժիշկ ող-
ջոց: (32) Ոմանք. Եւ ոչ եկի կոչել: (33) Ոմանք. Եւ
քոյդ ուտեն և ըմ":

Digitized by Google

հաննու պահեն ստէպ, և խնդրուածս առնեն, նոյն-
պէս և փարիսեցւոցն. և քոյքդ ուտեն և ըմպեն: * Եւ 34
նա՝ ասէ ցնա. միթէ՝ կարօղ էք մանկանց առագաստի,
մինչ փեսայն ընդ նոսա իցէ՝ հրամանն տալ պահել: * Եւ 35
կեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն.
ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ: * Ասաց և առ- 36
ակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկանէ 'ի նոր հանդերձէ
'ի վերայ հնացելոյ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պա-
տառէ, և ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ 'ի նորոյն:
* Եւ ոչ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ 37
ոչ՝ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղու.
և տիկքն կորնչին * այլ գինի նոր՝ 'ի տիկս նորս արկանե- 38
լի է, և երկոքեան պահին: * Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և 39
կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է:

ԳԼ. Զ.

բէ Եւ եղև 'ի շաբաթու յերկրորդում առաջնումն՝ ան- 1
ցանել նմա ընդ արտորայսն. և աշակերտքն նորա կոր-
զէին հասկ՝ շփէին ընդ ափս, և ուտէին: * Եւ ոմանք 2
'ի փարիսեցւոցն ասեն ցնա. զի՞նչ գործէք՝ զոր չէ օ-
րէն 'ի շաբաթու: * Պատասխանի ետ նոցա և ասէ. 3
չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ
քաղցեաւն ինքն՝ և որ ընդ նմայն էին: * զիարդ եմ- 4
մուտ նա 'ի տունն այ, և զհացն զառաջաւորութեան եկեր՝
և ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ու-
տել, բայց միայն քահանայապետացն: * Եւ ասէ ցնա. 5
տէր է որդի մարդոյ և շաբաթու:
ժե * Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա 'ի ժո- 6
ղովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի, և ձեռն
իւր աջ՝ գօսացեալ էր: * Եւ սպասէին նմա դպիրքն 7
և փարիսեցիք՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ, զի գտա-
նիցեն չարախօսութիւն զնմանէ: * Եւ նա գիտէր զխոր- 8
հուրդս նց. ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր.
արի՝ անց 'ի մէջ: և նա յարուցեալ եկաց: * Ասէ ցնս 9
յս. հարցից ինչ զձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթու,
բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի մի ապրե-
ցուցանել՝ թէ կորուսանել: * Եւ հայեցեալ շուրջ 10
զա

---

(35) Ոմանք. Եւ ապա պահեսն": (36) Ոմանք. Կապերտն որ 'ի նորումն: (39) Ոմանք. Ասէ եթէ հինն քաղց":
ԳԼ. Զ. (2) Ոմանք. Որ չէ օրէն: (3) Ոմանք. Պատասխանի ետ յս և ասէ ցնս ... քաղցեաւ ինքն: (4) Բզմք. յառաջաւորութեան. Օրէն ուտել: (6) Ոմանք. Այր մի, որոյ ձեռն իւր: (8) Ոմանք. Ձեռն գօսացեալն էր: (9) Ոմանք. Հարցից ինչ ձեզ: (10) Ոմանք. Ասէ ցայրն. ձգեա:

Digitized by Google

զամենեքումբք զայրագին, ասէ ցնա. ձգեա՛ զձեռն
քո. և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նր իբրև
11 զմեւսն: * Նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ մի-
12 մեանս, թէ զինչ արասցեն յիսի: * Եւ եղև ընդ ա-
ւուրսն ընդ այնոսիկ՝ ել՝ի լեառն կալ յաղօթս. և հա-
նէր զգիշերն ՝ի գլուխ յաղօթսն այ:
13 * Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ԺԶ
ընտրեաց ՝ի նոցանէ երկոտասանս. զորս և առաքեալս
14 անուանեաց: * Զսիմովն՝ զոր և պետրոսն անուա-
նեաց, և զանդրէաս եղբայր նորին, և զյակոբոս, և
15 զյովհաննէս, և զփիլիպպոս, և զբարթողոմէոս, * և
զմատթէոս, և զթովմաս, և զյակոբոս ալփեայ, և
16 զսիմովն զկոչեցեալն նախանձայոյզ, * և զյուդա յա-
կոբեայ, և զյուդա սկարիովտացի՝ որ եղև իսկ մատ-
17 նիչ: * Եւ իջեալ նոքօք հանդերձ ՝ի տեղի մի տափա-
րակ. և ժողով աշակերտացն նր, և բազմութի յոյժ
ժողովրդեանն յամ հրէաստանէ, և յէմէ, և յայնմ կող-
18 մանէ, և ՝ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի. * որ ե-
կին լսել ՝ի նմանէ, և բժշկել ՝ի հիւանդութէ իւրեանց:
19 Եւ նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: * Եւ ամ ժո-
ղովուրդն խնդրէր մերձենալ ՝ի նա, զի զօրութի բա-
զում ելանէր ՝ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին:
20 * Եւ նա՝ ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր՝ և ա- ԺԷ
սէ: Երանի աղքատացդ հոգւով, զի ձեր է արքայու-
21 թի այ: * Երանի որ քաղցեալ էն այժմ, զի յագեսս-
22 ցին: Երանի որ լան այժմ, զի ծիծաղեսցին: * Երա-
նի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ, և յոր-
ժամ մերժեսցեն զձեզ՝ և տանիցեն, և հանիցեն անուն չար
23 զձէնջ վասն որդւոյ մարդոյ: * Ուրախ լերուք յաւուր
յայնմիկ և ցնծասջիք, զի ահա՝ վարձք ձեր բազում են
յերկինս. ըստ նմին օրինակի առնէին մարգարէիցն
հարք.

(11) Ոսկան. Եւ նոքա լցան յիմա": (14) Ոմանք. Պետ-
րոս անուանեաց.. զեղբայր նորին: (16) Ոմանք. Եւ
զյուդա յակոբեան, և զյուդա իսկարիովտ": (19) Ոս-
կան. Եւ ժողովուրդն խնդ": (20)(21) Ոմանք. Երանի է
աղքատա".. երանի է որ քաղ"... երանի է որ լան:
(21) Օրինակ մի. Քաղցեալ լիցէք այժմ, զի յագեսցիք...
լայցէք այժմ զի ծիծաղիցէք: (22) Յօրինակին ՝ի ՆԷ բա-
ռիցս՝ նախատիցեն — և տանիցեն, առդանիշ * նշանակ,
Բերեալ աննորէն փոփոխման օրինակաց ոմանց. որք յառաջինն
՝ի բաց թողեալ զնախին, և դնեն լոկ՝ տանիցեն. և յերկրորդն
յաւելեալ զնախ, առնեն, և նախատիցեն, և հանիցեն: Թէ-
պէտ էն և ոմանք որք յերկուսին և տեղիս գրեն՝ նախատիցեն:
(23) Ոմանք յաւելուն. Ուրախ լերուք ՝ի նմ որդւոյ մարդոյ յա-

Digitized by Google

հարքն իւրեանց ։ * Բայց վայ ձեզ մեծատանցդ. զի ընկա 24
լայք զմխիթարութիւն ձեր ։ * Վայ ձեզ որ յագեցեալդ 25
էք այժմ, զի քաղցիցէք. վայ ձեզ որ ծիծաղէքդ այժմ,
զի սգայցէք և լայցէք ։ * Վայ ձեզ՝ յորժամ բարի ա 26
սիցեն զձէնջ ամ մարդիկ, զի այսպէս առնէին սուտ
մարգարէիցն հարքն նց ։ * Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. 27
սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձե
րոց ։ * օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս արարէք ՚ի 28
վերայ նեղչաց ձերոց ։ * Որ հարկանէ զծնօտ քո, մա 29
տո՛ նմա և զմիւսն. և որ հանէ ՚ի քէն զբաճկոն քո, մի
արգելուր ՚ի նմանէ և զպատմուճան ։ * ամենայնի՝ որ խնդ 30
րէ ՚ի քէն՝ տուր, և զոր ինչ հանէ ոք ՚ի քէն՝ մի պա
հանջեր ։ * Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, 31
նոյնպէս արասջիք և դուք նց ։ * Եւ եթէ սիրէք դուք 32
զսիրելիս ձեր, զի՞նչ շնորհ է ձեր. զի և մեղաւորք սի
րեն զսիրելիս իւրեանց ։ * և եթէ բարի առնէք բա 33
րերարաց ձերոց, ո՞ր շնորհ է ձեր. զի և մեղաւորք
զնոյն գործեն ։ * Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց 34
ակն ունիք առնուլ, ո՞ր շնորհ է ձեր. քանզի և մեղա
ւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդէն զկշիռն ։
* Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք ա 35
տելեաց ձերոց, և տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք
առնուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք
բարձրելոյ. զի նա՝ քաղցր է ՚ի վերայ չարաց և ապա
շնորհաց ։ * Եւ եղերո՛ւք գթածք՝ որպէս և հայրն ձեր 36
գթած է ։ * Մի՛ դատիք՝ և ոչ դատիցիք. մի՛ պատ 37
ժէք՝ և ոչ պատժիցիք, արձակեցէք և արձակեսջիք ։
* տուք՝ և տացի ձեզ. չափ բարւոք թաթաղուն շար 38
ժուն զեղուն՝ տացեն ՚ի գոգս ձեր. նովին չափով ո
րով չափէք՝ չափեսցի ձեզ ։ * Ասաց և առակ մի նո 39
ցա. միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ոչ ա
պաքէն երկոքեան ՚ի խորխորատ անկանիցին ։ * Ո՛չ է 40
աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ամ կատարեալն՝
եղիցի իբրև զվարդապետ իւր ։ * Զի՞ տեսանես ըշ 41
շիւղ

ւուր յայնմ" ... ըստ նմին օրի" ։ (25) Յօրինակին. Զի
զգայցէք և լայցէք ։ (26) Ոմանք. Զի այսպէս. նոյն, այն
պէս առ." ։ (29) Յօրինակին ընդ. ՚ի նմա և զպատմուճանս ։
(30) Ոմանք. Ամ որ խնդրէ ոք ՚ի քէն ։ (32) Յոմանս ընդ.
Եւ եթէ սիրէք դուք ։ (34) Ոմանք. Ակն ունիցիք առ." ։
(34) Բ՟ըն. Անդրէն զկշիռն ։ (35) Ոմանք համեմատ միւսում
օրինակի փրէն առաքէն. ապաշնորհաց ։ (36) Յոմանս ընդ. Եւ
եղերուք ։ (37) Բ՟ըն. Արձակեցէք և արձակիցէք ։
(38) Ոմանք. Տացեն ՚ի գոգս ։ (39) Ոմանք. ՚ի խորխորատ
անկանին ։ (41) Ոմանք. Զշիւղ.. ականդ զգերանն՝ ոչ ։

Digitized by Google

զշիւղ յականն եղբօր քո, և 'ի քում ական զգերանդ՝ ոչ
42 նշմարես : * Կամ զիարդ կարես ասել ցեղբայր քո •
Եղբայր՝ թող հանից զշիւղդ յականէ քումմէ, և դու
'ի քում ական զգերանդ ոչ տեսանես : կեղծաւոր՝ հան
նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հա-
43 նել զշիւղ յականէ եղբօր քո : * Զի ոչ է ծառ բա-
րի, որ առնէ պտուղ չար և ոչ դարձեալ ծառ չար՝
44 որ առնէ պտուղ բարի • * զի իւրաքանչիւր ծառ 'ի
պտղոյ իւրմէ ճանաչի: Զի ոչ եթէ 'ի փշոց քաղեն թուզ,
45 և ոչ 'ի մորենւոյ կթեն խաղող : * Մարդ բարի՝ 'ի բա-
րի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար՝
'ի չարէն բղխէ զչար • քանզի 'ի յաւելորդաց սրտին
46 խօսի բերան նր̄ : * Զի՞ կոչէք զիս՝ Տէր՝ Տէր, և զոր ա-
47 սեմն ոչ առնէք : * Ամենայն որ գայ առ իս, և լսէ
զբանս իմ՝ և առնէ զնս̄, ցուցից ձեզ ում նման է :
48 * Նման է առն, որ շինեաց տուն • որ փորեաց և խո-
րեաց, և եդ հիմն 'ի վերայ վիմի • 'ի յառնել հեղեղաց՝
բախեաց գետ զտունն, և ոչ կարաց շարժել զնա • զի
49 հաստատեալ էր հիմն 'ի վերայ վիմի : * Իսկ որ լսէ
զբանս իմ՝ և ոչ առնէ, նման է առն որ շինեաց տուն
'ի վերայ հողոյ առանց հիման • զոր բախեաց գետ,
և վաղվաղակի անկաւ • և եղև կործանումն տանն այ-
նորիկ մեծ :

ԳԼ. Է.

1 Եւ իբրև կատարեաց զամ բանս իւր 'ի լսելիս ժո- ԺԲ
2 ղովրդեանն, եմուտ 'ի կափառնաում : * Հարիւ- գբ
րապետի ուրումն ծառայ՝ չարաչար հիւանդացեալ
3 մերձ էր 'ի վախճանել, որ էր նմա պատուական : * Իբ-
րև լուաւ զՅն̄է, առաքեաց զծերսն 'ի հրէից, աղա-
4 չել զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նր̄ : * Եւ
նք̄ եկեալ առ Յս̄՝ աղաչէին զնա ստէպ՝ և ասէին, թէ
5 արժանի է որում զշնորհս զայս առնես : * զի սիրէ
6 զազգս մեր, և զժողովրդանոցն՝ նա շինեաց մեզ : * Եւ
Յս̄ գնայր ընդ նս̄ : Իբրև ոչինչ կարի հեռի էր 'ի տա-
նէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս՝ և աս-
ել ցնա • Տէր՝ մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւա-
կան .

(42) Օմանք • Հանել զշիւղդ : (43) Օմանք • Որ առնիցէ պտուղ : (45) Օմանք • 'Ի յաւելորդաց սրտի խօսի : (47) Օմանք • Ո՛ւմ նմանէ : (48) Բազումք • Հիմն 'ի վր̄ վի՛՛ : Գլ. Է • (1) Ոսկան • Եւ եղև իբրև կատ՛՛ : (1) Օմանք • Զամ զբանս իւր : (1) Յօրինակին • 'Ի կապփառնաում : (3) Օմանք • Եւ իբրև լուաւ զՅն̄է՝ առաքեաց զծերս հրէից, աղաչէր զնա, զի ե՛՛ : (6) Օմանք • Եւ իբրև ոչինչ :

կամ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես ։ * Վն որոյ եւ 7
ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ . այլ
ասա՛ բանիւ՝ եւ բժշկեսցի մանուկս իմ ։ * Քանզի եւ ես 8
այր մի եմ՝ կարգեալ ընդ իշխանութեամբ . ունիմ ը ինեւ
զինուորս . եւ ասեմ սմա՝ երթ , եւ երթայ . եւ այլում՝
թէ եկ , եւ գայ . եւ ծառայի իմում՝ թէ արա զայս , եւ
առնէ ։ * Եւ իբրեւ լուաւ զայս Յս՝ զարմացաւ , դար_ 9
ձաւ առ ժողովուրդն որ երթայրն զհետ նորա եւ ա_
սէ . ամէն ասեմ ձեզ՝ թէ եւ ոչ յԻսրլի այսչափ հաւատս
գտի ։ * Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 'ի տուն , 10
Եւ գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ ։
ԺԹ * Եւ եղեւ 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի , որում ա_ 11
գգ նուն էր Նային . երթային ընդ նմա եւ աշակերտք նր ,
եւ ժողովուրդ բզմ ։ * Իբրեւ մերձ եղեւ 'ի դուռն քա_ 12
ղաքին , եւ ահա՝ հանէին մեռեալ մի , որդի՝ միամօր
մօր իւրոյ , եւ նա՝ էր այրի . եւ ժողովուրդ բզմ քա_
ղաքին՝ էր ընդ նմա ։ * Իբրեւ ետես զնա տր՝ գթա_ 13
ցաւ 'ի նա՝ եւ ասէ . մի լար ։ * Եւ մատուցեալ մերձե_ 14
ցաւ 'ի դագաղն ։ եւ որ բարձեալ տանէին՝ զտեղի ա_
ռին ։ եւ ասէ , պատանեակ դու՝ քեզ ասեմ , արի ։ * Կանգ_ 15
նեցաւ նստաւ մեռեալն , եւ սկսաւ խօսել . եւ ետ զնա
ցմայր իւր ։ * Եւ ահ կալաւ զամենեսին , եւ փառա_ 16
ւոր առնէին զած՝ եւ ասէին , թէ մարգարէ մեծ [illegible] .
յարուցեալ է 'ի միջի մերում , եւ թէ այց արար ած
ժողովրդեան իւրում 'ի բարութի ։ * Եւ ել զրոյցս այս 17
ը ամ հրէաստան վս նր . եւ ը ամ կողմանս աշխարհին ։
Ի * Եւ պատմեցին յովհաննու աշակերտքն իւր վս ամե_ 18
նայնի այսորիկ ։ * Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս 19
յաշակերտաց իւրոց յովհաննէս , առաքեաց առ տր եւ ա_
սէ . դու ես որ գալոցն ես՝ եթէ այլում ակն կալցուք ։
* Եւ եկեալ առ նա արքն՝ ասեն , յովհաննէս մկրտիչ ա_ 20
ռաքեաց զմեզ առ քեզ՝ եւ ասէ , դու ես որ գալոցն ես
եթէ այլում ակն կալցուք ։ * Եւ 'ի նմին ժամու բժշ_ 21
կեաց զբազումս 'ի հիւանդութեանց եւ 'ի հարուածոց եւ
յայսոց չարաց , եւ կուրաց բազմաց շնորհեաց տեսա_
նել ։ * Պատասխանի ետ նց եւ ասէ . երթայք պատ_ 22
մեցէք յովհաննու՝ զոր տեսէքդ եւ լուայք . զի կոյրք՝
տեսանեն , եւ կաղք գնան , բորոտք՝ սրբին , խուլք՝
լսեն ,

---

(9) Ոմանք . Առ ժողովուրդն որ երթայր զհետ ։
(11) Բզմք . Եւ աշակերտքն նորա ։ (12) Յոմանս պկսի .
Եւ ժողովուրդ բզմ քաղաքին ։ (13) Օրինակ մի 'ի լուսն″,
նշանակէ . Զնա յս , գթա″ ։ (13) Յօրինակին . Մի լար ։
(15) Բզմք . Կանգնեցաւ եւ նստաւ ։ (20) Ոմանք . Արքն
առ նա՝ ասեն ։ (22) Ոմանք . Եւ խուլք լսեն ։

Digitized by Google

լսեն, մեռեալք՝ յառնեն. աղքատք՝ աւետարանին.
23 Եւ երանի իցէ՝ որ ոչ գայթագղեսցի յիս: Եւ իբրեւ
24 գնացին հրեշտակքն յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժո-
ղովուրդսն վասն յովհաննու. զի՞նչ ելէք յանապատն տես-
25 անել, եղէգն շարժուն 'ի հողմոյ: Այլ զի՞նչ ելէք
տեսանել, այր 'ի հանդերձս փափկունս զարդարեալ.
ահաւասիկ՝ որ 'ի հանդերձս երեւելիս և 'ի փափկութ-
26 են՝ յարքունիս են: Այլ զի՞նչ ելէք տեսանել, մար-
գարէ՞. այո, ասեմ ձեզ՝ առաւել եւս քան զմարգարէ:
27 Զի սա է՝ վա որոյ գրեալն է, թէ ահա առաքեմ
զհրեշտակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհ
28 քո առաջի քո: Ասեմ ձեզ. մեծ 'ի ծնունդս
կանանց՝ մարգարէ, քան զյովհաննէս ոչ ոք է. բայց
29 փոքրիկն յարքայութեան Այ՝ մեծ է քան զնա: Եւ ամ
ժողովուրդն իբրեւ լուան, և մաքսաւորքն, արդարա-
ցուցին զԱծ. զի մկրտեցան 'ի մկրտութեն յովհաննու:
30 Իսկ փարիսեցիքն և օրէնսականքն, զխորհուրդն Այ
անարգեցին յանձինս իւրեանց. զի ոչ մկրտեցան 'ի նմա-
31 նէ: Արդ՝ ընդ ում նմանեցուցից զմարդիկ ազգիս
32 այսորիկ, և ընդ իցեն նմանօղք: Նմա՞ն են մանկանց
որ 'ի հրապարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս և
ասիցեն. փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք. ողբա-
33 ցաք՝ և ոչ լացէք: Եկն՝ յովհաննէս մկրտիչ՝ ոչ ու-
34 տէր և ոչ ըմպէր, և ասէիք՝ դեւ գոյ 'ի նմա: Եկն
որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ասէք. ահա՝ այր կե-
րօղ և արբեցօղ՝ բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց:
35 Եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց:
36 Աղաչէր ոմն զնա 'ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ հաց ԻԱ
ընդ նմա: և մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ: գ դ
37 Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գիտաց
թէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւ-
38 ղոյ աղնուի. Կայր յետոյ առ ոտս նր, լայր. և ար-
տասուօքն սկսաւ թանալ զոտս նր, և հերով գլխոյ
իւ-

---

(23) Ոմանք. Որ ոչ գայթագղեսցի. կամ. գայթագղեսցէ յիս: (24) Ոսկան. Գնացին աշակերտքն յօհաննու, ըս-կսաւ ասել ընդ ժող".. զի՞ն": (24) Ոմանք. Եղեգն 'ի հող-մոյ շարժուն: (26) Ոմանք. Եւ առաւել: (27) Ոմանք. Առաջի երեսաց քոց.. զճանապարհս քո: (29) Այս. Ամ ժողովուրդն իբրեւ լուաւ. և: (32) Ոմանք. Նմանեն մանկանց": (33) Օրինակ մի 'ի լուսն". նշանակէ ընդ ոսկանայ. Ոչ ուտէր հաց, և ոչ ըմպէր գինի: (34) Ոմանք. Եւ ա-սէիք. ահա այր կեր": (35) Ոմանք. Իմաստութիւն որդւոց: (36) Ոմանք. Աղաչէր զնա ոմն.. կերիցէ ը նմա հաց: (37) Ոսկան. Իւղոյ նարդեան աղնուէ:

Digitized by Google

իւրոյ ջնջէր: եւ համբուրէր զոտսն, եւ օծանէր իւ-
ղովն: * Իբրեւ տեսանէր փարիսեցին որ կոչեցեալ զնա, ա- 39
սէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր, ապա
գիտէր թէ ով եւ կամ որպիսի ոք կին մերձենայ ի սա.
զի մեղաւոր է: * Պատասխանի ետ յիս. եւ ասէ ցնա. 40
Սիմոն, ունիմ ինչ ասել ընդ քեզ: եւ նա ասէ, ասա վար-
դապետ: Եւ ասէ. * Երկու պարտապանք էին ուրումն 41
փոխատուի. միոյն պարտէր հինգ հարիւր դահեկան, եւ
միւսոյն յիսուն: * Եւ իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, 42
երկոցունց շնորհեաց. արդ ասա՝ ով առաւել սիրեսցէ
զնա: * Ասէ Սիմոն. կարծեմ թէ՝ եթէ ո- 43
րում զառաւելն շնորհեաց: Եւ նա ասէ ցնա. ուղիղ
դատեցար: * Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ցսի- 44
մոն. տեսանես զայս կին. մտի ի տուն քո, ջուր ո-
տից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք ե-
թաց զոտս իմ, եւ հերօքն իւրովք ջնջեաց: * Համբոյր մի 45
ոչ ետուր ինձ, սա՝ յորմէ հետէ մտեալ
եմ, ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ: * Իւղով 46
զգլուխ իմ ոչ օծեր, սա՝ իւղով անուշիւ օծ: * Վասն 47
այդորիկ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք.
զի յոյժ սիրեաց: Այլ որում սակաւ թողացու՝ սակաւ սի-
րէ, եւ որում սակաւ՝ սակաւ: * Եւ ասէ ցնա. Թո- 48
ղեալ լիցին քեզ մեղք քո: * Եւ սկսան որ բազմեալ էին 49
հետ ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ
զմեղս թողու: * Եւ նա՝ ասէ ցկինն. հաւատք քո 50
կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն:

Գլ. Ը.

գ է Եւ եղեւ յետ այսորիկ, եւ ինքն շրջէր ըստ քաղաքս եւ 1
ըստ գիւղս, քարոզէր եւ աւետարանէր զարքայու-
թիւն այ. եւ երկոտասանքն ընդ նմա: * Եւ կանայք ո- 2
մանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց եւ ի հիւանդու-
թեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եւթն
դեւ ելեալ էր: * Եւ Յովհաննա կին՝ Քուզայ հազարապետ- 3
ին Հերովդի. եւ Շուշան, եւ այլք բազումք որք պաշ-
տէին զնա յընչից իւրեանց:
ԻԲ * Եւ ի ժողովել ամբոխ ժողովրդեան, եւ ըստ քաղաքաց 4
քաղաքաց երթային առ նա, ասէ առակաւ: * Ել սերմ- 5
ման-

(39) Ոմանք. Ասէ ընդ միտս: (39) [illegible]. Ո՞վ եւ որպի-
սի ոք: (42) Ոմանք. Ո՞ առաւել սիրեսցէ զնա: (44) Ո-
մանք. 'Ի կին կողմն: (47) Ոմանք. Մեղք իւր բազումք:
(49) Ոմանք. Ո՞ է սա որ եւ զմեղս թողու:
Գլ. Ը. (1) Ոմանք. Եւ ընդ գիւղս: (2) Ոմանք. Եւ ի
հիւանդութեանց: (4) Ոմանք. Ասէ առակաւք: (5) Ոմանց

Digitized by Google

ճանապարհաւ՝ սերմանել զսերմանս իւր. եւ ի սերմանելն իւ-
րում, էր որ անկաւ առ ճանապարհաւ. եւ կոխեցաւ, եւ թռչ-
6 նոց երկնից կերան զնա։ * Եւ այլն ան-
կաւ յապառաժի. եւ ընդ բուսանելն՝ չորացաւ, առ
7 ի չգոյէ հիւթոյ։ * Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ
8 ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա։ * Եւ այլն
անկաւ յերկիր բարւոք եւ պարարտ, եւ բուսեալ՝ արար պտ-
ուղ հարիւրապատիկ։ Զայս իբրեւ խօսէր, ասէր.
9 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ * Հարցանէին զնա
10 աշակերտքն՝ թէ զինչ իցէ առակն։ * Եւ նա՝ ասէ.
Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն Աստուծոյ, բայց
այլոցն առակօք, զի տեսցեն՝ եւ մի տեսցեն, եւ լուիցեն՝
11 եւ մի իմասցին։ * Բայց այս առակն այս ինչ է. Սերմն՝
12 բանն Աստուծոյ է։ * Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են՝
որ լսեն, եւ ապա գայ սատանայ՝ հանէ զբանն ի սրտ-
13 ից նոցա, զի մի հաւատասցեն՝ եւ կեցցեն։ * Եւ
որք յապառաժին, որք յորժամ լսիցեն, խնդութեամբ ըն-
դունին զբանն, եւ արմատս ոչ ունիցին. որք առ ժա-
մանակ մի հաւատան, եւ ի ժամանակի փորձութեան հե-
14 ռանան։ * Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ
իբրեւ լսեն զբանն՝ եւ ի հոգս եւ ի մեծութիւն եւ ի ցանկ-
ութիւնս աշխարհիս զբաղեալ՝ հեղձնուն եւ անպտուղ
15 լինին։ * Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք եւ
ընտիր սրտիւք լուեալ զբանն՝ ընդունին, եւ տան
16 պտուղ համբերութեամբ։ * Ոչ ոք լուցանէ ճրագ՝ եւ ծած-
կէ զնա կաղապարաւ, կամ դնէ ընդ մահճօք. այլ
ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանիցեն՝ տեսցեն զլոյ-
17 սն։ * Զի չիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտնի լինիցի. եւ ոչ գաղտ-
18 նի՝ որ ոչ ծանիցի, եւ ի յայտ գայցէ։ * Տեսէք այս-
ուհետեւ զիարդ լսիցէք. զի որ ոք ունիցի՝ տացի նմա,
եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր կարծէ թէ ունիցի՝ բարձ-
19 ցի ի նմանէ։ * Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր.
20 եւ ոչ կարէին հասանել ի նա՝ վասն ամբոխին։ * Ազդ
եղեւ նմա՝ եւ ասեն. Մայր քո եւ եղբարք քո՝ կան արտաքոյ՝
21 եւ կամին տեսանել զքեզ։ * Եւ նա ասէ ցնոսա. Մայր իմ եւ
եղբարք իմ նոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն՝ եւ առնեն։
22 * Եւ եղեւ ի միում յաւուրց, ինքն եմուտ ի նաւ՝ եւ աշա- ԻԳ.
կերտք իւր, եւ ասէ ցնոսա. Անցցուք յայնկոյս ծո- գղ.
վուն.

ճնել. Սերմանել զսերմանս իւր։ (8) Ոմանք. Եւ ի պա-
րարտ։ (12) Ոմանք. Եւ հանէ զբանն։ (13) Ոմանք. Այլ
մատս ոչ ունին։ (13) Ոմանք. Այլ առ ժամանակ մի։
(15) Յօրինակին պակասէր. Զբանն՝ ընդունին. եւ տան։
(16) Ոմանք. Ո՛չ ոք լուցանէ ճրագ.. զլոյսն տեսանի-
ցեն։ (22) Ոմանք. Ի միում աւուրց։

Digitized by Google

ծովակիս: Եւ գնացին:* Եւ մինչ գնայր նաւակն՝ ի քուն եմուտ 23
ննջեաց. եւ էջ մրրիկ հողմոյ ի ծովակին՝ եւ ալեկոծէր, եւ
տագնապէին:* Մատուցեալ զարթուցին զնա՝ եւ ա- 24
սեն. Վարդապետ վարդապետ՝ կորնչիմք ահաւասիկ: Եւ
նա՝ յարուցեալ սաստեաց հողմոյն, եւ խռովութեան ջրոյն՝
եւ հանդարտեցին, եւ եղեւ խաղաղութիւն:* Ասէ ցնո- 25
սա. Ուր են հաւատք ձեր: Եւ զահի հարեալ զարմացան.
եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ արդեւք իցէ սա՝ զի եւ հող-
մոց եւ ջրոց հրաման տայ, եւ հնազանդին սմա:
ԻԴ *Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց. որ է 26
յայնկոյս հանդէպ Գալիլեա:* Եւ ընդ ելանելն նր 27
ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում
էին դեւք. եւ բազում ժամանակս չէր հանդերձ զգե-
ցեալ՝ եւ ո՛չ ի տան բնակեալ, այլ ի գերեզմանս:* Եւ 28
տեսեալ զՅս, աղաղակեաց եւ անկաւ առաջի նր, եւ
ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ եւ քո՝ Յս որդի այ բարձ-
րելոյ, աղաչեմ զքեզ՝ մի տանջեր զիս:* Քանզի հրա- 29
մայեր այսոյն պղծոյ՝ ելանել ի մարդոյ անտի. զի
բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, եւ կապէր ի
շղթայս՝ եւ պահէր յերկաթս, եւ խզէր զկապանսն, եւ
վարէր ի դիւէն յանապատ:* Եհարց ցնա Յս՝ եւ ասէ. 30
Զի՞նչ անուն է քեզ: Եւ նա՝ ասէ, Լեգէովն. զի դեւք
բազումք մտեալ էին ի նա:* Եւ աղաչէին զնա՝ զի մի հրա- 31
ման տացէ նց երթալ յանդունդս:* Եւ էր անդ՝ եր- 32
ամակ մի խոզից բազմաց՝ արածական ի լերինն: Եւ ա-
ղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նց մտանել ի նս: Եւ
հրամայեաց նց:* Եւ ելեալ դեւքն յառնէն, մտին ի 33
խոզեանն. եւ դիմեաց երամակն ի գահէ անտի ի ծո-
վակն՝ եւ հեղձաւ:* Իբրեւ տեսին խոզարածքն զեղեալն 34
որ եղեն՝ փախեան, եւ պատմեցին ի քաղաքին եւ յա-
գարակսն:* Եւ իբրեւ ելին տեսանել զգործսն, եւ ե- 35
կին առ Յս, եւ գտին զայրն ուստի դեւքն ելեալ էին,
զգեցեալ եւ զգաստացեալ նստէր առ ոտսն Յի, եւ եր-
կեան:* Պատմեցին նց որոց տեսեալն էր՝ թէ զիարդ 36
փրկեցաւ դիւահարն:* Եւ աղաչէր զնա ամ բազմու- 37
թիւն շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝ գնալ ի սահ-
մանացն նց, քանզի ահիւ մեծաւ տագնապեալ էին: Եւ նա՝

մտեալ

---

(24) Ոմանք ձեռագրաւ գրեն. Վարդապետ կորնչիմք . . . եւ խռովութիւն ջրոյն: (25) Ոմանք. Եւ ասէ ցնս . . եւ ասէին ցմիմեանս: (27) Ոմանք. Պատահեաց նմա այր մի: (29) Ոմանք. Քանզի բազում ժամա՛: (29) Ոմանք. Ի դիւէն յանապատս: (30) Ոմանք. Եհարց զնա Յս: (32) Ոմանք. Եւ աղաչէին զնա: (33) Օրինակ մի. Ի գահէ անտի ի ծովակն՝ եւ հեղձան: (35) Ոմանք. Եւ տեսին զայրն ուս՛:

Digitized by Google

38 մտանել 'ի նաւ, դարձաւ անդրէն։ * Աղաչէր զնա՝ այրն
ուստի դեւքն ելեալ էին՝ լինել ընդ նմա։ արձակեաց
39 զնա՝ եւ ասէ. * դարձիր 'ի տուն քո, եւ պատմեա զոր միան-
գամ արար քեզ Ա̃ծ։ գնաց 'ի քաղաքն՝ եւ քարոզէր զոր ինչ
40 արար նմա Յ̃ս։ * Եւ իբրեւ դարձաւ անդրէն Յ̃ս, ընկալաւ
զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։
41 * Եւ ահա՝ եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, եւ նա՝ ԻԵ
էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտս Յ̃սի, ա-
42 ղաչէր զնա՝ մտանել 'ի տուն նր. * զի դուստր մի՝ միա-
ծին էր նր, ամաց իբրեւ երկոտասանից, եւ էր մերձ 'ի
մահ։ եւ ընդ երթալն նր՝ ժողովուրդքն նեղէին զնա։
43 * Եւ կին մի՝ էր 'ի տեռատեսութեան արեան յամաց երկո- ԻԶ
տասանից, որում ոչ էր ըմբռնեալ հնար յումեքէ բժշկել։
44 * Մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի
45 նր. եւ նոյն ժամայն՝ եկաց բղխումն արեան նր։ * Եւ
ասէ Յ̃ս. ո՞վ է որ մերձեցաւն յիս։ իբրեւ ամենեքեան
ուրանային, ասէ Պետրոս՝ եւ որ ընդ նմա էին. վար-
46 դապետ՝ ժողովուրդքդ պնդեն եւ նեղեն զքեզ։ * Եւ
ասէ Յ̃ս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ ելեալ զօ-
47 րութիւն ել յինէն։ * Իբրեւ ետես կինն՝ թէ ոչ ծածկե-
ցաւ 'ի նմանէ, եկն դողալով՝ եւ անկեալ առաջի նր թէ-
վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա, եւ պատմեաց առա-
ջի ամ ժողովրդեանն. եւ թէ որպէս բժշկեցաւ առժա-
48 մայն։ * Եւ ասէ. քաջալերեաց դուստր՝ հաւատք քո
49 կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն։ * Եւ մինչ դեռ
նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ եւ ա-
սէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առներ
50 զդա։ * Իսկ Յ̃ս՝ իբրեւ լուաւ, պատասխանի ետ նմա
51 եւ ասէ. մի երկնչիր, միայն հաւատա՝ եւ կեցցէ։ * Եւ
մտեալ 'ի տունն, ոչ զոք եթող մտանել, բայց միայն
զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս, եւ զհայր ման-
52 կանն եւ զմայր նորա։ * Լային ամենեքեան՝ եւ կոծէին
զնա։ եւ նա՝ ասէ. մի լայք զի չէ մեռեալ, այլ ննջէ։
53 * Եւ նոքա՝ ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մե-
54 ռաւ։ * Եւ նր՝ հանեալ զամենեսեան արտաքս, * կա-

լաւ

---

(41) Ոմանք. Որոյ անուն էր։ (42) 'Ի Բ̃շն օրինակի. Զի դուստր մի միածին։ (43) Ոմանք. Ամաց երկոտասան"։ (43) Ուրեմն Բեդ... առնէ 'ի լատինականն՝ յաւելում. Երկոտասանից, որ 'ի բժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր. որում ոչ էր։ (43) Ոմանք. Որում չէր հնար լինել յումեքէ։ (44) Ոմանք. Եւ մատուցեալ յե"։ (44) Ոմանք. 'Ի գրօշակ հանդերձի նր։ (45) Ոմանք. Ժողովուրդքդ. պնդեն"։ (47) Բ̃շն. 'Ի նա՝ պատմեաց։ (48) Ոմանք. Եւ նա ասէ ցնա. քաջալերեաց դուստր"։ (52) Ոմանք. Զի ոչ է մեռեալ։

Digitized by Google

լեալ զձեռանէն նր, բարբառեցաւ եւ ասէ. Աղջիկ կանգ 55
նեաց դու: * Եւ դարձաւ ոգի նր, եւ կանգնեցաւ 56
վաղվաղակի. եւ հրամայեաց տալ նմա ուտել: * Եւ 57
զարմացան ծնողք նորա: եւ նա պատուիրէր մի ու-
մեք ասել՝ որ ինչ եղեւն:

Գլ. Թ.

ԻԵ Եւ կոչեցեալ զերկոտասանսն առաքեալսն, ետ նոցա 1
զօրութիւն եւ իշխանութիւն ի վր ամ դիւաց, եւ բժշ-
կել զհիւանդութիւնս: * Եւ առաքեաց զնս քարոզել զարք- 2
քայութիւն այ, եւ բժշկել զախտաժէտս: * Եւ ասէ 3
ցնս. մի ինչ բառնայք ի ճանապարհ. մի գաւազան, մի
մի մախաղ, մի հաց, եւ մի արծաթ. մի երկուս հան-
դերձս ունիցիք: * Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ա- 4
ջիք, եւ անտի գնասջիք: * Եւ որք ոչ ընդունիցին զձեզ. 5
յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից
ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա: * Եւ ելեալ 6
շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեղս, աւետարանէին եւ
բժշկէին ընդ ամ տեղիս: * Լուաւ հերովդէս չորրոր- 7
դապետ զգործսն ամ, եւ զարմանայր՝ վասն ասելոյն
յոմանց, * եթէ յովհաննէս յարեաւ ի մեռելոց, եւ 8
յոմանց՝ թէ եղիա յայտնեցաւ, եւ յայլոց՝ թէ մարգա-
րէ ոմն յառաջնոցն յարեաւ: * Ասէ հերովդէս. զյով- 9
հաննէս՝ ես գլխատեցի. իսկ սա՝ ով իցէ զորմէ զայդպի-
սիսն լսեմ. եւ խնդրէր՝ տեսանել զնա: * Դարձ- 10
ձան առաքեալքն, եւ պատմեցին նմա զոր ինչ արա-
րին: Եւ առեալ զնս խոյս ետ առանձինն ի տեղի ա-
նապատ քաղաքի միոյ, որում անուն էր բեթսայիդա:
* Եւ ժողովուրդքն իբրեւ գիտացին, գնացին զհետ 11
նր. եւ ընկալեալ զնս խօսէր ընդ նս վս արքայութեան
այ, եւ որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր:
ԻԶ * Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտասան- 12
քըն եւ ասեն ցնա. արձակեա զժողովուրդդ, զի եր-
թեալ շուրջ ի գեղս՝ եւ յագարակս հանգիցեն, եւ
գտցեն կերակուր. զի աստ՝ յանապատի տեղւոջ եմք:
* Ասէ ցնս. տուք դուք դոցա՝ ուտել. եւ նք ասեն. 13
ոչ գոյ մեր՝ աւելի քան զհինգ նկանակ եւ զերկուս ձը-
կունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական ժո-
ղովրդեանդ կերակուր: * Քանզի էին արք՝ իբրեւ հինգ 14
հազ-

(55) Յօրինակին դիւէր. Զձեռանէն նորա, բարբ":
Գլ. Թ. (3) Ուղւոյն. Բառնայք ի ճնպհ: (6) Օրինակ. Գեղաքաղս. խամ, գեղս: (9) Օրինակ. Ով է, զորմէ: (10) Օրինակ. Քաղաքի միում: (13) Օրինակ. Տուք նց ուտել: (14) Օրինակ. Հինգ հազարք: այլ ցաղակերպան ի բաց:

Digitized by Google

հրամայէ՛ * Ասէ ցաշակերտսն. բազմեցուցէք զդոսա դասս
15 դասս յիսուն յիսուն։ * Եւ արարին այնպէս, և բազ-
16 մեցուցին զամենեսեան։ * Եւ առեալ զհինգ նկանակսն
և զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս՝ օրհնեաց, և
եբեկ՝ և տայր աշակերտացն արկանել ժողովրդեանն։
17 * Կերան և յագեցան ամենեքեան. և բարձին զնշխարս
կոտորոցն՝ երկոտասան սակառի։
18 * Եւ եղև ի կալն նր յաղօթս առանձինն, էին ընդ ԻԹ
նմա և աշակերտքն նր. եհարց զնս և ասէ. զո՞վ ոք աս- դ կ
19 են զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ։ * Եւ նք պատասխա-
նի տուեալ՝ ասեն. զՅովհաննէս մկրտիչ. և այլք՝ զԵ-
ղիա. և այլք՝ թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ։
20 * Ասէ ցնս. դուք՝ զո՞վ ոք ասէք զինէն թէ իցեմ։
21 պատասխանատուեալ Պետրոս՝ և ասէ. զՔն Այ։ * Նա՝
սաստեաց ի նս, և պատուիրեաց մի՛ումեք ասել զայն։
22 * և ասէ՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չար-
չարել, և անարգել՝ ի քահանայապետից և ի ծերոց և
23 ի դպրաց, և սպանանել՝ և յերրորդ աւուր յառնել։ * Եւ
ասէր առ ամենեսին. եթէ ոք կամի զհետ իմ գալ, ու-
րասցի զանձն, և առցէ զխաչ իւր հանապազ, և ե-
24 կեսցէ զհետ իմ։ * Զի որ կամիցի զանձն իւր կեցու-
ցանել, կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր
25 վն իմ՝ կեցուսցէ զնա։ * Զի՞նչ օգուտ է մարդոյ՝
եթէ զաշխարհս շահեսցի, և զանձն իւր կորուսցէ կամ
26 տուժեսցի։ * Զի որ ամօթ համարեսցի զինէն և զբանս
իմ, զնա՝ և որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ
գայցէ փառօք իւրովք՝ և Հօր, և հրեշտակաց սրբոց։
27 * Բայց ասեմ ձեզ՝ ճշմարիտ, եթէ են ոմանք ի դոցա- Լ
նէ որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև
28 տեսցեն զարքայութիւն Այ։ * Եւ եղև յետ այսց բանից՝
իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս
29 և զՅովհաննէս, ել ի լեառն կալ յաղօթս։ * Եւ ի
կալն նորա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նր այլակերպ.
և փոփոխեցաւ հանդերձք նորա՝ և եղև սպիտակ փայլելով։
30 * և ահա՝ արք երկու խօսէին ընդ նմա. որ էին Մով-

---

(16) Ոսկան. Զհինգ նկանակսն։ (17) Ոմանք. Զնշխարս կոտորոցն։ (18) Ոմանք. Եւ հարց զնս։ (19) Ոմանք. Եւ նք պատասխանի տուեալ"։ (20) Ոմանք. Իսկ դուք զո՞ ոք ա"։ (22) Ոսկան. Եւ ասէր թէ պարտ։ (22) Ոմանք. Բազում չարչարել։ (24) Ոմանք. Զի որ կամեսցի։ (25) Ոմանք. Զի՞նչ օգուտ իցէ.. եթէ զաշխարհս շահեսցի։ (25) Ոսկան. Կամ տուժեսցի. (26) Ոմանք. Յամօթ համարեսցի։ (27) Ոմանք. Զի են ոմանք ի դոցա". զարքայութիւն. (29) Ոմանք. Եւ ի կալն նր յաղօթս։

Digitized by Google

ակա. և Եղիա, * երևեցան փառօք. և ասէին զելսն նորա, 31
զոր կատարելոց էր յԵմ: * Իսկ Պետրոս և որ ընդ 32
նմայն էին՝ ծանրացեալք ՚ի քնոյ, զարթեան, տեսին
զփառսն նորա, և զերկուս արսն որ կային առ նմա: * Եւ 33
եղև ՚ի մեկնելն նոցա ՚ի նմանէ, ասէ Պետրոս ցՅս. Վար-
դապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, և արասցուք ե-
րիս տաղաւարս, մի քեզ, և մի՝ Մովսիսի, և մի՝ Եղիայի:
և ոչ գիտէր զինչ խօսէր: * Եւ իբրև զայս ասաց, եկն 34
ամպ և հովանի եղև ՚ի վր նոցա. և երկեան ՚ի մտանելն
նոցա ընդ ամպովն: * Ձայն եղև յամպոյն և ասէ. դա է 35
որդի իմ ընտրեալ, դմա լուարուք: * Եւ ընդ լինել 36
բարբառոյն՝ գտաւ Յս միայն: և նոքա լռեցին. և
ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ, և ոչինչ յա-
գբ րոց տեսին: * Եւ եղև ՚ի վաղիւն՝ մինչ իջանէին նոքա ՚ի 37
լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում:
ԼԱ * Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի, աղաղակեաց 38
և ասէ. Վարդապետ՝ աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ.
զի միամօր է ինձ: * և ահա այս հարկանի ՚ի նմա, և 39
յանկարծ գոչէ, և զարկուցանէ զնա՝ և թաւալեցու-
ցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ՚ի նմա-
նէ, խորտակեալ զնա. * և աղաչեցի զաշակերտսն քո 40
զի հանիցեն զնա, և ոչ կարացին: * Պատասխանի ետ 41
Յս և ասէ. ով ազգ անհաւատ և թեւր, մինչև յե՞րբ
իցեմ ը̄ը ձեզ, և անսայցեմ ձեզ. մատո այսր զորդին
քո: * Եւ մինչ դեռ մատչէր, զարկեալ զնա դևն, և 42
շարժեաց: * Սաստեաց Յս այսոյն պղծոյ, և բժշկեաց 43
զմանուկն. և ետ զնա ցհայր իւր: * Եւ զարմանային 44
ամենեքեան ՚ի վր մեծամեծացն այ: Եւ ՚ի զարմանալն
ամենեցուն ՚ի վր ամի զոր առնէր, ասէ ցաշակերտսն
իւր. դիք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի որ-
դի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան: * Եւ նք 45
ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ ՚ի նոցանէ զի մի գի-
տասցեն. և երկնչէին հարցանել ցնա վս բանիդ այնորիկ:
ԼԲ * Եմուտ խորհուրդ ՚ի նս, թէ ո՞ արդեւք մեծ իցէ 46
՚ի նոցանէ: * Յս իբրև ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, 47
առ մանուկ մի՝ կացոյց ՚ի մէջ նոցա առ իւր, * և ասէ 48
ցնս. որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս

ըն-

(31) Ոմանք. Էր ՚ի յԵմ: (32) Ոմանք. Որ ը̄ը նմա էին:
(32) Ոմանք. Զարթեան և տեսին: (39) Ոմանք. Եւ յան-
կարծակի գոչէ: (41) Բզմք. Յե՞րբ եղէց ընդ ձեզ:
(41) Ոմանք. Ընդ ձեզ. մինչև ե՞րբ անսայցեմ: (43) Ո-
մանք. Այսոյն պղծոյ: (45) Ոմանք. Հարցանել զնա վս:
(46) Ոմանք. Եւ եմուտ խոր՛՛. թէ մծ: (47) Ոմանք. Յս
իբրև գիտաց զխորհ՛՛: (48) Ոմանք. Եւ որ զինն ը̄ը ունի:

ընդունի: և որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ.
Զի որ փոքրիկն է յամենեսին 'ի ձեզ՝ նա եղիցի մեծ:
49 * Պատասխանի ետ Յովհաննէս՝ և ասէ. վարդապետ, գ գ
տեսաք զոմն զի յանուն քո դևս հանէր՝ և արգելուաք
50 զնա, զի ոչ շրջի ընդ մեզ: * Ասէ ցնա Յս. մի արգե-
լուք զնա, զի որ ոչն է ձեր թշնամի՝ 'ի ձեր կողմն է:
51 * Եւ եղև 'ի կատարել աւուրց վերանալոյ նորա, և ինքն
52 զերեսս հաստատեաց երթալ յԵմ: * Եւ առաքեաց
հրեշտակս առաջի երեսաց իւրոց. և նոքա չոգան, մը-
տին 'ի գեղ մի Սամարացւոց՝ պատրաստել ինչ նմա:
53 * և ոչ ընկալան զնա զի դէմ եդեալ էր նորա երթալ յԵմ:
54 * Իբրև տեսին աշակերտքն՝ Յակոբոս և Յովհաննէս,
ասեն. Տէր՝ կամիս զի ասասցուք, և իջցէ հուր յերկ-
55 նից՝ և սատակեսցէ զնոսա: * Դարձաւ՝ սաստեաց 'ի
56 նս՝ և ասէ. ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք: * զի որ-
դի մարդոյ՝ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ
կեցուցանել, և գնացին յայլ գեղ:
57 * Եւ մինչ գնա երթային նք 'ի ճանապարհի, ասէ ոմն ԼԴ
58 ցնա. եկից զհետ քո՝ յոր վայր և երթայցես: * Ասէ ցնա
Յս. աղուեսուց՝ որջք գոն, և թռչնոց երկնից՝ դա-
59 դարք, և որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ: * Ա-
սէ ցայլ ևս. եկ զհետ իմ: և նա՝ ասէ. Տէր՝ հրաման
60 տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ: * Ասէ ցնա
Յս. թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու
61 երթ՝ պատմեա զարքայութիւն այ: * Ասէ և այլ ոմն. եկից
զհետ քո Տր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժարել 'ի
62 տանէ իմմէ: * Ասէ ցնա Յս. ոչ ոք արկանէ ձեռն զմա-
ճով, և հայեսցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան այ:

ԳԼ. Ժ.

1 Յետ այսորիկ երևեցոյց Տր և այլ ևս եւթանասուն ԼԴ
և երկուս. և առաքեաց զնս երկուս երկուս ա- գ գ
ռաջի իւր, յամ քաղաքս և 'ի տեղիս՝ ուր ինքն երթա-
2 լոց էր: * Եւ ասէ ցնս. Հունձք բազում են՝ և մշ-
ակք սակաւ. արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց, զի հան-
3 ցէ մշակս 'ի հունձս իւր: * Երթայք, ահա՝ առաքեմ
4 զձեզ իբրև զգառինս 'ի մէջ գայլոց: * Մի բառնայք
քսակ,

---

(49) Ոմանք. Որ յանուն քո: (50) 'Ի բազում տպ. Արգե-
լուք զնա. զի: (57) Ոմանք. Եկից և ես զհետ քո:
(57) Բազումք. Յոր վայր և երթիցես: (58) Ոմանք. Զգլուխ
իւր: (60) Ոմանք. Զարքայութիւն այ: (62) Ոմանք.
Զձեռն զմաճ... յաջողակ է արքայութեան այ:
Գլ. Ժ. (1) Ոմանք. Եւ այլս եւթանասուն և: (4) Ո-
մանք. Եւ մի մախաղս, մի կօշիկս.. ողջոյն մի տայք.

Digitized by Google

քսակ, մի մախաղ, մի կօշիկս. և 'ի ճանապարհի ումեք
ողջոյն մի տայցէք: * Յոր տուն մտանիցէք, նախ ասաս- 5
ջիք թէ ողջոյն տանս այսմիկ. * Եթէ իցէ անդ որդի 6
ողջունի՝ հանգիցէ 'ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա
թէ ոչ՝ 'ի ձեզ դարձցի: * Եւ 'ի նմին տան ագանիջիք. 7
ուտիջիք և ըմպիջիք 'ի նոցանէ. զի արժանի է մշակն
վարձու իւրոյ: Մի փոխիցիք տանէ 'ի տուն: * Յոր 8
քաղաք մտանիցէք՝ և ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ
առաջի դնիցեն ձեր. * և բժշկեսջիք որ 'ի նմա հի- 9
ւանդք իցեն. և ասասջիք նոցա, մերձեցաւ է 'ի վերայ ձեր
արքայութիւն Այ: * Իսկ յոր քաղաք մտանիցէք, և ոչ ըն- 10
դունիցին զձեզ. ելեալ ելանիցէք 'ի հրապարակս նր՝
ասասջիք. * և զփոշին որ կպաւ մեզ 'ի քաղաքէ ձերմէ 11
յոտս մեր՝ թօթափեսցուք 'ի ձեզ. բայց զայս գիտաս-
ջիք՝ զի մերձեցաւ է արքայութիւն Այ: * Ասեմ ձեզ, զի 12
սոդոմայեցւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայն-
միկ՝ քան քաղաքին այնմիկ: * Վայ քեզ Քորազին. վայ 13
քեզ Բեթսայիդա. զի եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդովն ե-
ղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն 'ի ձեզ, վաղուց ևս քուր-
ձիւք 'ի խորգ և 'ի մոխիր նստեալ և ապաշխարեալ էին:
* Բայց Տիւրոսի և Սիդովնի ընդարձակագոյն լիցի յա- 14
ւուրն դատաստանի՝ քան ձեզ: * Եւ դու Կափառնայու- 15
մ, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև 'ի դը-
ժոխս իջցես: * Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ ա- 16
նարգէ, զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն
իմ անարգէ. և որ ինձ լսէ, լսէ այնմիկ որ զիսն առա-
քեաց: * Դարձան եօթանասուն և երկուքն խնդու- 17
թեամբ և ասեն. Տէր՝ և դևք հնազանդին մեզ յանուն
քո: * Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ անկեալ 18
յերկնից իբրև զփայլակն: * Ահա՝ ետու ձեզ իշխա- 19
նութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամ զօրութիւն թշնամ-
ւոյն, և ձեզ ոչինչ մեղանչիցեն: * Բայց ընդ այն մի 20
խնդայցէք՝ թէ այսք հնազանդին ձեզ. այլ խնդացէք՝ զի
անուանք ձեր գրեալ են յերկինս: * 'Ի նմին ժամու՝ 21
ցնծացաւ յՀոգին սուրբ և ասէ. գոհանամ զքէն
Հայր Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստ-
նոց

---

(6) Ոմանք. Եւ եթէ իցէ.. հանգիցէ 'ի նա ողջոյն ձեր: (7) Ոսկան. 'ի տանէ 'ի տուն: (10) Ոմանք. 'Ի հրապարակս նց: (11) Ոմանք. Մերձեցաւ է 'ի մէջ ձեր արք: (12) Ոմանք. Զի սոդոմայեցւոցն: (13) Բազմ. Վաղուց ևս.. նստեալ ապաշխարեալ էր: Ոսկ. ունի. ապաշխարեալ էին: (14) Բազմ. Լիցի 'ի դատաստանի: (16) Ոմանք. Եւ որ զձեզն անարգէ: (19) Ոմանք. Եւ ձեզ ինչ ոչ մեղ: (20) Ոմանք. Եւ թէ այսք: (21) Ոմանք. Երկնից և երկրի:

'նաց և 'ի գիտնոց, և յայտնեցեր զայս տղայոց. այո՛
22 հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: * Ամենայն
ինչ տուաւ ինձ 'ի հօրէ իմմէ. և ո՛չ ոք գիտէ թէ ո՛վ է
որդի, եթէ ոչ՝ հայր, և ո՛ է հայր՝ եթէ ոչ՝ որդի, և
23 ում կամիցի որդին յայտնել: * Եւ դարձեալ առան-
ձինն առ աշակերտսն՝ ասէ. երանի աչաց՝ որ տեսա-
24 նիցեն զոր տեսանէքդ: * Ասեմ ձեզ. զի բազում մարգա-
րէք և թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տե-
սանէք՝ և ո՛չ տեսին. և լսել զոր լսէքդ՝ և ո՛չ լուան:
25 * Եւ ահա՝ յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա և ԼԵ
ասէր. վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանսն յա- դ ե
26 ւիտենականս ժառանգեցից: * Եւ նա՝ ասէ ցնա. յօ-
27 րէնս՝ զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս: * Նա՝ պա-
տասխանի ետ՝ և ասէ. սիրեսցես զՏէր Ած քո յամ սըր-
տէ քումմէ, և յամ անձնէ քումմէ, և յամ զօրութենէ
քումմէ, և յամ մտաց քոց. և զընկեր քո իբրև զանձն
28 քո: * Եւ ասէ ցնա. ուղիղ ետուր զպատասխանիդ,
զայդ արա՝ և կեցցես:
29 * Նա՝ իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ա- ԼԶ
30 սէ ցՅս. և ո՞վ է իմ ընկեր: * Պատասխանի ետ Յս՝
և ասէ. այր մի՝ իջանէր յԵմէ յԵրիքով, և անկաւ 'ի
ձեռս աւազակաց, որք մերկացին զնա, և վէրս 'ի վերայ
31 եդին, թողին կիսամահ և գնացին: * Դէպ եղև քա-
հանայի միոջ՝ իջանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ
32 զնա՝ զանց արար: * Նոյնպէս և ղևտացի մի՝ եկեալ
33 ընդ նոյն տեղի, ետես և զանց արար: * Սամարացի
ոմն ճանապարհորդեալ, եկն ընդ նոյն առ նովաւ, և
34 տեսեալ զնա՝ գթացաւ. * և մատուցեալ պատեաց ըզ-
վէրս նր, արկեալ 'ի վերայ ձէթ և գինի. և եդեալ
'ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա 'ի պանդոկի մի, և
35 դարմանեաց զնա: * Եւ 'ի վաղիւ անդր՝ իբրև ելա-
նէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դա-
հեկանս՝ և ասէ. դարման տար դմա, և զոր ինչ ծա-
խեսցես 'ի դա՝ 'ի միւսանգամ գալստեան իմում հա-
36 տուցից քեզ: * Արդ՝ ո՞ յերիցունց 'ի նոցանէ թուի
քեզ

(22) Ոմանք. Եթէ ո՛ է որդի.. և ոչ զհայր ոք գիտէ, եթէ, ոչ որդի: (23) Ոմանք. Աչացն որ տեսանեն: (24) Ոմանք. Եւ ոչ կարացին տեսանել. և լսել զոր լուայքդ, և: (25) Ոմանք. Օրինական ոմն: (29) Ոմանք. Եւ ո՛ է իմ ըն՞: (30) Ոմանք. Մերկացուցին զնա: (31) Ոմանք. Ընդ այն ճնպհ: (32) Ոմանք. Եկեալ է այն տեղի: (33) Ոմանք. Եկն է այն առ նով՞: (34) Այլ գրչագիրք փոխան գրեն 'ի պանդոկի մի. ած 'ի տուն: (35) Ոսկան. Ծախեսցես 'ի դմա: (36) Բազ՞. Մերձաւոր լեալ անկե՞:

քեզ մերձաւոր լինել անկելոյն 'ի ձեռս աւազակացն ։
* Եւ նա ասէ․ որ արարն զողորմութիւնն 'ի վերայ նր ։ Ա- 37
սէ ցնա յս․ երթ և դու՝ արա նոյնպէս ։
ԼԷ * Եւ եղև 'ի գնալն նց, և ինքն եմուտ 'ի գեղ մի․ և կին 38
մի անուն մարթա՝ ընկալաւ զնա 'ի տուն իւրում ։ * Եւ 39
նր էր քոյր մի, որում անուն էր մարիամ․ որ և եկն
նստաւ առ ոտսն տն, և լսէր զբանս նր ։ * Եւ մար- 40
թա զբաղեալ էր 'ի բազում սպասու․ եկն եկաց առ նմա՝
և ասէ․ տր՝ ոչինչ փոյթ է քեզ, զի քոյրդ իմ միայն ե-
թող զիս 'ի սպասու․ արդ՝ ասա զմա զի օգնեսցէ ինձ ։
* Պատասխանի ետ յս՝ և ասէ․ մարթա մարթա, զու- 41
հոգաս՝ և զբաղեալ իւիք զբազմաւ ես․ * բայց սակաւ՝ 42
սակաւ ինչ պիտոյ է․ մարիամ մասն բարի ընտրեաց,
որ ոչ բարձցի 'ի նմանէ ։

ԳԼ․ ԺԱ․

ԼԸ Եւ եղև 'ի լինել 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս․ և իբրև դա- 1
դարեաց, ասէ ցնա մի յաշակերտացն իւրոց․ տր՝
ԴԶ ուսո մեզ յաղօթս կալ, որպէս յովհաննէս ուսոյց աշակեր-
տացն իւրոց ։ * Ասէ ցնս, յորժամ կայցէք յաղօթս, 2
ասասջիք ։ Հայր մեր, սբ եղիցի անուն քո․ եկեսցէ
արքայութիւն քո ։ * զհաց մեր հանապազորդ տուր մեզ 3
զօրըստօրէն ։ * և թող մեզ զմեղս մեր ։ զի և մեք թո- 4
ղումք ամենայնի՝ որ պարտական իցեն մեզ ։ և մի տանիր զ-
մեզ 'ի փորձութիւն ։ * Եւ ասէ ցնս․ ո՞վ է 'ի ձէնջ՝ որոյ 5
իցէ բարեկամ, և երթիցէ առ նա 'ի մէջ գիշերի, և
ասիցէ ցնա․ բարեկամ՝ տուր ինձ փոխ երիս նկանակս․
* զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ, և ոչինչ ունիմ 6
դնել առաջի նր ։ * Եւ նա 'ի ներքուստ տայցէ պա- 7
տասխանի և ասիցէ․ մի՛ աշխատ առներ զիս, զի դուռն
փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի․
ոչ կարեմ յառնել և տալ քեզ ։ * Ասեմ ձեզ, և- 8
թէ

(38) Ոմանք․ Եւ եղև 'ի գնալն նց ։ (39) Ոմանք․ Որոյ ա-
նուն էր ․․․ առ ոտս տն, և լսել զբանն նր ։ (40) Ո-
մանք․ Եկն և եկաց ։ (40) Ոմանք․ Ոչ ինչ է փոյթ քեզ ։
(41) Ոմանք․ Պատասխանի ետ նմա յս՝ և ․․ և բազմաւ իւիք ։ (42) Ո-
մանք․ Ո՛չ բարձցի 'ի նմանէ․
ԳԼ․ ԺԱ ։ (1) Ոմանք․ կալ յաղօթս ։ (1) Ոմանք․ Որպէս և
յովհաննէս ։ (2) 'Ի լուսա՛․ Ասէ ցնս․ յոր"․ համաձայն ամենայն
'ի Բնաբ" ։ (4) Բնաբ․ Որ պարտական իցէ մեզ ։ (5) Ոմանք․ Եւ
ասէ ցնս․ բարեկ" ։ (6) Բնաբ․ Առ իս յուղւոյ ։ (7) Ոմանք․
Տացէ պատասխանի և ասասցէ ․․․ զի դրունք ։ (7)(8) Ոմանք
առեալ 'ի լուսանցաներէն յաւելուն․ Եւ տալ քեզ ։ * Եթէ նա
պնդիցի բախելով, ասեմ ձեզ ։ (8) Ոմանք․ Տացէ նմ"

Digitized by Google

Թէ ոչ յարուցեալ տայցէ նմա վն բարեկամութեն, սա-
կայն վն ժտութեն յարուցեալ տացէ նմա՝ զինչ և պէ-
9 տոյ իցէ: * Եւ ես ձեզ ասեմ. խնդրեցէք՝ և տացի
ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ:
10 * Զի ամ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և
11 որ բախէ՝ բացցի նմա: * Ո՞ ոք 'ի ձէնջ հայր՝ խնդ-
րեսցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն՝ օձ տայ-
12 ցէ նմա: * և կամ խնդրեսցէ ձու, միթէ կարիճ տայ-
13 ցէ նմա: * Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պար-
գևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել
հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդ-
րեն 'ի նմանէ:

14 * Եւ հանէր դև մի համր. և եղև յելանել դևուն՝ խօ- ԼԹ
15 սեցաւ համրն, և զարմացան ամ ժողովուրդքն: * Եւ գէ
ոմանք 'ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ իշխանաւն
16 դիւաց հանէ դա զդևս: * Եւ այլք՝ փորձէին և նշ-
17 ան յերկնից խնդրէին 'ի նմանէ: * Իսկ նա՝ գիտացեալ
զխորհուրդս նց, ասէ ցնս. Ամ թագաւորութիւն բա-
ժանեալ յանձն, աւերի, և տուն բաժանեալ յանձն
18 կործանի: * Արդ եթէ և սատանայ բաժանեցաւ յանձ-
նէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նր. զի ասէք զինէն
եթէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդ-
19 ևս: * Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդևս, որդիքն
ձեր՝ իւ՞ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր
20 դատաւորք: * Իսկ եթէ մատամբն այ հանեմ զդևս,
21 ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն այ: * Յոր-
ժամ հզօր, վառեալ՝ պահիցէ զտուն իւր, 'ի խաղա-
22 ղութեան են ինչք նր: * Բայց եթէ հզօրագոյն քան զնա
'ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւն նր
հանէ յոր յուսացեալ էր, և զաւար նորա բաշխեսցէ:
23 * Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողո-
24 վէ ընդ իս, ցրուէ: * Յորժամ այսն պիղծ ելանիցէ
'ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ.
և իբրև ոչ գտանէ, ասէ. դարձայց 'ի տուն
25 իմ ուստի ելին: * և եկեալ գտանէ մաքրեալ և յարդա-
26 րեալ: * Յայնժամ երթայ և առնու եւթն այլ այս
չար

զինչ պիտոյ իցէ: (11) Օրինակ. Փոխանակ ձկան: (14) Յօ-
րինակին գրեալ. Եւ եղև յելանել դիւ": (15) Օրինակ. 'Ի
նցնէ ասէին: (16) Յօրինակս գրեալ. Եւ նշան յերկնից խնդ":
(18) Օրինակ. Արդ թէ սատանայ . . . իշխանաւ հանէ
դա զդևս: (19) Օրինակ. Վն այնորիկ նք եղի": (22) Օրինակ.
Զսպառազինութիւն հանէ: (23) Օրինակ. Որ ոչ է ը̄իս:
(24) 'Ի բազմ գրեալ. Այսն պիղծ ելա": (24) Օրինակ. Եւ
ոչ գտանէ, ասէ. . . ուստի ելի: (26) Օրինակ. Երթայ

չար ևս քան զինքն, և մտանեն բնակեն անդ. և լինին յե-
տինքն մարդոյն այնորիկ չար քան զառաջինսն:
Խ * Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն ամբարձ կին մի 27
՚ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի է որովայնին՝
որ կրեաց զքեզ, և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ:
* Եւ նա ասէ. նա՛ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն 28
Այ, և պահիցեն:
ԽԱ * Եւ ՚ի դիմանել ՚ի վերայ նր ժողովրդոցն՝ սկսաւ ա- 29
սել. ազգս այս՝ ազգ չար է. նշան խնդրէ, և նշան յերկ-
նից՝ ոչ տացի սմա՝ բայց նշանն յովնանու: * Զի որպ 30
եղեւ յովնան նշան նինուէացւոց, նոյնպէս եղիցի և որ-
դի մարդոյ ազգիս այսմիկ: * Դշխոյն հարաւոյ յարի- 31
ցէ ՚ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ, և դա-
տապարտեսցէ զսա. զի եկն ՚ի ծագաց երկրի լսել զի-
մաստութիւն սողոմոնի: և ահա՛ աւաւելի քան զսո-
ղոմոն է աստ: * Արք նինուէացիք յարիցեն ՚ի դա- 32
տաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտես-
ցեն զսա, զի ապաշխարեցին ՚ի քարոզութիւն յովնանու:
Ե Է և ահա՛ աւաւելի քան զյովնան է աստ: * Ո՛չ ուրուք 33
լուցեալ ճրագ՝ դնէ ՚ի թաքստեան, այլ ՚ի վերայ աշ-
տանակի, զի որ մտանիցեն՝ լոյս տեսանիցեն: * Ճրագ 34
մարմնոյ ակն է. յորժամ ակնն առատ է, ամ մարմինն
լուսաւոր եղիցի: և երբ ակն չար է, և մարմինն խա-
ւարին եղիցի: * արդ՝ զգոյշ լեր, գուցէ լոյսդ որ ՚ի 35
քեզ է՝ խաւար իցէ: * Եթէ մարմինդ քո ամ լուսա- 36
ւոր է, և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր
ամ. որպէս յորժամ ճրագն նշուլիւք լուսաւորիցէ զքեզ:
ԽԲ * Եւ մինչ դեռ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարի- 37
սեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա: և նա՝ մտեալ բազ-
մեց

առնու եւթն այլ այսս չար.. և լինիցի յետինն: (26) Ոսկան. Եւ մտեալ բնակեն: (27) Ոմանք. ՚ի ժողովրդենէն՝ և ասէ. երանի որովայնին որ կրեաց: (28) Ոմանք. Զբանն Այ, և առնեն: Ոսկ և ոմանք. Զբանն Այ՝ և պահեն: (29) Ոմանք. Եւ ՚ի դիմանալն. ՚ի վերայ նորա ժողով"... մի տացի.. յովնանու մարգարէի: (30) Ոմանք. Այնպէս եղիցի և որ": (31) Ոմանք. Եւ դատապարտեսցէ զսոսա.. ՚ի ծագաց երկրէ: (32) Ոմանք. Զի ապաշխարեցին ՚ի քարոզ": (33) Ոսկան. առնէ ՚ի լապտերակալն յանէլո. ՚ի թաքստեան, և ոչ ընդ գրուանաւ. այլ: (33) Ոմանք. Զի որ մտանիցեն՝ լոյս տեսցեն: (34) Ոմանք. Խաւարին եղիցի: (36) Ոմանք. Եւ ոչ գուցէ մասն... նշողիւք լուսաւորեսցէ զքեզ: (37) Ոմանք. Եւ մինչ խօսէր զայս.. ճաշ կերիցէ ընդ նմ: Ոսկ օրինակ Գ. Զնա ածեն ՚ի փարիսեցւոցն՝ զի ճաշ կերիցէ առ նմա:

Digitized by Google

38 ճաշաց ։ * Իբրեւ ետես փարիսեցին՝ զարմացաւ զի նախ
39 ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշն ։ * Ասէ ցնա Տէր ․ այժմ
դուք փարիսեցիք զարտաքին զբաժակին եւ զմանկին
սրբէք ․ եւ ներքինն ձեր լի է յափշտակութեամբ եւ չա-
40 րութեամբ ։ * Անմիտք՝ ոչ ապաքէն որ զարտաքինն արար ․
41 եւ զներքինն նոյն արար ։ * Բայց աղէ՝ զարժանն խաղ-
տուք ողորմութիւն, եւ ահա՝ ամենայն սուրբ է ձեր
42 * Այլ վայ ձեզ փարիսեցւոց ․ զի տասանորդէք զանանուխ
նանուխ եւ զփեգանայ, եւ զամ բանջար, եւ անցանէք զի-
րաւամբք եւ զսիրովն Այ ։ զայս՝ արժան էր առնել՝ եւ
43 զայնս՝ ոչ անցանել ։ * Վայ ձեզ փարիսեցւոց ․ զի սի-
րէք զառաջնորդութիւն 'ի ժողովուրդս, եւ զողջոյնս 'ի
44 հրապարակս ։ * Վայ ձեզ, զի էք դուք իբրեւ զգերեզ-
մանս անյայտս, եւ մարդիկ գնան 'ի վերայ՝ եւ ոչ գի-
45 տեն ։ * Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ եւ ասէ
ցնա ․ վարդապետ՝ զայդ բանս ասելով, եւ զմեզ թշնա-
46 մանես ։ * Եւ նա՝ ասէ ․ եւ ձեզ վայ օրինականացդ ․
զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, եւ դուք
47 մատամբ միով 'ի բեռինսն ոչ մերձենայք ։ * Վայ ձեզ՝
զի շինէք զշիրիմս մարգարէիցն ․ եւ հարքն ձեր սպանին
48 զնոս ։ * Ապա ուրեմն վկայէք, եթէ կամակից էք գոր-
ծոց հարցն ձերոց ․ զի նոքա կոտորեցին զնոս, եւ դուք
49 շինէք զգերեզմանս նց ։ * Վն այսորիկ իմաստութիւն
Այ ասաց ․ առաքեցից 'ի նս մարգարէս եւ առաքեալս,
50 եւ 'ի նոցանէ սպանանիցեն եւ հալածիցեն ։ * զի խնդրես-
ցի արիւն ամ մարգարէից՝ հեղեալ 'ի սկզբանէ աշխար-
51 հի՝ յազգէ յայսմանէ ։ * յարենէն աբելի մինչեւ յարիւնն
զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն եւ ՟Ը տաճարն ․ այո
52 ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ յայսմանէ ։ * Վայ ձեզ
օրինականացդ ․ զի թաքուցանէք զփականս գիտութեն ․
դուք՝ ոչ մտանէք, եւ որ մտանելոցն էին՝ արգելուք ։
53 * Եւ 'ի խօսելն զայս ամ առ նս առաջի ամ ժողովրդ-
եանն՝ զամօթի հարկանելն ։ Եւ սկսան դպիրքն եւ
փարիսեցիք չչարել եւ դրդուել ՟Է նմ վասն բազմ իրաց ․
54 * եւ սպասել որսալ ինչ բանս 'ի բերանոյ նորա, զի
չարախօսեսցեն զնմանէ ։

Գ․Է։

---

(38) Ոմանք ․ Զի ոչ նախ մկրտեցաւ ։ (39) Բ․Հմք ․ Բա-
ժակին ։ (42) Ոմանք ․ Եւ զփեղենայ ․ ․ եւ զայն ոչ ան-
ցանել ։ (43) Ոմանք ․ Զառաջնադաշս 'ի ժողովս ։ (45) Ո-
մանք ․ Եւ մի ոմն յօրինաւ" ․ ․ զայդ բանդ ասելով ։ (48) Ո-
մանք ․ Կոտորեցին զմարգարէսն, եւ դուք ։ (49) Ոմանք
Վն այնորիկ եւ իմաստութիւն ։ (50) Ոմանք ․ Յազգէ յայդ-
մանէ ։ (51) Ոմանք ․ Մինչեւ ցարիւնն ․ ․ ․ ասեմ ասեմ ձեզ
խնդրեսցի ։ (54) Ոմանք ․ Զի չարախօսեսցեն զնմանէ ։

Digitized by Google

ԳԼ. ԺԲ.

Որպէս 'ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն մին- 1
չեւ կոխել զմիմեանս :
ԽԴ Սկսաւ ասել ցաշակերտսն իւր . Նախ՝ զգոյշ լերուք
անձանց 'ի խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղծաւորու-
թիւն : * Չիք ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ 2
գաղտնի՝ որ ոչ ծանիցի : * Վասն զի զոր ինչ ասիցէք 'ի 3
խաւարի, լուեալ լիցի 'ի լոյս . եւ զոր յականջն խօսե-
ցարուք 'ի շտեմարանս, քարոզեսցի 'ի վերայ տանեաց :
* Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց . մի զարհուրիցէք 4
յայնցանէ որ սպանանեն զմարմին, եւ յետ այնորիկ ա-
(19) Օրինակ մի. Եւ երկրորդն ասէ. լուծս.. (19) Ոմանք. Երթամ փորձել զնա. ա՛՛։ (21) Ոսկան. Պատմեաց զամենայն տն իւր՛՛։ (23) Բազումք. Եւ ՚ի ցանկս։ (26) Ոմանք. Եւ զկին իւր, և զոր՛՛։ (28) Յօրինակին գրեալ էր. Եւ ոչ նախ նստէ։ (28) Ոմանք. Համարեսցի զծախսն.. առ ՚ի կատարումն։ (29) Ոմանք. Եւ ոչ կարասցէ կա՛՛.. ամենեքեան որ։ (30) Ոմանք. Եթէ այրս այս սկ՛՛։ (31) Ոմանք. Երթեալ տացէ.. և ոչ նախ նստեալ։ (34) Ոմանք. Ապա եթէ աղն։

Digitized by Google

Գլ. ԺԵ.

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորքն և մեղա_ 1
ւորք՝ լսել 'ի նմանէ ։ * Տրտնջէին փարիսեցիքն 2
և դպիրքն՝ և ասէին . ընդէ՞ր սա՝ զմեղաւորս ընդու_
նի՝ և ուտէ ընդ նոսա ։
Ծ.Զ * Ասաց առ նա զառակս զայս ։ * Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ 3
մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, և կորուսանիցէ մի 4
'ի նոցանէ . ոչ թողուցու զիննսուն և զինն յանապա_
տի, և երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչև գտանիցէ
զնա ։ * և իբրև գտանէ՝ դնէ զնա 'ի վերայ ուսոց իւ_ 5
րոց խնդալով, * և երթայ 'ի տուն . կոչէ զբարեկամսն 6
և զդրացիս՝ և ասէ ցնոսա . ուրախ լերուք ընդ իս, զի
գտի զոչխարն իմ զկորուսեալ ։ * Ասեմ ձեզ . զի այս_ 7
պէս է ուրախութիւն յերկինս 'ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշ_
խարիցէ, քան ի իննսուն և իննն արդարոց՝ որոց չիցէ
պիտոյ ապաշխարութիւն ։ * Կամ ով իցէ կին, որոյ ի_ 8
ցեն դրամք տասն . և եթէ կորուսանիցէ դրամ մի, ոչ
լուցանէ ճրագ, և ածիցէ աւել 'ի տան, և խնդրիցէ
աստէպ՝ մինչև գտանիցէ ։ * և իբրև գտանէ, կոչէ ըն_ 9
բարեկամսն և զդրացիս՝ և ասէ . ուրախ լերուք ընդ
իս՝ զի գտի զդրամն իմ զոր կորուսի ։ * Այսպէս՝ 10
ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակացն Այ՝
'ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ ։
Ծ.Է * Եւ ասէ . առն միոջ էին երկու որդիք . * ասէ կրտ_ 11
սերն 'ի նոցանէ ցհայրն . հայր՝ տուր ինձ բաժին որ 12
անկանի յընչիցդ ։ և նա՝ բաժանեաց նոցա զկեանսն ։
* Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ 13
գնաց յաշխարհ հեռի . և անդ վատնեաց զինչս իւր, զի
կեայր անառակութեամբ ։ * Եւ իբրև սպառեաց զամն, 14
եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն
չքաւորել ։ * Եւ գնացեալ յարեցաւ 'ի միում քաղա_ 15
քացւոց աշխարհին այնորիկ . և յղեաց զնա յագարակս
իւր՝ արածել խոզս ։ * և ցանկայր լնուլ զորովայն իւր 16
յեղ_

Գլ. ԺԵ. (4) Յօրինակին գրեալ էր. Ով ոք իցէ ։ Որ սմանէ. Ո՛ ոք 'ի ձէնջ մարդ.. և կորուսանիցի մի 'ի.. զիննսուն և.. և երթայցէ զհետ ։ (6) Ոմանք. Ուրախ լերուք ԶԻս, ՔԶի գտի զոչխարն զիմ զկորուսեալ ։ (7) Ոմանք. Արդարոց, որոց չիցէ ։ (8) Բազմք. Ոչ լուցանիցէ ճրագ ։ (9) Ոմանք. Ուրախ եղերուք ԶԻ ։ (10) Ոմանք. Այսպէս ասեմ ձեզ ։ (12) Ոմանք. Ասէ կրտսերն... որ ինչ անկանի յընչիցդ ։ (13) Ոմանք. Կրտսերոյ որդւոյն. Կամ, կրտսեր որդւոյն.. զի կեայր անառ ։ (15) Ոմանք. 'ի մի ումն 'ի քաղաքացւոց ։ (16) Ոմանք. Յեղջիւրէն զոր ։

Digitized by Google

17 յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։ * Եւ
եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. քանի՛ վարձկանք իցեն 'ի տան
հօր՝ իմոյ հացալիցք, և ես աստ՝ սովամահ կորնչիմ։
18 * յարուցեալ գնացից առ հայր իմ, և ասացից ցնա.
19 հայր՝ մեղայ յերկինս՝ և առաջի քո; * և ոչ եւս եմ
արժանի կոչել որդի քո. արա զիս իբրև զմի 'ի վարձ-
20 կանաց քոց. * Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։ և
մինչ դեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն՝ և գթա-
ցաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարա-
21 նոցաւն նր, և համբուրեաց զնա։ * Եւ ասէ ցնա որ-
դին. հայր՝ մեղայ յերկինս՝ և առաջի քո, և ոչ եւս եմ
22 արժանի կոչել որդի քո։ * Ասէ հայրն ցծառայսն իւր.
վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին, և ագու-
ցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռն նր, և կօշիկս
23 յոտս նր. * և ածէք զեզն պարարակ, զենէք կերի-
24 ցուք և ուրախ լիցուք. * զի այս որդի իմ մեռեալ էր՝
և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ. և սկսան ուրախ
25 լինել։ * Եւ էր երէց որդի նր յագարակի. և մինչ
դեռ գայր՝ և մերձ եղև 'ի տունն, լուաւ զձայն եր-
26 գոց և զպարուց. * և կոչեցեալ առ ինքն զմի 'ի ծա-
27 ռայիցն՝ հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։ * Եւ նա՝ ա-
սէ ցնա. զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն
28 պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։ * Բարկացաւ՝
և ոչ կամէր մտանել։ և հայրն ելեալ արտաքս՝ աղա-
29 չէր զնա։ * Պատասխանի ետ՝ և ասէ ցհայրն. այս քա-
նի ամք են՝ զի ծառայեմ քեզ, և երբեք զպատուիրա-
նաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք ոչ ետուր ինձ՝ զի ու-
30 րախ եղէց ընդ բարեկամս իմ։ * յորժամ եկն որդիդ
քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ
31 դմա զեզն պարարակ։ * Եւ ասէ ցնա. որդեակ, դու
32 հանապազ ընդ իս ես։ և ամ որ ինչ իմ է՝ քո է. * այլ
ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս՝
մեռեալ էր, և եկեաց. կորուսեալ, և գտաւ։

Գ Լ.

---

(17) Յոմանս օրինակս. Եւ եկեալ 'ի միտս.. վարձկանք են 'ի տանն։ (18) Ոմանք. Առ հայրն իմ։ (20) Ոմանք. Անկեալ զպարանոցն։ (21) Ոմանք. Առաջի քո, ոչ եւս եմ։ (22) Ոմանք. Եւ ագուցէք զնմա։ (23) Ոմանք. Եւ զենէք։ (24) Ոմանք. Եւ եկաց։ (26) Ոմանք. Եւ կոչեաց առ ինքն.. և հարցանէր թէ։ (29) Յօրինակին. Այսքանի ամք են։ (29) Ոմանք. Զի ծառայեցի քեզ... ուրախ եղայց Է։ (30) Ոմանք. Եւ յորժամ եկն։ (30) Ոմանք. Զեզն պարարակն։ (32) Ոմանք. Պարտ է, զի եղբայրս քո այս.. կորուսեալ էր՝ և գտաւ։

Digitized by Google

ԳԼ. ԺԶ.

ԾԸ ՂԲ Եւ ասէ առ աշակերտսն. այր մի էր մեծատուն, ո- 1
րոյ էր՝ տնտես. և նորա զնմանէ ամբաստանեցան,
իբր թէ վատնիցէ զինչս նր։ * Կոչեաց՝ և ասէ ցնա. 2
զի՞նչ է այս զոր լսեմս զքէն, տուր զհամար տնտեսու-
թեան քոյ. զի ոչ ևս կարես լինել տնտես։ * Ասէ ընդ 3
միտս իւր տնտեսն. զի՞նչ գործեցից, զի տէր իմ հա-
նէ զտնտեսութիւնս. գործել՝ ոչ կարեմ. մուրանալ՝ ա-
մաչեմ։ * Գիտեմ զինչ արարից. զի յորժամ 'ի բաց լի- 4
նիցիմ 'ի տնտեսութենէս, ընկալցին զիս 'ի տունս իւ-
րեանց։ * Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ 'ի պարտ- 5
ապանաց տեառն իւրոյ. ասէ ցառաջինն. քանի՞ ինչ
պարտիս տեառն իմում։ * Եւ նա ասէ. հարիւր մար 6
ձիթոյ։ ասէ ցնա. կալ զգիր քո, և նիստ գրեա վաղ-
վաղակի յիսուն։ * Դարձեալ՝ ասէ ցմիւսն. դու՝ քա- 7
նի՞ ինչ պարտիս։ և նա ասէ. հարիւր քոռ ցորենոյ.
և ասէ ցնա. կալ զգիր քո՝ և նիստ գրեա ութսուն։
* Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաս- 8
տութ արար։ զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնա-
գոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց։ * Եւ 9
Ես ձեզ ասեմ. արարէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ
անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին
զձեզ 'ի յարկան յաւիտենականս։ * Որ 'ի փոքուն հա- 10
ւատարիմ է, և 'ի բազմին հաւատարիմ է. և որ 'ի փոք-
քուն՝ անիրաւ, և 'ի բազմին անիրաւ է։ * Իսկ արդ՝ 11
եթէ յանիրաւ մամոնային ոչ եղէք հաւատարիմք, զճշ-
մարիտն ձեզ՝ ո՞ հաւատայցէ։ * Եւ եթէ յօտարին ոչ ե- 12
ղէք հաւատարիմք, զձերն՝ ո՞ տայցէ ձեզ։ * Ոչ ոք կա- 13
րէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին՝ ատիցէ,
զմիւսն սիրէ. կամ զմին՝ մեծարիցէ, և զմիւսն արհա-
մարհիցէ։ ոչ կարէք այ ծառայել և մամոնայի։ * Լու- 14
ին լսէին զայս ամ փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք
էին, ամպարտաւանէին զնա։ * Եւ ասէ ցնս. դուք՝ որ ար- 15
դարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն
այ գիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր
է,

Գլ. ԺԶ. Օրինակ մի ընդ ... Եւ ասէր առ աշա՛՛։ (4) Օրինակ. 'Ի բաց լինիմ 'ի տնտե՛՛։ (5) Օրինակ. Եւ ասէ ցառաջինն։ (7) Օրինակ. Գրեա՛ վաղվաղակի ութսուն։ (9) Օրինակ. Պակասեսցէ այն.. զձեզ յարկան։ (10) Օրինակ. 'Ի փոքուն անիրաւ է։ (12) Բազմ. Ո՞ տացէ ձեզ։ (13) Օրինակ յաւելուած. Ոչ ոք ծառայ կարէ.. զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ։ (14) Օրինակ. Եւ ամպարտաւանէին զնա։ (15) Օրինակ. Դուք էք որ արդա՛՛.. զանձինս ձեր առաջի

Digitized by Google

16 է, պիղծ է առաջի Այ։ * Օրէնք եւ մարգարէք մին-
չեւ ցՅովհաննէս. յայնմ հետէ արքայութիւն Այ աւետա-
17 րանի, եւ ամ ոք ի նա բռնադատի։ * Դիւրագոյն է եր-
կնից եւ երկրի անցանել, քան յօրինացն միոյ նշանախե-
18 ցի անկանել։ * Ամենայն որ արձակէ զկին իւր, եւ առ-
նէ այլ՝ շնայ. եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ։
19 * Այր մի էր մեծատուն, եւ ագանէր բեհեզս եւ ծի-
20 րանիս, եւ ուրախ լինէր հանապազ առատապէս։ * Եւ
աղքատ մի անուն Ղազարոս, անկեալ կայր առ դրան
21 նր վիրաւորեալ. * եւ ցանկայր լնուլ զորովայն իւր ի
փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն. այլ
22 եւ շունք եկեալ՝ լեզուին զվէրս նր։ * Եղեւ մե-
ռանել աղքատին, եւ տանել հրեշտակացն զնա ի գոգ
23 Աբրահամու։ Մեռաւ եւ մեծատունն՝ եւ թաղեցաւ։ * Եւ
ի դժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր.
ետես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ զՂազարոս ի գոգ
24 նր հանգուցեալ։ * Եւ նա՝ աղաղակեաց եւ ասէ. Հայր
Աբրահամ՝ ողորմեաց ինձ, եւ առաքեա զՂազարոս, զի
թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ զովացուսցէ
25 զլեզու իմ, զի պապակեալ եմ ի տապոյ աստի։ * Եւ ասէ ցնա
Աբրահամ. որդեակ՝ յիշեա զի ընկալար անդէն զբա-
րիս քո ի կեանսն քում, եւ Ղազարոս նոյնպէս զչարչա-
րանս. արդ՝ սա աստ մխիթարի, եւ դու այդր՝ պապա-
26 կիս։ * Եւ ի վերայ այսր ամի՝ վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ
ձեզ. եթէ կամիցին աստի՝ առ ձեզ անցանել, ոչ կարեն.
27 եւ ոչ այտի ոք՝ առ մեզ անցանել։ * Եւ ասէ. արդ ա-
ղաչեմ զքեզ հայր, զի առաքեսցես զդա ի տուն հօր
28 իմոյ. * են իմ հինգ եղբարք, որպէս զի ասասցէ նց
վկայութիւն. զի մի եւ նք եկեսցեն յայս տեղի տանջանաց։
29 * Եւ ասէ Աբրահամ. ունին զՄովսէս եւ զմարգարէսն.
30 նց լուիցեն։ * Եւ նա ասէ. ոչ՝ հայր Աբրահամ, բայց
թէ ի մեռելոց ոք երթիցէ առ նս, եւ ապաշխարեսցեն։
31 * Եւ ասէ ցնա. եթէ Մովսիսի եւ մարգարէիցն ոչ լսեն.
եւ ոչ թէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւանեսցին։

ԳԼ.

---

(16) Ոսկան. Արքայութիւն Այ քարոզի, եւ ամ ոք։ (16) Օ-
րինակ մի. Ընդ յայնմ հետէ աւետարանեցաք զարքայութիւն Այ աւե-
տարանեալ, եւ ամ ոք։ (21) Ոմանք. Եւ ցանկայր յա-
գել՝ ի փշրանացն՝ որ։ (21) ի լնուլ". Եւ լեզուին։ (22) Ո-
մանք. Եւ եղեւ մեռանել.. եւ տանել զնա հրեշտակաց ի
գոգն Աբր"։ (23) Ոմանք. Եւ զՂազար ի գոգ նր։ (25) Ո-
մանք. Ընդունէր ի կեանս քո։ (28) Ոմանք. ասացէ նց
վկայ".. յայսմ տեղի։ (29) Ոմանք. Եւ զմարգարէս։
(30) Ոմանք. Բայց եթէ ի մե".. եւ ապաշխարեսցեն։
(31) Ոմանք. Ոչ լուիցեն... ոք յառնիցէ՝ հաւատասցեն։

Digitized by Google

ԳԼ. ԺԷ.

ՂԴ Ասաց և առ աշակերտսն իւր. ոչ է մարթ չգալ գայթ-
ագղութե. բայց վայ այնմիկ է՝ յորոյ ձեռն գայ-
ցէ ։ * Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար կախեալ էր ըզ- 2
պարանոցէ նր, և անկեալ 'ի ծով. քան թէ գայթագ-
ղեցուցանիցէ զմի ոք 'ի փոքրկանցս յայսցանէ ։ * Զգոյշ 3
կացէք անձանց ։ եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա նմ ։
և եթէ ապաշխարեսցէ, թող նմա ։ * և եթէ եւթն ան- 4
գամ մեղիցէ քեզ, և եւթն անգամ դարձցի 'ի քեզ և
ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա ։ * Եւ ասեն առա- 5
քեալքն ցՏր. յաւել մեզ հաւատս ։ * Եւ ասէ Տր. Ե- 6
թէ ունէիք հաւատս քան զհատ մանանխոյ, և ասէ-
ցէք թզենւոյս այսմիկ. խլեաց և անկեաց 'ի ծովդ,
և հնազանդեսցի ձեզ ։ * Իսկ ո՞վ ոք 'ի ձէնջ որ ունի- 7
ցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրեւ մտանիցէ՝
յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց բազ-
մեաց ։ * այլ ոչ ասիցէ ցնա, թէ պատրաստեա զինչ 8
ընթրեցից կերեմ, և զգածեալ պաշտեա զիս՝ մինչև
կերայց և արբից, և ապա կերիցես և արբցես դու ։
* Միթէ շնորհ ունիցի ծառային այնմիկ, զի արար զամ 9
հրամանսն ։ * Նոյնպէս և դուք՝ յորժամ առնիցէք զամ 10
հրամայեալսն ձեր, ասասջիք՝ թէ ծառայք անպիտանք
եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք ։
Կ * Եւ եղև մինչ երթայր նա յԵմ, և ինքն անցանէր ընդ 11
մէջ Սամարիայ և Գալիլեացւոց ։ * Եւ մինչ գեւղ մտա- 12
նէր 'ի գեղ մի, պատահեցին նմա տասն այր բո-
րոտ, որք կային 'ի հեռաստանէ, * բարձին զձայն՝ 13
և ասեն. յս վարդապետ՝ ողորմեաց մեզ ։ * Եւ իբրև 14
ետես զնս, ասէ ցնս. երթայք ցուցէք զանձինս քա-
հանայիցն ։ և եղև իբրև գնացին, սրբեցան ։
* Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես՝ թէ բժշկեցաւ, դար- 15
ձաւ մեծաւ ձայնիւ փառաւոր առնէր զԱծ. * ան- 16
կաւ 'ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նր՝ և գոհանայր
զնմանէ. և ինքն էր Սամարացի ։ * Պատասխանի ետ 17
յս՝

Գլ. ԺԷ. (2) Ոմանք. Կախեալ էր զպարանոցէ նր ։ և անկեալ 'ի ծով քան թէ գայթագղեցուցանէ ։ (3) Ոմանք. Մեղիցէ քեզ եղբայր քո ։ (7) Ոմանք. Իսկ ով է 'ի ձէնջ ։ (9) Ոմանք. Շնորհ ինչ ունիցի ծա՞ ։ (11) Ոմանք. Մինչ երթայր ։ և ոմանք. մինչդեռ երթայր նա (12) Ոմանք. 'Ի գեօղ ուրումն ։ (12) Ոմանք. Պատահեցին նմա տասն այր բորոտք ։ (13) Ոմանք. Ձայնիւ իւրեանց և ա՞ ։ (14) Ոմանք. Զանձինս ձեր քահա՞ ։ (17) Ոմանք. Ոչ տասն զգաստ ա՞ . . իննուքն ուր են ։

Digitized by Google

յն՝ և ասէ. ոչ տասն սոքա սրբեցան, իսկ արդ՝ ին_
18 նունքն ուր են. * զի ոչ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ,
19 բայց միայն այլազգիս այս։ * Եւ ասէ ցնա. արի՛ գնա,
20 զի հաւատք քո կեցուցին զքեզ։ * Իբրև հարցին ՚ի ՂԳ
փարիսեցւոցն՝ թէ երբ գայցէ արքայութիւն Աստուծոյ. պատասխա_
նի ետ նոց՝ և ասէ. ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խորա_
21 նօք. * և ոչ ասիցեն թէ ահաւասիկ աստ է՝ կամ անդ,
22 զի ահա՛ արքայութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է։ * Ասաց
և առ աշակերտսն. եկեսցեն աւուրք ցանկանայցէ՛ք ձեզ
մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել, և ոչ տեսանի_
23 ցէք։ * Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ ահաւասիկ է՝ կամ
24 անդ, մի՛ երթայցէք զհետ։ * Զի որպէս փայլակն փայ_
լատակեալ ՚ի ներքոյ երկնից՝ ընդ երկնիւք ծագիցէ,
25 նոյնպէս և որդի մարդոյ յաւուր իւրում։ * Բայց նախ
պարտ է նմա բազում չարչարել՝ և խոտել յազգէս յայս_
26 մանէ։ * Եւ որպէս եղև յաւուրսն Նոյի, նոյնպէս եղի_
27 ցի և յաւուրս որդւոյ մարդոյ։ * ուտէին՝ ըմպէին՝
կանայս առնէին՝ և արանց լինէին, մինչև յօրն յորում
եմուտ Նոյ ՚ի տապանն, և եկն ջրհեղեղն՝ և կորոյս զա_
28 մենեսին։ * Նոյնպէս՝ և որպէս յաւուրսն Ղովտայ եղև,
ուտէին, ըմպէին, գնէին, վաճառէին, տնկէին, շինէին.
29 * և յորում աւուր ել Ղովտ ՚ի Սոդոմայ, տեղաց հուր
30 և ծծումբ յերկնից՝ և կորոյս զամենեսին։ * ըստ նմին
օրինակի եղիցի և յաւուրն՝ յորում որդի մարդոյ յայտ_
31 նելոց է։ * Յայնմ աւուր որ կայցէ ՚ի տանիս՝ և կա_
րասի իւր ՚ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն. և որ յան_
32 դի իցէ, նոյնպէս մի՛ դարձցի յետս։ * Յիշեցէք զկինն
33 Ղովտայ։ * Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել,
կորուսցէ զնա. և որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա։
34 * Ասեմ ձեզ. յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու ՚ի մի
35 մահիճս, մին՝ առցի, և միւսն թողցի. * և եթէ եղի_
ցին երկու աղալ ՚ի միասին, մին՝ առցի, և միւսն թողցի.
և եթէ իցեն երկու յանդի, մին՝ առցի, և միւսն թողցի։
36 * Պատասխանի ետուն և ասեն ցնա. յո՞ Տէր։ * Եւ նա՝ ասէ
37 ցնս. ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին։

ԳԼ. ԺԸ.

1 Ասաց և առակ մի նոցա, առ այն՝ թէ պարտ է յամ՛ ԿԱ
2 ժամ կալ նոցա յաղօթս՝ և մի ձանձրանալ։ * ասէ. ՂԷ
դա_

(20) Ոմանք. Ոչ գայ արքայութիւն։ (21) Ոմանք. Եւ ոչ ասի_
ցեն թէ ահա"։ (25) Ոմանք. Բազում չարչարել։ (30) Ոմանք.
Յայտնելոց իցէ։ (33) Ոմանք. Որ խնդրէ զանձն։ (34) Օ_
րինակ մի. Ամէն ասեմ ձեզ. յայսմ։ (34) Ոմանք. Եթէ իցեն
երկու ՚ի մի։ (35) Ոմանք. Եւ եթէ իցեն երկու աղ"։

դատաւոր մի էր 'ի քաղաքի ուրեմն, յԱյ ոչ երկնչէր՝
և 'ի մարդկանէ ոչ ամաչէր: * Եւ այրի մի էր 'ի նմին 3
քաղաքի, գայր առ նա և ասէր. դատ արա ինձ յոսո-
խէ իմմէ: * Եւ ոչ կամէր 'ի բազում ժամանակս. յետ այ- 4
նորիկ ասէ 'ի միտս իւրում, թէ և յԱյ ոչ երկնչիմ, և
'ի մարդկանէ ոչ ամաչեմ, * գոնէ՝ վն աշխատ առնե- 5
լոյ զիս այրւոյս՝ արարից նմա դատ, զի մի 'ի սպառ
եկեալ թախանձիցէ զիս: * Եւ ասէ Տր. լուարո՛ւք 6
զինչ դատաւո՛րն անիրաւութե ասէր: * Իսկ Այ ո՛չ 7
առնիցէ վրէժխնդրութի ծառայից իւրոց, որ աղաղա-
կեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի, և երկայնամիտ միթէ
լինիցի առ նսա: * Այո՛ ասեմ ձեզ. զի արասցէ վրէժխնդ- 8
րութի նց վաղվաղակի: Իսկ որդի մարդոյ եկեալ,
գտանիցէ՞ արդեւք հաւատս յերկրի:
ԿԲ * Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս թէ ար- 9
դարք իցեն՝ և խոտեցեն զըզմս, զառակս զայս: * Արք 10
երկու ելին 'ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի՝
և միւսն մաքսաւոր: * Փարիսեցին կայր մեկուսի, և 11
զայս առանձինն աղօթս մատուցանէր. Այ՛ծ իմ՝ գոհա-
նամ զքէն. զի ոչ եմ իբրև զայլս 'ի մարդկանէ. զյափշ-
տակօղս՝ և զանիրաւս՝ և զշնացօղս, կամ իբրև զայս մաք-
սաւոր: * Այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու, և տամ 12
տասանորդս յամենայն ստացուածոց իմոց: * Եւ մաքսաւորն 13
կայր մեկուսի, և ոչ կամէր՝ և ոչ զաչս ընդ երկինս
ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր՝ և ասէր. Այ՛ծ՝
քաւեա զիս զմեղաւորս: * Ասեմ ձեզ. էջ սա արդա- 14
րացեալ 'ի տուն իւր քան զնա: Զի ամ որ բարձրացու-
ցանէ զանձն իւր, խոնարհեսցի. և որ խոնարհեցու-
ՂՂ ցանէ զանձն, բարձրասցի: * Մատուցանէին առ նա 15
և մանկտի՝ զի մերձենայցէ 'ի նս. իբրև տեսին աշա-
կերտքն՝ սաստէին նց: * Իսկ յս կոչեցեալ զնս առ 16
ինքն՝ ասէ. թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի
արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութի այ:
* Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ընդունիցի զարքայութի 17
այ իբրև զմանուկ, ոչ մտցէ 'ի նա:
ԿԳ * Եւ եհարց զնա ոմն իշխան՝ և ասէ. վարդապետ բա- 18
րի՝

Գրչ. ձիր. (4) Ոմանք. Յետ այսորիկ ասէ 'ի: (5) Ոմանք. Գոնեա վն աշխատ.. արարից նմա դատաստան զի.. թախանձեսցէ զիս: (6) Բազմք հրամայականին չեղօքն ունին, Լուարո՛ւք զինչ: (7) Ոմանք. Ո՞չ արասցէ վրէժխնդ": (11) Ոմանք. Եւ զայս առանձինն: (13) Ոմանք. Եւ չկամէր և ոչ զաչսն: (15) Ոմանք. Առ նա մանկտի՝ զի մերձենայցէ: (16) Ոմանք. Կոչեաց զնս: (17) Ոմանք. Որ ոչ ընկալցի զար": (18) Ոմանք. Եւ եհարց ցնա ոմն իշ":

Digitized by Google

որ՝ զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժա-
19 ռանգեցից: * Ասէ ցնա Յս. զի՞ ասես զիս բարի. չիք
20 որ բարի, բայց մի Ած, Հայր: * Զպատուիրանս գի-
տես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ
21 վկայեր, պատուեա զհայր քո և զմայր: * Եւ նա՝ ա-
22 սէ. զայդ ամ պահեցի 'ի մանկութենէ իմմէ: * Իբրև
լուաւ զայն Յս, ասէ ցնա. միւս ևս պակաս է քեզ.
զամ ինչ զոր ունիս վաճառեա և տուր աղքատաց, և
23 ունիցիս գանձ յերկինս. և եկ զհետ իմ: * Նա՝ իբրև
լուաւ զայս, տրտմեցաւ. քանզի էր մեծատուն յոյժ:
24 * Իբրև ետես զնա Յս տրտմեալ, ասէ. ո՞րչ դժուա-
րաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութիւն Այ:
25 * Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել,
26 քան մեծատան յարքայութիւն Այ մտանել: * Եւ որ լու-
27 անն՝ ասէին. և ո՞ կարիցէ ապրել: * Եւ նա ասէ.
անհնարինք առ 'ի մարդկանէ, հնարաւորք են յԱյ:
28 * Եւ ասէ Պետրոս. ահաւասիկ մեք թողաք զամ ինչ
29 զմեր, և եկաք զհետ քո: * Եւ նա՝ ասէ ցնս. ամէն ա-
սեմ ձեզ. եթէ ոչ ոք է՝ որ եթող զտունս, կամ զծնօղս,
կամ զեղբարս, կամ զկին, կամ զորդիս՝ վն արքայութեան
30 Այ, * եթէ ոչ առնուցու բազմապատիկ 'ի ժամանակի
յայսմիկ. և յաշխարհին որ գալոցն է՝ զկեանսն յաւի-
31 տենականս ժառանգեսցէ: * Եւ առեալ զերկոտասան-
սն առանձինն՝ ասէ ցնս. ահաւասիկ ելանեմք յԵմ.
և կատարեսցին ամ գրեալքն մարգարէիւք վն որդւոյ
32 մարդոյ: * զի մատնեսցի հեթանոսաց, և կատակեսցի.
33 * և հարկանիցեն. և սպանանիցեն զնա, և յերիր աւուր
34 յարիցէ: * Եւ նք՝ ոչինչ իմացան յայնցանէ, այլ էր
բանն ծածկեալ 'ի նոցանէ, և ոչ գիտէին զասացեալսն:
35 * Եւ եղև 'ի մօտելն նր յԵրիքով, կոյր մի նստէր առ ԿԻ
36 ճանապարհաւն մուրացիկ: * Իբրև լուաւ զանցանել ՂԵ
37 ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն: * Եւ
38 պատմեցին նմա՝ թէ Յս Նազովրեցի անցանէ: * Աղա-
39 ղակեաց և ասէ. Յս որդի Դաւթի՝ ողորմեաց ինձ: * Եւ
որք

(19) Սակայն օրինակք յաւելլուն և ասպանեաք հանդոյցից. Միրոսն. Մի Ած, Հայր: ...'ի մարգ. Ժ. 18: (22) Ոմանք. Լուաւ զայս Յս .. մի ևս պակաս: (22) Բազմք. Գանձս յերկինս: (23) Ոմանք. Զի էր մեծատուն: (24) Ոսկան. Ո՞րչ դժուարին է որք ինչս: (27) Ոմանք. Անհնարինք 'ի մարդկան''.. են Այ: (29) Ոմանք. Եթող զտուն: (30) Ոմանք. Բազմապատիկ և 'ի ժմկի: (32)(33) Ոսկան յաւելու. Եւ կատակեսցի, և հարկանիցի և թքանիցի: * Եւ երր հարկանիցեն: (34) Ոմանք. Զասացեալսն: (38) Ոմանք. Աղաղակէր և ասէր. Յս:

որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա՛
եւս առաւել աղաղակէր. Որդի Դաւթի՝ ողորմեաց ինձ։
* Զտեղի առ Յս, և հրամայեաց ածել զնա առ ինքն։ 40
և իբրև մերձ եղև առ նա, եհարց զնա և ասէ. * զի՞նչ 41
կամիս դու՝ զի արարից քեզ։ և նա ասէ. Տր զի բաց-
ցին աչք իմ՝ և տեսից։ * Եւ Յս՝ ասէ ցնա. հայեաց 42
հաւատք քո կեցուցին զքեզ։ * Եւ առժամայն տեսանէր, 43
և երթայր զհետ նր՝ և փառաւոր առնէր զԱծ. և ամ
ժողովրդեանն տեսեալ, տային օրհնութիւն Այ։

ԳԼ. ԺԹ.

ԿԵ Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ * և ահա՛ այր մի 1
անուն կոչեցեալ զակքէոս. և նա էր մաքսապետ. 2
և ինքն մեծատուն. * և խնդրէր տեսանել՝ թէ ո՞ է- 3
ցէ Յս, և ոչ կարէր 'ի բազմութենէն, զի կարճ էր հա-
սակաւ։ * Եւ ընթացեալ յառաջս, ել 'ի ժանտաթզե- 4
նին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն խաղ անցանե-
լոց էր։ * Իբրև եկն 'ի տեղին. հայեցեալ 'ի վեր Յս՝ և 5
ասէ ցնա. զակքէ փութա՛ էջ այտի. զի այսօր 'ի տան
քում արժան է ինձ ագանել։ * փութացաւ և էջ՝ և 6
ընկալաւ զնա ուրախութբ։ * Իբրև տեսին ամենեքին, 7
տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լու-
ծանել։ * Եկն՝ եկաց զակքէոս՝ և ասէ ցՏր. Տր՝ ա- 8
հա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկե-
ցի, հատուցից չորեքկին։ * Եւ ասէ ցնա Յս. այսօր եղև 9
փրկութի տանս այսմիկ. քանզի և սա որդի աբրահամու
է։ * Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել 10
զկորուսեալն։ * Եւ մինչդեռ նքա զայն լսէին, յաւել ա- 11
ռակ մի՝ և ասէ, վասն մերձենալոյ նր յէմ, և համարե-
լոյ նոցա թէ առժամայն յայտնելոց է արքայութի Այ։
ԿԶ * Ասէ. այր ոմն՝ ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ 12
առնուլ իւր թագաւորութի. և դառնալ։
ԿԷ * Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նց տասն մնաս, և 13
ասէ ցնս. յարդեցէք զայդ՝ մինչև եկից։ * Եւ քա- 14
ղաքացիքն նր ատէին զնա, առաքեցին հրեշտակս զհետ
նր՝ և ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա 'ի վերայ
մեր։ * Եւ եղև դառնալ նմա՝ առեալ զթագաւորու- 15
թիւն.

Գլ. ԺԹ. (2)(8) Ոմանք. Զաքէոս։ (2) Ոմանք. Եւ ինքն էր մեծատուն։ (7) Ոմանք. Տեսին զնա ամենքն։ (9) Ոմանք. Աբրահամու է։ (11) Ոմանք. Եւ մինչդեռ նքա զայս լսէին, յաւել... մերձենալոյ.. յայտնելոց իցէ արքայութին Այ։ (12) Ոմանք. Առնել իւր թգրութի։ (14) Ոմանք. Եւ քաղաքացիքն որ՛ ատէին զնա՛ առաւ"։ (15) Ոմանք. 'ի դառնալն նր... և կոչէլ զծառայսն որոց։

Digitized by Google

թիւն. եւ կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն,
16 զի գիտասցէ՝ թէ ո զինչ շահեցաւ: * Եկն առաջինն
17 եւ ասէ. տէր, մնասն քո՝ տասն մնաս արար: * Եւ ա-
սէ ցնա. ազնիւ ծառայ եւ բարի, զի 'ի փոքուդ հաւա-
տարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել 'ի վերայ տասն
18 քաղաքի: * Եկն երկրորդն՝ եւ ասէ. մնասն քո՝ արար
19 հինգ մնաս: * Ասէ ցնա. եւ դու լիջիր 'ի վերայ հինգ
20 քաղաքաց: * Եկն միւսն եւ ասէ. տէր՝ ահա մնասն
21 քո զոր ունէի, ծրարեալ 'ի վարշամակի. * երկնչէի 'ի
քէն, զի այր ստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, եւ
22 հնձես՝ զոր ոչ սերմանեցեր: * Եւ ասէ ցնա. 'ի բե-
րանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գի-
տէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ ե-
23 դի, եւ հնձեմ՝ զոր ոչ սերմանեցի: * Եւ ընդէ՞ր ոչ ե-
տուր զարծաթն իմ 'ի սեղանաւորս, եւ ես եկեալ տո-
24 կոսեօք պահանջէի: * Եւ ասէ ցպատրաստեալսն. առէք
'ի դմանէ զմնասն, եւ տուք այնմ՝ որ ունիցի
25 զտասն մնասն: * Եւ ասեն ցնա. տէր՝ ունի տասն մնաս:
26 * Ասեմ ձեզ, եթէ ամենայն որ ունիցի՝ տացի. եւ յայն-
մանէ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ:
27 * Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս
թագաւորել 'ի վերայ նոցա, ածէք այսր, եւ սպանէք ա-
28 ռաջի իմ: * Եւ իբրեւ զայս ասաց, գնայր յառաջ՝ ե-
լանել յԵրուսաղէմ:
29 * Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ 'ի Բեթփագէ եւ 'ի Բեթա- ԿԲ
նիա մօտ 'ի լեառնն որ կոչի Ձիթենեաց, առաքեաց եր- ԷԿ
30 կուս յաշակերտացն իւրոց՝ եւ ասէ: * Երթայք դուք
'ի գեղն՝ որ հանդէպ մեր կայ. յոր իբրեւ մտանէք՝ գը-
տանիցէք յաւանակ կապեալ, յորում ոչ 'ի մարդկանէ
31 երբէք ոչ նստաւ. լուծէք զնա եւ ածէք: * Եւ եթէ
ոք հարցանիցէ զձեզ՝ եթէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս
32 ասասջիք ցնա, թէ տեառն իւրում պիտոյ է: * Իբ-
րեւ չոգան որ առաքեցանն, գտին որպէս ասաց ցնս, կայր
33 յաւանակն: * Եւ մինչ դեռ լուծանէին զյաւանակն,
ասեն տեարքն նորա ցնս. զի՞ լուծանէք զյաւանակդ:
34 * Եւ նքա ասեն. տեառն իւրում պիտոյ է: * Եւ ածին
35 զնա առ յս: եւ արկին զնովաւ զհանդերձս, եւ հեծու-
36 ցին զյս: * Եւ մինչ դեռ երթայր, զհանդերձս իւ-
րեանց

---

(19) Ոմանք. Ասէ եւ ցնա, Կ. դու: (22) Ոմանք. Զոր ոչ սերմանեցի: (23) Ոմանք. Զարծաթդ իմ 'ի սե՟.. եւ ես եկեալ տոկոսեօք այս՟: (26) Ոմանք. Թէ ամ որ ունիցի: (30) Ոմանք. Երթայք 'ի գեաւղն: (31) Ոմանք. Ասասջիք նմ: (35) Ոմանք. Եւ ածեն զնա առ.. զնովաւ հանդերձս: (36) Ոմանք. Տարածանէին զճանապարհայն:

Digitized by Google

իւրեանց տարածանէին զճանապարհաւն ։ * Եւ իբրև 37
այն էինչ մերձ եղև ՚ի զառ ՚ի վայր լերինն Ձիթենեաց ,
սկսան ամ բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել
զԱծ ՚ի ձայն մեծ՝ վս ամ եղելոց զօրութեանցն զոր տե-
սին , * և ասէին . օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն 38
Տն . խաղաղութիւն յերկինս , և փառք ՚ի բարձունս ։ * Եւ 39
ոմանք ՚ի փարիսեցւոցն յամբոխէն անտի՝ ասեն ցնա .
վարդապետ՝ սաստեա՛ աշակերտացդ քոց ։ * Պատաս- 40
խանի. ետ՝ և ասէ . ասեմ ձեզ՝ զի և թէ դոքա լռես-
ցեն՝ քարինքդ աղաղակեսցեն ։ * Եւ իբրև մերձեցաւ , 41
տեսեալ զքաղաքն ելաց ՚ի վերայ նր , և ասէ . * Եթէ 42
գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո .
բայց այժմ ծածկեցաւ յաչաց քոց ։ * Զի եկեսցեն 43
աւուրք ՚ի վերայ քո , և պատեսցեն զքեւ թշնամիք քո
պատնէշ . և պաշարեսցեն զքեզ , և նեղեսցեն զքեզ
յամ կողմանց . * և յատակեսցեն զքեզ , և զորդիս քո 44
՚ի քեզ . և ոչ թողուցուն քար ՚ի վր քարի յամ ՚ի քեզ . փո-
խանակ զի ոչ ծաներ զժամանակ այցելութե քո ։ * Եւ 45
մտեալ ՚ի տաճարն սկսաւ հանել զաւաճառականսն ,
և զգնօղս . և զսեղանս հատավաճառացն ցրուեաց ։ * և 46
ասէ ցնս . գրեալ է՝ և եղիցի տունս իմ տուն աղօթից ,
և դուք արարէք զդա՝ այրս աւազակաց ։ * Եւ ուսու- 47
ցանէր զնս հանապազ ՚ի տաճարին ։ Իսկ քահանայա-
պետքն և դպիրքն՝ և գլխաւորք ժողովրդեանն խնդ-
րէին զնա կորուսանել , * և ոչ գտանէին թէ զինչ 48
արասցեն . զի ժողովուրդն ամենայն կախեալ կային
զնմանէ ՚ի լսել ։

ԳԼ. Ի ։

ԿԹ
Է Բ
Եւ եղև ՚ի միում աւուրցն յայնցանէ , մինչ գեւ ու- 1
սուցանէր զժողովուրդն ՚ի տաճարին անդ՝ և աւե-
տարանէր , հասին ՚ի վերայ քահանայապետքն և դպիրք
ծերովքն հանդերձ , * և ասեն ցնա . ասա՛ մեզ՝ որով 2
իշխանութեամբ գործես դու զայդ , կամ ո՞վ է որ ետ քեզ
զդյդ իշխանութիւն ։ * Պատասխանի ետ՝ և ասէ ցնս . 3
հարցից և ես զձեզ բան մի , և ասասջիք ինձ ։ * Մկրտու- 4
թիւն

(37) Ոմանք . Մերձ եղև զառ ՚ի վայր ։ (40) Ոմանք . Պատասխանի ետ
յն և ասէ ։ (40) Ոսկան . Զի եթէ դոքա լռ" ։ (44) Բ՟ո՟մ .
Քար ՚ի քարի վերայ յամ ՚ի քեզ ։ (46) Ոմանք . Գրեալ է .
եղիցի . . և դուք զդա արա" ։ (48) Ոմանք . Եւ ոչ գիտէին
թէ զինչ ա" ։ (48) Յօրինակին ՚ի լսել . Զնմանէ ՚ի լսել ։
ԳԼ . Ի . (1) Ոմանք . ՚ի տաճարին և աւետա" (2) Ոմանք .
Իշխանութեամբ առնես դու զայդ , կամ ո՞ է որ ետ ։ (3) Ո-
մանք . Եւ ես ձեզ . հարց , զձեզ բան մի ։

Digitized by Google

մկրտութիւն յովհաննու՝ յերկնից էր՝ եթէ 'ի մարդկանէ ։
5 * Եւ նոքա խորհեցան 'ի միտս իւրեանց՝ և ասեն. * Ե-
6 թէ ասասցուք յերկնից, ասէ՝ խակ ընդէ՞ր ոչ հաւատացէք
նմա. և եթէ ասասցուք 'ի մարդկանէ, ամ ժողովուրդն
քարկոծ առնելոց են զմեզ. զի հաստատեալ է 'ի միտս զՅով-
7 հաննէ թէ մարգարէ է ։ * Եւ պատասխանի տուին՝
8 չգիտեմք թէ ուստի իցէ ։ * Եւ յս ասէ ցնա. և ոչ ես
ասեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս ։
9 * Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. այր Հ
մի տնկեաց այգի, և ետ զնա մշակաց. և ինքն գնաց է գ
10 ճանապարհորդեաց ժամանակս բազումս ։ * Եւ 'ի ժամու՝ առա-
քեաց առ մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այգւոյն տա-
ցեն նմ։ և մշակքն զնա հարին զնա՝ և արձակեցին ու-
11 նայն ։ * Եւ յաւել միւս ևս ծառայ յղել. նոքա՝ և զնա
ևս զան հարին, անարգեցին, և արձակեցին ունայն ։
12 * Եւ յաւել՝ զերրորդն առաքել. նոքա՝ և զնա վիրաւո-
13 րեցին, և հանին արտաքս ։ * Ասէ տէր այգւոյն. զի՞նչ
արարից, առաքեցից զորդի իմ սիրելի, թերևս 'ի սմա-
14 նէ պատկառեսցեն ։ * Իբրև տեսին զնա մշակքն, խոր-
հեցան ընդ միմեանս՝ և ասեն. սա է ժառանգն. սպան-
15 ցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւն ։ * և հանին
զնա արտաքս քան զայգին՝ և սպանին ։ Արդ՝ զի՞նչ ա-
16 րասցէ ընդ նոս տէր այգւոյն. * ոչ ապաքէն գայցէ և
կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, և տայցէ զայգին՝ այ-
17 լոց։ Իբրև լուան՝ ասեն. քաւ՝ մի լիցի ։ * Եւ նա հայե-
ցեալ ընդ նոս՝ ասէ. խակ զի՞նչ իցէ այն որ գրեալն է՝
եթէ վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ
18 անկեան ։ * Ամենայն՝ որ ընդհարցի ընդ վէմս ընդ-
այս, խորտակեսցի, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա ։
19 * Եւ խնդրէին դպիրքն և քահանայապետք արկանել
'ի նա ձեռս՝ 'ի նմին ժամու, և երկեան 'ի ժողովրդենէն.
զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն ։
20 * Եւ ապա սպասեցին, և առաքեցին դաւաճանս կեղ- ՀԱ
ծաւորեալս՝ զանձինս առ արդարս ցուցանել. զի ըմբռ- է գ
նեսցեն զնա բանիւք, առ 'ի մատնել զնա պետութեան
21 և իշխանութեան դատաւորին ։ * Հարցին զնա՝ և ասեն.

վարք-

(5) Ոմանք. Եւ նոքա խորհէին 'ի միտս իւրեանց՝ և ասէին ։
(6) Ոմանք. Հաստատեալ էր 'ի։ (7) Ոմանք. Թէ ուստի է ։
(10) Ոմանք. Տացեն նմա ։ (11) Ոմանք. Նոքա և զնա ևս . . և ա-
նարգեցին ։ (14) Օրինակ մի. Խորհեցան ընդ միտս իւրեանց
և ասեն . . զի մեր լիցի ։ (15) Ոմանք. Արտաքոյ քան
զայ՛՛։ (16) Ոմանք. Եւ կորուսցէ . . և տացէ զայգին ։
(17) Ոմանք. Թէ զվէմն զոր ։ (18) Ոմանք. Եւ յոյր վե՞
անկցի ։ (19) Ոմանք. Զի գիտացին թէ առ նոսա ։ (21) Ոմանք

Digitized by Google

վարդապետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսուցա-
նես, և ոչ առնուս ակն. այլ ճշմարտութեամբ զճանա-
պարհն Այ ուսուցանես. * արժա՞ն է մեզ՝ կայսեր հար- 22
կս տալ՝ թէ ոչ։ * Եւ նայեցեալ ընդ խորամանկու- 23
թիւն նց՝ ասէ ցնս. * ցուցէք ինձ զդահեկանն։ և նք՝ 24
ցուցին։ և ասէ. զո՞յր պատկեր և գիր ունի։ պատաս-
խանի եդեալ՝ և ասեն, զկայսեր։ * Եւ նա՝ ասէ ցնս. 25
արդ՝ երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱյն՝ Այ։
* Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողո- 26
վրդեանն. և զարմացեալ ընդ պատասխանին նր՝ լռեցին։
ՀԲ * Մատուցեալ ոմանք 'ի սադուկեցւոցն, որք հակա- 27
ԷԵ ռակէին չլինել յարութեն, հարցին զնա՝ * և ասեն. 28
վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր
մեռանիցի՝ որոյ իցէ կին, և նա անորդի իցէ, զի առ-
նուցու եղբայր նր զկինն, և յարուսցէ զաւակ եղբօր
իւրում։ * Արդ՝ եւթն եղբարք էին. և առաջինն ա- 29
ռեալ կին, մեռաւ անորդի։ * առ զնա և երկրորդն, 30
մեռաւ և նա՛ անորդի։ * առ զնա և երրորդն։ նոյն- 31
պէս և եւթանեքին, և ոչ թողին որդիս։ * մեռաւ և 32
կինն։ * արդ՝ 'ի յարութեանն ո՞ւմ 'ի նոցանէ լինիցի կին. 33
զի եւթանեքին կալան զնա կին։ * Պատասխանի ետ 34
նոցա Յս՝ և ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս
առնեն՝ և արանց լինին։ * իսկ որ արժանի լինիցին 35
այնմ աշխարհին հասանել, և յարութեանն որ 'ի մեռելոց,
ոչ կանայս առնեն, և ոչ արանց լինին։ * Քանզի և 36
ոչ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝
և որդիք Այ. քանզի յարութեան որդիք են։ * Այլ 37
զի յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց 'ի մորեն-
ւոջն, որպէս ասէ զՏր Այ աբրահամու, և զԱյ սահակայ, և
զԱյ յակովբայ։ * Եւ նծ չէ՛ մեռելոց՝ այլ կենդանեաց. 38
զի ամենեքին նմա կենդանի են։ * Պատասխանի ետուն 39
ոմանք 'ի դպրացն՝ և ասեն. վարդապետ՝ բարւո՛ք ասա-
ցեր։ * Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել զնա՝ և ոչինչ։ 40
ՀԳ * Ասէ և առ նս. զիարդ ասեն զՔս՝ թէ որդի է Դաւ- 41
ԷԶ թի. * և ինքն Դաւիթ ասէ 'ի գիրս սաղմոսաց. ասաց 42
Տր ցՏր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, * մինչև եդից զթշնա- 43
միս

Գիտեմք զի ուղիղ։ (24) Ոմանք. Զո՞յր զպատկեր։ (26) Ոմանք. Ընդ պատասխանին նր։ (27) Ոմանք. Չլինել յարութեն։ (28) Ոմանք. Որ ունիցի կին, և նա։ (29) Ոմանք. Եւ առաջինն առեալ։ (30) Ոմանք. Առ զնայն և երկ՛։ (31) Ոմանք. Նոյնպէս և եւթանեքին։ (32) Ոմանք յաւելուն. * Յետ ամենեցուն մեռաւ և կինն։ (33) Ոմանք. Զի եւթանեքին կալ՛։ (35) Ոմանք. Յարութեն 'ի մեռելոց։ (40) Ոմանք. Եւ ոչ ոք ևս։ (42) Բազումք. Զի ինքն Դաւիթ ասէ։

Digitized by Google

44 մինչ[illegible] պատուանդան ոտից քոց։ * Իսկ արդ՝ եթէ
45 Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ։ * Եւ լու_
46 եալ ամ ժողովրդեանն, ասէ ցաշակերտսն։ * Զգոյշ
լերուք 'ի դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, և
սիրեն ողջոյնս 'ի հրապարակս, և զնախաթոռս 'ի ժո_
47 ղովուրդս, և զգահերէցս յընթրիս, * Որ ուտեն զտու_
նս այրեաց, և պատճառանօք յերկարեն զաղօթս.
նոքա ընկալցին առաւել դատաստանս։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ հայեցեալ՝ ետես զմեծատունսն որ արկանէին
2 զպատարագս իւրեանց 'ի գանձանակն։ * Ետես և զկին
3 մի այրի աղքատ. որ արկ անդր երկուս լումայս։ * Եւ
ասէ. ճշմարիտ ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ՝ ա_
4 ռաւել արկ քան զամենեսին։ * Ամենեքին նոքա՝ 'ի մթե_
րից իւրեանց արկին յընծայս Այ. բայց նա 'ի կարօ_
տութենէ իւրմէ զամ զկեանսն իւր՝ զոր ունէր արկ։
5 * Եւ յասել ումեմն զտաճարէն, թէ գեղեցիկ վիմօք և էէ
6 աշխարհակօք զարդարեալ է, ասէ. * Զայդ ամ զոր տե_
սանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար
'ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի։
7 * Հարցին զնա և ասեն. վարդապետ՝ երբ լինիցի այդ, ՙՀե
8 և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ։ * Եւ
նա ասէ. զգոյշ կացէք. մի խաբիցիք. զի բազումք գայ_
ցեն յանուն իմ, և ասիցեն թէ ես եմ. և մերձեցաւ
9 ժամանակ. մի երթայցէք զհետ նր։ * Եւ յորժամ լսի_
ցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք.
զի պարտ է նախ այդմ լինել, այլ ոչ առժամայն կա_
10 տարած։ * Յայնժամ ասէ ցնս. յարիցէ ազգ յազգի
11 վերայ, և թագաւորութի 'ի թագաւորութե վերայ։ * Եւ
շարժմունք մեծամեծք. և 'ի տեղիս տեղիս սովք և սրա_
ծութիւնք, եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից։
12 * Բայց յառաջ քան զայս ամ, մխեսցեն զձեռս իւրեանց
'ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնեսցեն 'ի ժողովուրդս և
'ի բանտս, և տանիցին առաջի դատաւորաց և թագա_
ւոր_

(46) Ոմանք. Զողջոյնս 'ի հրա''. . և զգահերէցս յընթ_
րիս։ (47) Ոմանք. Առաւել դատաստան։
Գլ. իա. (2) Ոմանք. Անդ երկուս լու'' (4) Յօրինակին
պ̃կներ. 'Ի կարօտութէ իւրմէ։ (6) Ոմանք. Այդ ամ զոր
տեսա''։ (8) Ոմանք. Եւ ասասցեն թէ ես։ (8) Բազմք.
Մի երթայցէք զհետ նց։ (9) Ոմանք. Առ ժամայն կա_
տարած։ (10) Ոմանք. 'Ի յազգի վերայ։ (11) Ոմանք. Եւ
եղիցին արհա''. . մեծամեծք յերկինս։ (12) Ոմանք. Եւ
մատնեսցեն 'ի։ (12) Ոմանք. Եւ տանիցեն առաջի։

Digitized by Google

ւորաց վս անուան իմոյ · * և լինիցի ձեզ այն 'ի վկայ_ 13
ութիւն ։ * Արդ՝ դիջիք 'ի սիրտս ձեր, մի յառաջագոյն 14
կրթել տալ ջատագովութիւն ։ * Զի ես տաց ձեզ բե_ 15
րան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ՝
կամ տալ պատասխանի ամ հակառակորդքն ձեր ։ * Մատ_ 16
նեսջիք և 'ի ծնողաց, և յեղբարց, և յազգականաց և
'ի բարեկամաց, և սպանանիցեն 'ի ձէնջ · * և եղիջիք 17
ատեցեալք յամենեցունց վս անուան իմոյ · * և մազ 18
մի 'ի գլխոյ ձերմէ՝ ոչ կորիցէ · * և համբերութեամբ ձե_ 19
րով ստասջիք զոգիս ձեր ։ * Այլ յորժամ տեսանի_ 20
ցէք շուրջ պատեալ զօրօք զեմ, յայնժամ գիտասջիք
թէ մերձ է օր նր ։ * Յայնժամ որ 'ի հրէաստանի ի_ 21
ցեն՝ փախիցեն 'ի լեռնս, և որ 'ի մէջ նր իցեն՝ խու_
սեսցեն, և որ 'ի գաւառսն իցեն՝ մի մտցեն 'ի նա ։ * զի 22
աւուրք վրէժխնդրութեն են այնոքիկ, առ 'ի կատարե_
լոյ ամ գրելոց ։ * Բայց վայ իցէ յղեաց և ստնտուաց 23
յաւուրսն յայնոսիկ ։ զի եղիցի տագնապ մեծ 'ի վերայ
երկրի, և բարկութի ժողովրդեանն այնմիկ ։ * Եւ անկա_ 24
ցին 'ի սուր սուսերի, և գերեսցին յամենայն հեթա_
նոսաց · և երէմ եղիցի կոխան յազգաց, մինչև կատա_
րեսցին ժամանակք հեթանոսաց ։ * Եւ եղիցին նշանք 25
յարեգակն և 'ի լուսին և յաստեղս · և յերկրի տագ_
նապ հեթանոսաց՝ 'ի յահեղ բարբառոյ իբրև ծովու և
խռովութեն, * յելանելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ՝ 26
և 'ի կարծեաց եկելոց 'ի վերայ աշխարհաց · զի զօրու_
թիւնք երկնից շարժեսցին ։ * Եւ յայնժամ տեսցեն զոր_ 27
դի մարդոյ եկեալ՝ ամպովք զօրութեամբ և փառօք բազ_
մօք ։ * Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձ_ 28
ջիք և բարձրացուսջիք զգլուխս ձեր · զի մերձ է փրկութի
ձեր ։ * Եւ ասաց առակ մի նց · տեսանիցէք զթզենին, 29
և զամ ծառս · * յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, 30
տեսանէք՝ և 'ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն ։
* Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամ ե_ 31
ղեալ, գիտասջիք թէ մերձ է արքայութի այ ։ * Ա_ 32
մէն ասեմ ձեզ · թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև ամ
այս լինիցի ։ * Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ 33
ոչ

(13) Ոմանք · Եւ լինիցի 'ի ձեզ այն 'ի վկ" ։ (15) Ոմանք · Ոչ կարասցեն կալ ։ (18) Ոմանք · 'ի գլխոյ ձերոյ ։ (20) Բգծք · Թէ մերձ է աւեր նր ։ (21) Ոմանք · Նր իցեն խուսեսցին ։ (24) Ոմանք · Յամ հեթանոսս · · կոխան ազ_գաց ։ (25) Ոմանք · Եւ եղիցի նշան · · · յահեղ բարբա_ռոյ ։ (29) Ոմանք · Տեսանէք · կամ, տեսէք զթզենին և զամ ծառս ։ (30) Ոմանք · Զպտուղս իւրեանց ։ (32) Բգծք · Մինչև այս ամ ։ (32) Ոմանք · Ամենայն եղիցի ։

Digitized by Google

34 ռք անձանց։ * Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծան-
րանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ և
հոգւովք աշխարհականաւք, և յանկարծակի հասանիցէ
35 'ի վերայ ձեր օրն այն. * զի իբրև զորոգայթ հասա-
նիցէ 'ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամ ե-
36 րեսս երկրի։ * Արթուն կացէք այսուհետև, յամ ժամ
աղօթս արարէք, զի արժանի լինիջիք զերծանել յայսմ
ամէնէ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ։
37 * Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր, և զգիշերսն ե-
38 լեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր ձիթենեաց։ * Եւ
ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ԿԸ
'ի տաճարին լսել 'ի նմանէ։

ԳԼ. ԻԲ.

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր պասե- ՀՁ
2 քա։ * Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝
թէ զիա՞րդ սպանանիցեն զնա. բայց երկնչէին 'ի ժողո-
3 վրդենէ անտի։ * Եմուտ սատանայ՝ 'ի յուդա
'ի կոչեցեալն իսկարիովտացի, որ էր 'ի թուոյ երկո-
4 տասանիցն։ * Չոգաւ եր. խօսս ընդ քահանայապետսն՝
և ընդ դպիրս, և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատ-
5 նեսցէ զնա նց։ * Եւ խնդացին, և խոստացան տալ
6 նմա արծաթ. * և յանձն առ՝ և խնդրէր պարապ մատ-
7 նել զնա նց՝ առանց ամբոխին։ * Եւ եկն օր բաղարջա-
8 կերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն։ * Եւ ա-
ռաքեաց զպետրոս, և զյովհաննէս՝ և ասէ. երթայք
9 պատրաստեցէք մեզ զպասեքն զի կերիցուք։ * Եւ նք
10 ասեն. ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք։ * Եւ ասէ
ցնս. ահա՝ իբրև մտանիցէք 'ի քաղաքն, պատահեսցէ
ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նր 'ի
11 տունն յոր մտանիցէ. * և ասասջիք ցտանուտէր տանն.
վարդապետն ասէ քեզ. ո՞ւր են վանքն իմ, յորում զպա-
12 սեքն ուտիցեմ աշակերտաւքս իմովք։ * Եւ նա ցուցա-
ցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, և անդ պատ-
13 րաստեսջիք։ * Եւ գնացեալ գտին որպէս և ասացն նց
14 և պատրաստեցին զպասեքն։ * Եւ իբրև ժամ եղև՝
15 բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա։ * Եւ
ասէ

---

(34) Բ՟ձ՟ք. Եւ հոգւովք. կամ, հոգսովք։ (36) Ոմանք. Եւ
յամ ժամ աղ՟՟. արժանի լինիցիք. որ լինելոց իցէ։
(38) Ոմանք. Ընդ առաւօտն առ նա։
ԳԼ։ ԻԲ. (1) Ոմանք. Որ կոչէր պասեքս։ (4) Ոմանք. Չո-
գաւ եա խօսս։ (6) Ոմանք. Յամբոխէ անտի։ (10) Ո-
մանք. Իբրև մտանէք 'ի քղք.. յոր մտանիցեն։ (12) Ո-
մանք. Զարդարեալ. անդ։ (15) Ոմանք. Ցանկանալով.

ասէ ցնս. Ցանկալով ցանկացայ զայս պասեքս ուտել
ընդ ձեզ՝ մինչչեւ չարչարեալ իցեմ։ * Բայց ասեմ ձեզ, 16
թէ ոչ եւս կերայց ի սմանէ, մինչեւ լցցի յարքայութեան
այ։ * Եւ ընկալեալ բաժակն՝ գոհացաւ եւ ասէ. ա- 17
ռէք զայդ՝ եւ բաժանեցէք ի ձեզ։ * Ասեմ ձեզ, թէ 18
յայսմ հետէ՝ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ եկեսցէ
արքայութիւն այ։ * Եւ առեալ հաց, գոհացաւ, եւ 19
բեկ եւ ետ նց՝ եւ ասէ. այս է մարմին իմ, որ վս բաշխեալ
լինի։ զայս արասջիք առ իմոյ յիշատակի։ * Նոյնպէս 20
եւ զբաժակն յետ ընթրելոյն առ՝ եւ ասէ. այս բա-
ժակ է նոր ուխտ՝ իմով արեամբ որ վս ձեր հեղեալ։ * Բայց 21
ահաւասիկ՝ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ՚ի սեղանս։ * Եւ 22
որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ, բայց՝ վայ
մարդոյն այնմիկ յորոյ ձեռն մատնեսցի։ * Եւ նոքա՝ սկ- 23
սան խնդրել ընդ միմեանս, թէ ով է ՚ի նոցանէ՝ որ
զայն գործելոց իցէ։

ՀԷ * Եղեւ՝ եւ հակառակութիւն ՚ի միջի նց, թէ ով ՚ի նոցա- 24
նէ համարեսցի մեծ։ * Եւ նա՝ ասէ ցնս. Թագաւորք 25
ազգաց տիրեն նց, եւ որ իշխենն նց՝ բարերարք կոչին.
* այլ դուք՝ ոչ այնպէս. այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի 26
իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զպաշտաւնեայն։
* Ո՞վ է մեծ, բազմականն՝ եթէ սպասաւորն. ոչ ապա- 27
քէն՝ բազմականն. բայց ես եմ ՚ի միջի ձերում իբրեւ զսպա-
սաւոր։ * Եւ դուք էք՝ որ ցանդ կացէք ընդ իս 28
՚ի փորձութիւնս իմ. * եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս եւ հայր 29
իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. * զի ուտիցէք եւ ըմ- 30
պիցէք ՚ի սեղան իմ յարքայութեան իմում. եւ նստջիք յեր-
կոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգ իսրայէլի։

ՀԸ * Եւ ասէ Տր. Սիմովն Սիմովն, ահա՝ սատանայ խնդ- 31
րեաց զձեզ մաղել իբրեւ զցորեան. * այլ ես ա- 32
ղաչեցի վն քո՝ զի մի պակասեսցեն հաւատք քո։ Եւ դու
երբեմն դարձցիս՝ եւ հաստատեսցես զեղբարս քո։ * Եւ 33
նա՝ ասէ ցնա. Տր՝ ընդ քեզ պատրաստ եմ եւ ՚ի բանտ
եւ ՚ի մահ երթալ։ * Եւ նա՝ ասէ ցնա. ասեմ քեզ 34
պետրոս,

ցանկա՛՛ : (18) Ոմանք. Ձի յայսմ հետէ ոչ : (19) Ոմանք. Եւ
բեկ ետ նց : (20) Ոմանք. Բաժակ նոր ուխտ.. վս ձեր
հեղլոյ. կամ, հեղլով : (22) Ոմանք. Մատնեսցի : (23) Ո-
մանք. Թէ ով է : (24) Ոմանք. Եւ եղեւ հակառակութիւն. կամ,
եւ եղեւ եւ հակառա՛՛.. Թէ ով ՚ի նցէ : (27) Ոմանք. Այլ
ես եմ ՚ի միջի.. իբրեւ սպասաւոր : (29) Ոմանք. Ինձ
զարքայութիւն : (30) Օրինակ մի. ՚Ի սեղան հօր իմ յարքայ-
ութեան իմ՛՛... եւ նստջիք : (31) Ոմանք. Խնդրեաց զձեզ
մաղ՛՛ : (32) Ոմանք. Աղաչեցից վն քո : Որ. Օրինակ մի.
Վն քո զհայր, զի մի : (34) Ոմանք. Մինչ երիցս ուր՛՛ :

պետրոսէ՝ չիցէ այսօր հաւու խօսել, մինչև երիցս ու-
35 րասցիս զիս չգիտել։ * Եւ ասէ ցնս̃. յորժամ առա-
քեցի զձեզ առանց քսակի և մախաղի և կօշկաց, միթէ
36 կարօտացայք ինչ։ * Եւ նոքա ասեն. և ոչ ինչ։ Ասա-
ասէ. այլ այժմ որ ունի քսակ՝ բարձցէ, նոյնպէս և
մախաղ. և որ ոչն ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր՝
37 և գնեսցէ իւր սուսեր։ * Բայց ասեմ ձեզ. զի այդ
ևս որ գրեալ է՝ պարտ է՝ զի կատարեսցի յիս, թէ ը̃
անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ
38 է։ * Եւ նոքա ասեն. Տէր՝ ահաւասիկ են. աստ երկու
39 սուսերք։ Եւ նա ասէ ցնս̃. բաւական են։ * Եւ ելեալ
գնաց ըստ սովորութեան 'ի լեառն ձիթենեաց. գնացին
40 զհետ նր̃ և աշակերտքն։ * Իբրև եհաս 'ի տեղին՝ ասէ
41 ցնս̃. յաղօթս կացէք չմտանել 'ի փորձութիւն։ * Եւ ինքն
մեկնեցաւ 'ի նոցանէ իբրև քարընկէց մի, եդ ծունր՝
42 կայր յաղօթս, * և ասէր. Հայր՝ եթէ կամիս՝ անցո
զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լի-
43 ցին։ * Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրա-
ցուցանէր զնա. և էր 'ի տագնապի, և մտադիւրութ̃
44 ևս կայր յաղօթս։ * Եւ հոսէին 'ի նմանէ քրտունք իբ-
րև զկայլակս արեան՝ ոլորան ոլորան հեղեալ 'ի յերկիր։
45 * Եւ յարուցեալ յաղօթիցն, եկն առ աշակերտսն՝ ե-
գիտ զնս̃ 'ի քուն 'ի տրտմութենէն. * Եւ ասէ ցնս̃. զի՞
ննջէք, արիք կացէք յաղօթս՝ զի մի մտանիցէք 'ի փոր-
47 ձութիւն։ * Եւ մինչ դեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ.
և որ կոչէրն յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր
նց̃։ Իբրև մերձեցաւ առ յս̃՝ համբուրել զնա. քան-
զի զայն նշան տուեալ էր նց̃. թէ զոր ես համ-
48 բուրեցից՝ նա է, զնա ունիցիք։ * Ասէ ցնա յս̃. յու-
49 դա՝ համբուրելով մատնես զորդի մդ̃։ * Իբրև տեսին
որ

---

(35) Ոմանք. Կարօտեցայք ինչ։ (36) Ոմանք. Որ ունիցի քսակ.. և որ ոչ ունի։ (37) Ոմանք. Զոր գրեալ է։ (42) Ոմանք. Այլ քոյդ լիցի։ (43)(44) Ոմանք յօրինակաց 'ի բաց առնեն զայս երկու համարս. * Եւ երևեցաւ նմա հրեշ".. * Եւ հոսէին 'ի նմանէ քր".. և այլ ոմանք զառաջին համարն միայն դնեն, և զերկրորդն զանց առնեն։ Իսկ օրինակ մի այսպէս ունի. Եւ զօրութ̃ և մտադիւրութ̃ ևս կայր յա"։ և զանց առնէ՝ ոլորան ոլորան հեղեալ 'ի յերկիր։ Ուր մերս համաձայն Բ՟ձեռ ունէր զերկրորդն ևս ամբողջ. ոչ̃ և Եդա։ (44) Ոմանք. Հեղեալ յերկիր։ (45) Ոմանք. Եւ եգիտ զնս̃ 'ի։ (48) Միւսն օրինակս մեր ընդ այլ միում ունի՝ Մատնես զորդի մդ̃. ուր այլք ամենեքին դնեն զորդի մարդոյ։ ըստ որում և 'ի լատինաց թարգմանու- թեանն։ (49) Ոմանք. Հարցուք զդոսա սրով։

Digitized by Google

որ զնովաւն էին՝ որ ինչ եղեն, ասեն ցնա. Տէր՝ հար-
ցուք զնոսա սրով: * Եւ եհար մի ոմն 'ի նոցանէ զքահա- 50
հանայապետին ծառայ, և 'ի բաց եհան զաջոյ ունկն
նորա: * Պատասխանի ետ Յս՝ և ասէ. Թոյլ տուք մին- 51
չև ցայդ վայր. և մատուցեալ յունկն՝ բժշկեաց զնա:
* Եւ ասէ ցեկեալսն 'ի վերայ նր զքահանայապետսն, 52
և զիշխանս տաճարին և զծերսն. Իբրև 'ի վերայ աւա-
զակի՞ ելէք սուսերօք և բրօք: * Հանապազ ընդ ձեզ 53
էի 'ի տաճարին, և ոչ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է
ձեր ժամ, և իշխանութիւն խաւարի: * Եւ կալեալ զնա՝ 54
ածին և մուծին 'ի տունն քահանայապետին: և պետրոս
երթայր զհետ նր հեռագոյն: * Իբրև լուցին կրակ 'ի 55
մէջ գաւթին՝ և նստան շուրջ, նստաւ և պետրոս 'ի
մէջ նց: * Ետես զնա աղախին մի՝ զի նստէր առ լուսոյն. 56
հայեցաւ ընդ նա՝ և ասէ. և սա ընդ նմ էր որ ընդ
նմայն էին: * Իսկ պետրոս ուրացաւ և ասէ. ոչ գի- 57
տեմ զնա կին դու: * Եւ յետ սակաւ միոյ՝ այլ ոմն 58
ետես զնա՝ և ասէ. և դու 'ի նոցանէ ես: և պետրոս
ասէ. այր դու՝ չեմ 'ի նոցանէ: * Եւ իբրև ժամ մի 59
անց 'ի վերայ, այլ ոմն վիճէր և ասէր. ստոյգ և սա
ընդ նմա էր, քանզի գալիլեացի է: * Ասէ պետրոս. 60
այր դու՝ չգիտեմ զինչ խօսիս: և առժամայն մինչ-
դեռ նա զայն ասէր, խօսեցաւ հաւ: * Դարձաւ տր 61
և հայեցաւ 'ի պետրոս: և յիշեաց պետրոս զբանն տն՝
զոր ասաց ցնա. մինչչև հաւու խօսեալ իցէ, երիցս ու-
րասցիս՝ չգիտել զիս: * Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ- 62
նապէս: * Եւ արքն, որ պահէին զնա. այպն առնէին 63
զնովաւ, և հարկանէին: * Ծածկէին զերեսս նր՝ և 64
ապտակէին. և հարցանէին զնա՝ և ասէին. մարգարեա՛ց
մեզ է որ եհարն զքեզ: * Եւ այլ բազում ինչ հայհոյութբ 65
խօսէին 'ի նա: * Եւ իբրև այգ եղև, ժողովեցաւ ծե- 66
րակոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն և դպիրք, և
հանին ածին զնա յատեանն իւրեանց՝ և ասեն. եթէ
դու ես քն, ասա՛ մեզ: * Ասէ ցնս. եթէ ասացից ձեզ, 67
ասկայն ոչ հաւատայք. * և եթէ հարցից ինչ զձեզ՝ 68
չտայք ինձ պատասխանի՝ կամ արձակիցէք: * Բայց 69
յայսմ հետէ նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեն.

---

(51) Բոմն. Թոյլ տուք մինչև: (51) Օրինակ Գ. Եւ մա-
տուցեալ առ զունկն նր. և եդ անդէն 'ի տեղւոջ իւ-
րում: Եւ մատուցեալ յունկն բժշկ": (52) Ոմանք. Եւ
ցծերս: (53) Ոմանք. Յիս ձեռս: (55) Ոմանք. Եւ իբրև
լուցին: (64) Ոմանք. Եւ հարցանէին զնա: (65) Ոմանք.
Եւ այլ ինչ բազմ: (66) Ոմանք. ժողովեցան ծերքն"... և
ասէին եթէ դու ես: (68) Ոմանք. ինչ ցձեզ. չտայք:

Digitized by Google

70 ծոյ։ * Եւ ասեն ամենեքեան. ուրեմն դու ես որդին
71 ծոյ։ Եւ նա՝ ասէ ցնոսա. դուք ասէք թէ ես եմ։ * Եւ
նոքա ասեն. զի՞նչ ևս պիտոյ է մեզ վկայութեան, զի
մեզէն իսկ լուաք՚ի բերանոյ դորա։

ԳԼ. ԻԳ.

1 Եւ յարուցեալ ամ բազմութիւննց, ածին զնա առ
2 պիղատոս։ * Եւ սկսան չարախօս լինել զնմանէ
և ասել. զսա գտաք զի թիւրէր զազգս մեր, և ար-
գելոյր ՚ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ՝ թէ
3 քրիստոս իցէ թագաւոր։ * Իսկ պիղատոս եհարց զնա՝ և
ասէ. դու ես թագաւորն հրէից։ Նա՝ պատասխանի
4 ետ նմ և ասէ. դու ասացեր։ * Ասէ պիղատոս ցքա-
հանայապետսն և ցժողովուրդսն. չգտանեմ ինչ վնաս
5 յառնս յայսմիկ։ * Եւ նոքա պնդէին, և ասէին, թէ
խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամ հրէաստան՝
6 սկսեալ ՚ի գալիլեէ մինչև ցայսր։ * Իսկ պիղատոս իբ-
րև լուաւ զգալիլեէ, եհարց եթէ գալիլեացի է այրն։
7 * և իբրև գիտաց թէ յիշխանութէ հերովդի է, ետ
տանել զնա առ հերովդէս. քանզի և նա յեմ էր յա-
8 ւուրսն յայնոսիկ։ * Եւ հերովդէս իբրև ետես զյս.
ուրախ եղև յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամանակաց
տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ, և
9 ակն ունէր նշան ինչ լինել՝ տեսանել ՚ի նմանէ։ * Հար-
ցանէր զնա բանիւք բազմօք, և նա ոչինչ ետ նմա պա-
10 տասխանի։ * Կային քահանայապետքն և դպիրք՝ և
պնդագոյնս չարախօսէին զնմանէ։
11 * Արհամարհեաց զնա և հերովդէս հանդերձ իւրովք հեծ-
զօրականօքն. և այպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս
12 սպիտակս, և ետ տանել անդրէն առ պիղատոս։ * Եւ
եղեն բարեկամք պիղատոս և հերովդէս յաւուր յայն-
13 միկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց։ * Կոչեաց
պիղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուր-
14 դսն. * և ասէ ցնս. ածէք մատուցէք ինձ զայրս զայս
իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ
առաջի ձեր դատեցայ, և վնաս ինչ՝ ոչ գտի յառնս յայս-
միկ՝

---

(70) Ոմանք. Դուք ասացէք թէ ես։ (71) Ոմանք. Պիտոյ են մեզ վկայութեն։
Գլ. ԻԳ. (2) Ոմանք. Չարախօսել զնմանէ՝ և։ (3) Ոմանք. Թագաւոր հրէից։ (6) Ոմանք. Գալիլեացի իցէ այրն։ (7) Ոմանք. Զի և նա յեմ։ (9) Ոմանք. Եւ նա ինչ ոչ ետ նմ։ (10) Ոմանք. Եւ պնդագոյն չա՟։ (11) Ոմանք. Հանդերձ սպիտակ։ (12) Ոմանք. Յառաջն թշնամիք։ (14) Ոմանք. Զորոյ դուք չարախօսէքդ։

Digitized by Google

մին՝ զորոյ դուք չարախօսէիքդ զդմանէ. * Այլ և 15
ոչ Հերովդէս, քանզի ետուն առնել զդա առ նա: և
ահա՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա. * Խրատ_ 16
տեցից զդա, և արձակեցից: * Զի հարկ էր մի մի ըստ 17
տօնի արձակել նց: * Եւ նք՝ աղաղակէին ամ բազ_ 18
մութբն՝ և ասէին. բարձ զդա, և արձակեա մեզ զԲա_
րաբբա, * որ էր վն խռովութն իրիք եղելոյ 'ի քա_ 19
ղաքին և սպանութն մտեալ 'ի բանտ. * Դարձեալ պե_ 20
ղատոս սկսաւ խօսել, քանզի կամէր արձակել զյս:
* Եւ նոքա՝ ընդդէմ աղաղակէին և ասէին. 'ի խաչ_ 21
հան զդա: * Եւ նա՝ երիցս ասէ ցնս. զինչ չար ա_ 22
րար սա. ոչինչ վնաս մահու գտի 'ի սմա. խրատեցից
զսա և արձակեցից: * Եւ նք տագնապէին մեծաձայն՝ 23
և խնդրէին զնա՝ 'ի խաչ հանել. և զօրանային բար_
բառքն նց և քահանայապետից: * Եւ պեղատոս հա_ 24
ւանեցաւ՝ առնել զհայցուածս նց: * Արձակեաց նց 25
զբարաբբայն՝ զոր վն խռովութն և սպանութն արկեալ
էր 'ի բանտ, զոր և խնդրէինն իսկ. և զյս մատնեաց
կամացն նց: * Իբրև տարան զնա, ըմբռնեցին 26
զոմն սիմոն կիւրենացի՝ որ գայր յանդէ. եդին 'ի
վերայ նորա զխաչն՝ բերել զկնի յսի: * Եւ երթայր 27
զհետ նորա բազմութն ժողովրդեանն, և կանանց՝ որ
կոծէին և աշխարէին զնա:

Զ * Դարձաւ յս և ասէ ցնս. դստերք երուսաղէմի՝ մի լայք 'ի 28
վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդ_
ւոց ձերոց: * զի եկեսցեն աւուրք յորս ասիցեն, թէ 29
երանի ամլոց և որովայնից՝ որ ոչ ծնան, և ստեանց՝
որ ոչ դիեցուցին: * Յայնժամ սկսանիցին ասել լե_ 30
րանց՝ թէ անկերուք 'ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծած_
կեցէք զմեզ: * Զի եթէ ընդ փայտ դալար՝ զայս առ_ 31
նեն, ընդ չորն՝ զինչ լինիցի: * Ածին և այլ երկուս 32
չարագործս՝ սպանանել ընդ նմա: * Իբրև չոգան 'ի 33
տեղին՝ կոչեցեալ գագաթն, անդ հանին զնա 'ի խաչ.
և զչարագործսն՝ զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ ձախմէ
խաչեցին: * Եւ յս ասէ. հայր՝ թող դոցա՝ զի ոչ գի_ 34
տեն զինչ գործեն: Եւ 'ի բաժանել զհանդերձս նր,
արկին վիճակս: * և կայր ժողովուրդն հայեցեալ: 35
Անդոսնէին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին.

զայլս

---

(17) Ոմանք. Ըստ տօնին արձա'': (21) Ոմանք. Եւ նք անդէն աղա'': (22) Ոմանք. Զինչ ինչ չար արար... մահու գտի 'ի սա: (23) Ոմանք. Բարբառք նց: (25) Ոմանք. Որ վն խռովութն: (33) Ոմանք. 'Ի տեղին անուանեալ գագաթն. Եւ ոմանք. Կոչեցեալն գագաթն: (34) Ոմանք. Թող սոցա, զի: (35) Ոմանք. Զնա և իշխանքն.

Digitized by Google

զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է
36 քս որդի այ ընտրեալն։ *Այպն առնէին զնա և զին-
ուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ.
37 *և ասէին. եթէ դու ես թագաւորն հրէից՝ փրկեա
38 զանձն քո։ *Եւ էր գիր գրեալ ՚ի վերայ նորա, յու-
նարէն՝ և գաղմատարէն՝ և եբրայեցերէն գրով, թէ
39 սա է արքայն հրէից։ *Իսկ մի ոմն՝ ՚ի կախելոց չա-
րագործացն հայհոյէր զնա՝ և ասէր. ոչ դու ես քս,
փրկեա զանձն քո և զմեզ։

40 *Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա՝ և ասէ. ՂԱ
41 չերկնչիս դու յայ՝ զի ՚ի նմին պատժի կաս։ *և մեք՝
իրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք ըզ-
42 հատուցումն. և սա՝ ապիրատ ինչ՝ ոչ գործեաց։ *Եւ
ասէ ցյս. յիշեա զիս տր՝ յորժամ գայցես արքայութբ
43 քով։ *Եւ ասէ ցնա յս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ
44 իս իցես ՚ի դրախտին։ *Եւ էր իբրև վեցերորդ ժամ.
և խաւար եղև ՚ի վերայ ամ երկրի մինչև ցիններորդ
45 ժամն. խաւարեցաւ արեգակն։ *Եւ հերձաւ վարա-
46 գոյր տաճարին ընդ մէջ։ *Եւ կարդաց յս ՚ի ձայն մեծ՝
և ասէ. հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ զայս
47 իբրև ասաց՝ եհան զոգի։ *Եւ տեսեալ հարիւրա-
պետին զոր ինչ եղեն, փառաւոր արար զած՝ և ասէ.
48 արդարև՝ այրս այս՝ արդար էր։ *Եւ ամ ժողովուրդ-
քն որ եկեալ էին, և տեսանէին զանցսն զայն՝ և
49 զդարձ, բախէին զկուրծս՝ և դառնային։ *Կային և
ամ ծանօթքն նր ՚ի հեռաստանէ. և կանայք որ եկեալ
էին զհետ նր ՚ի գալիլեէ՝ և տեսանէին զայն։

50 *Եւ ահա այր մի, անուն յովսէփ, որ էր նախարար՝ ՂԲ
51 այր բարեգործ և արդար. *սա չէր միաբանեալ ընդ
խորհուրդս և ընդ գործս նց. յարիմաթեայ քաղաքէ
հրէից, որ և ինքն իսկ՝ ակն ունէր արքայութե այ։
52 *սա՝ մատուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց զմարմինն
53 յի։ *և իջուցեալ զնա՝ պատեաց պատանաւ կտաւ,
և

---

(36) Օրին. Առաջի նր մատուց"։ (37) Օրին. Եթէ դու ես քս Թգւրն։ (38) Օրին. Դաղմատարէն.. եթէ սա է Թգւրն հրէ"։ (40) Բազմ. Զերկնչէիցես դու յայ։ (40) Օրին. Զի և ՚ի նմին պատժի։ (42) Օրին. Գաս արքայութեգ քով։ (44) Օրին. Ցիննե ժամ։ (46) Օրին. Աւանդեմ զոգիս. և։ (47) Օրին. Որ ինչ եղեն։ (48) Օրինակ մ. Եկեալ էին ՚ի տեսանել զանցսն զայն, և զդարձս։ (49) Յայլ օրինակ. ՚ի գալիլեէ՝ և տես"։ (49) Օրին. ՚ի գալիլեայ՝ տեսանէին։ (50) Օրին. Անուն յովսէփ։ (51) Օրին. Յարիմաթեայ... արքայութն։ (53) Օրին. Գերեզմանին. ուր չէր եդեալ զոք։

Digitized by Google

եւ եդ 'ի կոփածոյ գերեզմանի. ուր չեւ էր ոք բնաւ եւ
եդեալ: * Եւ օրն էր ուրբաթ, եւ շաբաթն լուսանայր: 54
* Եւ երթեալ զհետ նր կանայքն՝ որ եկեալ էին ընդ նմ 55
'ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն, եւ որպէս եդաւ մարմին
նր: * Դարձան, եւ պատրաստեցին խունկս եւ իւղս. 56
եւ 'ի շաբաթուն հանգստացան ըստ պատուիրանին:

Գլ. ԻԴ.

Բայց 'ի միաշաբաթուն վաղ՝ քաղ ընդ առաւօտն, ե- 1
կին 'ի գերեզմանն. բերեալ զխունկսն զոր պատրաստե-
ցին. եւ այլ կանայք ընդ նս: * Եւ գտին զվէմն թա- 2
ւալեցուցեալ 'ի գերեզմանէ անտի: * Եւ մտեալ 'ի ներ- 3
քս՝ ոչ գտին զմարմինն Տն Յի: * Եւ եղեւ ընդ հիա- 4
նալն նց վս այդորիկ, եւ ահա արք երկու հասին առ
նս 'ի հանդերձս լուսաւորս: * Եւ իբրեւ զահի հարան՝ 5
եւ խոնարհեցուցին զերեսս յերկիր, ասեն
ցնս. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս: * Չէ՛ աստ, 6
այլ յարեաւ: Յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էր
'ի Գալիլեա, * եւ ասէր՝ թէ պարտ է Որդւոյ մարդոյ 7
մատնել 'ի ձեռս մարդկան մեղաւորաց, եւ 'ի խաչ ելա-
նել, եւ յերրորդ աւուր յառնել: * Եւ յիշեցին զբանսն 8
նր: * Եւ դարձեալ պատմեցին զայս ամ մետասանիցն, 9
եւ այլոցն ամենեցուն: * Եւ էին Մարիամ Մագդաղե- 10
նացի, եւ Յովհաննա, եւ Մարիամ Յակոբայ, եւ այլք ընդ
նս՝ որ պատմեցին զայս առաքելոցն: * Եւ երեւեցան ա- 11
ռաջի նց շաղփաղփանք բանքն նց՝ եւ չհաւատային նց:
* Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի գերեզմանն, 12
եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. եւ գը-
նաց ընդ միտ զարմացեալ, թէ զինչ եղեւ:
ՁԳ * Եւ ահա՝ երկուք 'ի նոցանէ երթային 'ի նմին աւուր 13
'ի գեւղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ հարիւր եւ վաթսուն աս-
պարիսաւ. եւ էր անուն նր Էմմաուս: * Եւ նոքա խօ- 14
սէին ընդ միմեանս վս ամենայն անցիցն անցելոց: * Եւ եղեւ 15
ընդ խօսելն նց եւ ընդ վիճելն, եւ ինքն Յս մեր-
ձեցաւ՝ եւ երթայր ընդ նս: * Եւ նց աչք՝ կալեալ էին 16
առ

---

(54) Ոմանք. Եւ 'ի շաբաթն լուսանայր: (56) Ոմանք. Դարձան պատր". խունկս եւ իւղս:

Գլ. ԻԴ. (1) Ոմանք. 'Ի միաշաբաթուջն, վաղաքաղ ընդ: (2) Ոմանք. 'Ի գերեզմանէն. եւ մտեալ: (4) Ոմանք. Եւ եղեւ 'ի հիանալն նց վս այսորիկ. եւ ահա: (7) Ոմանք. Եւ յերիր աւուր յառ": (12) Ոմանք. Զկտաւսն լոկ՝ զի: (13) Ոմանք. Երկու 'ի նցէ... Էմմաուս: (13) Օրինակ մի. Արք երկու 'ի նցէ էր"... հարիւր եւ յիսուն ասպար".: Էմմաուս: (14) Ոմանք. Անցիցն անցելոց:

Digitized by Google

17 առ ՚ի չծանաչելոյ զնա: * Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ են
բանքդ՝ վասն որոյ վիճէք ընդ միմեանս՝ մինչ գնայք տը-
18 նայէք, եւ տրտմեալ էք: * Պատասխանի ետ մի ոմն ՚ի
նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, եւ ասէ ցնա. Դու՝
միայն կաս յԵմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ՚ի նմ
19 յաւուրս յայսոսիկ: * Եւ ասէ ցնս. Զի՞նչ: Եւ նոքա
ասեն. Զյիսուսէ Նազովրեցւոյ. որ եղեւ այր մարգարէ, հզօր
արդեամբք եւ բանիւք առաջի Այ, եւ ամ ժողովրդեանն:
20 * Որպէս մատնեցին զնա քահանայապետքն՝ եւ իշխանքն մեր
21 ՚ի դատաստան մահու, եւ հանին զնա ՚ի խաչ: * Մեք՝
ակն ունէաք թէ նա է որ փրկելոց է զիսրայէլ: այլ
եւ հանդերձ այսու ամենայնիւ, այս՝ երրորդ օր է յոր-
22 մէ հետէ այն գործեցաւ: * Այլ եւ կանայք ոմանք
՚ի մէնջ զարմացուցին զմեզ. որք կանխեալ ընդ առա-
23 ւօտս չոգան ՚ի գերեզմանն, * եւ ոչ գտին զմարմինն նր.
եկին եւ ասեն, թէ եւ տեսիլ եւս հրեշտակաց տեսին,
24 որք ասէին զնմանէ թէ կենդանի է: * Եւ չոգան ո-
մանք ՚ի մէնջ ՚ի գերեզմանն, եւ գտին նոյնպէս՝ որպէս կա-
25 նայքն ասացին. բայց զնա ոչ տեսին: * Եւ նա՝ ասէ
ցնս. Ով անմիտք եւ հեղգամիտք ՚ի հաւատալ: յամ.
26 զոր խօսեցան մարգարէքն. * ոչ զնոյն պարտ էր չար-
27 չարել քսի, եւ մտանել ՚ի փառս իւր: * Եւ սկսեալ ՚ի
Մովսիսէ եւ յամ մարգարէից, մեկնէր նց՝ որ ինչ յամ
28 գիրս գրեալ է զնմանէ: * Իբրեւ մերձեցան ՚ի գեղն
յոր երթային, եւ նա պատճառէր՝ հեռագոյն եւս ու-
29 րեք երթալ: * Եւ բռնադատեցին զնա՝ եւ ասեն. առա-
մեզ ագիր, զի ընդ երեկս է, եւ տարաժամեալ է օրս:
30 Եւ եմուտ՝ ագանել անդ ընդ նս: * Եւ եղեւ ՚ի բազ-
մելն նր ընդ նս, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ՝ եւ
31 ետ նց: * Եւ նց՝ բացան աչք, եւ ծանեան զնա. եւ նա՝
32 եղեւ ՚ի նոցանէ աներեւոյթ: * Եւ ասեն ցմիմեանս. Ոչ
ապա եւ սիրտք մեր ջեռեալ էին ՚ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ
33 զճանապարհայն. եւ մինչ բանայր մեզ զգիրս: * Եւ յա-
րուցեալ նոյնժամայն՝ դարձան յԵրուսաղէմ, եւ գտին
ժողովեալ զմետասանսն՝ եւ զորս ընդ նոսայն էին,
* Եւ

---

(17) Ուղղ. Մինչ գնու երթայքդ, եւ տրա": (18) Ոմանք. Դու միայն կես յԵմ.. յաւուրս յայսոսիկ: (21) Ոմանք. Նա իցէ որ փրկելոց իցէ. Իէ, էր զիէլ.. երիրորդ օր է.. այդ գործեցաւ: (22) Ոմանք. Ընդ առաւօտն: (23) Ոմանք. Զմարմինն նր.. եթէ տեսիլ եւս հր": (24) Ոմանք. Եւ գտին այնպէս, որպէս եւ կա": (25) Ի չար": Ի հաւատալ ամն զոր խօ": Համաձայն ամենց ՚ի բնաբ": (27) Ոմանք. Գրեալ էր զնմն: (32) Ոմանք. Եւ ասէին ցմիմե": զմեզ. (32) Յն. ընթեռնլին պէտք. Ոչ էին եւ սիրտք:

Digitized by Google

	յամի	ամս	ամսոյ	աւուր
Վասն աստուածութ(եան) Յիսուսի, և հաստատ-				
խօսելոյ	ԼԴ			
Վասն ածելոյն այր ՚ի Հռոմայ հայրենա-				
տեայ	ԼԵ			
Վասն փախելոյն այր ՚ի Գաղղիա . . .	ԼԶ			
Վասն առանցելոյ զհարկն	ԼԷ			
Վասն խնդրելոյն զմարմնաւորական մարմնն .	ԼԵ	ԿԷ	ԽԷ	ՃԲ
Վասն բերելոյն նշխարհմանց զմնացն .	ԼԸ			
Վասն գալոյ Յովհաննու ՚ի Գեբեղոնն . .	ԼԹ			
Վասն դրոշն ծովեզերն մեռանելոյ . . .	Խ			
Վասն զծովմու հաստատելոյ ԳԻ . . .	ԽԱ			
Վասն ասպիրոյն ըստ ՆԸ, և հարցմանն				
զզեստուն	ԽԲ			
Վասն տիրելոյ աշակերտին, և Գրեալ				
զաւետարանն	ԽԳ			

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆ-ՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ։

Յովհաննու Աւետարանն՝ գրեցաւ ի յովհաննիսէ, որ եղեալ է յաշակերտաց ընտրելոց. որ անկաւ ՚ի կուրծս լանջացն Տեառնն սա՝ գրեաց զաւետարանս զայս։ Եւ սկիզբն առնէ յանեղական բանէն. և զայս մարմնոյ ծննդեան մերձաւորիւ յառնէ, և բանն մարմին եղեւ։ Եւ յեղափոխէ զհրաշութիւն յովհաննու, և զճշմարտութիւն աւանդելոցն. այլ և զելանս և զմարտնչումն զոր եղեն։ և զխոստովանութիւն՝ որ համբերեալ աշակերտացն զՏեառնէ, և խաչեցաւ. յարեաւ և զՅիսուսէ բաժանեցին զհանդերձս նր, և ՚ի ՃԸ յարդմանահն ՆԸ ՚ի կեանս[?] ամենայն. և մարգն ՆԸ եղեալ ՚ի Գերեզմանի։ և յարեաւ յերրորդ աւուր, երեւեցաւ աշակեր-տացն իւրոց։

Յովհաննէս՝ որ և որդի որոտման, աշակերտն սիրելի Տեառն. Սա՝ գրեաց ԺԳ ամ համբառնալոյ Քրիստոսի Գրեաց աւետա-րանս իւր յեփեսոս քաղաքի, ՚ի խնդրելոյ եպիսկոպոսաց ասիայ՝ ՚ի Ասիա յոյն։ Են է՝ գլուխս ՃԼԲ։ Վկայութիւնք ԿԹ։ Տունք. ՌՃ Միաբանութեան Չորեքեան աւետարանաց Գլուխք. ՃԽԷ։ Վկայութիւնք. ԿԸ։ Տունք. ՌԴ։

Յովհաննու Համաձայնութիւն։

Աւե.

Digitized by Google

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ.

ԳԼ. Ա.

1 Ի ՍԿԶԲԱՆՆ ԷՐ ԲԱՆՆ. Ա
և բանն էր առ Ած. և Ա՛ծ էր բանն։ բ4
2 * Նա՝ էր ի սկզբանէ առ Ած։ * Ամե-
3 նայն ինչ՝ նովաւ եղև. և առանց նորա
4 եղև և ոչինչ՝ որ ինչ եղևն։ * Նովաւ՝ կեանք էր, և
5 կեանքն՝ էր լոյս մարդկան. * և լոյսն՝ ՚ի խաւարի անդ՝
լուսաւոր էր, և խաւարն՝ նմա ոչ եղև հասու։
6 * Եղև այր մի առաքեալ յԱյ. անուն նր Յովհաննէս։ Բ
7 * սա՝ եկն ՚ի վկայութիւն զի վկայեսցէ վս լուսոյն. զի
8 ամենեքեան հաւատասցեն նովաւ։ * ոչ էր նա լոյսն,
9 այլ զի վկայեսցէ վս լուսոյն։ * Էր լոյսն ճշմարիտ,
որ լուսաւորէ զամ մարդ՝ որ գալոցն է յաշխարհ։
10 * Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ
11 զնա ոչ ծանեաւ։ * Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ
12 ընկալան։ * Իսկ որք ընկալանն զնա, ետ նցա իշխանու-
թիւն որդիս Այ լինել, որոց հաւատասցեն յանուն նր։
13 * Որք ոչ յարենէ, և ոչ ՚ի կամաց մարմնոյ, և ոչ ՚ի
14 կամաց առն, այլ յԱյ ծնան։ * Եւ բանն մարմին եղև,
և բնակեաց ՚ի մեզ. և տեսաք զփառս նր զփառս իբ-
րև զմիածնի առ ՚ի հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։
15 * Յովհաննէս վկայէ վս նր, աղաղակէր և ասէ. սա
է՝ զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ
16 եղև, զի նախ քան զիս էր։ * Զի ՚ի լրութենէ նր
17 մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնորհաց։ * Զի
օրէնքն՝ ՚ի ձեռն մովսէսի տուան. շնորհքն և ճշմարտու-
18 թիւն՝ ՚ի ձեռն յսի քի եղեն։ * Զած ոչ ոք ետես եր- բբ
բեք.

Գլ. ա. (2) Օրինակ Գ. Եւ բանն էր առ Ած։ (3) Օրինակ Գ. Եղև և ոչինչ. որ ինչ եղև նովաւ։ Կեանք էր. և։ (5) Ոմանք. Անդ լուսաւոր է։ Իսկ ոմանք. Լուսաւորէ։ (6) Ոմանք. Անուն նր Յովհ"։ (12) Ոմանք. Որք ընկալանն ... որոց հաւատասցեն յանուն։ (15) Օրինակ մի ընդ-ունելոյ. Յովհաննէս վկայեաց։ (15) Ոմանք. Եւ ասէր. սա էր զորմէ։ (17) Ոմանք. Շնորհք և ճշմարտութիւն։

Digitized by Google

բէք, բայց միածինն որդի՝ որ է՚ի ծոց հօր՝ նա պատմե-
եաց: * Եւ այս է վկայութիւն յովհաննու, յորժամ 19
առաքեցին առ նա հրեայքն յեմէ քահանայս և ղև-
տացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո ես: * Եւ խոս- 20
տովան եղև՝ և ոչ ուրացաւ. և խոստովան եղև եթէ
ես՝ ոչ եմ քն: * Եւ հարցին զնա. իսկ՝ ով ես դու, 21
եղիա՞ ես: և ասէ. ոչ եմ: Իսկ՝ մարգարէ՞ն ես դու:
պատասխանի ետ, թէ ոչ: * Իսկ՝ ասա մեզ, դու ո՞վ 22
ես, զի պատասխանի տարցուք որոց առաքեցինն զմեզ.
զի՞ ասես վն քո: * Ասէ. ես՝ ձայն բարբառոյ յանա- 23
պատի. ուղիղ արարէք զճանապարհն տն, որպ ասաց
եսայի մարգարէ: * Եւ որք առաքեցանն՝ ՚ի փարի- 24
սեցւոց անտի էին: * Հարցին զնա՝ և ասեն. իսկ՝ զի՞ 25
մկրտես՝ եթէ դու չես քն, և ոչ եղիա, և ոչ մար-
գարէն: * Պատասխանի ետ նց յովհաննէս՝ և ասէ. 26
ես՝ մկրտեմ զձեզ ջրով. ՚ի միջի ձերում կայ զոր դուքն
ոչ գիտէք: * որ զկնի իմ գալոցն է, որում չեմ ար- 27
ժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա: * Այս՝ 28
՚ի բեթաբրա եղև յայնկոյս յորդանանու, ուր էրն
յովհաննէս՝ և մկրտէր:

Գ / բ գ
* ՚Ի վաղիւ անդր տեսանէ զյն զի գայր առ նա, և 29
ասէ. ահաւասիկ գառն այ՝ որ բառնայ զմեղս աշխար-
հի: * Սա է՝ վն որոյ եսն ասէի, զկնի իմ գայ՝ այր, 30
որ առաջի իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս: * Եւ 31
ես՝ ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի իսրայէլի,
վն այնորիկ եկի ես ջրով մկրտել: * Վկայեաց յովհան- 32
նէս՝ և ասէ, թէ տեսանէի զհոգին՝ զի իջանէր իբրև
զաղաւնի յերկնից, և հանգչէր ՚ի վերայ նր: * Եւ ես՝ 33
ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով,
նա ասաց ցիս. յոյր վր տեսանիցես զհոգին, զի իջանիցէ
և հանգչիցի ՚ի վր նր, նա է՝ որ մկրտէ հոգւովն սրբով:
* Եւ ես՝ տեսի, և վկայեցի՝ եթէ սա է որդին այ: 34
Դ / բ դ
* ՚Ի վաղիւ անդր կայր յովհաննէս, և յաշակերտացն 35
տի նր՝ երկու: * և նայեցեալ ընդ յն՝ զի գնայր, 36
ասէ.

---

(19) Ոմանք. Զի հարցցեն զնա.. ո՞վ ես: (20) Ոմանք. Ուրացաւ. խոստո՛: (21) Ոմանք. Իսկ ո՞ ես.. և նա ա-սէ. ոչ եմ: (22) Ոմանք. Դու ո՞ ես, զի պիտի ասացուք ո՛: (23) Ոմանք. Զճանապարհս տն: (27) Ոմանք յաւելու. Գալոցն է, որ առաջի իմ էղև, որում չեմ: (27) Ոմանք. Զեմ արժանի թէ: (28) Ոմանք յաւելու. Եւ մկրտէր, Ու անդ լինէր: (29) Ոմանք. Գառանն այ: (31) Ոմանք. Յայտնի լիցի նմա: (33) Օրինակ մ. Յորոյ վերայ.. և հանգիցէ ՚ի վր նր: (36) Ոմանք. Եւ նայեցեալ ընդ յն զի գնայր.. գառանն այ:

Digitized by Google

37 ասէ. ահաւասիկ քն գառն այ։ * Լուան 'ի նմանէ եր-
38 կու աշակերտքն՝ զի խօսէր, և գնացին զհետ յսի։ * Իբ-
րև դարձաւ յս, և տես զնս՝ զի երթային զհետ նր.
ասէ ցնս. զի՞նչ խնդրէք։ Նոքա ասեն ցնա. ռաբբի, որ
թարգմանեալ կոչի՝ վարդապետ, ուր են օթեվանք քո։
39 * Ասէ ցնս. եկայք և տեսէք։ Եկին և տեսին՝ ուր
էին օթեվանք նր. և առ նմա ագան այն օր, զի ժամ
40 էր՝ իբրև տասներորդ։ * Էր անդրէաս՝ եղբայր սի-
մովնի վեմի՝ մի յերկուց անտի, որ լուանն 'ի յովհան-
նէ՝ և գնացին զկնի նորա։
41 * Գտանէ սա՝ նախ զեղբայր իւր զսիմովն, և ասէ ցնա. Ե-
42 գաք զմեսիայն՝ որ թարգմանի քն։ * սա ած զնա առ
յս։ Հայեցեալ ընդ նա յսի՝ ասէ. դու ես սիմովն որ-
դի յովհաննու, դու կոչեսցիս կեփաս, որ թարգմանի՝
43 պետրոս։ * 'Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել 'ի գա- ԲԵ
լիլեա. գտանէ զփիլիպպոս, և ասէ ցնա յս. եկ զկնի
44 իմ։ * Եւ էր փիլիպպոս 'ի բեթսայիդայ, 'ի քաղաքէ
45 անդրեայ և պետրոսի։ * Գտանէ փիլիպպոս զնաթա-
նայէլ, և ասէ ցնա. զորմէ գրեաց մովսէս յօրէնսն,
և մարգարէքն. գտաք զյս զորդի յովսեփայ 'ի նազա-
46 րեթէ։ * Ասէ ցնա նաթանայէլ. թէ 'ի նազարեթէ՝
մարթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել։ ասէ ցնա փիլիպ-
47 պոս. եկ և տես։ * Իբրև ետես յս զնաթանայէլ զի
գայր առ նա, ասէ վս նր. ահա արդարև իսրայէլա-
48 ցի, յորում նենգութիւն ոչ գոյ։ * Ասէ ցնա նաթանայէլ.
ուստի՞ ճանաչես զիս։ պատասխանի ետ յս՝ և ասէ ցնա.
մինչչև էր փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր 'ի ներ-
49 քոյ թզենւոյն, տեսի զքեզ։ * Պատասխանի ետ նմա
նաթանայէլ՝ և ասէ. ռաբբի՝ դու ես որդի այ, դու
50 ես թագաւորն իսրայէլի։ * Պատասխանի ետ նմա յս՝
և ասէ. փոխանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ
թզենւոյն՝ հաւատաս, մեծամեծս քան զայս տեսցես։
51 * Եւ ասէ ցնս. ամէն ամէն՝ ասեմ ձեզ. տեսանիցէք
զերկինս բացեալ, և զհրեշտակս այ՝ զի ելանիցեն և
իջանիցեն 'ի վերայ որդւոյ մարդոյ։

ԳԼ. Բ.

1 Եւ յաւուրն երրորդի, հարսանիք էին 'ի կանա գա- Զ
2 լիլեացւոց. և անդ էր մայրն յսի։ * Կոչեցաւ և ԲԴ
3 յս և աշակերտքն նր 'ի հարսանիսն։ * Եւ 'ի պակա-
սել

---

(38) Բզմք. Նոքա ասեն ցնա։ (40) Ոմանք. Եւ գնացին
զհետ նորա։ (41) Բզմք. Զմեսիա՝ որ թարգմանի քն։
(49) Ոմանք. Որդին այ։ (50) Բզմք. Մեծամեծս ևս քան։
(51) 'Ի լուս". Եւ ասէ ցնա. համաձայն ոմանց 'ի Բնոց"։

Digitized by Google

սել գինւոյն, ասէ մայրն ցյս՟. գինի՝ ոչ ունին։ * Եւ 4
ասէ ցնա յս՟. զի՞ կայ իմ եւ քո՝ կին դու, չեւ՛ է հա-
սեալ ժամանակ իմ. * Ասէ մայրն նր՟ ցսպասաւորսն. 5
որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք։ * Անդ էին թակոյկք 6
կճեայք վեց՝ ըստ սրբութեան հրէից. առնէին մի մի 'ի
նոցանէ մետրս երկուս կամ երիս։ * Ասէ ցնս յս՟. լցէք 7
զթակոյկսդ ջրով։ եւ լցին զնս մինչեւ 'ի վեր։ * Եւ ա- 8
սէ ցնս. արդ՝ արկէք՝ եւ բերէք ճարտարապետին։ եւ
նոքա՝ բերին։ * Եւ իբրեւ ճաշակեաց ճարտարապետն 9
զջուրն գինի եղեալ, եւ ոչ գիտէր ուստի էր. բայց
սպասաւորացն՝ գիտէին որք արկին զջուրն։ Խօսի ընդ
փեսային ճարտարապետն, * եւ ասէ. ամ մարդ՝ զանդրը 10
գինի յառաջագոյն սահմանէ. եւ յորժամ արբենան, յայն-
ժամ զխոտանն. դու՝ պահեցեր զանդրը գինիդ մինչեւ
ցայժմ։ * Զայս արար սկիզբն նշանացն յս՟ 'ի կանա գա- 11
լիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր. եւ հաւատացին
բէ 'ի նա աշակերտքն նորա։ * Յետ այսորիկ էջ յս՟ 'ի կա- 12
փառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր. եւ անդ
եղեն՝ ոչ բազում ինչ աւուրս։ * Եւ էր՝ մերձ զա- 13
տիկն հրէից, եւ ել յս՟ յերուսաղէմ
Ե * Եւ եգիտ 'ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս եւ 14
զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումայափոխսն որ նստէին։
* Եւ արար խարազան չուանեայ, եւ եհան զամենե- 15
սին 'ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զդրամս
հատավաճառացն՝ ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց։
* Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնս. բարձէք զայդ 16
աստի, եւ մի՛ առնէք զտուն հօր իմոյ՝ տուն վաճառի։
* Ապա յիշեցին աշակերտքն նր՟՝ թէ գրեալ է. նա- 17
խանձ տան քո կերիցէ զիս։ * Պատասխանի ետուն 18
հրէայքն՝ եւ ասեն ցնա. զի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝
զի զայդ առնես։ * Պատասխանի ետ յս՟՝ եւ ասէ ցնս. 19
քակեցէք զտաճարդ զայդ, եւ յերիս աւուրս կանգ-
նեցից զդա։ * Ասեն ցնա հրէայքն. զքառասուն եւ 20
զվեց ամ շինեցաւ տաճարս այս, եւ դու՝ յերիս աւուրս
կանգնեսցես զդա։ * Բայց նա՝ ասէր վն՟ տաճարի մար- 21
մնոյ իւրոյ։ * Իսկ յորժամ յարեաւ 'ի մեռելոց, յի- 22
շեցին աշակերտքն նր՟, թէ զայս էր ասացեալ. եւ հաւ-
ատ

Գլ. Բ. (6) Յօրինակին. Թակոյկք կճեայք։ (7) Ոմանք. Զթակոյկդ ջրով։ (8) Ոմանք. Տանձարապետս։ (10) Ոմանք. Զանդրը գինին յա"։ (12) Յօրինակին [illegible]. Էջ յս՟ 'ի կափ"։ (14) Բազ՟. Եւ զլումայափոխսն. կամ, զլումայափոխսն։ (17) Ոմանք. Տան քո կերիցէ զիս։ (19) Ոմանք. Եւ յերիս աւուրս շինեցից զդա։ (20) Ոմանք. Կանգնեսցես զդա։ (21) Ոմանք. Մարմնոյն իւրոյ։ (22) Ոմանք. Ասացեալ յս՟։

Digitized by Google

23 ւատացին գրոցն՝ և բանին զոր ասաց Յս։ * Իբրև էր
էր յԵմ՝ 'ի զատկին 'ի տօնի, բազումք հաւատացին յանուն գ կ
24 նր. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր։ * Բայց ինքն
Յս ոչ հաւատայր զանձն նց. քանզի ինքն գիտէր զամ.
25 * և զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վն մարդոյ.
զի ինքն իսկ՝ գիտէր զինչ կայր 'ի մարդն։

ԳԼ. Գ.

1 Եւ էր՝ այր մի 'ի փարիսեցւոց անուն՝ Նիկոդեմոս ա- Ը
2 ւագ նց, իշխան հրէից։ * սա՝ եկն առ նա գի-
շերի՝ և ասէ ցնա. ռաբբի՝ գիտեմք թէ յայ եկեալ ես
վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր
3 դու առնես. եթէ ոչ այ իցէ ընդ նմա. * Պատաս-
խանի ետ Յս՝ և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, ե-
թէ ոչ ոք ծնցի 'ի վերստին, ոչ կարէ տեսանել զար-
4 քայութիւն այ։ * Ասէ ցնա Նիկոդեմոս. զիարդ կարէ
մարդ ծնանել որ ծերացեալ իցէ. միթէ՝ մարթ ինչ իցէ
անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնա-
5 նել։ * Պատասխանի ետ Յս՝ և ասէ. ամէն ամէն ա-
սեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ կա-
6 րէ մտանել յարքայութիւն այ։ * Զի ծնեալն 'ի մարմնոյ՝
7 մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ՝ հոգի է։ * Դու՝ մի
զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել
8 'ի վերստին։ * զի հողմ՝ ուր կամի շնչէ. և զձայն նորա
լսես. այլ ոչ գիտես ուստի գայ՝ կամ յո երթայ.
9 այնպէս՝ և ամ ծնեալն 'ի հոգւոյն։ * Պատասխանի
ետ Նիկոդեմոս՝ և ասէ ցնա. զիարդ մարթի այդմ լի-
10 նել։ * Պատասխանի ետ Յս՝ և ասէ ցնա. դու ես վար-
11 դապետ Իղի՝ և զայդ՝ ոչ գիտես։ * Ամէն ամէն ա-
սեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝
12 վկայեմք. և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։ * Իսկ արդ՝ ե-
թէ զերկրաւորս ասացի ձեզ, և ոչ հաւատայք. զիարդ
13 եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք։ * Եւ ոչ ոք գբ
ել յերկինս եւ, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մար-
14 դոյ՝ որ էն յերկինս։ * Եւ որպէս Մովսէս բարձրացոյց
զօ-

---

(23) Ոմանք. 'Ի զատկին տօնի։ (24) Ոսկան. Ոչ հաւատայր յանձն նց։
Գլ. Գ. (1) Ոմանք. Նիկոդիմոս. նաև, Նեկոդեմոս ա''։ (2) Ոմանք. Եթէ յայ եկ''.. զայդ նշանսդ։ (3) Ոմանք. Ծնցի վերստին, ոչ կարէ մտանել յարքայութիւն այ։ (4) Ոմանք. Ծնանել որ ծերն իցէ. միթէ մարթ իցէ։ (8) Ոմանք. Եւ զձայնն նր... նոյնպէս և ամ։ (11) Ոմանք. Տեսաքն վկայ''։ (12) Ոմանք. Զերկնաւորն ասա''։ (13) Ոմանք. Եւ ոչ ոք ել յերկինս... որդի մարդոյ։

Digitized by Google

սել զգինւոյն, ասէ մայրն ցյս․ գինի՝ ոչ ունին ։ * Եւ 4
ասէ ցնա յս․ զի՞ կայ իմ եւ քո՝ կին դու, չե՛ւ է հա-
սեալ ժամանակ իմ․ * Ասէ մայրն նր ցպաշտաւնեայսն․ 5
որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք ։ * Ա՛նդ էին թակոյկք 6
կճեայք վեց՝ ըստ սրբութեան հրէից․ առնէին մի մի 'ի
նոցանէ մասս երկուս կամ երիս ։ * Ասէ ցնս յս․ լցէք 7
զթակոյկսդ ջրով ։ եւ լցին զնս մինչեւ 'ի վեր ։ * Եւ ա- 8
սէ ցնս․ արդ՝ արկէք՝ եւ բերէք առ ճարտարապետն ։ եւ
նոքա՝ բերին ։ * Եւ իբրեւ ճաշակեաց ճարտարապետն 9
զջուրն գինի եղեալ, եւ ոչ գիտէր ուստի էր․ բայց
սպասաւորացն՝ գիտէին որք արկին զջուրն ։ Կոչէ ընդ
փեսայն ճարտարապետն, * եւ ասէ․ ամ մարդ՝ զանոյշ 10
գինի յառաջագոյն դնէ․ եւ յորժամ արբենան, յայն-
ժամ զթերագոյնն․ դու՝ պահեցեր զանոյշ գինիդ մինչե
ցայժմ ։ * Զայս արար սկիզբն նշանացն յս 'ի կանա գա- 11
լիլեացւոց, եւ յայտնեաց զփառս իւր․ եւ հաւատացին
բէ 'ի նա աշակերտքն նորա ։ * Յետ այսորիկ էջ յս 'ի կա- 12
փառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր․ եւ անդ
լինէր՝ ոչ բազում ինչ աւուրս ։ * Եւ էր՝ մերձ զա- 13
տիկն հրէից, եւ ել յս յերուսաղէմ
Ե * Եւ եգիտ 'ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս եւ 14
զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումայափոխսն որ նստէին․
* Եւ արար խարազան չուանեաց, եւ եհան զամենե- 15
սին 'ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս
հատավաճառացն՝ ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց․
* Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնս․ առէք զայդ 16
աստի, եւ մի առնէք զտուն հօր իմոյ՝ տուն վաճառի ։
* Յիշեցին աշակերտքն նր՝ թէ գրեալ է․ նա- 17
խանձ տան քո կերիցէ զիս ։ * Պատասխանի ետուն 18
հրէայքն՝ եւ ասեն ցնա․ զի՞նչ նշան ցուցանես մեզ՝
զի զայդ առնես ։ * Պատասխանի ետ յս՝ եւ ասէ ցնս․ 19
քակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգ-
նեցից զդա ։ * Ասեն ցնա հրէայքն․ զքառասուն եւ 20
զվեց ամ շինեցաւ տաճարս այս, եւ դու՝ զերիս աւուրս
կանգնեսցես զդա ։ * Բայց նա՝ ասէր վն տաճարի մար- 21
մնոյ իւրոյ ։ * Իսկ յորժամ յարեաւ 'ի մեռելոց, յի- 22
շեցին աշակերտքն նր, թէ զայս ասէր․ եւ հաւ-

ատա

Գլ․ Բ․ (6) Յօրինակին․ Թակոյք կճեայք ։ (7) Ոմանք․ Զթակոյսդ ջրով ։ (8) Ոմանք․ Տաճարապետին ։ (10) Ոմանք․ Զանոյշ գինին յառ'' ։ (12) Յօրինակին պակասէր․ Էջ յս 'ի կափ'' ։ (14) Բ․օրին․ Եւ զլումայափոխսն․ կամ, զլումափոխսն ։ (17) Ոմանք․ Տան քո եկեր զիս ։ (19) Ոմանք․ Եւ զերիս աւուրս շինեցից զդա ։ (20) Ոմանք․ Կանգնես զդա ։ (21) Ոմանք․ Մարմնոյն իւրոյ ։ (22) Ոմանք․ Ասացն յս ։

Digitized by Google

23 հաւատացին գրոցն՝ եւ բանին զոր ասաց Յս։ * Եւ իբրեւ գ ե
էր յԵմ՝ ի զատկին՝ ի տօնի, բազումք հաւատացին յանուն
24 նորա. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր։ * Բայց ինքն
Յս ոչ հաւատայր զանձն նոցա. վասն զի ինքն գիտէր զամ.
25 * Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վն մարդոյ.
զի ինքն իսկ՝ գիտէր զինչ կայր ՚ի մարդն։

ԳԼ. Գ.

1 Եւ էր՝ այր մի ՚ի փարիսեցւոց անուն՝ Նիկոդեմոս ա- Ը
2 նուն նր, իշխան հրէից։ * Սա՝ եկն առ նա գի-
շերի՝ եւ ասէ ցնա. ռաբբի՝ գիտեմք եթէ յԱյ եկեալ ես
վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր
3 դու առնես. եթէ ոչ իցէ Այ ընդ նմա. * Պատաս-
խանի ետ Յս՝ եւ ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, ե-
թէ ոչ ոք ծնցի ՚ի վերստին, ոչ կարէ տեսանել զար-
4 քայութիւն Այ։ * Ասէ ցնա Նիկոդեմոս. զիա՞րդ կարէ
մարդ ծնանել՝ որ ծերացեալն իցէ. միթէ՝ մարթ ինչ իցէ
անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնա-
5 նել։ * Պատասխանի ետ Յս՝ եւ ասէ. ամէն ամէն ա-
սեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ եւ ՚ի հոգւոյ, ոչ կա-
6 րէ մտանել յարքայութիւն Այ։ * Զի ծնեալն ՚ի մարմնոյ՝
7 մարմին է, եւ ծնեալն ՚ի հոգւոյ՝ հոգի է։ * Դու՝ մի
զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել
8 ՚ի վերստին։ * Զի հողմ՝ ուր կամի՝ շնչէ. եւ զձայն նորա
լսես. այլ ոչ գիտես ուստի գայ՝ կամ յո երթայ.
9 այնպէս՝ եւ ամ ծնեալն ՚ի հոգւոյն։ * Պատասխանի
ետ Նիկոդեմոս՝ եւ ասէ ցնա. զիա՞րդ մարթի այդմ լի-
10 նել։ * Պատասխանի ետ Յս՝ եւ ասէ ցնա. դու ես վար-
11 դապետդ Իէլի՝ եւ զայդ՝ ոչ գիտես. * Ամէն ամէն ա-
սեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝
12 վկայեմք. եւ զվկայութիւն մեր ոչ ընդունիք։ * Իսկ արդ՝ ե-
թէ զերկրաւորս ասացի ձեզ, եւ ոչ հաւատայք. զիա՞րդ
13 եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք։ * Եւ ոչ գ ը
ոք ելեալ է յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից որդին մար-
14 դոյ՝ որ էն յերկինս։ * Եւ որպէս մովսէս բարձրացոյց
զօ-

(23) Ոմանք. ՚Ի զատկին տօնի։ (24) Ոսկան. Ոչ հաւա-
տայր յանձն նց։
Գլ. Գ. (1) Ոմանք. Նիկոդիմոս. կամ, Նեկոդեմոս ա՛՛։
(2) Ոմանք. Եթէ յԱյ եկ՛՛... զայդ նշանսդ։ (3) Ոմանք.
Ծնցի վերստին, ոչ կարէ մտանել յարքայութիւն Այ։
(4) Ոմանք. Ծնանել որ ծերն իցէ. միթէ մարթ իցէ։
(8) Ոմանք. Եւ զձայնն նր... նոյնպէս եւ ամ։ (11) Ո-
մանք. Տեսաքն վկայ՛՛։ (12) Ոմանք. Զերկնաւորն ասա՛՛։
(13) Ոմանք. Եւ ոչ ոք ել յերկինս... որդի մարդոյ։

Digitized by Google

զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդ-
ւոյ մարդոյ: * զի ամ որ հաւատայ 'ի նա՝ ընկալցի զ- 15
կեանսն յաւիտենականս: * Զի այնպէս սիրեաց ած 16
զաշխարհ, մինչեւ զորդին իւր միածին ետ. զի ամ որ
հաւատայ 'ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւ-
ւիտենականս: * Զի ոչ առաքեաց ած զորդի իւր յաշ- 17
խարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշ-
խարհ նովաւ: * Որ հաւատայ 'ի նա՝ ոչ դատապար- 18
տեսցի. եւ որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ դատա-
պարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի որդ-
ւոյն այ: * Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն 19
յաշխարհ, եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան
զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան: * Զի ամ 20
որ զչար գործէ՝ ատեայ զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի
մի յանդիմանեսցին գործք նր: * Իսկ որ առնէ զճշմար- 21
տութիւն, գայ առ լոյսն. զի յայտնի լիցին գործք նր՝
Գ գլ թէ ած գործեցան: * Յետ այսորիկ եկն յս եւ աշա- 22
կերտք նորա յերկիրն հրէաստանի. եւ անդ շրջէր նո-
քօք հանդերձ եւ մկրտէր:

Թ * Մկրտէր եւ յովհաննէս 'ի յայենովն, մերձ առ սա- 23
ղիմ, զի ջուրք բազումք էին անդ. եւ գային՝ եւ մկրտէ-
ին: * Զի չեւ եւս էր արկեալ զյովհաննէս 'ի բանտ: 24

Ժ * Եւ եղեւ խնդիր յաշակերտացն յովհաննու ընդ հրէի 25
միում սրբութեան. * Եկին առ յովհաննէս՝ եւ ասեն ցնա. 26
ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս յորդանանու, որում
դու վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ եւ ամենեքին
գան առ նա: * Պատասխանի ետ յովհաննէս՝ եւ ասէ. 27
ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ՝ եւ ոչ ինչ, եթէ ոչ իցէ
տուեալ նմա յերկնից 'ի վերուստ: * Դուք ձեզէն 28
վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես քն, այլ թէ
առաքեալ եմ առաջի նորա: * Որ ունի հարսն, նա է 29
փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա,
ուրախութբ ուրախ լինի վս ձայնի փեսային: արդ՝ I
այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է: * Նմա պարտ 30
է աճել, եւ ինձ մեղմանալ: * Որ 'ի վերուստ գայ, 31
'ի վերոյ է քան զամ. որ յերկրէ սա է, յերկրէ է՝
եւ յերկրէ խօսի: * Որ յերկնից գայ, զոր ինչ եսեն 32

եւ

(15) Օրինակ մի ըստ աւելորդ յաւելու. Հաւատայ 'ի նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկե": (16) Օմանք. Զի այնչափ սիրեաց: (17) Օմանք. Թէ դատեսցէ զա: (18) Օմանք. Եւ որ ոչն հաւ"... որդւոյ նր: (19) Օմանք. Եւ սիրեաց մարդիկ զխա": (24) Օմանք. Արկեալ էր զյով": (25) Օմանք. Ընդ հրէից մի որ": (26) Օմանք. Ահաւանիկ նա մկրտէ: (27) Օմանք. Առնուլ յանձնէ եւ: (32) Օմանք. Որ

և զոր լուաւ, վկայէ. և զվկայութիւն նր՟ ոչ ոք ընդունա-
33 նի։ * Որ ընդունի զվկայութիւն նր՟՝ կնքեաց, թէ ած
34 ճշմարիտ է։ * Զի զոր ած առաքեաց՝ զբանս այ խօ-
35 սի. զի ոչ եթէ չափով տայ ած զհոգին։ * Հայր սի-
36 րէ զորդի, և զամ ինչ՝ ետ 'ի ձեռս նր՟։ * Որ հաւա-
տայ յորդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. և որ
ոչ հնազանդի որդւոյ, ոչ տեսցէ զկեանս. այլ բարկու-
թիւն այ մնայ 'ի վերայ նորա։

Գլ. Դ.

1 Իբրև գիտաց յս՟ եթէ լուան փարիսեցիքն՝ եթէ յս՟ գ դ
բազում աշակերտս առնէ, և մկրտէ քան զյովհաննէս.
2 * քանզի ոչ եթէ յս՟ ինքնին մկրտէր, այլ աշակերտքն
3 նր՟։ * եթող զհրէաստան երկիր. և եկն միւսանգամ 'ի
4 գալիլեա։ * Եւ էր նմա անցանել ընդ սամարիա։
5 * Գայ նա 'ի քաղաք մի սամարացւոց՝ որում անուն ԺԱ
էր սիքար. մերձ 'ի գեղն զոր ետ յակոբ որդւոյ իւ-
6 րում յովսեփայ։ * և անդ էր աղբեւր մի յակոբայ։
Եւ յս՟ վաստակեալ 'ի ճանապարհէն, նստէր 'ի վր՟
7 աղբերն, և էր ժամ իբրև վեցերորդ։ * Գայ կին մի
'ի սամարացւոց հանել ջուր։ ասէ ցնա յս՟. տուր ինձ ըմպե-
8 լի։ * Զի աշակերտքն նորա երթեալ էին 'ի քաղաք
9 անդր՝ զի կերակուրս գնեսցեն։ * Ասէ ցնա կինն սա-
մարացի. դու՝ որ հրեայդ ես, զիարդ յինէն ըմպել
խնդրես 'ի կնոջէ սամարացւոյ։ զի ոչ երբէք խառնա-
10 կին հրեայք ընդ սամարացիս։ * Պատասխանի ետ նմա
յս՟ և ասէ. եթէ գիտէիր դու զպարգևսն այ, և ով
է՝ որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել, դու արդեւք
11 խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի։ * Ա-
սէ ցնա կինն. տր՟՝ դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս,
և ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞ ունիցիս զջուրն
12 կենդանի։ * Միթէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան ըզ-
հայրն մեր յակոբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, և ինքն
13 աստի արբ՝ և որդիք նր՟, և խաշինք նր՟։ * Պատասխա-
նի ետ նմա յս՟՝ և ասէ. ամ՟ որ ըմպէ 'ի ջրոյ յայդմա-
նէ, միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ 'ի ջրոյն զոր
14 ես տաց նմա, մի ծարաւեսցէ յաւիտեան։ * այլ ջուրն
զոր

ոչ ընդունի։ (34) Ոմանք. Զբանն այ խօսի։
Գլ. Դ. (2) Ոմանք. Յս՟ ինքն մկրտէր։ (4) Ոմանք. Ան-
ցանել ընդ մէջ սամարիայ։ (5) Ոմանք. Սեքար. կամ.
սիւքար։ (6) Ոմանք. Վաստակեալ 'ի ճնշմէն։ (10) Ո-
մանք. Քեզ զջուրն կենդանի։ (11) Ոմանք. Քեզ դոյլ
ոչ ունիս։ (13) Ոմանք. 'Ի ջրոյ յայսմանէ, միւսանգամ
ծարաւեսցի։ (14) Ոմանք. Եղիցի 'ի նմա աղբիւր ջրոյ

Digitized by Google

զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբեւր ջրոյ բղխելոյ ՚ի
կեանսն յաւիտենականս։ * Ասէ ցնա կինն. Տէ՛ր տուր 15
ինձ զջուրն զայն, զի մի ծարաւեցից՝ եւ մի եկից այսր
հանել ջուր։ * Ասէ ցնա յս. Երթ կոչեա զայր քո՝ եւ 16
եկ այսր։ * Պատասխանի ետ նմա կինն՝ եւ ասէ. չիք 17
իմ այր։ Ասէ ցնա յս. բարւոք ասացեր՝ թէ չիք իմ
այր. * զի հինգ այր փոխեալ է քո, եւ զոր այժմ ու- 18
նիս՝ չէ քո այր. զայդ արդարեւ ասացեր։ * Ասէ ցնա 19
կինն. Տէ՛ր՝ թուի ինձ թէ մարգարէ իցես դու։ * Հար- 20
քըն մեր ՚ի լերինս յայսմիկ երկիր պագին. եւ դուք ա-
սէք՝ թէ յԵրուսաղէմ՝ է տեղին ուր արժան իցէ երկիր 1
պագանել։ * Ասէ ցնա յս. Կի՛ն դու՝ հաւատա ինձ, 21
զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ՚ի լերինս յայսմիկ,
եւ ոչ յԵրուսաղէմ երկիր պագանիցէք Հօր։ * Դուք երկիր պա- 22
գանէք՝ որում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք ո-
րում գիտեմքն. զի փրկութիւն ՚ի Հրէից է։ * Այլ եկես- 23
ցէ ժամանակ, եւ այժմ իսկ է. յորժամ ճշմարիտ
երկրպագուք՝ երկիր պագանիցեն Հօր՝ հոգւով եւ ճըշ-
մարտութեամբ. քանզի եւ Հայր՝ այնպիսի երկրպագուս
գ. Ե իւր խնդրէ։ * Հոգի է Ած, եւ երկրպագուաց նորա՝ 24
հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել։
* Ասէ ցնա կինն, գիտեմ զի Մեսիա գայ՝ անուա- 25
նեալն Քս. յորժամ եկեսցէ, նա պատմեսցէ մեզ զամ.
* Ասէ ցնա յս. Ես եմ, որ խօսիմս ընդ քեզ։ * Եւ 26
յայն բան եկին աշակերտքն նորա, եւ զարմանային զի ը 27
կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց ՚ի նոցանէ թէ զինչ
խնդրես, կամ զի՞նչ խօսիս ընդ դմա։ * Եթող կինն 28
զսափորն իւր՝ եւ չոգաւ ՚ի քաղաքն, եւ ասէ ցմարդիկն։
* Եկայք տեսէք զայր մի որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ 29
իմ գործեալ է. միթէ՝ նա իցէ Քս։ * Ելին ՚ի քա- 30
ղաքէն՝ եւ գային առ նա։ * Եւ մինչչեւ եկեալ էին նոքա, 31
աղաչէին զնա աշակերտքն եւ ասէին. Ռաբբի՝ հաց կեր։
* Նա՝ ասէ ցնս. Ես՝ կերակուր ունիմ ուտել, զոր 32
դուքն ոչ գիտէք։ * Ասէին աշակերտքն ը միմեանս. 33
միթէ՝ եբեր ինչ ոք դմա ուտել։ * Ասէ ցնս յս. իմ 34
կերակուր այն է զի արարից զկամս այնորիկ որ ա-
ռաքեացն զիս, եւ կատարեցից զգործն նորա։ * Ո՞չ դուք 35
ասէք՝ եթէ այլ եւս չորք ամիսք են՝ եւ հունձք գան. ա-
հա-

բղխեցելոյ։ (14) Ոմանք. Աղբեւր ջրոյ բղխեալ ՚ի։ (18) Ոմանք. Եւ զոր այժմդ ունիս։ (21) Ոմանք. Ժամանակ՝ յորում ոչ ՚ի լե"... երկիր պագցեն Հօր։ (23) Ոմանք. Ճշմարիտն երկրպագու"։ (25) Ոմանք. Գիտեմք զի Մեսիա գայ։ (29) Ոմանք. Եկայք եւ տեսէք։ (34) Ոմանք. Զգործ-ոցն նորա։ (35) Ոմանք. Եւ տեսէք զարտորայսն, զի՝

Digitized by Google

ժամանակէ եւ՛ առաւել ձեր․ ամբարձէք զաչս ձեր, և տե-
սէք զարտորայսն, զի սպիտակացեալ են՝ և ի հունձս
36 հասեալ։ * Եւ որ հնձէն՝ վարձս առնու, և ժողովէ
զպտուղ ի կեանսն յաւիտենականս։ զի որ սերմանէն՝
37 և որ հնձէ, հաւասարակից ցնծասցեն։ * Յայսմ իսկ է
բանն ճշմարիտ․ զի այլ է որ սերմանէ, և այլ է որ
38 հնձէ։ * Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաս-
տակեցէք․ այլք վաստակեցին, և դուք ի վաստակս նո-
39 ցա մտէք։ * Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց՝ բա-
զումք հաւատացին ի նա, վասն բանին կնոջն վկայելոյ՝ ե-
40 թէ ասաց ինձ զամ, որ ինչ իմ գործեալ էր։ * Իսկ
իբրև եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա լինել
41 առ նոսա։ և եկաց անդ աւուրս երկուս։ * Եւ ևս բազումք
42 հաւատացին ի նա վասն բանին նորա։ * և ասէին ցկինն
եթէ ոչ այսուհետև վասն քո խօսիցդ հաւատամք․ զի
մեզէն իսկ լուաք ի դմանէ․ և գիտեմք եթէ դա է
43 ճշմարիտ փրկիչ աշխարհի։ * Եւ յետ երկուց ա- ԴՀ
44 ւուրց ել անտի և գնաց ի Գալիլեա։ * Զի ինքն իսկ
յիսուս վկայեաց, եթէ մարգարէ յիւրում գաւառի պա-
45 տիւ ոչ ունի։ * Արդ յորժամ եկն նա ի Գալիլեա,
ընկալան զնա Գալիլեացիքն․ զի տեսեալ էին զամ
նշանսն զոր արար յԵրուսաղէմ ի տօնին․ քանզի և նոքա եկեալ
46 էին ի տօնն։ * Եկն դարձեալ ի կանա Գալիլեացւոց՝
ուր արար զջուրն գինի․ և անդ էր։
Թագաւորազն մի, որոյ որդի նր հիւանդ կայր ի կա- ԺԲ
47 փառնաում։ * Նա՝ իբրև լուաւ, եթէ յս եկեալ է ի
հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա, և աղաչէր զի
իջցէ և բժշկեսցէ զորդի նր․ քանզի մերձ էր ի մեռա-
48 նել։ * Ասէ ցնա յս․ եթէ ոչ նշանս ինչ և արուեստս
49 տեսանիցէք, ոչ հաւատայք։ * Ասէ ցնա Թագաւորազնն․
50 տր՝ էջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ։ * Ասէ ցնա
յս․ երթ, որդին քո կենդանի է․ և հաւատաց այրն
51 բանին զոր ասաց նմա յս, և գնայր։ * Եւ մինչ դեռ է-
ջանէր, ընդառաջ եղեն նմ ծառայքն նր․ աւետիս ե-
52 տուն՝ և ասեն, թէ մանուկն նր կենդանի է։ * Հար-
ցանէր ցնս վս ժամուն՝ յորում առողջացեալ էր։ և ա-
սեն

(36) Բնէ․ Հաւասարակ ցնծասցեն։ Ոմն օրինակ մ․ Հա-
ւասար ցնծ"։ (37) Ոմանք․ Յայսմանիկ է բանն ճշ"․․ որ
սերմանէն։ (38) Բնէ․ Հնձել՝ զոր ոչ դուք վաստա-
կեցէք։ (39) Ոմանք․ Իմ գործեալ է։ (46) Ոմանք․ Ահա-
ւասիկ ընթերցուած․ Եւ անդ էր Թագաւորազն մի․ այլ Բնէ հանա-
պազ [illegible]։ Ոմն և ոմանք․ Թագաւորազն միոյ որդի
նր հիւանդ։ (47) Ոմանք․ Եւ աղաչէր զնա․ զի։ (49) Ո-
մանք․ Թագաւորազնն։ (52) Ոմանք․ Եթէ մանուկ նր։

սեն ցնա․ երէկ յեւթներորդ ժամու եթող զնա ջերմն ։
* Գիտաց հայրն նր՝ թէ յայնմ ժամու՝ յորում ասացն 53
ցնա յս՝ թէ որդին քո կենդանի է․ եւ հաւատաց ինքն
եւ ամ̃ տուն իւր ։ * Զայս դարձեալ՝ երկրորդ նշան 54
արար յս՝ եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա ։

ԳԼ. Ե.

գ ե Յետ այսորիկ տօն էր Հրէից․ եւ ել յս յԵմ ։ * Եւ 1
էր յԵմ ՚ի պրոբատիկէ աւազանին՝ որ կոչէր եբ- 2
րայեցերէն բեթհեզդա, հինգ սրահ ։ * յորս անկեալ 3
դնէր բազմութի յոյժ հիւանդաց, կուրաց կաղաց գօ-
սացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ ։ * Եւ հրեշ- 4
տակ տն ըստ ժամանակի իջանէր յաւազանն՝ եւ յու-
զէր զջուրսն․ եւ որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր՝
բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութե ։
ԺԳ * Եւ անդ էր այր մի՝ որոյ երեսուն եւ ութ ամ էր ՚ի 5
հիւանդութե իւրում ։ * զնա իբրեւ ետես յս՝ զի ան- 6
կեալ դնէր, եւ գիտաց թէ բազում ժամանակք են այնու-
հետեւ, ասէ ցնա․ կամիս ողջ լինել ։ * Պատասխանի 7
ետ նմա հիւանդն․ տր՝ ոչ զոք ունիմ, թէ յորժամ
ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն․ եւ մինչ ես
դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ ։ * Ա- 8
սէ ցնա յս․ արի առ զմահիճս քո՝ եւ գնա ։ * Եւ ող- 9
ջացաւ այրն․ եւ յարեաւ, առ զմահիճս իւր՝ եւ շրջէր․
եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ ։ * Ասեն հրեայքն ցբժշ- 10
կեալն․ շաբաթ է, եւ ոչ էր արժան առնուլ քեզ զմա-
հիճս քո ։ * Պատասխանի ետ նց՝ եւ ասէ․ որ բժշկեացն 11
զիս, նա ասաց ցիս՝ առ զմահիճս քո եւ գնա ։ * Հար- 12
ցին ցնա՝ եւ ասեն․ ով է այրն որ ասացն ցքեզ՝ առ
զմահիճս քո եւ շրջեաց ։ * Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ 13
ով իցէ․ քանզի յս խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղ-
ւոջէ անտի ։ * Յետ այսորիկ գտանէ զնա յս ՚ի տա- 14
ճարին, եւ ասէ ցնա․ ահաւասիկ ողջացար, մի եւս մե-
ղանչէր․ զի մի չար եւս ինչ լինիցի քեզ ։ * Գնաց այրն՝ 15
եւ

(53) Ոմանք․ Եւ ամ տունն իւր ։ (54) Ոմանք․ Երկրորդ նշանս ա՛․․ ՚ի Գալիլիէ ։

Գլ․ Ե․ (2) Ոմանք․ ՚Ի պրոպատիկէ ։ (3) Ոմանք․ Ջուրցն յուզելոց ։ (4) ՚Ի Բզնի օրինակ այս 4․ համար․ * Եւ հրեշտակ տն․․․ նշան հիւանդութե ։ Եւ ՚ի սակաւուց օրինակի ոչ գոյին համեմատ միւսոցն՝ ոմանք ՚ի լուսանցս չակերտիւ նշանակէին զբանսս ։ (4) Ոսկան․ Իջանէր յաւազանն, բժշկիւր․ ոչ ։ (7) Ոմանք․ Ջուրքն յուզեսցեն․ կամ, յուզին ։ (10) Ոմանք․ Է արժան քեզ առնուլ ։ (12) Ոմանք․ Որ ասաց ցքեզ ։ (14) Ոմանք․ Ահաւասիկ ողջա՛․․․ զի մի չար ինչ լի՛ ։

Digitized by Google

և պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զնա։
16 * Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրէայքն, զի զայն
17 առնէր 'ի շաբաթու։ * Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա․
18 Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։ * Վասն
այնորիկ առաւել խնդրէին Հրէայքն սպանանել զնա․
զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ և Հայր իւր կո-
չէր զԱծ, և հաւասար առնէր զանձն Այ։
19 * Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա․ ամէն ամէն ասեմ ԺԴ
ձեզ․ ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, Գ Կ
եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ․ զի զոր նոյն առ-
20 նէ, զնոյն և որդին նմին նման գործէ։ * Զի Հայր սի-
րէ զորդի, և զամ ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առ-
նէ։ և մեծամեծս ևս քան զայնս ցուցանէ նմա զգործս,
21 ընդ որ դուք զարմանայք։ * Զի որպէս Հայր յարուցա-
նէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի զորս
22 կամի կենդանի առնէ։ * Եւ ոչ եթէ Հայր դատի զոք՝
23 այլ զամ դատաստանն ետ որդւոյ իւրոյ․ * զի ամե-
նեքեան պատուեսցեն զորդի, որպէս պատուեն զՀայրն։
որ ոչ պատուէ զորդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն
24 նր։ * Ամէն ամէն ասեմ ձեզ․ զի որ զբանն իմ լսէ,
և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս
յաւիտենականս․ և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ
25 փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս։ * Ամէն ամէն ասեմ
ձեզ․ զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մե-
ռեալք լուիցեն ձայնի որդւոյն Այ․ և որք լուիցեն՝ կեց-
26 ցեն։ * Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյն-
27 պէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում։ * Եւ
իշխանութիւն ետ նմա դատաստան առնել։ և զի որդի
28 մարդոյ է, * ընդ այն մի զարմանայք։ զի եկեսցէ ժա-
մանակ՝ յորում ամենեքեան որ 'ի գերեզմանս կայցեն,
29 լուիցեն ձայնի նր, * և եկեսցեն արտաքս․ որոց զբա-
րիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար
30 արարեալ իցէ՝ 'ի յարութիւն դատաստանաց։ * Ոչ կա-
րեմ ես յանձնէ առնել՝ և ոչինչ․ այլ որպէս լսեմ՝ դա-
տիմ, և դատաստանն իմ արդար է։ զի ոչ խնդրեմ
զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։
31 * Եթէ ես վկայեմ զնմ իմ, վկայութիւն իմ չէ ճշմարիտ։ Գ Ը

* այլ

---

(20) Օրինակ․ Եւ մեծամեծ ևս քան զնոյնս ցուց․․ Է ա-
րուեմ գուցէք։ (22) Օրինակ․ Դատաստանս ետ որդւոյ իւրում։
(24) Օրինակ․ Եւ հաւատայ յայն որ։ (25) Օրինակ․ Եւ որ լսի-
ցենն՝ կե․․։ (26) Օրինակ․ Նոյնպէս և ետ որդւոյ։ (29) Օրինակ․
Որոց բարիս․․ յարութի․․ արարեալ է։ (29) 'Ի բՃ՛ս պիտի․
Արարեալ իցէ՝ 'ի յար․․։ (30) Օրինակ․ Առնել 'ի յանձնէ․․
որպէս լսեմն, դա․․։ (31) Օրինակ․ Ես վկայեմ զնմ անձին իմոյ։

Digitized by Google

* այլ է որ վկայէ վն իմ. և դուք գիտէք եթէ ճշմա- 32
րիտ է վկայութիւնն զոր վկայէ վասն իմ: * Դուք 33
առաքեցէք առ Յովհաննէս, և վկայեաց ճշմարտութեան:
* այլ ես ոչ եթէ ՚ի մարդկանէ առնում վկայութիւն. 34
այլ զայս ասեմ զի դուք ապրեսջիք: * Նա էր ճրագն 35
որ լուցեալն էր և ծագէր. և դուք կամեցարուք ցնծալ
առ ժամանակ մի ՚ի լոյս նր: * Այլ ես ունիմ վկայ- 36
ութիւն մեծ քան զՅովհաննու. զգործսն՝ զոր ետ
ցիս Հայր՝ զի կատարեցից զնս, նոքին իսկ գործքն զոր
գործեմ՝ վկայեն վն իմ, եթէ Հայր առաքեաց զիս:
* և որ առաքեացն զիս Հայր, նա վկայեաց վն իմ: 37
Դուք ոչ զձայն նր երբէք լուարուք. և ոչ զտեսիլ նր
տեսէք: * Եւ ոչ զբան նր ունիք ՚ի ձեզ բնակեալ. զի 38
զոր նա առաքեաց, դուք նմա ոչ հաւատայք: * Քննե- 39
ցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն
յաւիտենականս: և նոքին իսկ են որ վկայեն վն իմ,
որովք համարիքդ ունել կեանս: * և դուք ոչ կամիք 40
գալ առ իս, զի զկեանս ունիցիք: * Ես փառս ՚ի 41
մարդկանէ ոչ առնում: * այլ գիտեմ զձեզ՝ զի զսէր- 42
ն Այ ոչ ունիք յանձինս. * Ես եկի յանուն Հօր ի- 43
մոյ, և ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր
անուն, զնա ընդունիցիք: * Զիարդ կարէք դուք հա- 44
ւատալ. զի փառս ՚ի միմեանց առնուք, և զփառս զառ
՚ի միոյն Այ ոչ խնդրէք: * Մի համարիք եթէ ես չա- 45
րախօս լինիցիմ զձէնջ առ Հայր. գոյ որ չարախօս լինի
զձէնջ՝ Մովսէս. յոր դուքդ յուսացեալ էք: * զի եթէ 46
հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք և
ինձ. զի նա վն իմ գրեաց: * Զի եթէ նր գրոցն 47
ոչ հաւատայք, զիարդ իմոց բանիցս հաւատայցէք:

ԳԼ. Զ.

ԴԴ Յետ այսորիկ գնաց Յս յայնկոյս ծովուն Գալիլեաց- 1
ւոց Տիբերեայ: * և զհետ երթայր նր ժողովուրդ 2
բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ՚ի վերայ հի-
ւանդաց: * Ե՛լ ՚ի լեառն Յս, և անդ նստէր աշակերտ- 3
օքն հանդերձ: * Եւ էր մերձ զատիկ տօնի հրէից: 4
ՃԵ * Համբարձ ՚ի վեր զաչս իւր Յս, և տեսեալ զի ժողովուրդ բազում 5
գայր

(32) Ոմանք. Որ վկայեաց վն: (34) Ոմանք. Այլ զայս ասացի. զի: (42) Ոմանք. Թէ զսէրն Այ ոչ ունիք: (43) Ոմանք. Ես իսկ եկի յանուն.. ՚ի յիւր ա": (44) Յօ- [illegible] Զառ ՚ի միոյն Այ ոչ խնդ": (46) Յօրինակին գրեալ էր. Զի նա վն իմ իսկ: (47) Ոմանք. Նր գրոցն ոչ հաւատա": ԳԼ. Զ. (1) Ոմանք. Գնաց Յս յայնկոյս: (2) Ոմանք. Եւ զհետ երթային նր ժո": (5) Ոմանք. Գնեսցուք հացս:

Digitized by Google

գայր առ նա. ասէ ցփիլիպպոս. ուստի՞ գնեսցուք հաց՝
6 զի կերիցեն դոքա: * Զայս ասէր փորձելով զնա. այլ
7 ինքն գիտէր զինչ առնելոց էր: * Պատասխանի ետ նմա
փիլիպպոս. երկերիւր դահեկանի հաց՝ ոչ դոցա բա-
ւական, թէպէտ և իւրաքանչիւրքն սակաւ ինչ առ-
8 նուցուն: * Ասէ ցնա մի յաշակերտացն նր, անդրէաս՝
9 եղբայր սիմովնի պետրոսի. * Է աստ՝ պատանեակ մի որ
ունի հինգ նկանակ գարեղէն՝ և երկուս ձկունս, այլ
10 այն զի՞նչ է առ այսչափ մարդիկդ: * Ասէ յս. բազ-
մեցուցէք զմարդիկդ: և էր խոտ յոյժ ի տեղւոջն. և
11 բազմեցան մարդիկն թուով իբրև հինգ հազար: * Ե-
առ զհացսն յս, և գոհացաւ. և բաշխեաց բազմակա-
12 նացն. նոյնպէս և ի ձկանցն որչափ և կամեցան: * Եւ
իբրև յագեցան, ասէ ցաշակերտսն. ժողովեցէք զն-
13 շխարս կոտորոցդ, զի մի ինչ կորիցէ: * Ժողովե-
ցին. և լցին երկոտասան սակառի զկոտորոցն ի հինգ
գարեղէն նկանակէ անտի, որ յաւելան ի կերողացն:
14 * Իսկ մարդիկն՝ իբրև տեսին զնշանն զոր արար, ա-
սէին, թէ սա է ճշմարիտ մարգարէն՝ որ գալոց էր յաշ-
15 խարհ: * Յս իբրև գիտաց եթէ գալոց են յափշտա- գ դ
կել զնա, զի արասցեն զնա թագաւոր, գնաց դար-
ձեալ ի լեառն միայն:
16 * Եւ իբրև երեկոյ եղև, իջին աշակերտքն նր ի ծո- ժ զ
17 վեզրն: * Եւ մտեալ ի նաւ՝ գնային յայնկոյս ծովուն
ի կափառնաում: և իբրև խաւարեաց, և չև ևս եկեալ
18 էր առ նս յս. * և ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յու-
19 զէր: * Եւ վարեալ իբրև ասպարէս քսան և հինգ՝
կամ երեսուն, տեսանէին զյս՝ զի գնայր ի վերայ ծո-
20 վուն՝ և մերձ էր ի նաւն, և զարհուրեցան յոյժ: * Եւ
21 նա՝ ասէ ցնս. ես եմ՝ մի երկնչիք: * Եւ կամէին զնա
ընդունել ի նաւն. և վաղվաղակի եհաս նաւն յերկիրն
22 յոր երթային: * Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր գ ե
յայնկոյս ծովուն. տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ.
բայց միայն ի միոյն՝ յոր մտին աշակերտքն յս. և զի
չէր մտեալ յս ընդ աշակերտսն իւր ի նաւն. բայց միայն
23 աշակերտքն նր գնացին: * Իբրև այլ նաւք գային ի
տի-

(7) Ոմանք. Պատասխանի ետ փիլիպպոս: (9) Ոմանք. Նկանակս
գարեղէնս.. առ այդ չափ մարդիկ: (12) Ոմն. Յա-
շակերտսն իւր: (14) Օրինակ մի ընդ ոսկւոյ. Որ գա-
լոց է յաշխ": (17) Բազ. ի նաւ՝ գային յայն կոյս: (19) Ո-
մանք. Եւ վարէր իբրև ասպարիսս... զյս զի գնայր
ի վր ծո"... ի նաւն՝ զարհուրեալ": (20) Ի բազ՝ միոյ. Եւ
նա ասէ: (21) Բազ. Ընկալնել զնա ի նաւն: (22) Ո-
մանք. Բայց միայն միոյն: Ոսկ ոսկւ. Բայց ի միոյն:

Digitized by Google

տիբերեայ մօտ յայն տեղի՝ ուր զհացն կերան ։ * Իսկ 24
իբրեւ ետես ժողովուրդն եթէ յս ոչ է անդ՝ եւ ոչ ա-
շակերտքն նր, մտին նոքա զնաւսն, եւ եկին ՚ի կափառ-
նաում խնդրել զյս ։ * Եւ իբրեւ գտին զնա յայնկոյս 25
ծովուն, ասեն ցնա. ռաբբի՝ երբ եկիր այսր ։ * Պա- 26
տասխանի ետ նց յս՝ եւ ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ.
խնդրէք դուք զիս, իբրեւ ոչ եթէ զի նշանս ինչ տե-
սէք; այլ զի կերայք ՚ի հացէ անտի՝ եւ յագեցարուք ։
* Երթայք գործեցէք՝ մի զկորստական կերակուրն, 27
այլ զկերակուրն որ մնայ ՚ի կեանսն յաւիտենականս,
զոր որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա հայր կնք-
եաց այծ ։ * Ասեն ցնա. զի՞նչ առնիցեմք զի զգործ- 28
սըն այ գործեսցուք ։ * Պատասխանի ետ յս՝ եւ ասէ 29
ցնս. այս է գործն այ, զի հաւատայջիք յայն, զոր ա-
ռաքեաց նա ։ * Ասեն ցնա. զի՞նչ նշան առնիցես, զի 30
տեսցուք եւ հաւատասցուք, զի՞նչ գործիցես ։ * Հարք- 31
քըն մեր կերան զմանանայն յանապատի անդ, ոպ եւ
գրեալ է. հաց յերկնից ետ նց ուտել ։ * Ասէ ցնս յս. 32
ամէն ամէն ասեմ ձեզ. թէ ոչ մովսէս ետ ձեզ զհացն
յերկնից. այլ հայրն իմ տացէ ձեզ զհացն յերկնից ճշ-
մարիտ ։ * Զի հաց այյ է, որ իջանէն յերկնից՝ եւ 33
կեանս տայ աշխարհի ։ * Ասեն ցնա. տր՝ յամ ժամ 34
տուր մեզ զհացն զայն ։ * Ասէ ցնս յս. ես եմ հացն 35
կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ
յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի ։ * Այլ ասացի ձեզ՝ եթէ 36
տեսէք զիս, եւ ոչ հաւատայք ։ * Զամ զոր տայ ինձ 37
հայր, առ իս եկեսցէ. եւ որ գայ առ իս, ոչ հանից ար-
տաքս ։ * Զի իջի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արար- 38
գղ րից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս ։ * Այս 39
են կամք հօր իմոյ որ առաքեացն զիս. զի զամ զոր ետ
ցիս հայր՝ ոչ կորուսից ՚ի նմանէ, այլ յարուցից զնա
յաւուրն յետնում ։ * Այս են կամք հօր իմոյ. զի ամ 40
որ տեսանիցէ զորդի՝ եւ հաւատայցէ ՚ի նա, ընկալցի
զկեանսն յաւիտենականս. եւ ես՝ յարուցից զնա յա-
ւուրն յետնում ։ * Տրտնջէին զնմանէ հրէայքն, զի ա- 41
սաց

---

(26) Ոմանք. Խնդրէք զիս. իբր ոչ եթէ նշանս ինչ տե"։ (29) Ոմանք. Յայն՝ որ առաքեացն զիս ։ Եւ ոմանք. զոր առաքեացն զնա ։ (30) Ոմանք. Զի՞նչ ինչ նշանս առնես., զինչ գործեսցես ։ (31) Ոմանք. Հաց յերկնից ետ ։ (32) Ոմանք. Եթէ ոչ մով"... տայ ձեզ զհացն ։ (33) Ոսկան. Զի հաց այյ է ։ (33) Ոմանք. Որ իջանէ յերկ" ։ (34) Յօրինակին. Մեզ հացն զայն ։ (36) Ոսկան. Թէ տեսանէք զիս ։ (39) Ոմանք. Զի զամ զոր ետ ցիս ... յետնումն ։ (40) Ոսկան. Որ տեսանէ զորդի եւ հաւատայ ՚ի նա ։

Digitized by Google

42 սաց՝ թէ Ես եմ հացն իջեալ յերկնից ։ * Եւ ասէին, ո՞չ
սա է որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն ։
43 իսկ արդ՝ զիա՞րդ ասէ՝ եթէ ես յերկնից իջի ։ * Պա-
տասխանի ետ Յս՝ և ասէ ցնս ։ մի՛ քրթմնջէք ընդ մի-
44 մեանս ։ * Ո՛չ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ
զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա ։ և ես յարուցից զնա յա-
45 ւուրն յետնում ։ * Գրեա՛լ է ՚ի մարգարէս ։ և եղիցին
ամենեքեան ուսեալք յԱյ ։ ամենայն որ լսէ ՚ի Հօրէ՝
46 և ուսանի՝ գայ առ իս ։ * Իբրև ո՛չ եթէ զՀայր՝ ու-
րուք տեսեալ իցէ ։ եթէ ոչ որ է՛ն յԱյ, նա՛ տեսեալ է ըզ-
47 Հայր ։ * Ամէն ամէն ասեմ ձեզ ։ զի որ հաւատայ՝ ըն-
48 դունի զկեանսն յաւիտենականս ։ * Ե՛ս եմ հացն կե-
49 նաց ։ * Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին՝
50 և մեռան ։ * Ա՛յս է հացն, որ յերկնիցն իջեալ է ։
51 զի որ ուտիցէ ոք ՚ի սմանէ՝ մի՛ մեռանիցի ։ * Ես եմ
52 հացն կենդանի, որ յերկնից իջեալ ։ * եթէ ոք ուտի-
ցէ ՚ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ՚ի յաւիտեան ։ և հացն զոր
ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վս կենաց աշխարհի ։
53 * Մարտնչէին ը̅ միմեանս Հրէայքն և ասէին ։ զիա՞րդ ժէ
54 կարէ սա՝ տա՛լ մեզ զմարմին իւր յուտել ։ * Ասէ ցնս
Յս ։ ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ կերիջիք զմար-
մին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նր, ո՛չ ունիք
55 կեանս յանձինս ։ * Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զա-
րիւն իմ, ունի զկեանսն յաւիտենականս ։ և ես՝ յարու-
56 ցից զնա յաւուրն յետնում ։ * Զի մարմին իմ՝ ճշմա-
րիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է ։
57 * Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բը-
58 նակեսցէ, և ես ՚ի նմա ։ * Որպ առաքեաց զիս կենդա-
նին Հայր, և ես կենդանի եմ վս Հօր ։ և որ ուտէն զիս՝
59 և նա կեցցէ վասն իմ ։ * Ա՛յս է հացն՝ որ յերկնից
իջեալ ։ ո՛չ որպ կերան հարքն ձեր զմանանայն՝ և մե-
60 ռան ։ որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան ։ * Զայս
ասաց ՚ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ՚ի կափառնա-
61 ում ։ * Իսկ բազումք յաշակերտացն իբրև լուան՝ ա-
62 սեն ։ խիստ է բանդ այդ, ո՞վ կարէ լսել դմա ։ * Իբ-
րև գիտաց Յս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնո-
րիկ

(42) Ոմանք յաւելուն ։ Ո՞չ սա է Յս՝ որդին Յովս՝ . . . զհայրն և զմայր ։ (46) Ոմանք ։ Իբր ոչ եթէ զհայր . . որ էնն ։ (47) Ոսկան յաւելու ։ Որ հաւատայ յիս՝ ընդունի ։ (50) Ոմանք ։ Որ յերկնից իջեալ ։ զի . . մի՛ մեռցի ։ (52) Ոսկան ։ կեցցէ յաւիտեան ։ (53) Ոմանք ։ Զմարմին իւր ուտել ։ (58) Օրինակ մի ։ Եւ, որ սիրէն զիս, և նա կեցցէ ։ (60) Ոմանք ։ Զայս ասաց ժողովրդ՟ ։ (61) Ոսկան ։ Իբրև լուան՝ ասէին ։ (62) Ոսկան ։ Աշակերտքն իւր, ասէ ։

Digitized by Google

րեն աշակերտքն նր, ասէ ցնս: այդ՝ գայթագղեցուցանէ զձեզ: * Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զորդի մար_ 63
դոյ՝ զի ելանիցէ ուր էր զառաջինն: * Հոգին է կեն_ 64
դանարար, մարմինն՝ ինչ ոչ օգնէ: զբանս զոր ես խօ_
սեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք: * այլ են ոմանք 'ի 65
ձէնջ՝ որ ոչ հաւատան: Քանզի գիտէր յս խակզբանէ,
ով են այնոքիկ որ ոչն հաւատան, եւ ով այն է որ մատ_
նելոցն է զնա: Եւ ասէր. * վն այսորիկ ասացի ձեզ՝ 66
թէ ոչոք կարէ գալ առ իս, եթէ ոչ տուեալ 'ի
հօրէ իմմէ: * Յայսմանէ բազումք յաշակերտացն նր չո_ 67
գան յետս, եւ ոչ եւս շրջէին ընդ նմա: * Ասէ յս ցեր_ 68
կոտասան աշակերտսն. միթէ՝ եւ դուք կամիք երթալ:
* Պատասխանի ետ նմ սիմոն պետրոս. տր՝ առ ով 69
երթիցուք. բանս կենաց յաւիտենականից ունիս. * եւ 70
մեք՝ հաւատացաք եւ ծանեաք՝ եթէ դու ես քն որդի
այ: * Պատասխանի ետ նց յս. ոչ ես զձեզ զերկոտա_ 71
սանսդ ընտրեցի. եւ մի 'ի ձէնջ սատանայ է: * Եւ 72
ասէր զյուդայ սիմովնեան յուդայէ սկարիովտացւոյ. զի նա
իսկ՝ մատնելոց էր զնա. եւ մի էր յերկոտասանիցն:

Գլ. Է.

ԺԸ / ԴԷ Եւ յետ այսորիկ շրջէր յս 'ի գալիլեա. քանզի ոչ 1
կամէր 'ի հրէաստանի շրջել, զի խնդրէին զնա հր_
էայքն սպանանել: * Եւ էր մերձ տօնն հրէից տա_ 2
ղաւարահարաց: * Ասեն ցնա եղբարքն նր. գնա աս_ 3
տի եւ երթ 'ի հրէաստան, զի եւ աշակերտքն քո տես_
ցեն զգործսդ քո զոր գործես: * զի ոչոք է որ 'ի ծա_ 4
ծուկ ինչ գործէ, եւ խնդրէ ինքն համարձակ լինել. ե_
թէ զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի: * քան_ 5
զի եւ եղբարքն իսկ՝ չէին հաւատացեալ 'ի նա: * Ասէ 6
ցնս յս. ժամանակ իմ չէ եւ հասեալ. բայց ձեր ժամա_
նակ՝ յամ ժամու պատրաստ է: * Ոչ կարէ աշխարհ 7
ատել զձեզ. բայց զիս ատեայ. զի ես վկայեմ վասն նր՝
եթէ գործքն իւր չարութեան են: * Դուք ելէք 'ի 8
տօնն յայդ, ես ոչ ելանեմ 'ի տօնն յայդ. զի իմ ժամա_
նակ՝ չէ եւ լցեալ: * Զայս իբրեւ ասաց, ինքն մնաց ան_ 9
դէն

(64) Օրին. Զբանսն զոր ես խօ": (65) Օրին. Եւ ով է այն որ մատնելոցն էր զնա: (66) Օրին. Տուեալ նմա 'ի հօրէ: (67) Օրին. Նր՝ դարձան յետս, եւ ոչ շր": (71) Օրին. Զերկոտասանսդ ընտրեցի. եւ մինդ. նոյն, մինն. նոյն, մի 'ի ձէնջ: (72) Օրին. Զի նա մատնելոց: Գլ. Է. (1) Օրին. Եւ յետ այնորիկ: Որ ոսկան. Յետ այսորիկ: (4) Ոսկան. Եւ խնդրէ՝ զինքն համար": (7) Օրին. Աշխարհս ատել զձեզ: (9) Օրին. Մնաց անդ.

Digitized by Google

10 զնա՝ի գաղտնիս : * Իբրեւ ելին եղբարքն նորա, ապա՝ եւ
11 ինքն ել՝ի տօնն՝ ոչ յայտնի, այլ իբրեւ՝ի ծածուկ : * Եւ
հրեայքն խնդրէին զնա՝ի տօնի անդ՝ եւ ասէին, ուր ի-
12 ցէ նա : * Եւ քրթմնջիւն էր զնմանէ՝ի ժողովուրդսն :
կէսքն ասէին՝ թէ բարւոք է : այլք ասէին՝ ոչ, այլ մո-
13 լորեցուցանէ զժողովուրդն : * Եւ ոչ ոք համարձակ
14 խօսէր զնմանէ վասն երկիւղին հրէից : * Իբրեւ տօնն ե կ
15 ընդմիջեցաւ, ել Յս՝ի տաճարն՝ եւ ուսուցանէր : * Զար-
մանային հրեայքն եւ ասէին . զիարդ զգիրս գիտէ սա,
16 զի ուսեալ բնաւ չիք : * Պատասխանի ետ նց Յս՝ եւ ա-
սէ . իմ վարդապետութիւն չէ իմ, այլ այնորիկ որ ա-
17 ռաքեացն զիս : * Եթէ ոք կամի զկամս նր առնել, գի-
տասցէ վասն վարդապետութեանս, յԱյ իցէ արդեւք՝
18 եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ : * Որ յանձնէ իւր-
մէ խօսի, զփառս անձին իւրում խնդրէ . իսկ որ խնդ-
րէ զփառս այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ
19 է, եւ անիրաւութիւն ոչ գոյ'ի նմա : * Ոչ մովսէս ետ
20 ձեզ զօրէնսն, եւ ոչ ոք'ի ձէնջ առնէ զօրէնսն : * զի
խնդրէք զիս սպանանել : Պատասխանի ետ ժողովուրդն՝
եւ ասէ . դեւ գոյ'ի քեզ . ով խնդրէ զքեզ սպանանել :
21 * Պատասխանի ետ նց Յս՝ եւ ասէ, գործ մի գործեցի,
22 եւ ամենեքին զարմացեալ էք : * վասն այնորիկ մովսէս
ետ ձեզ թլփատութիւն . զի ոչ եթէ'ի մովսիսէ էր, այլ
'ի հարց անտի . եւ'ի շաբաթու թլփատէք զմարդ :
23 * Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն առնու մարդ'ի շաբա-
թու, զի մի օրէնքն մովսիսի լուծցին . ընդ իս ցասու-
ցեալ էք՝ զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի'ի շաբաթու :
24 * Մի ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արա- ե բ
25 րէք : * Ասէին ոմանք յԵրուսաղեմացւոց անտի . ոչ նա է սա՝
26 զոր խնդրէին սպանանել . * եւ ահաւասիկ՝ յայտնապէս
խօսի, եւ չասեն ինչ ընդ դմա . գուցէ արդեւք եւ իշ-
27 խանքն գիտացին՝ թէ սա իցէ քն : * Այլ՝ զսա գի-
տեմք ուստի է . իսկ քն յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ
28 ուստի է : * Աղաղակեաց Յս'ի տաճարին, ուսուցա-
նէր՝ եւ ասէր : Եւ զիս գիտէք, եւ ուստի եմ գիտէք .
եւ յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ ա-
ռաք

քեն'ի գա'' : (10) Ոմանք . Եւ իբրեւ ելին եղբարքն . ապա : (11) Ոմանք . 'ի տօնին ՚ եւ ասէին, ուր իցէ սա . (12) Ոմանք . Այլքն ասէին . . զժողովուրդսն : (18) Ոմանք . Անձին իւրոյ խնդրէ : (20) Ոմանք . Ո՞ խնդրէ զքեզ : (25) Ոմանք . Յերուսաղեմացւոցն . ոչ նա . . . զոր խնդրէին : (26) Ոմանք . Եւ չասեն ինչ Է նմա : (26) Ոմանք . Եթէ սա է քն : (27) Ոմանք . Ոչ ոք գիտէ ուստի իցէ : (28) Ոմանք . Եւ ուստի եմ գի'' . . իմմէ չեմ եկեալ :

Digitized by Google

առաքեացն զիս. զոր դուքն ոչ գիտէք: * Ես գիտեմ 29
զնա. զի 'ի նմանէ իսկ եմ, եւ նա առաքեաց զիս:
ԺԹ * Խնդրէին զնա ունել, եւ ել 'ի ձեռաց նց. եւ ոչ ոք 30
արկ 'ի նա ձեռն, զի չեւ էր հասեալ ժամ նորա: * Եւ 31
բազումք 'ի ժողովրդենէն հաւատացին 'ի նա, եւ ա-
սէին. Քն յորժամ գայցէ՝ միթէ՝ աւելի՞ ինչ նշանս առ-
նիցէ՝ քան զոր սայս առնէ: * Եւ լուան փարիսեցիքն 32
զտրտունջ ժողովրդեանն զնմանէ: եւ առաքեցին քահա-
նայապետքն եւ փարիսեցիքն սպասաւորս՝ զի կալցին
զնա: * Ասէ Յս. փոքր մի եւս ժամանակ ընդ ձեզ 33
եմ. եւ երթամ առ այն՝ որ առաքեացն զիս: * Խնդրես- 34
ջիք զիս՝ եւ ոչ գտանիցէք. եւ ուր եսն երթամ՝ դուք
ոչ կարէք գալ: * Ասեն հրեայքն ընդ միմեանս. իսկ 35
ուր երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ
'ի սփիւռս հեթանոսաց երթիցէ՝ եւ ուսուցանիցէ՝ զհե-
թանոսս: * Զի՞նչ է բանն այն զոր ասաց. խնդրես- 36
ջիք զիս՝ եւ ոչ գտանիցէք. եւ ուր եսն երթամ, դուք
Ե Գ ոչ կարիցէք գալ: * 'Ի վերջնում աւուր մեծի տօնին, 37
կայր Յս՝ աղաղակէր եւ ասէր. եթէ ոք ծարաւի իցէ,
եկեսցէ առ իս՝ եւ արբցէ: * Որ հաւատայ յիս՝ որպէս եւ 38
ասեն գիրք, գետք յորովայնէ նր բղխեսցեն ջրոյ կեն-
դանութեան: * Զայս ասէր՝ վասն Հոգւոյն զոր ընդու- 39
նելոց էին որ հաւատային 'ի նա. զի չեւ էր Հոգի, քան-
զի Յս չեւ էր փառաւորեալ: * Ոմանք 'ի ժողովրդե- 40
նէն իբրեւ լուեին զբանս զայս, ասէին. սա է ճշմարիտ
մարգարէն: * Այլքն ասէին՝ սա է Քն: իսկ կէսքն 41
ասէին՝ միթէ 'ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քն: * Ոչ գիրք 42
ասեն՝ եթէ 'ի զաւակէ Դաւթի, եւ 'ի Բեթղեհէմ գեղ-
ջէ՝ ուր Դաւիթն էր, գալո՞ց է Քս: * Եւ եղեւ հեր- 43
ձուած 'ի մէջ ժողովրդեանն վասն նր: * Եւ ոմանք 44
'ի նոցանէ կամէին ունել զնա. այլ ոչ ոք մեկեաց 'ի
նա ձեռն: * Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քա- 45
հանայապետսն եւ փարիսեցիս. եւ ասեն նոքա ցնս. ըն-
դէ՞ր ոչ ածէք զնա այսր: * Պատասխանի տուեալ սպա- 46
սաւ-

---

(30) Ոմանք. Արկ 'ի նա ձեռս: (31) Ոմանք. Քան զորս
այս արար: (32) Ոմանք. Եւ առաքեն քահան": (33) Ո-
մանք. Փոքր մի եւս ժա": (34) Ոմանք. Խնդրէք զիս՝ եւ
ոչ. . եւ ուր եսն եմ, դուք ոչ: (35) Ոմանք. Ասէին
հրեայքն . . . 'ի սփիւռս հեթանոսաց երթայցէ: (36) Ո-
մանք. Խնդրիցէք զիս . . դուք ոչ կարէք գալ: (38) Ո-
մանք. Որպ ասեն . . . բղխեսցեն ջր": (39) Ոմանք. Վս զի
Յս չեւ էր փա": (43) Ոմանք. 'ի ժողովրդեանն վս նր:
(44) Ոմանք. Ո՛չ ոք արկ 'ի նա ձեռս: (45) Ոմանք. Եւ առ
փարիսեցիս": (46) Ոմանք, Ոչ երբէք այնպէս խօսեցաւ:

Digitized by Google

սպասաւորքն՝ և ասեն. ո՛չ երբէք խօսեցաւ մարդ, որպէս այրն
47 այն։ * Պատասխանի ետուն փարիսեցիքն՝ և ասեն.
48 միթէ՝ և դուք մոլորեցարո՞ւք։ * միթէ ոք յիշխանացն
49 հաւատաց՛ ի նա՝ կամ ՛ի փարիսեցւոցն. * այլ այն խա-
ժամուժ ամբոխ՝ որ ո՛չ գիտէ զօրէնս, և նզովեա՛լք են։
50 * Ասէ Նիկոդեմոս ցնո՛՝ որ եկեալն էր առ նա ՛ի գի-
51 շերին յառաջագոյն՝ և մի էր ՛ի նոցանէ։ * միթէ օրէն-
քըն մեր՝ դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ լուեն ինչ նախ ՛ի
52 նմանէ, կա՛մ գիտեն զինչ գործէ։ * Պատասխանի ետուն
նմա և ասեն. միթէ՝ և դու ես ՛ի Գալիլեէ՞ իցես.
քննեա՛ և տե՛ս, զի մարգարէ ՛ի Գալիլեէ ո՛չ յառնէ։

ԳԼ. Ը.

12 Դարձեալ խօսեցաւ Յիսուս՝ և ասէ. Ես եմ լոյս Ե գ.
աշխարհի. որ գայ զհետ իմ՝ ընդ խաւար մի՛ գը-
13 նասցէ. այլ ընկալցի զլոյսն կենաց։ * Ասեն ցնա փա-
րիսեցիքն. դու վասն անձին քո վկայես, և վկայու-
14 թիւն քո չէ՛ ճշմարիտ։ * Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնո.
թէպէտ և ես վկայեմ վասն անձին իմոյ՝ վկայութիւն իմ
ճշմարիտ է. զի գիտեմ ուստի եկի՝ և յո՛ երթամ. բայց
15 դուք ո՛չ գիտէք ուստի գամ՝ կամ յո՛ երթամ։ * Դուք
16 ըստ մարմնոյ դատիք. ես ո՛չ դատիմ և ո՛չ զոք։ * Թէ-
պէտ և դատիմ ես զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ է.
17 զի չե՛մ միայն, այլ ես՝ և որ առաքեացն զիս Հայր։ * Եւ
յօ-

---

(48) Ոմանք. Յիշխանացն ոք հաւատա՞ց։ (49) Յոմանս այսպէս. Այլ խաժամուժ ամբոխ։ և ոմանք փոխեն գրեն՝ խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտեն։ (50) Ոմանք. Առ նա գիշերին յառաջ։ (51) Ոմանք. Նախ ինչ ՛ի նմանէ։ (52) Ոմանք. Եւ դու ես գալիլեացի իցես։

*՛Ի յիշեալ գրչագիր օրինակաց մերոց՝ իբր հինգ միայն նորա-
գոյնք՝ ասացեն յետ 52. համարոյ՝ ըստ լատինականին յաւելեալ
համար 53. * Գնացին իւրաքանչիւր"՝ [illegible]
[illegible] շնացելոյ կնոջն։ Իսկ [illegible]
[illegible] օրինակին՝ ՛ի [illegible]
գէն, որպէս և մեք եդաք։ Բայց ՛ի միւսում հնագոյն օրինակաց՝ որք
առաւել և անուղղակի գտանին, որպէս և գրչագիր հա-
լոյք ՛ի յետին անդ գիտնոց տեղադրութեանց ուղղեալ ընդ հինգ
երորդ պրակին յայս բան առաքինեն՝ ՛ի Գալիլեէ ոչ յառնէ.
և նոյնպէս զեղջն, ուղղեալ տեղեկին ձևանդին՝ Դարձեալ
խօսեցաւ յս։ Որք նոյնպէս հաւաքեցին պատգրանին՝ նորոն
առաքեալ յունականաց նմոյն յայսն ընթերցուած։

Գլ. Ը. (13) Ոմանք. Ոչ է ճշմարիտ։ (14) Ոմանք. Եւ ես վկայեմ վս իմ, վկ"... ոչ գիտէք ուստի եկի, և յո՛։ (15) Ոմանք. Ես ոչ ըստ մարմնոյ դատիմ և ոչ զոք։

Digitized by Google

յօրէնսն իսկ ձեր գրեալ է, թէ երկուց մարդկանց վը-
կայութիւն ճշմարիտ է: * Ես եմ որ վկայեմ վասն իմ. 18
և վկայէ վասն իմ որ առաքեացն զիս Հայր: * Ասէին 19
ցնա. ո՞ւր է Հայր քո: պատասխանի ետ Յս՝ և ասէ ցնս.
ոչ զիս գիտէք՝ և ոչ զՀայրն իմ. եթէ զիս գիտէիք՝ և
զՀայրն իմ թերևս գիտէիք: * Զայս բանս խօսեցաւ 20
Յս ընդ նոսա 'ի տան գանձին, յորժամ ուսուցանէր 'ի
տաճարին անդ. և ոչ ոք կալաւ զնա, զի չև ևս հասեալ
ե ե էր ժամն նր: * Ասէ դարձեալ ցնս Յս. ես երթամ, 21
և խնդրեսջիք զիս. և 'ի մեղս ձեր մեռանիջիք. զի ուր
ես երթամ, դուք ոչ կարէք գալ: * Ասէին Հրեայքն. 22
միթէ՝ զիւրովին երթայցէ, զի ասէ՝ թէ ուր ես եր-
թամ դուք ոչ կարէք գալ: * Եւ ասէ ցնս. դուք՝ 'ի 23
ներքուստ աստի էք, և ես՝ 'ի վերուստ անտի եմ. դուք՝
յաշխարհէս աստի էք, ես՝ չեմ յայսմ աշխարհէ: * Ասացի 24
ասացի ձեզ՝ թէ 'ի մեղս ձեր մեռանիջիք: զի եթէ ոչ
հաւատայցէք թէ ես եմ, մեռանիջիք 'ի մեղս ձեր:
* Ասէին ցնա. դու ո՞վ ես: ասէ ցնս Յս. նախ՝ զի և 25
խօսիմս իսկ ընդ ձեզ: * բազում ինչ ունիմ վս ձեր խօ- 26
սել և դատել. այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է:
և ես զոր լուայն 'ի նմանէ՝ զայն խօսիմ յաշխարհի:
* Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր ցնս: * Ասէ ցնս 27
Յս. յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայն- 28
ժամ գիտասջիք՝ թէ ես եմ. և յանձնէ իմմէ ինչ ոչ
առնեմ, այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ:
* Եւ որ առաքեացն զիս՝ ը իս է. ոչ եթող զիս միայն, 29
զի ես զհաճոյս նր առնեմ հանապազ: * Իբրև զայս 30
ե զ խօսեցաւ, բազումք հաւատացին 'ի նա: * Եւ ասէր 31
Յս առ Հրեայսն հաւատացեալս. եթէ դուք կայցէք
'ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. * և ծա- 32
նիջիք զճշմարտութիւն, և ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ:
* Պատասխանի ետուն նմա՝ և ասեն. զաւակ Աբրա- 33
համու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք. զիարդ
ասես եթէ ազատք լինիջիք: * Պատասխանի ետ նոցա Յս. 34
ամ

(19) Ոմանք. Ասէին ցնա. ուր է ... ոչ զիս գիտէք, և զՀայրն թերևս գիտէիք: (20) 'Ի բազում օրինակս. խօսեցաւ Յս ընդ նոսա 'ի տան գանձին": (20) Օրինակ մի. 'ի տան գանձանակին: (21) Ոմանք. Մեռանիցիք: (22) Ոմանք. Ասէին Հրեայքն: (23) Ոմանք. Եւ ես չեմ յաշխարհէս: (24) Ոմանք. Ձեր մեռանիջիք ... մեռանիջիք 'ի մեղս ձեր: (25) Ոմանք. Դու ո՞ ես: (26) Օրինակ մի. Զայն խօսիմ յաշխարհէս: (28) Ոմանք. Ինչ ոչ խօսիմ. այլ: (31) Ոմանք. 'Ի բանին իմում: (33) Ոմանք. Պատասխանի ետուն նմա Հրեայքն և ասեն ... թէ ազատ լինիցիք:

Digitized by Google

ամէն ամէն ասեմ ձեզ. թէ ամ՛ որ առնէ զմեղս՝ ծա-
35 ռայ է մեղաց: *Եւ ծառայն՝ ոչ յաւիտեան կայ 'ի տան,
36 բայց որդին 'ի յաւիտեան կայ: *Իսկ արդ՝ եթէ որ-
դին զձեզ ազատեսցուցէ, ճշմարիտ ազատք լինիջիք:
37 *Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք. այլ խնդրէք
38 սպանանել զիս. զի բանն իմ ոչ մտանէ 'ի ձեզ: *Ես՝
զոր տեսի առ հօր իմում՝ խօսիմ. և դուք՝ զոր լուայք
39 'ի հօրէն ձերմէ՝ առնէք: *Պատասխանի ետուն նմա՝
և ասեն. հայր մեր՝ Աբրահամ է: Ասէ ցնոսա յս. եթէ
որդիք Աբրահամու էիք՝ զգործս Աբրահամու գոր-
40 ծէիք: *Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս. զայր
մի որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ 'ի հօ-
41 րէ իմմէ. զայդ՝ Աբրահամ ոչ արար: *Դուք առնէք
զգործս հօրն ձերոյ: Ասեն ցնա. մեք 'ի պոռնկութենէ
42 չեմք ծնեալ. մի է հայր մեր, այ: *Ասէ ցնոսա յս. ե-
թէ այ էր հայր ձեր, սիրէիք արդեւք զիս, զի ես յայ
ելի՝ և եկի. և ոչ եթէ յանձնէ իմնէ եկի, այլ նա ա-
43 ռաքեաց զիս: *Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վն
44 զի ոչ կարէք լսել զբանն իմ: *Դուք՝ 'ի հօրէ 'ի սա-
տանայէ էք, և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել.
զի նա մարդասպան էր ի սկզբանէ, և 'ի ճշմարտութեան
ոչ եկաց. զի ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա. յորժամ խօսի-
ցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր նր:
45 *Իսկ ես՝ զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ:
46 *Ո՞վ 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց. ե-
47 թէ զճշմարիտն ասեմ, ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ: *Որ
էն յայ, զբանս այ լսէ. և դուք վն այնորիկ ոչ լսէք,
48 զի չէք յայ: *Պատասխանի ետուն հրեայքն՝ և ասեն
ցնա. ոչ բարւոք ասեմք մեք՝ եթէ սամարացի ես դու,
49 և դև գոյ 'ի քեզ: *Պատասխանի ետ յս՝ և ասէ. յիս
դև ոչ գոյ. այլ պատուեմ զհայր իմ, և դուք՝ անար-
գէք

(35) Ոմանք. Որդին յաւիտեան կայ 'ի տանն: (37) Ոմանք. Զի բանին իմում չէք: (38) Ոմանք. Ա.ա՛ 'ի հօր իմում.. առ 'ի հօրէն ձերմէ: (38) Բ.Ղ.Գ. Զոր լուարուք 'ի հօրէն: (40) Ոմանք. Այլ այժմ խնդրէք: (40) Յունականն ունի. Սպանանել զիս՝ զայր մի: (43) Ոմանք. Վն զի ոչ կամէք լսել: (44) Ոմանք. 'Ի հօրէ սատանայէ էք, և ցանկութեան... և 'ի ճշմարտութեան ոչ եկաց... զի յորժամ խօսեսցի սուտ.. հայրն նր: (45) Ոմանք. Ես զճշմարտութիւն խօսիմ: (46) 'Ի լուս՛՛. Ո՞ 'ի ձէնջ յանդիմանէ զիս վն. համաձայն բաղդատ 'ի բնաբ'': (46) Ոմանք. Եթէ զճշմարտութիւն ասեմ ձեզ՝ ընդէր ոչ: (47) Յօրինակին ունէր. Եւ դուք: (48) Յօրինակին ունէր. Ասեմք մեք՝ եթէ: (49) Օրինակ մի. Եւ դուք անարգէք զինա:

Digitized by Google

դնէք զիս: * Ես՝ ոչ խնդրեմ զփառս իմ. է որ խնդրէն՝ 50
և դատի: * Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ 51
պահեսցէ, զմահ մի տեսցէ 'ի յաւիտեան: * Ասեն ցնա 52
հրեայքն. արդ՝ գիտացաք թէ՝ դեւ գոյ 'ի քեզ. աբ֊
րահամ մեռաւ և մարգարէքն, և դու ասես՝ եթէ ոք
զբանն իմ պահեսցէ, մի ճաշակեսցէ զմահ 'ի յաւիտեան:
* Միթէ՝ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր աբ֊ 53
րահամ որ մեռաւ, և մարգարէքն մեռան. արդ՝ դու
զո՞վ առնես զքեզ: * Պատասխանի ետ յս̅. եթէ ես փա֊ 54
ռաւորեմ զանձն իմ, փառքն իմ՝ ոչինչ են. է հայր որ
փառաւորէ զիս, զորմէ դուքն ասէք՝ թէ ա̅ծ մեր է.
* և ոչ ծանաչէք զնա: Բայց ես գիտեմ զնա: և թէ 55
ասեմ, թէ ոչ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ
գիտեմ զնա, և զբան նր̅ պահեմ: * Աբրահամ հայր 56
ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, ետես՝ և ուրախ ե֊
ղև: * Ասեն ցնա հրեայքն. յիսուն ամ չեւս է քո, և 57
զաբրահամ տեսեր: * Ասէ ցն̅ս յս̅. ամէն ամէն ասեմ 58
ձեզ. յառաջ քան զլինելն աբրահամու եմ ես: * Վէմս 59
առին հրեայքն, զի արկցեն 'ի վերայ նր̅. և յս̅ ծածկե֊
ցաւ՝ և ել գնաց 'ի տաճարէ անտի:

Գլ. Թ.

Ի / ԵԷ Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր 'ի ծնէ. 1
* և հարցին ցնա աշակերտքն նր̅՝ և ասեն. ռաբ֊ 2
բի՝ ո՞յր մեղաւ է, սորա՞՝ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր
ծնաւ: * Պատասխանի ետ յս̅. ոչ դորա մեղաւ է, և 3
ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքն ա̅յ
'ի դմա: * Ինձ պարտ է՝ գործել զգործս այնորիկ 4
որ առաքեացն զիս՝ մինչ ատուր կայ. գայ գիշեր՝ յոր֊
ժամ ոչոք կարէ գործել: * մինչ դեռ յաշխարհի եմ, 5
լոյս եմ աշխարհի: * Զայս իբրև ասաց, եթուք 'ի գե֊ 6
տին՝ և արար կաւ 'ի թքոյն, և ծեփեաց զկաւն 'ի վր̅
աչաց կուրին. * և ասէ ցնա. Երթ լուա յաւազանին 7
սիղովամայ. որ թարգմանի առաքեալ. չոգաւ լուացաւ,
եկն

---

(51) Ոմանք. Զի որ զբանն իմ պա՛՛.. մի տեսցէ յաւի֊
տեան: (52) Ոմանք. Զմահ մի ճաշակեսցէ յաւիտեան:
(53) Յօրինակին գրեալ. Աբրհ. դու: (53) Ոմանք. Զո՞ առ֊
նես զքեզ: (55) Ոմանք. Եւ եթէ ասեմ.. զբանն նր̅:
(57) Ոմանք. Ամ չէ է քո: Ուր օրինակ մի. Չև ես է լցեալ
քո, և զաբրա՛՛: (58) Ոմանք. Զլինել աբրահա՛՛: (59) 'Ի
բազում գրչի. Վէմս առին հրէայքն զի:
Գլ. Թ. (2) Բազմ. Զի կոյր ծնցի: (3) Ոմանք. Յայտնի
լինիցին: (4) Ոսկան. Մինչ օր կայ: (4) Ոմանք. Յորում
ոչ ոք կարէ գոր՛՛: (7) Ոմանք. Յաւազանին սիղովմայ:

Digitized by Google

8 եկն և տեսանէր։ * Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալն
էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին. ո՞չ
սա էր որ նստէրն և մուրանայր։ Կէսքն ասէին. նա է։
9 * այլքն ասէին՝ ոչ. այլ նման է նմա։ և ինքն ասէր՝
10 թէ ես եմ։ * Ասեն ցնա. իսկ զիարդ բացան աչքդ։
11 * Նա՝ ետ պատասխանի. այր մի որում Յսն ասեն,
կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. երթ ՚ի
12 Սիլովամ՝ և լուա. չոգայ լուացայ՝ և տեսանեմ։ * Ա-
13 սեն ցնա. ո՞ւր է նա։ ասէ ցնս. ոչ գիտեմ։ * Ածին,
14 առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր։ * և էր
շաբաթ՝ յորժամ զկաւն արար յս. և եբաց զաչս կու-
15 րին։ * Դարձեալ հարցանէին զնա և փարիսեցիքն,
թէ զիարդ տեսանես։ և նա՝ ասէ ցնս. կաւ եդ ՚ի վր
16 աչաց իմոց, և լուացայ՝ և տեսանեմ։ * Ասեն ոմանք
՚ի փարիսեցւոցն. ոչ է այրն այն յյ, զի զշաբաթս ոչ
պահէ։ կէսքն ասէին, իսկ զիարդ կարէ մարդ մեղա-
ւոր՝ այսպիսի նշանս առնել։ և էին հերձուածք ՚ի
17 մէջ նց։ * ասեն դարձեալ ցկոյրն. դու զի՞ ասես վն նր՝
18 զի եբաց զաչս քո։ և նա ասէ՝ թէ մարգարէ է։ * Եւ
ոչ հաւատային հրէայքն զնմանէ՝ թէ կոյր էր՝ և բա-
19 ցաւ, մինչև կոչեցին զծնօղս բացելոյն. * հարցին ցնս
և ասեն, սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք եթէ
20 կոյր ծնաւ. արդ՝ զիարդ տեսանէ։ * Պատասխանի ե-
տուն ծնօղքն նորա՝ և ասեն. գիտեմք զի սա է որդին
21 մեր, և զի կոյր ծնաւ. * բայց զիարդ այժմդ տեսա-
նէ, ոչ գիտեմք. կամ թէ՝ ո՞վ եբաց զաչս դորա, մեք
ոչ գիտեմք. ցդա՛ իսկ հարցէք, ինքնին ՚ի չափ հասեալ
22 է. ինքն իսկ խօսեսցի վն իւր։ * Զայս ասացին ծնօղ-
քն նր, զի երկնչէին ՚ի հրէիցն. քանզի ուխտ եդեալ
էր հրէից, եթէ ոք խոստովանեսցէ զնա քս՝ ՚ի բաց
23 կացցէ ՚ի ժողովրդենէն։ * Վն այնորիկ ասացին ծնօղ-
քն նր, թէ ինքնին ՚ի չափ հասեալ է՝ ցնա՛ իսկ հար-
24 ցէք։ * Դարձեալ երկիցս անգամ կոչեցին զայրն որ
կոյրն էր, և ասեն ցնա. տո՛ւր փառս այ, մեք գիտեմք
25 զի այրն այն մեղաւոր է։ * Եւ նա՝ ասէ. թէ մեղա-
ւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր
26 էի՝ և արդ տեսանեմ։ * Դարձեալ՝ ասեն ցնա. զի՞նչ
27 արար քեզ. զիարդ եբաց զաչս քո։ * Պատասխանի
ետ

---

(8) Ոմանք. Ոչ սա է որ նս"։ և ոմանք. Ոչ սա էր նա որ։
(11) Ոմանք. Յսն ասէին։ (15) Ոմանք. Հարցանէին ցնա փարիսեցիքն։ (18) Ոմանք. Եւ ոչ հաւատացին հր"։
(20) Ոմանք. Պխնի ետուն նց ծն"։ (21) Ոմանք. Այժմ տեսանէ... ո եբաց զաչս... ինքդ իսկ խօ"։ (22) Ոմանք. Խոստովանեսցի զնա։ (25) Ոմանք. Թէ մեղաւոր է՝ ես։

Digitized by Google

ետ նոցա. այժմ ասացի ձեզ՝ և ոչ լուարուք. զի՞ կամիցիք
միւսանգամ լսել. միթէ՝ և դուք կամիք աշակերտել
նմա: * Նոքա հայհոյեցին զնա՝ և ասեն. դու լեր 28
նորա աշակերտ. մեք՝ Մովսիսի աշակերտք եմք: * Մեք գի- 29
տեմք՝ զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աստուած. զդա՝ ոչ գիտեմք
ուստի է: * Պատասխանի ետ այրն՝ և ասէ ցնոսա. այդ 30
իսկ են զարմանալիք. զի դուք ոչ գիտէք ուստի իցէ,
և զիմ զաչս եբաց: * Գիտեմք զի Աստուած՝ մեղաւորաց ոչ 31
լսէ. բայց թէ Աստուածապաշտ ոք իցէ, և զկամս նորա առնի-
ցէ, նմա լսէ: * Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ ե- 32
բաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ: * Եթէ ոչ յԱստուծոյ 33
էր այրն այն, ոչ կարէր առնել ինչ: * Պատասխանի 34
ետուն՝ և ասեն ցնա. ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին,
և դու վարդապետես զմեզ: և հանին զնա արտաքս:
* Լուաւ Յիսուս եթէ հանին զնա արտաքս, և իբրև ե- 35
գիտ զնա՝ ասէ ցնա. դու՝ հաւատաս յորդին Աստուծոյ: * Նա 36
պատասխանի ետ՝ և ասէ. Տէր ո՞վ է՝ զի հաւատացից
ի նա: * Ասէ ցնա Յիսուս. և տեսեր զնա, և որ խօսիդ 37
ընդ քեզ՝ նա է: * Եւ նա ասէ. հաւատամ Տէր: և եր- 38
կիր եպագ նմա: * Եւ ասէ Յիսուս. ի դատաստան ե- 39
կի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, և
որք տեսանենն՝ կուրասցին: * Լուան ոմանք ի փարի- 40
սեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն ցնա. միթէ՝ և
մեք կոյրք իցեմք: * Ասէ ցնոսա Յիսուս. եթէ կոյրք էիք՝ 41
ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ թէ տեսանեմք: և
մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են:

Գլ. Ժ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն ի 1
գաւիթ ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ, նա՝ գող
է, և աւազակ: * Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ 2
է ոչխարաց: * Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն 3
ձայնի նորա լսեն. և զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, և
հանէ զնոսա: * Եւ յորժամ զիւրսն զամենայն հանիցէ, 4
առաջի նոցա երթայ, և ոչխարքն զհետ նորա երթան, զի
ճանաչեն զձայն նորա: * Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ 5
փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց:

* Զայս

---

(29) Ոմանք. Ուստի իցէ: (30) Ոմանք. Ուստի է, և զիմ զաչս: (31) Ոմանք. Գիտեմ զի Աստուած.. բայց եթէ: (32) Օրինակ մի ընդ ... ի ծնէ կոյր ծնեցելոյ: (39) Ոմանք. Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ ոչ տեսանենն: (40) Ոմանք. Ի փարիսեցւոցն՝ և որ ընդ նմայն էին: (41) Յօրինակին. Եթէ կոյրք էիք: (41) Ոմանք. Ձեր մեղս:
Գլ. Ժ. (1) Ոմանք. Ընդ դուռնն ի գաւիթ ոչխարաց:

Digitized by Google

6 [illegible]
7 [illegible]
[illegible]
8 [illegible]
9 [illegible]
[illegible]
10 [illegible]
[illegible]
[illegible]
11 [illegible]
12 [illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
14 [illegible]
15 [illegible]
16 [illegible]
[illegible]
[illegible]
17 [illegible]
[illegible]
18 [illegible]
[illegible]
[illegible]
19 [illegible]
20 [illegible]
[illegible]
21 [illegible]
[illegible]
22 [illegible]
23 [illegible]
24 [illegible]
[illegible]
25 [illegible]
[illegible]
26 [illegible]
27 [illegible]
[illegible]

(6) [illegible] (9) [illegible] (16) [illegible] (17) [illegible] (22) [illegible] (25) [illegible] (25) [illegible] (26) [illegible]

իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա. և զկնի
իմ գան. * և ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս. 28
և մի՛ կորիցեն 'ի յաւիտեան. և մի՛ ոք յափշտակեսցէ
զնոսա 'ի ձեռաց իմոց: * Հայրն իմ որ ետ ինձ զնոսա՝ մեծ 29
է քան զամ, և ոչ ոք կարէ յափշտակել 'ի ձեռաց Հօր
իմոյ: * Ես և Հայր իմ մի եմք: * Վերստին առին հրեայքն՝ 30
զի քարկոծ արասցեն զնա: * Պատասխանի ետ նոցա յս. 31
բազում գործս բարիս ցուցի ձեզ 'ի Հօրէ իմմէ. վասն որոյ 32
գործոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք զիս: * Պատասխա- 33
նի ետուն նմա հրեայքն. վասն բարւոյ գործոյ ոչ առ-
նեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. և զի դու
մարդ ես, և զանձն քո Ած առնես: * Պատասխանի 34
ետ նոցա յս. ոչ յօրէնսն ձեր գրեալ է. ես ասացի թէ
աստուածք իցէք: * Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ, 35
առ որս բանն Այ եղև. և ոչ է մարթ եղծանել զգրոյն.
* Իսկ զոր Հայր սրբեաց՝ և առաքեաց յաշխարհ, դուք 36
ասէք՝ թէ հայհոյես. զի ասացի՝ թէ որդի Այ եմ:
* Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք 37
ինձ: * Ապա թէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւատայք, 38
սակայն գործոցն հաւատայցէք. զի գիտասջիք և ծա-
նիջիք՝ եթէ Հայր յիս, և ես 'ի Հայր: * Դարձեալ 39
խնդրէին զնա ունել, և ել 'ի ձեռաց նոցա: * Եւ գնաց 40
միւսանգամ յայն կոյս յորդանանու, 'ի տեղին ուր էր
յովհաննէս զառաջինն՝ և մնայր. և անդ լինէր: * Եւ 41
եկին բազումք առ նա՝ և ասէին. զի յովհաննէս նշան ինչ
ոչ արար: * Բայց զամ զոր ասաց յովհաննէս վսն նր՝ 42
ճշմարիտ էր. և բազումք հաւատացին 'ի նա անդ:

ԳԼ. ԺԱ.

ԻԳ ՀԴ Եւ էր ոմն հիւանդ ղազարոս 'ի բեթանիայ, 'ի գեղ- 1
ջէ մարեմայ և մարթայի քեռ նր: * Այս այն մա- 2
րիամ էր որ օծ զՏրն իւղով, և ջնջեաց զոտս նր հե-
րով իւրով. որոյ եղբայրն ղազարոս հիւանդ էր: * Ա- 3
ռաքեցին առ նա քորքն նր՝ և ասեն. Տր՝ ահաւասիկ
զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է: * Իբրև լուա- 4
յս, ասէ. այն հիւանդութիւն չէ 'ի մահ, այլ վսն փա-
ռացն

---

(28) Օրինակ մի. Եւ մի 'ի նոցանէ ոչ կորիցեն յաւի-
տեան: (32) Ոմանք. Նոցա յս՝ և ասէ. բազում: (33) Ոմանք.
Հրեայքն և ասեն: (35) Ոմանք. Եթէ զնոսա աստուածս
անուանէ, առ որս: (36) Ոմանք. Եւ առաքեաց յաշ-
խարհս.. Այ որդի եմ: (38) Բազումք. Սակայն գործոցն
հաւատացէք. զի: (41) Ոմանք. Նշանս ինչ ոչ արար՝:
(42) Ոմանք. Վսն սորա՝ ճշմարիտ էր:
Գլ. ժա. (4) Ոմանք. Զի փառաւորեսցի որդի:

Digitized by Google

5 առաջին նորա. զի փառաւորեսցի որդի այ՟ նովաւ ։ * Եւ
սիրէր յս՟ զմարիամ, և զմարթա զքոյր նր՟, և զղազար ։
6 * Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ
7 անդէն ուր էրն՝ աւուրս երկուս ։ * Ապա յետ այ-
նորիկ ասէ ցնս՟. եկայք երթիցուք միւսանգամ 'ի Հրէ-
8 աստան ։ * Ասեն ցնա աշակերտքն. ռաբբի, այժմ եւս
խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել, և դարձեալ
9 երթաս անդրէն ։ * Պատասխանի ետ յս՟. ոչ երկո-
տասան ժամ է յաւուր. եթէ ոք գնայ 'ի տուընջեան՝
ոչ գայթագղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ.
10 * ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայթագղի, զի լոյս ոչ
11 գոյ ընդ նմա ։ * Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ա-
սէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ եր-
12 թամ զի զարթուցից զնա ։ * Ասեն ցնա աշակերտքն.
13 տր՟ եթէ ննջեաց՝ ապա առողջի ։ * Այլ յս՟ վասն մա-
հուն նր՟ ասէր. նք՟ այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջե-
14 լոյ քնոյ ասէր ։ * Յայնժամ ասէ ցնս՟ յս՟ յայտնապէս.
15 Ղազարոս մեռաւ, * և ես ուրախ եմ վս՟ ձեր, զի դուք
հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկայք
16 երթիցուք առ նա ։ * Ասէ թովմաս՝ որ անուանեալն եր-
կուորեակ՝ ցաշակերտակիցսն. ածն եկայք և մեք՝ զի
17 ընդ նմա մեռցուք ։ * Եկն յս՟ եգիտ զնա չորեքօրեայ
18 'ի գերեզմանի ։ * Եւ էր բեթանիա մերձ յեմ՟. իբ-
19 րև ասպարիսաւք հնգետասան ։ * Բազումք 'ի Հրէից
անտի եկեալ էին առ մարթա և մարիամ, զի մխի-
20 թարեսցեն զնոսա վս՟ եղբօրն ։ * Մարթա իբրև լու-
աւ՝ թէ յս՟ գայ, ընդ առաջ գնաց նր՟. բայց մարիամ
21 նստէր անդէն 'ի տան ։ * Ասէ մարթա ցյս՟. տր՟՝ ե-
22 թէ աստ լինեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. * այլ
և արդ գիտեմ, թէ զոր ինչ խնդրեսցես յայ՟՝ տացէ
23 քեզ այ՟ ։ * Ասէ ցնա յս՟. յարիցէ եղբայրն քո ։ * Ա-
24 սէ ցնա մարթա. գիտեմ զի յարիցէ 'ի յարութեան՝ յա-
25 ւուրն յետնում ։ * Ասէ ցնա յս՟. ես եմ յարութիւն և
կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ.
26 * և ամենայն որ կենդանի է՝ և հաւատայ յիս, մի մեռ-
27 ցի 'ի յաւիտեանս. հաւատաս այսմիկ ։ * Ասէ ցնա. այո
տր՟. ես հաւատացի՝ եթէ դու ես քս՟ որդին այ՟, որ
յաշ-

---

(5) Ոմանք. Եւ սիրէր յս՟ զմարթա, և զքոյր նր՟ զմա-
րիամ, և զղազար ։ (9) Ոմանք. ժամ է աւուր ։ (10) Ո-
մանք. Գնայ 'ի գիշերի ։ (12) Ոմանք. Աշակերտքն նորա.
տր՟ ։ (13) Ոմանք. Վասն ննջելոյ քնոյն ասէ ։ (17) Ո-
մանք. Եկն յս՟ և եգիտ զնա ։ (20) Ոմանք. Եթէ յս՟ գայ..
անդրէն 'ի տան ։ (22) Ոմանք. Եթէ զոր ինչ և խնդրես" ։
(25) Բ՟ոմ՟. Ես իսկ եմ յար" ։ (27) Ոմանք. Ես հաւատամ ։

[illegible] 28
[illegible]
[illegible] 29
[illegible] 30
[illegible]
[illegible] 31
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 32
[illegible]
[illegible]
[illegible] 33
[illegible]
[illegible] 34
[illegible] 35
[illegible] 36
[illegible] 37
[illegible] 38
[illegible]
[illegible] 39
[illegible]
[illegible]
[illegible] 40
[illegible] 41
[illegible]
[illegible] 42
[illegible]
[illegible] 43
[illegible]
[illegible] 44
[illegible]
[illegible]
[illegible] 45
[illegible]
[illegible] 46
ԻԴ [illegible] 47
[illegible]

---

(28) [illegible] (29) [illegible] (30) [illegible] (31) [illegible] (33) [illegible] (36) [illegible] (37) [illegible] (41) [illegible] (46) [illegible] (47) [illegible]

Digitized by Google

48 տարակուսեալք զի այրն այն բազում նշանս առնէ : * Եթէ թո-
ղումք զնա այսպէս, ամենեքին հաւատան 'ի նա. և
գայցեն Հոռոմք՝ և բարձցեն զտեղի մեր և զազգս.
49 * Մի ոմն 'ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայա-
պետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնա. դուք՝ ոչինչ
50 գիտէք, * և ոչ բնաւ խորհիք իսկ, թէ լաւ է մեզ,
զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանն, և մի ամ-
51 բողջ ազգս կորիցէ : * Զայս՝ ոչ յանձնէ իւրմէ ասաց. այլ
քանզի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մար-
գարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յս 'ի վերայ ազգին.
52 * և ոչ 'ի վերայ ազգին միայն, այլ զի և զորդիսն Այ
53 զցրուեալսն ժողովեսցէ 'ի մի : * Այնուհետև յայնմ օրէ խորհ-
54 հուրդ արարին՝ զի սպանցեն զնա : * Եւ Յս այնու-
հետև ոչ եւս համարձակ շրջէր 'ի մէջ Հրէիցն. այլ
գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանապատ, 'ի քա-
ղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ, և անդ լինէր աշ-
55 խակերտօքն հանդերձ : * Եւ էր մերձ զատիկն Հրէից ։ ելե
և բազումք ելին յԵմ 'ի գաւառէ անտի յառաջագոյն քան
56 զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց : * Խնդ-
րէին զՅս, և ասէին ընդ միմեանս մինչ կային 'ի տա-
ճարին. զիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ 'ի տօն աստ.
Պատուէր տուեալ էր քահանայապետիցն և փարիսեց-
ւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է, գուշակեսցէ
զնմանէ, զի կալցեն զնա :

ԳԼ. ԺԲ.

1 Իսկ Յս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն 'ի
Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյց
2 'ի մեռելոց : * Եւ արարին անդ նմա ընթրիս. և 'ի սպաս-
ու կայր Մարթա, և Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ նմա :
3 * Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազ- ԻԴ
նուի մեծագնոյ, օծ զոտսն Յի, և հերօքն իւրովք մաք-
րէր զոտս նորա. և տունն լի եղև 'ի հոտոյ իւղոյն :
4 * Ասէ մի ոմն յաշակերտացն նորա՝ Յուդա Իսկարիովտ- ԻԵ
5 ացի, որ մատնելոց էր զնա. * ընդէ՞ր ոչ եւղդ այդ
վաճառեցաւ երեք հարեւր դենարի, և տուաւ աղքա-
6 տաց : * Զայս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր
նմա.

---

(48) Օրինակ մի. Եւ գայցեն Հռոմք և : (50) Ոմանք. Զի
լաւ է մեզ եթէ այր մի : (51) Ոմանք. Այլ զի քահանայապետ
էր... թէ մեռանելոց էր : (56) Յօրինակին գրեր. Գի-
տասցէ թէ ուր է : (56) Ոմանք. Գիտասցէ թէ... գուշա-
կեսցեն զնմանէ. զի կալցեն զնա :
Գլ. ԺԲ. (1) Ոսկան. Վեց աւուրբք : (3) Ոմանք. Մե-
ծագնոյ : (5) Ոմանք. Երեք հարիւր դե" : (6) Ոմանք.

Digitized by Google

նմա. այլ զի գող էր. եւ զարկղն ինքն ունէր, եւ որ
ինչ անկանէրն՝ նա կրէր։ * Ասէ յս̃. Թո՛յլ տուք դմա, 7
զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ։ * Զաղքատս 8
յամ̃ ժամ ընդ ձեզ ունիք. զիս՝ ոչ հանապազ է ձեզ
ունիք։ * Իբրեւ գիտաց ժողովուրդ բզմ̃ 'ի հրէիցն թէ 9
անդ է՝ եկին, ոչ միայն վս̃ յս̃ի, այլ զի եւ զղազար
տեսցեն՝ զոր յարոյց 'ի մեռելոց։ * Խորհեցան ա- 10
ւագ քահանայապետքն՝ զի եւ զղազար սպանցեն.
* քանզի բազումք 'ի հրէից երթային եւ հաւատային 11
ԵԿ 'ի յս̃։ * 'Ի վաղիւ անդր ժողովուրդ բզմ̃ որ եկեալ 12
էր 'ի տօնն, իբրեւ լուան եթէ գայ յս̃ յերուսաղէմ, * ա- 13
ռին ոստս արմաւենեաց՝ եւ ելին ընդառաջ նորա. ա-
ղաղակէին եւ ասէին. ովսաննա օրհնեա՛լ որ գասդ յա-
նուն տն̃՝ թագաւորդ իսրայէլի։
ԻԶ * Եւ գտեալ յս̃ի էշ մի, նստաւ 'ի վերայ նր̃. որպ̃ եւ 14
գրեալ է։ * Մի՛ երկնչիր դուստր սիոնի, ահաւասիկ 15
թագաւոր քո գայ նստեալ 'ի վերայ յաւանակի իշոյ։
* Եւ զայն ինչ՝ ոչ գիտացին աշակերտքն նր̃ զառա- 16
ջինն. այլ յորժամ փառաւորեցաւ յս̃, յայնժամ յի-
շեցին եթէ այն էր որ գրեալն էր վս̃ նր̃. եւ զայն ա-
րարին նմա։ * Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ 17
նմա, եթէ զղազար կոչեաց եւեթ 'ի գերեզմանէն, եւ յա-
րո՛յց զնա 'ի մեռելոց։ * Եւ վս̃ այնորիկ ընդառաջ եղե- 18
նմա ժողովուրդն, զի լուան եթէ զա՛յն նշանս արարեալ
էր նորա։ * Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. 19
տեսանէ՞ք՝ զի ոչինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ա-
մենայն զկնի նորա գնաց։
ԻԷ * Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն անդր, զի 20
երկիր պագանիցեն 'ի տօնին. * Նոքա մատեան առ փի- 21
լիպպոս՝ որ 'ի բեթսայիդայ գալիլեացւոցն էր. աղա-
չէին զնա եւ ասէին. տէր՝ կամիմք զյս̃ տեսանել։ * Գայ 22
փիլիպպոս եւ ասէ ցանդրէաս. անդրէաս եւ փիլիպ-
պոս ասեն ցյս̃։ * Եւ յս̃ պատասխանի ետ նոցա՝ եւ 23
ասէ. եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ։
ԻԸ * Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ ան- 24
ԵԲ կեալ յերկիր մեռանիցի, * ինքն միայն կայ. ապա թէ 25
մե-

Եւ զարկղն ունէր, եւ զոր ինչ անկանէր նա կրէր։ (7) Ոմանք. Թո՛յլ տուր դմա։ (8) Օրինակ մի. Զաղքատս հանապազ է ձեզ. . զիս ոչ յամ̃ ժամ։ (13) Բզ̃մք. Եւ առին ոստս արմաւենեաց։ (15) Ոմանք. Ահաւադիկ թագր քո։ (16) Ոմանք. Թէ այն է որ գրեալն էր։ (19) Ոմանք. Զի ոչ ինչ օգտի. ա"։ (20) Օրինակ մի. Յեկելոցն անդր. զի։ (21) Ոմանք. 'Ի բեթսայիդեայ գալլի"։ (25) Ոմանք. Միայն կեայ. ապա եթէ մե"։ Եւ ոմանք. Ապ եթէ։

Digitized by Google

մեռանիցի, բազում արդիւնս առնէ ։ Որ սիրէ զանձն
իւր՝ կորուսանէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխար-
հիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտենականս պահեսցէ
26 զնա ։ * Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ
ուր եմն ես, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի ։ Եթէ ոք
27 զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ ։ * Բայց է գ
այժմ անձն իմ խռովեա՛լ է ։ եւ զի՞նչ ասացից՝ եթէ Հա՛յր
ապրեցո՛ զիս 'ի ժամանակէ աստի յայսմանէ. այլ վասն
28 այսորիկ եկի 'ի ժամս յայս ։ * Հայր՝ փառաւորեա՛
զորդի քո ։ Ե՛կն բարբառ յերկնից. եւ փառաւորի՛ ա-
29 րարի, եւ դարձեա՛լ փառաւորի՛ արարից ։ * Եւ ժողո-
վուրդն որ կայր եւ լսէր, ասէին՝ որոտումն լինել ։ Կէս-
30 քըն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա ։ * Պատաս-
խանի ետ ՅՍ՝ եւ ասէ. ո՛չ վս իմ ինչ եկն բարբառս այս,
31 այլ վասն ձեր ։ * Այժմիկ դատաստան է աշխարհիս
այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի
32 արտաքս ։ * Եւ ես՝ յորժամ բարձրացայց յերկրէ, զա-
33 մենեսեան ձգեցից առ իս ։ * Զայս ասէր, նշանակեալ
34 թէ որո՛վ մահու մեռանելոց իցէ ։ * Պատասխանի ետ
նմա ժողովուրդն. մեք լուաք յօրինաց՝ եթէ քՍն յա-
ւիտեան կայ, եւ դու զիա՞րդ ասես՝ թէ պա՛րտ է բարձ-
35 րանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է ա՞յն որդին մարդոյ ։ * Ա-
սէ ցնն ՅՍ. փո՛քր մեւս ժամանակ լոյս ընդ ձեզ է.
գնացէ՛ք մինչդեռ զլոյսն ունիք, զի մի խաւար ձեզ
հասցէ. զի որ գնայ 'ի խաւարի, ո՛չ գիտէ յո՛ երթայ ։
36 * Մինչդեռ զլոյսն է ձեզ ունիք՝ հաւատացէ՛ք 'ի լոյսն,
զի որդիք լուսոյ եղիջիք ։ Զայս խօսեցաւ ՅՍ, եւ չո-
37 գաւ՝ թաքեաւ 'ի նոցանէ ։ * Եւ այնչափ նշանս արա-
րեալ էր առաջի նց. եւ նոքա ո՛չ հաւատային 'ի նա.
38 * զի լցցի բանն եսայեայ մարգարէի՝ զոր ասացն. Տէ՛ր՝
ո՛ հաւատաց 'ի լուր մեր, եւ բազուկ տն ու՛մ յայտնե-
39 ցաւ ։ * Վս այսորիկ ո՛չ կարէին հաւատալ. զի միւս-
40 անգամ ասէ եսայի. * Թէ կուրացոյց զաչս նց, եւ
ապշեցոյց զսիրտս նց. զի մի տեսցեն աչօք, եւ իմաս-
41 ցին սրտիւք, եւ դարձցին՝ եւ բժշկեցից զնս ։ * Զայս
ասաց եսայի՝ զի ետես զփառսն նր, եւ խօսեցաւ վս նր ։
* Բայց

(26) Ոմանք. Զիս պաշտեսցէ, զկնի ։ (27) Ոսկան. Զիս 'ի ժամէ աստի յայս". . եկի ես 'ի ժամս յայս ։ (28) Բ՟Ճ. Հայր փառաւորեա՛ զանուն քո ։ (29) Ոմանք. Ասէին որոտումն լինի ։ (30) Օրինակ մ. Վս իմ ինչ եկն բար-բառս ։ (34) Ոմանք. Յաւիտեան կեայ ։ (35) Բ՟Ճ. Փոքր մեւս եւս Ժմկ ։ (37) Ոմանք. Էր արարեալ. . ո՛չ հաւատային 'ի նա ։ (39) Ոսկան. Ոչ կարէին հաւատալ 'ի նա ։ (40) Ո-մանք. Եւ ապշեցոյց ։ (41) Ոսկան. Եսայի՝ յորժամ ետես ։

Digitized by Google

* Բայց սակայն և յիշխանաց անտի բազումք հաւա- 42
տացին ՚ի նա. այլ վն փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի
մի ՚ի ժողովրդենէն եղանիցին: * Քանզի սիրեցին զփա- 43
Եգ փառս մարդկան, առաւել քան զփառս Այ: * Եւ Յս 44
աղաղակէր և ասէր. որ հաւատայ յիս, ոչ հաւատայ
յիս, այլ յայն որ առաքեացն զիս: * Եւ որ տեսանէ 45
զիս, զայն տեսանէ որ առաքեացն զիս:
ԻԹ * Ես լոյս յաշխարհ եկի. զի ամ որ հաւատայ յիս, 46
՚ի խաւարի մի՛ մնասցէ: * Եւ եթէ ոք լուիցէ բանից 47
իմոց՝ և ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ
եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշ-
խարհ: * Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ. 48
գոյ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի
զնա յաւուրն յետնում: * Զի ես յանձնէ իմմէ ոչ 49
խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր, նա ինձ
պատուէր՝ զինչ ասացից և զինչ խօսեցայց: * Եւ գի- 50
տեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք:
Արդ՝ զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, այն-
պէս խօսիմ:

ԳԼ. ԺԳ.

Եե Յառաջ քան զտօնն զատկի, գիտաց Յս՝ թէ 1
հասեալ է ժամ նորա զի փոխեսցի յաշխարհէս առ
առ Հայր. սիրեաց զիւրսն՝ որ յաշխարհի աստ էին.
՚ի սպառ սիրեաց զնոսա:
Լ * Եւ ՚ի լինել ընթրեացն, սատանայի իսկ արկեալ 2
էր ՚ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա յուդա Սիմովնի Իսկա-
րիովտացւոյ. * Գիտաց Յս՝ զի զամ ինչ ետ Հայր ՚ի 3
ձեռս նր և թէ յԱյ ել՝ և առ Այ երթայ, * Յառնէ 4
յընթրեացն անտի, և դնէ զհանդերձսն, և առեալ զգեն-
ջեակ մի՝ սփածանէր: * Եւ ապա արկանէ ջուր՝ ընդ ՚ի 5
կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սըր-
բէր զենջեկաւն զոր սփածեալ էր: * Գայ առ Սի- 6
մովն Պետրոս: և նա ասէ ցնա. Տէր՝ դու զիմ զոտս
լուանաս: * Պատասխանի ետ նմա Յս՝ և ասէ. զոր 7
ինչ

---

(46) Ոմանք. Լոյս աշխարհի եկի... ՚ի խաւարի մի՛ մնաս-
ցէ: (47) Ոմանք. Եւ ոչ պահեսցէ:
Գլ. ԺԳ. (1) Ոմանք. Քան զտօն զատկին... եթէ հաս-
եալ է: (2) Ոմանք. Սիմոնեան սկարիովտացի: (3) Ոմանք.
Նմ. եթէ յԱյ ել: (4) Ոմանք. Զհանդերձսն. և առեալ
զենջակ մի սփածանէր: (5) Յօրինակին՝ յետոյ ենչմամբ յա-
ճախեալ էրեւէր (ձ), զենջեկաւն. ոչ առնեն ոմանք: Որք և այլ
ոմանք զենջն զենջակաւն, կամ, զենջանակաւն: (7) Ոմանք.
Զոր ինչ ես գործեմ... բայց յապա գիտասս":

Digitized by Google

ինչ եմս գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա
8 գիտասցես: * Ասէ ցնա Պետրոս. ոչ լուասցես զոտս
իմ յաւիտեան: Պատասխանի ետ յս՟. եթէ ոչ լուա-
9 ցից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն: * Ասէ ցնա Սի-
մոն Պետրոս. Տր՟՝ մի միայն զոտս իմ, այլ և զձեռս
10 և զգլուխ: * Ասէ ցնա յս՟. լուացելոյն չէ ինչ պէ-
տս, բայց զի զոտսն լուանայցէ. քանզի ամենևին սուրբ
11 է. և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքեան: * Զի գի-
տէր զայն որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ա-
12 սաց՝ թէ ոչ ամենեքեան սուրբ էք: * Եւ յորժամ
լուաց զոտս նց՟, առ զհանդերձս իւր՝ և դարձեալ
բազմեցաւ, և ասէ ցնս՟. գիտէք զինչ արարի ձեզ:
13 * Դուք կոչէք զիս վարդապետ և Տր՟, և բարւոք ասէ-
14 նէք. քանզի եմ իսկ: * Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս
ձեր՝ Տրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց
15 զոտս լուանալ: * Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս
ես ձեզ արարի, և դուք արասջիք:
16 * Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ՝ մեծ քան զՏէ- ԼԱ
առն իւր. և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առա- ԿԳ
17 քեացն զնա: * Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝
18 եթէ առնիցէք զայս: * Ո՛չ վասն ամենեցուն ձեր ա-
սեմ. զի ես գիտեմ զորս ընտրեցի. այլ զի լցցի գիրն,
19 թէ որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խաբէութիւն: * Յայսմ
հետէ իսկ ասեմ ձեզ մինչչև եղեալ, զի յորժամ լի-
20 նիցի՝ հաւատասջիք թէ ես եմ: * Ամէն ամէն ասեմ
ձեզ. որ ընդունի զոր ոք ես առաքեցից, զիս ընդու-
նի. և որ զիս ընդունի՝ ընդունի զայն որ առաքեացն
21 զիս: * Զայս իբրև ասաց յս՟, խռովեցաւ յոգի իւր,
վկայեաց և ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն
22 ի ձէնջ մատնելոց է զիս: * Հայէին ընդ միմեանս ա-
23 շակերտքն տարակուսեալք, թէ զումէ ասիցէ: * Եւ
էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ յս՟ի, զոր սի-
24 րէրն յս՟: * Ակնարկէր նմա Սիմոն Պետրոս հարցա-
25 նել՝ ով իցէ վա՟ որոյ ասէն: * Եւ նա՝ անկեալ զլան-
26 ջօքն յս՟ի, ասէ ցնա. Տր՟՝ ով է: * Պատասխանի ետ
յս՟՝ և ասէ. այն է՝ որում ես թաթացից զպատառն՝ և
տաց:

---

(8) Ոմանք. Պատասխանի ետ նմա յս՟: (13) Ոմանք. Եւ բարւոք
ասէք. զի և եմ իսկ: (14) Ոմանք. Զմիմեանց զոտս լուա՟:
(15) Ոսկան. Օրինակ մի ետու ես ձեզ: (15) Օրինակ
Գ. Եւ ետու ձեզ՝ ապա դուք արասջիք: (17) Ոմանք. Եթէ
զայս գիտէիք. երա՟.. թէ առնիցէք: (22) Ոմանք. Թէ
զումէ ասիցէ: (23) Օրինակ Գ. Բազմեալ առ յս՟ի: Եւ
այլ օրինակ Գ. ընդ յս՟ի: (24) Ոմն. Ակնարկէ նմա սի-
մոն.. հարցանել ով իցէ: (25) Ոմանք. Տր՟ ով է.

Digitized by Google

տաց։ Եւ թաթաւեալ զպատառն՝ տայ Յուդայի Իսկա-
րիովտացւոյ։ * Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ 'ի նա 27
սատանայ։ Եւ ասէ ցնա Յս. Արդ՝ որ ինչ առնելոցն
ես՝ արա վաղվաղակի։ * Եւ զայս ոչ ոք իմացաւ 'ի բազ- 28
մականացն անտի թէ առ ինչ ասաց ցնա։ * Զի ոմանք՝ 29
համարէին թէ զի զքսակն ունէր Յուդա, ասաց նմա
Յս, գնեա՛ ինչ որ պիտոյ իցէ մեզ 'ի տօնիս. եւ կամ՝
զի աղքատաց ինչ տացէ։ * Իսկ նր առեալ զպատառն՝ 30
ԷԷ ել արտաքս վաղվաղակի, եւ էր գիշեր։ * Եւ իբրեւ ել, 31
ասէ Յս. այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ, եւ Ած
փառաւորեցաւ 'ի նմա։ * Զի եթէ Ած փառաւորե- 32
ցաւ 'ի նմա, եւ Ած փառաւորեսցէ զնա յանձն իւր.
եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ * Որդեակք իմ, 33
փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրեսջիք զիս։ եւ
որպէս ասացի Հրէիցն, եթէ ուր ես երթամ, դուք ոչ
կարէք գալ։ եւ արդ՝ ձեզ ասեմ։ * Պատուիրան նոր 34
տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ,
զի եւ դուք սիրեսջիք զմիմեանս։ * Յայսմ գիտասցեն 35
ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք
զմիմեանս։ * Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տր՝ յո՞ եր- 36
թաս։ Պատասխանի ետ Յս, ուր ես երթամ, դու՝
ոչ կարես այժմ գալ զհետ իմ, բայց յետոյ եկեսցես
զհետ իմ։ * Ասէ ցնա Պետրոս. Տր՝ ընդէ՞ր ոչ կա- 37
րիցեմ գալ այժմ զհետ քո. արդէն զանձն իմ իսկ ե-
դից 'ի վերայ քո։ * Պատասխանի ետ Յս. զանձն քո 38
դիցես 'ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չէ՛ իցէ
հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս։

ԳԼ. ԺԴ.

Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատասջիք յԱծ, 1
եւ յիս հաւատացէք։ * 'Ի տան հօր իմոյ օթեվանք 2
բազո՛ւմ են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, եթէ
եր-

---

(27) Ոմանք. Արդ զոր ինչ առնելոց ես։ (29) Ոմանք. Գնեա՛ զոր ինչ պիտոյ է մեզ 'ի տօնիս, եւ կամ թէ զի աղքատ"։ (30)(31) Օրինակ մի. Եւ ել արտաքս։ եւ էր գիշեր իբրեւ ել։ Ասէ Յս։ (31) Յօրինակին 'ի Բնա-քանի [illegible] Եւ իբրեւ ել, [illegible] 'ի [illegible]" [illegible] յուդա, 'ի [illegible] համաձայն ոմանց 'ի Բնաբ"։ (32) Ոմանք. Եւ վաղվաղակի փառաւոր արասցէ զնա։ (33) Ոմանք. Փոքր ինչ ժամս է։ (33) Ոսկան. Ընդ ձեզ եմ. խնդրեսջիք զիս։ (34) Յօրինակին գրեալ է. Զի եւ դուք սի"։ (35) Ոմանք. Թէ իմ աշակերտք էք։ (36) Ոմանք. Տր՝ յո՞ երթաս։ Պատասխանի ետ նմա Յս։
ԳԼ. ԺԴ. (2) Ոմանք. Թէ երթամ պատրաստել։

3 երթամ և պատրաստեմ ձեզ տեղի։ * Եւ եթէ եր-
թամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և
առնում զձեզ առ իս. զի ուր եսն իցեմ, և դուք անդ
4 իցէք։ * և ուր երթամն՝ գիտիցէք, և զճանապարհն
5 գիտիցէք։ * Ասէ ցնա Թովմաս. Տէ՛ր՝ ոչ գիտեմք յո՛ երթաս,
և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։
6 * Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհն՝ և ճշմարտութիւն
7 և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև։ * Եթէ
զիս գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէիք, և այսուհե-
8 տև գիտասջիք զնա, և տեսէք զնա։ * Ասէ ցնա Փի-
9 լիպպոս. Տէ՛ր՝ ցո՛յց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։ * Ասէ
ցնա Յիսուս. այսչափ ժամանակս՝ ընդ ձեզ եմ, և ոչ ծա-
նեար զիս Փիլիպպէ. որ տեսանէ զիս՝ տեսանէ զՀայրն.
10 և դու զիարդ ասես՝ եթէ ցո՛յց մեզ զՀայր։ * Ո՞չ հա-
ւատաս եթէ ես 'ի Հայր՝ և Հայր յիս է։ բանն զոր ես
խօսիմ ընդ ձեզ, ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն
11 որ յիս բնակեա՛լ՝ նա՛ գործէ զգործսն։ * Հաւատայք
12 ինձ՝ եթէ ես 'ի Հայր՝ և Հայր յիս։ * ապա թէ ոչ՝ գոնէ
վա՛ս գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն ամէն ասեմ ձեզ,
թէ որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա
գործեսցէ, և մեծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ. զի
13 ես առ Հայր երթամ։ * Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն
իմ, արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ ԼԸ
15 * Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ * և ԼԲ
16 ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ. ԸԿ
17 զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան. * զՀոգին ճշմար-
տութեան. զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տե-
սանէ զնա՝ և ոչ ճանաչէ զնա։ բայց դուք ճանաչէք
18 զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի։ * Ո՛չ
19 թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ * Փոքր մեւս ևս,
և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանի-
ցէք

(3) Յօմանս չիք նշանակեալս. * Եւ եթէ երթամ և պատրաս-տեմ ձեզ տեղի։ (3) Ոմանք. Եսն եմ, և դուք ընդ իս իցէք։ (5) Ոմանք. Յո՛ երթաս։ (6) Ոմանք. Ես իսկ եմ ճանապարհ, ճշ-մարտութիւն։ (7) 'Ի բազում օրինակս. Գիտասջիք զնա, և տեսէք զնա։ (9) Ոմանք. Որ տեսեալ զիս.. ցոյց մեզ զՀայրն։ (10) Ոմանք. Եւ Հայր 'ի յիս. զբանս զոր ես խօսեցայ։ (10) Բազումք. Որ յիս բնակեալ է, նա։ (11) Ոսկան. Եւ Հայր յիս է։ (12) Ոմանք. Զգործսն զոր եսս.. և մեծա-մեծ քան զնոյնս։ (13) Ոմանք. Հայր 'ի յՈրդի։ (13) Ոս-կան յետ այսր համարոյ յաւելու համար 14. առեալ 'ի լատինա-կանէն. Հայր յՈրդի։ * Եթէ զինչ խնդրիցէք յանէն՝ արարից զայն։ (17) Ոմանք. Զհոգին ճշմարտութ։ (19) Ոմանք. Եւ աշխարհս ոչ տեսանէ զիս. բայց դուք տեսանէք զիս։

Digitized by Google

դէք զիս · զի ես կենդանին եմ, և դուք՝ կենդանիք լի-
նելոց էք ։ * Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ի 20
Հօր իմում, և դուք յիս, և ես ՚ի ձեզ ։ * Որ ունի զպա- 21
տուիրանս իմ՝ և պահէ զնո, նա է որ սիրէ զիս ։ և
որ սիրէն զիս՝ սիրեսցի ՚ի Հօրէ իմմէ · և ես սիրեցից
զնա, և երեւեցուցից նմա զիս · * Ասէ ցնա Յուդա՝ 22
ոչ Իսկարիովտացին · Տէր՝ զի՞ եղեւ՝ զի մեզ յայտնելոց ես
զքեզ՝ և ոչ աշխարհի ։ * Պատասխանի ետ Յս՝ և ասէ 23
ցնա · եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր
իմ սիրեսցէ զնա · և առ նա եկեսցուք, և օթեվանս
առ նմա արասցուք · * Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս 24
իմ ոչ պահէ ։ և բանն իմ զոր լուարուք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝
որ առաքեացն զիս ։ * Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ 25
առ ձեզս եմ ։ * Բայց Մխիթարիչն Հոգին Սբ՝ զոր առ- 26
աքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամ,
որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուսցէ ձեզ ։ * Խաղաղու- 27
թիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ · ոչ որ-
պէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ ։ մի խռովեսցին սիրտք
ձեր, և մի զանգիտեսցեն · * Լուարուք զի ասացի ես 28
ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ · եթէ սիրէիք զիս՝
ապա ուրախ լինէիք էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ,
զի Հայր իմ մեծ է քան զիս ։ * Եւ այժմ ասացի ձեզ 29
մինչչեւ եղեալ · զի յորժամ լինիցի, հաւատասջիք ։ * Ո՛չ 30
ես այլ շատ խօսեցայց ընդ ձեզ · գայ իշխան աշխար-
հիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ ։ * Այլ զի ծանիցէ 31
զի աշխարհս՝ եթէ սիրեմ զՀայր · և որպէս պատուիրեաց
ինձ Հայրն այնպէս առնեմ ։ Արի՛ք գնասցուք աստի ։

ԳԼ. ԺԵ.

Ես եմ որթն ճշմարիտ՝ և Հայր իմ մշակ է ։ * Զամե- 1
նայն ուռ որ յիս է՝ և ոչ բերէ պտուղ, հատէ զնա · 2
և զամ որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել ես
պտղաբեր լիցի ։ * Դուք արդէն իսկ սուրբ էք վս բա- 3
նին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ ։ * Կացէք յիս՝ և ես ՚ի ձեզ ։ 4
Որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ
չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ
յիս

(24) Ոմանք · Զբանս իմ ոչ պահէ ։ (26) Ոմանք · Բայց Մխիթարիչ Հո"... զձեզ զամ, և յիշեցուսցէ զձեզ զոր ինչ ասա" ։ (27) Ոսկան · Զխաղաղութիւն թող" ։ (27) Ոմանք · Որպէս աշխարհս տայ ։ (28) Օրինակ մի · Լուարուք զի ասա" · և եթէ սիրէիք զիս ։ (30) Ոմանք · Ընդ խօսեցայց ընդ ։ (31) Ոմանք · Ինձ Հայր՝ այնպէս առնեմ ։ Գլ · ԺԵ · (1) Ոսկան · Եւ Հայր իմ մշակ է ։ (2) Ոմանք · Որ բերէ զպտուղ՝ սր" ։ (4) Ոմանք · Եթէ ոչ կցէ հաստատ" ։

Digitized by Google

5 յիս հաստատուն կացէք։ * Ես եմ որթ՝ և դուք ուռ.
որ հաստատուն է յիս՝ և ես 'ի նմա, նա բերէ պտուղ
6 յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել։ * Եթէ ոք
ոչ է հաստատուն յիս, ել նա արտաքս իբրև զուռն.
և ցամաքեցաւ. և ժողովեն զնա, և 'ի հուր արկանեն՝
7 և այրի։ * Եթէ կացէք յիս, և բանքն իմ 'ի ձեզ կայցեն.
8 զորինչ կամիցիք խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ։ * Յայս
միկ փառաւորեցաւ հայր իմ, զի պտուղ յոյժ բերի-
9 ջիք. և եղիջիք իմ աշակերտք. * Որպէս սիրեաց զիս
հայրն իմ, և ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք 'ի
10 սէր իմ։ * Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք
'ի սէր իմ. որպ ես զպատուիրանս հօր իմոյ պահեցի.
11 և կամ 'ի սէր նր։ * Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ու-
րախութիւն իմ 'ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւն լցեալ
12 եղիցի։ * Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս,
13 որպ և ես սիրեցի զձեզ։ * Մեծ ևս՝ քան զայս սէր՝ ոչ ոք
ունիցի, եթէ զանձն իւր դիցէ 'ի վր բարեկամաց իւ-
14 րոց։ * Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր
15 ես պատուիրեմ ձեզ։ * ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս.
զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նր. այլ զձեզ
կոչեցի բարեկամս. զի զամ զոր լուայ 'ի հօրէ իմմէ՝
16 ծանուցի ձեզ. * Ո՛չ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ
ես ընտրեցի զձեզ. և եդի զձեզ՝ զի դուք երթայցէք
և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ։ Եւ
զոր ինչ խնդրիցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ.
17 * Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ * Ե-
18 թէ աշխարհ զձեզ ատեայ. գիտասջիք զի նախ զիս ա-
19 տեաց։ * Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն
սիրէր արդեւք. բայց զի յաշխարհէ չէք. այլ ես ընտ-
րեցի զձեզ յաշխարհէ, վն յայնորիկ ատեայ զձեզ աշ-
20 խարհ։ * Յիշեցէք զբանն զոր ասացի, թէ ոչ է ծա-
ռայ՝ մեծ քան զտէր իւր։ Եթէ զիս հալածեցին, ա-
պա

---

(5) Ոմանք. Եւ ես 'ի նմա, նա։ (7) Բչն. Եթէ կայ-
ցէք յիս։ (7) Ոմանք. Եւ բանք իմ 'ի ձեզ կայցեն,
որ ինչ կամիցիք։ (9) Ոմանք. Սիրեաց զիս հայր, և ես.
(10) Ոսկան. Որպ և ես զպատու՟։ (12) Ոմանք. Որպ ես
զձեզ սիրեցի։ (13) Ոմանք. Սէր ոչ ոք ունի, եթէ։
(14) Ոմանք. Բարեկամք իմ էք։ (15) Օրինակ մի. Ոչ ես
կոչեցից զձեզ.. կոչեցից բարեկամս։ (16) Ոմանք. Եւ
պտուղն ձեր կայցէ. կամ, կեցցէ։ (17) Ոմանք. Զայս
պատուիրեմ ձեզ, զի սի՟։ (18) Ոմանք. Եթէ աշխարհս
զձեզ։ (18) 'Ի լուսն՟. Նախ զիս ատեաց. համաձայն [illegible]
'ի բնագ՟։ (19) Ոմանք. Աշխարհ զիւրն սի՟.. բայց զի
չէք յաշ՟։ (20) Ոմանք յաւելուն. Զոր ասացի ձեզ, թէ։

Digitized by Google

պա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին,
ապա և զձերն պահեսցեն: * Այլ զայս ամենայն արասցեն 21
ընդ ձեզ վս անուան իմոյ. զի ոչ ճանաչեն զայն՝ որ առ-
աքեացն զիս: * Իմ՝ եթէ չէր եկեալ և խօսեցեալ 22
ընդ նս, մեղ ինչ ոչ գոյր նց. բայց արդ՝ չիք ինչ պատ-
ճառք վս մեղաց իւրեանց: * Որ զիս ատեայ, և ըզ- 23
հայրն իմ ատեայ: * Եթէ զգործսն չէր գործեալ 'ի 24
նս՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ՝ ոչ գոյր նց,
բայց արդ՝ տեսին, և ատեցին՝ և զիս և զհայր իմ:
* այլ զի լցցի բանն, որ յօրէնս նց գրեալ է, թէ ա- 25
տեցին զիս տարապարտուց: * Բայց յորժամ եկեսցէ 26
մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ 'ի հօրէ, զհոգին
ճշմարտութե որ 'ի հօրէ ելանէ, նա վկայեսցէ վս իմ:
* և դուք վկայէք, զի իսկզբանէ ընդ իս էք: 27

ԳԼ: ԺԶ:

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթագղիջիք: 1
* 'ի ժողովրդոց իւրեանց հանցեն զձեզ: Այլ 2
եկեսցէ ժամանակ՝ զի ամ որ սպանանիցէ զձեզ, հա-
մարիցի պաշտօն մատուցանել այ: * Եւ զայն արա- 3
ցեն ընդ ձեզ. քանզի ոչ ճանաչեն զհայր՝ և ոչ զիս:
* Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկես- 4
ցէ ժամանակ՝ յիշեսջիք՝ թէ ես ասացի ձեզ: * Զայս 5
իսկզբանէ՝ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: Բայց
արդ երթամ ես առ առաքիչն իմ. և ոչ ոք 'ի ձէնջ հար-
ցանէ զիս, թէ յո՞ երթաս: * այլ զի զայս խօսեցայ 6
ընդ ձեզ, տրտմութի՝ ելից զսիրտս ձեր: * Այլ ես 7
զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ.
զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ
ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ:
* Եւ նա՝ եկեալ, յանդիմանեսցէ զաշխարհ, վասն 8
մեղաց, և վասն արդարութե, և վասն դատաստանի:
* Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս: * վասն արդա- 9
րու-

(21) Բ․ձեռ․ Զի ոչ գիտեն զայն որ առա": (22) 'Ի բ․ձեռ․ Չիք ինչ պատճառք: (23) Ոմանք․ Եւ զհայրն իմ ատեաց: (24) Ոմանք․ Եւ ատեցին զիս և զհայր: (25) Ոմանք․ Զիս 'ի տարապարտուց: (26) Յօրինակին․ Զոր ես առաքեցի ձեզ 'ի: (26) Ոմանք․ 'Ի հօրէ հոգին ճշմար": Գլ․ ԺԶ․ (2) Բ․ձեռ․ Իւրեանց հանիցեն զձեզ: (2) 'Ի [illegible]"․ Զձեզ, և համարեսցի պաշ"․ համաձայնն ամենից 'ի բնաբ": (4) Ոմանք․ Եկեսցէ ժամանակն՝ յիշիցէք թէ: (5) Ոմանք․ Հարցանիցէ զիս թէ յո՞ եր": (6) Ոմանք․ Տրտմութիւն ելից: (7) Յօրինակին [illegible]․ Ասեմ ձեզ լաւ է: (9) Օրի-նակ մի․ Վս մեղաւորաց, զի ոչ հաւատան:

Digitized by Google

10 րութեն՝ զի առ Հայր իմ երթամ, և ոչ ևս տեսանէք
11 զիս: * վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այ-
12 սորիկ դատապարտեալ է, * Եւս բազում ինչ ունիմ
13 ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդուրժել այժմիկ: * յոր-
ժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեն, առաջնորդես-
ցէ ձեզ ամ ճշմարտութիւ․ զի ոչ եթէ յանձնէ ինչ խօ-
սեսցի, այլ զոր լուիցէ խօսեսցի, և զգալոցն պատմես-
14 ցէ ձեզ: * Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի
15 առնուցու՝ և պատմեսցէ ձեզ: * Զամ ինչ զոր ունի
Հայր՝ իմ է․ վն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ ան-
16 տի առնու՝ և պատմէ ձեզ: * Փոքր մի, և ոչ ևս տե-
սանիցէք զիս․ և արդ սակաւիկ մի, և տեսանիցէք զիս․
17 և ես երթամ առ Հայր: * Ասէին ոմանք յաշակերտաց
անտի ցմիմեանս․ զի՞նչ է այս՝ զոր ասէս ցմեզ, թէ
փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ
մի՝ և տեսանիցէք զիս․ և եթէ ես առ Հայր իմ երթամ:
18 * և ասէին, զի՞նչ իցէ այն փոքր միւս ևս, չգիտեմք
19 զինչ խօսի: * Գիտաց յս եթէ կամին ցնա հարցանել․
և ասէ ցնս․ վն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ա-
սացի՝ թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ
20 սակաւիկ միւս ևս տեսանիցէք զիս: * Ամէն ամէն ա-
սեմ ձեզ, զի լայջիք և ողբասջիք դուք, և աշխարհ
խնդասցէ․ դուք տրտմեսջիք, այլ տրտմութի ձեր յու-
21 րախութի՝ եղիցի: * Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութի՝
է նմա, զի հասեալ է ժամ նր․ այլ յորժամ ծնցի ըզ-
մանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւն վասն խնդութեն, զի
22 ծնաւ մարդ յաշխարհ: * Եւ դուք այժմ տրտմութի
ունիք․ այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին
սիրտք ձեր․ և զուրախութի ձեր ոչոք հանիցէ 'ի ձէնջ:
23 * Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք: Ամէն
ամէն ասեմ ձեզ․ զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ
24 յանուն իմ, տացէ ձեզ: * Մինչև ցայժմ ոչինչ խընդ-
րեցէք յանուն իմ․ խնդրեցէք և առնուցուք․ զի ու-
րա-

---

(13) Ոմանք․ Զամ ճշմարտութի․․․ զոր լուիցէ խօսեսցի: (15) Ոմանք․ Ամ զոր ունի Հայր․․․ յիմմէ անտի առնու-ցու, և պատմեսցէ ձեզ: (16) Ոմանք․ Փոքր մի՝ և ոչ տեսա-նէք զիս․ դարձեալ սակաւիկ մի ևս տեսաք": (16) Ոսկան․ Եւ զի ես երթամ առ: (17) Ոմանք․ Զոր ասէ․ կամ, ասէին ցմեզ․․․ առ Հայր երթամ: (18) Ոմանք․ Չգիտեմք զինչ խօսիս: (19) Ոմանք․ Եթէ կամէին ցնա հար"․․․ վասն այդորիկ խնդրեցէք․․․ միւս ևս, և տեսաք": (20) Ո-մանք․ Եւ աշխարհս խն"․․․ ուրախութի եղիցի: (21) Ո-մանք․ Ո՛չ ևս յիշեսցէ զնեղ": (23) Ոմանք․ Զի զոր խնդ-րիցէք․․ տացի ձեզ: (24) Ոմանք․ Ուրախութին ձեր լի-

Digitized by Google

ուրախութիւն ձեր լցեալ եղիցի. * Զայս առակօք խօսե- 25
ցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ, յորժամ ոչ եւս առա-
կօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմե-
ցից ձեզ: * Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. 26
եւ ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես հայցեցից զՀայր վասն ձեր.
* զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրե- 27
ցէք, եւ հաւատացէք եթէ ես յԱյ ելի: * Ելի ՚ի Հօրէ՝ 28
եւ եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, եւ եր-
թամ առ Հայր: * Ասեն ցնա աշակերտքն. ահա՛ արդ 29
յայտնութեամբ խօսիս. եւ առակ եւ ոչ մի ինչ ասես: * այժ- 30
միկ գիտեմք՝ եթէ գիտես զամ. եւ ոչինչ պիտոյ է՝ ե-
թէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք եթէ
յԱյ ելեր: * Պատասխանի ետ նոցա Յս՝ եւ ասէ. այժմ 31
հաւատայք: * ահա՛ եկեսցէ ժամ, եւ եկեալ իսկ է. 32
զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, եւ զիս միայն թո-
ղուցուք. եւ չեմ միայն, զի Հայր ընդ իս է: * Զայս 33
խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք.
յաշխարհի աստ՝ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերե-
ցարուք զի ես յաղթեցի աշխարհի:

ԳԼ. ԺԷ.

Զայս իբրեւ խօսեցաւ Յս, ամբարձ զաչս իւր յեր- 1
կինս՝ եւ ասէ. Հայր՝ հասեալ է ժամ, փառաւո-
րեա զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորեսցէ զքեզ.
* որպէս ետուր նմա իշխանութիւն ամ մարմնոյ. զի ամ 2
զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս:
* Այս են յաւիտենականն կեանք, զի ծանիցեն զքեզ 3
միայն ճշմարիտ Այ, եւ զոր առաքեցեր զՅս Քս: * Ես 4
զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի՝ զոր
ետուր ցիս զի արարից: * եւ այժմ փառաւորեա զիս 5
Հայր առ ՚ի քեն, փառօքն զոր ունէի յառաջ քան զլի-
նելն աշխարհի առ ՚ի քեն: * Յայտնեցի զանուն քո 6
մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ
ե-

ցեալ է. կամ, լիցի: (25) Օրինակ մի. Զայս ամ առակաւք: (26) Ոմանք. Եթէ ես աղաչեցից զՀայր վս ձեր: (27) Ոմանք. Զիս սիրեցէք. կամ, սիրեսջիք, եւ հաւատայցէք: (28) Օրինակ մի. Յաշխարհս.. զաշխարհս: (30) Ոմանք. Այժմ գիտեմք: (30) Ոմանք. Հարցանիցէ ցքեզ (32) Ոմանք. Ահա եկեսցէ ժամանակ.. զի Հայր իմ ընդ իս է: (33) Ոմանք. Քաջալերեցարուք:

Գլ. ԺԷ. (1) Ոմանք. Համբարձ զաչս իւր: (3) Ոմանք. Յաւիտենականս կեանք.. Ճշմարիտ Այ, եւ զոր առաքեցեր զՅս: (4) Ոմանք. Զգործն կատարեցի զի ետուր: (5) Բազ. Առ ՚ի քեն փառօքն, զոր ունէի:

Digitized by Google

7 ետուր զնոսա • եւ զբանն քո պահեցին : * Արդ գիտացին
8 եթէ զամ ինչ զոր ետուր ինձ, * ետու նոցա • եւ նոքա
ընկալան, եւ ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ՚ի քէն ե-
9 լի • եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս : * Ես
վասն նոցա աղաչեմ, եւ ոչ վասն աշխարհի աղաչեմ • այլ վասն
10 նոցա զորս ետուրն ինձ • զի քո են : * Եւ որ ինչ իմ
է, քո է • եւ որ ինչ քո է, այն իմ է • եւ փառաւո-
11 րեալ եմ ՚ի նոսա : * Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, եւ նոքա
յաշխարհի են, եւ ես առ քեզ գամ • Հայր : սուրբ պա-
հեա զնոսա յանուն քո, որով ետուր ինձ • զի եղիցին
12 մի, որպէս եւ մեք մի եմք : * Մինչ էի յաշխարհի ընդ նոսա,
ես պահէի զնոսա յանուն քո՝ որով ետուր ինձ • եւ պա-
հեցի • եւ ոչ ՚ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորըս-
տեան, զի գիրն լցցի :
13 * Բայց արդ առ քեզ գամ : եւ զայս խօսիմ յաշխարհի,
զի ունիցին զուրախութիւն իմ լնեալ յանձինս իւրեանց :
14 * Ես ետու նոցա զբանն քո, եւ աշխարհս ատեաց զնոսա •
15 զի չեն յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ : * Ոչ զայս
աղաչեմ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահես-
16 ցես զնոսա ՚ի չարէ : * Յաշխարհէ աստի չեն, որպէս եւ ես
17 չեմ յաշխարհէ : * Սուրբ արա՝ զնոսա ճշմարտութեամբ քով •
18 զի բանն քո ճշմարտութիւն է : * Որպէս զիս առաքեցեր
19 յաշխարհ • եւ ես առաքեցի զնոսա յաշխարհ • * Եւ ՚ի վերայ
նոցա ես սրբեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սուրբ
20 ճշմարտութեամբ : * Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ,
21 այլ եւ վասն հաւատացելոց բանիւն նոցա յիս • * զի ա-
մենեքեան մի իցեն, որպէս դու Հայր յիս՝ եւ ես ՚ի քեզ, զի
եւ նոքա ՚ի միզ իցեն : զի եւ աշխարհս հաւատասցէ եթէ
22 դու առաքեցեր զիս : * Եւ ես զփառսն զոր ետուր ինձ
23 ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս եւ մեք մի եմք : * Ես ՚ի նոսա,
եւ դու՝ յիս, զի եղիցին կատարեալք ՚ի մի : Եւ գիտաս-
ցէ աշխարհս՝ եթէ դու առաքեցեր զիս • եւ սիրեցեր զնոսա
24 որպէս դու զիս սիրեցեր : * Հայր, զորս ետուրն ինձ, կա-
միմ՝

(7)(8) Ոմանք յաւելուն • Զոր ետուր ինձ, առ ՚ի քէն են :
* Զի բանն զոր ետուր ինձ՝ ետու նոցա : (9) Բազմ • Ե-
տուրն ինձ, զի քո են : (11) Յօրինակին լուծեալ ՚ի վերայ
[illegible] Հայր (:), [illegible] կամ բոլորէ-
[illegible] (՝) կամ [illegible] (,) ոմն [illegible] •
և կամ [illegible]" և [illegible],
Հայր սուրբ, պահեա զնոսա • ոմն գրեն [illegible] ՚ի նոր օրի-
նակաց : (14) Ոմանք • Ետու նոցա զբանս քո : (20) Ոմանք •
Այլ ոչ վասն նոցա : (23) Ոմանք • Եւ ես սիրեցից զնոսա •
որպէս եւ դու զիս : (24) Ոմանք • Զի ուր ես եմ . . . ըզ-
փառսն իմ, զոր ետուր ցիս . . զլինել աշ" :

Digitized by Google

միմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն ընդ իս՝ զի տեսանիցե-
ցեն զփառսն զիմ. զոր ետուրն ինձ. զի սիրեցեր զիս
յառաջ քան զլինելն աշխարհի ։ * Հայր արդար՝ և աշ- 25
խարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ ։ և նոքա
ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս ։ * Եւ ծանուցի 26
նոցա զանուն քո՝ և ծանուցից. զի սէրն որով սիրեցեր
զիս՝ ՚ի նոսա իցէ, և ես ՚ի նոսա ։

ԳԼ. ԺԸ.

Զայս իբրև ասաց Յս, ել աշակերտօքն հանդերձ 1
յայնկոյս ձորոյն կեդրոնի՝ ուր էր պարտէզ ։
յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր ։
* Գիտէր և յուդաս, որ մատնելոցն էր՝ զտեղին. 2
զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յս աշակերտօքն
հանդերձ ։ * Եւ յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և 3
՚ի քահանայապետիցն և ՚ի փարիսեցւոց սպասաւորս,
գայ անդր ջահիւք և լապտերօք և զինուք ։ * Իսկ Յս 4
իբրև ետես զայն ամ եկեալ ՚ի վն նր, ել և ասէ ցնս.
զո՞ խնդրէք ։ * Պատասխանի ետուն նմա. զՅս նազով- 5
րեցի ։ ասէ ցնս Յս. ես եմ ։ կայր ընդ նս և յուդաս՝ որ
մատնելոցն էր զնա ։ * Իբրև ասաց՝ թէ ես եմ, յետս յետս 6
չոգան՝ և զարկան զգետնի ։ * Դարձեալ եհարց ցնս, 7
զո՞ խնդրէք ։ և նք ասեն, զՅս նազովրեցի ։ * Պատաս- 8
խանի ետ նց Յս. ասացի ձեզ թէ ես եմ. արդ՝ եթէ
զիս խնդրէք՝ թոյլ տուք դոցա երթալ ։ * Զի լցցի բանն՝ 9
զոր ասաց. թէ զորս ետուրն ինձ, ոչ կորուսի ՚ի նո-
ցանէ և ոչ զոք ։ * Իսկ սիմոն պետրոս քանզի ունէր 10
սուր, ձգեաց զնա՝ և եհար զքահանայապետին ծա-
ռայ, և ՚ի բաց առ զունկն նր զաջոյ ։ և էր անուն ծա-
ռային մաղքոս ։ * Ասէ Յս ցպետրոս. արկ զսու- 11
սերդ ՚ի պատեանս իւր. զբաժակն զոր ետ ինձ հայր ոչ
ըմպիցեմ զնա ։ * Իսկ գունդն և հազարապետն և սպա- 12
սաւ-

(25) Յօրինակին յետ բառիցս Հայր արդար՝ նշան ինչ եդեալ ՚ի միջոցին և ապա անդէն յոր գրեալ և աշխարհ զքեզ ոչ եծ. Բներան ... Հայր արդար և աշխարհ զքեզ. ըստ որում ... սովորին. մինչ զի և օրինակ մի նշանէ զեն, գրելով այսպէս. Հայր՝ արդարև և աշխարհ զքեզ ։ (25) Յօրինակին. Եւ նոքա ծանեան ։ և դու առաքեցեր զիս ։ (26) Այլ օրինակ ունի. Եւ ծանուցի նոցա զանուն ։
Գլ. ԺԸ. (1) Ոմանք. Որ էր պարտէզ ։ (2) Ոմանք. Որ զնա մատնելոց ։ (5) Յօրինակին. Կայր ընդ նոսա և յու-դա՝ որ ։ (7) Ոմանք. Դարձեալ եհարց ցնս ։ (9) Օրինակ մի. Զի լցցի բանն յսի ։ (9) Ոմանք. Թէ զոր ետուրն ցիս ։

ԺԴ

13 նաւորքն Հրէից կալան զՅս՝ և կապեցին։ * Եւ ածին
զնա նախ՝ առ Աննա, որ էր՝ աներ Կայիափայի․ որ քա-
14 հանայապետն էր տարւոյն այնորիկ։ * Այս՝ այն Կայ-
իափա էր՝ որ խրատ ետ Հրէից, թէ լաւ է մին մեռա-
15 նել՝ ՚ի վերայ ժողովրդեանն։ * Եւ երթայր զհետ
յՍի Սիմովն պետրոս՝ և միւս աշակերտն։ Եւ աշա-
կերտն այն քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ
16 ընդ յՍի ՚ի գաւիթ քահանայապետին։ * Եւ պետրոս
կայր առ դրանն արտաքոյ։ Ել միւս աշակերտն՝ որ էր
ծանօթ քահանայապետին, և ասաց դռնապանին՝ և
17 եմոյծ ՚ի ներքս զպետրոս։ * Ասէ աղջիկն որ դռնա-
պանն էր՝ ցպետրոս․ միթէ՝ և դու յաշակերտաց առնն
18 այնորիկ իցես։ և նա ասէ՝ ոչ եմ։ * Կային անդ ծա-
ռայքն և սպասաւորք, խարոյկ արկեալ՝ քանզի ցուրտ
էր, և ջեռնուին․ կայր ԸՆ նս և պետրոս՝ և ջեռնոյր։
19 * Եւ քահանայապետն եհարց զՅս վն աշակերտացն՝
20 և վն վարդապետութն նր։ * Պատասխանի ետ նմա
Յս․ ես՝ յայտնապէս խօսեցայ յաշխարհի․ ես՝ յամ
ժամ ուսուցի ՚ի ժողովրդեանն, և ՚ի տաճարի անդ՝
ուր ամ Հրեայք ժողովեալ էին, և ՚ի ծածուկ ինչ ոչ
21 խօսեցայ։ * Զի՞ հարցանես զիս․ հարց զայնոսիկ՝ որ
լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նս․ ահաւասիկ նոքա
22 գիտեն զինչ խօսեցայ։ * Իբրև նա՝ զայն ասաց, մի
ոմն ՚ի սպասաւորացն որ անդ կայր, ած ապտակ յՅս՝ և
23 ասէ․ այդպէս պատասխանի տաս քահանայապետին։ * Եւ
Յս՝ ասէ ցնա․ եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վն չարին,
24 իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս։ * Եւ առաքեաց
զնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայապետ։
25 * Եւ Սիմովն պետրոս կայր անդ՝ և ջեռնոյր․ ասեն ԼԴ
ցնա՝ միթէ՝ և դու յաշակերտաց անտի նր իցես։ նա՝
26 ուրացաւ և ասէ՝ թէ ոչ եմ։ * Եւ ասէ մի ոմն ՚ի ծա-
ռայից քահանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ
զունկն եհատ պետրոս․ ոչ ես իսկ տեսի զքեզ ՚ի պար-
տէզ.

(13) Ոմանք․ Առ Աննա, որ էր աներ Կայիափայ․ որ քհնյպետ էր։ (14) Ոմանք․ Որ խրատ ետ Հրէից՝ եթէ։ (15) Ոմանք․ Երթայր զհետ յՍի Սիմովն պետրոս, և միւս ևս աշակերտ։ Ոչ ևս ոմանք․ Զհետ նր Սիմովն պետ''։ (16) Ոմանք․ Կայր արտաքոյ առ դրանն․․ և ասէ ցդռնապանն։ (19) Ոմանք․ Վն աշակերտացն նր, և։ (20) Օրինակ մի․ Խօսեցայ աշխարհի․․ և ծածուկ ինչ ոչ խօ''։ (21) Ոսկան․ Որք լուանն եթէ զինչ ասացի ցնս։ (21) Ոմանք․ Ահաւասիկ նքա գիտեն զինչ ասացի։ (21) ՚Ի լուսո''․ Գիտեն զինչ ասացի․ համաձայն ոմանց ՚ի Բնաբ''։ (22) Ոսկան․ Նա զայս ասաց։ (26) Ոմանք․ Որոյ զունկնն եհատ։

Digitized by Google

տիզի անդ ընդ նմա։ * Դարձեալ ուրացաւ պետ- 27
րոս. և վաղվաղակի հաւ խօսեցաւ։
ԼԴ * Եւ ածեն զյս 'ի վանացն կայիափայ յապարանս դա- 28
տաւորին. և էր այգուց։ Եւ նոքա ոչ մտին յապա-
րանսն, զի մի պղծիցին, այլ զի ուտիցեն զպասեքն։
* Ե՛լ առ նոս պիղատոս արտաքս՝ և ասէ. զի՞նչ չա- 29
րախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ։ * Պա- 30
տասխանի ետուն և ասեն ցնա. եթէ չէր չարագործ
այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։ * Ասէ ցնո 31
պիղատոս. առէք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն
դատեցարուք։ ասեն ցնա հրեայքն. մեզ չէ արժան
սպանանել զոք։ * Զի լցցի բանն յսի զոր ասաց, նշա- 32
նակելով թէ որով մահու մեռանելոց իցէ։ * Եմ- 33
ուտ միւսանգամ յապարանսն պիղատոս, կոչեաց զյս,
և ասէ ցնա. դու ես թագաւորն հրէից։ * Պատասխա- 34
նի ետ յս. 'ի քէն ասես դու այդ, եթէ այլք ասացին
քեզ զինէն։ * Պատասխանի ետ պիղատոս. միթէ՝ և 35
ես հրեա՞յ իցեմ. ազգն քո և քահանայապետք մատնե-
ցին զքեզ ինձ, զի՞նչ գործ գործեալ է քո։ * Պատաս- 36
խանի ետ յս. իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ
յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն
իմ մարտնչէին արդեւք՝ զի մի մատնեցայց հրէից. բայց
արդ թագաւորութիւն իմ չէ աստի։ * Ասէ ցնա պիղա- 37
տոս. ապա թէ այդպէս իցէ, թագաւոր ոմն ես դու։
Պատասխանի ետ յս. դու ասես՝ թէ թագաւոր իցեմ.
բայց ես՝ յայդ իսկ ծնեալ եմ, և 'ի դոյն իսկ եկեալ
եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեան. ամ որ 'ի
ճշմարտութենէ է, լսէ բարբառոյ իմոյ։ * Ասէ ցնա պիղա- 38
տոս. զի՞նչ է ճշմարտութիւն. զայս իբրև ասաց, դար-
ձեալ ել առ հրեայսն՝ և ասէ ցնոսա. ես՝ և ոչ մի ինչ
պատճառս գտանեմ 'ի նմա։ * Բայց է ձեր սովորութիւն 39
զի զմի ոք արձակեցից ձեզ 'ի զատկիս. արդ՝ կամիք
զի արձակեցից ձեզ զթագաւորն հրէից։ * Աղաղա- 40
կեցին ամենեքեան՝ և ասեն. մի զդա, այլ զբարաբ-
բան. և էր բարաբբայն այն աւազակ։

ԳԼ.

(28) Ոմանք. Զի մի պղծեսցին։ (29) Ոմանք. Եւ ասէ ցնոսա, զինչ... մատուցանիցէք զառնէն։ (31) Բղ. Մեզ ոչ է արժան սպա"։ (35) Ոմանք. Ազգքն քո և քահանայապետքն։ (36) Ոմանք. Թագաւորութիւնն իմ չէ աստ։ (37) Ոմանք. Պիղատոս, թէ այդպէս իցէ՝ թագաւոր ոմն իցես դու... ծնեալ իցեմ, և 'ի դոյն իսկ եկեալ յաշխարհ։ (38) Ոմանք. Զի՞նչ է ճշմարտութիւն... գտանեմ 'ի նմա։ (38) Յօրինակին գրեալ. Ես ոչ մի ինչ։ (39) Ոմանք. Բայց ձեր սովորութիւն է։ (40) Ոմանք. Ամենեքեան և ասեն։ Ոչ զդա. և ասացին։

Digitized by Google

ԳԼ. ԺԹ.

1 Յայնժամ առ Պիղատոս զՅս. և գան եհար։ * Եւ
2 զինուորացն արարեալ պսակ 'ի փշոց՝ եդին 'ի գը-
3 լուխ նր, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի. * Եւ
գային առ նա՝ և ասէին, ո՛ղջ եր արքայ Հրէից. և հա-
4 րկանէին նմա ապտակս։ * Ել դարձեալ Պիղատոս ար-
տաքս և ասէ ցնս. ահաւասիկ ածեմ զնա արտաքս առ ձեզ,
զի գիտասջիք թէ ես՝ վնաս ինչ 'ի նմա ո՛չ գտանեմ։
5 * Ել Յս արտաքս, և ունէր պսակ 'ի փշոց՝ և հանդերձ
6 ծիրանի։ և ասէ ցնս. ահա այրդ՝ ցձեզ։ * Իբրև տե-
սին զնա քահանայապետքն և սպասաւորքն, աղաղակե-
ցին՝ և ասեն. 'ի խաչ հան՝ 'ի խաչ հան զդա։ Ա-
սէ ցնս Պիղատոս. առէք զդա 'ի ձեզ, և ձեզէն հա-
7 նէք 'ի խաչ. զի ես՝ 'ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ։ * Պա-
տասխանի ետուն նմա Հրէայքն. մեք՝ օրէնս ունիմք.
և ըստ օրինացն մերոց պարտապարտ է մեռանել. զի զանձն իւր
8 որդի այ արար։ * Իբրև լուաւ զբանս զայսոսիկ Պի-
9 ղատոս, առաւել ևս երկեաւ։ * Եմուտ դարձեալ անդ-
րէն յապարանսն, և ասէ ցՅս. ուստի՞ ես դու։ և Յս
10 ոչ ետ նմա պատասխանի։ * Ասէ ցնա Պիղատոս. ընդ
իս ո՞չ խօսիս, ոչ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հա-
նել զքեզ 'ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել ըզ-
11 քեզ։ * Պատասխանի ետ Յս. ոչ ունէիր դու իշխա-
նութիւն 'ի վերայ իմ՝ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ
'ի վերուստ. վասն այնորիկ որ մատնեաց զիս քեզ,
12 նր՝ մեծ մեղք են։ * Եւ յայնմհետէ Պիղատոս խնդրէր
արձակել զնա։ և Հրէայքն աղաղակէին՝ և ասէին.
եթէ զդա՝ արձակես, չես բարեկամ կայսեր. ամ ոք
որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր։
13 * Իսկ Պիղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ, ած
զՅս արտաքս՝ և նստաւ 'ի վերայ բեմին 'ի տեղւոջն որ
կոչէր քարայատակ, և եբրայեցերէն կառք պաւթա։
14 * Էր ուրբաթն զատկին. և էր ժամ իբրև վեցերորդ.
15 և ասէ ցհրեայսն. ահա թագաւորդ ձեր՝ ցձեզ։ * Եւ
նո-

Գլ. ԺԹ. (3) Ոմանք. Ո՛ղջ լեր արքայ Հրէից. և հանէին
նմա ապտ": (4) Ոմանք. Ել Պիղատոս դրձեալ.. զնա առ
ձեզ արտաքս։ (6) Յոմանս ձեռ.՝ քհնյպետքն և սպասաւորքն։
(7) Ոմանք. Եւ ըստ մերոց օրինաց։ (8) Ոմանք. Զբանս
զայս պիղ": (11) Օրինակ մի ընդ ոսկանայ. Վն այնորիկ որ
մատնեաց զիս։ (11) Ոմանք. Զիս քեզ, նմա մեծ մեղք։
(13) Ոմանք. Լուաւ զբանս զայս։ (13) Ոմանք. Կապպա-
թա։ (14) Ոմանք. Եւ էր իբրև ժամ... ահա թգր ձեր։
(15) Ոմանք. Եւ նք աղաղակեցին... բայց 'ի կայսերէ։

Digitized by Google

նոքա աղաղակէին, բա՛րձ ՚ի մէնջ բա՛րձ ՚ի մէնջ՝ և հան-
զդա ՚ի խաչ ։ Ասէ ցնոսա պիղատոս. եւ՝ զթագաւորդ-
ձեր՝ ՚ի խաչ հանիցեմ ։ պատասխանի ետուն քահանայապետքն. չիք
մեր թագաւոր՝ բայց ՚ի կայսերէ ։ * Յայնժամ ետ զնա 16
՚ի ձեռս նոցա, զի ՚ի խաչ ելանիցէ ։

ԼԵ * Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինք- 17
նին զխաչափայտն, և ելանէր ՚ի տեղին՝ որ անուանեալ էր
գագաթան, և կոչէր եբրայեցերէն գողգոթայ ։ * ուր 18
և ՚ի խաչն իսկ հանին զնա ։ և ընդ նմա երկուս ևս այլս
աստի և անտի, և ՚ի միջի զյս ։ * Գրեաց և տախտակ 19
պիղատոս, և եդ ՚ի վերայ խաչին. և էր գրեալ. յս
նազովրեցի թագաւոր հրէից ։ * Զայն տախտակ ըն- 20
թերցան բազումք ՚ի հրէից, զի մօտ էր ՚ի քաղաքն անդր
տեղին՝ ուր խաչեցաւն յս. և էր գրեալ եբրայեցերէն՝
գաղմատարէն՝ և յունարէն ։ * Ասեն ցպիղատոս քա- 21
հանայապետքն հրէից. մի գրեր թագաւոր հրէից, այլ
թէ նա՛ ասաց՝ թագաւոր եմ հրէից ։ * Պատասխանի 22
ետ պիղատոս. զոր ինչ գրեցին՝ գրեցի ։ * Իսկ զինո- 23
ւորքն իբրև հանին ՚ի խաչ զյս, առին զհանդերձս
նր՝ և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուո-
րի մասն ։ Իսկ զպատմուճանն քանզի էր առանց կարա-
աշխարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանն, եթէ
23 հանդերձեալքն․ ամ ինչ ձեր է․ * դուք քնի, քս այ ։

Գլ. Դ.

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ․ իբրեւ պաշտօ-
նեայս քսի՝ եւ հազարապետս խորհրդոցն այ ։
2 * Այդ՝ խնդիր է ՚ի մէջ հազարապետաց, եթէ ոք հա-
3 ւատարիմ գտցի ։ * Այլ ինձ և այս անարգանք են․
եթէ ՚ի ձէնջ դատեցայց, կամ յաւուր իրիք ՚ի մարդկա-
4 նէ․ նա եւ զանձն իմ ոչ քննեմ ։ * զի ոչինչ գիտեմ
զանձին իմոյ․ այլ ոչ եթէ՝ այսու արդարանամ, զի որ
5 քննէն զիս՝ տր է ։ * Այսուհետեւ մի յառաջ քան զժա-
մանակն դատիք, մինչեւ եկեսցէ տր որ լուսաւոր
առնիցէ զգաղտնիս խաւարի, եւ յայտնեսցէ զխորհուրդս
սրտից․ եւ ապա իւրաքանչիւր գովութիւն եղիցի յայ ։
6 * Զայս եղբարք՝ առակեցի յանձն իմ եւ յապաւղոս՝
վս ձեր․ զի ՚ի մէնջ ուսջիք՝ մի ինչ առաւել քան զգ-
րեալսն իմանալ․ զի մի այր քան զընկեր հպարտանայ-
7 ցէ ՚ի վերայ ընկերին ։ * Իսկ արդ ով է որ քննիցէ
զքեզ․ զինչ ունիս զոր ոչ իցէ առեալ․ եւ եթէ առեր՝
8 զի՞ պարծիս իբրեւ չառեալ ։ * Արդէն իսկ յագեալ
իցէք, եւ արդէն մեծացարուք, առանց մեր թագաւո-
րեցէք․ եւ երանի թէ թագաւորէիք, զի եւ մեք ընդ
9 ձեզ թագաւորէաք ։ * Ինձ այսպէս թուի՝ թէ զմեզ
զառաքեալս յետնեալս արար այ՝ իբրեւ զմահապարտս․
զի տեսիլ եղեաք աշխարհի, եւ հրեշտակաց եւ մարդկան։
* Մեք

---

(19) Ոմանք․ Որ ըմբռնէն զիմաստս": (20) Ոմանք․ Զխորհուրդս մարդկան՝ զի են ։ (22) Ոմանք փոխանակ Քեփան՝ Պ [illegible] [illegible] այսպէս․ Եթէ որկանս ։ [illegible] համաձայն [illegible] [illegible] [illegible], [illegible] ՚ի [illegible]․ Է․ 38․ Ոսկ [illegible] [illegible] [illegible] Գրչի․ Եթէ որ կեանս ։
Գլ․ Դ․ (2) Ոմանք․ Իբր եթէ ոք հաւա": (3) Ոմանք․ Թէ ՚ի ձէնջ դա": (4) Ոսկան․ Գիտեմ անձին իմոյ ։ (4) Օրէ-նակ Գ․ Այլ ոչ այսու արդար եմ, զի ։ (5) Ոմանք․ Լուսաւոր առնէ զգա": (5) Ոսկան․ Իւրաքանչիւրոյ գով": (7) Ոսկան․ Ունիս՝ որ ոչ իցէ ․․․ իբրեւ չառեալ ։ (7) Ոմանք․ Իբր չառեալ ։ (9) Ոմանք․ Եթէ զմեզ առաքեալս ․․․

Digitized by Google

* Մեք յիմարք վն Քի, և դուք իմաստունք 'ի Քս. 10
մեք տկարք՝ և դուք հզօրք. դուք փառաւորեալք՝ և
մեք անարգք * Մինչև ցայսօր ժամանակի. և քաղցեաք, 11
և ծարաւեցաք, և մերկ գնացաք, և կռփահարեցաք,
և անհանգիստ եղեաք. * և աշխատեցաք ձեռօք մե- 12
րովք. բամբասէին զմեզ՝ օրհնեաք. հալածէին՝ յանձն
առնուաք. * հայհոյէին՝ աղաչէաք, իբրև աղտ նե- 13
շաւակի եղեաք մեք աշխարհի. ամենեցուն փարեկի լե-
ներ մինչև ցայժմ. * Ո՛չ եթէ յամօթ ինչ առնելով ըզ- 14
ձեզ՝ գրեմ զայս, այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ.
* Թէպէտ և բևր դաստիարակս ունիցիք 'ի Քս, այլ 15
ոչ եթէ բազում հարս. զի 'ի Քս Յս՝ աւետարանաւն ես
ծնայ զձեզ. * Արդ աղաչեմ զձեզ՝ նմանօղք ինձ լի- 16
նիջիք. * Վն այնորիկ առաքեցի առ ձեզ զտիմոթէոս, 17
որ է իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ 'ի Տր. որ յի-
շեցուսցէ՝ ձեզ զճանապարհս իմ որ 'ի Քս Յս. ոպ և ա-
մենայն ուրեք՝ յամ եկեղեցիս ուսուցանեմ. * Որպէս 18
թէ չիցեմ գալոց առ ձեզ, ոմանք հպարտացան. * այլ 19
եկից հասալ ընդ հուպ՝ եթէ Տր կամեսցի. և 'ի միտ
առից՝ ոչ զբանս հպարտացելոցն, այլ զզօրութի. * Զի 20
ոչ եթէ բանիւք է արքայութի այ, այլ զօրութեամբ.
Բ * Արդ՝ զինչ կամիք, գաւազանաւ եկից առ ձեզ, եթէ 21
սիրով հոգւոյն՝ հեզութի, և արդարութի, և խոնարհութի.

Գլ. Ե.

Բնաւ՝ և ամենևին լսի 'ի ձեզ ընդ ձեր պոռնկութի, 1
և այնպիսի պոռնկութի՝ որ ոչ և 'ի հեթանոսս, մինչ
թէ զկին հօր իւրոյ ունել. * և դուք հպարտացեալ 2
էք. և ոչ առաւել զսգացարուք, զի բարձցի 'ի միջոյ ձեր-
մէ՝ որ զգործն զայն գործեաց. * Զի ես թէպէտ և 3
մար-

տեսակ եղաք. (10)(11) Ոմանք. Անարգք. մինչև ցայ''. (11) Ոսկան. Եւ քաղցեցաք. (11) Յօրինակին գիւէր. Գնացաք, և կռփահարեցաք. (12) Ոմանք. Յանձն առնուաք. և ոմանք. առնէաք. (13) Ոմանք. Եւ ամենեցուն փարելի. (15) Ոմանք. Դաստիարակ ունիք''. (16) Ոմանք. Նմանօղք ինձ եղերուք. (16) Ոսկան առեալ 'ի լատինականէն յաւելու. Ինձ եղիջիք. որպէս և ես Քի. Որ չէ 'ի գրչագիրս մեր, որպէս և ոչ 'ի յունականն օրինակս. (17) Ոմանք. Որ և յիշեցուսցէ. (18) Ոմանք. Որպէս թէ ես չիցեմ. (19) Ոմանք. Այլ զզօրութիւն. (20) Ոմանք. Արքայութիւն այ. (21) Ոմանք. Արդ զինչ կամիք.. հոգւոյն զօրութ և.
Գլ. Ե. (1) Ոմանք. Որ և ոչ 'ի հեթանոսս. (1) Ոսկան. Հօր իւրոյ ոք ունել. (2) Օրինակ մի ընդ ոսկանայ. Առաւել սգացաք''. (3) Օրինակ մի. Թէպէտ մարմնով.. այլ

Digitized by Google

[illegible]մարմնով մեկուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ. բայց
արդէն իսկ իբրեւ 'ի մօտոյ ընտրեցի. զայն որ այնպէսն
4 գործեաց. * յանուն տն մերոյ յսի քսի, ժողովել ձեզ
'ի միասին, և իմոյ հոգւոյս՝ զօրութեամբ հանդերձ տն
5 մերոյ յսի քսի, * մատնել զայնպիսին սատանայի 'ի
սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի յօրն տն մե-
6 րոյ յսի քսի: * Ո՛չ բարւոք են պարծանք ձեր. ո՛չ
գիտէք եթէ փոքր մի խմոր զամ զանգուածն խմորէ:
7 * սրբեցէք 'ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զան-
գուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զենաւ
8 քս: * Այսուհետեւ արասցուք տօնս. մի 'ի խմորն հին,
և մի 'ի խմորն չարութե և անզգամութե. այլ յանխմոր
9 սրբութե՛ և ճշմարտութե: * Գրեցի ձեզ 'ի թղթի բղ
10 այդր չխառնակել ընդ պոռնիկս: * և ոչ եթէ ընդ պոռ-
նիկս աշխարհիս այսորիկ, կամ ընդ ագահս, կամ ընդ
յափշտակօղս, կամ ընդ կռապաշտս. ապա թէ ոչ՝
11 պարտ էիք և յաշխարհէ իսկ ելանել: * բայց արդ՝ գ-
րեցի ձեզ չխառնակել. Եթէ ոք եղբայր անուանեալ
կամ պոռնիկ իցէ, կամ կռապաշտ, կամ ագահ,
կամ բամբասօղ, կամ արբեցօղ, կամ յափշտակօղ, ընդ
12 այնպիսւոյն և հաց մի ուտել: * Զի՞ կայ իմ և զար-
տաքինսն դատել. ոչ ապաքէն դուք զներքինսն դա-
13 տիցիք. * և զարտաքինսն այ դատեսցի. բարձէք զչա-
րն 'ի միջոյ ձերմէ:

Գլ. Զ:

1 Իշխէ՞ ոք 'ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւ- Գ
րում, դատել առաջի անիրաւաց, և ոչ առաջի սր-
2 բոց: * եթէ ոչ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին.
և եթէ ձեւք դատի աշխարհ, ապա ոչ էք արժանի ա-
3 նարգ ատենից: * ոչ գիտէք եթէ զհրեշտակս դատիցեմք,
Թո՛ղ

հոգւով մերձ: (4) Ոմանք. Եւ իմով հոգւոյս զօրութ": (5) Յոմանս պակաս. Զայնպիսին սատանայի 'ի սատա": (5) Բ՟ըն. Յաւուրն տն մերոյ: (6) Ոմանք. Զանգուածն խմո": (7) Ոմանք. Զհին զխմորն .. որպէս էքդ իսկ ան": (8) Ոմանք. Արասցուք տօն ... այլ անխմորն, կամ, յան-խմորս: (10) Ոմանք. Եւ ոչ ընդ պոռ" ... և ընդ յափշ": (11) Ոմանք. Բայց գրեցի ձեզ: (11) Յօրինակին գրեալ. կամ բամբասօղ. կամ արբեցօղ. կամ յափշտակօղ: (11) Օրի-նակ մի. Ընդ այնպիսոյն և հաց մի ուտել: (12) Ոմանք. Զներքինսդ դատէք: (13) Ոմանք. Այ դատեսցի. կամ. դատեսցէ. բարձէք զչար 'ի միջոյ:

Գլ. Զ. (1) Ոմանք. Առաջի անօրինաց: (2) Ոմանք. Եթէ ձեւք զաշխարհս դա": (3) Ոմանք. Թո՛ղ թէ զերկրաւորքս:

Digitized by Google

թող թէ զերկրաւորս: * Զերկրաւոր ատեանս եթէ 4
յանձն առնուցուք, զանարգս եկեղեցւոյ զատաւորս
նստուցանէք: * Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այսպէս ոչ 5
գոյ որ իմաստուն ՚ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտ-
րել ՚ի մէջ եղբօր իւրոյ: * այլ եղբայր ընդ եղբօր դա- 6
տի, և զայն ՚ի մէջ անհաւատից: * Եւ արդ՝ ամենևին 7
իսկ վատթարութի՛ է ՚ի ձեզ, զի՞ դատաստանս իսկ գան
՚ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ դուք ա-
ւարեալ նեղիք: * այլ դուք զրկէք և նեղէք, և այն զեղ- 8
բարս ևս: * Եթէ ոչ գիտէք՝ զի անիրաւք զարքայու- 9
թի՛ Այ ոչ ժառանգեն. մի՛ խաբիք, ոչ պոռնիկք, ոչ
կռապաշտք, ոչ շունք, * ոչ իգացեալք, ոչ արուա- 10
գէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբ-
սողք, և ոչ յափշտակողք՝ զարքայութի՛ Այ ոչ ժառ-
անգեն: * Եւ դուք այսպիսիք ոմանք էիք. այլ լուա- 11
ցարուք. այլ սրբեցարուք. այլ արդարացարուք,
յանուն Տն մերոյ Յսի Քսի, և ՚ի հոգին Այ մերոյ:
գ. կ * Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամ ինչ օգուտ է. 12
ամ ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ես ընդ իշխանու-
թեա՛ ուրուք լինիցիմ: * Կերակուրք որովայնի, և ո- 13
րովայն կերակրոց. այլ Ած զսա և զնո՛ խափանեսցէ:
բայց մարմինն՝ ոչ պոռնկութե՛, այլ Տն, և Տէր մարմնոյ:
* այլ Ած՝ որ և զՏէրն յարոյց, և զմեզ յարուսցէ զօ- 14
րութե՛ իւրով: * Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր ան- 15
դամք են Քսի. արդ առեալ զանդամս Քսի, առնիցեմ
անդամս պոռնկի՞. քա՛ւ լիցի: * Եթէ ոչ գիտէք, զի 16
որ մերձենայ ՚ի պոռնիկն՝ մի մարմին է. եղիցին ասէ,
երկոքին ՚ի մարմին մի: * և որ մերձենայ ՚ի Տէր, մի հո- 17
գի են: * փախերուք ՚ի պոռնկութենէ: Զամ մեղս զոր 18
և գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ
պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ: * Եթէ ոչ գիտէք, 19
զի

(4) Ոմանք. Զանարգսն .. զատաւորս նստ": (4) Ոսկան. Զատա-
ւորս նստուցէք: (5) Օրինակ Գ. Ձերոյ ասեմ...
եղբօր իւրում: (6) Ոմանք. Եղբայր ընդ եղբօրն դատ":
(7) Ոմանք. Եւ ընդէր դուք ոչ զր": (8) Օրինակ Գ. Եւ
եթ զեղբարս ևս: (9) Ոմանք. Թէ անիրաւք զարքայութե՛
Այ: (9) Յօրինակին Գինեսէ. Ոչ կռա"՛ և շունք: (10) Ոմանք.
Զարքայութե՛ Այ: (11) Ոմանք. Այսպիսիք ոմանք էիք:
(14) Ոմանք. Որ զՏէրն յարոյց.. զօրութե՛ իւրով: (15) Ո-
մանք. Առնիցեմ անդամս պո": (15) Ըստ Ոսկանայ Գինեսէ.
Պոռնկի. քաւ լիցի: (16) Ոմանք. Եղիցին երկոքեան ա-
սէ: (17) Ոսկան. Մի հոգի է: (18) Ոմանք. Զոր գործէ
մարդ.. իւրոյ են. իսկ որ պոռնկի, յիւր: (19) Ոսկան
զանազան. Հոգւոյն սրբոյ որ է ՚ի ձեզ: (19) Ոմանք. Որ

Digitized by Google

զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն որ է 'ի ձեզ՝ զոր ու-
20 նիցիք յԱյ. և չէք անձանց ձեր * քանզի գնոց գնեցայք:
փառաւոր արարէք զԱծ 'ի մարմինս ձեր և յոգիս ձեր:

ԳԼ. Է.

1 ԻՍԿ վն որոց գրեցէքն առ իս, բարւոք է մարդոյ 'ի Կ
2 կին մարդ չմերձենալ: * Բայց վասն պոռնկութե,
իւրաքանչիւրոք զիւր կին կալցի, և իւրաքանչիւրոք
3 կին՝ զիւր այր կալցի: * Կնոջ՝ այր իւր, պարտուպն հա-
4 տուսցէ. նոյնպէս և կին՝ առն իւրում: * Զի կին՝
մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս և այրն՝
5 իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն: * Մի զրկէք ըզ-
միմեանս: բայց եթէ իւիք 'ի միաբանութե առ ժամա-
նակ մի, զի ուխտիցն պարապիցէք, և դարձեալ 'ի
նոյն դարձջիք. զի մի փորձեսցէ զձեզ սատանայ վասն
6 անժուժկալութե ձերոյ: * Զայս ասեմ ներելով, և ոչ
7 հրամանաւ: * քանզի կամիմ եթէ ամ մարդ լինէին
իբրև զիս. այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի յԱյ
8 ոմն այսպէս և ոմն այնպէս: * Բայց ամուրեացն և
9 այրեացն ասեմ, լաւ է նց եթէ կայցեն իբրև զիս: * Ա-
պա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ է
10 ամուսնանալ քան զջեռնուլ: * Այլ կանամբեացն
պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տր. կնոջ յառնէ մի մեկնել:
11 * Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ, կամ անդ-
րէն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին իւր
12 մի թողուլ: * Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Վ Չ
Տր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նա

հա-

'ի ձեզ է, զոր ունիք յԱյ, և ոչ էք: (20) 'Ի բՀ-ն Պիտի՝ 'ի մարմինս ձեր, և յոգիս ձեր: (20) Օրինակ մի յաւելու. Եւ յոգիս՝ որ են Այ: Որ և այլ նոր օրինակ մի. Եւ 'ի հոգիս ձեր, զի համօրէն լինիցիք Այ: Իսկ ոմանք. Եւ յոգիս որ է յԱյ:

Գլ. Է. (1) Օրինակ մի. Վսն որոյ գրեցէքն: (2) Ոմանք. Զիւր կինն կալցի. և իւրաքանչիւր կին զիւր այրն կալցի: (3) Օրինակ մի. Կնոջն՝ այր զիւր պարտսն հա": (3) Բ-Հ-ն. Զպարտսն հատուսցէ.. և կին՝ առն իւ": (4) Օրինակ մի. Եւ կին մարմնոյ իւրոյ.. և այրն մարմնոյ իւրում ոչ: Եւ այլ օրինակ մի. Իւրում մարմնոյն: (5) Օրինակ մի. Սատանայ վն խոտանակութե ձերոյ: Եւ այլ օրինակ մի. Վն անժուժկալութե ձե": (6) Ոմանք. Եւ ոչ հրամանաւ ասելոյ: (7) Ոմանք. Իւրաքանչիւր՝ զիւր շնորհ ունիցի յԱյ: (8) Օրինակ մի. Լաւ էր նց եթէ կացցեն: (9) Ոմանք. Ամուսնանալն է զջեռնուլն: (11) Ոմանք. Ապա թէ մեկնեսցի... զկին իւր մի թողուլ: (12) Բ-Հ-ն.

Digitized by Google

հաճոյ իցէ բնակել ընդ նմա, մի թողցէ զնա: * Եւ կին 13
որ ունիցի այր անհաւատ, և նմա՝ հաճոյ իցէ բնակել
ընդ նմա, մի թողցէ զայրն. * Զի սուրբ է այրն ան- 14
հաւատ, կնաւն. և սուրբ է կինն անհաւատ, արամբն.
ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ են. բայց այժմ սուրբ
են: * Ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի. զի 15
ոչինչ հարկ ՚ի վերայ կայ եղբօրն կամ քերն յայնպիսի
իրս. քանզի ՚ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած: * Զի՞ 16
գիտես կին դու՝ եթէ զայր քո ապրեցուսցես. կամ
զի՞ գիտես այր դու՝ եթէ զկին քո ապրեցուսցես: * Եւ 17
թէ ոչ իւրաքանչիւր ումեք որպէս և բաժանեաց Տէր,
զիւրաքանչիւր ոք Տէր և կոչեաց Աստուած, այնպէս գնասցէ:
և այսպէս ընդ ամ եկեղեցիս պատուէր տամ: * Թլփա- 18
տեալ ոք կոչեցաւ, մի ցանկասցի անթլփատութեան.
յանթլփատութեան՝ ոք կոչեցաւ, մի թլփատեսցի: * Զի 19
թլփատութիւն ոչինչ է, և անթլփատութիւն ոչինչ. այլ
պահպանութիւն Աստուծոյ պատուիրանացն. * Բայց իւրա- 20
քանչիւրոք յոր կոչումն կոչեցաւ, ՚ի նմին կացցէ:
* Ծառայ կոչեցար, մի փոյթ լիցի քեզ. այլ թէ կա- 21
րիցես ևս ազատ լինել, քեզ այնպէս լաւ իցէ: * Զի 22
որ ՚ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն, ազատ Տեառն է. նոյն-
պէս և որ ազատն կոչեցեալ է, ծառայ Քրիստոսի է: * Գը- 23
նոց գնեցայք՝ մի լինիք ծառայք մարդկան: * Իւրա- 24
քանչիւր յոր կոչումն կոչեցաւ եղբարք, ՚ի նմին կաց-
Է դ ցէ առաջի Աստուծոյ: * Այլ վասն կուսանաց հրաման ինչ ՚ի 25
Տեառնէ ոչ ունիմ. բայց խորհուրդ տամ, որպէս ողորմեցելոյ ու-
րուք ՚ի Տեառնէ, հաւատարիմ լինել: * Համարիմ թէ այն- 26
պէս լաւ իցէ: բայց վասն վտանգին որ ՚ի վերայ կայ, բա-
րիոք է մարդոյ թէ այսպէս իցէ: * Կապեալ ես ՚ի կին, 27
մի խնդրեր արձակել. արձակեալ ես ՚ի կնոջէ, մի խընդ-
րեր կին: * Զի եթէ ամուսնանայցես՝ ոչ մեղար. և 28
եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ոչ մեղաւ, բայց նեղութիւն
մարմնոյ ունիցին այնպիսիքն: այլ ես խնայեցից ՚ի ձեզ:
* Բայց զայս ասեմ եղբարք, եթէ ժամանակս կար- 29
ճեալ

Բնակել է նմ: (14) Ոմանք. Ապա եթէ ոչ որ": (15) Ոմանք. Ապա թէ անհաւատն մեկնեսցի: (16) Ոմանք. Եթէ զայրն քո: (17) Օրինակ մի. Բաժանեաց Տէր.... Ես տամ ամ եկեղեցիս պա": (20) Ոմանք. Իւրաքանչիւր յոր կո"... ՚ի նմին կացցէ: (21) Ոմանք. Այլ թէ և կարիցես ազատ: (22) Ոմանք. Կոչեցեալ է ծառայն. (24) Ոմանք. Իւրաքանչիւրոք յոր կո": (25) Ոմանք. Հրաման ՚ի Տեառնէ ինչ ոչ ու": (26) Ոմանք. Եթէ այդպէս. կամ, այսպէս իցէ: (28) Ոմանք. Ես խնայեմ ՚ի ձեզ: (29) Ոմանք. Եթէ կարճեալ է ժամանակս յայսուհետև՝ զի ... այլ թէ ոչ ու-

Digitized by Google

կարճեալ է այսուհետև. զի որ ունիցին կանայս՝ որպէս
30 թէ չունիցին. * և որ լայցենն, որպէս թէ ոչ լայցեն.
և որ խնդայցենն, որպէս թէ ոչ խնդայցեն. և որ գնեն,
31 որպէս թէ չունիցին. * և որ վարեն զաշխարհս, որպէս
թէ չվայելիցեն. զի անցեալ է վայելչութիւն աշխարհիս
32 այսորիկ: * Այլ կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ
անկինն է՝ հոգայ զՏէրն, թէ որպէս հաճոյ լիցի Տեառն.
33 * և որ կանամբին է, հոգայ զաշխարհին՝ թէ որպէս
34 հաճոյ լիցի կնոջ իւրում: * Եւ ահա մեկնեցան 'ի մի-
մեանց անամուսինն և կոյսն. զի կոյսն հոգայ զՏէրն, զի
իցէ սուրբ մարմնով և հոգւով, և ամուսնականն հոգայ զաշ-
35 խարհին՝ թէ որպէս հաճոյ լիցի առն իւրում: * Այլ
զայս վասն ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ խայծ ինչ արկա-
նել ձեզ, այլ վասն պարկեշտութեան՝ և համեստութեան Տեառն
36 առանց զբաղանաց: * Ապա թէ ոք ամօթ համարես- ԳԷ
ցի վասն կուսին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ, և այն-
պէս ինչ պարտ իցէ լինել. զոր կամի արասցէ, ոչ մե-
37 ղանչէ. ամուսնասցի: * Իսկ որ հաստատեալ է 'ի սըր-
տի իւրում, և վտանգ ինչ ոչ իցէ նմա, իշխանութիւն
ունի 'ի վերայ կամաց իւրոց. և զայն ընտրեաց 'ի սըր-
38 տի իւրում՝ պահել զկոյսն իւր, բարւոք առնէ: * Եւ
որ ամուսնացուցանէ զկոյսն իւր, բարւոք առնէ. և որ
39 ոչ ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ: * Կին կապեալ
է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ
ննջեսցէ այր նորա, ազատ է, ում կամիցի ամուսնանալ.
40 բայց միայն Տէրամբ: * Բայց երանելի ևս է՝ թէ այն-
պէս կայցէ ըստ իմում խրատու: Եւ այսպէս համա-
րիմ՝ թէ և յիս իցէ հոգի Այ:

ԳԼ.

նեցին: Ոմանք ունին միայն առանց չնշանակութեան այսպէս. Ժամանա-
նակս կարճեալ է. այսուհետև զի որ: այլ ոմ գրչագիր
մեր ընթերցուածս ոչ և եղբարք: (30) Ոմանք. Որ լայցեն, ոպ
թէ ոչ լայցեննն.. ոպ թէ չխնդայցեն.. ոպ չունին'':
(31) Ոմանք. Չվայելեսցեն: (32) Ոմանք. Կամիմ ես ըզ-
ձեզ.. հաճոյ լինիցի: (34) Ոմանք. 'Ի միմեանց կա-
նամբին և կոյսն... Սր մարմնով և հոգւովն... հաճոյ
լինիցի: (35) Ոմանք. Այլ պարկեշտութեան և: (36) Ոմանք.
Ապա թէ ոք ամօթ համարի.. եթէ ելեալ իցէ ըստ...
զոր կամիցի. կամ, կամիցի արասցէ: (37) Յօրինակին
դնիւր. Հաստատեալ է 'ի սր'': (37) Ոմանք. Եւ վտանգ
ինչ ոչ իցէ 'ի նմա.. ունի 'ի կամաց իւ'': (39) Ոմանք.
Ցորչափ ժամանակս կեն''... ապա թէ ննջեսցէ այրն
նր... ում կամի ամուսնանալ, այլ միայն: Ոմանք.
Ում կամիցի ամուսնանալ. բայց միայն: (40) Ոմանք.
Եւս է՝ եթէ առնիցէ ըստ իմում խրատու:

Digitized by Google

ԳԼ. Ը.

Ե Իսկ վասն զոհելոց կռոցն, գիտեմք եթէ ամենեքեան գի- 1
տութիւն ունիմք: գիտութիւն հպարտացուցանէ, այլ
սէր շինէ: * Եթէ ոք կարծիցէ գիտել ինչ, չեւ եւս գի- 2
տաց՝ որպէս արժան է գիտել: * բայց որ սիրէ զԱծ, 3
նա է ծանուցեալ 'ի նմանէ: * Արդ վասն կերակրոցն 4
զոհելոց՝ գիտեմք եթէ ոչինչ իսկ կուռք են յաշխար-
հի. եւ ոչ ոք Ած բայց 'ի միոյն: * Զի թէպէտ եւ ի- 5
ցեն անուանեալ աստուածք՝ եթէ յերկինս, եւ եթէ
յերկրի. որպէս եւ են աստուածք բազումք՝ եւ տեարք բազումք.
* այլ մեզ մի է Ած, Հայր՝ յորմէ ամն, եւ մեք 'ի նա. եւ 6
ՃԶ մի Տէր ՅՍ ՔՍ, որով ամն, եւ մեք նովաւ: * Այլ ոչ յա- 7
մենեսեան գիտութիւն է. ոմանք առ խղճի մտաց մինչե-
ցայժմ զկռոցն իբրեւ զզոհելոյ ուտեն. եւ խիղճ մտաց
նոցա տկարացեալ է, պղծի: * Այլ կերակուր զմեզ 8
առաջի Այ ոչ կացուցանէ. ոչ եթէ ուտիցեմք՝ պակա-
սեսցուք ինչ, եւ ոչ եթէ ուտիցեմք՝ առաւելուցումք ինչ: * բայց 9
զգոյշ լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթագ-
ղութիւն լինիցի տկարաց: * Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ 10
որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհենի, ոչ ապա-
քէն խիղճ մտաց նորա, որ տկարութիւնն պղծեալ է,
անդրէն շինեսցի ուտել զզոհեալսն. * Եւ կորնչիցի տկա- 11
կարն եղբայրն 'ի քում գիտութեանն, վասն որոյ ՔՍ մեռաւ:
* Եւ այսպէս յանցուցեալ յեղբարս, եւ զխիղճ մտաց տը- 12
կարացն զայրացուցեալ 'ի ՔՍ մեղանչէք: * Վասն որոյ եթէ 13
կերակուր գայթագղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց
միս յաւիտեան. զի մի զեղբայրն իմ գայթագղեցուցից:

ԳԼ. Թ.

Ոչ առաքեալքն ազատ եմ, ոչ ազատքն առաքեալ եմ. 1
ոչ առաքեալքն զՏէր մեր ՅՍ ՔՍ տեսի, ոչ
ապա

ԳԼ. Ը. (1) Օրինակ Գ. Վն զոհելոցն կռոցն: (1) Բազում. Գիտութիւն ունիմք: (2) Ոմանք. Ըստ արժանն էր գիտել: (3) Օրինակ մի. Ծանուցեալ նմա: (4) Ոմանք. Կերակրոցն զոհելոյ ... բայց 'ի միոյն: (5) Ոմանք. Որպէս են աստուածք: (6) Ոմանք. Այլ մեր մի է Ած ... եւ մեք նովաւ. եւ մի է Տէր ՅՍ: (6) Յոմանս գիրս. Եւ մեք 'ի նա, եւ մի Տէր ՅՍ ՔՍ, որով ամն եւ մեք նովաւ: (7) Ոմանք. Ոչ յամենեսին. եւ խիղճ մտացն նոցա: (8) Ոմանք. Պակասեսցուք ինչ, եւ ոչ եթէ ուտիցեմք առաւելումք ինչ: (9) Բազում. Լինիցի տկարացն: (10) Ոմանք. Ոչ զգոյշ խիղճ մտաց: (10) Ոմանք. Տկարութիւն պղծեալ ... անդրէն շինի: (12) Բազում. Եւ այնպէս յանցեալ: (13) Ոմանք. Թէ կերակուր զեղբայրս իմ գայթ:

2 առաքելութեան գործ իմ դուք էք 'ի Տէր : * Թէպէտ և այ-
լոց չիցեմ առաքեալ, այլ գէթ ձեզ եմ. զի կնիք իսկ
3 առաքելութեան իմոյ դուք էք 'ի Տէր : * Իմ պատասխանիք
4 առ զիս հարցանողսն այս է : * Մի թէ ոչ ունիցիմք իշ-
5 խանութիւն ուտել և ըմպել : * Մի թէ ոչ ունիցիմք իշխա-
5 նութիւն զքոյր կին շրջեցուցանել ընդ մեզ. որպէս և այլ-
6 ք առաքեալքն, և եղբարքն Տեառն, և Կեփաս : * Եթէ միայն
ես և Բառնաբաս ոչ ունիցիմք իշխանութիւն չգործել
7 ինչ : * Ո՞ր ոք երբէք զինուորեսցի իւրովք թոշակօք. ո՞
ոք տնկեսցէ այգի՝ և 'ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ ոք ա-
8 րածեսցէ հօտ՝ և 'ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ : * Մի
թէ ըստ մարդկութեա՞ն խօսիցիմ զայս. կամ թէ և օրէնք
9 զայս ոչ ասիցեն : * 'Ի մովսիսի իսկ օրէնսն գր-
եալ է. մի կապեսցես զբերան եզին կալոտւոյ : մի-
10 թէ վասն եզանց ինչ փոյթ էր այն : * ոչ ապաքէն վասն մեր ա-
սէ. քանզի վասն մեր գրեցաւ : զի յուսով պարտի որ վար-
էն՝ վարել. և որ կասէ՝ յուսով վայելել :
11 * Եթէ մեք 'ի ձեզ զհոգեւորսն սերմանեցաք, մեծ ինչ
12 է՝ եթէ 'ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք : * Եթէ այլ-
ք զձերում իշխանութեանդ վայելեն, ոչ առաւել ևս մեք : այլ
ոչ 'ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս. բայց ամե-
նայն ինչ համբերեմք, զի մի խափան ինչ լինիցիմք աւետարա-
13 նին Քրիստոսի : * Ո՞չ գիտէք՝ եթէ որ 'ի տաճարին գործեն, 'ի
տաճարէ անտի ուտեն : և որ սեղանոյն պաշտօնեայք
14 են, 'ի սեղանոյն անտի վայելեն : * Նոյնպէս և Տէր հր-
ամայեաց որոց զաւետարանն աւետարանիցեն, յաւե-
15 տարանէ անտի կեալ : * Բայց ես և ոչ զմի ինչ յայս-
ցանէ արկի 'ի գործ, և ոչ գրեցի զայս, զի ինձ այս-
պէս

Գրչ. Թ. (2) Ոմանք. Եւ կնիք իսկ առա": (3) Ոմանք. Որ
զիս հարցանեն": (5) Ոմանք. Զքոյր և զկանայս : (5) Ոմանք.
Եւ եղբարքն Տեառն : Ոսկ. Տէր Գրիգոր ... համաձայն ...
... եղբարքն Տեառն, և 'ի լուսոյ": Նշանակէ. Որդիք յովսէ-
փայ՝ ... զլուխ եղբարց, յակոբոս, սիմոն, յուդաս :
... օրինակ ... ... զլուխ եղբարց.
և այլ օրինակ մի Գրէ զլխաւոր եղբարց : (6) Ոմանք. Ոչ
ունիցիմք իշ": Ոսկ. Չունիցիմք իշխանութիւն գործել :
(7) Ոմանք. Ո՞ երբէք զինուորեսցի, կամ. զինուորեսցէ
իւ"... 'ի պտղոյ այգւոյն ոչ : (8) Ոմանք. Մի թէ օրէնքն
զայն ոչ ասացին : (9) Ոմանք. 'Ի մովսեսի իսկ յօրէնս
գր": (10) Օրինակ մի. Վասն մեր իսկ գր": (11) Ոմանք. Զհո-
գեւորն սերմն": (12) Օրինակ մի. Վայելեն, որչափ ա-
ռաւել : Ոսկ. Ընդէր ոչ առաւել ... զի մի խա-
փանիչք լինիցիմք աւետարանին քո : (13) Ոմանք. Եթէ
որ 'ի տաճ"... պաշտօնեայքն են : (15) Ոմանք. Ինձ

Digitized by Google

այնպէս ինչ լինիցի: լաւ է ինձ մեռանելով մեռանել, և
ոչ զի զպարծանս իմ ոք ընդունայն համարիցի: * Զի 16
եթէ աւետարանեմ, ոչինչ են ինձ պարծանք. քանզի
հարկ 'ի վերայ կայ. բայց վայ է ինձ թէ ոչ աւետա-
րանեմ: * եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ. 17
և եթէ ակամայ, տնտեսութիւն յանձն է ինձ: * Եւ 18
արդ՝ զի՞նչ վարձք իցեն ինձ, եթէ յաւետարանելն ձրի
տաց զաւետարանն, զի մի՛ վարեցից իմ իշխանութեամբ
իմով յաւետարանին անդ: * Քանզի ազատ էի յամե- 19
նայնէ, և ամենեցուն զանձն 'ի ծառայութիւն կացու-
ցի, զի զբազումս շահեցայց: * Եղէ ընդ հրէայսն իբրև 20
զհրէայ, զի զհրէայսն շահեցայց: * Եղէ ընդ օրինօք, 21
իբրև զայնոսիկ որ ընդ օրինօքն էին. իբրև ոչ եթէ ը
օրինօքն էի, այլ զի որ ընդ օրինօքն իցեն՝ և զնա՛ շա-
հեցայց: ընդ անօրէնս եղէ իբրև զանօրէն. իբր ոչ ե-
թէ անօրէն ինչ էի յԱյ, այլ ընդ օրինօքն քՍի. զի շա-
հեցայց զանօրէնսն: * Եղէ ընդ տկարս իբրև զտկար, 22
զի զտկարսն շահեցայց: ընդ ամենայնի ամենայն եղէ,
զի թերևս ապրեցուցից զոմանս: * Զայս ամենայն առնեմ 23
Գ Է վն աւետարանին, զի կցորդ եղէց նմա: * Ո՞չ գիտէք 24
եթէ որ յասպարիսին ընթանան, ընթանան ամենե-
քեան ընթանան. բայց մի ոք առնու զյաղթութիւն. այն-
պէս ընթացարո՛ւք՝ զի հասանիցէք: * Ամենայն որ պա- 25
տերազմի, յամէ ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի
պսակն առնուցուն, և մեք զանեղծանելին: * Արդ՝ ես 26
իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յանյայտս այնպէս
մրցիմ, որպ ոչ թէ զհողմս ինչ կոծիցեմ: * այլ ճնշեմ 27
զմարմինս իմ, և հնազանդեցուցանեմ. զի գուցէ՞ որ
այլոցն քարոզեցի՛ ես ինքն անպիտան գտանիցիմ:

Գ Լ.

այնպէս ինչ ... ընդունայն համարիցի: (16) Ոմանք. Զի թէ աւետարան"... եթէ ոչ աւետարան": (18) Ոմանք. Վարձք են ինձ: (18) Բ՛ՏՆ. Զի մի վերծիցիմ ինչ: (19) Ոմանք. 'ի ծառայութիւն կացու": (20) Ոմանք. Ընդ հրէայս իբրև զհրէայսն: (21) Ոմանք. իբր ոչ եթէ ընդ օրինօք էին, այլ զի և որ ... անօրէն ինչ էի այ. այլ ընդ օրինօք քՍի: (24) Ոմանք. Ընթանան ամենեքեան ընթա"... առնու զյաղթութիւն. այնպէս ընթա": (25) Ոմանք. Յամէ ժուժկալ լիցի. կամ, ժուժկալեալ լինի ... զանեղծութեն: (26) Ոմանք. Այլ ես այնպէս ... որպ եթէ ըզհողմս ինչ կոծիցեմ: Ոմանք տեղւոջ. Ոչ որպ թէ զհող": (26) Ա՛Յ Գրչագիրք համաձայն Միջոսի 'ի լուսան" այսր համարոյ նշանակէն. Ամանիկեցի է կանոն: (27) Ոմանք. Զմարմին իմ.. զի մի գուցէ.. ես ինքնին անպիտան:

Digitized by Google

ԳԼ. Ժ.

1 Ո՛չ կամիմ եթէ անգէտ իցէք եղբարք, զի հարքն մեր
ամենեքին ընդ ամպովն էին. եւ ամենեքին ընդ ծովն
2 անցին. * եւ ամենեքեան 'ի Մովսէս մկրտեցան յամպն
3 եւ 'ի ծովն. * եւ ամենեքին զնոյն զհոգեւոր զկերակուրն
4 կերան. * եւ ամենեքին զնոյն զհոգեւոր ըմպելին ար-
բին, զի ըմպէին 'ի հոգեւոր վիմէն որ երթայր զհետ-
5 նոցա. եւ վէմն էր Քս: * Այլ ոչ եթէ ընդ բազում 'ի
նոցանէ հաճեցաւ Ած. քանզի տապաստ անկան յանա-
6 պատի անդ: * Եւ այն օրինակաւ լինէր վն մեր. զի մի
լիցուք ցանկացողք չարեաց, որպէս նոքայն ցանկացան:
7 * Եւ մի կռապաշտք լինիցիք՝ որպէս ոմանք 'ի նոցանէ, որպէս
եւ գրեալ է. Նստաւ ժողովուրդն ուտել եւ ըմպել՝ եւ
8 յարեան 'ի խաղալ: * Եւ մի պոռնկեսցուք, որպէս ո-
մանք պոռնկեցան 'ի նոցանէ՝ եւ անկան 'ի միում ա-
9 ւուր քսան եւ չորք հազարք: * Եւ մի փորձեսցուք զՔս.
որպէս ոմանք 'ի նոցանէ փորձեցին, եւ յօձից անտի
10 սատակեցան: * Եւ մի տրտնջեսցուք. որպէս ոմանք 'ի
նոցանէ տրտնջեցին, եւ կորեան 'ի սատակչէ անտի:
11 * Այլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա.
բայց գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս վախճանք յա-
12 ւիտենիցն եհաս: * Այսուհետեւ որ համարիցի հաստ- գ. գ.
13 տատուն կալ, զգոյշ լիցի գուցէ անկանիցի: * Փոր-
ձութիւն 'ի ձեր վերայ ոչ է եկեալ՝ բայց 'ի մարդկանէ.
այլ հաւատարիմ է Ած, որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձու-
թիւն աւելի քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փոր-
14 ձութեանն եւ զելսն, զի համբերել կարասջիք: * Վասն
15 որոյ սիրելիք իմ փախերուք 'ի կռապաշտութենէ: * Իբ-
րեւ ընդ իմաստնոց խօսիմ. ընտրեցէք ձեզէն զոր աս-
16 եմս: * Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ոչ ապա-
քէն հաղորդութիւն է արեանն Քսի. հացն զոր բե-
կանեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քսի:

* զի

Գլ. Ժ. (1) Ոմանք. Եղբարք եթէ ոչ"․․ ամենեքեան
Հ ամպովս էին․․ Հ ծովս անցին: (3) Ոմանք. Ամենե-
քեան զնոյն հոգեւոր կերան"․․ զնոյն հոգեւոր ըմպ":
(4) Ոմանք. Վէմն էր Քս: (6) Ոմանք. Որպէս եւ նոքայն ցան":
(7) Բազք. Եւ մի կռապաշտք լինիջիք: (7) Օրինակ մ.
Նստաւ ժողովուրդն: յուտել եւ յըմպել: (9) Ոմանք. 'ի
նոցանէն փորձեցին: (11) Ոմանք. Յաւիտենից եհաս:
(12) Օրինակ մ. Որ կարծիցի հաստատուն կալ, զգոյշ
լինիցի: (13) Ոմանք. 'ի վր ձեր ոչ է եկեալ: բայց 'ի
մարդկանէ․․․ զկարն ձեր․․ եւ զելս, զի համ": (14) Օ-
րինակ մ. Սիրելիք փախերուք 'ի պոռնկութենէ:

Digitized by Google

* զի մի հաց՝ մի մարմին եմք բազումքս. զի ամենե-
քին 'ի միոջէ հացէ անտի վայելեմք: * Տեսէք զԻէլն 18
ըստ մարմնոյ. ոչ ապաքէն որ ուտեն 'ի զոհիցն, հա-
ղորդք են սեղանոյն: * Իսկ արդ՝ զի՞նչ ասեմ, եթէ 19
զոհեալն իցէ՞ ինչ. և կամ կուռքն իսկ՝ իցէ՞ն ինչ:
* Այլ զոր զոհենն հեթանոսք, դիւաց՝ և ոչ Այ զո- 20
հեն: ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել. քանզի
ոչ կարէք զբաժակն Տն ըմպել՝ և զբաժակն դիւաց:
* և ոչ կարէք 'ի սեղանոյ Տն վայելել՝ և 'ի սեղանոյ 21
դիւաց: * Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տն. մի թէ 22
զօրաւորագոյնք իցեմք քան զնա: * Ամենայն ինչ ինձ մարթ 23
է, այլ ոչ ամ ինչ օգուտ է. ամ ինչ ինձ մարթ է,
այլ ոչ ամ ինչ շինէ: * Մի ոք զանձինն և եթ խնդրես- 24
ցէ՝ այլ և զընկերին: * Ամենայն ինչ որ 'ի մսավաճա- 25
ռոցի վաճառի, կերայք՝ և մի խնդրէք վս խղճի մտաց.
ԺԲ * զի Տն է երկիր լրիւ իւրով: * Եթէ ոք կոչեսցէ ըզ- 26
ձեզ յանհաւատից, և կամիցիք երթալ. զամ ինչ որ առ- 27
աջի դնիցի, կերայք՝ և մի խնդրէք վս խղճի մտաց.
* Ապա թէ ոք ասասցէ ձեզ՝ թէ այդ զոհեալ է, մի 28
ուտիցէք վս նր՝ որ ցուցանողն եղև, և վս խղճի մտացն:
* Այլ զխիղճ մտացն ասեմ, ոչ զիւրն, այլ զընկե- 29
րին: Իսկ ընդէ՞ր ազատութիւն իմ դատիցի յայլ-
լոյ խղճէ մտաց: * Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր 30
հայհոյիցիմ, վասն որոյ ես գոհանամ: * Արդ՝ եթէ 31
ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ և գործիցէք. զա-
մենայն ինչ 'ի փառս Այ արասջիք: * Առանց գայթագ- 32
ղութեան՝ գտանելոյ հրէից և հեթանոսաց՝ լինիջիք, և ե-
կեղեցւոյն Այ: * Որպէս և ես ամենևին ամենեցուն 33
հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին օգուտ, այլ ըզ-
բազմաց զի ապրեսցին:

Գլ.

---

(18) Ոմանք. Զիէլ ըստ մարմնոյն... հաղորդք են սեղ": (19) Ոմանք. Ասեմ թէ զոհեալն ի".. և կմ թէ կուռքք իսկ: (20) Ոմանք. Այլ զոր զոհեն հե": (21) Ոմանք. Եւ 'ի սեղանոյն դի": (22) Ոմանք. իցեմք մեք քան զնա: (23) Ոմանք. Յօգուտ է: (23) Օրինակ մի. Ամ ինչ օգտէ: (24) Ոմանք. Մի ոք զանձն և եթ խնդրեսցէ: (24) Յօ-րինակին միում. Այլ և զընկերին: (25) Այլք. կերայք և մի խնդրէք վս խղ": (27) Բազումք. Եթէ ոք կոչէ զձեզ: (27) Ոմանք. Առաջի դնիցէ. կամ, դնիցեն: Որք ասեն. առաջի ձեր դնիցի: (28) Ոմանք. Ապա եթէ ոք ասիցէ ձեզ եթէ: (29) Ոսկան. Յայլոց խղճէ մտ": (30) Ոմանք. Ընդէր հայհոյիցիմ: (31) Ոմանք. Եթէ ուտիցէք և ըմպի-ցէք: (31) Ոսկան. Եթէ զինչ և առնիցէք, զամ ինչ: (32) Ոմանք. Լինիջիք, և եկեղեցւ":

Digitized by Google

ԳԼ. ԺԱ.

1 Նմանօղք ինձ եղերուք, որպէս և ես Քի։
2 * Գովեմ զձեզ՝ զի զամ ինչ զիմ յիշէք. և որպէս Զ
3 աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք։ * Կամիմ ԴԴ
զի գիտասջիք դուք. եթէ ամենայն առն գլուխ Քս է, և գլ-
4 լուխ կնոջ այր, և գլուխ Քի Այ։ * Ամենայն այր
յորժամ յաղօթս կայցէ, կամ մարգարէանայցէ, և զգլ-
գլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր։
5 * Եւ ամ կին յորժամ յաղօթս կայցէ, կամ մարգարէա-
նայցէ բացաւ գլխով, յամօթ առնէ զգլուխն իւր. զի
6 այնպէս համարի՝ թէ գերծեալ իցէ։ * Զի եթէ ոչ
ծածկեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա թէ անպ-
7 ատշաճ է կնոջ փոքրել կամ գերծուլ՝ ծածկեսցի։ * Այր
մարդ ոչ պարտի ծածկել զգլուխ, զի պատկեր և փառք
8 Այ է. իսկ կին՝ փառք առն իւրոյ։ * Զի ոչ եթէ այր
9 ՚ի կնոջէ է, այլ կին յառնէ։ * Քանզի ոչ իսկ հաստա-
10 տեցաւ այր վս կնոջ, այլ կին վս առն։ * Վս այսորիկ
11 պարտի կինն շուք զնել գլխոյն վս հրեշտակաց։ * Բայց
12 ոչ կին առանց առն, և ոչ այր առանց կնոջ ՚ի Տր։ * Զի
որպ կին յառնէ, նոյնպէս և այր ՚ի կնոջէ. բայց ամ յԱյ։
13 * Առ դուք ձեզէն տեսէք զերդաւ. վայելուչ է կնոջ
14 մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Այ։ * և ոչ բնու-
թիւն իսկ ուսուցանէ զձեզ. զի այր եթէ գիսաւոր է,
15 անարգանք են նմ։ * Բայց կին եթէ գիսաւոր է, փառք
են նմա. զի գէսք փոխանակ զգեստու տուեալ են նմ։
16 * Ապա թէ ոք կամի հակառակող լինել, մեք շունեմք
այնպիսի սովորութիւն, և ոչ եկեղեցիքն Այ։ ԺԸ
17 * Այլ զայս պատուիրեմ, ոչ որպ թէ գովիցեմ, զի ոչ Է
18 ՚ի լաւ անդր՝ այլ ՚ի վատթարն նկրտիք։ * Նախ՝ յոր-
ժամ ՚ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ եթէ հեր-
ձո

Գլ. ԺԱ. (1) Ոմանք. Նմանողք եղերուք ինձ. (2) Օրինակ մի. Գովեմ զձեզ կարծեմթէ յիշիցէք. զի (2) Ոմանք. Զաւանդութիւնս ունիցիք։ (3) Ոմանք. Թէ առն ամն։ (4) Ոմանք. Յաղօթս կայցէ... ծածկեալ ունիցի։ (5) Ոմանք. Եւ կամ մարգարէ... բացաւ գլխով... զգլուխն իւր։ (5) Օրինակ մի. Զի այնպէս համարեալ է։ (6) Ոմանք. Զի թէ ոչ ծածկեսցի կինն... ապա եթէ անպատշ։ (7) Ոմանք յաւելուն. Ծածկել զգլուխ իւր... առն իւրոյ է։ (9) Ոմանք. Քզի և ոչ հաստ։ (11) Ոմանք. Բայց կին ոչ առանց։ (12) Ոմանք. Ամենայնն յԱյ։ (13) Ոմանք. Տեսէք զերդաւն։ (14) Ոմանք. Ուսուցանիցէ զձեզ։ (15) Ոմանք. Բայց կինն եթէ։ (16) Ոմանք. Ապա եթէ կամի ոք։ (18) Ոմանք. Ժողովիք յեկեղեցին։

Digitized by Google

ձուածք գոն 'ի ձեզ. եւ սակաւ ինչ հաւատայի։ * Բայց 19
եւ հերձուածք լինելոց են 'ի ձեզ. զի որ ընտիրքն ի-
ցեն 'ի ձեզ՝ երեւեսցին։ * Եւ արդ՝ 'ի ժողովելն ձեր 20
'ի միասին, ոչ է առաւն տն ձեզ տեղի հաց ուտելոյ։ * Զի 21
իւրաքանչիւրոք զիւր ընթրիս յառաջանայ ուտել, եւ
ոմն քաղցեալ, եւ ոմն արբեալ։ * Միթէ տունս ոչ ու- 22
նիցիք ուտելոյ եւ ըմպելոյ. եթէ զեկեղեցեաւն այ ար-
համարհէք, եւ յամօթ առնէք զչքաւորսն։ զի՞նչ ասա-
ցից, գովեցի՞ց զձեզ. յայդմ ոչ գովեմ։ * Զի ես ըն- 23
կալայ 'ի տնէ, զոր եւ ձեզն աւանդեցի, եթէ տր յս
'ի գիշերին յորում մատնէր, առ հաց. * գոհացաւ. 24
եբեկ եւ ասէ. այս է իմ մարմին որ վս ձեր. զայս արա-
րէք առ իմոյ յիշատակի։ * Նոյնպէս եւ զբաժակն յետ 25
ընթրեացն, առ եւ ասէ. այս բաժակ նոր ուխտ է 'ի
իմում արեանս. զայս արարէք քանիցս անգամ թէ ըմ-
պիցէք՝ առ իմոյ յիշատակի։ * Քանիցս անգամ թէ ու- 26
տիցէք զհացս զայս՝ եւ զբաժակս ըմպիցէք, զմահն տն
պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա։ * Այսուհետեւ՝ որ 27
ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս տն անարժա-
նութբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն տն։ * Փոր- 28
ձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա 'ի հացէ անտի կե-
րիցէ, եւ 'ի բաժակէն արբցէ։ * Զի որ ուտէ եւ ըմպէ 29
անարժանութբ, դատաստանս անձին իւրում ուտէ եւ
ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն տն։ * Վս այնորիկ իւիք 30
են 'ի ձեզ բազում հիւանդք եւ տկարացեալք. եւ ննջեն եւս
այն են, որ եւ ննջեցեալքն իսկ իցեն։ * Զի եթէ զանձ- 31
ինս քննեաք; ապա ոչ դատապարտեաք։ * Եւ եթէ 32
դատիմք՝ 'ի տնէ խրատիմք. զի մի ընդ աշխարհի դա-
տապարտեսցուք։ * Այսուհետեւ եղբարք, յորժամ 33
'ի մի վայր ժողովիցիք ուտել, միմեանց մնասջիք։ * Ա- 34
պա թէ ոք քաղցեալ իցէ, 'ի տան իւրում կերիցէ. զի
մի

---

(19) Ոմանք. Զի որ ընտիրքն են 'ի։ Յայս համարձակ 'ի լուս''
նշանակէին. Աւանդեցի. կՏառաջիկայն էր կանխուն։ (20) Ո-
մանք. Ոչ է տաւնն տն։ (22) Բազմ. Ուտելոյ, կամ ըմպելոյ։
(22) Ոմանք. Զեկեղեցեաւն այ արհամարհիցէք... զինչ
ասասցից ձեզ։ (24) Ոսկան յաւելու. Եւ ասէ. առէք եւ
կերայք, այս է... որ վս ձեր բեկանի. զայս ա''։ (24) Ո-
մանք. Այս է մարմին իմ։ (25) Ոմանք. Եթէ ըմպիցէք։
(26) Ոմանք. Եթէ ուտիցէք.. կամ զբաժ''.. զմահ տն։
(27) Ոմանք. Որ ուտիցէ զհացս զայս... պարտական
լիցի մարմնոյ եւ արեան տն։ (29) Ոմանք. Դատաստան ան-
ձին իւրոյ ու''.. եւ ոչ խտրէ։ (30) Ոմանք. Այնորիկ են
որ ննջեցեալք իսկ են։ (32) Ոմանք. Ընդ աշխարհիս։
(33) Օրինակ մի. 'Ի մի վայր գայցէք յուտել։

Digitized by Google

մի՛ ՚ի դատապարտութիւն ժողովիցիք: Բայց զայլ ինչ յոր-
ժամ եկից, յայնժամ պատուիրեցից:

Գլ. ԺԲ.

1 Այլ վասն հոգեւորացն եղբարք՝ ոչ կամիմ եթէ տգէտ Ը
2 իցէք: * գիտէք իսկ, զի մինչ հեթանոսքն էիք, առ Եկ
3 կուռս անմռունչս ուր երթայիք և գայիք: * Վասն ո-
րոյ ցուցանեմ ձեզ. զի ոչ ոք հոգւովն Այ խօսի, և ասի-
ցէ թէ նզովեալ է Յս. և ոչ ոք կարէ ասել՝ Տր Յս, ե-
4 թէ ոչ հոգւովն սրբով: * Թէպէտ և բաժինք շնոր-
5 հաց են՝ այլ հոգի նոյն է: * եթէ բաժինք պաշտա-
6 մանց են, այլ Տր նոյն է: * եթէ բաժինք յաջողու-
թեանց են, այլ Ած նոյն է՝ որ աջողէ զամ յամենայնի:
7 * Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութի
8 հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ: * Ումեմն ՚ի հոգ-
ւոյն տուեալ է բան իմաստութե. այլում բան գի-
9 տութե ըստ նմին հոգւոյ. * միւսումն հաւատք՝ նովին
հոգւով. այլում շնորհս բժշկութեանց նովին հոգւով.
10 * այլում աջողութիւնք զօրութեանց. այլում մարգարէու-
թե՛. այլում ընտրութի՛ հոգւոց. այլում ազգք լե-
11 զուաց. այլում թարգմանութիւնք լեզուաց: * այլ զայս
ամ աջողէ մի և նոյն հոգի, և բաժանէ՛ իւրաքանչիւր
12 ում և կամի: * Որպէս մարմին մի է, և անդամս բազումս Եգ
ունի. և ամ բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին է.
13 նոյնպէս և քս: * քանզի միով հոգւով մեք ամենեքեան
՚ի մի մարմին մկրտեցաք. եթէ հրեայք, եթէ հեթա-
նոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ամենեքին զմի հո-
14 գի արբաք: * Քանզի մարմին ոչ մի անդամ է, այլ
15 բազում: * եթէ ասիցէ ոտն, զի չեմ ձեռն՝ չեմ ՚ի
16 մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի: * և
եթէ ասիցէ ունկն, զի չեմ ակն՝ չեմ ՚ի մարմնոյ ան-
17 տի, ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի: * եթէ ամ մար-
մինն

Գլ. ԺԲ. (2) Ոմանք. Հեթանոսք էիք՝ առ կուռսն: (3) Օրինակ մի. ՚ի հոգի Այ խօսի... և ոչ ոք ասիցէ Տր Յս, եթէ ոչ ՚ի հոգի Սբ: (6) Ոմանք. Աջողութեանց են... որ յաջողէ: (9) Ոմանք. Շնորհք բժշկութե նովին: (10) Ոմանք. Յաջողութիւնք զօ".. մարգարէութիւնք.. ընտրութիւնք հոգւոց, այլում ազգս լեզուաց.. թարգմանութե լեզ": (11) Ոմանք. Յաջողէ մի և: (12) Բոլոր. Մի մարմին են: (13) Ոմանք. Մեք ամենեքին: (15)(16) Աստանօր Բնաբանս օրինակս մեր՝ ըստ նախնի եղանակի գրչաց ասին, ասենք երկիցս եդեալ, ոչ այնու չիցէ, այլ մեք ըստ սովորականին եդաք — ասացին՝ այնու: (17) Ոմանք. Ամ մարմին ակն.. ունկնն.. լսելիք էր, ուր էր:

Digitized by Google

ամն ակն էր, ուր էր ունկն։ Եւ եթէ ամ լսելիք էին,
ուր էին հոտոտելիքն։ * Բայց արդ՝ ած եդ զանդամսն՝ 18
զմի մի իւրաքանչիւր ՚ի նոցանէն ՚ի մարմնին՝ որպէս և
կամեցաւ։ * Ապա թէ էր ամ մի անդամ, ուր էր մար- 19
մինն։ * Բայց արդ՝ անդամք բազումք են, և մարմին 20
մի։ * Ոչ կարէ ակն ասել ցձեռն. թէ չես ինձ պիտոյ, 21
և կամ դարձեալ գլուխն ցոտսն՝ թէ չէք ինձ պիտոյ։
* Այլ առաւել որ թուին անդամք մարմնոյն՝ թէ տը- 22
կարագոյնք իցեն, կարևորք են. * և որ թուին թէ 23
անարգագոյնք իցեն մարմնոյն, այնոց առաւել պատ-
տիւ առնեմք. և ամօթոյքն մեր առաւել ևս պարկեշ-
տութիւն ունին։ * Իսկ պարկեշտագոյնք մերոց չէ ինչ պիտոյ. 24
Բայց ած խառնեաց զմարմինն, և նուաղին առաւել
եւ պատիւ ետ. * զի մի իցեն հերձուածք ՚ի մարմնի 25
անդ, այլ զի նոյնք զմիմեանց հոգասցեն անդամքն։
* Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանին ամ ան- 26
դամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամն, խըն-
դան ամ անդամքն ընդ նմա։ * Այլ դուք մարմին քի 27
ՎԶ էք, և անդամք յանդամոց նր։ * Եւ զորս եդն ած 28
յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ ըզ-
մարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս,
ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լե-
զուաց, թարգմանութիւնս լեզուաց։ * Միթէ ամենե- 29
քին առաքեալք իցեն. միթէ ամենեքին մարգարէք
իցեն. միթէ ամենեքին վարդապետք իցեն. միթէ ա-
մենեքին զօրութիւնք իցեն. * միթէ ամենեքին շնորհս 30
բժշկութեան ունիցին. միթէ ամենեքին ՚ի լեզուս խօ-
սեսցին. միթէ ամենեքին թարգմանիցեն։ * Բայց նա- 31
խանձաւորք լերուք շնորհացն, որ լաւն են։ Այլ ևս
առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

ԳԼ.

---

(18) Ոմանք. ՚ի նոցանէ ՚ի մարմնին։ (19) Ոմանք. Ապա եթէ էր.. ուր էր մարմինն։ (20) Ոմանք. Բազում են։ (21) Ոմանք. Եթէ չես... գլուխ ցոտս, եթէ։ (23) Ոմանք. Թէ անարգագոյնք են... պարկեշտութիւն ունիցին։ (24) Ոմանք. Իսկ պարկեշտագոյնքն մեր չեն ինչ պիտոյ։ (25) Ոմանք. Հոգասցեն ան։ (26) Ոմանք. Փառաւորի ինչ մի։ (27) Ոմանք. Մարմին քի էք.. անդամոց նորա։ (28) Ոմանք. Եդ ած յեկեղե.. զառաքեալսն... շնորհս բժշկութեան։ (29) Այս ոմանց չիք. Վարդապետք իցեն, միթէ ամենեքին զօրութիւնք իցեն։ (30) Ոմանք. ՚ի լեզուս խօսիցին.. թարգմանեսցեն։ (31) Ոմանք. Նախանձաւոր լերուք, որ լաւ են։

Digitized by Google

Գլ. ԺԳ.

1 Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց, Եզ
եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ որ հնչէ-
2 չէ, կամ իբրեւ զծնծղայս որ ղօղանջիցեն։ * Եւ եթէ
ունիցիմ զմարգարէութի՛, եւ գիտիցեմ զխորհուրդս ամ՛.
եւ զամ՛ գիտութի՛. եւ եթէ ունիցիմ զամ՛ հաւատս՝ մին-
չեւ զլերինս փոփոխելոյ, եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։
3 * Եւ եթէ ջամբիցեմ զամ՛ ինչս իմ աղքատաց, եւ մատ-
նիցեմ զմարմինս իմ յայրումն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ-
4 ինչ օգտիմ։ * Սէր՝ երկայնամիտ է, քաղցրանայ. սէր
5 ոչ նախանձի, ոչ ամբարտաւանի, ոչ հպարտանայ. * ոչ
յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար.
6 * ոչ խնդայ ընդ անիրաւութի՛, այլ խնդայ ընդ ստու-
7 գութի՛. * Ամ՛ տանի. ամ՛ հաւատայ. ամենեւին յու-
8 սայ. ամ՛ համբերէ։ * Սէր՝ ոչ երբէք անկանի. եթէ
մարգարէութիւնք են՝ խափանեսցին. եթէ լեզուք՝ լռես-
9 ցեն. եթէ գիտութի՛ խափանեսցի։ * Քանզի փոքր'ի
10 շատէ գիտեմք, եւ փոքր'ի շատէ մարգարէանամք։ * Այլ
յորժամ եկեսցէ կատարումն, փոքր'ի շատէն խափա-
11 նեսցի։ * Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, իբ- ԶԵ
րեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի. այլ յոր-
12 ժամ եղէ այր, զտղայութիւն'ի բաց խափանեցի։ * Այժմ
տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ
դէմ յանդիման. այժմ ճանաչեմ ես փոքր'ի շատէ,
այլ յայնժամ գիտացից՝ որպէս եւ նոյն ծանեաւ զիս։
13 * Բայց արդ՝ մնան հաւատք, յոյս, սէր, այսոքիկ երե-
քեան. եւ մեծ քան զամ՛՝ սէր է։

Գլ. ԺԴ.

1 Զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք հո-
գեւորացն, առաւել զի եւ դուք մարգարէանայ-
2 ցէք։ * Զի որ խօսի'ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօ-
սի, այլ ընդ Այ։ զի ոչ ոք է որ լսէ, բայց հոգւով խօ-
սի.

Գլ. ԺԳ. (1) Ոմանք. Եղէ որպէս պղինձ.. կամ որպէս զծնծղայս որ ղօղանջեն։ (2) Ոմանք. Մարգարէութի.. եւ զամ գիտութիւնս (3) Ոմանք. Զմարմին իմ յայր"։ (4) Բ.Ղ. Ոչ ամբարտաւանէ։ (5) Ոմանք. Ոչ խնդրէ զիւրն։ (6) Ոմանք. Ընդ ստուգութե։ (8) Ոմանք. Մարգարէութի ի-ցեն.. լեզուք, լռեսցին, եթէ գիտութիւնք խափանեսցին։ (10) Ոմանք. Կատարումն։ (11) Ոմանք. Զտղայութիւն 'ի բաց խա"։ (12) Ոմանք. Այժմ տեսանեմ իբ"։ (13) Ոմանք. Բայց մնան... քան զնա սէր է։
Գլ. ԺԴ. (1) Ոմանք. Հոգեւորացն առաւել։ (2) Ոմանք.

Digitized by Google

սի խորհուրդս ։ * Իսկ որ մարգարէանայն, մարդկան 3
խօսի շինուած և մխիթարութիւն և սփոփանս ։ * Որ խօ_ 4
սի 'ի լեզուս, զանձն իւր շինէ. և որ մարգարէանայ,
զեկեղեցին շինէ ։ * Կամիմ զի ամենեքին դուք 'ի լե_ 5
զուս խօսիջիք, առաւել զի մարգարէանայցէք. զի լաւ_
է որ մարգարէանայն, քան զայն որ 'ի լեզուսն խօսի_
ցի. բայց եթէ թարգմանեսցէ, զի եկեղեցին շինուած
ժԶ առնուցու ։ * Բայց այժմ եղբարք, եթէ եկից առ ձեզ 6
'ի լեզուս խօսելով. զինչ օգուտ լինիցիմ ձեզ, եթէ ոչ
խօսիցիմ, կամ յայտնութեամբ, կամ գիտութեամբ, կամ մար_
գարէութեամբ, կամ վարդապետութեամբ ։ * Այնպէս՝ որպէս 7
անշնչիցն ձայն տայցեն, եթէ փող և եթէ քնար ։ զի
եթէ քնարութիւն ինչ բարբառոյն չտայցեն, զիարդ ճա_
նաչիցի փողոյն հարկանել՝ կամ քնարին հնչել ։ * Քան_ 8
զի եթէ խառնաձայն արձակեսցէ փողն, ո՞վ պատրաս_
տեսցի 'ի պատերազմ ։ * Նոյնպէս և դուք՝ եթէ լե_ 9
զուօք ոչ նշանակեսջիք զբանն, զիարդ ճանաչիցի խօ_
սքն. զի լինիցիք այնուհետև իբրև ընդ օդս խօսեցեալք ։
* Զի այնչափ ազգք ձայնից են յաշխարհի, և ոչինչ 10
է՝ անձայն ։ * Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն 11
ձայնին, լինիցիմ այնմ որ խօսիցին ընդ իս խուժ, և նա
որ խօսիցին ընդ իս՝ խուժ ։ * Նոյնպէս և դուք՝ քան_ 12
զի նախանձորդք էք հոգևորացն, վասն շինուածոյ եկեղեց_
ւոյն, խնդրեցէք զի առաւել ևս լիցիք ։ * Վասնորոյ որ 13
խօսին 'ի լեզուս, աղօթս արասցէ՝ զի և թարգմանես_
ցէ ։ * Եթէ կամ յաղօթս լեզուաւ, հոգին իմ կայ յա_ 14
ղօթս. այլ միտք իմ անպտուղ են ։ * Իսկ արդ՝ զինչ 15
իցէ. կացից յաղօթս և հոգւով. կացից յաղօթս և մը_
տօք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից և մը_
տօք ։ * Այլ թէ ոչ՝ եթէ օրհնեսցես հոգւով, որ կայ_ 16
ցէ 'ի տեղւոջ տգիտին, զիարդ ասասցէ 'ի քում գոհու_
թեանն՝ զամէնն. քանզի զոր ասեսն՝ նա ոչ գիտէ ։ * Զի 17
դու

խօսի 'ի խորհուրդս ։ (3) Ոմանք. Շինուած և խաղաղութիւն և սփո՛՛. (3) Ոսկան. խօսի 'ի շինուած և սփոփ՛՛ ։ (4) Ոմանք. Իսկ որ խօսի 'ի լե՛՛... որ մարգարէանայն ։ (4) Ոսկան. Իսկ որ մարգարէանայ ։ (5) Ոմանք. Առաւել ևս զի և մարգա՛՛... 'ի լեզուս խօսիցի. բայց եթէ թարգմանիցէ ։ (7) Ոմանք. Իսկ եթէ քնարութիւն ։ (8) Ոմանք. Արձակեսցէ փողն, ո՞վ պատրաստեսցի (10) Ոմանք. Իսկ ոչինչ անձայն է ։ (11) Ոմանք. Որ խօսին. Ոսկ. խօսեցիմ ընդ իս խուժ ։ (12) Ոմանք. Քանզի նախանձաւորք էք.. վն շինուածոյ ։ (13) Ոմանք. Զի թարգմանեսցէ ։ (15) Ոմանք. Յաղօթս հոգւով ։ (16) Ոմանք. Այլ եթէ ոչ՝ թէ օրհնեսցես... 'ի քում գոհութեանն զամէնն ։

18 զդու բարւոք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի ։ * Գոհա- ԺԳ
նամ զԱյ, վասն ամենեցուն ձեր՝ առաւել լեզուա-
19 խօսիմ ։ * այլ 'ի մէջ եկեղեցւոյն կամիմ բանս հինգ՝
մտօք խօսել, զի և զայլս խրատեցից, քան զբիւր բանս
20 լեզուաւ ։ * Եղբարք մի՛ տղայք լինիք մտօք, այլ 'ի
չարեաց տղայացարո՛ւք, և մտօք կատարեալք լինիջի՛ք ։
21 * քանզի և յօրէնս գրեալ է, եթէ յօտար լեզուս՝ և
'ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանս
22 ընդ այդմիկ, սակայն և ոչ այնպէս լուիցեն ինձ ։ * Ա-
պա ուրեմն լեզուք նշանակք վասն են ․ ոչ հաւատա-
ցելոց, այլ անհաւատից ․ իսկ մարգարէութիւն, ոչ ան-
23 հաւատից՝ այլ հաւատացելոց ։ * Արդ թէ գայցէ ե-
կեղեցին ամ 'ի մի վայր, և ամենեքին 'ի լեզուս խօսի-
ցին, և մտանիցեն անգէտք ադէտք կամ անհաւատք ․ ոչ
24 ասիցեն եթէ զի՞ մոլիք ։ * Իսկ եթէ ամենեքեան մար-
գարէանայցեն, և մտանիցէ ոք անգէտ, անհաւատ կամ
ադէտ, յանդիմանի յամենեցունց ․ և քննի յամենե-
25 ցունց, * և գաղտնիք սրտի նր յայտնի լինին ։ և ա-
պա անկեալ 'ի վերայ երեսաց՝ երկիր պագանիցէ այ,
26 և խոստովան լինիցի՝ թէ արդարև այ է 'ի ձեզ ։ * Եւ ԺԴ
արդ՝ զի՞նչ իցէ եղբարք ․ յորժամ 'ի մի վայր ժողովի-
ցիք, իւրաքանչիւրոք 'ի ձէնջ, եթէ սաղմոս ունիցի,
եթէ վարդապետութիւն ունիցի, եթէ յայտնութիւն ու-
նիցի, եթէ լեզուս ունիցի, եթէ թարգմանութիւն ու-
27 նիցի, ամ 'ի շինուած լինիցի ։ * Եթէ 'ի լեզուս ոք խօ-
սիցի, երկուք ․ և եթէ ևս աւելի, երեք, և առա մի
28 ըստ միոջէ ․ և մին թարգմանեսցէ ։ * Ապա թէ չիցէ ոք
որ թարգմանիցէ, լուռ լիցի յեկեղեցւոջն ․ ընդ միտս
29 իւր՝ և ընդ այ խօսեսցի ։ * Բայց մարգարէք երկու
30 կամ երեք խօսեսցին, և այլքն քննեսցեն ։ * Ապա թէ
այլ

(18) Ոսկան․ Զայ իմոյ վս ձեր ։ (18) Ոմանք․ Լեզուաւք խօ-
սել ։ (19) Ոմանք ․ 'Ի մէջ եկեղեցւոյ ․․ խրատեցից քան
զբիւր բանս լեզուօք ։ (20) Ոմանք․ Մի լինիք տղայք ․․․ կա-
տարեալ լինիցիք ։ (21) Ոմանք․ Եւ յօրէնսն գր"․․․ և այն-
պէս ոչ լուին" ։ (21) Ոսկան յաւելու․ Լուիցեն ինձ ասէ Տր ։
(23) Ոմանք․ Արդ եթէ գայցէ ամ եկեղ"․․․ և ամե-
նեքեան 'ի լեզուս․․․ մտանիցէ․․ ադէտս․ թէ զի՞ մո" ։
(24) Ոմանք․ Եթէ ամենեքին ։ (25) Ոմանք․ Յայտնի լի-
նի․․․ 'ի վր երեսաց ․իւրոց․․ և խոստովան լինի ։
(26) Ոմանք․ Եթէ սաղմոս ունի․ թէ վարդա"․․․ 'ի շի-
նուած լինիցի ։ (27) Ոմանք․ Խօսեսցի երկուք, և թէ ևս
առաւել երեք․․․ թարգմանիցէ ։ (28) Ոմանք․ Արդ
եթէ չիցէ․․ լուռ լիցին ։ (29) Ոմանք․ Երկուք կամ
երեք ։ (30) Ոմանք․ Արդ եթէ այլ․․ նստեցին․

[illegible]
[illegible] 31
[illegible]
[illegible] 32
[illegible] 33
[illegible] 34
[illegible]
[illegible]
[illegible] 35
[illegible]
[illegible] 36
[illegible] 37
[illegible]
[illegible] 38
[illegible] 39
[illegible]
[illegible] 40
[illegible]

ԳԼ. ԺԲ

[illegible] 1
[illegible]
[illegible] 2
[illegible]
[illegible] 3
[illegible]
[illegible] 4
[illegible] 5
[illegible] 6
[illegible]
[illegible] 7
[illegible] 8
[illegible]

---

(31) [illegible] (32) [illegible] (33) [illegible] (35) [illegible] (36) [illegible] (37) [illegible] (38) [illegible] (38) [illegible]

ԳԼ. ԺԲ. (2) [illegible] (2) [illegible] (3) [illegible] (5) [illegible] (8) [illegible]

Digitized by Google

յետոյ քան զամենեսեան՝ իբրև անդրածնի միոյ՝ երևեցաւ
9 և ինձ։ * զի ես իսկ եմ տրուպն առաքելոց, որ չեմ
իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ, զի հալածեցի
10 զեկեղեցին Այ։ * այլ շնորհօքն Այ, եմ զինչ և իցեմ.
և շնորհք նր որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն, այլ ա-
ռաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի, և ոչ եթէ
11 ես՝ այլ շնորհքն Այ որ ընդ իս։ * արդ՝ եթէ ես, և
եթէ նոքա՝ այսպէս քարոզեմք, և դուք այսպէս հա-
12 ւատացէք։ * Ապա եթէ Քս քարոզի թէ ՚ի մեռելոց
յարուցեալ է, զիարդ ասեն ոմանք ՚ի ձէնջ՝ եթէ յա-
13 րութիւն մեռելոց չիք։ * եթէ յարութիւն մեռելոց չիք.
14 ապա և Քս՝ չէ յարուցեալ։ * և եթէ Քս չիցէ յարու-
ցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր. ընդունայն են
15 և հաւատքն ձեր. * և գտանիցիմք սուտ վկայք Այ.
զի վկայեցաք զԱյ՝ եթէ յարոյց զՔս. զոր ոչն արդեւք
16 յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն։ * Իսկ եթէ մե-
17 ռեալք ոչ յառնեն, ապա և Քս՝ չէ յարուցեալ։ * և
եթէ Քս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր.
18 և տակաւին ՚ի նմին ՚ի մեղս կայցէք։ * Իսկ արդ՝ որ
19 ննջեցինն ՚ի Քս, կորեան արդեւք։ * եթէ այսու կե-
նօք միայն յուսացեալ եմք ՚ի Քս, ապա ողորմելի եմք
20 քան զամ մարդիկ։ * Այլ արդ՝ Քս յարուցեալ է ՚ի զգ
21 մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց. * քանզի մար-
22 դով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց։ * որ-
պէս Ադամաւ ամենեքին մեռանին, նոյնպէս և Քսիւ ա-
23 մենեքին կենդանասցին, * իւրաքանչիւր յիւրում կար-
24 գի. նախ՝ Քս, և ապա քնեալքն ՚ի գալստեան նր. * և
ապա կատարած։ Յորժամ տացէ ՚ի ձեռս զթագաւո-
րութիւն Այ և Հօր. յորժամ խափանեսցէ զամ իշխա-
25 նութիւն, և զամ պետութիւն և զօրութիւն։ * զի պարտ
է նմա թագաւորել, մինչև դիցէ զամ թշնամիս ՚ի ներ-
26 քոյ ոտից իւրոց։ * յետին թշնամին խափանի՝ մահ.
և

---

(10) Ոմանք. Եւ շնորհքն նր։ (11) Օրինակ մ. Ապա նոքա քա-
րոզեմք։ (12) Ոմանք. Ապա թէ Քս քարոզի եթէ։ (14) Ո-
մանք. Ընդունայն եղեն և հաւ"։ (15) Ոմանք. Եւ գտա-
նիցիմք սուտ... թէ յարոյց... ոչ յառնեն։ (17) Օրինակ
մ. Են և հաւատքն ձեր։ (17) Ոմանք. ՚ի նմին մեղս
կայք։ (18) Ոմանք. Որ ննջեցին ՚ի։ (19) Ոմանք. Կենօք
միայն։ (19) Յայլս պկսի. ՚ի Քս, ապա ողորմելի եմք։
(20) Բազմ. Պտուղ ննջեցելոց։ (21) Օրինակ մ. Քանզի
մարդով յարու. եղև մահ։ (22) Ոմանք. Ամենեքեան
մեռան"... ամենեքեան կեցցեն"։ (23) Ոմանք. Քնեալքն
՚ի Քս"։ (24) Ոմանք. Տացէ ՚ի ձեռս զթգն... պե-
տութիւն և զօրութիւնս։ (26) Ոմանք. Խափանեսցի մահն։

և զամ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա: * Այլ 27
յորժամ ասիցէ, թէ հնազանդեալ է նմա ամ, յայտ
է՝ թէ բաց յայնմանէ որ հնազանդեցոյց նմա զամ:
* այլ յորժամ հնազանդեսցի նմա ամ, յայնժամ և ինքն 28
որդի հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամ.
զի եղիցի ած ամ յամի: * Ապա թէ ոչ, զի՞նչ գոր- 29
ծիցեն որ մկրտիցին վս մեռելոց, եթէ արդարև մե-
ռեալք ոչ յառնիցեն: ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վս
նց. * ընդէ՞ր և մեք վտանգիմք յամ ժամ, * և հանապազ 30
մեռանիմք. 'ի պարծանս ձեր եղբարք, զոր 31
ունիմ 'ի քս յս. 'ի տր մեր: * Եթէ ըստ մարդոյ 'ի գա- 32
զանամարտութիւն ելեալ էի յեփեսոս, զի՞նչ օգուտ էր ինձ,
եթէ մեռեալք ոչ յառնեն: կերիցուք արբցուք, քան-
զի վաղիւ մեռանիմք: * Մի խաբիք. ապականեն ըղ- 33
զե բարս քաղցունս բանք չարք: * Սթափեցարուք արդա- 34
րութեամբ, և մի մեղանչէք. զի զգիտութիւն այ ոչ ունին ո-
մանք: առ ամօթոյ ձերոյ ասեմ: * Այլ ասասցէ ոք, 35
զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայ-
ցեն: * Անմիտ, դու զոր սերմանես, ոչ կենդանա- 36
նայ՝ եթէ ոչ մեռանիցի: * և զոր սերմանես; ոչ զը- 37
նոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ
մերկ. եթէ ցորենոյ իցէ, և եթէ այլոց սերմանեաց:
* և ած տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքան- 38
չիւր սերմանեացն զիւր մարմինն: * Ոչ ամ մարմին՝ նոյն 39
մարմին է. այլ՝ այլ մարմին է մարդկան, և այլ մար-
մին անասնոց, այլ մարմին թռչնոց՝ և այլ մարմին ձը-
կանց: * և մարմինք երկնաւորք, և մարմինք երկրա- 40
ւորք.

(27) Ոմանք. Եթէ հնազ՛... թէ բայց: (28) Ոմանք. Ցամ յամի: (29) Ոմանք. Մեռեալք ոչ յառնեն: (31) Օրինակ մի. Զոր ունիմք առաւել առաւելապէս 'ի քս յս: (32) Ոմանք. Մեռեալք ոչ յառնիցեն: (32) Ոմանք. Ըստ մարդոյ գազանամարտիկ լեալ էի: (32) Յոյն բան. Կերիցուք արբք՛. ած գրչագիրք համաձայնին նշանակէն 'ի լուս՛. Գուեհէի [illegible] զոր յետ և առայն: (33) Իսկ յոյն. Ապականեն զբա՛. 'ի լուս՛. [illegible] Մենանդրի արագագրի. որ այլք ասեն աշխարհագրի [illegible]. Մենանդրի երգագրի, կամ, երգչի խրատու: (33) Ոմանք. Զբարս քաղցունս: (34) Օրինակ մի. Այլ սթափեցարուք արդարութեամբ... զի զգիտութիւն այ: (36) Ոմանք. Թէ ոչ նախ մեռանիցի: (37) Ոմանք. Զոր ծնանելոցն: (37) Բազմ. Այլոց սերմանեաց: և ոմանք. սերմանց: (38) Ոմանք. Սերմանեացն զիւր մարմինն: (39) Ոմանք. Ամ մարմին ոչ զնոյն մարմին է... Մարմին ձկանցն. յո. ձկանց: (40) Այս ոմանս ոչ. Այլ այլ փառք: (40) Ա[illegible]

ւորք. այլ՝ այլ փառք երկնաւորաց են, և այլ փառք
41 երկրաւորաց: * այլ փառք արեգական, և այլ փառք
լուսնի. այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ
42 առաւել է փառօք: * Նոյնպէս և յարութիւն մեռելոց.
սերմանի ապականութեամբ՝ և յառնէ առանց ապակա-
43 նութեան. * սերմանի անարգութեամբ՝ և յառնէ փառօք.
44 սերմանի տկարութեամբ՝ և յառնէ զօրութեամբ. * սերմա-
նի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգևոր: Եթէ
45 գոյ մարմին շնչաւոր, գոյ և հոգևոր: * Այլպէս և
գրեալ է, եղև մարդն առաջին Ադամ շունչ կենդա-
46 նի. երկրորդ Ադամ՝ ՚ի հոգի կենդանարար: * Բայց
ոչ նախ հոգևորն, այլ շնչաւորն, և ապա հոգևորն:
47 * Առաջին մարդն յերկրէ, հողեղէն. իսկ երկրորդ
48 մարդն՝ Տէր, յերկնից: * Որպէս հողեղէնն, նոյնպէս և հո-
ղեղէնքս, և որպէս երկնաւորն, նոյնպէս և երկնաւորքն:
49 * և որպէս զգեցաք զպատկեր հողեղինին. զգեցցուք
50 և զպատկեր երկնաւորին: * Բայց զայս ասեմ եղբարք, զի
եթէ մարմին և արիւն զարքայութիւն Այ ժառանգել
ոչ կարեն. և ոչ ապականութիւն զանապականութիւն ժա-
51 ռանգէ: * Ահա՝ խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենե-
քեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան: Նորոգես-
52 ցուք * յանկարծակի յական թօթափել՝ ՚ի փող յետին.
քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց
53 ապականութեան, և մեք նորոգեսցուք: * Զի պարտ է
ապականացուս այսմիկ զգենուլ զանապականութիւն,
54 և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն: * Այլ
յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, և
ապականացուս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն
55 որ գրեցաւ. եթէ ընկլաւ մահ յաղթութեամբ: * Ո՞ւր
է մահ յաղթութիւն քո, ո՞ւր է դժոխք խայթոցքն քո:

* Խայ-

ռնկանաց Զեղք. Երկնաւորաց են: (41) Ոմանք. Արեգա-
կան են: (41) Ոմանք. Եւ այլ փառք աստ": (42) Ո-
մանք. Նոյնպէս և ՚ի յարութեան մե": (45) Ոսկան. Որպէս
և գրեալ է: (45) Ոմանք. Ադամ ՚ի շունչ կենդանի, երկ-
րորդն Ադամ: (47) Ոմանք. Իսկ երկրորդն Տէր: (48) Ո-
մանք. Որպէս և հողեղէնն ... նոյնպէս և երկրաւորքս:
(49) Ոմանք. Զգեցաք զմարմին հողեղինին. զգեց": (50) Ո-
մանք. Զարքայութեան Այ: (51) Ոմանք. Այլ ոչ ամենեքին
նն": Ոսկ ոսկան նեքն այսպես ընթեռնու. Նորոգեցուք: Յան-
կարծակի յա": (52) Ոմանք. ՚Ի փողն յետին ... և մեռ-
եալք յառնիցեն ա": (54) Ոսկան. Եւ ապականացուս
զանապական": (54) Ոմանք. Յայնժամ լցցի բանն ...
մահ ՚ի յաղթութեան քո. կմ, մահ ՚ի յաղթութեան: (55) Ոմանք.
Ո՞ւր են գձնիք խայթոցք քո:

Digitized by Google

* Խայթոց մահու՝ մեղք են, և զօրութիւն մեղաց՝ օրէնքն։ 56
* Այլ շնորհք այ՝ որ ետ մեզ զյաղթութիւն 'ի ձեռն 57
առ գ տն մերոյ յի քի։ * Այսուհետև եղբարք իմ սիրե- 58
լիք, հաստատունք եղերուք, անշարժ կացէք, առաւել
լերուք 'ի գործ տն յամ ժամ. գիտասջիք՝ զի վաս-
տակք ձեր ոչ են ընդունայն առաջի տն։

Գլ. ԺԶ.

Այլ վս հաւաքելոյն որ 'ի սուրբսն է, որպէս պատուէր ե- 1
տու եկեղեցեացն գաղատացւոց, նոյնպէս և դուք
առնիջիք * ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն։ իւրա- 2
քանչիւրոք 'ի ձէնջ առ անձին իւրում գանձեսցէ որ ինչ
և աջողեսցի։ * զի մի յորժամ գայցեմ, յայնժամ հա- 3
շիւք լինիցին։ այլ յորժամ եկից, զոր միանգամ ընտ-
րեսջիք թղթովք դ. զնս առաքեցից տանել զշնորհսն ձեր
յերուսաղէմ։ * ապա թէ արժան իցէ և ինձ երթալ, 4
ընդ իս երթիցեն։ * Այլ եկից առ ձեզ՝ յորժամ 'ի 5
մակեդոնիա անցանիցեմ։ բայց երբև շրջեցայց ընդ
մակեդոնիա, * թէ դէպ լիցի, առ ձեզ մնացից՝ և 6
կամ ձմերեցից. զի դուք յուղարկեսջիք զիս՝ ուր և եր-
թալոցն իցեմ։ * զի ոչ կամիմ զձեզ այժմ 'ի հարևան- 7
ցի տեսանել. այլ ունիմ ժամանակ ինչ առնել առ
ձեզ, եթէ տր հրամայեսցէ։ * Բայց այժմ լինիմ յե- 8
փեսոս մինչև ցպենտեկոստէ. * զի դուռն բացեալ է 9
ինձ մեծ և կարևոր, և հակառակորդք բազում են։
* Այլ՝ եթէ եկեսցէ տիմոթէոս, տեսջիք զի առանց ան- 10
երկեւղ լինիցի առ ձեզ. զի զգործ տն գործէ, որպէս
և ես. * մի ոք զնա անգոսնեսցէ։ և յուղարկեսջիք 11
զնա խաղաղութբ, զի եկեսցէ առ իս։ քանզի ակն ու-
առ գ նիմ նմա եղբարբքս հանդերձ։ * Այլ վս ապողոսի 12
եղ-

---

(57) Ոմանք. Մեզ յաղթութիւն։ (58) Ոմանք. Հաստատունք եղերուք... 'ի գործս տն... առաջի այ։

Գլ. ԺԶ. (1) Օրինակ մի. Եկեղեցւոյն գաղատացւոց՝... նոյնպէս և դուք լինիջիք։ (2) Ոմանք. Իւրաքանչիւր միաշաբաթիցն... որ ինչ յաջողեսցի։ (3) Օրինակ մի։ Համարք ինչ լինիցին։ (3) Բազումք. Ընտրեսջիք թղթովք։ Ուր օրինակ մի. Ընտրեցի թղթովք։ (5) Ոմանք. Բայց յորժամ շրջեցայց 'ի մակեդոնիա։ (6) Ոմանք. Թէ դէպ լինիցի... մնացից՝ կամ ձմերեցից, զի և դուք յուղարկեցէք.. ուր երթալոց եմ։ (7) Ոմանք. Բազի.. զձեզ հարևանցի տես՛։ (8) Ոմանք. Լինիցիմ յեփեսոս։ (8) Բազմք. Մինչև ցպենտեկոստէ։ (9) Ոմանք. Բաց է ինձ։ (9) Ոմանք. Եւ հակառակողք բզմ։ (10) Ոմանք. Գործեաց՝ որպ և ես։ (12) Ոմանք. Կամք իմ զի այժմ. յորժամ

Digitized by Google

եղբօրէ՝ ցի՛րտ աղաչեցի զնա, զի եկեսցէ առ ձեզ եղ-
բարբք հանդերձ. և արդեւք՝ ոչ էին կամք զի այժմ
13 եկեսցէ. այլ եկեսցէ յորժամ և պարապեսցէ: * Զգու-
կեցէք, հաստատուն կացէք ՚ի հաւատս. ժրացարուք.
14 զօրացարուք: * Ամ ինչ ձեր սիրով լիցի: * Աղաչեմ
15 զձեզ եղբարք. գիտէք զտունն Ստեփանեայ և Փորտու-
նատեայ, որ են պտուղ Աքայեցւոց, և ՚ի պաշտօն սրբոց
16 կարգեցին զանձինս. * զի և դուք հնազանդ լինիցիք
այնպիսեացն. և ամի՝ որ գործակից իցէ և վաստա-
17 կակից: * Ուրախ եղէ ՚ի գալ Ստեփանեայ, և Փոր-
տունատեայ, և Աքայիկոսի, զի զձեր պակասութիւն նոքա
18 լցին. * քանզի հանգուցին զհոգի իմ՝ և զձեր. արդ՝
19 ծանիջիք զայնպիսիսն: * Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն
Ասիացւոց: Ողջոյն շատ տան ձեզ ՚ի տր՝ Ակիւղաս, և
Պրիսկա, հանդերձ առտնին եկեղեցեաւն իւրեանց:
20 * Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքին: * Ողջոյն
21 տուք միմեանց ՚ի համբոյր սրբութեան: * Ողջոյնդ այդ՝
22 իմոյ ձեռին Պաւղոսի է. եթէ ոք ոչ սիրէ զտր յս,
24 գամ։ * 'Ի հրէից, հնգիցս՝ քառասուն միով պակաս
25 առի. * երիցս գաւազանեցայ. միանգամ քարկոծ եղէ.
երիցս նաւաբեկ եղէ. զտիւ և զգիշեր յանդունդս տա
26 ռապեցայ. * 'Ի ճանապարհս բազում անգամ։ Վտանգս 'ի
գետոց, վտանգս յաւազակաց, վտանգս յազգէ, վտանգս 'ի
հեթանոսաց, վտանգս 'ի քաղաքի, վտանգս յանապատի,
27 վտանգս 'ի ծովու, վտանգս 'ի սուտ եղբարց։ * 'Ի ջանս
և 'ի վաստակս. 'ի տքնութիւնս բազում անգամ, 'ի քաղց և
'ի ծարաւ. 'ի պահս բազում անգամ. 'ի ցուրտ և 'ի մեր
28 կութեան։ * Թող զայլ նեղութիւնն. և զի հանապազ
խուժումն 'ի վերայ իմ կուտէր, և հոգք ամենայն ե
29 կեղեցեաց։ * Ո՞ հիւանդանայ, և ոչ ես հիւանդանամ.
30 ո՞ գայթագղի, և ոչ ես տապանամ։ * Եթէ պարծել ԲԳ
31 ինչ պարտ իցէ, զտկարութեան պարծեցայց։ * Ած և
հայր տն մերոյ յսի քսի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս,
32 զի ոչ ստեմ։ * 'Ի Դամասկոս ազգապետն Արետայ ար
33 քայի պահէր զքաղաքն Դամասկացւոց ունել զիս. * և
ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն,
և փախեայ 'ի ձեռաց նորա։

ԳԼ. ԺԲ.

1 Որք պարծել ինչ պարտ իցէ. այլ օգնէ ինչ ոչ։
2 Բայց եկից 'ի տեսիլս և յայտնութիւնս տն։ * Գիտեմ այր մի 'ի քս յառաջ քան զչորեքտասան ամ. եթէ
մարմնով՝ ոչ գիտեմ, և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Ած գիտէ. յափշտակեալ զայնպիսին մինչև յեր
3 րորդ երկինս։ * Եւ գիտեմ զայնպիսի այր. եթէ մարմնով և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ. Ած գիտէ,
* զի

Ոմանք ունին. Եթէ բանտիւք։ (26) 'Ի լուսն․ նշանակիցս, 'ի վէր ան բառին 'ի գետոց. Թէպէտ ակնարկել առնել 'ի գետոց։ որոյ իմաստն անյայտ է։ (26) Ոմանք․ Վտանգս 'ի քաղաքէ։ (27) Ոմանք․ Եւ 'ի մերկութի։ (28) Ոմանք․ Նեղութիւս… եկեղեցեացն։ (29) Ոմանք․ Եւ ես ոչ հիւանդ։ (31) Ոմանք․ Ած հայր տն մր։ (31) Ոսկան յաւելու․ Յսի քսի գիտէ։ (31) Ոմանք․ Յաւիտեանս ամէն։ (32) Ոմանք․ Արետա արքայի։ Ոսկ 'ի լուսն․ տմ գրչագիրք՝ համաձայն մեծամասն նշանակէն․ Աներ հերովդի էր արետաս այս։ (33) Ոմանք․ Կախեալ ընդ պարիսպն փախեայ։

Գլ․ ԺԲ․ (1) Ոմանք․ 'Ի տեսիլս և 'ի յայտնութիս։ (2) Ոսկան․ Գիտեմ զայր մի… մինչև յերրորդ երկինս։ (2) Ոմանք․ Յափշտակեալ զայնպիսին։

Digitized by Google

* զի յափշտակեցաւ 'ի դրախտն. եւ լուաւ բանս ան- 4
ճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել: * Վասն այն- 5
պիսւոյն պարծեցայց. այլ վս անձին իմոյ ոչ պարծե-
ցայց. բայց եթէ 'ի տկարութիւնս: * զի եթէ եւ կամիցիմ 6
պարծել, ոչ եղէց անզգամ. քանզի զճշմարիտն ասեմ:
այլ խնայեմ, գուցէ ոք համարիցի յիս աւելի, քան
զոր տեսանիցէ յիս՝ կամ լսիցէ յինէն: * Եւ զի մի 7
առաւելութեան յայտնութեացն հպարտացայց, տուաւ ինձ
խայթ մարմնոյ, հրեշտակ սատանայն՝ կռփել զիս. զի մի
հպարտացայց: * Եւ վս այնորիկ երիցս անգամ աղա- 8
չեցի զՏէր՝ զի 'ի բաց արասցէ յինէն. * Եւ ասէ ցիս. 9
շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան
կատարի: Եւ արդ՝ լաւ եւս լիցի ինձ պարծել 'ի տկա-
Գ Դ րութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւն Քի: * Վասն որոյ 10
հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշ-
տըս, ընդ հալածանս, եւ ընդ նեղութիւնս վս Քի. զի
յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ: * Եղէ 11
անզգամ, քանզի դուք ստիպեցէք. զի ինձ պարտ էր
'ի ձէնջ վկայութիւն առնուլ, թէ ոչինչ պակաս գտայ
քան զլաւ առաքեալսն. զի թէպէտ եւ ես ոչինչ եմ.
* սակայն նշանք առաքելոյ գործեցան 'ի ձեզ, ամ համ- 12
բերութեամբ, նշանօք եւ արուեստիւք՝ եւ զօրութեամբք: * Եւ 13
արդ զի՞նչ իցէ, որով պակաս գտայք քան զայլ եկե-
ղեցիս. բայց եթէ այնու, զի ես զձեզ ոչ ծանրացայ-
ցի. շնորհեցէք ինձ զվնասդ զայդ: * Ահաւասիկ այս 14
երիցս անգամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ. եւ ձեզ
բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ խնդրեմ ինչ զձեր, այլ զձեզ.
քանզի ոչ պարտին որդիք հարց գանձել, այլ
հարք որդւոց: * Բայց ես մտադիւրութեամբ՝ ծախեցից եւ 15
ծախեցայց վս անձանց ձերոց. զի թէպէտ եւ յառա-
ւել սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ: * Այլ դրեթէ 16
են

(4) Ոմանք. Բանս անճառս, զոր: (5) Յօրինակին. Բայց եթէ 'ի տկարութիւնս: (6) Ոմանք. Զի թէ եւ կամիցիմ... համարեսցի ինչ յիս աւելի: (7) Ոմանք. Առաւելութեան հպար": (7) Օրինակ մի. Հրեշտակ սատանանայ: (8) Ոմանք. Երիցս աղաչեցի: (9) Ոմանք. 'Ի տկարութեան կատա": (10) Յօրինակին պակասէր. Հաճեալ եմ ընդ: (11) Յօրինակին. Դուք ստիպեցէք. զի ինձ: Ոմանք ա-կան. Ստիպեցիք զիս. զի: (11) Օրինակ մի. Թէ ոչ պակաս գտայ քան զայլ առա". Թէպէտ եւ ես ոչ ունիմ (12) Ոմանք. Նշանք առաքելոց: (13) Ոմանք. Պակաս գտայք քան... զձեզ ինչ ոչ ծանրա": (14) Ոմանք. Զի եւ ձեր բեռն ինչ ոչ եղէ: (14) Ոմանք. Քանզի ոչ խնդրեմ: (16) Ոմանք. Եղի, եւ խելօք կալայ:

Digitized by Google

Ես ոչինչ ծանրացայ ձեզ. այլ քանզի խորագէտ էի,
17 խաբելօք կալայ զձեզ: * մի թէ որովք առաքեցի առ ձեզ,
18 նոքօք ինչ աղահեցի ՚ի ձէնջ: * Աղաչեցի զՏիտոս՝ և
առաքեցի ընդ նմա զեղբայրն: մի թէ աղահեաց ինչ
զձեր Տիտոս: ոչ նովին հոգւով գնացաք. ոչ նովին
19 շաւղօք շրջեցաք: * Դարձեալ՝ համարիցիք եթէ յա- Գ Ղ
ղագս անկեալ ինչ ձեզ աղերսեցեմք. առաջի Այ ՚ի Քս խօ-
20 սիմք, զի ամ ինչ սիրելիք. վն ձերոյ շինութեան է: * այլ
երկնչիմ, գուցէ եկեալ՝ ոչ որպիսիս կամիցիմ գտա-
նիցեմ զձեզ, և ես՝ գտանիցիմ ձեզ՝ այլ և գունք ոչ
կամիցիք: Գուցէ դարձեալ՝ հեռ, նախանձ, սրտմտու-
թիւք, գրգռութիւք, չարախօսութիւք, քսութիւք, հպար-
21 տութիւք, ամբարտաւանութիւք, խռովութիւք: * Գու-
ցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ
զիս Ած իմ առ ձեզ. և սուգ առնուցում վասն բազ-
մաց յառաջագոյն մեղուցելոց, և ոչ ապաշխարե-
լոց՝ ՚ի վերայ պղծութեան, և պոռնկութեան, և գիջու-
թեան՝ զոր գործեցին:

ԳԼ. ԺԳ.

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ. զի ՚ի բերանոյ եր-
2 կուց և երից վկայից հաստատեսցի ամ բան: * Յա-
ռաջ ասացի, և դարձեալ կանխաւ ասեմ, յանդիմանն
երկիցս անգամ. և այժմ ՚ի բացուստ գրեմ յառաջա-
գոյն յանցուցելոցն՝ և այլոցն ամենեցուն. զի եթէ
3 եկից դարձեալ՝ ոչ խնայեցից: * Եթէ զփորձ ինչ խնդ-
րէք զՔի, որ ինեւ ընդ ձեզ խօսի. որ հզօրացեալն
4 է ՚ի ձեզ, և ոչ տկարացեալ: * զի թէպէտ և խաչեցաւ
՚ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրութեամբն Այ:
և մեք թէպէտ և տկարանայցեմք ընդ նմա, այլ կենդա-
նի

(17) Ոմանք. Առաքեցի առ ձեզ, նոքօք աղահեցի՞ ինչ ՚ի ձէնջ: (18) Ոմանք. Եւ աղաչեցի .. հոգւով գնա": (19) Ոմանք. Վն ձեր փրկութեան և շինութեան է: (20) ՚Ի լուսա". Ոչ որպէս ես կամի". համաձայն Բնյց ՚ի Քնոյ": (20) Ոմանք. Ոչ որպէս կամիցիս գտա"... նախանձ, սրտմտութիւք, գրգռ": Որ օրինակ մ. Գրգռութիւք, ատութ, խռովութ: (20) Ոսկան յաւելու. Որպիսի և գուք ոչ... խռովու-թիւք իջէն ՚ի մէջ ձեր: (21) Ոմանք. ՚Ի վն գիջութեան և պղծութեան և պոռն":

ԳԼ. ԺԳ. (1) Յօմանս պէսպ. Երից վկայից հաստա": (2) Ոմանք. Յանդիմանն երիցս .. գրեմ վն յառա".. դարձեալ՝ ոչ անխնայեցից: (3) Ոմանք. Զքն, որ խնե ընդ ձեզ: (4) Ոմանք. Այլ և կենդանի է զօ": (4) Ոսկան յաւելու. Նմա զօրութեն Այ ՚ի ձեզ:

Digitized by Google

ԺԳ նի կեցուք ընդ նմա զօրութեամբ Այ։ * Փորձեցէք զան- 5
ձինս ձեր, եթէ կայցէք 'ի նմին հաւատս. քննեցէք զան-
ձինս, եթէ ոչ գիտէք զանձինս, զի Քս Յս 'ի ձեզ է.
բայց եթէ անպիտանք իցէք։ * Այլ ակն ունիմ թէ 6
գիտիցէք. զի մեք ոչ եմք անպիտանք։ * Այլ խնդրե- 7
մք յԱյ՝ զի մի ինչ արասցէ ձեզ չար։ ոչ զի մեք ըն-
տիրք երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գործիցէք.
և մեք անպիտանք գտանիցեմք։ * Զի ոչ կարեմք ինչ 8
հակառակ կալ ճշմարտութեան. այլ վերակացու եմք
ճշմարտութեան։ * Խրախ եմք՝ յորժամ մեք տկարանայ- 9
ցեմք, և դուք զօրաւորք իցէք. զայս իսկ և աղօթս
առնեմք զձեր հաստատութեան։ * Վասն այնորիկ զայս 10
'ի հեռուստ գրեմ. զի մի յորժամ եկից՝ սաստկութեամբ՝
վարեցայց՝ ըստ իշխանութեանս, զոր ետ ինձ Տր 'ի շի-
նել՝ և ոչ 'ի քակել։ * Այսուհետև եղբարք, ողջ լե- 11
րուք, հաստատունք կացէք, մխիթարեցարուք, միաբան
լերուք. խաղաղութիւն արարէք. և Այ խաղաղութեան և
սիրոյ՝ եղիցի ընդ ձեզ։ * Ողջոյն տուք միմեանց 'ի համ- 12
բոյր սրբութեան։ Ողջոյն տան ձեզ սուրբքն ամ։ * Շնոր- 13
հքն Տն մերոյ ՅԻ Քի, և սէրն Այ, և հաղորդութիւն
Հոգւոյն սրբոյ, ընդ ձեզ ամենեսին, ամէն։

Առ Կորնթացիս երկրորդ՝ գրեցաւ 'ի Փիլիպպեայ, 'ի ձեռն տի-
տոսի և ղուկայ։ Տունս. ՇԶ։

---

(5) Omn. Եթէ կայք 'ի նմին... եթէ ոչ գիտիցէք... եթէ անպիտանք իցէք։ (6) Omn. Բայց ակն ունիմ եթէ գիտէք։ (7) Ոսկ. Եւ մեք անպիտանք իցեմք։ (10) Omn. 'Ի հեռուստ գրեմք։ (13) Օրինակ մի. Եւ խաղաղութիւն հոգւոյն սրբոյ։ (13) 'Ի Ոսկ. Չիք. Ընդ ձեզ ամենեսին. ամէն.

* 'Ի վախճանի ոմանք. Երկրորդ թուղթ՝ գրեցաւ... տիտոսի և ղուկայ։

* 'Ի գրչագիր օրինակաց ոմանց յայսմ վայրի յետ երկրորդ թղթոյն կորնթացւոց, յաւելեալ գտանի մի կորնթացւոց առ պաւղոս. և պաւղոսի առ նոսա, մակագրեալ Թուղթ երրորդ առ կորնթացիսն. զոր օրինակն մեր ընդ այլոց յաւելուածոց դնէ 'ի վախճանի աստուածաշունչ գրոց. ըստ որում և մեք առնեմք կարգ գէլ 'ի յառաջաբանն մատենիս։

Ն Ա

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Գաղատացիս Թղթոյն:

Օ այս առաքէ 'ի Հռովմայ առ որս քարոզեալ էր և գե-տփէր, և ուշանկերփեալ էր. և է պարծանս թղթիս՝ այս: Ուսեալ էին բարւոք Գաղատացիքն յառաքելոյ, և հաստա-տեալք էին ընդ աւետարանն քո՟ի. և ընթացեալք էին առաքելոյս, հրապուրեցան յոմանց թլփատել: վասն ծմ յոմանց լուեալ առա-քեալն գրէ առ նս: Եւ յառաջագոյն վկայէ նոցա՝ յաղագս որոյ ունէին զհաւատսն ընդունայնեալք քո՟ի ուխտին, մեղադրէ թէ չէ-մարմնոյ գործեցին, և այսպանէ զնս: յետ այսորիկ ոչ ընդունին զբերան ըստ հաւատոցն աբրահամու. և ցուցանէ յօրինացն, և 'ի կանանցն աբրահամու առաւել օրինակի, զի մինչև 'ի դէմ ժա-մանակի բուռն թլփատութեն, և այժմ դադարեալ է վս՟ քո՟ի գալըս-տեանն: Եւ այսպէս եցոյց զի զի նըբէք յանցանիցեն. այլ մա-նաւանդ ունել'ի քո՟ զհաւատս, և գիտել, եթէ որ 'ի քո՟ ընդերկս, հալածէ զթլփատութեն որ 'ի մարմնի: Եւ այսպէս դադարեալ ուղե-րաւորն ներբողեն յայտնեալ. կատարէ զթուղթն:

Գլուխք առ Գաղատացիս Թղթոյն:

ա. Յետ ողջունին՝ զարմացումն է նոցա 'ի հրէութեն փոխելոյ ընդ յայտնութեն:

բ. Վս՟ առաքելոյն վկայ 'ի հաւատոյ անտի կենացն լինելոյ:

գ. Վս՟ Կեփայի դիմադարձ լինելոյ, և թէ 'ի հաւատոցն՝ և ոչ յօրինացն է արդարութի:

դ. Թէ 'ի հաւատոցն է օրհնութի՝ և ոչ յօրինաց անտի:

ե. Թէ և աբրահամ 'ի հաւատոցն արդարացաւ՝ ևս մերոյ օրէ-նակէ:

զ. Թէ և օրէնքն ոչ արդարացուցանեն, այլ յանդիմանեն և անէծս 'ի վե՟ դնեն՝ զոր քո՟ն լուծանէ:

է. Թէ ոչ յօրինաց անտի, այլ յաւետեացն են բարութիք, և օրէնքն յառաջագոյն կապեալք էն յանդիմանութեն:

ը. Թէ ընդ արարածովք էին՝ որք ընդ օրինօքն էին:

թ. Թէ յաղագս կնոց աբրահամու և 'ի բռան որդւոյն օրինակ է ելից՝ մի պարտ ծառայել օրինացն:

ժ. Թէ խոլորանին կէր մի ընդ թլփատութե և ընդ օրինօք՝ վս՟ քո՟ի չարչարանացն:

ժա. Հաստատութի գործոյ ըստ հոգւոյն պտղութե:

ժբ. Հրաժեշտ յայտնութեն որք 'ի թլփատութեն յղեն. և յօժա-րութի 'ի նոր կեանս ըստ հոգւոյն:

Digitized by Google

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ
ԹՈՒՂԹ:

ԳԼ: Ա:

գգ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՈՉ 1
՚ի մարդկանէ եւ ոչ ՚ի ձեռն մարդոյ, այլ
՚ի ձեռն յի՛ի քի՛ի, եւ այ հօր՝ որ յարոյց
զնա ՚ի մեռելոց. * եւ որ ընդ իս են եղ- 2
բարք ամենեքին, եկեղեցեացդ գաղատացւոց: * Շնոր- 3
հք ընդ ձեզ եւ խաղաղութի՛ յայ ՚ի հօրէ, եւ ՚ի տեառնէ
մերմէ յի՛է քի՛է. * որ ետ զանձն իւր վասն մեղաց 4
մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէս աստի չարէ,
ըստ կամացն այ եւ հօր մերոյ. * որում փառք յաւի- 5
տեանս. ամէն: * Զարմանամ՝ զի այդպէս վաղվաղակի 6
փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ՚ի շնորհսն քի՛
յայլ աւետարան. * որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն 7
ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին շըր-
ջել զաւետարանն քի՛ի: * Այլ թէ մեք, կամ հրեշ- 8
տակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր
աւետարանեցաքն ձեզ. նզովեալ լիցի: * որպէս յա- 9
ռաջագոյն ասացաք՝ եւ արդ դարձեալ ասեմ, եթէ
ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզո-
վեալ լիցի: * Արդ՝ մարդկան հաճոյ լինիցիմ, թէ 10
այ. կամ խնդրիցեմ մարդկան հաճոյ լինել: եթէ առա-
ւելին մարդկան հաճոյ լինէի, ապա քի՛ի ծառայ ոչ էի:
Ա * Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, որ աւետա- 11

րան-

գղ

---

* Յօրինակի մերում առանց ՚ի վերնագրին՝ եւ ՚ի յաղթուս ոմանց զանց արարեալ էր դնել՝ Թուղթ. զոր մեք յաւելաքս միայն ըստ պատշաճի:

Գլ. ա. (2) Օրինակ. Եղբարք ամենեքեան, եկեղեցւոյդ գաղ՝: (3) Օրինակ. Յայ հօրէ մերմէ՝ եւ ՚ի տեառնէ յե քէ: (4) Օրինակ. Այ եւ հօր մերում: (5) Օրինակ յաւելուած. Յաւիտեանս յաւիտենից՝ ամէն: (6) Օրինակ. Զարմանամք զի... ՚ի շնորհսն քի: (7) Օրինակ. Որ խռովեցուցանեն զձեզ, եւ կամին շր՝: (8) Օրինակ. Այլ եթէ մեք. ՝ աւետարանեմք ձեզ: (9) Յօրինակին պակաս. Եւ արդ դարձեալ: (9) Օրինակ. Դարձեալ ասեմք... նզովեալ եղիցի: (10) Օրինակ. Եւ եթէ առաւելին: (11) Օրինակ. Քրիստոսի եւ ես ոչ ՚ի մարդ՝:

Digitized by Google

12 րանեցաւ յինէն · զի ոչ է ըստ մարդոյ · * Քանզի եւ ոչ
ես 'ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յումեքէ, այլ 'ի յայտ-
13 նութենէ յի՛ քի՛ : * Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ
գնացսն որ երբեմն 'ի հրէութեան անդ, զի անչափ հա-
14 լածէի զեկեղեցին այ, եւ աւեր հարկանէի զնա ; * եւ
յառաջադէմ էի 'ի հրէութեն՝ քան զբազում հասակակիցս
իմ որ յազգին իմում էին · առաւել նախանձախնդիր
15 էի իմոց հայրենի աւանդութեցն : * Այլ յորժամ
հաճեցաւ այն, որ ընտրեաց զիս յորովայնէ մօր իմոյ, եւ
16 կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց, * յայտնել զորդին
իւր ինեւ, զի աւետարանեցից զնա 'ի հեթանոսս : անդ
դէն վաղվաղակի ոչինչ զգացուցի մարմնոյ եւ արեան ·
17 * եւ ոչ ելի յեմ առ որ յառաջագոյն քան զիս առա-
քեալքն էին · այլ չոգայ յարաբիա, եւ դարձեալ դար-
18 ձայ 'ի դամասկոս : * Ապա յետ երից ամաց ելի յեմ
տեսանել զպետրոս · եւ եղէ առ նմ աւուրս հնգետա-
19 սան : * զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն
20 զյակոբոս · զեղբայրն տն : * Այլ զոր գրեմս առ ձեզ,
21 ահաւասիկ առաջի այ, զի ոչ ստեմ : * Ապա եկի 'ի
22 կողմանս ասորւոց եւ կիւլիկեցւոց : * եւ յանծանօթս
էի երեսօք եկեղեցեացն՝ որ 'ի Թլփատութէ անտի էին
23 'ի քս : * Բայց զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն
զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւատսն՝ զոր եր-
24 բեմն խախտէր : * եւ փառաւոր առնէին ինեւ զած :

ԳԼ. Բ.

1 Ապա յետ ամաց չորեքտասանից, միւս անգամ ելի Բ
2 յեմ ընդ բառնաբայ, առեալ ընդ իս եւ զտիտոս : * եւ Ե. Կ
ելի ըստ յայտնութեն, եւ զգացուցի նց զաւետարանն՝
զոր քարոզէի 'ի հեթանոսս, առանձինն այնոցիկ՝ որք
կարծեցեալքն էին, գուցէ ընդունայն ինչ ընթացեալ
3 իցեմ, կամ ընթանայցեմ : * Այլ եւ ոչ տիտոս որ ընդ
4 իս 'ի հեթանոսաց էր, բռնադատեցաւ թլփատել · * այլ
վն սպրդողաց սուտ եղբարցն, որք սպրդեցին մտա-
նել դիտել զազատութիւնն մեր՝ զոր ունիմք 'ի քս յս ·
զի

(13) Ոմանք · Զիմ գնացս, որ · · 'ի հրէութէ անդր : (15) Ո-
մանք · Եւ կոչեաց զիս 'ի ձե" : (16) Ոմանք · Անդէն վաղվաղակի
ոչ զգացու" : (16) Ոսկան · Ոչ ինչ առի համբաւեմանս մարմ-
նոյ եւ արե" : (18) Ոմանք · Եւ եղէ առ նմ աւուրս : (20) Ո-
մանք · Այլ որ գրեմ առ : (22) Ոմանք · Եւ անծանօթ
էի երե" : (23) Օրինակ Գ · Երբեմն խափանէր :
ԳԼ · Բ · (1) Ոմանք · Ամաց չորեքտասանից · · · Է իս զտի-
տոս : (2) Ոմանք · Զոր քարոզեցի 'ի հեթ" : (3) Ոմանք · Որ
'ի հեթանոսաց Է իս էր : (4) Յօրինակին · Մտանել դի-

Digitized by Google

զի զմեզ ծառայեցուսցեն ։ * որոց և ոչ առ ժամանակ 5
մի անսացաք հնազանդութեն ․ զի ճշմարտութի աւե_
տարանին հաստատեսցի առ ձեզ ։ * Բայց զկարծե_ 6
լոցն եթէ իցեն ինչ, որպիսիք ոք երբեմն էին, չէ ինչ
ինձ փոյթ ․ քանզի ած ակն մարդկան ոչ առնու ․ զի
ինձ կարծեցեալքն այնպիսի ինչ ոչ զգացուցին ․ * այլ ընդ_ 7
նորին հակառակն, իբրև տեսին եթէ հաւատացեալ
է ինձ աւետարանն անթլփատութե, որպէս պետրոսի 'ի
թլփատութե ։ * զի որ յաջողեացն պետրոսի յառա_ 8
քելութի թլփատութեն, յաջողեաց և ինձ 'ի հեթա_
նոսս ։ * Իբրև գիտացին զշնորհսն որ տուեալ էին ինձ, 9
յակոբոս. և կեփաս, և յոհաննէս, որ կարծեցեալ սիւն_
քըն էին, ձեռն ետուն հաւանութե ինձ և բառնաբայ ․
զի մեք 'ի հեթանոսս, և նոքա 'ի թլփատութեն ․ * բայց 10
միայն զի զաղքատացն յիշեսցուք ․ զոր և ես փութա_
ցայ զնոյն առնել ։

Գ / է դ * Այլ յորժամ եկն կեփաս յանտիոք, ընդդէմ դար_ 11
ձայ նմ ․ քանզի գոգ իբրև ստգտանեալ իսկ էր ։ * քան_ 12
զի մինչև եկեալ էին ոմանք առ 'ի յակոբայ, ընդ
հեթանոսս ուտէր անխտիր ․ իսկ իբրև եկին, զատա_
նէր՝ և որոշէր զանձն, երկուցեալ յայնցանէ որ 'ի
թլփատութե անտի էին ։ * և կեղծաւորեցան ընդ նմա 13
և այլ հրեայքն ․ մինչև բառնաբաս անգամ խոնարհե_
ցաւ 'ի նոցա կեղծաւորութիւն ։ * Այլ իբրև տեսի, 14
թէ ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութի աւետարանին, աս_
ացի ցկեփաս առաջի ամենեցուն, եթէ դու որ հրեայդ
ես՝ հեթանոսաբար և ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստի_
պես հեթանոսաց լինել հրէաբար ։ * զի մեք բնութ հը_ 15
րեայք եմք, և ոչ 'ի հեթանոսաց մեղաւորք ։ * Զայս 16
գիտեմք, եթէ ոչ արդարանայ մարդ 'ի գործոց օրէ_
նաց, եթէ ոչ 'ի հաւատոցն յսի քսի ․ և մեք 'ի քս յս
հաւատացաք, զի արդարասցուք 'ի հաւատոցն քսի, և
ոչ 'ի գործոց օրինաց ․ զի 'ի գործոց օրինաց ոչ ար_
դարասցի ամենայն մարմին ։

* իսկ

մեւզա" ։ (4) Ոմանք ․ Զմեզ ծառայեցուցանեն ։ (5) Ոմանք ․ Հաստատեսցի 'ի ձեզ ։ (6) Ոմանք ․ Բայց զկարծելոյն թէ իցեն ․․ որպիսիք երբեմն էիք, ինձ չէ փոյթ ։ (7) Ոմանք ․ Որպէս և պետրոսին թլփա" ։ (8) Ոմանք ․ Զի զոր յաջողն" ։ (9) Օրինակ մ ․ Եւ իբրև տեսին զշնորհս ։ (9) Ոմանք ․ Որ կարծեցեալք սիւնք էին ։ (11) Ոմանք ․ Ընդդէմ դարձան նմ ։ (12) Ոմանք ․ Քանզի մինչև եկեալ ։ (13) Ոմանք ․ Եւ այլ հրեայքն ը նմա ։ (14) Ոմանք ․ Եթէ ոչ ուղիղ գան 'ի ճշ" ․․․ հեթանոսաբար կեաս և ոչ ․․․ լինել հրեերէն ։ (16) Ոմանք ․ Օրինացն ոչ արդարանայ

Digitized by Google

17 * Իսկ եթէ մինչ խնդրեիցեմք արդարանալ 'ի Քս, և գը- Դ
տանիցիմք մեղաւորք. ապա ուրեմն Քս մեղաց պաշտօ-
18 նեայ եղև. քաւ լիցի։ * Զի եթէ զոր քակեցին, ըզ-
նոյն միւսանգամ շինիցեմ. ապա յանցաւոր զանձն իմ
19 ես ինձէն երևեցուցանեմ։ * զի ես օրինօք օրինացն
20 մեռայ, զի Այ կեցից, և ընդ Քսի 'ի խաչ ելից։ * և
կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս
Քս։ Այլ որ այժմս կեամ մարմնով, հաւատովք որդ- եղ
ւոյն Այ կեամ. որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն
21 վս իմ։ * և ես ոչ անարգեմ զշնորհսն Այ։ զի եթէ յօ-
րինաց անտի էր արդարութիւն, ապա Քս զուր մեռաւ։

ԳԼ. Գ.

1 Ո՛վ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ. ո-
րոց դրեթէ առաջի աչաց յՍ Քս գրեցաւ 'ի խաչ
2 ելեալ։ * Զայս միայն կամիմ ուսանել 'ի ձէնջ. 'ի գոր-
ծոց օրինաց զհոգին ընկալարուք՝ թէ 'ի լրոյ հաւա-
3 տոց։ * այդչափ անմիտ էք. սկսեալ հոգւով՝ և արդ
4 մարմնով վախճանիք։ * և այնչափ անցք անցին ընդ
5 ձեզ զուր, եթէ իցէ զուր։ * Իսկ արդ՝ որ բաշխեաց
'ի ձեզ զհոգին, և աղօթեաց 'ի ձեզ զզօրութիւնս. 'ի գոր-
ծոց օրինաց է՝ եթէ 'ի լրոյ հաւատոց։
6 * Որպ աբրահամ հաւատաց յԱծ՝ և համարեցաւ նմ. Ե
7 յարդարութիւն։ * գիտասջիք արդեւք. զի որք 'ի հաւա-
8 տոց անտի են, նոքա են որդիք աբրահամու։ * Յա-
ռաջագոյն գիտէր գիր, եթէ 'ի հաւատոց անտի ար-
դարացուցանէ Ած զհեթանոսս, յառաջագոյն խոստա-
ցաւ Ած աբրահամու. թէ 'ի քեզ օրհնեսցին ամենայն
9 ազգք։ * Այսուհետև որք 'ի հաւատոց անտի են,
օրհնին ընդ հաւատացելոյն աբրահամու։

* Զի

ամ։ (17) Օրինակ. Իսկ արդ մինչ խնդ"... և գտանիցիմք մեք մեղաւո"։ (18) Ոսկան. Զոր քակեցի։ (18) Օրինակ. Զանձն ես ինձէն։ (19) Օրինակ. Զի Այ կեցից։ (20) Օրինակ. Որդւոյն Այ կամ. . զանձն իւր վս մեր։ (21) Օրինակ. Անտի է արդարութի։

Գլ. Գ. (1) Ոսկան յաւելու. Արար զձեզ՝ ոչ հնազանդիլ ճշմարտութեան, որոց գրե"։ (1) Օրինակ. Գրեցաւ Քս յՍ։ (2) Բնաբ. Եթէ 'ի լրոյ հաւա"։ (3) Օրինակ. Անմիտք էք։ (4) Օրինակ. Ընդ ձեզ 'ի զուր։ (5) Օրինակ. Որ բաշխեաց . . . և յաղօթեաց 'ի ձեզ զօրութի. . օրինաց էր թէ 'ի լրոյն հաւա"։ (6) Օրինակ յաւելուն. Որպ և գրեալ է. Թէ աբրահամ հաւատաց յԱծ։ (7) Օրինակ. Գիտասջիք արդեւք. . 'ի հաւատոյ անտի են։ (8) 'ի Բնաբ. չիք. Խոստացաւ Ած աբրա"։ (9) Օրինակ. Օրհնեսցին. Է հաւա"։

Digitized by Google

Դ * Զի որ միանգամ 'ի գործոց օրինացն են, ընդ անէ- 10
ծիւք են. քանզի գրեալ է, Թէ անիծեալ ամ մարդ,
որ ոչ կացցէ յամ գրեալսն 'ի գիրս օրինաց՝ առնել
զնա: * Զի օրինօքն ոչ ոք արդարանայ առաջի այ, այն 11
վջ յայտ իսկ է. զի արդարն՝ ասէ 'ի հաւատոց կեցցէ:
* բայց օրէնքն չեն 'ի հաւատոց, այլ որ արարցէ զայն՝ 12
կեցցէ 'ի նոսին: * Քս գնեաց զմեզ յանիծիցն օրինացն, 13
եղեալ վն մեր անէծք. զի գրեալ է, Թէ անիծեալ
ամ որ կախեալ կայցէ զփայտէ. * զի 'ի հեթանոսս օրհ- 14
նութիւն աբրահամու եկեսցէ 'ի քս յս. զի մեք զաւե-
տիս հոգւոյն սովաւ ընկալցուք հաւատովք:
Ե * Ըստ մարդկութեան՝ ասեմ, եղբարք. այսպէս զմարդ- 15
կան հաստատեալ կտակ՝ ոչոք կարէ անարգել, և ոչ
այլ հրաման 'ի վր տեղի առնել: * Իսկ աբրահամու խոս- 16
տացան աւետիքն, և զաւակի նորա. և ոչ ասէ զաւա-
կաց՝ իբրև բազմաց, այլ իբրև զմիոյ, Թէ և զաւակի
քում; որ է քս: * Բայց զայս ասեմ, զկտակն յառա- 17
ջագոյն հաստատեալ յայ 'ի քս. օրէնքն որ յետ չորեք-
արիւր և երեսուն ամի եղան, ոչ կարեն խափանել առ
'ի խափանելոյ զաւետիսն: * Եթէ յօրինաց անտի է 18
ժառանգութիւն. ապա ոչ ևս յաւետեացն: բայց աբրա-
համու աւետեօք շնորհեաց այ: * Իսկ զի՞նչ էին օ- 19
րէնքն: յանցուածոց վն յաւելան, մինչև եկեսցէ զա-
ւակն որում խոստացեալն էր, կարգեալ հրեշտակօք
'ի ձեռն միջնորդի: * Իսկ միջնորդ՝ միոյ ուրուք ոչ է, 20
բայց այ մի է: * Իսկ արդ՝ օրէնքն հակառակ ինչ ի- 21
ցեն աւետեացն այ. քաւ լիցի: զի եթէ տուեալ էին
օրէնքն՝ որ կարող էին կենդանի առնել, ապա հաս-
տատ յօրինաց անտի էր արդարութիւն: * Այլ փակե- 22
ցին գիրք զամենեսեան ընդ մեղօք, զի աւետիքն 'ի հա-
ւատոց անտի յսի քսի տացին հաւատացելոց: * Մինչ 23
չև

(10) Ոմանք. Անիծեալ է ամ... ոչ կայցէ յամ 'ի գրեալսն օրինացն: (11) Յոմանս պակասի. Արդարն ասէ 'ի: (12) Ոմանք. Չեն 'ի հաւատոց անտի: (13) Ոմանք. Եթէ անիծեալ ամ... կախեալ կայցէ: (14) Ոմանք. Հոգւոյն սովաւ առցուք հաւատ'': (16) Ոմանք. Իբրև զբազմաց... Թէ 'ի զաւակի քում օրհ'': (17) Ոմանք. Հաստատեալ յայ 'ի քս յս: (17) 'Ի չորս''. ըստ համարոյ Գրէնէ ամ Գրուագիրք համաձայն մերումս նշանակեն զայս. Աբրահամ ՀԵ. մինչև 'ի Ճ. ամ: և իսահակ Կ. յակոբ ՃԼ. յեգիպտոս ՄԺԵ. միանգամայն ՆԼ: (18) Ոմանք. Ի ժառանգութիւն... աւետեօքն շնորհ'': (19) Ոմանք. Իցեն օրէնքն: (21) Ոմանք. Զի թէ տուեալ էին... անտի էր արդարութիւն: (23) Ոմանք. Ընդ օրինօքն փակեալ:

Digitized by Google

չէ՛ հաւատոյն եկեալ էին, ընդ օրինօք փակեալ պահէաք.
՚ի հանդերձեալ հաւատոյն որ յայտնելոց էին ՚ի մեզ։
24 * Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ՚ի քս յս, զի
25 ՚ի հաւատոցն արդարասցուք։ * Այլ իբրեւ եկին հա-
26 ւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք։ * Քանզի ա-
27 մենեքին որդիք այ էք, հաւատովք ՚ի յս քս։ * Որք
միանգամ ՚ի քս մկրտեցարուք, զքս զգեցեալ էք. չիք
28 խտիր. * ոչ հրէի, և ոչ հեթանոսի. ոչ ծառայի, և
ոչ ազատի. ոչ արուի, և ոչ իգի. զի ամենեքեան դուք
29 մի էք ՚ի քս յս։ * Ապա եթէ դուք քսի էք, ուրեմն
աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք։

ԳԼ. Դ.

1 Օ այս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տղայ
է, ոչ ինչ առաւել քան զծառայն. թէպէտ և
2 տէր իցէ ամենեցուն. * այլ ընդ հազարապետօք է՝ և
ընդ գաւառապետօք՝ մինչև ՚ի ժամանակակէտ հօրն։
3 * Նոյնպէս և մեք մինչ տղայքն էաք, ընդ տարերբք աշ-
4 խարհիս ՚ի ծառայութեան՝ կայաք։ * Այլ իբրեւ եկն
լրումն ժամանակին, առաքեաց այ զորդին իւր՝ որ ե-
5 ղև ՚ի կնոջէ, և եմուտ ընդ օրինօք. * զի զնս որ ընդ
օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք զորդեգրութիւն ընկալ-
6 ցուք։ * Եւ զի էք դուք որդիք, առաքեաց այ զհո-
գի որդւոյն իւրոյ ՚ի սիրտս մեր, որ աղաղակէ աբ-
7 բա՛, հայր։ * այսուհետև չես ծառայ, այլ որդի. և
8 թէ որդի, և ժառանգ այ։ * Այլ յայնժամ մինչ ոչ
գիտէիք զայ, ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին ՚ի բնէ
9 աստուածք։ * այլ այժմիկ ծանեայք զայ, մանաւանդ
թէ ծանուցայք իսկ յայ, զիա՞րդ դառնայք միւսան-
գամ ՚ի տարերս տկարս և յաղքատս, որոց միւսան-
10 գամ զանձինս ծառայեցուցանել կամիք։ * Զաւուրս
11 խարէք, և զամիս, և զժամանակս՝ և զտարիս։ * Երկն-
չիմ

---

(26) Օրինակ մ. Զի ամենեքեան որդիք այ եմք հաւատովք ՚ի քս յս։ (27) Ոմանք. Որ միանգամ։ (29) Ոմանք. Ապա թէ դուք... զաւակք էք ըստ։

Գլ. Դ. (1) Ոսկան. Չէ ինչ աւելի քան։ (3) Ոմանք. Ընդ տարերբք աշխարհիս ՚ի ծառայութեան կայ"։ (4) Ոմանք. Լրումն ժմկի.., զորդի իւր։ (5) Ոմանք. Զի զորս ընդ օրի"... և զի մեք։ (6) Ոմանք. Զոգի որդւոյ ՚ի սիրտս մեր, որով աղաղակէ. կամ, որ աղաղակեմք աբբա։ (8) Ալք. Մինչ ոչն գիտէիք։ (8) Ոմանք. Ծառայ էիք... որ ոչ էին։ (9) Ոմանք. Այլ այժմ ծանեայք զայ... միւսանգամ անդրէն ՚ի տարերսն ՚ի տկարս, և... որոց միանգամ զանձինս ընծայեցուցանել կամիք։ (11) Ոմանք.

Digitized by Google

չիմ՚ ի ձէնջ, գուցէ թէ՚ ի զուր ինչ վաստակեցի՚ ի ձեզ։
* Եղերուք իբրեւ զիս, քանզի եւ ես իբրեւ զձեզ եղէ։ 12
Եղբարք՝ աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ ա-
ռիս։ * գիտէք դուք՝ զի տկարութեամբ մարմնոյ աւետա- 13
րանեցի ձեզ զառաջինն․ եւ զփորձանսն որ՚ ի մարմնի
իմում էին, * ոչ անարգեցէք՝ եւ ոչ անգոսնեցէք․ այլ 14
իբրեւ զհրեշտակ Այ ընկալարուք զիս, իբրեւ զՔս Յս։
* Իսկ արդ՝ ուր է երանութիւնն ձեր։ վկայ եմ ձեզ, 15
եթէ հնար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք եւ տայիք ինձ։
* արդ՝ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի ճշմարիտն խօսե- 16
ցայ։ * Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ՚ ի բարւք․ եւ 17
արգելուլ կամին զձեզ, զի նոցա նախանձաւորք լինի-
ցիք։ * բայց լաւ է նախանձաւոր լինել՚ ի բարիս յամ- 18
ՂԴ ժամ, եւ ոչ միայն յորժամ՚ ի ձերում միջի իցեմ։ * Որ- 19
դեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչեւ
նկարեսցի Քս՚ ի ձեզ։ * կամէի այժմ գալ առ ձեզ, եւ 20
փոխել զբարբառ իմ․ զի տարակուսեալ եմ ես վս ձեր։
Թ * Ասէք ինչ ինձ՝ որ ը օրինօքն կամիք լինել, չիցէ՞ ըն- 21
թերցեալ ձեր զօրէնս։ * զի գրեալ է՝ թէ Աբրահա- 22
մու երկու որդիք էին, մի՝ յաղախնոյ անտի, եւ մի՝ յա-
զատէն։ * այլ որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ 23
էր, եւ որ յազատէն՝ ըստ աւետեացն․ * որ է առակ 24
օրինակի․ Զի այս ինքն են՝ երկու կտակարանք, մի՝
՚ի լեռնէ սինեայ՚ ի ծառայութիւն ծնեալ, որ էր հա-
գար։ * քանզի հագար՝ լեառն սինայ է յարաբիա․ հա- 25
ւասար է այսմ երուսաղէմի․ զի ծառայ է որդւովքն
իւրովք հանդերձ։ * Այլ վերինն երուսաղէմ ազատ 26
է, որ է մայր մեր ամենեցուն։ * զի գրեալ է․ ուրախ 27
լեր ամուլ որ ոչ ծնանէիր, գոչեա եւ աղաղակեա որ ոչդ
երկնէիր․ զի բազում են որդիք ամնդկին առաւել քան
զարամբւոյն։ * Այլ մեք եղբարք՝ ըստ սահակայ ա- 28
ւե

Գուցէ՚ ի զուր ինչ վաստակեցի ձեզ։ (13) Ոմանք․ Գիտէք իսկ զի տկարութեամբ։ (14) Ոմանք․ Իբրեւ զՅս Քս։ (15) Ոմանք․ Զի թէ հնար ինչ է՝ զաչս։ (16) Ոմանք․ Այլ զի թշնամի։ (19) Օրինակ մի․ Մինչեւ նկարեսցի Քս։ (21) Ոսկան․ Ասացէք ինչ ինձ։ (21) Օրինակ մի․ Որ ը օրինօքն կամէիք լինել։ (22) Օրինակ մի․ Զի գրեալ է եղբարք՝ եթէ․․ մինն յաղախնոյ։ (24) Ոմանք․ Որ են առակ օրինաւ"։ Որք՚ ի լուսն"․ ԲՀԾ գըչագրոյ համաձայնոյն բառս նշանակի․ Որ է այլաբանութի։ (24) Ոմանք․ Սինեայ՚ ի ծառայութե ծնեալ։ (25) Ոսկան․ Քզի սինա լեառն է յարաբիոյ՝ հաւասար է այսմ։ (25) Ոմանք․ Քզի հագարն․․․ զի ծառայէ որդւովք իւրովք։ (26) Յօրինակ մի․ Մայր. մեր ամէն։ (27) Ոմանք․ Որ եւ գրեալ է․

Digitized by Google

29 ւեռեալցն որդիքս եմք ։ * այլ որպէս յայնժամ որ ըստ
մարմնոյն ծնեալ էր, հալածէր զայն որ ըստ հոգւոյն,
30 նոյնպէս և այժմ։ * այլ զի՞նչ ասէ գիր․ 'ի բաց հան
զաղախինդ և զորդի նո․ զի մի ժառանգեսցէ որդի ա-
31 ղախնոյն՝ ընդ որդւոյն ազատի ։ * Վասն որոյ եղբարք՝
չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին․ ազատութեամբ ո-
րով քս զմեզ ազատեաց ։

ԳԼ․ Ե․

1 Պինդ կացէք այսուհետև, և մի միւսանգամ ընդ լու-
ծով ծառայութեան մտանիցէք ։
2 * Ահաւասիկ ես պաւղոս ասեմ ձեզ․ զի եթէ թլփա- ժ
3 տիք, քս ինչ ձեզ ոչ օգնէ ։ * Վկայեմ ամ մարդոյ՝ որ զղ
թլփատիցի, թէ պարտական է զամ օրէնսն կատարել։
4 * Խափանեցայք 'ի քսէ, որ օրինօքն արդարանայք․
5 և անկեալ էք 'ի շնորհաց անտի ։ * զի մեք հոգւոյն՝
6 'ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք ։ * զի
'ի քս յս՝ ոչ թլփատութիւն ինչ կարող է, և ոչ անթլփա-
7 տութիւն․ այլ հաւատք սիրով աշխատեալք ։ * Բարւոք
ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեան չհաւա-
8 նել ։ * զի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ են որ կոչեացն
9 զձեզ ։ * փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ ։
10 * Այլ ես յուսացեալ եմ 'ի ձեզ տր՝ թէ ոչ այլ ազգ
ինչ խորհիցիք ։ և որ խռովեցուցանէ զձեզ, կրեսցէ
11 զդատաստան՝ ո՛ ոք և իցէ ։ * Այլ ես եղբարք՝ եթէ թլ-
փատութիւն քարոզէի, ընդէ՞ր տակաւին հալածիմ ։ ապա
12 ուրեմն խափանեալ իցէ գայթագղութիւն խաչին ։ * Երա-
նի՛ թէ մոտակտուր իսկ լինէին, որ զձեզն խռովեցու-
13 ցանեն ։ * զի դուք յազատութիւն կոչեցեալ էք ։
Եղբարք, միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի 'ի պատ- ժԱ
14 ճառս մարմնոյ․ այլ սիրով ծառայեցէք միմեանց ։ * զի
ամ օրէնք 'ի մի բան կատարին․ 'ի սիրեսցեան զընկեր
քո

ու" ։ (29) Ոմանք․ Ծնեալն էր ։ (30) Բազմք․ Եւ զորդի
դորա․․ որդի աղախնոյդ ընդ որդւոյ ազատին ։
Գլ․ Ե․ (1) Ոմանք․ Ծառայութեան մտանիցէք ։ (2) Ոմանք․
Զի թէ թլ"․․ ձեզ ինչ ոչ օգ" ։ (5) Ոմանք․ Զի մեք հոգ-
ւովն 'ի հա" ։ (6) Ոմանք․ Քզի 'ի քս յս ոչ թլ"․․․ սի-
րով աշխատեալ ։ (7) Ոմանք․ Ոչ հաւանել ։ (8) Ոսկան․ Ոչ
յայնմանէ էին որ ։ (9) Ոմանք․ Զի փոքր մի խմոր ։ (10) Ո-
մանք․ Խռովեցուցանեն զձեզ, կրեսցէ դատաստանս ով ոք ։
(11) Ոմանք․ Թլփատութիւն քարոզեցի, ըն"․․․ խափան
իցէ գայթա" ։ (12) Ոմանք․ Իսկ լեալ էին որ զձեզն ։
(13) Ոսկան ընդ այս միամ օրինակի ընթեռնու․ Կոչեցեալ էք
եղբարք․ միայն զի ։ (14) Ոմանք․ Զի սիրեսցես զըն" ։

Digitized by Google

քո իբրեւ զանձն քո ։ * Ապա թէ զմիմեանս խածատէ_ 15
ցէք՝ եւ ուտիցէք. զգոյշ լերուք՝ գուցէ ՚ի միմեանց սա_
է գ տակիցիք ։ * Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք, եւ 16
զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք ։ * Զի մարմին ցան_ 17
կայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ.
եւ զի սոքա միմեանց հակառակ են, մի՛ զոր կամիցիքն՝
զայն առնիցէք ։ * Իսկ եթէ հոգւով վարիք, ապա չէք 18
ընդ օրինօք ։ * Զի յայտնի են գործք մարմնոյ. այս ինքն 19
են, շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն, * կռապաշտ_ 20
ութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ,
բարկութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք, հեր_
ձուածք, * չարակնութիւն, սպանութիւնք, արբեցութիւնք, 21
անառակութիւնք, եւ որ ինչ սոյին նման են ։ զոր յա_
ռաջագոյն ասեմ ձեզ, որպէս եւ կանխաւ ասացի, թէ
որ զայնպիսիսն գործեն, զարքայութիւն այ ոչ ժառանգ_
եսցեն ։ * Իսկ պտուղ հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, 22
խաղաղութիւն, երկայնմտութիւն. * քաղցրութիւն, բարութիւն, 23
հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն ։ զայսպիսեաց առ_
ասի օրէնքն չեն հակառակ ։ * Իսկ որ քրիստոսին են, ըզ_ 24
մարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօքն եւ ցանկութեամբք
հանդերձ ։ * Եթէ կեցեալ եմք հոգւով, ընդ հոգւոյն եւ գնա_ 25
ցեսցուք ։ * Եւ մի՛ լինիցուք սնոտիփառք՝ միմեանց ձայն 26
տալով, եւ ընդ միմեանս նախանձելով ։

ԳԼ. Զ.

է դ Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ՚ի ձէնջ յինչ 1
եւ իցէ յանցանս, դուք որ հոգեւորդ էք՝ հաստա_
տեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. զգոյշ լինիցիք
անձանց, զի մի եւ դուք փորձիցիք ։ * Զմիմեանց բեռն 2
բարձէք, եւ այնպէս կատարեցէք զօրէնսն քի ։ * Եթէ 3
հա_

(15) Ոմանք. Ապա եթէ զմի՛՛ ։ (16) Ոմանք. Ասեմ եղբարք, հոգւով ։ (18) Ոմանք. Իսկ եթէ մարմնով վարիք ։ (19) Ոմանք. Մարմնոյն. այսինքն է... գիջութիւն, պղծութիւն ։ (20) Ոմանք. Թշնամութիւնք, հեռ ։ (21) ԱՅ Գրչագիրք համաձայն ընդ բնաբ ՚ի ցուցն՛՛. այլոց համարոց նշանակին ։ Աստուածեցի է կանոնս ։ (21) Ոմանք. Որպէս կանխաւն ա՛՛... ոչ ժառանգել կարեն ։ (23) Ոսկան յաւելու. Հաւատ, համբերութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն, Ճշմարտ. այսպիսեաց առ՛՛ ։ (24) Ոմանք. ՚ի խաչ հանեցին կարեօք ։ (26) Ոմանք. Զայն տալով, եւ ոչ միմեանս նախանձելով ։
Գլ. Զ. (1) Օրինակ մի. Ըմբռնեսցի մարդ ոք ՚ի ձէնջ ։ (1) Ոմանք. Հոգեւորքդ էք.. զայնպիսին հոգ՛՛.. զգոյշ լինիջիք ան՛՛.. փորձիջիք ։ (2) Ոսկան յաւելու. Կատարեցէք մի չափ մեծ զօր՛՛ ։ (3) Ոմանք. Եթէ ոք համարիցի ։

Digitized by Google

համարիցի՝ որ լինել ինչ՝ և չիցէ, զանձն իւր խաբէ։
4 * զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւրոք, և ապա ան-
ձին իւրում միայն պարծանս տացէ, և մի առ ըն-
5 կերաւն։ * զի իւրաքանչիւր ոք՝ զիւր բեռն բառնա-
6 լոց է։ * Հաղորդ լիցի աշակերտն վարդապե-
7 տին՝ յամ բարութիւնս։ * Մի՛ խաբիք, ած ոչ արհա-
8 մարհի։ * զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձես-
ցէ։ որ սերմանէ՝ ՝ի մարմին իւր, ՝ի մարմնոյ անտի հըն-
ձեսցէ զապականութիւն. և որ սերմանէ ՝ի հոգին, ՝ի
9 հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից։ * Այլ
զբարիս գործել մի ձանձրասցուք, զի ՝ի ժամանակի
10 իւրում հնձեսցուք առանց լքանելոյ։ * Այսուհետև
մինչդեռ ժամանակս ՝ի ձեռս է, գործեսցուք զբարիս
առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ,
11 * Տեսէք՝ որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ։ ԺԲ
12 * զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մարմ-
նով, նոքա ստիպեն զձեզ թլփատել. միայն՝ զի մի զխա-
13 չին քի զհետ երթայցեն։ * քանզի և որ թլփատեալքն
իսկ են, նոքա զօրէնսն ոչ պահեն. այլ կամին զի դուք
14 թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին։ * Այլ ՎՂ
ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ՝ի խաչն տն մե-
րոյ յի քի. որով ինձ աշխարհ ՝ի խաչ ելեալ է, և
15 ես աշխարհի։ * Զի ոչ թլփատութիւն ինչ է, և ոչ ան-
16 թլփատութիւն. այլ նոր արարած։ * և որ միանգամ
այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ՝ի վերայ նց
17 և ողորմութիւն, և ՝ի վերայ իսրայէլին այ։ * Այսու-
հետև աշխատ ոք զիս մի արասցէ. զի ես զչարչարանս
18 քի ՝ի մարմնի իմում կրեմ։ * Շնորհք տն մերոյ յի
քի ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն։

Առ Գաղատացիս՝ գրեցաւ ՝ի Հռովմէ։ Տուն. ճղբ։

---

(4) Ոմանք. Իւրաքանչիւրոք ՝ի ձեռն, և ա''... պար-
ծանս տայցէ։ (8) Ոմանք. Զնոյն և հնձէ.. ՝ի մարմին
իւր ապականութի... զկեանս յաւիտենականս։ (9) Ո-
մանք. Մի ձանձրանայք, զի։ (10) Ոմանք. Գործեսցուք
զբարի... առ ընտանիս հաւատոյ։ (11) Ոմանք. Գրե-
ցի ձեզ իմով ձե''։ (12) Ոսկան. Զի մի զհետ խաչին քի
եր''։ (13) Ոմանք. Քանզի որ թլփատեալքն... դուք
թլփատիջիք։ (15) Օրինակ մի ընդ ոսկանայ յաւելու. Զի
՝ի քս յս ոչ թլփատութի ինչ... նոր արարած։ (16) Ո-
մանք. Այսմ կանոնի միաբանեսցին, խա''։ (17) Յոմանս պկսի.
Զչարչարանս քի ՝ի (18) Ոմանք. Ընդ հոգւոյդ ձերում։

ՆԱ

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. Եփեսացւոց Թղթոյն:

Ո այս առաքելոյ 'ի Հռովմայ, ո՛չ թէ ո՛չ էր փութալ զնա. և [illegible]է պատճառ թղթիս՝ այս: Եփեսացւոցն հաստատեալ էին 'ի Տր մեր յս քս, և ընդունիք էին հաւատոցն որ 'ի նա, և առ ամ սուրբս սանկէին զնէր. և չունէին 'ի պառազատե հաստատել: Լուեալ յուսմանց առաքելոյն՝ գրեաց առ նս զայս թուղթս՝ զգուշացուցէ. և յառաջին ցուցանէ մի՛ էրէէք նոր չարծել զնէր խորհուրդս. այլ խոկջէանէ յառաջ քան զլինել աշխարհի է առ՝ հաճոյն այ. է թէ քս նս մեր լուսաւորեցաւ, և զմեզ կեցոյց: Յետ այսորիկ վասն խոնմանն հեթանոսաց առէ, զի ցուցէ արժանաւոր զնս հաւատոցն: և յայտնէ թէ խոստում մեր եղև, ո՛չ 'ի մարդկանէ՝ այլ 'ի քնէ, որ է որդի այ. և յայտնանէ սուսանիք էին ո՛չ մարդապաշտ էին հաւատացելոցն 'ի քս, այլ ճշմարիտ աճապաշտ: Նշանակէ և զնէտն՝ թէ նս այսորիկ առաքեցաւ քարոզել զաւետարանն, և զի նս ամենայն զգուշանայ: Յետ այսորիկ ներբողական բանիւք զայր և զկանայս, զհայրս և զմանկունս, զդեսպս և զծառայս՝ հաստատէ 'ի թուղթս. և զամենեսեան ընդ այն յորդորէ ընդդէմ բանսարկուին և դիւաց նր, առ նոսա առնէ դարձել, և բերեալ հասափել և կնքել զնէտս ամենեցուն ընդդէմ ապաշխարութեան գործոյն. և այսպէս կատարէ զթուղթս:

Գլուխք առ Եփեսացւոց Թղթոյն:

ա. Վս քնի ընդդրուէն մերոյ, և նորընծայութէն և կատարմանն:

բ. Աղօթք նս գիտութէ քնի ընծայելոցն 'ի մեզ բարութէն:

գ. Վս հեթանոսաց և հրէից ընդունաէն ընդ այ 'ի ձեռն քնի յաւել ընդ շնորհացն:

դ. Վս փոխելոյ նմա ամենեցուն խորհրդոյն 'ի լուսաւորութէ հեթանոսաց, և յանդիմանութէ՛ դիւաց:

ե. Աղօթք նս եկեղեցւոյ՝ 'ի զօրութէ և 'ի սէրն այ:

զ. Խրատ նս ուրոյ միաբանութէ. թէպէտ և շնորհքն նս զանազան լինիցին բաժանեալ իցեն:

է. Վս զգաստութէ և արդարութէ՝ որ ամենայնի առնէ զնէր:

ը. Վս արժանաւոր կենաց ուրուաթէ, և գործոյն զշնորհին յանդիմանելոյ. և մի՛ միայն բանիւք՝ այլ և հոգևոր ընելոյ, սաղմոսիւք՝ և մի՛ գինւով:

թ. Պատուէր ընդանեկան զարգացմանց իշխանաւորաց, և իշխենաց ընդ քնի:

ժ. 'Ի կերպարանս վառելոյ վասն ընդ քնի զօրութէն:

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ ԹՈՒՂԹ։

ԳԼ. Ա.

1 ՊԱՒՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՅԻ- ըէ
սուսի ք՟ի կամօքն ա՟յ, սրբոց որ են յե-
2 փեսոս, եւ հաւատացելոց ՚ի ք՟ս։ * Շը-
նորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յա՟յ Հօ-
րէ մերմէ եւ ՚ի տ՟նէ յ՟սէ ք՟սէ։
3 * Օրհնեալ է ա՟ծ եւ հայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. որ օրհ- Ա
նեաց զմեզ ա՟մ հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս ՚ի ք՟ս։
4 * ո՟պ ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշ-
խարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի ն՟ր՝
5 սիրով։ * Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրու-
թիւն ՚ի ձեռն յ՟ի ք՟ի, ՚ի նոյն՝ ըստ հաճութեան՝ կամաց
6 իւրոց, * ՚ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. որով
7 զուարճացոյց զմեզ սիրելեաւն։ * որով ունիմք ըզ-
փրկութիւն ՚ի ձեռն արեան ն՟ր, զթողութիւն մեղաց ըստ
8 մեծութեան շնորհաց իւրոց. * որ առաւելոյր ՚ի մեզ ա՟մ
9 իմաստութեամբ եւ գիտութեամբ։ * Եցոյց մեզ զխորհուրդ
կամաց իւրոց, ըստ հաճութեան իւրում. զոր յառաջա-
10 գոյն եդ նովաւ, * ՚ի տնտեսութիւն լրման ժամանակաց,
բովանդակել զա՟մ ք՟իւ որ ինչ յերկինս՝ եւ որ ինչ յեր-
11 կրի, ՚ի նոյն։ * Որով եւ վիճակեցաք յառաջագոյն հը-
րաւիրեալք, ըստ յառաջադրութեան ա՟յ. որ զա՟մ յաջո-
12 ղէ ըստ խորհրդոց կամաց իւրոց. * լինել մեզ ՚ի գո-
վեստ փառաց նորա՝ յառաջագոյն յուսացելոցս ՚ի ք՟ս։
13 * Որով եւ դուք իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան,
զաւետարանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ
14 կնքեցայք հոգւովն ս՟րբ աւետեաց. * որ է առհաւատ-
չեայ

---

* ՚Ի Վերնագրին՝ օրինակ. Թուղթ առ Եփեսացիսն։ Եւ օրինակ. Թուղթ Եփեսացւոց։
Գլ. Ա. (1) Օրինակ. Հաւատացելոց որ են ՚ի ք՟ս յ՟ս։ (4) Օ-րինակ. Զլինել աշխարհի։ (7) Օրինակ. Շնորհացն իւրոց։ (9) Օրինակ. Զխորհուրդ կամաց իւրոց ըստ հաճութեան իւ-րոյ։ (10) Ոմանք. ՚Ի տնտեսութեան լրման։ (10) Օրինակ. Բովանդակեալ զամ։ (11) Օրինակ. Որով վիճակեր"... ըստ առաջադրութեանն։ (13) Օրինակ. Որով իբրեւ դուք լուա"... որով եւ հաւա"։ (14) Օրինակ. ՚Ի գովեստ փա-

Digitized by Google

չեայ ժառանգութեան մերոյ 'ի փրկութիւն նուաճութեան,
'ի գովեստ փառաց նորա։
Բ * Վն այնորիկ և ես իբրև լուայ զհաւատսն ձեր որ 'ի 15
ՏԷր Յս, և զսէրն որ ընդ ամ սուրբս, * ոչ դադարեմ 16
ԲԴ 'ի գոհանալոյ վն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս. * զի Այծ 17
Տն մերոյ Յսի Քսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ զհոգին
իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբ նորա. * Լու- 18
սաւոր առնել զաչս սրտից, առ 'ի գիտելոյ մեզ՝ զինչ
է յոյս կոչմանն նր, և զինչ է մեծութիւն փառաց ժա-
ռանգութեան նր 'ի սուրբս. * և զինչ է առաւելութիւն 19
մեծութեան զօրութեան նր 'ի մեզ հաւատացեալս. ըստ ազդե-
ցութեան կարողութեան զօրութեան նորա, * զոր յաղթեաց 20
'ի Քս. Զի յարոյց զնա 'ի մեռելոց. և նստոյց ընդ աջ-
մէ իւրմէ յերկինս, * 'ի վերոյ քան զամ իշխանութիւն, 21
և պետութիւն, և զօրութիւն, և տէրութիւն, և ամ անուան
անուանելոյ. ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և 'ի
հանդերձելումն։ * և զամ ինչ հնազանդ արար 'ի ներք- 22
քոյ ոտից նր։ Եւ զնա ետ գլուխ 'ի վերայ ամենայն
իրիք եկեղեցւոյ, * որ է մարմին նորա, լրումն՝ որ 23
զամենայն յամենայնի լնու։

ԳԼ. Բ.

Գ Եւ զձեզ որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր և յանցանս, 1
* յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենից աշխարհիս, 2
ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսորիկ, որ
այժմս ներգործէ յորդիսն ապստամբութեան. * յորս 3
և մեք ամենեքեան շրջեաք երբեմն, 'ի ցանկութեան մարմ-
նոյ մերոյ, և առնէաք զկամս մարմնոյ և զմտաց, և էաք
ԲԶ որդիք բարկութեան իբրև այլքն։ * Այլ Այծ 4
որ մեծն է ողորմութեամբ, վն բազում սիրոյն իւրոյ զոր
սիրեացն զմեզ. * մինչդեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր, 5
կեն-

առաց։ (15) Ոմանք. Վն այսորիկ և ես... զձեր որ 'ի Տէր
մեր Յս։ (16) Ոմանք. Զձեզ յաղօթս իմ։ (17) Ոմանք.
Եւ յայտնութիւն գիտութեան։ (18) Ոմանք. Առ 'ի գիտել
մեզ... և զինչ մեծութիւն փառաց ժառանգութեան նր որ 'ի
սուրբս։ (19) Ոմանք. Զօրութեան նր։ (21) Ոմանք. Իշխանութեանց
և պետութեանց... և 'ի վր ամ անուանելոց, ոչ մի"։
(22) Ոմանք. Զի զամ հնա"... ոտից իւրոց.. և զնա ետ
գլուխ 'ի վր ամ իրիք եկեղեցւոյ։
Գլ. Բ. (1) Ոմանք. Եւ զձեզ երբեմն մեռեալսն էիք։
(2) Ոմանք. Յորս երբեմն գնա"... օդոյս այսորիկ, որ
այժմս։ (3) Ոմանք. 'Ի ցանկութիւնս մարմ"... մարմնոյ և
մտաց... իբրև զայլսն։ (4) Ոմանք. Այլ Այծ որ մեծն։
(5) Օրինակ մի. Մինչդեռ մեղաւորքս էաք 'ի մեղս...։

կենդանիս արար զմեզ 'ի քն · քանզի շնորհօք ապրե_
6 ցայք · * ընդ նմին յարոյց , և ընդ նմին նստոյց յերկ_
7 նաւորս 'ի քն յն : * զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ գա_
լոցն են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութ̃
8 'ի մեզ 'ի քն յն : * Զի շնորհօք նր էք փրկեալք 'ի ձեռն
9 հաւատոյն : և այս՝ ոչ 'ի ձէնջ , այլ այ պարգև է · * ոչ
10 'ի գործոց , զի մի ոք պարծեսցի : * զի նորա արարած
եմք , հաստատեալք քնիւ յնիւ 'ի գործս բարութե · յորս
յառաջագոյն պատրաստեաց ած · զի 'ի նոյն գնասցուք :
11 * Վասն որոյ և դուք յիշեցէք , զի երբեմն հեթանոսք
էիք մարմնով · որ կոչեցեալն էն անթլփատութիւն՝ յա_
նուանեալ թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագոր_
12 ծին · * զի էիք 'ի ժամանակին յայնմիկ առանց քնի ,
և օտարացեալք յուխտից աւետեացն , և յոյս ինչ ոչ ու_
13 նէիք՝ և անածք էիք յաշխարհի : * Իսկ այժմ 'ի ձեռն
յնի քնի , դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք , մերձա_
14 ւորք եղերուք արեամբն քնի : * Զի նա է խաղաղու_
թիւն մեր , որ արար զերկոսեան մի · և զմիջնորմ ցան_
15 կոյն քակեաց , զթշնամութիւն 'ի մարմնի իւրում · * և
զօրէնս պատուիրանացն՝ հրամանօքն խափանեաց · զի
զերկոսին հաստատեսցէ ինքեամբ 'ի մի նոր մարդ , և
16 արասցէ խաղաղութիւն · * և հաշտեսցուսցէ զերկոսին
միով մարմնով ընդ այ խաչիւն իւրով : Սպանեալ
17 զթշնամութիւն յանձին իւրում , * և եկն աւետարանեաց
խաղաղութիւն ձեզ հեռաւորաց , և խաղաղութիւն մերձաւո_
18 րաց · * զի նովաւ ունիմք զմուտսն երկոքեան միով
19 հոգւով առ հայր : * Ապա այսուհետև ոչ էք օտարք
և

շնորհօքն ապ" : (7) Ոմանք · 'Ի յաւիտեանսն որ գալոցն : (8) Ոմանք · Զի շնորհօքն նր · · · ոչ է 'ի մէնջ , այլ յայ պարգև է : Որ օրինակ մ · Այլ ած պարգևէ : (9) Ոմանք · Եւ ոչ 'ի գործոց : (10) Ոմանք · Արարածք եմք , հաւատացեալ Յն Քի 'ի գործս արդարութե , յորս յառաջագոյն հաստատեաց ած զի 'ի նոյնս գն" : (11) Ոմանք · Եւ դուք եղբարք յիշ" · · · որ կոչեցեալ էն անթլփատութե 'ի յանուանեալ թլ" : (12) Գրչագիր նոր օրինակ մ միայն յաւելու · Առանց քնի , և օտարացեալք յառաքինութենէ Յնի · և տարա" : Ըստ որում դնէ և ոսկան · Եւ օտարացեալ էիք յառա" : (12) Օրինակ մ · Յուխտին յաւիտեանցն : (13) Ոմանք · Իսկ այժմիկ 'ի ձեռն · · հեռաւորքն էիք : (14) Ոմանք · Զերկոսին մի , և զմիջնորմն ցան" · · զթշնամութեն 'ի : (15) Ոմանք · Զի երկոսինն հաս" · ինքեամբ 'ի նոր մարդն : (16) Ոմանք · Զթշնամութե 'ի մարմնի իւրում : (17) Ոմանք · Ձեզ խաղաղութե : (19) Յոմանս գիրս · Ապա այսուհետև ոչ :

Digitized by Google

եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց, եւ ընտանիք
այ. * շինեալք 'ի վերայ հիման առաքելոց եւ մար_ 20
գարէից. որոյ է գլուխ անկեանն յի քի. * յորում 21
ամենայն շինուածն յօդեալ եւ պատշաճեալ աճէ 'ի տա_
ճար սուրբ տն. * յորում եւ դուք ընդ նմին շինիք 22
ԽԶ 'ի բնակութիւն այ հոգւովն:

ԳԼ. Գ.

Գ Սոյն այսորիկ ես պաւղոս կապեալ յսի քսի, վս 1
ձեր հեթանոսաց: * Թերեւս լուեալ իցէ ձեր 2
զտնտեսութիւն շնորհացն այ, որ տուեալ են ինձ 'ի ձեզ.
* Զի ըստ յայտնութեան՝ ցուցաւ ինձ խորհուրդն. որպ 3
յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք. * առ 'ի կա_ 4
րօղ լինելոյ ընթեռնուլ եւ 'ի միտ առնուլ՝ զիմաստու_
թիւն իմ 'ի խորհրդեանն քսի: * Զի այլոց ազգաց ոչ 5
ցուցաւ որդւոց մարդկան. որպ եւ այժմ յայտնեցաւ
սրբոց իւրոց՝ առաքելոց եւ մարգարէից՝ հոգւովն. * լի_ 6
նել հեթանոսաց ժառանգակիցս՝ եւ մարմնակիցս, եւ
հաղորդս աւետեացն 'ի քս յս՝ աւետարանաւն, * որոյ 7
եղէ ես պաւղոս սպասաւոր, ըստ պարգեւաց շնորհացն
այ որ տուաւ ինձ, ըստ յաջողութեան զօրութեան նր: * ինձ որ 8
նուաստս եմ քան զամ սրբոց՝ տուաւ շնորհքս այս 'ի հեթա_
նոսս, աւետարանել զանքննելին մեծութիւն քսի. * եւ 9
լուսաւորել առնել զամենեսեան, թէ զի՞նչ է տնտեսու_
թիւն խորհրդոյն, որ ծածկեալ էր յամ յաւիտենից՝
առ այ որ զամ ինչ արար: * Զի յայտնեսցի արդ իշ_ 10
խանութեանց եւ պետութեանց՝ որ յերկինս են, 'ի ձեռն ե_
կեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւն այ. * ըստ յա_ 11
ռաջադրութեան յաւիտենիցն՝ զոր արար 'ի ձեռն տն մե_
րոյ յսի քսի: * որով ունիմք զհամարձակութիւն եւ զը_ 12
նդունելութիւն յուսով 'ի ձեռն հաւատոց նորա: * վասն 13
որոյ աղաչեմ մի ձանձրանալ 'ի նեղութիւնս իմում,
որ վասն ձեր է. որ է փառք մեր:
Ե * Վասն այսորիկ դնեմ ծունր առ հայր տն մերոյ յսի 14
քսի.

---

(20) Ոմանք. Որոյ է. Նա, որ է գլուխ.. քս յս: (22) Ոմանք. Ընդ նմա շինիք.. այ հոգւոյն:
Գլ. Գ. (2) Ոմանք. Լուեալ է ձեր: (3) Ոմանք. Ըստ յայտնութեացն ցու''.. որպ եւ յառաջագոյն: (4) Ոմանք. Զիմաստութիւն զիմ 'ի խոր'': Ոսկ. օրինակ մի. Զիմաստութիւն զմի խորհրդեանն: (5) Ոմանք. Որպ այժմ յայտ'': (7) 'Ի բազմ օրինակս. Ես պաւղոս սպաս'': (9) Ոմանք. Եթէ զինչ է.. խորհրդոյն ծածկ.. յաւիտենիցն առ այ: (10) Ոմանք. Իշխանութեանց եւ պետ''... իմաստութիւն քսի: (13) Ոմանք. Որ է փառք ձեր: (14) Ոմանք. Վս այսորիկ դնեմ:

Digitized by Google

15 քսի. * ուստի ամ՟ նահապետութիւն յերկինս և յերկ-
16 րի անուանի. * զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց
իւրոց, հաստատել զօրութբ 'ի ձեռն հոգւոյն իւրոյ, 'ի
17 ներքին մարդն. * բնակել քսի հաւատովք 'ի սիրտս
18 ձեր. սիրով արմատացեալք, և հաստատեալք: * Զի
կարող լինիջիք հասանել ընդ ամ՟ սուրբս, զինչ է լայ-
նութիւն և երկայնութիւն, և բարձրութիւն և խորութիւն.
19 * Ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն քսի. զի
20 լցջիք ամ՟ լրութբն այ: * Այլ այնմ որ կարօղն է ա-
ռաւել քան զամ՟ ինչ առնել յաճախութբ, քան զոր
խնդրեմքն և իմանամք. ըստ զօրութեանն որ յաջողեալն
21 է 'ի մեզ: * Նմա փառք յեկեղեցւոջն և 'ի քս յս, յա-
մենայն ազգս յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Գլ. Դ.

1 Արդ՝ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ 'ի տր, ար- 2
2 ժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք: * ամ՟ խո-
նարհութբ, և հեզութբ, և երկայնմտութբ՝ անսալ
3 միմեանց սիրով: * փութալ պահել զմիաբանութիւն հոգ-
4 ւոյն յօդիւ խաղաղութեան: * մի մարմին՝ և մի հոգի.
5 որպէս և կոչեցարուք 'ի մի յոյս կոչման ձերոյ: * Մի է
6 տր, մի հաւատք, մի մկրտութիւն: * մի այ, և հայր ա-
մենեցուն, որ 'ի վերայ ամենայնի, և ընդ ամենեսին,
7 և յամենեսին 'ի մեզ: * Այլ իւրաքանչիւր ումեք 'ի
մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգևացն քսի:
8 * վասն որոյ և ասէ. Ել 'ի բարձունս՝ գերեաց զգե-
9 րութիւն, և ետ պարգևս մարդկան: * Որ ելն զինչ է,
10 եթէ ոչ՝ զի էջ նախ 'ի ստորին կողմ երկրի: * որ էջն,
նոյն է՝ և որ ելն 'ի վերոյ քան զամ՟ երկինս, զի լցցէ
11 զամ՟: * Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մար-
գարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վար-
12 դապետս. * 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ պաշ-
տա

---

(16) Ոմանք. Հաստատեալ զօրութբ: (17) Ոմանք. Սի-
րովք արմա": (18) Ոմանք. Կարօղ լինիցիք հա": (19) Ո-
մանք. Գիտութեան սիրոյն.. ամ՟ գիտութբն այ: (21) Ո-
մանք. Յեկեղեցւոջ և 'ի քս:
Գլ. Դ. (2) Ոմանք. Հեզութբ, երկայնմտո": (3) Ոմանք.
Յօդիւ խաղաղութեան: (5) Ոմանք. Զի մի է տր, և մի
հաւատք: (6) Օրինակ մ. Եւ հայր ամենայն, որ 'ի վր ամենայն
և 'ի վր ամի, և ը ամենեսին 'ի մեզ: (7) Ոմանք. Տուեալ
է շնորհս ըստ չափու: (9) Ոմանք. Կողմն երկրի: (9)(10) Յօ-
րինուածին այսպէս ունէր նեստորականն համաձայն ոմանց. Եթէ
ոչ զի էջ նախ: 'ի ստորին կողմ երկրի որ էջն, նոյն է
և որ ելն 'ի վերոյ քան: (12) Ոմանք. Առ 'ի հաստատ.

Digitized by Google

պաշտաման, 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի. * մինչև հասցուք 13
ամենեքեան 'ի մի միաբանութիւն հաւատոց՝ և գիտութեան
Որդւոյն Աստուծոյ. յայր կատարեալ, 'ի չափ հասակի կատար-
մանն Քրիստոսի: * Զի մի՛ յայսմհետէ իցեմք տղայք խռո- 14
վեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան,
խաբէութեամբ մարդկան. խորամանկութեամբ 'ի խաբէու-
թեան մոլորութեան: * այլ ճշմարտեալք սիրով աճեսցու- 15
ցուք 'ի նա զամենայն, որ է գլուխն Քրիստոս. * ուստի ամենայն մար- 16
մինն յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք տարաբե-
րութեան՝ ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր մասին՝
զաճումն մարմնոյ գործէ՝ 'ի շինուած անձին իւրոյ սիրով:
Է * Արդ՝ զայս ասեմ և ուխտեմ 'ի տէր. մի ևս ձեզ ըն- 17
նոյն օրինակ գնալ, որպէս և այլ հեթանոսք գնան՝ ու-
նայնութեամբ մտաց իւրեանց. * որոց խաւարեալ են միտք 18
իւրեանց, և օտարացեալ են 'ի կենաց անտի Աստուծոյ, վասն
տգիտութեանն որ է 'ի նոսա, վասն կուրութեան՝ սրտից իւ-
րեանց: * որք զանձանց իւրեանց զյոյսն հատին., և 19
մատնեցին զանձինս գիջութեան, 'ի գործս ամենայն պղծու-
թեան ագահութեամբ: * Այլ դուք՝ ոչ այսպէս ուսարուք զՔրիստոս: 20
* Թէպէտ և լուարուք զնմանէ և նովաւ ուսայք, որպէս 21
է ճշմարտութիւն յՅիսուս. * 'ի բաց մերկանալ 'ի ձէնջ ըստ 22
առաջին գնացիցն զմարդն հին, զապականեալն ցան-
կութիւք՝ խաբէութեանն: * և նորոգել հոգւովն մտաց 23
ձերոց. * և զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաս- 24
տատեալ է, արդարութեամբ և սրբութեամբ ճշմարտութեանն:
* Վասն որոյ 'ի բաց ընկեցէք զստութիւն. խօսեցարուք 25
զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի
եմք միմեանց անդամք: * բարկանայք՝ և մի՛ մեղան- 26
չէք. արեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ:
* և մի՛ տայք տեղի սատանայի: * Որ գողանայրն, մի՛ 27
ևս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել 28
ձեռօք իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ ում
պիտոյ իցէ: * Ամենայն բան աղտեղ 'ի բերանոյ ձեր- 29
մէ մի՛ ելցէ. այլ որ ինչ բարին է, 'ի շինուած պիտոյից.
զի տացէ շնորհս այնոցիկ որ լսենն: * և մի՛ տրտմե- 30

ցու-

տութեան որ" . . . 'ի շինուած մարմ": (13) Օրինակ. Եւ 'ի գիտութեան որդւոյն: (14) Օրինակ. Իցեմք տղայք խռ": (15) Օրինակ. Աճեսցուք 'ի նա զամ: Ոչ ունին. 'ի նա ամն: (16) Օրինակ. Տարբերութեն ըստ ազդե" . . . մարմնոյ գործոյ 'ի շինուած: (18) Օրինակ. Վասն տգիտութեն . . վասն կուրութեն: (19) Օրինակ. Զանձինս 'ի գիջութեն: (23) Օրինակ. Հոգւով մտաց: (25) Օրինակ. Իւրաքանչիւր ընկերի: (28) Օրինակ. Վաստակեսցի ձեռօք իւրովք գործելով. բաւական լիցի տալ: (29) Օրինակ. Բարին իցէ:

Digitized by Google

ցուցանէք զհոգին սուրբ այ, որով կնքեցարուք յաւուրն
31 փրկութեան: * Ամենայն դառնութիւն, և բարկութիւն, և
սրտմտութիւն, և աղաղակ, և հայհոյութիւն բարձցի 'ի
32 ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ: * Լերուք ընդ
միմեանս քաղցունք՝ գթածք. շնորհել միմեանց, որպէս
և այ ք֊ի շնորհեաց մեզ:

ԳԼ. Ե.

1 Նմանօղք եղերուք այ, իբրև որդիք սիրելիք. * և
2 գնացէք սիրով՝ որպէս և ք֊ս սիրեաց զմեզ, և մատ֊
նեաց զանձն իւր վն մեր, պատարագ և զենումն այ
'ի հոտ անուշից:
3 * Այլ պոռնկութիւն և ամ պղծութիւն, կամ ագահութիւն, Բ
և մի՛ անուանեսցի ձեզ 'ի միջի ձերում, որպէս և վայելէ սրբ֊
4 բոց. * և զազրութիւն, կամ խօսք յիմարութեան, կամ խեղ֊
կատակութիւն, որ ոչ վայելէ. այլ մանաւանդ գոհու֊
5 թիւն: * Զայս իսկ գիտասջիք. թէ ամ պոռ֊
նիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կռապաշտ՝ ոչ
6 ունի ժառանգութիւն յարքայութեանն ք֊ի և այ: * Մի
ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեօք. զի վն այսորիկ
իսկ գայ բարկութիւն այ 'ի վերայ որդւոցն անհաւանու֊
7 թեան: * Մի այսուհետև լինիք բաժանորդք նց: * Զի
8 էիք երբեմն խաւար, արդ՝ լոյս էք 'ի տր,
9 իբրև զորդիս լուսոյ գնացէք. * զի պտուղ լուսոյ ամ
10 բարութեամբ է՝ և արդարութեամբ և ճշմարտութեամբ: * Փոր֊
11 ձեցէք՝ զինչ է հաճոյ տն. * և մի՛ հաղորդ լինիք ան֊
պտուղ գործոցն խաւարի. այլ մանաւանդ յանդիմանե֊
12 ցէք: * զի որ 'ի ծածուկ ինչ գործի 'ի նոցանէ, զայն
13 և խօսել ամօթ է: * այլ ամ ինչ յանդիմանեալ 'ի
լուսոյ՝ յայտնի լինի. զի ամ ինչ որ յայտնի է՝ լոյս է:
14 * Վն որոյ և ասէ. արի որ ննջեսդ, և կանգնեաց 'ի մե֊
15 ռելոց, և լուսաւորեսցէ զքեզ ք֊ս: * Տեսջիք ոսմ ճշմար֊ Թ կ
16 տիւ գնայցէք. մի՛ իբրև անիմաստք, * այլ իբրև իմաս֊
տունք. գնեցէք զժամանակս, զի աւուրքս չարութեան
են:

'ի չլինումն: (31) Ոմանք. Բարձցի 'ի միջոյ ձեր:
Գլ. Ե. (1) Բազումք. Եղերուք նմանօղք այ: (2) Օրինակ
մ. Այլ հօր 'ի հոտ ա՛՛: (3) Ոմանք. Որպէս վայելէ է սր՛՛:
(4) Ոմանք. Որ ոչ վայելէ է սրբոց, այլ: (5) Ոմանք. Քանզի
և այ. կամ, այլ: (6) Ոմանք. Զի վն այսորիկ գայ բար֊
կութիւն: (9) Ոմանք. Ամ բարութեան է: (10) Ոմանք. Հաճոյ
է տն: (12) Ոմանք. Որ 'ի ծածուկս ինչ.. զայն և ա֊
մօթ իսկ ասէ՛՛: (14) Ասէ. Եւ լուսաւոր լիցի քեզ ք֊ս:
(15) Ոմանք. Որպէս ճշմարտութեամբ գնայցէք: (16) Օրինակ
մ. Գնեցէք զժամանս, զի աւուրքս չարութեան են:

են ։ * Վա՛ն այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմացարո՛ւք 17
զինչ են կամք տն ։ * Եւ մի՛ արբենայք գինւով, յո- 18
րում գեղխութի՛ն է ․ այլ մանաւանդ լցարո՛ւք հոգւով ․
* խօսել 'ի սիրտս ձեր սաղմոսիւք և օրհնութեամբք, և 19
երգովք հոգևորօք ․ երգել և սաղմոսել 'ի սիրտս ձեր
տն ։ * Գոհացարո՛ւք յամ ժամ 'ի վերայ ամենայնի, 20
յանուն տն մերոյ յսի քսի՝ հօրն և այ ․ * Հնազանդ 21
լերուք միմեանց երկիւղիւն քսի ։
Թ․ * Կանայք՝ իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև տն ․ 22
* զի այր է գլուխ կնոջ, որպ և քս գլուխ է եկեղեց- 23
ւոյ ․ և ինքն է փրկիչ մարմնոյ ։ * այլ որպ եկեղեցին 24
հնազանդ լինի քսի, նոյնպէս և կանայք իւրեանց ա-
րանց յամի ։ * Արք՝ սիրեցէ՛ք զկանայս ձեր ․ որպ և 25
քս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն
նորա ։ * զի զնա սրբեսցէ սրբութ աւազանին բանիւ ․ 26
* զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւո՛ր զեկե- 27
ղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ, կմ աղտեղութի, կամ
այլ ինչ յայսպիսեաց ․ այլ զի իցէ սուրբ և անարատ ։
* Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս, իբ- 28
րև զիւրեանց մարմինս ։ որ սիրէ զկին իւր, զանձն իւր
սիրէ ։ * զի ո՛չ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնու- 29
ցանէ և դարմանէ՛ զնա, որպ և քս զեկեղեցի ․ * զի ան- 30
դամք եմք մարմնոյ նորա, 'ի մարմնոյ նորա և յոսկե-
րաց նորա ։ * Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմ- 31
այր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին
երկոքին 'ի մարմին մի ։ * Խորհուրդս այս՝ մեծ է, 32
բայց ես ասեմ իսկ 'ի քս, և յեկեղեցի ։ * այլ և դուք 33
նոյնպէս մի ըստ միոջէ ․ զի իւրաքանչիւրոք զիւր կին՝
այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն ․ և կին երկնչիցի
յառնէ իւրմէ ։

Գ Լ․

---

(17) Օրինակ․ Վա այսորիկ մի լինիք անիմաստք․․ զինչ կամք են այ ։ (18) Օրինակ․ Լցարուք հոգւովն ։ Ուր ա- կան․ Հոգւով սրբով ։ (19) Այլ․ Երգել և սաղմոս ա- սել 'ի սիր" ։ (21) Օրինակ․ Երկիւղին քսի ։ (22) Օրինակ․ Հնազանդ լինիցին ։ (23) Յօրինակին․ Գլուխ կնոջ ։ (24) Օրինակ․ Որպ եկեղեցի հնա"․․ արանցն յամի ։ (25) Օրինակ․ Մատնեաց զանձն իւր ։ (27) Օրինակ․ Արատ ինչ․․ կամ այլ զինչ յայնպիսեաց անօթի, այլ զի ։ (28) Օրինակ․ Զիւրեանց մարմին ։ (29) Օրինակ․ Զի ոչ ոք ատէ զանձն իւր ։ (30) Յոմանս գիրս․ Մարմնոյ նր 'ի մարմնոյ նր ։ Ուր և ասնակ․ Եմք 'ի մարմնոյ նր, և ոսկր յոսկերաց նորա ։ (31) Օրինակ․ Վա այնորիկ թողցէ․․ զհայր իւր և զմայր ։ (32) Յոմանս գիրս․ Ասեմ իսկ 'ի քս ։ (33) Օրինակ․ Մի ըստ միոջէ իւրաք"․ զիւր կինն․․ և կինն երկնչիցի ։

Digitized by Google

ԳԼ. Զ.

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց 'ի Տր. զի Թ դ
2 այն է արժանն: * Պատուեա՛ զհայր քո եւ զմայր.
3 որ է առաջին պատուիրան յաւետիւն. * զի քեզ բա-
րի եղիցի, եւ երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի:
4 * Հա՛րք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնու-
5 ցանիջիք զնոսա խրատու եւ ուսմամբ Տն: * Ծառա՛յք՝
հնազա՛նդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց, ահիւ
եւ դողութեամբ եւ միամտութբ սրտից ձերոց՝ որպէս
6 եւ Քի: * Մի՛ առ ականէ ծառայել իբրեւ մարդահա-
7 ճոյք. այլ իբրեւ ծառա՛յք Քի առնել զկամս Այ. * սրը-
տի մտօք ծառայել իբրեւ Տն, եւ մի՛ իբրեւ մարդկան:
8 * գիտասջի՛ք թէ իւրաքանչիւրոք՝ որ զինչ 'առնէ ըզ-
բարին, զնո՛յն ընդունի 'ի Տնէ՝ եթէ ծառայ եւ եթէ
9 ազատ: * Եւ դուք տեա՛րք՝ զնո՛յն առնիջիք առ նոսա.
ներելո՛վ առնել զսպառնալիսն. գիտասջի՛ք՝ թէ եւ նց
եւ ձեր Տր գոյ յերկինս. եւ ակնառութի՛ւն ոչ գոյ առաջի նր:
10 * Այսուհետեւ զօրացարո՛ւք Տերամբ, եւ կարողութբ զօ- Ժ
11 րութեն նր: * եւ զգեցարո՛ւք զսպառազինութի Այ. զի
12 կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: * Զի
ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան. այլ
ընդ իշխանութիս եւ ընդ պետութիս, եւ ընդ աշխարհա-
կա՛լս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութե որ 'ի նեը-
13 քոյ երկնից: * Վասն ա՛յսորիկ առէք զսպառազինու- Թ ջ
թին Այ, զի կարօ՛ղ լինիցիք 'ի դժնի հարկանել չարին
14 յաւուրն չարութե: * Եւ իբրեւ զամ ինչ կատարիցէք.
հաստատու՛ն կացէք. զտեղի կալջիք, պնդեալ զմէջս
ձեր ճշմարտութբ, եւ զգեցեալ զզրահն արդարութե,
* եւ

Գլ. Զ. (1) Ոմանք. Զի այնպէս է արժան: (2) Ոմանք.
Առաջին պատուիրան յօրէնսն: (3) Ոմանք. Բարւո՛ք լի-
նիցի, եւ երկայնակեաց եղիցիս 'ի վր: (6) Ոմանք. Ոչ
մարդահաճոյք. այլ իբրեւ Քի ծառայք: (8) Օրինակ մի.
Գիտասջիք զի իւրաքանչիւրոք 'ի ձենջ: (8) Ոմանք. Ե-
թէ իւրաքանչիւրոք զոր ինչ եւ առնիցէ զբարին, զնոյն
եւ ընդունի. կամ, ընդունի եւ 'ի Տնէ: (9) Ոմանք. Գիտա-
ջիք զի եւ նց: Եւ ոմանք. Եթէ նց եւ ձեր Տր: (11) Ոմանք.
Սպառազինութիւն Այ: (11) Օրինակ մի. Ընդդէմ հնա-
րից բանսարկուին: (12) Ոմանք. Ոչ է մեզ մարտ պա-
տերազմի ընդ.. եւ ընդ այսս չարութե: (12) Ոսկան. Որք
են 'ի ներքոյ երկ": (13) Ոմանք. Վն այնորիկ առէք զսպա-
ռազինութիւն Այ, զի կարող լինիջիք... յաւուր չա":
(14) Ոմանք. Հաստատուն կացէք... պնդել զմէջս..
զգեցեալ զզրահ արդարութիւն:

Digitized by Google

* եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին 15
խաղաղութեան։ * Եւ 'ի վերայ ամենայնի առէք զվահանն 16
հաւատոյ. որով կարող լինիջիք զամենայն նետս մառա-
խլոյ չարին շիջուցանել. * եւ առէք զսաղաւարտն փրկու- 17
թեան, եւ զսուսեր Հոգւոյն՝ որ է բանն Այ. * ամե- 18
նայն աղօթիւք եւ խնդրուածովք՝ աղօթս առնել յամե-
նայն ժամանակի Հոգւով։ եւ 'ի նոյն տքնեսջիք ամե-
նայն համբերութեամբ՝ եւ խնդրուածովք՝ վասն ամենայն
սրբոց։ * Եւ վասն իմ. զի ինձ տացի բան 'ի բանալ 19
բերանոյ իմոյ, համարձակութեամբ ցուցանել զխորհուրդս
աւետարանին. * վասն որոյ պատգամաւորեմ կապա- 20
նօքս. զի նովին համարձակեցայց որպէս եւ պարտ է-
ցէ ինձ խօսել։ * Բայց զի գիտասջիք եւ դուք զինէն 21
զինչ գործեցից. զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքի-
կոս սիրելի եղբայր՝ եւ հաւատարիմ պաշտօնեայ 'ի Տր։
* զոր առաքեցի առ ձեզ վասն իրի, զի գիտասջիք զմասն 22
զմէնջ, եւ մխիթարեսջիք։ * Խաղաղութիւն ընդ եղբարս, 23
եւ սէր հաւատովքն հանդերձ յԱյ 'ի Հօրէ՝ եւ 'ի Տեառնէ
յՅսէ Քսէ։ * Շնորհք ընդ ամենեսեան՝ որք սիրեն զՏէր 24
մեր յՍ քՍ անեղծութեամբ։

Առ Եփեսացիս գրեցաւ 'ի Հռոմէ ի ձեռն Տիւքիկոսի։
Տունք ՅԺԲ։

---

(15) Ոմանք. Աւետարանին խաղաղութեան։ (16) Ոմանք. 'Ի վերայ այսր ամենայնի առէք զվահանն հաւատոյ։ (17) Ոմանք. Եւ զսուսերն Հոգւ."։ (18) Ոմանք. Եւ 'ի նոյն տքնեսջիք։ (19) Ոմանք. Զխորհուրդ. կամ, զխորհուրդն աւետ."։ (20) Ոմանք. Որպէս պարտ իցէ խօսել ինձ։ (21) Ոմանք. Զինչ գործեմ... Տիւքիկոս սի."։ (22) Այլ. Զմէնջ, եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր։ (23) Ոմանք. Յայ Հօրէ՝ եւ 'ի Տեառնէ։ (24) Ոմանք յաւելուն. Անեղծութեամբ. ամէն։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Փիլիպպեցիս Թղթոյս ։

Օ այս առաքելոյ 'ի հռովմ․ զի փութացեալ էր զնոսա և վար_ դապետել․ և է պատճառ թղթոյս՝ այս ։ Առաքեալն փիլիպպեցւոց պաշտօնս [illegible] ուսանէ եղեալ և պղծեալ [illegible] լիս անաւրապէս, պարապմամբ [illegible] օրէնսն և զթլփատութիւն, և ասէին [illegible] ոչ կարէին արդարանալ ։ Առաքեալն [illegible] և գրէ առ փիլիպպեցիսն, և նախ ընդունի զհնազանդ նոցա, [illegible] թէ [illegible] ։ յետ այսորիկ յայտնէ եթէ [illegible] 'ի հռովմ․ և ուսանէ ջանքն_ ցոյն 'ի վերայ նորին [illegible], և [illegible] ։ Յետ այսո_ րիկ [illegible] ։ Յետ այսր զթլփատութիւն և [illegible] օրէնսն [illegible], եթէ [illegible] է թլփատութիւն, [illegible] և ասէ, եթէ այս [illegible] է [illegible] ։ [illegible] և [illegible] թլփատել․ և 'ի [illegible] ընդդիմանաց [illegible]՝ և ասէ թէ [illegible] և ընդունի զփիլիպպեցիսն, [illegible] 'ի [illegible] [illegible] ։

Գլուխք առ Փիլիպպեցիս Թղթոյն ։

Ա ։ Գոհութիւն վասն փիլիպպեցւոց առաքինութեան, և աղօթք [illegible] կատարման նոցա ։

Բ․ Վկայութիւն [illegible] և [illegible]ութեան ։

Գ․ [illegible] ։

Դ․ Վասն [illegible] ։

Ե․ Վասն [illegible], որ է [illegible] ։

Զ․ [illegible] ։

Է․ Ընդունելութիւն [illegible] ։

Digitized by Google

ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ
ԹՈՒՂԹ։

ԳԼ. Ա.

Ժէ ՊԱՒՂՈՍ ԵՒ ՏԻՄՈԹԷՈՍ 1
ծառայք յի քի՝ ամենայն սրբոց 'ի քս
յս, որ են 'ի կողմանս փիլիպպեցւոց, ե-
պիսկոպոսօք եւ սարկաւագօք։ * Շնորհք ընդ ձեզ 2
եւ խաղաղութիւն՝ յայ հօրէ մերմէ, եւ 'ի տնէ յնէ քնէ։
Ա * Գոհանամ զայ իմոյ 'ի վերայ ամենայն յիշատակաց 3
ձերոց։ * յամենայն ժամ, յամենայն խնդրուածս իմ՝ 4
վասն ձեր ամենեցուն առնել աղօթս խնդութեամբ. * վն 5
հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին, յօրէ յառաջնմէ
մինչեւ ցայժմ։ * Վստահ եմ յայդ, թէ որ սկսաւն 6
'ի ձեզ զգործս բարեաց՝ կատարեսցէ մինչեւ յօրն յսի
քսի. * որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վն 7
ձեր ամենեցուն. վն ունելոյ ինձ զձեզ 'ի սրտի 'ի կա-
պանս իմում, եւ 'ի պատասխանատուութեան իմում, եւ 'ի
հաստատութեան աւետարանին. կցորդս ինձ շնորհացն զձ-
եզ ամենեսին լինել։ * Վկայ է ինձ այծ, որպէս անձ- 8
կացեալ եմ առ ձեզ ամենեսին գթովքն քսի յսի։ * Եւ 9
զայս աղօթս առնեմ. զի սէրն ձեր եւս քան զեւս առա-
ւել լցցի 'ի գիտութիւն եւ յամ իմաստութիւն. * ընտրել 10
ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք եւ առանց գայթագ-
ղութեան 'ի յաւուրն քսի։ * լցեալ պտղովք արդարու- 11
թեան 'ի ձեռն յսի քսի, 'ի փառս եւ 'ի գովեստ այ։
Բ * Կամիմ թէ գիտիցէք եղբարք. զի որ ինչ վասն իմ 12
Ժգ էր,

---

* 'Ի վերնագրին՝ օրինակ. Թուղթ առ Փիլիպպեցիս։ իսկ. ոմանք. Առ Փիլիպպեցիսն։

Գլ. Ա. (1) Օրինակ. Պաւղոս առաքեալ, եւ Տիմոթէոս ծառայ յի քի, առ սրբոց որ 'ի քս յս.. եպիսկոպունք եւ սարկաւագունք։ Եւ օրինակ. Հանդերձ եպիսկոպօք եւ սարկաւագօք։ (6) Օրինակ. Վստահ եմ յայս, թէ։ (7) Օրինակ. 'Ի կապանս իմ, եւ 'ի պատասխանատուութիւն աւետ''... շնորհացն զձեզ զամենեսեան։ (8) Օրինակ. Վկայէ ինձ այծ առ ձեզ յամենսին։ (9) Օրինակ. Եւ զայս աղօթս.. առաւել լիցին 'ի գիտութիւն.. իմաստութեան։ (10) Օրինակ. 'Ի յաւուրն քսի։ (12) Օրինակ. Կամիմ զի գիտիցէք։

Digitized by Google

եր, եւս քան զեւս 'ի յառաջադիմութիւն աւետարանին
13 եկն. * մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել 'ի Քս, յամե
14 նայն հրապարակին, եւ առ այլս ամենեսեան. * եւ առ բազմ
եղբարս 'ի Տր. որ վստահ են կապանօքս իմովք, առա
ւել եւս համարձակել առանց երկիւղի զբանն Այ խօ
15 սել: * Ոմանք առ նախանձու եւ հակառակութեան, եւ
16 ոմանք մտադիւրութեամբ զՔս քարոզեն. * եւ ոմանք
'ի սիրոյ, քանզի գիտեն եթէ 'ի պատասխանատուութիւն ա
17 ւետարանին կամ. * եւ ոմանք առ հեռաւորութեան զՔս պատ
մեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւն յա
18 րուցանել 'ի վերայ կապանաց իմոց: * Բայց այս զինչ
է. որով օրինակաւ եւ իցէ, եթէ պատճառանօք՝ եւ ե
թէ ճշմարտութեամբ, Քս պատմի. եւ ընդ այս խնդամ՝
19 այլ եւ ուրախ եւս եղէց: * զի գիտեմ եթէ այս պատճառ
ինձ փրկութեան 'ի ձերոց խնդրուածոց, եւ 'ի պարգեւաց
20 Հոգւոյն յիսուսի Քսի, * ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ.
զի մի իւիք յամօթ եղէց. այլ ամ համարձակութեամբ որ
պէս յամ ժամ. եւ այժմ մեծասցի Քս 'ի մարմնի իմում, ե
21 թէ կենօք՝ եւ եթէ մահու: * Զի ինձ կեանք Քս է, եւ
22 մեռանել շահ: * Ապա եթէ կեանքս մարմնոյ՝ այս ինձ
պտուղ գործոյ է. եւ զինչ ընտրեցից, զայն ոչ գիտեմ:
23 * Նեղեալ եմ յերկոցունց՝ ցանկալ լուծանել եւ ընդ
24 Քսի լինել, առաւել լաւ համարիմ. * եւ կալ մնալ ա
25 ռէն 'ի մարմնի, կարեւոր եւս վս ձեր: * Եւ զայս յու
սացեալ գիտեմ, եթէ կացից՝ եւ մնացից ամենեցուն
26 ձեզ, 'ի ձեր յառաջադիմել եւ խրախ լինել 'ի հաւատս: * զի
պարծանք ձեր առաւել լինիցին 'ի Քս յս ինեւ 'ի միւսան
գամ գալստեան իմում առ ձեզ: ԼԸ
27 * Միայն թէ արժանի աւետարանին գնասջիք: զի ե Գ
թէ գայցեմ, եւ տեսանիցեմ զձեզ. եւ եթէ հեռի իցեմ,
եւ լուիցեմ զձէնջ. զի հաստատուն կայջիք 'ի մի հոգի,
եւ

---

(13) Ոմանք. Յամ հրապարակս, եւ առ այլս ամենին: (14) Ոմանք. կապանօք իմովք առաւել համար": Որք ոմանք. Համարձակեալք ա": (16) Ոմանք. 'Ի պատասխանատուութեան աւե": (18) Ոմանք. Բայց այս ինչ է.. խնդամ եւ ուրախ եղէց: (19) Բ.ոմանք. Պատճառ ինձ 'ի փրկութիւն: (20) Ոմանք. Որպէս եւ յամ ժամ: (21) Ոմանք. Եւ մեռանելն ինձ շահ: (22) Օրինակ մի. Ապա թէ կեանքս մարմնոյս օգուտ գործեացէ: եւ զինչ խնդրեցից՝ զայն ոչ գիտեմ: (23) Ոմանք. Նեղեալ եմ առ յերկոց": (24) Ոմանք. Եւ կալ եւ մնալ: (26) Ոմանք. Առաւել լիցին ... եւ 'ի միւսանգամ 'ի գալստեան: (27) Ոմանք. Միայն եթէ ար" .. զի թէ գայցեմ: (27) Ոսկան յաւելու. Աւետարանին Քսի գնասջիք": (27) Օրինակ մի. Եւ միով շնչիւ նահատակիցէք.

և միով շնչով նահատակիցիք ՚ի հաւատս աւետարա-
նին. * և մի զանգիտիցէք ։ և մի իւիք ՚ի հակառակորդաց_ 28
զոյց անտի. որ է նոցա հանդէս կորստեան, և ձերոյ՝
փրկութեան ։ * Եւ այդ՝ յԱյ է, որ ձեզ շնորհեցաւ վասն 29
Քի, ոչ միայն ՚ի նա հաւատալ՝ այլ և վասն նորա չար-
չարիլ. * զնոյն պատերազմ ունել՝ զոր յինէն տեսէք, 30
և այժմ լսէք յինէն ։

ԳԼ. Բ.

Արդ՝ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ՚ի Քս, եթէ սփոփ- 1
ումն սիրոյ, եթէ հաղորդութիւն հոգւոյ, եթէ գը-
թութիւն և ողորմութիւն. * լցէք զխնդութիւն իմ. զնոյն 2
խորհեսջիք, զնոյն սէր յանձին ունիջիք, համաշունչք, միա-
խորհուրդք. * մի ինչ ըստ գրգռութեան, և մի ինչ ըստ 3
ընդունայնփառութեան. այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ հա-
մարել առաւել քան զանձինս. * մի զանձանց և եթ 4
դիտել, այլ իւրաքանչիւրոք զընկերին. * Զնոյն խոր- 5
հեսջիք իւրաքանչիւրոք ՚ի ձեզ, որ և ՚ի Քս Յս. * որ 6
՚ի կերպարանս Այ է, ոչինչ յափշտակութիւն համարե-
ցաւ զլինել իւր հաւասար Այ. * այլ զանձն ունայնացոյց 7
զկերպարանս ծառայի առեալ՝ ՚ի նմանութիւն մարդկան
եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. * խոնար- 8
հեցոյց զանձն, լեալ հնազանդ մինչև ՚ի մահ, և մահու
խաչի ։ * Վասն որոյ և Ած զնա առաւել բարձրացոյց. 9
և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամ անուն ։
* զի յանուն Յի ամ ծունր կրկնեսցի, երկնաւո- 10
րաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. * և 11
ամ լեզու խոստովան լիցի, թէ Տր է յս քս ՚ի փառս
ԺԶ Այ Հօր ։ * Արդ սիրելիք իմ, որպէս յամ ժամ հնա- 12
զանդեցարուք, մի միայն ՚ի գալստեան իմում, այլ առ-
աւել ևս այժմ՝ յարտաքոյ հեռի իմ ՚ի ձէնջ, ահիւ
և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք ։ * Զի Ած է 13
որ

---

(29) Ոմանք. Արդ յԱյ է, որ ձեզ շնորհեցաւ ոչ միայն ՚ի
նա .. չարչարել, և նախատինս յանձն առնուլ ։ (30) Օ-
րինակ մի. Զնոյն պատերազմ կրել ։
Գլ. Բ. (1) Ոմանք. Գթութիւն և ողորմութիւնք ։ (2) Ոմանք.
Զխնդութիւն իմ... զնոյն սէր յանձին ունիցիք, համա-
շունչք իցէք ։ (2) Ոմանք. Զի զնոյն խորհիջիք ։ (3) Ո-
մանք. Ընդ միմեանս լաւ համարել քան զանձն ։ (4) Ոմանք.
Զանձանց և եթ խնդրիցէք ։ (6) Ոմանք. Որ ՚ի կերպա-
րանս Այ ։ (6) Ոմանք. ՚Ի կերպարանս Այ էր ։ (8) Ոմանք.
Զանձն լինել հնազ ։ (11) Ոմանք. Եթէ Տր յս քս է ։
(12) Ոմանք. Առաւել ևս և այժմ ։ (13) Օրինակ մի.
փրկութիւն գործիցէք ։ (13) Ոմանք. Որ յաղթէ ՚ի ձեզ. զի

որ յաջողէ 'ի մեզ զկամելն եւ զգործելն վն հաճութեան:
14 * Զամ ինչ գործեցէք առանց տրտնջելոյ եւ քըթմնջե-
15 լոյ. * զի եղիջիք անբիծք եւ անարատք՝ որդիք այ, ան-
մեղք 'ի մէջ կամակոր եւ խոտորեալ ազգին. յորոց մէ-
16 ջի երեւեցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի. * զբանն կե-
նաց ունել յանձինս՝ 'ի պարծանս ինձ յաւուրն Քի.
զի ոչ ընդունայն ինչ ընթացայ, եւ ոչ ընդունայն վաս-
17 տակեցի: * Այլ թէպէտ եւ նուիրիմ" 'ի վերայ պատա-
րագի եւ պաշտաման հաւատոցն ձերոց, խնդամ եւ ու-
18 րախակից եմ ամենեցուն ձեր. * Նոյնպէս եւ դուք խըն-
դացէք՝ եւ ուրախակից եղերուք ինձ:
19 * Բայց յուսամ 'ի Տր Յս, զտիմոթէոս վաղվաղակի առա- Դ
քել առ ձեզ. զի եւ ինձ սիրտ դիւր լինիցի, յոր-
20 ժամ գիտացեմ ինչ զձէնջ: * զի ոչ զոք ունիմ համա-
21 շունչ, եթէ ընտանեբար հոգայցէ վն ձեր: * զի ամե-
22 նեքին զանձանց խնդրեն, եւ ոչ զյսի Քի: * Բայց ըզ-
փորձ նր գիտէք եւ դուք. զի իբրեւ որդի հօր ծառա-
23 յեաց ընդ իս յաւետարանին: * զդա՝ զայս ակնունիմ
24 առաքել, մինչ նոյնհետայն զանձնէ ստուգեցից: * այլ
յուսացեալ եմ 'ի Տր՝ թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից:
25 * Բայց քան հարկաւոր համարեցայ զեպափրոդիտոս զեղբայրն եւ
զգործակից եւ զինուորակից իմ, զձեր առաքեալ, եւ
26 զպաշտօնեայ իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ: * քան-
զի եւ ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամե-
նեսին զձեզ. եւ հոգայր, զի ձեր լուեալ էր թէ խօթա-
27 ցաւ: * եւ արդարեւ խօթացաւ մերձ 'ի մահ. այլ այ
ողորմեցաւ նմա. ոչ 'նմա միայն, այլ եւ ինձ. զի մի տրտ-
28 մութիւն 'ի վերայ տրտմութեան կրեցից: * Արդ՝ փու-
թապէս յղեցի զդա, զի տեսեալ զդա միւսանգամ ու-
29 րախ լինիցիք. եւ ես առանց տրտմութեան՝ եղէց: * Ըն-
կալջիք զդա 'ի Տր ամ խնդութբ, եւ զայնպիսիսն պա-
30 տուականս ունիջիք: * զի վն գործոյ Քի մինչեւ 'ի
մահ մերձեցաւ, զանձն գործեալ ոչ ինչ շահ. զի լցցէ
զձեր պակասութիւն իմոյ սպասաւորութեան: ԼԸ

ԳԼ.

յաջողէ ձեզ զկա": (15) Ոմանք. Եղիջիք անբիծք.. եւ խոտորեալ յազգին: (16) Ոմանք. Զբանն կենաց ու"..
ընդունայն ինչ վաստա": (19) Ոմանք. Բայց ես յուսամ 'ի.. վաղվաղակի առաքել առ ձեզ: (21) Ոմանք. Զի ամենեքեան: (22) Ոմանք. Նր գիտացէք եւ դուք: (22) Օրինակ մի. Ծառայեաց ինձ յաւետա": (23) Ոմանք. Մինչ եւ նոյն հետայն զանձնէն: (24) Ոմանք. Այլ յուսամ 'ի Տր՝ թէ եւ: (25) Ոմանք. Եւ զզինուորակից: (27) Ոմանք. Խօթացաւ մինչեւ 'ի մահ: (28) Ոմանք. Ուրախ լինիջիք: (30) Ոմանք. Վն գործոյն Քի մինչ 'ի մահ մե":

ԳԼ. Գ.

Ե Այսուհետեւ եղբարք իմ, ուրախ լերուք 'ի Տր̃. զ- 1
նոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչ ձանձրալի է, և ձեզ
կարևոր զգուշալի : * Զգոյշ եղերուք 'ի շանց անտի. զգ- 2
գոյշ եղերուք 'ի չար մշակաց անտի. զգոյշ եղերուք 'ի
կրճատութենէ անտի : * զի թլփատութիւն մեք եմք, որ 3
հոգւովն ա̃յ պաշտեմք, և պարծիմք 'ի քս̃ յս̃, և ոչ 'ի
մարմին ապաւինացեալ եմք : * Թէպէտ և ես իսկ զնոյն 4
վստահութիւն ունիմ և 'ի մարմնի, եթէ ոք համարիցի այլ-
ազգ վստահ լինել 'ի մարմին, առաւել ևս ես. * Թլ- 5
փատութիւն ութօրեայ. յազգէ իլի, 'ի ցեղէ բենիամինի.
եբրայեցի յեբրայեցւոյ. ըստ օրինացն փարիսեցի.
* ըստ նախանձայոյզ լինելոյ՝ հալածէի զեկեղեցին. 6
ըստ արդարութեան օրինացն լեալ անարատ : * Այլ որ 7
ինչ ինձ շահն էր, զայն վնաս համարիմ վս̃ քս̃ի : * այլ 8
և համարիմ իսկ զամ̃ վնաս՝ վս̃ առաւել գիտութեանն
յս̃ի քս̃ի տն̃ մերոյ : վս̃ որոյ յամէ զրկեցայ՝ և համա-
րիմ կղկղանս, զի զքս̃ շահեցայց, * և գտայց 'ի նմա. 9
իբրև ոչ եթէ զիմ ինչ արդարութիւն որ յօրինաց ան-
տի է ունիցիմ, այլ զհաւատոյն քս̃ի, որ յայ̃ արդա-
րութիւն է. * հաւատովք ճանաչել զնա, և զզօրութիւն 10
յարութեան նր̃, և զհաղորդութիւն չարչարանաց նր̃, կեր-
պարանակից լինել մահու նր̃. * թէ ոք հասից 'ի մե- 11
ռելոցն յարութիւն : * Իբր ոչ եթէ արդէն առեալ իցէ, 12
կամ արդէն կատարեալ իցեմ. զհետ մտեալ եմ թէ
հասից, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ 'ի քս̃է
յս̃է : * Եղբարք՝ ես ոչ համարիմ զանձն իմ թէ հա- 13
սեալ իցեմ. բայց մի ինչ է, զի զառ 'ի յետոյսն մոռա-
ցեալ է, և 'ի յառաջադէմսն նկրտեալ եմ. * առ շե- 14
գեալ

Գլ. Գ. (1) Ոմանք. Ինձ ոչ ինչ ձանձրա" : Ոմն ոմանք. Ինձ ինչ ոչ ձանձրա" : (2) Ոմանք. Զգոյշ լերուք 'ի շանց.. լերուք.. լերո՛ւք : (3) Ոմանք. Թլփատութիւն մեք եմք : (3) Ոսկան. Որք հոգւով զա̃յ պաշտեմք : (4) Ոմանք. Ունիմ 'ի մարմինս : (6) Ոմանք. Նախանձայոյզն լի" : (6) Ոսկան 'ի չար". Զեկեղեցին ա̃յ : (7) Ոսկան. Շահն է, զայն : (7) Ոմանք. Համարէի վս̃ քս̃ի : (8) Ոսկան. Յս̃ի քս̃ի տն̃ իմոյ : (9) Ոմանք. Իբր ոչ եթէ զիմ արդարութիւն ինչ, որ յօրինաց անտի ունիցիմ.. որ յա̃յ արդարութենէն : (9) Ոսկան. Զհաւատոցն քս̃ի յս̃ի : (10) Ոմանք. Մահուան նր̃ : (11) Ոսկան. 'Ի մեռելոցն յարութիւն : (12) Ոսկան. Արդէն առեալ իցեմ : (13) Օրինակ մի. Զառ 'ի յետոյն մոռացեալ և յառաջադէմսն նկրտեալ եմ : Ոմն այլ օրինակ մի. Նկրտիմ : (13) Ոսկան. Մոռացեալ եմ, և 'ի

և

15 գնալ ընթանամ 'ի կէտ կոչմանն այ, 'ի քս յս ։ * Այ-
սուհետև որ միանգամ կատարեալք եք, զայս խոր-
հեսցարուք. և եթէ այլ ազգ ինչ խորհիցիք, սակայն
16 և զայն ած ձեզ յայտնեսցէ ։ * Բայց յոր ժամանե-
ցաք՝ զնոյն խորհել, և նովին կանոնի միաբան լինել ։
17 * Նմանօղք ինձ եղիջիք եղբարք, և դիտասջիք զայն-
պիսիսն որ այնպէս գնայցեն, ոպ ունիքդ զմեզ ձեզ
18 օրինակ ։ * Զի բազումք գնան, զորոց բազում անգամ
ասէի ձեզ. բայց արդ՝ և լալով իսկ ասեմ զթշնամեաց
19 խաչին քսի. * որոց կատարածն կորուստ է. որոց ած
որովայնն իւրեանց է, և փառք ամօթն իւրեանց, որք
20 զերկրաւորս և եթ խորհին ։ * Այլ մեր առաքինու-
թեն յերկինս է, ուստի և փրկչին ակն ունիմք՝ տն յսի
21 քսի. * որ նորոգեսցէ զմարմին խոնարհութե մերոյ, կեր-
պարանակից լինել մարմնոյ փառաց նր, ըստ զօրութեն՝
առ 'ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ըստ իւրև զամ ։

ԳԼ. Դ.

1 Այսուհետև եղբարք իմ սիրելիք և անձկալիք, ու- Զ
րախութի իմ և պսակ, այսպէս հաստատուն կա-
2 ցէք 'ի տր՝ սիրելիք ։ * զԵւոդիա աղաչեմ, և զՍիւնտիքէ
3 աղաչեմ զնոյն խորհել 'ի տր ։ * Այո աղաչեմ և ըզ-
քեզ՝ մտերիմ իմ և լծակից, և դու օգնական լինի-
ջիր նոցա՝ որք յաւետարանին նահատակեցան ընդ իս
Կղեմայ հանդերձ, և այլովք գործակցօք իմովք. ո-
4 րոց անուանքն 'ի դպրութե կենաց ։ * Ուրախ լերուք
'ի տր յամ ժամ. դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք ։
5 * Հեզութի ձեր յայտնի լիցի ամ մարդկան. տր մերձ
6 է ։ * Մի ինչ հոգայք. այլ ամ աղօթիւք և խնդրու-
ածովք, գոհութե, խնդրուածք ձեր յայտնի լիցին
7 առ ած ։ * և խաղաղութին այ՝ որ 'ի վեր է քան զամ
միտս,

յառաջադէմն նկրտեմ ։ (15) Ոմանք. Զայս խորհես-
ցուք. կ՚, խորհեսջիք... ած մեզ յայտնեսցէ ։ (16) Ո-
մանք. Կանոնի միաբանել ։ (17) Ոմանք. Եւ դիտեսջիք
զայնպիսիսն... ոպ և ունիքդ զմեզ ։ (19) Ոմանք. Եւ
փառքն ամօ՛՛.. որք և զերկրաւորս ։ (20) Ոմանք. Առա-
քինութին յեր՛՛.. ուստի փրկչին ։ (21) Ոմանք. Որ նո-
րոգեաց զմար՛՛.. փառացն իւրոց.. ընդ իւր և զամ. կ՚,
ըստ իւրև և զամ ։ (21) 'Ի լուս՛՛. Փառաց իւրոց. համա-
յոյն եաղմոց 'ի բնոբ՛՛ ։

ԳԼ. Դ. (3) Ոմանք. Եւ լծակից իմ... 'ի դպրութե կե-
նաց ։ (3) Ոսկան. Որոց անուանքն են 'ի դպ՛՛ ։ Ուր օրի-
նակ մի. Անուանքն գրեալ են 'ի դպ՛՛ ։ (5) Ոմանք. Հե-
զութիւդ ձեր ։ (7) Ոմանք. Եւ խաղաղութի այ ։

Digitized by Google

ակ միտս, պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս 'ի քս. յս: * Այսու- 8
հետեւ եղբարք՝ որ ինչ ճշմարտութիւն է, որ ինչ պար-
կեշտութիւն, որ ինչ արդարութիւն, որ ինչ սրբութիւն, որ ինչ
սիրուն, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութիւն, որ
ինչ գովութիւն, զայն խորհեսջիք: * Զոր ուսարուքն եւ ըն- 9
կալարուք, եւ լուարուք եւ տեսէք յիս, զայն արարէք.
եւ այծ խաղաղութեան եղիցի ընդ ձեզ:
Եւ * Ուրախ եղէ ես 'ի Տէր յոյժ. զի եւ դուք զմտաւ ա- 10
ծէք հոգալ ինչ վն իմ, որպէս եւ հոգայիքն. բայց պար-
պարէիք իմն էր: * Իբր ոչ ըստ կարօտութեան ինչ ասեմ. զի 11
ես ուսայ՝ որովք կարեմ բաւական լինել: * Գիտեմ 12
նուաստել, գիտեմ առաւելուլ. յամենայնի ամենեւին
խրատեալ եմ, եւ յագել, եւ քաղցնուլ. եւ առաւելուլ,
եւ նուաստել: * յամենայնի կարող եմ, այնու՝ որ զօ- 13
րացուցն զիս: * բայց բարւոք արարէք զի կցորդ եղե- 14
րուք ինձ 'ի նեղութեան: * Գիտէք եւ դուք Փիլիպե- 15
ցիք, զի 'ի սկզբան աւետարանին իբրեւ ելի ես 'ի Մա-
կեդոնիայ. եւ ոչ մի եկեղեցի հաղորդեցաւ ինձ յաղագս
տալոյ եւ առնլոյ, բայց միայն դուք. * զի եւ 'ի Թե- 16
սաղոնիկէ՝ միանգամ եւ երկիցս զպէտս իմ տուք ըն-
ծայել: * Իբր ոչ եթէ խնդրեմ զտուրսն, այլ խնդրեմ 17
զպտուղն որ յաճախէ 'ի բանս ձեր: * Այլ իմ ամենայն 18
զինչ, եւ առաւելեալ եմ. ընկալայ՝ եւ լի եմ 'ի ձեռն
Եպափրոդիտեայ, որ է 'ի ձէնջ հոտ անուշից, պատա-
րագ ընդունելի հաճոյ այ: * Եւ այծ իմ լի արասցէ 19
զամ պէտս ձեր, ըստ իւրում մեծութեան՝ փառօք 'ի քս.
յս: * Այլ այ եւ հօր մերում փառք յաւիտեանս յա- 20
ւիտենից. ամէն: * Ողջոյն տաջիք ամ սրբոց՝ 'ի քս. յս: 21
* Ողջոյն տան ձեզ որ ընդ իս են եղբարք: * Ողջոյն 22
տան ձեզ ամենայն սուրբք. մանաւանդ որ 'ի տա- 23
նէ կայսեր են: * Շնորհք տն. յսի ընդ ոգւոյդ ձե- 24
րում. ամէն:

Առ Փիլիպեցիս՝ գրեցաւ 'ի Հռովմէ 'ի ձեռն Եպափրոդիտեայ:
Տունք: ՃԷ:

---

(8) Ոմանք. Զայն խորհեսջիք: (9) Ոմանք. Զոր եւ ուսա-րուքն: (10) Ոմանք. Պարապարէիքիմն է: (11) Ոմանք. Իբր ոչ եթէ ըստ կա՛: (12) Ոմանք. Եւ յագել եւ քաղցնուլ: (16) Ոմանք. 'ի Թեսաղոնիկէ միան՛: (18) 'ի բազում օրին. Որ է 'ի ձէնջ: (21) Ոսկան. Ամց որք 'ի քս: (22) Ոմանք. Որ ընդիսն են: (23) Ոմանք. Որ 'ի տանէս կայսեր: (24) Ոմանք. Տն. յսի քսի ընդ ոգւոյդ:

ՆԱ-

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Կողոսացիս Թղթոյն.

Ո այս առաքէ 'ի Հռոմ, մինչ ո՛չ էր տեսեալ զնո, այլ լուեալ զնոցա. և է պարծանս թղթոյս՝ այս: Կողոսացիքն խորհէին շրջել յիմաստութիւն հեթանոսաց 'ի հաւատոցն որ 'ի Քս, և յօրինական կերակրոց և 'ի թլփատութիւն: զայս ամ լուեալ առաքեալն՝ գրէ զթուղթս զգուշանալ նոցա: Եւ նախ փոխանակ զնոյ, նշանակելով թէ 'ի խաւարէն զերծեալ և եկեալ 'ի լոյսն ճշմարիտ. և 'ի Քն յոր հաւատացին, զորպիսի է այս և քան, պարզ ամն էակ. և եթէ վասն էր նմա գործել ամենայն, և ընդ անդրանիկ արարածոց և անդրանիկ 'ի մեռելոց. զի զերկնաւորն յաստուածայնոցն, և կենդանացուցանէ զամ: Նախադասաբար նոցա ճառ 'ի հաւատոց. Ճշմարիտ եթէ էին զայս զգուշացուցանեաց. և ասէ զառաջինսն՝ յորդորէ առաքեալս: Յայտնէ և վս օրինաց և վս նորին կերակրոց, և վս առաւօտն որ 'ի նմանէ պատուիրանս. յայտնէ եթէ հնացեալ դադարեալ ընդ թլփատութեան: Խորհրդածէ նոցա վս պատուիրանաց ծառայից՝ որք խօսին առ նոսա: Եւ դարձեալ խրատէ առ զի նոյն և զորդին. զայրս և զկանայս, զծառայս և զտեարս, զամուսինս և զորդիս. և զայլ աստուածային խորհուրդն առաքեալ խրատէ զնոսա: զոր աւետարանեաց նոցա, զի յորդոր ընդ միմեանս 'ի նմանէ Տիւքիկոս, և 'ի Լաւոդիկեցւոց եկեղեցին զա ընթերցցին, և զոր առ Լաւոդիկեցին՝ նոցա ընթերցանել:

Գլուխք առ Կողոսացիս Թղթոյն:

Ա. Գոհութիւն վս Կողոսացւոց ընծայականութեան ընդ այլ յաւանդ:
Բ. Աղօթք վս նոցա 'ի խնդրանս իմաստութեան, և յօժարութեան համբերութեան. հանդերձ գոհութեամբ վս ընծայանութեան որդւոյն:
Գ. Վասն Քի առաքածոյս, և նորոգութեան, որ ընդ այն հաղորդութիւն է:
Դ. Վս հեթանոսաց ծառայութեան որ ծածկեալ է և յայտնեցաւ՝ 'ի միտս հաւատոցն:
Ե. Վս իւրոյ աշխատութեանն վերակացութեան, որ յայս յանդիմանութիւն հասուցանէ:
Զ. Վս ընթացից մարդկային իմաստութեան, որ Քի զիմաստութիւն ունիցին:
Է. Թէ ընդ այս հաղորդութեան՝ և զերծեալ անկ հարեալս կեալ ընդ Քի:
Ը. Թէ մարմնաւոր օրինացն՝ օրինակաց մարմնաւորաց զերծ են և ո՛չ հոգևորաց, որ զօրութիւն Քի կեցցեն:
Թ. Խրատ որդւոց, պարկեշտութեան, ամենայնի, առաքինութեան, ամուսնութեան, գործոց, ընդ ամենայն վերայ գաղտնի:
Ժ. Առ ընթանիս մասին ընկերաց: ԺԱ. Յորդոր և առ օտարս:
ԺԲ. Հրաժեշտ և պարտական ողջոյն:

Digitized by Google

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ ԹՈՒՂԹ.

ԳԼ. Ա

առք ՊԱՒՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՅԻ- 1
սուսի քսի, կամօքն այ, եւ Տիմոթէոս եղ-
բայր. * առ կողոսացիս սուրբս եւ հաւա- 2
տացեալս եղբարս 'ի քս: * Շնորհք ընդ ձեզ եւ խաղա- 3
ղութիւն յայ հօրէ մերմէ:
Ա Գոհանամք զայ եւ զհօրէ տն մերոյ յսի քսի, յամ ժամ
վս ձեր աղօթս առնեմք. * իբրեւ լուաք զհաւատսն ձեր՝ 4
որ 'ի քս յս տր մեր, եւ զսէրն որ ընդ ամ սուրբս ու-
նիք: * վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս. զորմէ 5
լուարուք բանիւն ճշմարտութեան՝ աւետարանին, * որ 6
եհաս առ ձեզ. որպէս ընդ ամ աշխարհ աճէ եւ պտղա-
բերէ, որպէս եւ 'ի ձերում միջի. յօրէ յորմէ լուա-
րուք եւ ծանեայք զշնորհսն այ ճշմարտութբ. * որպէս 7
եւ ուսարուք յեպափրեայ սիրելւոյ, ծառայակցէ մեր-
մէ, որ է հաւատարիմ վս ձեր՝ պաշտօնեայ յսի. * որ 8
եւ պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով:
Բ * Վասն այնորիկ եւ մեք յօրէ յորմէ լուաք, ոչ դադա- 9
րեմք վասն ձեր աղօթս առնել, եւ խնդրուածս մատու-
ցանել. զի լցջիք զգիտութիւն կամաց նր, ամ իմաս-
տութբ եւ հոգեւոր հանճարով. * գնալ ձեզ արժանի 10
տն յամ հաճութիւն, յամ գործս բարութ, պտղաբերք
եւ աճեցուցանիք գիտութբն այ. * ամենայն զօրութբ զօ- 11
րացեալք ըստ զօրութեան փառաց նր. յամ համբերու-
թե

---

* 'Ի վերնագրին' ոմանք. Թուղթ առ կողոսացիս:
Գլ. ա. (2) Ոմանք. Հաւատացեալ եղբարս 'ի տր:
(3) Ոմանք յաւելուն. Հօրէ մերմէ. եւ 'ի տնէ յսէ քսէ: զա-
հանամ: (3) Ոմանք. Գոհանամք զայ ... աղօթս առնել:
Իսկ ոմանք. Առնելով: (4) Ոմանք. Ձեր 'ի տր մեր քս յս:
(5) Ոմանք. Զորմէ յառաջագոյն լուարուք.. ճշմարտութե
աւետարանաւն: (6) Ոմանք. Զշնորհսն այ: (7) Ոմանք.
Իբր ծառայակցէ: (8) Ոմանք. Մեզ զսէրն ձեր: (9) Ո-
մանք. Վս այսորիկ եւ մեք.. կամացն նր: (10) Յօրինա-
կին գրեալ էր. Տն յամ հաճութե, յամ գոր": (10) Ոմանք. Յամ
հաճոյն, կմ. ամ հաճութբ, եւ յամ գործս բա": (11) Ոմանք.

12 թե՛ և երկայնմտութե՛ն. ուրախութեա՛մբ * գոհանալ ըզ- ա գ
հօրէ, որ կոչեաց զմեզ 'ի մասն վիճակի սրբոցն 'ի
13 լոյս. * որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, և
փոխեաց զմեզ յարքայութիւն որդւոյն իւրոյ սիրելւոյ։
14 * որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, և զթո-
ղութիւն մեղաց մարմնովն նորա։
15 * Որ է պատկեր աներևութին այ, անդրանիկ ամ Գ
16 արարածոց։ * զի նովաւ հաստատեցաւ ամ, որ ինչ
յերկինս՝ և որ ինչ յերկրի, որ երևելին՝ և որ ոչն ե-
րևելին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետու-
թիւնք, եթէ իշխանութիւնք. ամ ինչ նովաւ՝ և 'ի նոյն
17 հաստատեցաւ։ * և նա է յառաջ քան զամ, և ամ ինչ
18 նովաւ եկաց բովանդակ։ * Եւ նա է գլուխ մարմնոյ
եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց. զի
19 եղիցի ինքն յամի յառաջացեալ։ * զի 'ի նմա հաճեցաւ
20 ամ լրումն ածութեան բնակել. * և նովաւ հաշտեցու-
ցանել զամ 'ի նոյն. արար խաղաղութի՛ արեամբ խա-
չին իւրոյ, որ ինչ յերկրի՝ և որ ինչ յերկինս։
21 * Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալքն էիք, և թշնա- Դ
22 միք խորհրդովք 'ի գործսն չարութե. * այժմ առա-
ւել հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ, 'ի ձեռն
մահուան իւրոյ յանդիման կացուցանել զձեզ սուրբս՝ և
23 անբիծս՝ և անարատս առաջի նր. * եթէ կայցէք 'ի
հաւատոն արմատացեալք, և հաստատեալք, և ան-
շարժք 'ի յուսոյ աւետարանին, զոր լուարուք քարո-
զեալ ընդ ամենայն արարածս 'ի ներքոյ երկնից. որոյ
եղէ ես պաւղոս պաշտօնեայ։
24 * Եւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ վս ձեր. և Ե
լնում զպակասութի նեղութեանց քի 'ի մարմնի իմում, ա գ
25 վս մարմնոյ նր, որ է եկեղեցի. * որոյ եղէ ես պաւ-
ղոս պաշտօնեայ, ըստ տնտեսութեան այ որ տուեալ է
26 ինձ 'ի ձեզ, կատարել զբանն այ. * զխորհուրդն որ ծած-
կեալ էր 'ի յաւիտենից և յազգաց. որ այժմ յայտ-
27 նեցաւ սրբոց իւրոց։ * Որոց կամեցաւ ած ցուցանել,
թէ

Ցամ համբերութե և երկայնմտութե ուրա՛՛։ (11)(12) Ո-
մանք. Եղբարք՝ ուրախութեա՛մբ գոհացարուք զհօրէ։ Ո-
մանք. գոհանալով զհօրէ։ Ոմ ոսկան յաւելու՝ զայ հօրէ։
(12) Բ. օ՛ք. Որ կոչեաց զձեզ 'ի մա՛՛։ (18) Ոմանք. Եւ անդ-
րանիկն մեռելոց։ (20) Ոմանք. Որ ինչ յերկինս.. յերկ-
րի։ (21) Ոմանք. Օտարացեալքն էիք։ (22) Ոմանք. Այժմ
առաւել հաշ՛՛.. 'ի ձեռն մահուն իւրոյ.. առաջի նր սր-
բով։ (24) Ոմանք. Իմ որ վս ձեր։ (24) Ոսկան. Նեղութե
քի։ (25) Ոմանք. Տնտեսութե այ, որ տուեալ են ինձ։
(26) Ոմանք. Էր յաւիտենից և։ (27) Ոմանք. Եթէ զինչ

Digitized by Google

թէ զի՞նչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նր ՚ի հե-
թանոսս. որ է ՔՍ ՚ի ձեզ, յոյսն փառաց. * զոր 28
մեք քարոզեմք. և խրատեմք զամենայն մարդ, և ու-
սուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգևոր իմաս-
տութեամբ. զի կացուսցուք զամենայն մարդ կատարեալ
՚ի ՔՍ ՅՍ. * յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ ա- 29
զդեցութեան նորա, որ ազդեցեալ է յիս զօրութեամբ:

ԳԼ. Բ.

Զ Զի կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնութիւն ունիմ 1
յաղագս ձեր՝ և որ ՚ի Լաւոդիկեցւոցն, և որոց չե՛-
ւս տեսեալ զերեսս իմ մարմնով: * զի մխիթարես- 2
ցին սիրտք նց՝ տեղեկացեալք սիրով. և յամ մեծու-
թիւն լրութեան իմաստութեան՝ ՚ի գիտութիւն խորհրդոյն այ ՚ի
ՔՍ ՅՍ. * յորում են ամ գանձք իմաստութեան և գիտու- 3
թեան ծածկեալ կան: * Այլ զայս ասեմ, զի մի ոք ըզ- 4
ձեզ զառանցուսցէ պատիր բանիւք: * զի թէպէտ և 5
մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ՝
և տեսանեմ զկարգն ձեր, և զհաստատութիւն հաւա-
տոյն ձերոյ որ ՚ի ՔՍ ՅՍ: * Արդ՝ որպէս ընկալարուք 6
զՔՍ ՅՍ զՏր, նովիմբ գնասջիք, * արմատացեալք՝ և 7
շինեալք ՚ի նա, և հաստատեալք ՚ի հաւատս, որպէս ուսա-
ԺԸ րուքն՝ առաւելեալք ՚ի նմին գոհութեամբ: * Զգոյշ լե- 8
րուք, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտու-
թեամբ՝ և սնոտի խաբէութեամբ, ըստ մարդկան աւան-
դութեան՝ և ըստ տարերց աշխարհիս, և ոչ ըստ ՅՍի ՔՍի.
* զի ՚ի նմա բնակէ ամ լրումն ածութեն մարմնապէս: 9
* և էք դուք նովաւ լցեալք. որ է գլուխ ամենայն 10
իշխանութեան և պետութեան:
Է * Որով թլփատեցարուք հաւատովք զանձեռագործ 11
թլփատութիւն, ՚ի մերկանալ զանգամս մարմնոյ թլփա-
տութեամբն ՔՍի: * Թաղեցեալք ընդ նմին ՚ի մկրտութեանն, 12
որով

է.. խորհրդոց նր: (28) Ոմանք. Զի կեցուսցուք զմդ:
(29) Ոմանք. Ըստ յաջողութեան նր որ յաջողեալն է:
Գլ. Բ. (1) Բղմք. Ճգնութիւն ունիմ: (1) Ոմանք. Ոչ եւս.
խմ. չեւս տեսեալ: (2) Ոմանք. Տեղեկացեալ սիրով
ամ մեծութիւն լրութեան իմաստութեան, ՚ի գիտութիւն խորհր-
դոյն այ ՚ի ՔՍ: (2) Ոսկան. ՚ի գիտութեան խորհրդոյ այ
հօր ՚ի ՔՍ ՅՍ: (3) Օրինակ մի. Յորում ամենայն գանձ:
(3) Յօրինակին Ոսկանայ. իմաստութեան և գիտութեան ծած: (4) Ո-
մանք. Զառանցեցուսցէ: (5) Ոմանք. Զի ես թէպէտ..
հեռի եմ ՚ի ձէնջ, հոգւով մերձ եմ ՚ի ձեզ, կմ, ընդ
ձեզ: (6) Ոմանք. Զտէր ՅՍ ՔՍ: (8) Ոմանք. Ըստ ՔՍի ՅՍի:
(10) Ոմանք. Ամ իշխանութեանց և պետութեանց: (12) Ոմանք.

Digitized by Google

տաղեալ և ընդ նմին յարեայք հաւատովք՝ Այ ազդեցու-
13 թեանն, որ յարոյց զնա 'ի մեռելոց: * Եւ զձեզ որ եր-
բեմն մեռեալքն էիք 'ի մեղս՝ և յանթլփատութեան մարմ-
նոյ ձերոյ, կենդանացոյց յանձին իւրում. շնորհեաց
14 մեզ զամ յանցանս մեր. * և ջնջեաց զձեռագիր մե-
րոյ հակառակութեան հրամանօքն իւրովք: որ կայր մեզ
հակառակ, եբարձ զայն 'ի միջոյ՝ և բևեռեաց ընդ խա-
15 չափայտին: * մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս.
յայտ յանդիմանն խայտառակեաց նշաւակեալ զնոսա յան-
16 ձին իւրում 'ի յաղթութեան իւրում: * Մի՛ ոք այսուհե-
տև զձեզ դատեսցի ուտելով կամ ըմպելով, կամ մա-
17 սամբք տօնից, կամ ամսամտիւք կամ շաբաթուք. * որ
են ստուերք հանդերձելոցն. այլ մարմինն Քն է:
18 * Մի՛ ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութբ Ը
և կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահետ
վարել՝ տարապարտ հպարտացեալ 'ի մտաց մարմնոյ
19 իւրոյ. * և ոչ ունիցի զգլուխն Քն, ուստի ամ մար-
մինն յօդիւք և խաղաղեօք տարաբերեալ և խառնեալ՝
20 աճէ զաճումն Այ: * Եթէ մեռայք ընդ Քսի 'ի տա-
րերց աշխարհիս, զի՞ եւս իբրև զկենդանիս աստէն յաշ-
21 խարհի կրօնաւորիք: * մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր,
22 մի՛ հուպ լինիր. * որ է ամենայն ինչ 'ի պէտս ապա-
կանութեան, ըստ պատուիրանաց և վարդապետութեան
23 մարդկան. * որ յիմաստութիւն իմն համարին, ինք-
նակամ կրօնիւքն և խոնարհութբ, և անխնայութբ մարմ-
նոյ. և ոչ 'ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ:

ԳԼ. Գ.

1 Եթէ յարեայք ընդ Քսի, արդ զվերինն խնդրեցէք.
2 ուր Քն նստի ընդ աջմէ Այ. * զվերինն խորհե-
ցա-

Ընդ նմին մկրտութեն: Ւ օրինակ. մկրտութբն 'ի մահն.. ը նմին յարեայք հաւատովք Այ ազդեցութբն: (13) Օրինակ. Մեռեալքն էիք 'ի մեղս և յանթլփատութե: (14) Օրինակ. Եւ բևեռեաց զնա ը խաչա": (15) Օրինակ. Մերկեաց զիշ".. խայտառակեալ նշաւակեաց.. 'ի յարութեն իւ": (16) Օրինակ. Մի ոք զձեզ դատիցի.. կամ ըմպելովք.. կմ ամսամտօք կմ շաբաթիւք: (18) Օրինակ. Որ կամիցի... զրահետ վարեալ: (19) Օրինակ. Զգլուխն զՔն... և խաղաղիւք: (19) Ոսկան. Տարբերեալ և խառ": (22) Օրինակ. Ըստ պատուիրանի և վար": (23) Օրինակ. Որ յիմաստութի իմն համարեալ են: (23) Օրէնս Ա. Յիմաստութի իմն համարել... և անխնայութբ մարմ": (23) Յօհան ոսկի. Լրութե մարմնոյ:
Գլ. Գ. (1) Ոսկան. Եթէ յարեայք ընդ Քի:

Digitized by Google

ցարուք, մի զայս որ յերկիրս աստ է: * քանզի մեռա 3
րուք, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քսի յԱծ: * Իսկ 4
յորժամ Քս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ եւ դուք
ընդ նմա յայտնեսջիք փառօք:

Թ * Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս. ՚ի 5
բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զախտ, զցան
կութիւն չարեաց, եւ զագահութիւն՝ որ է կռապաշտու
թիւն. * վասն որոյ գայ բարկութիւն Այ ՚ի վերայ որդւոցն 6
անհաւանութեան, * որովք եւ դուք երբեմն գնայիք՝ մինչ 7
կենդանիքն էիք ՚ի նմա: * Այլ արդ՝ ՚ի բաց թօթափեցէք 8
եւ դուք զայն ամ՝ զբարկութիւն, զսրտմտութիւն, զչա
րութիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ՚ի բերանոց
ձերոց: * Մի ստէք միմեանց. մերկացարուք զհին մար 9
դըն գործովքն իւրովք. * եւ զգեցարուք զնորն նո 10
րոգեալ ՚ի գիտութիւն, ըստ պատկերի արարչին իւրոյ.
* ուր ոչ է հրեայ, եւ ոչ հեթանոս, թլփատութիւն, եւ 11
անթլփատութիւն, խուժ, դուժ, սկիւթացի, ծառայ,
ազատ. այլ ամ եւ յամենայնի Քս: * Զգեցարուք այ 12
սուհետեւ իբրեւ ընտրեալք Այ՝ սուրբք եւ սիրեցեալք,
զգթութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն,
զհեզութիւն, զերկայնմտութիւն, * ներել միմեանց, շնոր 13
հել իւրերաց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ ի
ցէ. որպէս Տր Քսիւ շնորհեաց ձեզ, նոյնպէս եւ դուք:
* Եւ ՚ի վերայ ամենայնի զսէրն, որ է զօդ կատար 14
մանն. * եւ խաղաղութիւնն Քսի հաստատեսցի ՚ի սիրտս 15
աւ ե ձեր. յոր եւ կոչեցարուքն միով մարմնով: Եւ գոհա
ցօղք լինիջիք. * զի բանն Քսի բնակեսցէ ՚ի ձեզ առա 16
տապէս. ամենայն իմաստութբ ուսուցանել եւ խրատել
զմիմեանս. սաղմոսիւք եւ օրհնութեամբ, եւ երգովք հո
գեւորօք՝ եւ շնորհօք օրհնել ՚ի սիրտս ձեր զԱծ: * Եւ 17
զամենայն զոր եւ առնիցէք բանիւք եւ արդեամբք, զա
մենայն յանուն Տն յսի արասջիք: գոհացօղք լինի
ջիք զԱյ եւ զՀօրէ նովաւ:

* Կա

(3) Ոմանք. Ընդ Քսիւ յԱծ: (5) Ոմանք. Զպոռնկութիւն եւ զպղծութիւն եւ զախտ, եւ զցանկութիւն: (6) Օրինակ մի. ՚ի վր որդւոց անհաւատութեան: (7) Ոմանք. Որով եւ դուք. կենդանիքն էիք: (9) Ոմանք. Մերկացուք զհին: (10) Ոմանք. Նորոգել ՚ի գիտութիւն: (11) Ոմանք. Ուր ոչ է հրեայ, եւ: (13) Ոմանք. Եթէ ոք զումեքէ տրտունջ ինչ ունիցի, որպէս եւ Տր Քսիւ շնորհեաց մեզ: (14) Բազումք. Եւ ՚ի վր այս ամի: (14) Ոմանք. Որ է զօրդ կատարման: (15) Ոմանք. Եւ խաղաղութիւն Այ հաստատ"... կոչեցարուք միով: (16) Ոմանք. Եւ օրհնութբ եւ եր"... օրհնել զԱծ ՚ի սիրտս: (17) Ոմանք. Բանիւք եւ գործովք.

18 * Կանայք՝ հնազանդ լերուք արանց ձերոց . որպէս
19 և վայել է 'ի Տր : * Արք՝ սիրեցէք զկանայս ձեր, և
20 մի դառնացուցանէք զնոսա : * Որդիք՝ հնազանդ լե-
րուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ ա-
21 ռաջի Տն : * Հարք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր,
22 զի մի առժամեսցին : * Ծառայք՝ հնազանդ լերուք տե-
րանց ձերոց յամենայնի . մի առաւականէ ծառայութ իբ-
րև մարդահաճոյք . այլ միամտութբ սրտի երկնչե՛լ 'ի
23 Տնէ : * զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբ-
24 րև Տն, և ոչ իբրև մարդկան : * Գիտասջիք զի 'ի
Տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեն ձե-
25 րոյ . քանզի Տն Քսի ծառայէք : * Իսկ անիրաւն ըն-
կալցի ըստ իւրում անիրաւութեն . զի չիք ակնա-
ռութի առաջի Այ :

ԳԼ. Դ.

1 Տեարք՝ զիրաւունս և զհաւասարութի ծառայից ձե-
րոց շնորհեցէք . գիտասջիք զի և ձեր Տր գոյ յեր-
2 կինս : * Աղօթից առէք կացէք . տքնել 'ի նմին գո-
3 հութբ : * Աղօթս արարէք միանգամայն և վասն մեր .
զի Աձ բացցէ մեզ դուռն բանին, խօսել զխորհուրդն
4 Քսի, վս որոյ և կապեալս կամ . * զի յայտնի արա-
5 րից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել : * Իմաստու-
թբ գնասջիք առ արտաքինսն, գնոց առեալ զժամա-
6 նակս : * և բանն ձեր յամ ժամ լի շնորհօք Տն, իբ-
րև աղիւ համեմեալ լիցի . գիտել ոչ արժան իցէ ձեզ
7 իւրաքանչիւրումեք՝ տալ պատասխանի : * Այլ որ ինչ
զինէն իցէ, ցուցցէ ձեզ զամ Տիւքիկոս սիրելի եղ-
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծառայակից 'ի Տր .
8 * զոր առաքեցի առ ձեզ գմին իրի, զի գիտասջիք զվս
9 մեր . և մխիթարեսցէ զսիրտս ձեր . * ընդ Ոնեսիմեայ հաւա-
գերձ .

զմահ: (18) Ոմանք. Տերանց ձերոց, որպէսն վայել է 'ի Տր : (21) Ոմանք. Զի մի առժամիցին : (22) Ոմանք. Առականէ ծառայել իբրև.. արտիւ. կՏ, արտիւք. երկնչել : (23) Ոմանք. Եւ ոչ ոք մարդկան : (24) Ոմանք. Քսի Տն յորի ծառայ էք : (25) Ոմանք. Ըստ իւրումն անիրաւութեն, քզի չիք :

Գլ. Դ. (2) Ոմանք. Տքնեալք 'ի նոյն գոհ" : (3) Ոմանք. Դուռն բանի խօսել մեզ զխորհ" : (4) Ոմանք. Զի յայտնել արարից զնա, ոչ և արժան իցէ ինձ խօ" : (5) Բն՟ք. Գնոց առեալ զժամա" : (6) Ոմանք. Եւ բան ձեր . . . լի շնորհօքն՝ իբրև.. գիտել և ոչ արժան է : (7) Ոմանք. Զինէն է, ցուցցէ : (9) Ոմանք. Որ 'ի ձէնջ : և զամենայն ինչ ցուցցեն ձեզ՝ զոր ինչ աստ :

Digitized by Google

գերմ եղբարբ հաւատարմաւ եւ սիրելեաւ՝ որ է ՚ի ձէնջ.
զամ ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ աստ է: * Ողջոյն տայ 10
ձեզ Արիստարքոս գերեկից իմ, եւ Մարկոս եղբօրոր-
դին Բառնաբայ. վն որոյ առէք պատուէր, եթէ եկեսս-
ցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա. * Եւ Յեսու որ անուա- 11
նեալն է Յուստոս, որք են ՚ի թլփատութենէ անտի: զի
դոքա միայն գործակից եղեն ինձ յարքայութեան Այ,
որք եւ եղեն ինձ մխիթարութիւն: * Ողջոյն տայ ձեզ 12
Եպափրաս՝ որ ՚ի ձէնջ ծառայ Յի Քի է. յամ ժամ
պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կացջիք կատա-
րեալք եւ լցեալք յամ կամս Այ: * Վկայեմ նմա, զի 13
բազում աշխատութիւն ունի վն ձեր, եւ վն Լաւոդիկեց-
ւոցն, եւ վն այնոցիկ՝ որ յԵրապօլեան իցեն: * Ող- 14
ջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ՝ եւ սիրելին, եւ Դեմաս: * Ող- 15
ջոյն տայջիք եղբարց՝ որ են ՚ի Լաւոդիկեայ, եւ Նիմփեայ,
եւ որ ատանին եկեղեցին է նմ: * Եւ յորժամ ընթեռ- 16
նուցու առ ձեզ թուղթդ, արասջիք զի եւ ՚ի Լաւոդի-
կեցւոց եկեղեցւոջն ընթերցցի. եւ զառ ՚ի Լաւոդիկեց-
ւոցն՝ զի եւ դուք ընթեռնուցուք: * Եւ ասասջիք ցԱր- 17
քիպպոս. զգոյշ լեր սպասաւորութեանդ, զոր ընկա-
լար ՚ի Տր, զի զայդ կատարեսցես: * Ողջոյնդ՝ ձե- 18
ռամբ իմով Պաւղոսի է: յուշ լիցին ձեզ կապանքս իմ:

Շնորհք ընդ ձեզ:

Առ Կողոսացիս՝ գրեցաւ ՚ի Հռովմէ ՚ի ձեռն Տիւքիկեայ եւ Ո-
նեսիմեայ: Տունք: ՄԶ:

---

(10) Ոմանք. Եթէ գայցէ առ ձեզ. "ըն": (11) Ոմանք. Եւ Յեսուս, որ ան". . Յուստոս. . զի նոքա միայն եղեն ինձ գործա". յարքայութիւն Այ: (11) Ոսկան. Անուանեցեալ Յուս": (12) Ոմանք. Եպափրեայ, որ է ՚ի ձէնջ ծառայ Քի Յի. . յամ կամսն: (13) Բազմք. Յերապօլեան են: (14) Ոմանք. Բժիշկ. եւ սիրելի. Դեմաս: (15) Ոմանք. Որ են ՚ի Լաւոդիկեա եւ Նիմփայ. . եկեղեցի է նոցա: (16) Այ գրչագիրք համաձայն Օրինակս ՚ի լուս". այսպէս համարեայ նշանակէն: Ջատագովի Թղթոյն. կամ, Թղթոյն որ առ աւ մնութէու աւէ: (17) Ոմանք. Յարքիպպոս: (18) Ոմանք յաւելուն. Շնորհք ընդ ձեզ. ամէն:

* ՚ի վախճանի՝ ոմանք. ՚ի ձեռն Տիւքիկոսի եւ Ոնեսիմեայ.

Digitized by Google

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի Թեսաղոնիկեցիս Առաջին Թղթոյն:

Ո այս առաւել յաթէնայ՝ փեսօղ յառաջագոյն նշեալ ասցա, և ... ուղեւալ անդ նոքա. և է պարծանս թղթոյս՝ այս: Առաջնումն իսկ Միւսիա նշեաց 'ի ներքս, և 'ի ժողովրդոց մակեդոնացւոց, և 'ի կորնթոս. և զի փիլիպէր անձկաւ զքննել թեսաղոնիկեցւոց՝ երկեաւ զի մի լուիցէն թեսաղոնիկեցիքն եւս ... ցաւ 'ի փորձողին՝ և գայթակղեցին: Լուեալ եւս և որք ... նքն՝ կարծէին եթէ 'ի կորուստ լինէին, առաւելեալ զտիմոթէոս նախ առ նոսա, 'ի ձեռն այնր և զթուղթս զայս: Եւ նախ՝ հաստատէ զնա 'ի հաւատս, զի մի զարծեցին երբեք ընդ ձեռաց, և ... յօրինակ կարծեցին 'ի հրեշտէն. զի նոքա զնոյն ազատին. փրկութեան զհարկեալ. և նեղութիւն առնէր առաջեալ. բայց անգամ գովէ զնոսա, այսու՝ զի ոչ առին 'ի նմանէ պահելն: Գրէ ըստ ննջեցելոց միխթարութիւն նոցա. և վարդապետէ զի մի ծանրասցին ընդ այն. զի ոչ է մահն կորուստ, այլ ննջմանապարհ յարութեան: Յետ այսորիկ և վասն ժամանակաց նոցա վարդապետէ. զի անհնար է զայս գիտել. այլ հանապազ պատրաստ լինել, և մի յանձինս կարծել առանձնել զայս. այլ գիտասցուք առնել զպատուիրանսն այսոցիկ. զի որ հաւատացեալ են, և որք գիտասցեն յառաջին յայն ժամանակս ննջեցելոցն յարութեան. այլ 'ի միասին լինիցին առ քրիստոս ընդ նմա: Վարդապետէ այսուհետեւ և օրինակ ածէ նոցա առաքելութեան 'ի ամենայն հանապազ նոցա, և առակս լինել ընդ յառաջ. և աղօթէ և գոհանայ ընդ նոցա զինչ. երդմնեցուցանէ զնոսա ընթեռնուլ զթուղթս զայս ամենայն եղբարց. և այսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք առ Թեսաղոնիկեցիս Ա. Թղթոյն:

Ա. Գովութիւն վասն թեսաղոնիկեցւոց 'ի միջոյ արժանաւոր պատերազմաց առաքելոցն:

Բ. Անձնոյ նորա և խնդութիւն 'ի միջոյ նոցա, և հարց թէ ո՞րպէս կատարեալ լինիցին:

Գ. Աղօթք առ Աստուած, և զի ընդ գալստեանն Տեառն, և անձինն և հաստատութիւն թեսաղոնիկեցւոց միշտ 'ի գալստեան նորա:

Դ. Խրատ զգուշութեան և արդարութեան, յընդդէմ խորհրդոց եղբայրութեան, խրատանելիոյ առանց ձեռաց գործ գործելոյ:

Ե. Վարդապետութիւն վասն մահու լռելոյ առ հեռանալոյ և միանգամ 'ի յայտնութեան Տեառն:

Զ. Վասն յանկարծակի գալստեանն Տեառն, թէ ոչ պատրաստութեան գտանել պարտ է, ժուժկալ, հաստատուն, յառաջ, հեռու, պատերազմ, խաղաղութեան, երկայնմտութեան, առաքինութեան:

Է. Աղօթք վասն սրբութեան հոգւոյն ընդ և մարմնոյ:

Digitized by Google

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ
ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ.

ԳԼ. Ա.

բկ ՊԱՒՂՈՍ ԵՒ ՍԻՂՈՒԱ- 1
նոս, եւ Տիմոթէոս. եկեղեցւոյդ Թեսա-
ղոնիկեցւոց՝ յԱծ Հայր մեր, եւ ՚ի Տր
յՅս Քս : * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութի. 2
Ա Գոհանամք զԱյ յամենայն ժամ վասն ձեր ամենեցուն՝
յիշատակ առնել յաղօթս մեր անդադար. * յիշել ըզ- 3
ձեր գործն հաւատոց, եւ զվաստակ սիրոյ՝ եւ զհամբե-
րութիւն յուսոյ Տն մերոյ յՅի Քի՝ առաջի Այ եւ Հօր մե-
րոյ : * Գիտեմք եղբարք սիրեցեալք յԱյ՝ զընտրութիւն 4
ձեր. * զի աւետարանն մեր՝ ոչ եղեւ առ ձեզ միայն բա- 5
նիւ, այլ եւ զօրութբ՝ եւ Հոգւովն սրբով, եւ լրութբ
բազմաւ. որպէս եւ գիտէք իսկ, թէ որպիսիք եղեաք ՚ի
միջի ձերում վասն ձեր : * Եւ դուք նմանեալք մեզ՝ 6
եւ Տն, ընկալեալք զբանն ՚ի բազում նեղութե՝ խնդու-
թբ Հոգւոյն սբյ. * լինել ձեզ օրինակ ամենայն հա- 7
ւատացելոց որ են ՚ի Մակեդոնիա՝ եւ յԱքայիա : * Զի 8
՚ի ձէնջ հնչեաց բանն Այ. ոչ միայն ՚ի Մակեդոնիա եւ
յԱքայիա, այլ յամ տեղիս հաւատքն ձեր որ առ Այ
են սփռեցան. զի այսուհետեւ ոչինչ է պիտոյ մեզ եւ խօ-
սել ինչ : * զի նոքին իսկ պատմեն վն մեր, թէ որպէս 9
եղեւ մեզ մուտ առ ձեզ. եւ ո՛րպ դարձայք առ Այ ՚ի
կռոց անտի, ծառայել Այ կենդանւոյ եւ ճշմարտի.
* եւ ակն ունել որդւոյ նորա յերկնից, զոր յարոյց 10
՚ի

Գլ. Ա. (1) Օրինկ. Պաւղոս եւ Սիղուանոս : (2) Օ-
րինակ մի. Եւ խաղաղութիւն բազմասցի : (3) Օրինկ. Եւ
զվաստակն սիրոյ, եւ զհամբերութիւն յուսոյ Տն մե"...
եւ Հօր մեր : (4) Օրինակ մի. Յայ՝ զհաստատութիւն ձեր :
(5) Օրինկ. Միայն բանիւք.. եւ թէ որպիսի եղաք : (6) Օ-
րինկ. Եւ դուք նմանողք մեզ.. ՚ի բազում նեղութե : Օր-
ինակն. Մեզ եղէք եւ Տն : (8) Օրինկ. Այլ եւ յամ տեղիս
հաւատք ձեր առ Այ... ոչ ինչ պիտոյ է մեզ : Ի օրինկ.
Ոչ է պիտոյ մեզ եւ խօսել իսկ ինչ : (9) Օրինկ. Պատ-
մեն վն ձեր. եւ թէ ո՛րպ.. որպէս եւ դարձայք : (10) Օ-
րինկ. Որդւոյն նր յերկնից.. որ փրկելոց է.. ՚ի

Digitized by Google

'ի մեռելոց՝ զՅիսուս, որ փրկելոցն է զմեզ 'ի բարկութենէ
անտի որ գալոցն է։

ԳԼ. Բ.

1 Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն մեր առ ձեզ. բ գ.
2 զի ոչ ընդունայն ինչ եղեւ. * այլ յառաջագոյն
չարչարեալք եւ թշնամանեալք, որպէս եւ դուք իսկ գի-
տէք 'ի մէջ Փիլիպեցւոց համարձակեցաք Աստուծով մերով՝
պատմել ձեզ զաւետարանն Աստուծոյ մեծաւ պատերազմաւ։
3 * Զի մխիթարութիւն մեր ոչ 'ի մոլորութենէ է, եւ ոչ 'ի
4 պղծութենէ, եւ ոչ նենգութեամբ. * այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ
հաւատարիմ լինել աւետարանին, նոյնպէս եւ խօսիմք.
ոչ իբրեւ մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ որ քննէ զսի-
5 րտս մեր։ * Զի ոչ երբէք բանիւք ողոքանաց եղեաք
առ ձեզ, որպէս եւ դուք իսկ գիտէք. եւ ոչ 'ի պատ-
6 ճառս ագահութեան, որպէս եւ Աստուած վկայ է. * եւ ոչ խնդրե-
7 ցաք փառս 'ի մարդկանէ, ոչ 'ի ձէնջ՝ եւ ոչ յայլոց։ * Կա-
րող էաք որպէս քրիստոսի առաքեալս ծանրանալ, այլ եղեաք
հեզք 'ի մէջի ձերում. որպէս դայեակ մի որ սնուցանիցէ
8 մանկունս. * նոյնպէս եւ մեք գթայաք 'ի ձեզ։ հաճոյ
թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աստուծոյ, այլ
9 եւ զանձինս մեր. քանզի սիրելիք մեր եղերուք։ * Յի-
շեցէք եղբարք՝ զվաստակսն մեր եւ զջան. զի զգիշեր եւ
զցերեկ գործեաք մի ծանրանալոյ ումեք 'ի ձէնջ. եւ
10 քարոզեցաք ձեզ զաւետարանն Աստուծոյ։ * դուք ինքնին վկ-
այք՝ եւ Աստուած, որպէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ անբծութեամբ՝
11 ձեզ հաւատացելոցդ եղեաք. * որպէս եւ գիտէք իսկ. զի
12 զիւրաքանչիւր ոք 'ի ձէնջ՝ իբրեւ հայր զորդիս՝ * մխի-
թարեաք եւ սփոփեաք, եւ գնեաք վկայութիւն գնալ ձեզ
արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւն
13 եւ 'ի փառս։ * Վասն այսորիկ եւ մեք գոհանամք զԱստուծոյ
անդադար, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ 'ի մէնջ՝
ըն-

բարկութենէն որ։ Ոմն ունի. Որ փրկեաց զմեզ 'ի բար՛՛։
Գլ. Բ. (2) Ոմանք. 'Ի մէջ Փիլիպեցւոցն։ (3) Ոմանք. Մխիթարութիւն ձեր ոչ։ (4) Ոմանք. Որ քննէն զսիրտս։ (5) Ոմանք. Եղաք առ ձեզ։ (6) Բազումք. Եւ ոչ խնդրէաք փառս։ (7) Ոմանք. Էաք իբրեւ քրիստոսի առաքեալս... որ սնուցանէ զմանուկ՛՛։ (8) Ոմանք. Գթացաք. Ոսկ օրինակ մի. գթացեալք 'ի ձեզ։ (9) Ոմանք. Յիշէք եղբարք ըզվաստա՛՛... եւ քարոզէաք 'ի ձեզ զա՛՛։ (9) Օրինակ մի. Գործէաք առ 'ի չծանրանալոյ... եւ քարոզէաք զարքայութիւն Աստուծոյ։ (11) Ոմանք. Որպէս հայր զորդիս։ (12) Ոմանք. Արժանապէս տեառն Աստուծոյ, որ եւ կոչեաց։ (13) Ոմանք. Այլ իբրեւ ճշմարտիւ... որ եւ ազդեցեալ է 'ի։

Digitized by Google

ընկալարուք, ոչ իբրև զբանն մարդկան, այլ որպէս էն
ճշմարտիւ զբանն Այ. որ և յաղթողեալ իսկ է 'ի ձեզ հա-
ւատացելոցդ: * Զի դուք նմանօղք եղերուք եղբարք՝ 14
եկեղեցեացն Այ՝ որ են 'ի Հրէաստանի 'ի քՌ յս. զի ըզ-
նոյն չարչարանս չարչարեցայք և դուք 'ի ձերոց ազ-
գակցաց, որպէս և նոքայն 'ի Հրէից. * որք և զՏէրն յս 15
սպանին և զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և Այ
յաճոյ ոչ են. և ամ մարդկան հակառակ եղեն. * և 16
արգելուին զմեզ խօսել հեթանոսաց զի ապրեսցին. զի
կատարեսցեն զմեղս իւրեանց յամ ժամ. քանզի հա-
սեալ է 'ի վերայ նոցա բարկութիւն մինչև 'ի սպառ.
Բ * Այլ մեք եղբարք՝ թափուրք և որբ մնացաք 'ի ձէնջ 17
բզ առ ժամանակ մի, երեսօք՝ և ոչ սրտիւ. առաւել ևս
փութացաք տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութեամբ:
* Վասն այսորիկ կամեցայ գալ առ ձեզ ես Պաւղոս՝ 18
միանգամ և երկիցս, և խափանեաց զմեզ սատանայ:
* Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն, կամ պսակ 19
պարծանաց մերոց, եթէ ոչ դուք 'ի Տր՝ առաջի Տն
մերոյ յսի քսի 'ի նորա գալստեանն: * Զի դուք էք 20
փառք մեր և խնդութիւն:

ԳԼ. Գ.

Վասն որոյ ոչ ևս ունիմք ժոյժ, զի բարւոք թուե- 1
ցաւ մեզ միայն մնալ յԱթէնս: * և առաքեցաք 2
զՏիմոթէոս զեղբայր մեր և զգործակից աւետարա-
նին Այ, և հօրն քսի, հաստատել զձեզ՝ և մխիթարել
վէ վս հաւատոցն ձերոց: * Զի մի ոք տատանեսցի 'ի նե- 3
ղութիւնս յայսոսիկ. քանզի դուք ինքնին իսկ գիտէք,
զի 'ի սմին կամք: * Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ յա- 4
ռաջագոյն ասէաք ձեզ, թէ նեղութիւնք հասանելոց են
'ի վերայ մեր. որպէս և եղև իսկ՝ և գիտացէք: * Վասն 5
այսորիկ և ես զի ոչ ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել ըզ-
հաւատսն ձեր. գուցէ՞ արդեւք փորձեաց և զձեզ փոր-
ձիչն, և ընդունայն լինիցի ջանն մեր: * Բայց արդ՝ 6
իբրև եկն Տիմոթէոս 'ի ձէնջ առ մեզ, և ետ մեզ աւ-
ետիս հաւատոցն ձերոց, և զսիրոյ, զի ունիք 'ի մտի
զմէ

---

(14) Օրինակ. Նմանող եղերուք եղ՛՛.. և նոքա 'ի Հրէից:
(16) Օրինակ. Արգելուլին զմեզ... զմեղսն իւրեանց:
(19) Օրինակ. Եթէ ոչ և դուք 'ի Տր:
Գլ. Գ. (1) Օրինակ. Ոչ ունիմ ժոյժ.. մնալ միայն: (4) Օ-
րինակ. Որպէս եղև իսկ՝ և գի՛՛: (5) Օրինակ. Վս այսորիկ և
ես զի ոչ ևս ունէի.. փորձեացէ զձեզ փոր՛՛... ընդու-
նայն լիցի ջանն: (6) Օրինակ. Հաւատոցն ձերոց և զսի-
րոյ, զի ունէիք 'ի ... յամ ժամ. ցանկացեալ էք:

Digitized by Google

զյիշատակս մեր բարեաց յամ ժամ․ և ցանկացեալ
7 էք տեսանել զմեզ՝ որպ և մեք զձեզ․ * վասն այսորիկ
մխիթարեցաք 'ի ձեզ եղբարք՝ 'ի վերայ ամ վշտաց և
8 նեղութեանց մերոց, 'ի ձեռն հաւատոցն ձերոց․ * զի
այժմ՝ կենդանի եմք՝ եթէ դուք հաստատուն կայցէք
9 'ի Տր։ * Զի՞նչ կարեմք գոհութիւն մատուցանել այ վն
ձեր, 'ի վերայ ամ խնդութեանն զոր խնդամք վասն ձեր
10 առաջի այ մերոյ․ * զցայգ և զցերեկ առաւել եւս ա-
ղաչեմ՝ տեսանել զերեսս ձեր, և հաստատել զպա-
կասութիւն հաւատոցն ձերոց։
11 * Այլ ինքն այ և հայր մեր՝ և տր մեր յս քս՝ ուղղ- Գ
12 եսցէ զճանապարհս մեր առ ձեզ։ * և զձեզ ինքն տր Յ
բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ մի-
13 միանս և առ ամենեսին՝ որպ և մեք 'ի ձեզ․ * հաստա-
տել զսիրտս ձեր անարատս 'ի սրբութիւն առաջի այ և
հօր մերոյ՝ 'ի գալստեանն տն մերոյ յսի քսի՝ համա-
գերձ ամենայն սրբովք իւրովք։

ԳԼ. Դ.

1 Այսուհետեւ եղբարք՝ աղաչեմ զձեզ, և մխիթարեմ Գ
'ի Տր յս․ զի որպ ընկալարուք 'ի մէնջ, թէ որպէս ԴԿ
պարտ իցէ ձեզ գնալ՝ և հաճոյ լինել այ․ որպէս և
գնայք իսկ, զի եւս քան զեւս յաւելուցուք 'ի նոյն։
2 * Եւ գիտէք՝ թէ որպիսի պատուէրս տուաք ձեզ
3 'ի Տր յս։ * զի այս են կամք այ, սրբութիւն ձեր․ 'ի
4 բաց լինել ձեզ 'ի պոռնկութենէ, * գիտել իւրաքանչիւ-
րումեք 'ի ձէնջ զիւր անօթ ստանալ սրբութեամբ և պատ-
5 ուով․ * մի 'ի ցաւս ցանկութեան՝ որպէս և այլ հեթա-
6 նոսք որ ոչ գիտեն զած։ * Մի 'ի զանցանել և զրկել
յիրիք յայդմիկ զեղբայր իւր․ քանզի վրէժխնդիր է
Տր 'ի վերայ ամի այդորիկ․ որպ յառաջագոյն ասացաք
7 ձեզ, և եդաք վկայութիւն։ * քանզի ոչ կոչեաց զմեզ
ած

---

(7) Ոմանք․ Վն այսորիկ և մխիթարեցաք․․․ և նեղութեանց մերոց 'ի ձեռն հաւտոց ձե"։ (8) Յօրինակին պակասէր․ Կեն-դանի եմք եթէ։ (9) Ոմանք․ Խնդութեն զոր խն"։ (9) Յօ-րինակին պակասէր․ Առաջի այ մերոյ։ (10) Բզմ․ Աղաչեմք տեսանել։ (13) Ոմանք․ 'Ի սրբութեն առաջի այ։ (13) Ոմանք յաւելուն․ Սրբովք իւրովք․ ամէն։

Գլ․ Դ․ (1) Ոմանք․ Աղաչեմք զձեզ և մխիթարեմք․․․ եթէ որպ․․․ որպ և գնայցէք։ (2) Օրինակ մի․ Որպ պատուէրս տուաք ձեզ։ (3) Ոմանք․ Կամքն այ՝ սրբութիւն ձեր։ (3) Օրինակ մի․ Զձեզ 'ի յամ պոռնկութենէ։ (4) Ոմանք․ Գիտել իւրաքանչիւրոք 'ի։ (6) Ոմանք․ Մի զանց անել և զրկել․․ որպ յառաջագոյնն ասաք"։

Digitized by Google

ած 'ի պղծութիւն այլ 'ի սրբութիւն: * Այսուհետև որ ա- 8
նարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ զԱծ՝ որ և ետ զՀո-
գին իւր 'ի ձեզ: * Այլ վն եղբայրսիրութեան՝ չէ ինչ 9
պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ Աստուա-
ծուսոյցք էք՝ առ'ի զմիմեանս սիրելոյ: * քանզի և առնէք 10
իսկ զայդ յամ եղբարս, որ են յամ Մակեդո-
նացւոցն: Աղաչեմ զձեզ եղբարք՝ առաւել ևս 'ա-
ռաւելուլ և առաջադիմել. հանդարտել, * և գործել 11
զիւրաքանչիւր. և գործել ձեռօք ձերովք, որպէս և պա-
տուիրեցաք ձեզ. զի գնասջիք պարկեշտութբ առ ար-
տաքինսն, և մի ինչ կարօտեալ իցէք:
Ե * Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ ագէտ իցէք վն ննջեցե- 12
լոցն. զի մի տրտմիցիք որպէս և այլքն որոց ոչ գոյ յոյս:
* Եթէ հաւատամք՝ եթէ յս մեռաւ և յարեաւ. նոյն- 13
պէս և ած զննջեցեալսն 'ի ձեռն յսի ածցէ ընդ նմա:
* Բայց զայս ասեմք տն բանիւ, թէ մեք որ կենդա- 14
նիքս եմք մնացեալք՝ 'ի գալստեանն տն ոչ ժամանեսցուք
ննջեցելոցն: * զի ինքն տր հրամանաւ 'ի ձայն հրեշ- 15
տակապետի, և 'ի փող այ իջանէ յերկնից. և մեռեալք
'ի քս յարիցեն յառաջագոյն: * Ապա և մեք որ կեն- 16
դանիքս մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակես-
ցուք ամպովք ընդ առաջ տն յօդս. և այնպէս յամ
ժամ ընդ տն լինիցիմք: * Այսուհետև մխիթարեցէք 17
զմիմեանս բանիւքս այսոքիւք:

ԳԼ. Ե.

Զ դդ Այլ վասն ժամուց և ժամանակաց եղբարք՝ չէ ինչ 1
պիտոյ գրել առ ձեզ: * զի դուք ինքնին իսկ ստոյգ 2
գիտէք, թէ օր տն իբրև զգող գիշերի՝ այնպէս հասա-
նէ: * Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, 3
յայնժամ յանկարծակի հասցէ նց սատակումն՝ որպէս
և

---

(8) Ոսկան յաւելու. Այսուհետև որ զՁեզ անարգէ ... զՀո-
գին իւր սբ 'ի ձեզ: (8) Ոմանք. Որ և ետ զՀոգին սբ: (9) Ո-
մանք. Էք առ միմեանս սիրոյ: (10) Ոմանք. Առնէք իսկ
զնոյն յամ.. աղաչեմք զձեզ եղ".. ևս յաւելուլ և ա-
ռաւ": (11) Ոմանք. Ձեռօք իւրովք, որպէս պատուիրեցաք:
(12) Ոսկան. Ոչ կամիմք եղբարք.. վն ննջեցելոց: (12) Ո-
մանք. Զի [illegible] տրտմիջիք, որպէս և այլքն ո": (13) Օրինակ
Գ. 'ի ձեռն քսի ածցէ: (14) Ոմանք. Զայս ասեմ տն բա-
նիւ, եթէ.. մնացեալ եմք 'ի գալստեանն տն: (14) Օ-
րինակ Գ. Բայց զայս գիտեմք տն բա": (15) Ոսկան. Զի
ինքնին տր հրամանաւ և 'ի ձայն հրեշ":
Գլ. Ե. (2) Ոմանք. Ինքնին ստոյգ գիտէք զի օրն տն
իբրև զգող 'ի գիշերի այնպէս հասանիցէ: (3) Ոմանք.

Digitized by Google

4 և երկն յղւոյ, և մի ապրեսցեն: * Այլ դուք եղ-
բարք՝ ոչ էք 'ի խաւարի, թէ օրն ձեր իբրև զգող 'ի
5 վերայ հասանիցէ. * զի ամենեքին դուք որդիք լու-
սոյ էք, և որդիք տունջեան: Չեմք գիշերոյ՝ չեմք խա-
6 ւարի. * ապա մի զգենով անկանիցիմք՝ ոմ և այլքն.
7 այլ արթունք և զուարթունք եղիցուք. * Զի որ ննջե-
ցենն՝ գիշերի ննջեն, և որ արբենանն՝ գիշերի արբե-
8 նան: * այլ մեք որ տունջեան եմք, արթունք եղի-
ցուք, և զգեցցուք զզրահսն հաւատոյ և սիրոյ, և դի-
9 ցուք զսաղաւարտն յուսոյն փրկութեան: * Զի ոչ եդ ըզ-
մեզ Այ 'ի բարկութիւն, այլ 'ի փրկութիւն կենդանութեան 'ի
10 ձեռն Տն մերոյ Յսի Քսի. * որ մեռաւն վն մեր. զի
եթէ արթունք իցեմք՝ և եթէ ննջիցեմք, նովաւ հան-
11 դերձ կեցցուք: * Վն որոյ մխիթարեցէք զմիմեանս,
12 և շինեցէք զմիմեանս՝ ոմ և առնէքդ իսկ: * Աղաչեմ
զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակա-
13 ցուս ձեր 'ի Տր, և զխրատիչս ձեր: * և համարեցա-
րուք զնս արժանիս առաւել սիրոյ՝ վն գործոյ նոցա:
14 խաղաղութիւն արարէք ընդ միմեանս. * Աղաչեմ զձեզ
եղբարք՝ խրատեցէք զատահակս, մխիթարեցէք զկար-
ճամիտս, պաստպարան լերուք տկարաց, երկայնամիտ
15 լերուք առ ամենեսին: * Զգոյշ լերուք՝ դուցէ ոք չա-
րի չար հատուցանիցէ. այլ յամ ժամ զբարեաց զհետ
16 երթայք՝ առ միմեանս և առ ամենեսին: * Յամ ժամ
17 ուրախ լերուք: * անդադար աղօթս արարէք: * յա-
18 մենայնի գոհացարուք. զի այս են կամք այ քսի յիս
19 'ի ձեզ: * Զհոգին մի շիջուցանէք: * զմարգարէու-
20 թիս մի արհամարհէք: * զամենայն ինչ փորձեցէք,
21 զբարին ընկալարուք: * յամ իրաց չարաց 'ի բաց կա-
22 ցէք: * Եւ ինքն Այ խաղաղութեան սուրբ արասցէ ըզ-
23 ձեզ համօրէնս: և բովանդակ ձեր ոգի, և շունչ, և
մար-

Հասանէ նոցա սատակումն, որպէս երկն յղ": (4) Ո-
մանք. Եթէ օրն ձեր իբրև զգող հասանէ 'ի վր: (5) Ո-
մանք. Չեմք գիշերայ: (6) Ոմանք. Մի զգենով անկա-
նիցիք: (7) Ոմանք. Ննջեն՝ 'ի խաւարի ննջեն, և որ
արբենան՝ գիշերի ար": (8) Ոմանք. Զզրահն հաւատոց
և սիրոյ... յուսոյ և փրկութեան: (9) Ոմանք. Զի ոչ
եդ զմեզ: (10) Ոմանք. Զի թէ արթ": (12) Ոմանք. Ա-
ղաչեմք զձեզ.. զվաստակաւորսն: (13) Օրինակ մի յա-
ռաջին. Եւ համարեսջիք զնս.. առաւել յաճախութբ
սիրոյ, վն գործոյն նց: (14) Ոմանք. Աղաչեմք զձեզ
եղ": (15) Ոմանք. Դուցէ ումեք չարի չար հատուցա-
նէք: (18) Ոմանք. Կամքն այ քսի յիս որ 'ի ձեզ:
(21) Ոմանք. Զհոգին ընկալարուք: (23) Ոմանք. Խաղա-

մարմին՝ անարատ 'ի գալստեան տն մերոյ յսի քսի պա-
հեսցի: * Հաւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ և ա- 24
րասցէ զնոյն: * Եղբարք՝ աղօթս արարէք և 'ի մեր 25
վր: * Ողջոյն տայջիք եղբարց ամենեցուն 'ի համբոյր 26
սրբութե: * Երդմնեցուցանեմ զձեզ 'ի տր, ընթեռ- 27
նուլ զթուղթդ առաջի ամենայն եղբարց սրբոց: * Շնոր- 28
նորհք տն մերոյ յսի քսի ընդ ձեզ:

Առ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթ՝ գրեցաւ յաթենայ:
Տունք. ճղբ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ
Առ Թեսաղոնիկեցիս Երկրորդ Թղթոյն:

Օ այս առաքէաց 'ի Հռոմէ. և է պատճառ թղթոյս՝ այս: Ոմանք 'ի Թեսաղոնիկեցւոցն անգործք, և անխորհուրդ վարէին, և զեղխաբար յափշտակէին, և վասն գալստեանն տն անհանգիստ էին: զայս տմ որք լուան՝ պատճառէին առաքելոյս, և զոր 'ի հոգ-ւոյն լուաւ. և յորժամ զայս տմ լուաւ առաքեալն, գրեաց ըղ-թուղթս: Եւ նախ ընկալեալ զհաւատս նոցա՝ մխիթարեցուցանէլով. և նոքօք պարծէր 'ի վերայ զոր կրէր վն քի. և մխիթարէ զնս 'ի մէջ ասելով զարդարութիւն այ 'ի վերայ նոցին որք զնոսին ա-նիրաւէին: Յետ այսորիկ վն գալստեանն ծրէշին վարդապետէ, մի տամել զնոսա հաւատացուցանել, մի ինքն բանիւ նոցա և մի հոգւով, և մի այլ գրով նորին, մի նենգել կամ օտարացուցանել զնս. զի թէ նախ ոչ եկեսցէ ապստամբութե խռովութե, և յետ այսորիկ հակառակորդն որդի կորստեան, որ գայ արուեստա-կաւ և նշանօք սուտ՝ գործակցութբ սատանայի ասել նշանս: Յետ այսորիկ զնոքա զնս՝ զօրանալ և զինք ասել զաստուածութե՝ զոր վարդապետեցան 'ի նմանէ: Պատուիրէ ոչ և մի հաղորդութե ասել ընդ անխորհրդս, այլ մերժել զնս. որք են 'ի գործս խռ-րեցութե: պատուիրեաց նոցա և ամենեցուն՝ մի լսել բանից նոցա, այլ 'ի վերայ նոցին ծաղրել, և աղօթս արարեալ խաղաղութե՝ զուարթեաց զթուղթն, և զողջոյնն ձեռօք իւրով գրեալ, որ էր նշան յամ թղթս պատուիրէ:

Գլուխք առ Թեսաղոնիկեցիս Բ. թղթոյն:

Գլուխք առ Փիլիմոն թղթոյն։

Ա. Գովութիւն Փիլիմոնի, և գոհութիւն վասն նորին։
Բ. Յանձնարարութիւն Ոնեսիմայ ծառայի փախուցելոյ, և աղաչանք վասն նորին ընկալելոյ 'ի յետին հաւատոյն։

---

(9) Ոմանք. Կռիւսն 'ի բաց.. անօգուտք են, սնոտիք։
(10) Օրինակ մի. Եւ երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր։
(11) Ոմանք. Զանձն դատապարտեալ։ (12) Ոմանք. Զար-
տեմոն, կամ զՏիւքիկոս.. 'ի Նիկոպօլիս։ (13) Ոմանք. Պա-
կասեսցէ նոցա։ (15) Օրինակ մի ընդ ամենայն յաւելու. Ընդ
ձեզ ամենեսին. ամէն։

Digitized by Google

Ա Ռ   Փ Ի Լ Ի Մ Ո Ն,
ԵՒ ԱՌ ԱՐՔԻՊՊՈՍ ԾԱՌԱՅԱԿԻՑ.
ԵՒ ԱՌ ԱՊՓԻԱՍ:

ՊԱՒՂՈՍ ԿԱՊԵԱԼ ՅԻ- 1
սուսի Քրիստոսի, և Տիմոթէոս եղբայր. Փի-
լիմոնի սիրելւոյ՝ և գործակցի մերոյ,
և Ապփեայ քեռ, և Արքիպպեայ զինուորակցի մե- 2
րոյ, և տանն քո եկեղեցւոյդ. Շնորհք ընդ ձեզ և 3
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
Ա Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամ ժամ, յիշատակ առնել յաղօթս 4
իմ վասն քո, լուեալ զքո հաւատոն և զսէր, 5
զոր ունիս առ Տէր Յիսուս՝ և առ ամենայն սուրբս: Զի 6
հաղորդութիւն հաւատոցն քոց՝ ազդօղ լինիցի, գիտու-
թեամբ ամենայն բարութեան, որ ՚ի ձեզ է ՚ի Քրիստոս Յիսուս: Խնդու- 7
թիւն յոյժ ընկալայ, և մխիթարութիւն ՚ի վերայ սիրոյն
քոյ. զի գութք սրբոց՝ քեւ հանգուցեալ են եղբայր:
Բ Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ ՚ի Քրիստոս, 8
հրամայել առ ՚ի քեզ զարժանն վասն սիրոյ: Մանաւանդ 9
թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել՝ որպէս և Պաւղոս ծե-
րացեալ, արդ՝ և կապեալ ևս Յիսուսի Քրիստոսի: Աղաչեմ 10
զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ ՚ի կապանս իմ, զՈ-
նեսիմոս. որ երբեմն անպիտան էր քեզ. բայց արդ՝ 11
քեզ և ինձ պիտանի. զոր յղեցի առ քեզ: Եւ դու՝ 12
զդա ընկալջիր, այսինքն է՝ զիմ աղիս: Զոր կա- 13
մէի առ իս արգելուլ, զի ընդ քո ունիցի ինձ սպաս
՚ի կապանս աւետարանին: բայց առանց քո կամաց 14
ոչինչ կամեցայ առնել, զի մի բարիքդ քո ՚ի հարկէ լի-
նի.

---

* Այլ գրչագիրք՝ համաձայն միւսոց ունին վերնագիրս, Բայց յու-նականս. որ գրեն լոկ. Առ Փիլիմոն: Բայց երկու օրինակք գրեն. Արքիպպոս սարկաւագուն. և առ Ապփիա. Թուղթ: (1) Օրինակ մի. Պաւղոս առաքեալ Յի.. փիլիմոնի սի-րել": Ոմանք ունին. փիլիմոնի: (4) Ոմանք. Յիշատակել յաղ": (5) Ոմանք. Զհաւատն քո և զսէրն զոր: (6) Ոմանք. Ամ բարութեանց, կամ, բարութե: (7) Ոմանք. Ընկալայ, և ուրախութիւն ՚ի վր սիրոյն քո.. քեւ են հանգ": (8) Օ-րինակ մի. Ունիս ՚ի Քս: (9) Ոմանք. Վս սիրոյն... այն-պէս լինել: (12) Օրինակ մի. Զոր առաքեցի քեզ: և դու զնա ըն".. աղիս: (13) Ոմանք. Զոր կամեցայ առ իս: (14) Ոմանք. Զոչինչ կամե"... բարիքն քո.. լինիցի,

Digitized by Google

15 Դիցէն, այլ կամաւ. * Եւ թերեւս վն այնորիկ մեկ-
նեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտենական ընկալցիս զնա.
16 * մի եւս իբրեւ զծառայ, այլ ՚ի վեր քան զծառայ, իբ-
րեւ զեղբայր սիրելի. եթէ ինձ այսպէս, որչափ եւս ա-
17 ռաւել քեզ մարմնով՝ եւ Տր։ * Եթէ զիս քեզ հաղորդ
18 համարիցիս, ընկալ զդա իբրեւ զիս։ * Եւ եթէ յան-
ցեաւ ինչ իցէ՝ կամ պարտիցի, զայն ինձ համարեսջիր։
19 * Ես Պաւղոս գրեցի իմով ձեռամբ. ես հատուցից,
զի մի ասիցեմ քեզ՝ թէ դու զանձն քո ինձ պարտիս։
20 * Այո եղբայր՝ ես քո փոխանակ եղէց ՚ի Տր. հանգո-
21 ղասջիր իմ ՚ի Քս։ * Յուսացեալ ՚ի հնազանդութիւն
քո գրեցի առ քեզ. քանզի գիտեմ թէ առաւել եւս
22 քան զոր ասեմդ՝ առնիցես։ * Միանգամայն եւ պատ-
րաստեսջիր ինձ վանս. քանզի յուսամ թէ աղօթիւք
23 ձերովք շնորհեցայց ձեզ։ * Ողջոյն տայ ձեզ Եպափրաս
24 գերեկից իմ ՚ի Քս Յս. * եւ Մարկոս, եւ Արիստարքոս,
25 եւ Դեմաս, եւ Ղուկաս՝ գործակիցք իմ։ * Շնորհք
Տն Յսի ընդ հոգւոյդ ձերում։

Առ Փիլիմոնի և Ապփիա տեարս Օնեսիմայ. և առ Արքիպպոս սարկաւագ Կողոսացւոց եկեղեցւոյն, գրեցաւ ՚ի Հռոմէ ՚ի ձեռն Օնեսիմայ ծառայի։ Տունք. ԼԷ։

այլ կամաւ ըստ Տն։ (16) Ոմանք. Քեզ՝ և մարմնով և Տր. (17) Ոմանք. Եւ եթէ.. հաղորդ համարիս, կամ, համարեսցես։ (18) Ոմանք. Եւ եթէ յանցուցեալ ինչ։ (19) Ոմանք. Ես հատուցից քեզ.. եթէ և դու զանձն։ (20) Ոմանք. Քո փոխան եղէց։ (21) Օրինակ մի. Յուսացեալ եմ ՚ի հնազանդութիւն քո, և գրեցի զայդ, զի գիտեմ թէ առաւել քան զոր ասեմս առնես։ (21) Ոմանք. Գիտեմ եթէ... զոր ասեմքս առնիցես։ (22) Ոմանք. Յուսացեալ եմ եթէ աղօթիւք։ (25) Ոմանք յաւելուն. Տն մերոյ Յսի Քսի.. հոգւոյդ ձերում. ամէն։ * ՚Ի վախճանի ոմանք. Եւ առ Ապփիա.. և առ Արքիպպոս։

* Առաջին յաւուրս պատրաստեան թղթոցս յայսմ Գրքոյկի այլ եւս հնգետասան տառադարձս ինչ, թղթոյս Եբրայեցւոց. ընդ որս և այն թէ. Ընդօրինակեցան գիրքս այս ընդ կեսարացւոց օրինակաց, որ կան յարկեղս գրոց սրբոյն պամփիլեայ՝ իւրովք ձեռօք գրեալ։

* Որպէս ծանուցաք ՚ի վեր անդր, օրինակս մեր նախ առաջին յետ թղթոյս Փիլիմոնի յաւելու զԵբրայեցւոց թուղթն կարգեալ, նա- խաառաջ զՆորն պահելով. յաւել զսոյն պատուականս թղթեան. զհետ զԿաթողիկէսն։ այլ մեք ըստ պատշաճի կարգին յառա- ջեցաք, առաջի նոցին զնոյն կարգելով։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յայտնութեան Յովհաննու :

Սրբոյ աւետարանչին յովհաննու և կուսի՝ որ ինքն յայտնութիւն, զոր ետես մարգարէական [illegible] 'ի [illegible] միայն [illegible] : Եւ յայտնութիւն յուէն, զի [illegible] 'ի հան-[illegible] մինչեւ քան յայս գիրս՝ [illegible] գերեսել է : Եւ է [illegible] յայտնութեան այս : Զի նախ քան [illegible] ծածկեալն է բաց հաւատել՝ յոյժ հարկաւոր է պիտանացու. և այն [illegible] մինչ [illegible] աշխարհի. Զի որոյ մարգարէին [illegible] հին [illegible] թէ [illegible] քէ նախ գուշակեցին՝ [illegible] և նոր [illegible]. և [illegible] թէ [illegible] որ մար-գարեան և [illegible] : Յոր իւրն [illegible] հասարակացն է եկեղեցին. այլ զոր ինչ [illegible] և յառաջ նշանաւ էին գալոց, [illegible] յառաջ նշանին՝ յայտնութիւն [illegible] 'ի [illegible] պատահելոց 'ի ժամանակին : Յորոց [illegible], որ ինչ նախ քան [illegible], և յորոց [illegible], է ինչ զի և 'ի [illegible] [illegible], և [illegible]. և է ինչ որ մնայ 'ի գիրս յայս, [illegible] նշանին. զոր և [illegible] 'ի [illegible]. և [illegible] և [illegible] [illegible], և [illegible] և [illegible]. [illegible]. և նոր է. և [illegible] հարսանեացն զոր ունի գիրս այս : Զորս ըստ օրինի մարգարէութեան [illegible] 'ի [illegible]. [illegible]. և [illegible] մարդոյ. և [illegible], և [illegible] հարսանեաց, և [illegible] ըստ [illegible] : Եւ նախ [illegible] [illegible], և [illegible] 'ի նոյն. և [illegible], 'ի [illegible] 'ի [illegible]. [illegible], և [illegible]. և [illegible] որ նախ քան [illegible]. յորում և [illegible] և [illegible] : Պատ-ճառ և 'ի դէմս [illegible] որ [illegible], յայտնէ [illegible] և [illegible], որ է [illegible]. և [illegible], [illegible] 'ի գեհեն [illegible] : Պատ-ճառ [illegible], և [illegible] 'ի [illegible]. և [illegible] 'ի [illegible] և [illegible], և [illegible] և [illegible]. և [illegible] երկին և երկիր՝ զոր [illegible] :

Գլուխք Յայտնութեան Յովհաննու :

Ա. Յայտնութիւն [illegible] յովհաննու [illegible], որ եղև [illegible] 'ի [illegible] :

Digitized by Google

Բ. Զի եղեւ սէր 'ի Քզ անձին ծրագրաբանացն զգեցեալ զմեծութեան:
Գ. Թէ ընդէր գրեաց առ հրեշտակն Եփեսացւոց եկեղեցւոյն:
Դ. Զինչ է առ հրեշտակն Զմիւռնացւոց եկեղեցւոյն:
Ե. Զինչ առ Պերգամոնի եկեղեցւոյն հրեշտակին:
Զ. Զինչ է առ Թիւատիրացւոց եկեղեցւոյն հրեշտակին:
Է. Զինչ է առ Սարդիացւոց եկեղեցւոյն հրեշտակին:
Ը. Զինչ է առ Փիլադելփեացւոց եկեղեցւոյն հրեշտակին:
Թ. Զինչ է առ Լաւոդիկեցւոց եկեղեցւոյն հրեշտակին:
Ժ. Վս երեւելոյ նմա դրանն երկնից և գահն և շուրջ երիցանցն:
ԺԱ. Վս գրոցն կնքելոյ, զոր ոչ կարաց բանալ յեղելոցս:
ԺԲ. Վասն կնքելոյ գառինն, և որ 'ի կարգին է:
ԺԳ. Լուծումն առաջին կնքոյն:
ԺԴ. Լուծումն երկրորդ կնքոյն. և որ 'ի կարգին:
ԺԵ. Լուծումն երրորդ կնքոյն:
ԺԶ. Լուծումն չորրորդ կնքոյն, յորում և պատիժ ամպարշտաց:
ԺԷ. Լուծումն հինգ կնքոյն, և մարտիրոսն առ Ած կոչումն:
ԺԸ. Լուծումն վեց կնքոյն, և հարուածն որ 'ի վախճանին:
ԺԹ. Վասն կնքելոցն 'ի հարուածոց չորք հրեշտակացն, ՃԽԴ.
հազարացն:
Ի. Վս անթիւ բազմութե հեթանոսաց պայծառազգեցելոց առաջի Ած
ԻԱ. Լուծումն եւթն կնքոյն, և բուրումն խնկոյ աղօթից սրբոց:
ԻԲ. Հարկանել զփողն առաջին հրեշտակին, և թէ հուր և կար-
կուտ և արեան հեղեալ յերկիր:
ԻԳ. Երկրորդին հարկանել ապականեցան որք 'ի ծովու շնչաւորք:
ԻԴ. Երրորդին փողին ապականեցան ջուրք և գետք:
ԻԵ. Չորրորդին փողել՝ խաւարեցան աստեղք:
ԻԶ. Հինգերորդին փողելն՝ ել մարախ բազմաձեւք:
ԻԷ. Վասն վեցերորդ հրեշտակին որ լուծանէ զԴ. 'ի վերայ Եփրա-
տայ զհրեշտակին:
ԻԸ. Վասն հրեշտակին որ զգեցեալ զամպն և զծիածանն, և զ-
վախճան նշանակէր:
ԻԹ. Զի գրքոյն ուտէ աւետարանին 'ի հրեշտակէն:
Լ. Վասն Ենովքայ և Եղիայի:
ԼԱ. Զի սպանեալ սուրբք 'ի նեռանէն՝ դարձեալ յառնեն:
ԼԲ. Վասն եւթներորդ փողոյն հարման. և զի գովեն սրբքն զԱծ
Ածն 'ի հանդերձելոյ դատաստանին:
ԼԳ. Վս խաւարման եկեղեցւոյ, որ խուսափանէ և որ 'ի յետս նեռանն:
ԼԴ. Վասն յերկինս պատերազմին սրբ. հրեշտակին ընդ դեւս, և կոր-
ծանման սատանայի:
ԼԵ. Զի ոչ դադարէ Միքայէլ 'ի հալածելոյ զեկեղեցի:
ԼԶ. Վասն գազանին և տասն եղջերն, և եւթն գլխոյ նորին:
ԼԷ. Վասն սուտ մարգարէին: ԼԸ. Վասն անուան նեռանն:
ԼԹ. Վասն գառինն. և որոց ընդ նմա ՃԽԴ. հազարացն:
Խ. Վասն հրեշտակին՝ որ երաշխաւոր լինէր հանդերձելոյ դա-
տաստանին:
ԽԱ. Վասն հրեշտակին որ զանկումն Բաբելոնի քարոզէր:

 ԽԲ.

խբ. Զգուշացուցանէ հրեշտակն ընդունելոյ զնշանն ։
խգ. Զի նորեալն յանձն հնչէ զԲայս երկիր գերընդունել ։
խդ. Վասն հրեշտակին՝ որ կթեր զդատաստանի այգին ։
խե. Վասն եւթն հրեշտակացն որ հարուածոցն զմարմին նորա եւ զվրիժման, եւ վասն ապակեայ ծովուն ։
խզ. Զի յառաջին ոսկեայ սափորին հեղմամբ՝ եհաս հարուած ամ-պարշտաց ։
խէ. Յերկրորդին՝ հարուածք ՚ի ծովային ։
խը. Յերրորդին՝ գետք յարեան փոխեալ ։
խթ. Չորրորդին՝ փանչքն մարդկան խորշակաւ ։
ծ. Հինգն՝ զԹագաւորութիւն գազանին խաւարեցուցանէ ։
ծա. Վեցն՝ ճանապարհ տայ ՚ի վերայ Եփրատայ արեւելից թա-գաւորացն ։
ծբ. Յեւթն՝ կարկուտ եւ շարժ ՚ի վերայ մարդկան ։
ծգ. Եցոյց հրեշտակն աւետարանչին զդատաստան քաղաքին, եւ ըն-թագաւորաց եւթն գլխոյ եւ տասն եղջերին ։
ծդ. Զի միւնեաց հրեշտակն զխորհուրդ պատմէին ։
ծե. Վասն հրեշտակին որ զանկանելն Բաբելոնի յայտնէր, եւ երկ-նային ձայնն ելանել ասէ ՚ի քաղաքէն. եւ զի անցանեն վայել-չութենէ քաղաքին ։
ծզ. Օրհնութիւնն սրբոց երկնայինն ամենայնուստ ՚ի կործանելն Բա-բելոնի ։
ծէ. Վասն խորհրդաւոր հարսանեաց գառինն եւ ընթրեաց ։
ծը. Տեսանէ աւետարանիչն զՔս յերիվար բազմեալ հրեշտակօք ։
ծթ. Զի ՚ի գեհենն արկաւ նեռանն եւ որք ընդ նմա ։
կ. Զի կապեցաւ սատանայ ՚ի խաւարչութեան փոր մինչ յաւախճան, եւ վասն հազար ամին ։
կա. Վասն առաջնորդելոյ բազմականեաց անպայմանաց ընդ Քս խոստո-վանողացն ։
կբ. Զինչ առաջին յարութիւն, կամ զինչ երկրորդ մահն ։
կգ. Վասն Գոգայ եւ Մագոգայ ։
կդ. Վասն նորոգելոյ յարութեան, եւ հատուցանելոյ արդարոցն եւ չա-րագործացն ։
կե. Վասն նոր երկնի եւ երկրի, եւ կերպին նր ։
կզ. Վասն աստուածածնայ այնր որ յաւիտեան նորոգէր ։
կէ. Վասն հրեշտակին որ ցուցանէր նմա զնր քաղաքն զերուսաղէմ շահելով ։
կը. Վասն մաքուր գետոյն որ յաթոռոյն աթոռոյ հանէցաւ ։
կթ. Զի տր է մարգարէիցն քո եւ փր հրեշտակաց ։
հ. Զի արծանահաստատ է փեսոյն առակելոյս ։
հա. Զի ոչ հրամայեցաւ նմա կնքել, այլ քարոզել զբանսն ։
հբ. Զի եկեղեցի եւ որ ՚ի նմա հոգին ընդունին զՔն յայտնու-թիւն, եւ վասն անիծիցն որոց յաւելուած ՚ի գիրս մատենին ։

ՑԱՑՏ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՅՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵ-
ՏԱՐԱՆՉԻ.

ԳԼ. Ա.

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅԻ-Ս
սուսի քսի, 'ի ձեռն որոյ ետ ած ցու-
ցանել ծառայից իւրոց՝ որ ինչ լինե-
լոց է վաղվաղակի. և նշանակեաց ա-
ռաքելով 'ի ձեռն հրեշտակի իւրոյ առ
2 ծառայ իւր յովհաննէս: * Որ վկայեաց զվկայութիւնբա-
նին այ, և զվկայութիւն յսի քսի զոր ետես. որ էր, և
3 որ լինելոցն էր յետ այնորիկ: * Երանի որ կարդաս-
ցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ
զոր 'ի սմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է:
4 * 'Ի յովհաննէ առ եւթն եկեղեցիսն՝ որ են յասիայ.
շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յայ՝ յէէն՝ և որ էն՝
և որ գալոցն է, և յեւթն զօրութեանց հոգւոյն՝ որ է
5 առաջի աթոռոյն իւրոյ. * և 'ի յսէ քսէ հաւատարիմ
վկայէն, որ է անդրանիկ 'ի մեռելոց, և իշխան թա-
գաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և ելոյծ զկա-
6 պանս մեղաց մերոց արեամբն իւրով. * և արար զմ-
եզ

* 'Ի Օրինակին՝ ոմանք գնեն համառօտիւ. Յայտնութիւն սրբոյ յովհաննու ածաբանի:

Գլ. Ա. (1) Ոմանք. Որ լինելոց է... առ յովհաննէ ծռյ իւր: (2) Ոմանք. Վկայեաց զբանէն այ, և զվկայութիւն յի.. և որ էր: (3) Ոմանք. Երանի որ ընթեռնու զբանս մրգրէութեանս այնորիկ, և որ լսէ և պահէ զոր ինչ 'ի սմա գրեալ է: (4) Ոմանք. Յովհաննէս առ եւթն.. որ յասիա... և խաղաղութի յէէն: (4) Ոսկան. Եւ եօթն հոգւոյն զօրութէ՝ որ է: (5) Ոմանք. Եւ 'ի յսէ քսէ... որ սիրեացն: (5) Ոմանք. Անդրանիկ 'ի մեռելոց: (6) Ոմանք. Իւրոյ. Նմա փառք և զօրութիւն յաւի

Digitized by Google

մեզ թագաւորս և քահանայս Այ և հօր իւրոյ. որում փառք
և զօրութիւն՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն: * Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. և 7
տեսցեն զնա ամենայն աչք, և տեսցեն զնա ծագք
երկրի, և որք խոցեցին զնա՝ ամենեքեան յերկրի, և
կոծեսցեն 'ի վերայ նր. այո՛ ամէն: * Ես եմ այբ, 8
և ես եմ քէ, ասէ Տր Աճ, որ էն՝ և որ է՝ և որ գա-
լոցն է՝ ամենակալ: * Ես Յովհաննէս եղբայր ձեր և 9
հաղորդակից նեղութեան՝ և արքայութեան՝ և համբե-
րութեան որ 'ի քս յս. եղէ ես 'ի կղզւոջն որ անուանեալ
կոչի Պատմոս՝ վս բանին և վս վկայութեան յսի քսի:
Բ * Եւ եղէ յիս հոգւով 'ի կիւրակէի աւուր, և լուայ 10
զձայն զհետ իմ զմեծ իբրև զձայն փողոյ՝ որ ասէր ցիս.
Ես եմ ալփա և օմ. առաջին և վերջին. * զոր տե- 11
սանես՝ գրեա՛ 'ի գիրս, և տո՛ւր տանել յեօթն եկեղե-
ցիս՝ որ յեփեսոս, և 'ի զմիւռնիա, և 'ի պերգամոնէ,
և 'ի Թիւատիրս, և 'ի սարդիկէ, և 'ի փիլադելփիա,
և 'ի լաւոդիկիա: * Եւ դարձայ տեսանել զձայնն՝ որ 12
խօսէր ցիս. և 'ի դառնալն իմում տեսի եօթն ճրագ-
դարան ոսկիս: * և 'ի մէջ եօթն ճրագարանացն նման 13
որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմուճան պճղնաւոր,
և գօտեւորեալ առ ստամբքն գօտի ոսկեղէն. * և գը- 14
լուխ նր և հերքն իբրև զասր սպիտակ՝ և ոճ զձիւն.
և աչք նր ոճ բոց հրոյ. * և ոտք նր նմանեալ պղնձոյ 15
ծխեցելոյ 'ի մէջ հնոցի հրաշէկ. և ձայն նր իբրև զձայն
ջուրց

տեանս յաւիտենից: Ահաւ": (7) Ոմանք. Ընդ ամպս
երկնից, և տեսցեն զնա ամ աչք, և որք խոցեցինն.
և կոծեսցին 'ի վր նր ամ ազգք երկրի, այո ամէն:
(7) Բոլոր. Զնա ամ աչք: (8) 'Ի լատ". Ես եմ ալփայ
և օմ. զոր ոմանք ասեն 'ի բնաբանէն, և ոմանք 'ի լատ". գնեն
այբ և քէ: (8) Ոսկան յասնեալն պատճէնս եդեալ ունի այս-
պէս. Ես եմ α, և ω, առաջին և վերջին, ասէ Տր:
(8) Ոմանք. Է՝ Տր ամենակալ: (9) Ոմանք. Հաղորդակից
վշտաց և արքայութե... ես 'ի կղզին որ կոչի պատմոս,
վս բանին Այ, և վկայութե: (10)(11) Ոմանք. Յաւուր
կիւրակէի, և լուայ զկնի իմ ձայն մեծ իբրև զփողոյ
ասելով. զոր տեսանեսդ: (11) Ոմանք. Տանել առ
եօթն եկեղեցիսն. յեփեսոս, և 'ի զմիւռ". և 'ի Թիւա-
տիր. և 'ի սարդիս, և 'ի: (11) Ոսկան յաւելու. Եկեղե-
ցիսն որք էն յասիա. յեփեսոս: (12) Ոմանք. Որ խօսէր
ընդ իս... 'ի դառնալն իմ տե": (13) Ոմանք. Նման
որդւոց մարդոց, զգեցեալ պճղնաւոր: (14) Ոմանք.
Եւ հեր ոճ զասր... իբրև զբոց հրոյ: (14) Յօրինակին.
Եւ ոճ զձեան: (15) Ոմանք. Նր նման պղնձի ծխելոյ:

16 Հրոյ բորբոքելոյ։ * Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում
աստեղս եւթն, և 'ի բերանոյ նորա ելանէր սուր երկ-
բերանեան. և երեսք նորա իբրև զարեգական ճառագայ-
17 թեամբ երևէին։ * Եւ իբրև տեսի զնա՝ անկայ առ
ոտս նորա իբրև զմեռեալ. և եդ 'ի վերայ իմ զաջն իւր՝
և ասէ ցիս. մի երկնչիր, ես եմ առաջինն, և ես եմ
18 յետինն. * և ես եմ կեանք՝ և ես նոյն որ մեռայ, և
եմ կենդանի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։ Եւ ունիմ զփականս մահու և դժոխոց։
19 * գրեա զոր տեսանես՝ որ են, և որ յապա՝ և որ հան-
20 դերձեալ է լինել այս. * Զխորհուրդ եւթն աստե-
ղացդ՝ զոր տեսերդ յաջու իմ, և զեւթն ճրագարանս
ոսկիս. եւթն աստեղքդ՝ հրեշտակք եւթն եկեղեցեացն
են, և ճրագարանքն եւթն՝ եւթն եկեղեցիքն են։

ԳԼ. Բ.

1 Առ հրեշտակն Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա. այս-
պէս ասէ կալողն՝ որ ունի զաստեղս եւթն յաջու
ձեռինն իւրում, և շրջի 'ի մէջ եւթն աշտանակին ոսկ-
2 ւոյ։ * Գիտեմ զգործս քո, և զվաստակս քո և զհամ-
բերութիւն քո. և զի ոչ բառնաս զչարս, և փորձեցեր՝
որ ասեն զինքեանս առաքեալս՝ և ոչ են, և հերքայե-
3 ցիր՝ և ստեն։ * Եւ համբերեցեր, և վաստակեցեր վասն
4 անուան իմոյ՝ և աշխատեցար։ * Այլ ունիմ առ քեզ,
5 զի զսէրն քո զառաջին թողեր. * յիշեա այժմ ուստի
անկ-

---

(16) Ոսկեփ. Եւ ունէր յաջ իւր աստեղս եւթն, և 'ի բերանոյ նորա սուր երկսայրի սրեալ ելանէր, և երեսք նորա... երևէր։ (17) Ոսկան. Նորա ոտս զմեռեալ... և ասէ. մի երկնչիր, ես եմ սկիզբն՝ և ես եմ վախճան։ (18) Ոսկան. Եւ ես եմ որ մեռայն, և ահաւասիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից, և ունիմ։ (19) Ոսկան. Զոր տեսանեսդ, որ էն և որ հանդերձեալ է լինել յետ այնորիկ։ (20) Ոսկան. Եւթն աստեղքն զոր տեսեր յաջոյ իմ, և զեւթն ոսկի ճրագարանացն, եւթն աստեղքն եւթն եկեղեցեացն հրեշտակք են, և եւթն աշտանակքն եւթն եկեղեցիքն են։

ԳԼ. Բ. (1) Ոսկան. Առ հրեշտակս... այսպէս ասէ որ ունի զեւթն աստեղս յաջ իւր.. եւթն աշտանակաց ոսկւոյ։ (2) Ոսկան. Տեսի զգործս քո, և զվաստակ և զհամբերութիւն, և զի ոչ կարես բառնալ զչարսն. և փորձեցեր զի ասեն զանձինս առաքեալս գոլ, և ոչ են. և գտեր զնոսա սուտս, և բարձեր զնոսա։ Որ օրինակ. Փորձեցեր զնոսա որք ասեն։ (3) Այս տեղս չիք. Եւ [illegible]։ (4) Ոսկան. Զսէր քո զառաջինն։

Digitized by Google

անկանիր՝ և ապաշխարեա, և զառաջին գործսն քո արա·
ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի, և շարժեցից զաշ-
տարակս քո 'ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարես-
ցես։ * Այլ զայս ունիս՝ զի ատեցեր զգործս նի- 6
կողայոսի, զոր ես ատեմ։ * Որ ունի ականջս լսե- 7
լոյ՝ լուիցէ զինչ ասէ հոգին Տր առ եկեղեցիս· որ
յաղթէն՝ տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց որ է 'ի
մէջ դրախտին այ։

Դ * Եւ առ հրեշտակն զմիւռնացւոց եկեղեցւոյն գրեա· 8
այսպէս ասէ անսկիզբն և անվախճանն, որ եղև մե-
ռեալ՝ և կենդանացաւ։ * Տեսի զգործս քո՝ և զնե- 9
ղութիւն և զաղքատութիւն, այլ աղքատութիւն քո՝ մեծու-
թիւն եղիցի· և զհայհոյութիւն՝ որ ասեն զինքեանս հր-
եայս գոլ, և չեն ինչ, այլ ժողով սատանայի։ * Մի 10
երկնչիր՝ ձո որոց կամիս չարչարել· ահա հանդերձեալ է
բանսարկուն արկանել 'ի ձէնջ 'ի բանտ, զի փորձիցիք,
և ունիջիք նեղութիւն աւուրս տասն· լեր հաւատարիմ
մինչև 'ի մահ, և տաց քեզ զպսակն կենաց։ * Որ ու- 11
նի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ հոգին Տր ասէ առ եկե-
ղեցիս· որ յաղթէ, ոչ անիրաւի յերկրորդ մահուանէն։

Ե * Եւ առ հրեշտակն՝ որ 'ի պերգամոնյ եկեղեցւոյն, գրեա· 12
այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սրեալ։ * Տե- 13
սի զգործս քո, և զի բնակեալ ես ուր աթոռն է սա-
տանայի· և ունիս զանուն իմ, և ոչ ուրացար զհա-
ւատս իմ յաւուրս յորում անթիպաս վկայն իմ հաւա-
տարիմ եղև· զի վկայ է իմ հաւատարիմ մի հաւատա-
ցեալ, որ սպանաւ 'ի ձէնջ որ կայք՝ ուր սատանայ է
բնակեալ։ * Այլ ունիմ առ քեզ սակաւ· զի կայ առ 14
քեզ վարդապետութիւն բաղաամու, որ ուսոյց զբա-
ղակ դնել գայթագղութիւն առաջի որդւոցն իսրայէլի,
ուտել նոցա զոհեալ՝ և պոռնկել։ * այսպէս և դու՝ 15
ունիս զվարդապետութիւն նիկողայեցւոց՝ զոր ես ա-
տեամ։

---

(5) Օրինակ մի ընդ ոսկանայ· Զաշտանակս քո 'ի տեղւոջէ։ Իսկ այլք ասենքն համաձայն մերումս ունին՝ զաշտարակս քո։ (6) Ոսկան· Զոր և ես ատեմ։ (7) Ոմանք· Հոգին առ եկե"· · յաղթէ, տաց։ (8) Օրինակ մի· Անսկիզբն և անկատարածն, որ ե"։ (9) Ոմանք· Եւ չեն ինչ, այլ ժո"։ Ոսկ ոսկան· Եւ ոչ են, այլ ժողովք սա"։ (10) Ոմանք· Ահա հանդերձեալ է բան"։ (10) Ոսկան· Եւ ունիցիք նեղութիւն։ (11) Ոմանք· Որ ունի ունկն լսելոյ·· հոգին ասէ։ (12) Ոսկան· 'Ի պերգամայ եկեղեցւոյն։ (13) Ոմանք· Եւ ուր բնակեալ ես, որ ա"։ (14) Ոմանք· Ունիմ ասել առ քեզ··· բաղաամայ որ ուսոյցն։ (15) Ոմանք· Զոր ես ատեմ։

Digitized by Google

16 տեսամ: * Արդ՝ ապաշխարեա՛, ապա թէ ոչ՝ գամ
վաղվաղակի, և պատերազմեցայց ընդ նոսա սրով բե-
17 րանոյ իմոյ: * Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ
Հոգին ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ՝ տաց նմա ու-
տե՛լ 'ի մանանայէն թաքուցելոյ, և տա՛ց նմա զդիրն
սրբուն. և գրեալ անուն նոր 'ի դիրն, զոր ո՛չ ոք գի-
տէ, բայց միայն որ առնուն:
18 * Եւ առ հրեշտակն որ 'ի Թիւատիրոյ եկեղեցին՝ գրեա՛. Ձ
այսպէս ասէ որդին այ, որոյ աչքն իբր են իբրև բո-
19 ցոյ հրոյ, և ոտք նորա նմա՛ն պղնձի ծխելոյ: * Գիտեմ
զգործս քո, և զսէր, և զհաւատս, և զպաշտօն քո. համ-
բերութի՟. զի բազում է վաստակ քո վերջինն քան զա-
20 ռաջինն: * այլ ասեմ առ քեզ բազում. զի թողեր զկ-
նիկն զյեզաբէլ. որ ասէր զինքն մարգարէ, և ուսու-
ցանէր մոլորութի՟՝ զծառայս իմ՝ պոռնկե՛լ և ուտե՛լ
21 զզոհեալ: * Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել ըս-
22 պոռնկութենէն իւրեանց՝ և ո՛չ ապաշխարեցին: * Ա-
հաւասիկ ես արկանեմ զնա 'ի հնոց, և զգործակիցս
իւր ընդ որս շնացան՝ 'ի նեղութիւն մեծամեծս. եթէ
23 ոչ ապաշխարեսցեն 'ի գործոց իւրեանց: * և զորդիս
նոցա սպանից մահուամբ. և ծանիցեն ամ եկեղեցիք՝
թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս.
24 և տա՛մ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց: * Այլ
ձեզ ասեմ որք 'ի Թիւատիր էք, և ո՛չ ունիք զվարդա-
պետութիւս զայս. որ ո՛չ ծանեայք զխորս սատանայի
25 զոր խօսին. ո՛չ արկից զձեւք ծանրութե՟: * այլ զոր
26 ունիք պահեսջիք մինչև ես գամ: * Եւ որ յաղթէ՝ և
պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխա-
27 նութի՟ 'ի վերայ ազգաց: * և հովուեսցէ զնո՟ գաւա-
զանաւ երկաթեաւ, և իբրև զանօթ բրտի փշրեսցէ
28 զնո՟: * որպէս և ես ընկալա՛յ 'ի հօրէ իմմէ, և տա՛ց
29 նոցա զաստղն առաւօտուն: * Որ ունի ականջս՝ լուի-
ցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիս:

ԳԼ. Գ.

1 Եւ առ հրեշտակ սարդիացւոց եկեղեցւոյն գրեա՛. Ե
այսպէս ասէ՝ որ ունի զեւթն հոգին այ՝ և զեւթն
աս-

(17) Ոմանք. Որ ունի ականջս՝ լուիցէ: (17) Յօրինակին.
Ասէ առ եկեղեցին: (21) Ոմանք. Ապաշխարելոյ զպոռն-
կութե՟: (24) Ոսկան. Զխորհուրդս սատանայի զոր: (24) Ո-
մանք. խօսին, սակայն ոչ արկից զձեւք այլ ծանրութե՟:
(26) Ոմանք. Եւ որ պահէ զգործս: (28) Ոսկան. Եւ տաց
նմ՟ զաստղն: (29) Ոսկան. Ականջս լսելոյ, լուիցէ:
Գլ. Գ. (1) Ոսկան. Եւ առ հրեշտակս սարդիկեցւոց

Digitized by Google

մնալոցս. Տեսի զգործս քո, զի անուն կենդանւոյ ու-
նիս՝ և մեռեալ ես։ * Լեր արթուն, և հաստատեա 2
զայլսն՝ զի հանդերձեալ են մեռանել. քանզի ոչ
գտի զգործս քո կատարեալ առաջի Այ։ * Արդ եւ 3
յիշեա թէ որպէս լուար, և պահեա, և ապաշխա-
րեա. ապա թէ ոչ զուարթնասցես՝ եկից որպէս գող.
և ոչ ոք իմանայ զգալուստ իմ առ քեզ։ * Ունիս սա- 4
կաւ մի զանուանս Սարդիկեցւոց, որք ոչ աղտեղեցուցին
զհանդերձս իւրեանց. և շրջին ընդ իս սպիտակօք՝ որպէս
արժանի եղեն։ * Որ յաղթէ՝ սպիտակս զգեցցի սպի- 5
տակս. և ոչ ջնջեցից զանուն նր ի գրոց կենաց.
և խոստովանեցայց զանուն նր առաջի Հօր իմոյ և ա-
ռաջի հրեշտակաց։ * Որ ունի ականջս լսել՝ լուի- 6
ցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։
Ը * Եւ առ հրեշտակն Փիլադելփեայ եկեղեցւոյն գրեա. 7
Այսպէս ասէ սուրբն, ճշմարիտն, որ ունի զփականս Դաւ-
թի. բանայ՝ և ոչ ոք է որ փակէ, և փակէ՝ և ոչ ոք
է որ բանայ։ * Տեսի զգործս քո. ահա ետու առա- 8
ջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի
սակաւ ինչ ունիս զօրութիւն, և պահեցեր զբանս իմ, և
ոչ ուրացար զանուն իմ։ * Ահաւասիկ ես տամ քեզ 9
ի ժողովոյն սատանայի, որք ասեն զինքեանս հրեայս գոլ՝
և ոչ են, այլ ստեն. արարից զնոսա՝ զի եկեսցեն և
երկիր պագցեն առաջի ոտից քոց, և ծանիցեն զի ես
սիրեցի զքեզ։ * Զի պահեցեր զբան համբերութեան ի- 10
մոյ, և ես պահեցից զքեզ ի ժամ փորձութեան քոյ. որ
հանդերձեալ է գալ յամ աշխարհս փորձել զամ բը-
նակեալս յերկրի։ * Ահա գամ վաղվաղակի, 11
կալ զոր ունիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ քո։ * Որ 12
յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Այ իմոյ, և ար-
տաքս այլ մի ևս ելցէ. և գրեցից ի վր նր զանուն Այ ի-
մոյ, և զանուն քաղաքի Այ իմոյ՝ Երուսաղեմի նորոյ, որ
իջանելոց է յերկնից յԱյ իմոյ. և զանուն իմ նոր։ * Որ 13
ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։
* Եւ

ե"։ (3) Ոմանք. Պահեա և ապաշխարեա։ (4) Ոմանք. Որ ունիս սակաւ մի։ (4) Ցօրինակին. Զանուն Սարդիկեցւոցն։ Այլ օրինակ. Սարդիկեցւոցն։ (5) Ոմանք. Խոստովանեցայց զնա"։ (5) Ոմանք. Հրեշտակաց նր։ (6) Ոմանք. Ականջս՝ լուիցէ։ (7) Ոմանք. Առ հրեշտակն Եղբայրասիրաց եկեղ"։ (7) Ոմանք. Սուրբն և Ճշմարիտն։ (7) Բազումք. Բանայ, և ոչ ոք է։ (8) Ոմանք. Զի սակաւ զօրութիւն գոյ, և պահեցեր զբան իմ։ Այլ օրին. Զի սակաւ է զօրութիւն քո։ (12) Ոմանք. Յերկնից յԱյ իմոյ, և անուն իմ նոր։

Digitized by Google

14 * Եւ առ հրեշտակն լաւոդիկեացւոց եկեղեցւոյն գրեա. Թ
այսպէս ասէ ամէնն՝ վկայն հաւատարիմ և ճշմարիտ,
15 սկիզբն սկզբան արարածոց Այ: * Գիտեմ զգործս քո՝
զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լի-
16 նել՝ և կամ ջերմ: * Այլ դու գաղջ ես՝ և ոչ ջերմ և
ոչ ցուրտ, հանդերձեալ ես փսխել 'ի բերանոյ իմմէ:
17 * Զի ասես. մեծատուն եմ՝ և մեծացայ, և ոչ ինչ
կարօտ եմ. և ոչ գիտես՝ եթէ դու ես ողորմելին և
18 չքաւոր, և աղքատ, մերկ և կոյր: * Արդ՝ ես խորհըր-
դակից եղէց քեզ, առ գնեա յինէն ոսկի փորձեալ 'ի
հրոյ՝ զի մեծասցիս, և հանդերձս սպիտակս՝ զի զգե-
ցցիս, զի մի երևեսցի անվայելչութիւն մերկութեան քոյ.
19 և դեղ զեղ յաչս քո՝ զի տեսցես: * Ես՝ զոր սիրեմ,
յանդիմանեմ և խրատեմ. նախանձեաւ այժմ, և ապաշ-
20 խարեա: * Ահաւասիկ կամ ես առ դրուրս և բախեմ.
եթէ ոք լուիցէ ձայնի իմում՝ և բանայցէ զդրունսն,
մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա, և նա ընդ
21 իս: * Որ յաղթէ՝ տաց նմա նստել ընդ իս յաթոռ
իմ, որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ հօր ի-
22 մոյ: * Որ ունիցի ականջս՝ լուիցէ զինչ ասէ հոգին
առ եկեղեցիս:

ԳԼ. Դ.

1 Եւ յետ այսր տեսի՝ և ահա դրուռնք երկնից բա- ժ
ցեալ էին, և ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝
խօսէր ընդ իս և ասէր. ել այսր՝ և ցուցից քեզ զինչ
2 լինելոց է յապայ ժամանակս: * Եւ ժամանեալ յիս
3 հոգի: և տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս: * և 'ի
վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան ականց, յասպ-
4 ւոյ և սարդիոնի: * և քահանայք շուրջ զաթոռովն՝
նմանք տեսլեան զմրուխտի. և շուրջ զաթոռովն՝ ա-
թոռք քսան և չորք, և 'ի վր աթոռոցն նստէին քսան
և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, և
'ի

(14) Ոսկան. Եւ առ հրեշտակս լաւ"... և ճշմարիտ, որ է սկիզբն արարածոց: (17) Ոմանք. Եւ ոչ ինչ կարօտեմ: (20) Ոսկան. Առ դուրս քո և բաղխ": (20) Ոմանք. Եւ բանայ զդրունս: (21) Ոսկան. Յաթոռս իմ: (21) Ոմանք. Ոպ ես յաղթեցի: (22) Ոմանք. Որ ունի ականջս լսելոյ լուիցէ, զինչ հոգին ասէ:

Գլ. Դ. (1) Ոմանք. Եւ յետ այսորիկ տեսի... փողոյն զոր լուայ զառաջինն խօ"... լինելոց է առ յապայն: (2) Ոմանք. Եւ վաղվաղակի եղէ ես հոգւով, և ահա աթոռ անդ յերկինս: (3) Ոմանք. Եւ յաթոռն նստեալ նմանութիւն տեսանէր ականց յասպ": (4) Ոմանք. Պսակս

Digitized by Google

՚ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս: * Եւ յաթոռոյ ան- 5
տի ելանէին փայլատակմունք և ձայնք և որոտմունք.
և եւթն լամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն,
որ են եւթն հոգիքն այ: * Եւ էր առաջի աթոռոյն 6
ծով ապակեղէն՝ նման ականակուռ սառին, և ՚ի մէջ
աթոռոյն չորք կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ և
յետոյ: * Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, 7
և երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ կեն-
դանին երեսս մարդոյ, և չորրորդ կենդանին նման
արծուոյ թռուցելոյ: * Եւ չորեց կենդանեացն էին 8
միոյ միոյ ՚ի նոցանէ վեց թևք շուրջանակի, և ՚ի ներ-
քոյ լի էին աչօք, ոչ հանգչէին՝ ոչ զտիւ և ոչ զգի-
շեր՝ ասելով. Սբ սբ սբ, սբ սբ սբ, սբ սբ սբ, տր ած
ամենակալ՝ որ էն և էր, և որ գալոց է: * Եւ յոր- 9
ժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութ
նստելոյն ՚ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս
յաւիտենից: * և գնէին զպսակս իւրեանց առաջի ա- 10
թոռոյն ասելով, * արժանի ես տր ած մեր սբ՝ առ- 11
նուլ փառս և պատիւ և զօրութ, զի դու ստեղծեր զամ.
և ՚ի կամս քո ստեղծան՝ և կան հաստատութ:

ԳԼ. Ե.

ԺԱ Եւ տեսի ՚ի ձեռս աջոյ՝ որ նստէր ՚ի վերայ աթո- 1
ռոյն գիրս՝ գրեալ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ
եւթն կնքով: * Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի 2
քարոզէր ՚ի ձայն մեծ. ո՞ է արժանի բանալ զգիրքս՝
և

ապակեղէնս: (6) Ոմանք. Եւ առաջի աթո"․․ ապակեղէն ՚ի նմանութի սառի"․․ և ՚ի մէջ աթոռոյն և շուրջ զաթոռովն չորք կենդանիք լի աչօք յետոյ և առաջոյ: (7) Ոմանք. Ունէր երես: (8) Ոմանք. Վեց թևք շուրջ լցեալ աչօք. և ոչ հանգչէին․․ յասելոյ, սբ: (8) Ոսկան ձայն ըստ լատինականին ունի երիցս սբ, ուր ամ գրչագիրք համաձայն ընթերցուածոյ օրինակաց յունաց դնեն իննիցս սբ: (9) Ոմանք. Կենդանիքն զպատիւ և զգոհութ․․․ յաւիտենից, ամէն: (10) Ոսկան յաւելու. * Անկանէին քսան և չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն և երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից. և գնելով զպսակս իւրե". որ պակասի յամ գրչագիրս մեր: (10) Ոմանք. Եւ գնելով զպս"․․ աթոռոյն՝ ասէին: (11) Ոմանք. Արժան է քեզ տր ած․․ զփառս և զպատիւ․․ զի դու ստացար զամ, և ՚ի քո կամսն գ. ստեղ":

Գլ. Ե. (1) Ոմանք. Եւ տեսի յաջու ձեռինն որ նստէր յաթոռն զի ունէր գիրք գրեալ: (2) Ոմանք. Ձայնիւ մեծաւ և ասէր, ով է ար"․․ զկնիքս․․ զկնիքն գորա:

Digitized by Google

3 և լուծանել զկնիքս նր: * և ոչոք կարէր՝ ոչ ՚ի յերկինս
և ոչ յերկրի, և ոչ ՚ի ներքոյ երկրի՝ բանալ զգիրքն,
4 զի ոչ տեսին զնա: * Եւ ես լայի ուժգին՝ զի ոչոք գը-
5 տաւ արժանի բանալ զգիրքն և հայել ՚ի նա: * և մի
յերիցանցն ասէ ցիս. մի լար, ահաւասիկ յաղթեաց
առեւծն յազգէն յուդայ յարմատոյն դաւթի՝ բանալ
զգիրքն՝ և լուծանել զեւթն կնիքսն նորա:
6 * Եւ տեսի ՚ի մէջ աթոռոյն և ՚ի մէջ չորից կենդա- ԺԲ
նեացն, և ՚ի մէջ երիցանցն՝ գառն կայր զենեալ, որ
ունէր եւթն եղջեւրս, և աչս եւթն՝ որ են եւթն հո-
7 գիքն այ. որ են առաքեալ ընդ ամ երկիր: * և եկն
ընկալաւ յաջոյ ձեռանէ նր՝ որ նստէր ՚ի վերայ աթո-
8 ռոյն: * Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն և
քսան և չորք երիցունքն անկանէին առաջի գառինն.
և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուրվառ ոսկի լի
9 խնկով, որ է աղօթք սրբոցն: * և օրհնէին երգս նորս
և ասէին. արժանի ես առնուլ զգիրգ՝ և բանալ ըզ-
կնիքս դորա, զի զենար՝ և գնեցեր զմեզ այ արեամբդ
քով՝ յամ ազգաց և ՚ի լեզուաց և ՚ի ժողովրդոց հեթա-
10 նոսաց: * և արարեր զսոսա այ մերոյ թագաւորս և
11 քահանայս՝ թագաւորել ՚ի վերայ երկրի: * Եւ տե-
սի և լուայ զձայն հրեշտակաց բազմաց՝ որք կային
շուրջ զաթոռովն և զչորիւք կենդանեօքն և զքահա-
նայիւքն. և էր թիւն նց՝ բեւրք բեւրուց՝ և հազարք
12 հազարաց. * ասէին ձայնիւ մեծաւ. արժան է գառնդ
զենեալ առնուլ զմեծութի և զիմաստութի և զզօրութի և
13 զպատիւ և զփառս և զօրհնութի: * Եւ ամ արարածք՝
որ են յերկինս և երկրի, և ՚ի ծովու և որ ՚ի նս՝ լուայ
զի ասէին. որ նստի յաթոռն՝ և գառինն՝ օրհնեալ բարձ-
րացեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից:

* և

---

(3) Ոմանք. Ոչ յերկինս և ոչ յերկրի: (3) Ոսկան. Բա-
նալ զգիրն, և ոչ նայել ՚ի նա: (4) Ոմանք. Եւ ողբայի
բազում զի ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն և ըն-
թեռնուլ զնա, կամ տեսանել զնա: (5) Ոմանք. Եւ մի
ոմն յերիցանցն ասէ, մի ողբայք, ահաւ"... բանալ ըզ-
գիրքն և զեւթն: (6) Ոմանք. Եւ ՚ի մէջ աթոռոյն և
չորից կեն"... զենեալ, որոյ եւթն եղ"... այ առա-
քեալ է: (7) Ոսկան. Եւ եկն և կալաւ յաջոյ: (8) Ոս-
կան. Յորժամ էառ զգիրսն... որք են աղօթք սր":
(9) Ոմանք. Առնուլ զգիրսդ... և ՚ի ժողովրդոց հե-
թանոս": (10) Ոմանք. Քհնյս և թգրս թագաւոր": (12) Ո-
մանք. Եւ ասէին ձայնիւ մեծաւ, արժանի է: Ուր Ոս-
կան. Որք ասէին: (13) Ոսկան. Եւ որք ՚ի ծովու: (14) Ո-
մանք յաւելուն. Նորա, և երկեր պագանէին նմա:

Digitized by Google

* և չորք կենդանիքն ասէին, ամէն. և երիցունքն ան- 14
կանէին առաջի նորա և երկիր պագանէին :

ԳԼ. Զ.

ԺԳ Ի՛ւ տեսի զի եբաց զմին 'ի կնքոցն, և լուայ 'ի միոյ 1
'ի չորից կենդանեացն իբրև զձայն որոտման՝ զի
ասէր՝ թէ գամ: * և տեսի՝ և ահա ձի սպիտակ, և 2
որ հեծեալն էր 'ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա
պսակ, և ել յաղթօղն զի յաղթեսցէ :
ԺԴ * Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ 3
կենդանւոյն՝ զի ասէր, գամ: * և ել այլ ձի կարմիր. 4
և որ հեծեալն էր 'ի վերայ նր՝ տուաւ նմա առնուլ
զխաղաղութի յերկրէ, զի զմիմեանս զենցեն. և տուաւ
նմա սուր մի մեծ :
ԺԵ * Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յերրորդ 5
կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ գամ. և տեսի՝ և ահա ձի
սեաւ, և որ նստեալն էր 'ի վերայ նր՝ ունէր կշիռս 'ի
ձեռին իւրում: * և լուայ ձայն 'ի միջոյ չորից կենդա- 6
նեացն. կապիճ մի ցորեան դենարի միոջ, և երեք կա-
պիճ գարի դենարի միոջ. և ձէթ և գինի մի՛ վնասեսցես:
ԺԶ * Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն 'ի 7
չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ գամ: * և տե- 8
սի՝ և ահա ձի շլտուս (որ է պաւղլախ) : և որ նստէրն
'ի վր նր՝ ունէր զմահ, և դժոխք երթային զհետ նր.
և տուաւ նմա իշխանութի չորրորդ մասին աշխարհի ս-
պանանել սրով և սովով և մահուամբ՝ և գազանօք երկրի :
ԺԷ * Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի 'ի ներ- 9
քոյ սեղանոյն զհոգիս ամ մարդկան կնքեալ վս բա-
նին այ՝ և վս վկայութե նր զոր ունէին : * որք ասէին 10
ձայնիւ մեծաւ. մինչև յե՞րբ տր սբ և ճշմարիտ՝ ոչ դա-
տիս և խնդրես զվրէժ արեան մերոյ 'ի բնակչաց երկ-
րի : * Եւ տուաւ նց արկանելիս սպիտակս, և աս- 11
ցաւ նց զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչև լցցին
ծառ-

---

(14) Ոսկան յաւելու. Եւ փառս և շուք երիցունքն անկան".
երկիր պագանէին. կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից :
ԳԼ. Զ. (1) Օրինակ մի. Զի եբաց գառն զմինն Է կնքոցն :
(1) Ոմանք. Ասէր. գամ: (3) Ոսկան. Ասէր, գամ և տես :
(4) Ոմանք. Հեծեալն էր 'ի նմա ... սուր մեծ : (5) Ո-
մանք. Ասէր գամ: Ուր ոսկան. գամ և տես ... ունէր
կշիռս 'ի : (7) Ոսկան. Գամ և տես : (8) Ոմանք զանգա-
նէն դնէլ 'ի բնաբանի, այլ 'ի լուսանցս նշանակէն զբա-
ցատրութի շլտուսին, այլազգի բարբառովն՝ պաւղլախ, խօլ,
պօղլախ : (9) Ոմանք. Այլ մարդկան զենեալ վս : (10) Ո-
մանք. Որք ասէին 'ի ձայն մեծ : (11) Ոմանք. Փոքր մի

Digitized by Google

ծառայակիցք նոցա և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ
են կոտորել իբրև զնոսա ։
12 * Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղև շար- ԺԸ
ժումն մեծ, և արեգակն եղև սև իբրև զկապերտ
13 այծեայ, և լուսինն բոլորովին եղև արիւն ։ * և աս-
տեղք երկնից թօթափեցան 'ի յերկիր, որպէս տերև
14 թզենւոյ զի ուժգին շարժիցի 'ի հողմոյ ։ * և երկին
իբրև զմագաղաթեայ գիրս գալարեր ․ և ամ լերինք
15 և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան ։ * Եւ թագա-
ւորք երկրի և իշխանք՝ հազարապետք և մեծամեծք
և զօրաւորք՝ և ամ ծառայք, և ամ ազատք՝ թաքու-
16 ցին զինքեանս յայրս և 'ի ծերպս վիմաց ։ * և ասէին
լերանց՝ թէ անկերուք 'ի վերայ մեր, և ցբլուրս՝ թէ
17 ծածկեցէք զմեզ ։ * զի եկն օր մեծ բարկութե նորա ․
և ով կարէ կալ առաջի նորա ։

ԳԼ. Է.

1 Եւ յետ այսորիկ տեսի՝ չորս հրեշտակս զի կային 'ի ԺԹ
չորս անկիւնս երկրի ․ և ունէին զչորս հողմս երկ-
րի՝ զի մի շնչեսցէ հողմ 'ի վերայ երկրի, և մի 'ի ծո-
2 վու՝ և մի 'ի ծառս ։ * Եւ տեսի այլ հրեշտակ զի ել
յարևելից, և ունէր զկնիք այ կենդանւոյ, և աղա-
ղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց ա-
3 ռեալ էր իշխանութի ապականել զերկիր և զծով ։ * և
ասէր ․ մի վնասէք երկրի՝ մի ծովու՝ մի ծառոց, դա-
4 դարեցէք մինչև կնքեսցուք զծառայս այ իմոյ ։ * Եւ լուայ
զթիւ կնքելոցն՝ հարիւր քառասուն և չորք հազար՝
5 կնքեալք յազգէ որդւոցն Իէլի ։ * Յազգէն յուդայ՝ եր-
կոտասան հազար կնքեալ ։ Յազգէն ռուբինի՝ երկո-
տասան հազար կնքեալ ։ Յազգէն գադայ՝ երկոտասան
6 հազար կնքեալ ։ * Յազգէն ասերայ՝ երկոտասան հա-
զար կնքեալ ։ Յազգէն նեփթաղիմայ՝ երկոտասան
հազար կնքեալ ։ Յազգէն մանասէի՝ երկոտասան հա-
7 զար կնքեալ ։ * Յազգէն շմաւոնի՝ երկոտասան հազար
կըն-

Ծնկս ։ (12) Յօրինակին ․ Զկնիքն վեցերորդն ։ (12) Ոսկան ․ Եւ ահա շարժումն մեծ եղև ։ (12) Ոմանք ․ Զկապերտ այծեաց ։ (12) Բղմ ․ Իբրև արիւն ։ (13) Ոսկան ․ Ուժգին հնչեսցի 'ի հողմոյ ։ (14) Ոմանք ․ Եւ երկինք իբրև ։ (16) Ոսկան յաւելու ․ Զմեզ յերեսաց նստողին 'ի գհ աթոռոյն, և 'ի բարկութե գառինն ։ Զի եկն ։

ԳԼ. Է ․ (3) Ոսկան յաւելու ․ Իւ ասէ մի մնա'' ․․․ զծառայս այ իմոյ 'ի ճակատս նոցա ։ (3) Ոմանք ․ Եւ մի ծառոց ։ (4) Ոմանք ․ Կնքելոցն զի էին հարիւր և քառա'' ։ (4) Ոսկան ․ Կնքեալք յամ ազգէ որդ'' ։ (5)(6)(7)(8) Ոմանք ․ Կնքեալս ։

Digitized by Google

կնքեալ: Յազգէն Ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ:
Յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ:
* Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ: 8
Յազգէն յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ: Յազ-
գէն Բենիամենի՝ երկոտասան հազար կնքեալ:
Ի * Եւ յետ այսորիկ տեսի՝ եւ ահա ժողովուրդ բազում 9
որոց ոչ գոյր թիւ, յամ հեթանոսաց եւ յամ ազգաց
եւ յամ լեզուաց եւ յամ ժողովրդոց, որք կային առա-
ջի աթոռոյն եւ առաջի գառինն՝ արկեալ զգեցեալք
հանդերձս սպիտակս, եւ արմաւենիս 'ի ձեռս իւրեանց:
* աղաղակէին 'ի ձայն մեծ՝ եւ ասէին. փրկութիւն այ 10
մերոյ՝ որ նստի 'ի վերայ աթոռոյն, եւ գառինն: * Եւ 11
ամ հրեշտակք կային շուրջ զաթոռովն, եւ զերիցամբքն,
եւ զչորիւք կենդանեօքն, եւ անկանէին յերեսս առաջի
աթոռոյն՝ եւ երկիր պագանէին այ, * ասելով. ամէն. 12
օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհութիւն եւ պա-
տիւ եւ զօրութիւն եւ շնորհք ամն այ մերոյ՝ յաւիտեանս
յաւիտենից. ամէն: * Եւ ասէ ցիս մի յերիցանց ան- 13
տի. սոքա որ զգեցեալս են զհանդերձս սպիտակս՝ ովք
են, եւ կամ ուստի՞ գան: * Եւ ասացի ցնա. տէր՝ դու 14
գիտես: Եւ ասէ ցիս. սոքա՛ են որ գան 'ի վշտաց մե-
ծաց, եւ լուացին զարկանելիս իւրեանց՝ եւ սպիտա-
կացուցին արեամբ գառինն: * Վասն այնորիկ են ա- 15
ռաջի աթոռոյն այ՝ եւ պաշտեն զնա զտիւ եւ զգիշեր
'ի տաճարի նր. եւ որ նստի 'ի վերայ աթոռոյն՝ բնա-
կեսցէ 'ի նոսա: * ոչ քաղցիցեն, եւ ոչ ծարաւեսցեն, 16
եւ ոչք մերձեսցեն նց՝ ոչ արեգակն եւ ոչ տօթ: * Եւ գառնն 17
'ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ զնոսա, եւ առաջ-
նորդեսցէ նոցա 'ի կենաց աղբեւր ջրոյ կենդանեաց.
քանզի եհան ած զամ արտասուս յերեսաց նոցա:

ԳԼ. Ը.

ԻԱ Եւ յորժամ եբաց զկնիքն եւթներորդ՝ եղեւ լռու- 1
թիւն յերկինս՝ ոպ կէս ժամու: * Եւ տեսի հրեշ- 2
տակս եւթն, որ առաջի այ կային. եւ տուաւ նոցա
եւթն փողս: * Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սե- 3
ղանն, եւ ունէր խնկանոց ոսկի. եւ տուաւ նմա խունկ
բազում, զի մատուսցէ զաղօթս ամ սրբոց 'ի վերայ ոս-
կեղէն սեղանոյ առաջի աթոռոյն: * Եւ ել ծուխ խըն- 4
կոցն՝

(8) Յօրինակին պակասէր. Յազգէն յովսեփու երկոտասան հզր կնքեալ: (9) Օրինակ. Ոչ գոյր թիւս: (11) Ոսկան. կենդանեօքն, անկանէին: (13) Օրինակ. Որ զգեցեալ են: (16) Օրինակ. Եւ ոչ ծարաւեսցին: (17) Օրինակ. Արտասուս յաչաց նց: ԳԼ. Ը. (3) Օրինակ. Եկն եւ եկաց առ: (3) Ոսկան. Առ

Digitized by Google

կոցն՝ աղօթք սրբոց 'ի ձեռաց հրեշտակացն առաջի
5 այ։ * Եւ ելից հրեշտակն զխնկամանոցն 'ի հրոյ սեղանոյն,
և արկ զնա յերկիր․ և եղև որոտումն և ձայնք և փայ-
6 լատակումն և շարժումն մեծ։ * Եւ եւթն հրեշտակքն
որ ունէին եւթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ
'ի հարկանել։
7 * Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, և եղև կար- ԻԲ
կուտ և հուր, և արեան խառնեալ՝ և անկաւ յերկիր,
և զերրորդ մասն երկրի այրեաց, և զերրորդ մասն ծա-
ռոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց։
8 * Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն ԻԳ
մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի ծով, և եղև երրորդ մասն
9 ծովու արիւն․ * և սատակեցաւ երրորդ մասն լաւ-
ղակաց, և որ ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ։
10 * Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից ԻԴ
աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զլամբար, և անկաւ
11 յերրորդ մասն գետոց և աղբերաց․ * և էր անուն աս-
տեղն դառնութն․ և բազում մեռան 'ի դառնութէ ջուրցն։
12 * Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և մթաւորէր եր- ԻԵ
րորդ մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և
երրորդ մասն աստեղաց․ և խաւարէր երրորդ մասն
13 նոցա, և երրորդ մասն գիշերւոյ նոյնպէս։ * Եւ տե-
սի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ 'ի մէջ երկ-
նից՝ զի ասէր 'ի ձայն մեծ, վայ վայ վայ՝ որ բնակեալ
են յերկրի․ յորժամ լինիցի ձայն երեցն եւս փողոց, զոր
կամիցին հրեշտակքն հարկանել։

ԳԼ․ Թ․

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողէր․ և տեսի զի աստղ ԻԶ
մի անկաւ յերկնից, և տուաւ նմա բանալի գբոյն
2 անդնդոց․ * և ելանէր ծուխ 'ի գբոյն որպէս զծուխ հը-
3 նոցի մեծի․ և խաւարեցաւ արեգակն և օդք։ * Եւ
'ի գբոյն ելանէին մարախք 'ի յերկիր․ և տուաւ նոցա
իշխա-

ջի աթոռոյն այ։ (6) Յօրինակին․ Ունէին եւթփողս։ (7) Ոսկան․ Եւ ամ դալարի խոտ այրեցաւ։ Այս հատուած բանի գտանի առ ոմանս։ (9) Ոմանք․ Երրդ մասն ղաւղակոնաց։ (9) Ոսկան յաւելու․ Ապականեցաւ, և երրդ մասն նաւաց ընկղմեցաւ։ (12) Ոմանք․ Եւ չորրդ հրեշտակն հարկանէր, և մթա"։ (12) Յօրինակին․ Եւ խաւարէր երրդ մասն նց։ (12) Ոսկան․ Մասն նց, և աւուր ոչ լուսաւորէր մասն երրդ և գիշերոյ նոյնպէս։ (13) Ոմանք․ Լիցի ձայն եւս՝ երեցն փո"։
Գլ․ Թ․ (1) Ոմանք․ Աստղ մի անկանէր յերկնից։ (3) Ոմանք․ Մարախ յերկիր․․․ խայթոց կարճի։

Digitized by Google

իշխանութիւն իբրեւ զխայթոցս կարճի. * Եւ ասացաւ նց 4
զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի, եւ մի՛ ամ ծառոց, բայց
միայն մարդկա՛յ երկրայնոց, որ ոչ ունիցին զկնիք 'ի վր
ճակատու իւրեանց: * Եւ տուաւ նց հրաման՝ զի մի՛ 5
սպանանիցեն զնս, այլ չարչարեսցեն զնս ամիս հինգ.
եւ չարչարանք նոցա իբրեւ զխայթոցս կարճի՝ որ հար-
կանիցէ զմարդ: * Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն 6
մարդիկ զմահ՝ եւ մի՛ գտցեն. եւ ցանկան մեռանել՝ եւ
փախիցէ 'ի նոցանէ մահ: * Եւ նմանութիւն մարախոյն՝ 7
նմանութիւն ձիոյ պատրաստելոյ 'ի պատերազմ. եւ 'ի վր
գլխոց նոցա իբրեւ զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. եւ երեսք
նց իբրեւ զերեսս մարդոյ. * Եւ հերք նոցա իբրեւ ըզ- 8
հերս կնոջ. եւ ատամունք նց իբրեւ զառիւծու: * Եւ 9
ունէին զրահս՝ իբրեւ զզրահս երկաթի. եւ ձայն թեւոց
նց իբրեւ զձայն կառամարտ ձիոց բազմաց՝ որ արշաւեն
'ի պատերազմ: * Եւ ունէին ագիս ըստ նմանութեան կար- 10
ճի. եւ խայթոց յագիս նոցա. եւ ունէին իշխանութիւն
չարչարել զմարդիկ ամիս հինգ: * Եւ ունէին թագա- 11
ւոր 'ի վերայ իւրեանց զհրեշտակն դժոխոց. եւ անուն
նորա եբրայեցերէն աբադդոն, որ կոչի 'ի հոյն բար-
բառ՝ կորուստ: * Ահաւասիկ վայ մի էանց, եւ վայքս 12
երկուք գալոց են:

ԻԵ * Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. եւ լուայ 13
ձայն՝ 'ի չորից կենդանեացն որ էին առաջի սեղանոյն
ոյ. * զի ասէր ցհրեշտակն վեցերորդ որ ունէր ըզ- 14
փողն. լո՛յծ զչորս հրեշտակսն զկապեալս 'ի վերայ գե-
տո՛յն եփրատայ: * Եւ լուծան չորս հրեշտակքն պատ- 15
րաստեալք 'ի ժամ եւ յօր եւ յամիս եւ 'ի տարի, զի սպան-
ցեն զերրորդ մասն մարդկան: * Եւ համարք հեծելոց 16
զօրացն նց՝ բեւրք բիւրուց՝ եւ հազարք հազարաց լուայ
զթիւ նց: * Եւ տեսի ձիս 'ի տեսլեանն, եւ հեծեալս 17
'ի նս՝ որք ունէին զրահս հրեղէնս, եւ յակնթս հրդե-
հեալս ծծմբով. եւ գլուխք ձիոցն իբրեւ զգլուխս ա-
ռիւծուց. եւ 'ի բերանոյ նոցա հուր ելանէր՝ եւ ծուխ

եւ

(4) Օրին. Մարդկան երկրայնոց.. Ճակատուց իւրեա": (6) Ոսկան. Եւ ոչ գտցեն. եւ ցանկասցեն մեռանել: (7) Ոսկան. 'Ի նմանութիւն ձիոյ.. իբրեւ զպսակս: (8) Օրին. Իբրեւ զառիւծուց: (9) Օրին. Իբրեւ զրահս երկաթիս: (9) Ոսկան. Կառամարտաց ձիոց: (10) Օրին. Եւ ունէին ագիս: (10) Ոսկան. Նմանութեան կարճաց: (11) Ոսկան. Եւ ունէին զթագաւոր 'ի վր: (11) Օրին. Աբադդոնէ, որ կո": (12) Օրին. Երկու գալոց են: (13) Օրին. Որ են առաջի սե": (14) Ոսկան. Գետոյն մեծի եփրա": (15) Օրին. Լուծան չորք հրեշ":

Digitized by Google

18 Եւ ծծումբ ։ * Եւ 'ի հարուածոցս յայսցանէ մեռան եր-
րորդ մասն մարդկան՝ 'ի հրոյն եւ 'ի ծխոյն եւ 'ի ծծըմ-
19 բոյն, որ ելանէր 'ի բերանոյ նց. * զի իշխանութիւն 'ի
բերանս է նց եւ յագիս նց, եւ ագիք նց նմանութիւն օձի.
20 եւ ունէին գլուխս՝ որով սատակէին զանհրաւս ։ * Եւ
այլք 'ի մարդկանէ որ ոչ մեռան 'ի հարուածոցս յայս-
ցանէ, ոչ ապաշխարեցին եւ ոչ դարձան 'ի գործոց ձե-
ռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց եւ կռոց՝ յոս-
կեղինաց եւ յարծաթեղինաց՝ եւ 'ի պղնձոյ եւ 'ի քարէ
եւ 'ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ եւ ոչ լսել եւ ոչ
21 գնալ. * եւ ոչ ապաշխարեցին 'ի մարդասպանութենէ՝
եւ 'ի դեղատուութենէ, եւ 'ի պոռնկութենէ, եւ 'ի գողու-
թենէ իւրեանց ։

ԳԼ. Ժ.

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկ- ԻԲ
նից՝ եւ զգեցեալ էր ամպ, եւ ծիածան 'ի գլուխն նր.
եւ երեսք նր իբրեւ զարեգական, եւ ոտք նր որպէս սիւն
2 հրոյ ։ * Եւ ունէր 'ի ձեռին իւրում գրգոյկ մի բա-
ցեալ. եւ եդ զոտն իւր զաջ 'ի վերայ ծովու, եւ զձախն
3 'ի վերայ երկրի ։ * եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ գո-
չեաց իբրեւ զառեւծ. եւ յորժամ աղաղակեաց՝ խօսե-
4 ցան եւթն որոտմունքն յիւրեանց ձայնս ։ * Եւ յորժամ
խօսեցան եւթն որոտմունքն՝ կամէի գրել. եւ լուայ
ձայն յերկնից՝ զի ասէր, կնքեա զոր խօսեցան եւթն
5 որոտմունքն՝ եւ մի գրեր ։ * Եւ հրեշտակն զոր տեսի՝
որ եդ զոտն իւր 'ի վերայ ծովու եւ ցամա-
6 քի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս. * եւ երդուաւ
'ի կենդանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս՝
եւ որ 'ի նմա, եւ զերկիր եւ որ 'ի նմա. զի ոչ եւս կայ
7 այլ ժամանակ. * այլ յաւուրս ձայնի եւթներորդ
հրեշտակին՝ յորժամ հարցէ զփողն, կատարեսցի խոր-
հուրդն այ՝ որ աւետարանեցաւ 'ի ծառայից իւրոց
մարգարէից ։

* Եւ

(19) Ոսկան. 'Ի բերանս նց է ։ (20) Ցօրինակին գրեր. Եւ
այլք 'ի մարդկանէ որ ։ (20) Ոսկան. Եւ ոչ ապաշխա"... եւ
'ի պղնձոյ եւ 'ի քա" ։ (21) Ոմանք. Եւ 'ի դեղատուութենէ ։
Գլ. Ժ. (1) Ոմանք. Իբրեւ զախեն հրոյ ։ (2) Ոսկան. Գր-
կոյկ մի ։ (3) Ոմանք. Եւ գոչեաց իբրեւ... յիւրեանց
ձայնսն ։ (5) Ոսկան. Եւ զհրեշտակն զոր տե" ։ (5) Ո-
մանք. Եւ զմիւսն 'ի վր ցամաքի ։ (6) Ոմանք. Զերկինս,
եւ զորս 'ի նմա, եւ զերկիր եւ զոր 'ի նմ ։ Որ ոսկան. Եւ
զերկիր եւ զորս 'ի նմ է ։ (7) Ոմանք. Եւթներորդի հրեշ-
տակին յորժամ հարկանէ զփողն ։ (7) Ոսկան. Որ աւե-

Digitized by Google

ԻԹ * Եւ ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսեցաւ 8
ընդ իս՝ և ասէ. Երթ առ զգրկոյն՝ զոր ունի հրեշ-
տակն բացեալ 'ի ձեռին իւրում, և կայ 'ի վր ծովու
և ցամաքի: * Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ խնդ- 9
րեցի 'ի նմանէ. և ասէ ցիս, առ զսա՝ և կե՛ր զդոյն,
և դառնացուսցէ յորովայն քո. այլ 'ի բերան քո է քա՛ղցր
իբրև զմեղր: * Եւ առի զգրկոյն բացեալ 'ի հրեշ- 10
տակէն՝ և կլա՛յ զնա. և էր 'ի բերան իմ ոպ մեղր. և
յորժամ կերայ, դառնացաւ յորովայն իմ: * Եւ ասէ 11
ցիս. Հասանէ՛ քեզ դարձեալ մարգարէանալ 'ի ժողո-
վուրդս՝ և 'ի լեզուս և 'ի թագաւորս երկրի:

ԳԼ. ԺԱ.

Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր 1
հրեշտակն՝ և ասէր ցիս. արի՛ և չափեա՛ զտաճարն
այ և զսեղանն՝ և զերկրպագուսն որ 'ի նմա: * Եւ 2
զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թո՛ղ զնա՝ և մի՛ չա-
փեր. զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սբ
կոխեսցեն ամիսս քառասուն և երկուս:
Լ * Եւ տա՛ց երկուց վկայից իմոց՝ և մարգարէասցեն ա- 3
ւուրս հազար երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձ:
* Սոքա են երկու ձիթենիքն՝ և երկո՛ւ ճրագքն, որ 4
կան առաջի այ յերկրի: * Եւ որք կամիցին վնասել 5
նց, հո՛ւր ելցէ 'ի բերանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս
նց. և որք կամիցին մեղանչել նց՝ այսպէս սատակես-
ցին: * Սոքա ունին իշխանութիւն փակե՛լ զերկինս՝ զի 6
մի՛ անձրևեսցէ զաւուրս մարգարէութեան նոցա. և ունին
իշխանութիւն 'ի վերայ ջուրց՝ դարձուցանե՛լ զնս յարիւն,
և հարկանել զերկիր յամ հարուածս՝ քանիցս անգամ
և կամիցին: * Եւ յորժամ կատարեսցեն զժամ աւուրս 7
վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յան-
դնդոց՝ տացէ ընդ նս պատերազմ, և յաղթեսցէ նց
և սպանցէ զնս: * և դի նոցա անկեալ կայցէ 'ի մէջ 8
հրապարակաց քաղաքին նց մեծի, որ անուանեալ կո-
չի

տարանեաց 'ի ձեռն ծո՜յից իւրոց մար'': (8) Ոմանք. Եւ ձայն զոր լու''... զգրկոյկան զոր: (9) Ոսկան. 'Ի բերան քո եղիցի քաղցր: (10) Ոմանք. Եւ կլի զնա... որովայն իմ: (11) Ոմանք յաւելուն. 'Ի ժողովուրդս, և 'ի հեթանոսս և 'ի լեզուս:

Գլ. ԺԱ. (2) Ոսկան. Որ է արտաքոյ տա''... տուեալ է նա հեթա'': (2) Ոմանք. Քառասուն և երկու: (4) Ոմանք. Այ 'ի յերկրի: (5) Ոմանք. Կամեսցին վնասել... 'ի բերանոց նց: (6) Ոմանք. Մի՛ անձրևեսցի աւուրս: (8) Ոսկան. Եւ դիք նց անկեալք կայցեն 'ի մէջ: (8) Ո-

Digitized by Google

չի ըստ հոգւոյն սոդոմ և եգիպտոս․ ուր և Տէրն նոցա
9 խաչեցաւ։ * Եւ տեսցեն զնոսա ամ՛ ցեղք և ժողովուրդք՝
և ամենայն լեզուք և հեթանոսք․ զի դի նց անկեալ
կայցէ զերիս աւուրս, և ոչ տայցեն թաղել ՝ի գերեզ-
10 մանս զոսկերս նց։ * Եւ որ բնակեալ են յերկրի՝ ու-
րախ լինին և խնդան ՝ի վերայ նոցա, մինչև ընծայս և
պատարագս տանել միմեանց․ վասն զի սոքա երկոքին
մարգարէքս չարչարեցեն զբնակիչս երկրի։
11 * Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի յԱյ ԼԱ
մտցէ ՝ի նոսա․ և յարիցեն կացցեն ՝ի վերայ ոտից իւր-
եանց․ և ահ և երկեւղ մեծ անկաւ ՝ի վերայ ամենե-
12 ցուն՝ որ տեսանէինն զնս։ * Եւ լուայ զձայն մեծ՝ որ
ասէր ցնոսա․ վերացիք ելէք աստ․ և վերացան ելին
յերկինս ամպովք․ և տեսին զնս թշնամիք իւրեանց։
13 * և ՝ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղև, և տասնե-
րորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, և մեռան ՝ի շարժմա-
նէն արք եւթն հազար․ և յետ այնորիկ ահ մեծ եղև յա-
14 մենեսեան, և փառս տային Այ երկնաւորի։ * Ահաւա-
սիկ վայն երկրորդ էանց, և վայն երրորդ գալոց է
վաղվաղակի։
15 * Եւ յորժամ եւթներորդ հրեշտակն հարկանէր զ- ԼԲ
փողն, եղև ձայն յերկինս՝ և ասէ․ եղև թագաւորու-
թի ամ՛ աշխարհաց Տն մերոյ՝ և յՔի Քսի իւրոյ․ և թա-
16 գաւորեսցէ ՝ի յաւիտեանս յաւիտենից։ * Եւ
քսան և չորս երիցունքն որ նստէին յաթոռս իւրեանց
առաջի Այ, անկանէին ՝ի վերայ երեսաց իւրեանց՝ և
17 երկիր պագանէին Տն Այ, և ասէին․ * գոհանամք զք-
քէն Տր Այ ամենակալ՝ որ էն և ես, և առեր զզօ-
18 րութի քո մեծ, և թագաւորեցեր։ * և հեթանոսք բար-
կացան, և եկն բարկութի քո, և ժամանակ մեռելոց՝
զի դատեսցին․ և տալ վարձս ծառայից քոց մարգա-
րէից, և սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փոքունց
և մեծամեծաց, և ապականել զապականիչս երկրի։
19 * Եւ բացաւ տաճարն Այ որ յերկինս, և երևեցաւ ԼԳ
տապանակն Այ ՝ի տաճարն իւր․ և եղեն փայլատակ-
մունք

մանս․ Քղ՛քի նց։ (9) Բնն․ Եւ տեսցեն զնս ամ՛։ (9) Ոս-
կան․ Զի դիք նց անկեալք կայցեն զերիս աւուրս և
կէս, և ոչ տայցեն թա՛։ (10) Բնն․ Պատարագս տան առ-
նել։ (11) Ոմանք․ Ամեցուն որ տեսանէինն զնս։ (12) Ոմանք․
Եւ ելին յերկինս ամպովք․․ թշնամիք նց։ (15) Յո-
մանս ոմն․ Եւ յՔի Քսի իւ՛։ (15) Ոսկան յաւելու․ Յա-
ւիտենից․ ամէն։ (17) Ոսկան յաւելու․ Եւ ես, և որ գա-
լոց ես, և առեր։ (19) Ոսկան․ Տապանակն Այ որ ՝ի
տաճարի նր, և եղեն․․․ և որոտմունք։

Digitized by Google

մունք եւ ձայնք եւ որոտմունք եւ շարժումն, եւ կար-
կուտ մեծամեծ։

ԳԼ. ԺԲ.

Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ 1
զիւրեւ զարեգակն, եւ լուսին 'ի ներքոյ ոտից նր̃.
եւ 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղաց երկոտասա-
նից։ * Եւ էր յղի. եւ ճչէր յերկունսն, եւ բազում վշտօք 2
մերձ էր 'ի ծնանել։ * Եւ երեւեցաւ այլ նշան յեր- 3
կինս՝ եւ ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին
գլուխք եւթն՝ եւ եղջերք տասն. եւ 'ի վերայ գլխոյ
նր̃ եւթն խոյրք։ * Եւ տուտն նորա քարշէր զերրորդ 4
մասն աստեղաց երկնից, եւ արկ զնա յերկիր. եւ վի-
շապն կայր առաջի կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել,
զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն։
* Եւ ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հովուել 5
զամ̃ հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ. եւ յափշտա-
կեցաւ որդի նորա առ ա̃ծ, եւ առ աթոռ նորա։ * Եւ 6
կինն փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմա պատ-
րաստեալ յայ̃, զի կերակրեսցեն անդ աւուրս հազար
երկերիւր եւ վաթսուն։
ԼԴ * Եւ եղեւ պատերազմ յերկինս, միքայէլ եւ հրեշտակք 7
իւր կռուէին ընդ վիշապին. եւ վիշապն պատերազմէր
զօրօք իւրովք։ * Եւ ոչ կարացին կալ ընդդէմ, եւ տե- 8
ղի ոչ գտաւ նոցա յերկինս։ * Եւ անկաւ վիշապն մեծ՝ 9
օձն առաջին, որ անուանեալ կոչի բեեղզեբուղ եւ սա-
տանայ, որ մոլորեցոյց զամ̃ աշխարհս երկրի. եւ հրեշ-
տակք նորա ընդ նմա անկան։ * Եւ լուայ ձայն մեծ 10
յերկնից՝ որ ասէր. արդ եղեւ զօրութիւն եւ փրկութիւն
եւ արքայութիւն այ̃ մերոյ, եւ իշխանութիւն օծելոյ նր̃. զի
անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր զդո-
նոցանէ առաջի այ̃ զտիւ եւ զգիշեր։ * Եւ նոքա յաղ- 11
թեցին նմա արեամբ գառինն, եւ բանիւ վկայութեան նր̃.
եւ ոչ հաճեցան ընդ վիշապն մինչեւ 'ի մահ։ * Վա̃ն այսո- 12
րիկ ուրախ լիցին երկինք՝ եւ ամ̃ որ բնակեալ են 'ի
նմա։ Վա՜յ երկրի եւ ծովու, զի անկաւ բանսարկուն

առ

Գլ. ԺԲ. (1) Ոսկան. Արկեալ զիւրեւ։ (1) Ոմանք. Պսակ յաստեղաց երկոտասանից։ (3) Ոմանք. 'Ի վե̃ գլխոց նր̃։ (5) Ոմանք. Ծնաւ կինն որդի արու։ (5) Ոսկան. Հանդերձեալ էր։ (5) Յօրինակին պ̃կաս. Եւ առ աթոռ նր̃։ (10) Ոմանք. Որ չարախօսէրն։ (10) Ոսկան. Այ̃ 'ի տուէ եւ 'ի գիշերի։ (11) Ոսկան. Ընդ վիշապին։ (12) Ոսկան. Ամենեքեան ոյք բնակեալ էք 'ի նմա։ (12) Ոմանք. Եւ կայցէ առ սակաւ մի ժամ։

Digitized by Google

առ ձեզ, որ ունի զցասումն բազում. և կայցէ առ
սակաւ մի ժամանակս:
13 * Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր, ըզ- ԼԵ
14 հետ եղև կնոջն որ ծնաւ զմանուկն արու: * Եւ տուաւ
կնոջն երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանա-
պատ 'ի տեղի իւր. ուր կերակրեր անդ՝ ժամանակ և
15 ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օձին: * և
եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղ-
16 մեսցէ զնա: * Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց եր-
կիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն
17 'ի բերանոյ իւրմէ: * Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն,
և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք պա-
հեին զպատուիրանս այ, և ունէին զվկայութիւն յի:
18 * Եւ կայր 'ի վերայ աւազոյ ծովու:

ԳԼ. ԺԳ.

1 Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր գը- ԼԶ
լուխս եւթն՝ և եղջերս տասն, և 'ի վերայ եղջե-
րաց նր տասն խոյր, և 'ի վերայ գլխոյ նր անուն հայ-
2 հոյութե: * Եւ գազանն զոր տեսի՝ նման ընծու, և
ոտք նր իբրև զարջոյ, և բերան նր որպէս զառիւծու.
և ետ նմա վիշապն զզօրութի իւր՝ և զաթոռ իւր և
3 զիշխանութի մեծ: * և մի 'ի գլխոց նր վիրաւորեալ
էր 'ի մահ. և վէր մահուան նր ողջանայր: Եւ զար-
մացաւ ամ երկիր ընդ գազանն, զի ետ նմա վիշապն
4 զթագաւորութի իւր: * և երկիր պագին վիշապին՝
որ ետ զիշխանութին գազանին, և ասէին. ով իցէ նման
գազանիս. կամ ով կարիցէ պատերազմել ընդ դմա:
5 * Եւ տուաւ նմա բերան խօսել զմեծամեծս, և ըզ-
հայհոյութի. և տուաւ նմա իշխանութի զամիսս քա-
6 ռասուն և երկու: * Եւ եբաց զբերան իւր հայհոյ-
ութս առ այ, և հայհոյեաց զանուն նր և զխորանն
7 նր, և զերկնայինն խորանն: * Եւ տուաւ նմ իշխանու-
թի 'ի վերայ ամ ազգաց և լեզուաց և ժողովրդոց:
8 * զի երկրպագեսցեն նմա ամ որ բնակեալ են ընդ
երեսս

(14) Ոսկան. Եւ տուեալ կնոջն: (14) Ոմանք. Որ կերակ-
րէր անդ: (17) Ոսկան յաւելու. Յի քի: (18) Օրինակ
մ. Եւ կացի 'ի վր աւազոյ ծովու. և տեսի:
Գլ. ԺԳ. (2) Ոմանք. Ընձու: (2) Ոսկան. Զիշխանութի
իւր մեծ: (3) Ոսկան. Մահու նր ող: (4) Ոմանք. Ընդ
դմա: Ուր ոսկան. գազանին... ը նմա: (6)(7) Ոսկան.
Եւ զխորան նր, և զայնոսիկ որք յերկինս բնակեն:
Եւ տուաւ նմա պատերազմիլ ը սրբս և յաղթել նց.
և տուաւ նմա իշխանութի: (8) Ոմանք. Զի երկրպագ-

Digitized by Google

կնքեալ։ Յազգէն Ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ։
Յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ։
* Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ։ 8
Յազգէն Յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազ-
գէն Բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ։
Ի * Եւ յետ այսորիկ տեսի՝ եւ ահա ժողովուրդ բազում 9
որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց եւ յազգաց
եւ յամենայն լեզուաց եւ յամենայն ժողովրդոց, որք կային առա-
ջի աթոռոյն եւ առաջի գառինն՝ արկեալ զիւրեամբք
հանդերձս սպիտակս, եւ արմաւենիս 'ի ձեռս իւրեանց։
* աղաղակէին 'ի ձայն մեծ՝ եւ ասէին. փրկութիւն այ 10
մերոյ՝ որ նստի 'ի վերայ աթոռոյն, եւ գառինն։ * Եւ 11
ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն, եւ զերիցամբքն,
եւ զչորիւք կենդանեօքն, եւ անկանէին յերեսս առաջի
աթոռոյն՝ եւ երկիր պագանէին այ, * ասելով. ամէն. 12
օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհութիւն եւ պա-
տիւ եւ զօրութիւն եւ շնորհք ամ այ մերոյ՝ յաւիտեանս
յաւիտենից. ամէն։ * Եւ ասէ ցիս մի յերիցանց ան- 13
տի. սոքա որ զգեցեալ են զհանդերձս սպիտակս՝ ո՞յք
են, եւ կամ ուստի՞ գան։ * Եւ ասացի ցնա. տէր՝ դու 14
գիտես։ Եւ ասէ ցիս. սոքա են որ գան 'ի վշտաց մե-
ծաց, եւ լուացին զպատմուճանս իւրեանց՝ եւ սպիտա-
կացուցին արեամբ գառինն։ * Վասն այնորիկ են ա- 15
ռաջի աթոռոյն այ՝ եւ պաշտեն զնա զտիւ եւ զգիշեր
'ի տաճարի նր. եւ որ նստի 'ի վերայ աթոռոյն՝ բնա-
կեսցէ 'ի նոսա։ * ոչ քաղցիցեն, եւ ոչ ծարաւեսցեն, 16
եւ ոչինչ մերձեսցի նց՝ ոչ արեգակն եւ ոչ տօթ։ * Եւ գառնն 17
'ի մէջ աթոռոյն հովուեսցէ զնոսա, եւ առաջ-
նորդեսցէ նոցա 'ի կենաց աղբեւր ջրոյ կենդանեաց.
քանզի եհան այ զամ արտասուր յերեսաց նոցա։

Գլ. Ը.

ԻԱ Եւ յորժամ եբաց զկնիքն եւթներորդ՝ եղեւ լռու- 1
թիւն յերկինս՝ որչափ կէս ժամու։ * Եւ տեսի հրեշ- 2
տակս եւթն, որ առաջի այ կային. եւ տուաւ նոցա
եւթն փողս։ * Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սե- 3
ղանն, եւ ունէր բուրվառ ոսկի. եւ տուաւ նմա խունկ
բազում, զի մատուսցէ զաղօթս ամ սրբոց 'ի վերայ ոս-
կեղէն սեղանոյ առաջի աթոռոյն։ * Եւ ել ծուխ խնկո- 4
ցն՝

---

(8) Յօրինակին գրեալ. Յազգէն յովսեփու երկոտասան հզր կնքեալ։
(9) Օրինակ. Ոչ գոյր թիւս։ (11) Ոսկան. կենդանեացն, անկանէին։ (13) Օրինակ. Որ զգեցեալ են։ (16) Օրինակ. Եւ ոչ ծարաւեսցին։ (17) Օրինակ. Արտասուս յաչաց նց։
Գլ. Ը. (3) Օրինակ. Եկն եւ եկաց առ։ (3) Ոսկան. Առա

Digitized by Google

կոցն՝ աղօթք սրբոցն 'ի ձեռաց հրեշտակացն առաջի
5 այ ։ * Եւ ելից հրեշտակն զխնկամանոցն 'ի հրոյ սեղանոյն ,
և արկ զնա յերկիր ․ և եղև որոտմունք և ձայնք և փայ-
6 լատակումն և շարժումն մեծ ։ * Եւ եւթն հրեշտակքն
որ ունէին եւթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ
'ի հարկանել ։

7 * Եւ առաջինն հրեշտակն եհար զփողն , և եղև կար- ԻԲ
կուտ և հուր , և արիւն խառնեալ՝ և անկաւ յերկիր ,
և զերրորդ մասն երկրի այրեաց , և զերրորդ մասն ծա-
ռոց այրեաց , և զամենայն գալար խոտոյ այրեաց ։
8 * Եւ երկրորդ հրեշտակն փողեաց , և իբրև զլեառն ԻԳ
մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի ծով , և եղև երրորդ մասն
9 ծովու արիւն ․ * Եւ սատակեցաւ երրորդ մասն լաւ-
ղակաց , և որ ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ ։
10 * Եւ երրորդ հրեշտակն փողեաց , և անկաւ յերկնից ԻԴ
աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զլամբար , և անկաւ
11 յերրորդ մասն գետոց և աղբերաց ․ * Եւ էր անուն աս-
տեղն դառնութիւն ․ և բազում մեռան 'ի դառնութէ ջուրցն ։
12 * Եւ չորրորդ հրեշտակն փողեաց , և վիրաւորէր եր- ԻԵ
րորդ մասն արեգականն՝ և երրորդ մասն լուսնի՝ և
երրորդ մասն աստեղաց ․ և խաւարէր երրորդ մասն
13 նոցա , և երրորդ մասն գիշերւոյ նոյնպէս ։ * Եւ տե-
սի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ 'ի մէջ երկ-
նից՝ զի ասէր 'ի ձայն մեծ , վայ վայ վայ՝ որ բնակեալ
են յերկրի ․ յորժամ լինիցի ձայն երիցն եւս փողոց , զոր
կամիցին հրեշտակքն հարկանել ։

ԳԼ․ Թ․

Եւ հինգերորդ հրեշտակն փողէր ․ և տեսի զի աստղ ԻԶ
մի անկաւ յերկնից , և տուաւ նմա բանալի գբոյն
անդնդոց ․ * Եւ ելանէր ծուխ 'ի գբոյն որպէս ծուխ հը-
նոցի մեծի ․ և խաւարեցաւ արեգակն և օդք ։ * Եւ
'ի գբոյն ելանէր մարախ 'ի յերկիր ․ և տուաւ նոցա
իշխա-

ջի աթոռոյն այ ։ (6) Յօրինակին ․ Ունէին եւթփողս ։
(7) Ոսկան ․ Եւ ամ գալարի խոտ այրեցաւ ։ Այս հա-
տուած բանի ոչ կայ 'ի հին օրինակս ։ (9) Ոմանք ․ Երրդ մասն ղաւ-
ղականաց ։ (9) Ոսկան յաւելու ․ Ապականեցաւ , և երրդ
մասն նաւաց ընկղմեցաւ ։ (12) Ոմանք ․ Եւ չորրդ հրեշտակն
հարկանէր , և վիրաւ" ։ (12) Յօրինակին ․ Եւ խաւարէր
երրդ մասն նց ։ (12) Ոսկան ․ Մասն նց , և աւուր ոչ
լուսաւորէր մասն երրդ և գիշերոյ նոյնպէս ։ (13) Ո-
մանք ․ Լիցի ձայն եւս երիցն փո" ։
Գլ․ Թ․ (1) Ոմանք ․ Աստղ մի անկանէր յերկնից ։ (3) Ո-
մանք ․ Մարախ յերկիր ․ ․ ․ խայթոց կարճի ։

Digitized by Google

իշխանութիւն իբրև զխայթոցս կարճի. * և ասացաւ նմա 4
զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի, և մի՛ ամ ծառոց. բայց
միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին զկնիք 'ի վ՟ր
ճակատու իւրեանց: * Եւ տուաւ նմա հրաման՝ զի մի՛ 5
սպանանիցեն զնս, այլ չարչարեսցեն զնս ամիսս հինգ.
և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կարճի՝ որ հար-
կանիցէ զմարդ: * և յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն 6
մարդիկ զմահ՝ և մի՛ գտցեն. և ցանկան մեռանել՝ և
փախիցէ 'ի նոցանէ մահ: * Եւ նմանութիւն մարախոյն՝ 7
նմանութիւն ձիոյ պատրաստելոյ 'ի պատերազմ. և 'ի վ՟ր
գլխոց նոցա իբրև զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք
նց իբրև զերեսս մարդոյ. * և հերք նոցա իբրև ըղ- 8
հերս կնոջ. և ատամունք նց իբրև զառիւծու: * Եւ 9
ունէին զրահս՝ իբրև զզրահս երկաթի. և ձայն թևոց
նց իբրև զձայն կառավար ձիոց բազմաց՝ որ արշաւեն
'ի պատերազմ: * և ունէին ագիս ընդ նմանութեան կար- 10
ճի. և խայթոցս յագիս նոցա. և ունէին իշխանութիւն
չարչարել զմարդիկ ամիսս հինգ: * և ունէին թագա- 11
ւոր 'ի վերայ իւրեանց զհրեշտակն դժոխոց. և անուն
նորա եբրայեցերէն աբադդոն, որ կոչի 'ի հոյն բար-
բառ՝ կորուստ: * Ահաւասիկ վայ մի անց, և վայք 12
երկուք գալոց են:

ԻԵ * Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. և լուայ 13
ձայն՝ 'ի չորից կենդանեաց որ էին առաջի սեղանոյն
այ. * զի ասէր ցհրեշտակն վեցերորդ որ ունէր ըղ- 14
փողն. լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս 'ի վերայ գե-
տոյն եփրատայ: * Եւ լուծան չորս հրեշտակքն պատ- 15
րաստեալք 'ի ժամ և յօր և յամիս և 'ի տարի, զի սպան-
ցեն զերրորդ մասն մարդկան: * և համարք հեծելոց 16
զօրացն՝ բեւրք բիւրուց՝ և հազարք հազարաց լուայ
զթիւ նց: * Եւ տեսի ձիս 'ի տեսլեանն, և հեծեալս 17
'ի նս՝ որք ունէին զրահս հրեղէնս, և յակնթենս հրդե-
հեալս ծծմբով. և գլուխք ձիոցն իբրև զգլուխս ա-
ռիւծուց. և 'ի բերանոյ նոցա հուր ելանէր՝ և ծուխ
և

(4) Ոմանք. Մարդկան երկրայնոց.. ճակատուց իւրե՟ց": (6) Ոսկան. Եւ ոչ գտցեն. և ցանկասցին մեռանել: (7) Ոսկան. 'Ի նմանութիւն ձիոյ.. իբրև զպսակս: (8) Ոմանք. Իբրև զառիւծուց: (9) Ոմանք. Իբրև զրահս երկաթիս: (9) Ոսկան. Կառավարաց ձիոց: (10) Ոմանք. Եւ ունէին ագիս: (10) Ոսկան. 'Նմանութիւն կարճեաց: (11) Ոսկան. Եւ ունէին զթագաւոր 'ի վ՟ր: (11) Ոմանք. Աբդարոնի, որ կո": (12) Ոմանք. Երկու գալոց են: (13) Ոմանք. Որ էին առաջի սե": (14) Ոսկան. Գետոյն մեծի եփրա": (15) Ոմանք. Լուծան չորք հրեշ":

Digitized by Google

18 և ծծումբ ։ * Եւ 'ի հարուածոցս յայսցանէ մեռաւ եր-
րորդ մասն մարդկան՝ 'ի հրոյն և 'ի ծխոյն և 'ի ծծըմ-
19 բոյն, որ ելանէր 'ի բերանոյ նց. * զի իշխանութիւն 'ի
բերանս է նց և յագիս նց, և ագիք նց նմանունին օձի.
20 և ունէին գլուխս՝ որով սատակէին զանիրաւս ։ * Եւ
այլք 'ի մարդկանէ որ ոչ մեռան 'ի հարուածոցս յայս-
ցանէ, ոչ ապաշխարեցին և ոչ դարձան 'ի գործոց ձե-
ռաց իւրեանց, յերկրպագութէ դիւաց և կռոց՝ յոս-
կեղինաց և յարծաթեղինաց՝ և 'ի պղնձոյ և 'ի քարէ
և 'ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ և ոչ լսել և ոչ
21 գնալ. * և ոչ ապաշխարեցին 'ի մարդասպանութէ՝
և 'ի դեղատուութէ, և 'ի պոռնկութէ, և 'ի գողու-
թէ իւրեանց ։

Գլ. Ժ.

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկ- ԻԲ
նից՝ և զգեցեալ էր ամպ, և ծիածան 'ի գլուխն իւր.
և երեսք նր իբրև զարեգակն, և ոտք նր որպէս սիւն
2 հրոյ ։ * Եւ ունէր 'ի ձեռին իւրում գրկոյք մի բա-
ցեալ. և եդ զոտն իւր զաջ 'ի վերայ ծովու, և զձախն
3 'ի վերայ երկրի ։ * և աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ գո-
չեւոյ իբրև զառեւծ. և յորժամ աղաղակեաց՝ խօսե-
4 ցան եւթն որոտմունք յիւրեանց ձայնս ։ * Եւ յորժամ
խօսեցան եւթն որոտմունքն՝ կամէի գրել. և լուայ
ձայն յերկնից՝ զի ասէր, կնքեա՛ զոր խօսեցան եւթն
5 որոտմունքն՝ և մի գրեր ։ * Եւ հրեշտակն զոր տեսի՝
որ եդ զոտն իւր 'ի վերայ ծովու և զմեւսն 'ի ցամա-
6 քի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս. * և երդուաւ
'ի կենդանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս՝
և որ 'ի նմա, և զերկիր և որ 'ի նմա. զի ոչ ևս կայ
7 այլ ժամանակ. * այլ յաւուրս ձայնի եւթներորդ
հրեշտակին՝ յորժամ հարցէ զփողն, կատարեսցի խոր-
հուրդն այ՝ որ աւետարանեցաւ 'ի ծառայից իւրոց
մարգարէից ։

* Եւ

---

(19) Ոմանք. 'Ի բերանս նց է ։ (20) Յօրինակին պակասէր. Եւ այլք 'ի մարդկանէ որ ։ (20) Ոմանք. Եւ ոչ ապաշխա"... և 'ի պղնձոց և 'ի քա" ։ (21) Ոմանք. Եւ 'ի դեղատուութէ ։ Գլ. Ժ. (1) Ոմանք. Իբրև զսիւն հրոյ ։ (2) Ոմանք. Գըր-կոյկ մի ։ (3) Ոմանք. Եւ գոչեաց իբրև... յիւրեանց ձայնսն ։ (5) Ոմանք. Եւ զհրեշտակն զոր տե" ։ (5) Ո-մանք. Եւ զմիւսն 'ի վր ցամաքի ։ (6) Ոմանք. Զերկինս, և զորս 'ի նմա, և զերկիր և զոր 'ի նմ ։ Ուր ոմանք. Եւ զերկիր և զորս 'ի նմ է ։ (7) Ոմանք. Եւթներորդի հրեշ-տակին յորժամ հարկանէ զփողն ։ (7) Ոմանք. Ոչ աւե-

Digitized by Google

ԻԹ * Եւ ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսեցա- 8
ւ ընդ իս՝ և ասէ. Երթ առ զգրքոյկն՝ զոր ունի հրեշ-
տակն բացեալ ՚ի ձեռին իւրում, և կայ ՚ի վ͞ր ծովու
և ցամաքի։ * Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ խնդ- 9
րեցի ՚ի նմանէ. և ասէ ցիս, առ զսա՝ և կեր զդայն.
և դառնացուսցէ յորովայն քո. այլ ՚ի բերան քո է քաղցր
իբրև զմեղր։ * Եւ առի զգրքոյկն բացեալ ՚ի հրեշ- 10
տակէն՝ և կլայ զնա. և էր ՚ի բերան իմ որպ͞ մեղր. և
յորժամ կերայ, դառնացաւ յորովայն իմ։ * Եւ ասէ 11
ցիս. Հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ ՚ի ժողո-
վուրդս՝ և ՚ի լեզուս և ՚ի թագաւորս երկրի։

Գլ. ԺԱ.

Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր 1
հրեշտակն՝ և ասէր ցիս. արի և չափեա զտաճարն
Այ և զսեղանն՝ և զերկրպագուսն որ ՚ի նմա։ * Եւ 2
զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա՝ և մի չա-
փեր. զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սբ
կոխեսցեն ամիս քառասուն և երկու։
Լ * Եւ տաց երկուց վկայից իմոց՝ և մարգարէասցեն ա- 3
ւուրս հազար երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձ։
* Սոքա են երկու ձիթենիքն՝ և երկու ճրագք, որ 4
կան առաջի Տն յերկրի։ * Եւ որք կամիցին վնասել 5
նց, հուր ելցէ ՚ի բերանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս
նց. և որք կամիցին մեղանչել նց՝ այսպէս սատակես-
ցին։ * Սոքա ունին իշխանութիւն փակել զերկինս՝ զի 6
մի տեղասցէ զաւուրս մարգարէութեան նոցա. և ունին
իշխանութիւն ՚ի վերայ ջուրց՝ դարձուցանել զնս յարիւն.
և հարկանել զերկիր յամ հարուածս՝ քանիցս անգամ
և կամիցին։ * Եւ յորժամ կատարեսցեն զամ աւուրս 7
վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յան-
դնդոց՝ տացէ ընդ նս պատերազմ, և յաղթեսցէ նց
և սպանցէ զնս։ * Եւ դի նոցա անկեալ կայցէ ՚ի մէջ 8
հրապարակաց քաղաքին նց մեծի, որ անուանեալ կո-
չի

տարանեալս ՚ի ձեռն ծովից իւրոց մար"։ (8) Ոմանք. Եւ ձայն զոր լու"... զգրքոյկն զոր։ (9) Ոմանք. ՚ի բերան քո եղիցի քաղցր։ (10) Ոմանք. Եւ կլի զնա... որովայն իմ։ (11) Ոմանք յաւելուն. ՚ի ժողովուրդս, և ՚ի հեթանոսս և ՚ի լեզուս։

Գլ. ԺԱ. (2) Ոմանք. Որ է արտաքոյ տա"... տուեալ է նա հեթա"։ (2) Ոմանք. քառասուն և երկու։ (4) Ոմանք. Այ ՚ի յերկրի։ (5) Ոմանք. Կամեսցին վնասել... ՚ի բերանոյ նց։ (6) Ոմանք. Մի տեղասցի աւուրս։ (8) Ոմանք. Եւ դիք նց անկեալք կայցեն ՚ի մէջ։ (8) Ո-

Digitized by Google

չի քաղաք հոգեւոյն սոդոմ եւ եգիպտոս • ուր եւ Տէրն նոցա
9 խաչեցաւ ։ * Եւ տեսցեն զնա ամ ցեղք եւ ժողովուրդք՝
եւ ամենայն լեզուք եւ հեթանոսք, զի դի նց անկեալ
կայցէ զերիս աւուրս, եւ ոչ տացեն թաղել 'ի գերեզ-
10 մանս զոսկերս նց ։ * Եւ որ բնակեալ են յերկրի՝ ու-
րախ լինիցին եւ խնդասցեն 'ի վերայ նոցա, մինչեւ ընծայս եւ
պատարագս տանել միմեանց • վասն զի սոքա երկոքեան
մարգարէքս չարչարեսցեն զբնակիչս երկրի ։
11 * Եւ յետ երից աւուրց եւ կիսոյ՝ հոգի կենդանի յԱյ ԼԱ
մտցէ 'ի նոսա • եւ յարիցեն կացցեն 'ի վերայ ոտից իւր-
եանց • եւ ահ եւ երկեւղ մեծ անկաւ 'ի վերայ ամենե-
12 ցուն՝ որ տեսանէին զնս ։ * Եւ լուայ զձայն մեծ՝ որ
ասէր ընդ նոսա • վերացիք ելէք աստ • եւ վերացան ելին
յերկինս ամպովք • եւ տեսին զնս թշնամիք իւրեանց ։
13 * Եւ 'ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղեւ. եւ տասնե-
րորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, եւ մեռան 'ի շարժմա-
նէն արք եւթն հազար • եւ յետ այնորիկ ահ մեծ եղեւ յա-
14 մենեսեան, եւ փառս տային Այ երկնաւորի ։ * Ահաւա-
սիկ վայն երկրորդ եանց, եւ վայն երրորդ գալոց է
վաղվաղակի ։
15 * Եւ յորժամ եւթներորդ հրեշտակն հարկանէր զփ- ԼԲ
փողն, եղեն ձայնք յերկինս՝ եւ ասէ • եղեւ թագաւորու-
թի ամ աշխարհաց Տն մերոյ՝ եւ յՔի քի իւրոյ • եւ թա-
16 գաւորեսցէ 'ի վր̄ ամի յաւիտեանս յաւիտենից ։ * Եւ
քսան եւ չորս երիցունքն որ նստէին յաթոռս իւրեանց
առաջի Այ, անկանէին 'ի վերայ երեսաց իւրեանց՝ եւ
17 երկիր պագանէին Այ, եւ ասէին • * Գոհանամք զք-
քէն Տր Այ ամենակալ՝ որ էին եւ ես, եւ առեր զզօ-
18 րութի քո մեծ, եւ թագաւորեցեր ։ * Եւ հեթանոսք բար-
կացան, եւ եկն բարկութի քո, եւ ժամանակ մեռելոց՝
զի դատեսցին • եւ տալ վարձս ծառայից քոց մարգա-
րէից, եւ սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փոքունց
եւ մեծամեծաց, եւ ապականել զապականիչս երկրի ։
19 * Եւ բացաւ տաճարն Այ որ յերկինս, եւ երեւեցաւ ԼԳ
տապանակն Այ 'ի տաճարն իւր • եւ եղեն փայլատակ-

մունք

Յանփ • Քղ. Քի նց ։ (9) Բզնդ • Եւ տեսցեն զնս ամ ։ (9) Ոս-
կան • Զի դիք նց անկեալք կայցեն զերիս աւուրս եւ
կէս, եւ ոչ տայցեն թաղ՛ ։ (10) Բզնդ • Պարգեւս տան տա-
նել ։ (11) Ոմանք • Այցուն որ տեսանէին զնս ։ (12) Ոմանք •
Եւ ելին յերկինս ամպովք • • Թշնամիք նց ։ (15) Յո-
մանս գինոյ • Եւ յՔի քի իւ՛՛ ։ (15) Ոսկան յաւելու • Յա-
ւիտենից • ամէն ։ (17) Ոսկան յաւելու • Եւ ես, եւ որ գա-
լոց ես, եւ առեր ։ (19) Ոսկան • Տապանակն Այ որ 'ի
տաճարի նր, եւ եղեն • • • եւ որոտմունք ։

Digitized by Google

մունք և ձայնք և որոտմունք և շարժումն, և կար-
կուտ մեծամեծ:

ԳԼ. ԺԲ.

Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս. կին մի արկեալ 1
զիւրև զարեգակն, և լուսին 'ի ներքոյ ոտից ն՟ր.
և 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղաց յերկոտասա-
նից: * և էր յղի. և ճչէր յերկնելն, և բազում վշտօք 2
մերձ էր 'ի ծնանել: * Եւ երևեցաւ այլ նշան յեր- 3
կինս՝ և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին
գլուխք եւթն՝ և եղջիւրք տասն. և 'ի վերայ գլխոյ
ն՟ր եւթն խոյրք: * և ագին նորա քարշէր զերրորդ 4
մասն աստեղաց երկնից, և արկ զն՟ս յերկիր. և վի-
շապն կայր առաջի կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել,
զի յորժամ ծնցի կինն զորդին իւր՝ կլցէ զնա վիշապն:
* Եւ ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հովուել 5
զամ հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ. և յափշտա-
կեցաւ որդին նորա առ ած, և առ աթոռ նորա: * և 6
կինն փախեաւ յանապատ՝ ուր էր անդ նմա պատ-
րաստեալ յԱյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար
երկերիւր և վաթսուն:
ԼԴ * Եւ եղև պատերազմ յերկինս, Միքայէլ և հրեշտակք 7
իւր կռուէին ընդ վիշապին. և վիշապն պատերազմէր
զօրօք իւրովք: * և ոչ կարացին կալ ընդդէմ, և տե- 8
ղի ոչ գտաւ նոցա յերկինս: * Եւ անկաւ վիշապն մեծ՝ 9
օձն առաջին, որ անուանեալ կոչի բանսարկու և սա-
տանայ, որ մոլորեցոյց զամ աշխարհս երկրի. և հրեշ-
տակք նորա ընդ նմա անկան: * Եւ լուայ ձայն մեծ 10
յերկնից՝ որ ասէր. արդ եղև զօրութիւն և փրկութիւն
և արքայութիւն այ մերոյ, և իշխանութիւն օծելոյ ն՟ր. զի
անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր ըզ-
նոցանէ առաջի այ՝ զտիւ և զգիշեր: * Եւ նոքա յաղ- 11
թեցին նմա արեամբ գառինն, և բանիւ վկայութե ն՟ր.
և ոչ հաւանեցան ընդ վիշապին մինչև 'ի մահ: * Վն այսո- 12
րիկ ուրախ լերուք երկինք՝ և որ բնակեալ էք 'ի
նմա: Վայ երկրի և ծովու, զի անկաւ բանսարկուն
առ

ԳԼ. ԺԲ. (1) Ոսկան. Արկեալ զիւրեաւ: (1) Ո.
Պսակ յաստեղաց երկոտասանից: (3) Ոմանք. 'ի
գլխոց ն՟ր: (5) Ոմանք. Ծնաւ կինն որդի արու: (5) Ոս-
կան. Հանդերձեալ էր: (5) Յօրինակին ջնջէր. Եւ առ
աթոռ ն՟ր: (10) Ոմանք. Որ չարախօսէրն: (10) Ոսկան.
Այ 'ի տուէ և 'ի գիշերի: (11) Ոսկան. Ընդ վիշապին:
(12) Ոսկան. Ամենայն որք բնակեալ էք 'ի նմա: (12) Ո-
մանք. Եւ կայցէ առ սակաւ մի ժամ:

Digitized by Google

առ ձեզ, որ ունի զցասումն բազում. և կայցէ առ
սակաւ մի ժամանակս:
13 * Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր, ըզ- Լե
14 հետ եղև կնոջն որ ծնաւ զմանուկն արու: * Եւ տուաւ
կնոջն երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանա-
պատ 'ի տեղի իւր. ուր կերակրէր անդ՝ ժամանակս
15 ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օձին: * Եւ
եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղ-
16 մեսցէ զնա: * Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց եր-
կիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն
17 'ի բերանոյ իւրմէ: * Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն,
և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա որք պա-
հէին զպատուիրանս այ, և ունէին զվկայութիւն յի:
18 * Եւ կաց 'ի վերայ աւազոյ ծովու:

ԳԼ. ԺԳ.

1 Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր զը- ԼԶ
լուխս եւթն՝ և եղջեւրս տասն, և 'ի վերայ եղջե-
րաց նր տասն խոյր, և 'ի վերայ գլխոյ նր անուն հայ-
2 հոյութն: * Եւ գազանն զոր տեսի՝ նման ընձու, և
ոտք նր իբրև զարջոյ, և բերան նր իբր զառիւծու.
և ետ նմա վիշապն զզօրութն իւր՝ և զաթոռ իւր և
3 զիշխանութն մեծ: * Եւ մի 'ի գլխոց նր վիրաւորեալ
էր 'ի մահ. և վէր մահուան նր ողջանայր: Եւ զար-
մացաւ ամ երկիր ընդ գազանն, զի ետ նմա վիշապն
4 զթագաւորութն իւր: * Եւ երկիր պագին վիշապին՝
որ ետ զիշխանութն գազանին, և ասէին. ով իցէ նման
գազանիս. կամ ով կարիցէ պատերազմել ընդ դմա:
5 * Եւ տուաւ նմա բերան խօսել զմեծամեծս, և ըզ-
հայհոյութն. և տուաւ նմա իշխանութն զամիսս քա-
6 ռասուն և երկու: * Եւ եբաց զբերան իւր հա...
ութք առ ած, և հայհոյեաց զանուն նր և...
7 նր, և զերկնայինն խորանն: * Եւ տու...
թն 'ի վերայ ամ ազգաց և յե...
8 * զի երկրպագեսցեն նմ...

(14) Որպէս. Եւ...
րէր անդ: (17)...
Դ. Եւ կացի 'ի...
ԳԼ. ԺԳ. (2)...
իւր մեծ: (3)...
գմա: Որք ասէին...
Եւ զխոսրան նր...
Եւ տուաւ նմա...
և տուաւ նմա...

... իբրև
... ձայն իւ-
... (3) Մեծ.
... յերկ": (3) Ո-
... իւր և երթայցէ:
... անուոյն այ: (6) Ո-
... զամ հե": (9) Ո-
... պատկերի նր...

երեսս երկրի. որոց ոչ են գրեալ անուանք նոցա 'ի
դպրութեն կենաց Գառինն զենլոյ իսկզբանէ աշխար-
հի: * Այլ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ: * Զի են 9
ոմանք՝ որք 'ի գերութեն վարեսցին, և են ոմանք՝ որ 10
սրով մեռցին, և են ոմանք՝ որ անձամբ զանձինս սպա-
նանեն. աստ է համբերութիւն և հաւատ սրբոց:

ԼԵ * Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, և ունէր 11
եղջեւրս երկու՝ նման գառինն, և խօսէր իբրև զվի-
շապն: * և զիշխանութիւն զամ զառաջնոյ գազանին գոր- 12
ծէր առաջի նորա: և առնէր զերկիր և զամ բնակիչս
նր՝ զի երկիր պագանիցեն գազանին առաջնոյ՝ մինչև
ողջացի վէր մահու նր: * և առնէր նշանս բազումս, 13
և տայր հրոյ իջանել յերկնից յերկիր՝ առաջի մարդ-
կան, * և մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկիր 14
նշանօքն, որ տուեալ են 'ի ձեռս նր՝ առնել առաջի
գազանին: ասեն ցնա բնակիչք երկրի. առնել զպատկեր
գազանին, որ 'ի վերայ սրոյն եկեաց: * Եւ տուաւ 15
նմա իշխանութիւն, զի տացէ հոգի պատկերի գազանին,
և զի խօսեսցի պատկերն. և երկիր պագցեն նմա ամ
բնակիչք երկրի. և որ ոչ պագցէ երկիր պատկերի գա-
զանին, սպանցէ զնա: * Եւ արասցէ զամ՝ փոքունս 16
և զմեծամեծս և զմեծատունս և զաղքատս և զազատս
և զծառայս, զի տացէ նց դրոշմ յաջու ձեռին՝ և 'ի
վերայ ճակատու նոցա: * և ոչ ոք կարասցէ գնել 17
և վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ գրոյն՝ և զանուն
գազանին և զթիւ անուան նորա:

ԼԸ * Աստ է իմաստութիւն. որ ունի միտս՝ համարեսցի 18
զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ, և թիւ ան-
ուան նր՝ է այս. վեց հարիւր վաթսուն և վեց:

ԳԼ

ցեն նմ աշխարհն որ ... 'ի դպրութեն կե'': (8) Ոսկան. Գառինն զենելոյ: (10) Ոսկան. 'Ի գերութեն վարես'': (10) Ոմանք. Զանձինս սպանանիցեն: (13) Յօրինակին. Եւ առնէ նշանս: (13) Ոմանք. Յերկնից 'ի յերկիր: (14) Ոսկան. Բնակեալ են յերկրի: (14) 'Ի լուս''. Որ 'ի վերայ սրոյն եկաց: համաձայն ոմանց 'ի բնաբ'': (15) Ոմանք. Եւ որ ոչն պագցէ: (15) Ոսկան. Սպանցեն զնա: (16) Ոսկան. Եւ զծառայս ունիլ զդրոշմ յաջոյ ձե'': (16) Ոմանք. Ճակատուց նց: (18) Ոմանք. Որ ունիցի միտս ... և թիւ նր է այս: (18) 'Ի բազում Գրչագիրս մեր բնաբս՝ վեց հարիւր վաթսուն և վեց, թուագրեալ Գրին այբուբէն՝ ՈԿԶ. զոր յարգեալ յառաջնում օրինակի մեր նաև նշանագիրս իսկ մասնաւոր այսպիսի ձևով. [illegible]. զոր ընդօրինակողն բացայայտ նոյն ձևագրութեամբ զնոյն դրոշմեալ՝ ՃԿԶ:

Digitized by Google

ԳԼ. ԺԴ.

1 Եւ տեսի՝ եւ ահա Գառն կայր 'ի վերայ լերինն Սիով- ԼԹ
նի. եւ ընդ նմա հարիւր քառասուն եւ չորս հազարք,
որ ունէին զանուն նորա, եւ անուն Հօր նորա գրեալ
2 'ի վերայ ճակատուց նոցա: Եւ լուայ ձայն յերկնից՝
իբր զձայն ջուրց բազմաց՝ եւ ձայն որոտման մեծի. եւ
լուայ իբրեւ զձայն քնարահարաց, զի հարկանէին ըզ-
3 քնարս իւրեանց: Եւ երգէին զերգս նորս առաջի ա-
թոռոյն՝ եւ առաջի չորից կենդանեացն՝ եւ առաջի ե-
րիցանցն. եւ ոչոք կարէր գիտել զերգս նց: բայց միայն
հարիւր քառասուն եւ չորս հազարքն, որք գնեալ
4 են յերկրէ: Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնա-
կեցան, եւ են կուսանք. սոքա զհետ երթան Գառինն
ուր եւ երթիցէ. սոքա գնեցան 'ի մարդկանէ առա-
5 ջին Այ եւ Գառինն: Եւ 'ի բերան նոցա ոչ գտաւ սուտ,
զի անբիծք են:
6 Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ երկնից. Խ
եւ ունէր աւետիս յաւիտենական՝ աւետարանել ամ
7 ազգաց, եւ լեզուաց որ բնակեալ են յերկրի: Եւ ա-
սէր 'ի ձայն մեծ. երկերուք յԱյ՝ եւ տուք փառս նմա,
զի եկն ժամ դատաստանի նորա. եւ երկիր պագէք ա-
րարչին երկնի եւ երկրի եւ ծովու եւ աղբերաց ջուրց:
8 Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նորա եւ ա- ԽԱ
սէր. անկաւ անկաւ Բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ արբե-
ցութեն՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնկութեն իւրմէ, որ արբե-
ցոյց զամենայն հեթանոսս:
9 Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նց՝ եւ 'ի ձայն ԽԲ
մեծ ասէր. ով ոք երկրպագեաց գազանին եւ պատկե-
րի նորա, եւ կամ զդրոշմ նշանի նորա առ 'ի ճակատ
10 իւր, եւ կամ 'ի վերայ աջոյ ձեռին իւրոյ, Եւ այնպի-
սին արբցէ 'ի բաժակէ ցասմանն Այ՝ արկելոյ յանա-
պակէ բարկութեն բաժակին. եւ տանջեսցի հրով եւ ծծըմ-
11 բով առաջի Այ եւ Գառինն: Եւ ծուխ նոցա ելցէ յա-
ւիտեանս յաւիտենից. եւ ոչ ունին հանգիստ՝ որք եր-
կիր պագին գազանին 'ի տուէ եւ 'ի գիշերի. եւ որք եր-
կիր

Գլ. ԺԴ. (1) Ոսկան. Եւ զանուն Հօր: (2) Ոմանք. Իբրեւ զձայն ջուրց.. զձայն զքնարս": (2) Ոսկան. Զձայն իբրեւ զքնարս". զի հարկանէին զքնարս: (3) Ոմանք. Զերգս նորս առաջի... զատեալք են յերկ": (3) Ոսկան. Աթոռոյն Այ եւ ա": (4) Ոմանք. Ուր եւ երթայցէ: (5) Ոսկան յաւելու. Անբիծք են առաջի աթոռոյն Այ: (6) Ոմանք. Յերկիր: (8) Ոսկան. Որ արբոյց զամ հե": (9) Ոմանք. Եւ ասէր 'ի ձայն մեծ... եւ կամ պատկերի նց...

Digitized by Google

կէր պատգէին պատկերին, և տային զդրոշմ և զանուն
նորա ։ * Եւ համբերութիւն սրբոցն աստ է ․ այս որք 12
պահէին զպատուիրանս այ ․ և զհաւատս յի ։ * Եւ 13
լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս ․ գրեա, երանի մե-
ռելոցն որք 'ի տր ննջեցին այժմիկ վաղվաղակի ․ զայս
ասէ հոգին, քանզի հանգեան յաշխատութէ իւրեանց ․
բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա ։
ԽԳ * Եւ տեսի՝ և ահա ամպ սպիտակ, և 'ի վերայ ամ- 14
պոյն նստէր նման որդւոյ մարդոյ, և 'ի գլխա իւր
պսակ ոսկի, և 'ի ձեռին իւրում ունէր գերանդի սրը-
եալ ։ * Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից ․, աղաղա- 15
կէր 'ի ձայն մեծ՝ և ասէր ․ որ նստիսդ 'ի վերայ ամ-
պոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՝ և հնձեա, զի եկն ժա-
մանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի ։
ԽԴ * Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի տաճարէն որ յերկինս, 17
և ունէր և սա գերանդի սրեալ ։ * Եւ այլ հրեշտակ 18
ելանէր 'ի սեղանոյն, որ ունէր իշխանութիւն 'ի վերայ
հրոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ
ունէր զգերանդին սրեալ՝ և ասէր ․ կթեա զողկոյզս
յայգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի դմա ։ * Եւ 19
արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, և կթէր զը-
խաղող նորա, և արկանէր 'ի հնծանն այ 'ի մեծ ։ * Եւ 20
կոխեցաւ հնծանն արտաքոյ քաղաքին, և ելանէր 'ի հըն-
ծանէն արիւն մինչև 'ի սանձս ձիոյն ․ և երկայնութիւն
նորա հազար և վեց հարիւր ասպարէս ։

Գլ․ ԺԵ․

ԽԵ Եւ տեսի այլ նշան մեծ և սքանչելի ․ հրեշտակս եօ- 1
թըն՝ որք ունէին եօթն վէրս զկնի ․ զի նոքօք կա-
տարէր բարկութիւն այ ։ * Եւ տեսի որպէս ծով ապակե- 2
ղէն

աջոյ ձեռինն իւրում ։ (13) Ոմանք․ Զի միայն գործք իւ"։
(14) Ոմանք․ Եւ 'ի գլուխ նր այս"։ (15) Օրինակ մի յաւե-
լու․ Հունձք երկրի ։ Եւ արկ որ նստէր 'ի վր ամպոյն՝ զգե-
րանդին իւր յերկիր, և հնձեր զամ բնակիչս երկրի ։ Զոր ասեմ
եւ ամեն այլոց․ հմր․ (16) Եւ առաքեաց որ նստէր 'ի վր
ամպոյն զգերանդի իւր, և հնձեցաւ երկիր ։ (17) Եւ այլ
հրեշ" ։ (18) Ոմանք․ Հրեշտակ ել 'ի սեղա"․․․ զող-
կոյզս յայգւոյ երկրի ։ (18) Ոմանք յաւելուն․ Եւ ասէր,
առաքեա զգերանդիդ քո սուր և կթեա զող"։ (19) Ոմանք․
Եւ կթէր զխաղողն 'ի նմա և արկանէր 'ի հնձանն այ ։
(20) Ոմանք․ 'Ի սանձս ձիոցն․․ հազար հարիւր և վեց
ասպարէզ ։
Գլ․ ԺԵ․ (1) Ոմանք յաւելուն․ Նշան յերկինս մեծ․․․
բարկութիւնն այ ։ (2) Ոմանք․ Եւ պատկերի նր, և թիւ-

Digitized by Google

ղէն խառնեալ հրով. և որք յաղթեցին գազանին՝ և
թուոյ անուան նր՝ և պատկերի նր՝ և դրոշմի նորա,
նոքա կային 'ի վերայ ծովուն ապակեղինի. և ունէին
3 զքնարս այ. * և երգէին զերգն մովսիսի ծառայի այ,
և զերգս գառինն՝ ասելով. Թէ մեծամեծ և սքանչե_
լի են գործք քո՝ տր այ ամենակալ, արդար՝ և ճշմա_
րիտ են ճանապարհք քո, թագաւոր ամ հեթանոսաց:
4 * և ով որ ոչ երկիցէ՝ և փառաւորեսցէ զքո անուն
քո. զի դու միայն սբ, և արժանի երկրպագելոյ. զի
ամ հեթանոսք եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո
5 տր, յորժամ արդարութիք քո յայտնեսցին: * Եւ յետ
այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն խորանին վկայու_
6 թեն՝ որ էր 'ի յերկինս: * և ելանէին եւթն հրեշտա_
կքն՝ որ ունէին եւթն հարուածս, և զգեցեալ էին 'ի
տաճարին կտաւս մաքուրս՝ և պայծառս. և գօտեւո_
րեալք էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս:
7 * Եւ 'ի չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշտակացն՝
եւթն սկաւառակս լի ցասմամբն այ կենդանւոյն յա_
8 ւիտեանս յաւիտենից: * Եւ լցաւ տաճարն ծխով փա_
ռացն այ՝ և զօրութեան նորա. և ոչ ոք կարէր մտա_
նել 'ի տաճարն՝ մինչև կատարեսցին եւթն հարուածքն
յեւթն հրեշտակացն:

ԳԼ. ԺԶ.

1 Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր ցեւթն
հրեշտակսն, երթայք հեղէք զեւթն սկաւառակսդ
ցասմամբն այ յերկիր:
2 * Եւ գնաց առաջինն հրեշտակն, և եհեղ զսկաւառակ ԽՁ
իւր յերկիր, և եղև հարուածք չարաչար 'ի վը մարդ_
կան, որ ունէին զդրոշմ գազանին, և երկիր պագին
պատկերի նորա:
3 * Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի ԽԷ
ծով, և դարձաւ ջուրքն յարիւն մեռելոյ. և ամենայն
շունչ կենդանի որ էր 'ի ծովու՝ սատակեցաւ:
4 * Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի ԽԸ
գե_

ոյ: (3) Ոսկան. Զերգն մովսէսի ծառայի այ... մեծա_
մեծք և սքանչելիք են: (3) 'Ի լուս". Արդարև ճշմա_
րիտ: (3) Օմանք. Եւ ճշմարտութի է ճանապարհք քո:
(4) Օմանք. Փառաւորեսցէ զքո անուն քո... միայն ես
սբ: (5) Օմանք. Որ է յերկինս: (6) Օմանք. 'Ի տաճա_
րէն՝ կտաւս: (8) Օմանք. Եւ զօրութեն նր:
Գլ. ԺԶ. (1) Օմանք. Ցասմանն այ: (2) Ոսկան. Եղեն
հարուածք չարաչարք 'ի... զդրոշմն գա": (2) Օմանք.
'Ի վը մարդկանն.. պատկերին նր:

Digitized by Google

գետս՝ և յաղբերս ջուրց, և եղև արիւն։ * Եւ լուայ 5
՚ի հրեշտակէն՝ զի ասէր. արդար ես՝ որ էնն և էր, և
սուրբ ՚ի գործս իւր՝ զի այսպէս դատեցար. * Վն զի 6
զարիւն սրբոց՝ և զարիւն մարգարէիցն հեղին անպա-
րիշտք. վն այնորիկ արիւն ետ ըմպել նց զի արժան-
աւորս։ * Եւ լուայ ՚ի սեղանոյ անտի զի ասէր. այո՛ Տր Ած 7
ամենակալ, արդար և ճշմարիտ են դատաստանք քո։

ԽԹ. * Եւ չորրորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւր- 8
մէ ՚ի վերայ արեգական։ * և տուաւ նմա խորշակա- 9
հար առնել զմարդիկ հրով. և տապացան մարդիկ ՚ի
տապ մեծ, և հայհոյեցին զԱծ՝ որ ունի իշխանութիւն
՚ի վերայ հարուածոցս այսոցիկ. և ոչ ապաշխարեցին
՚ի փառս նմ։

Ծ. * Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւր- 10
մէ ՚ի վերայ աթոռոյ գազանին, և եղև թագաւորու-
թիւն նր խաւարեալ. և ծամէին զլեզուս իւրեանց յախ-
տէ ցաւոցն, * և հայհոյեցին զԱծ երկնից ՚ի ցաւոց 11
իւրեանց՝ և յախտէ դառնութենէն, և ոչ ապաշխարե-
ցին ՚ի գործոց իւրեանց։

ԾԱ. * Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւր- 12
մէ ՚ի վերայ գետոյն մեծի եփրատայ, և ցամաքեցան
ջուրք նր, զի պատրաստեսցի ճանապարհ թագաւո-
րի ելիցն արևու։ * Եւ տեսի՝ զի ելանէր ՚ի բերա- 13
նոյ վիշապին՝ և ՚ի բերանոյ գազանին՝ և ՚ի բերանոյ
սուտ մարգարէին ոգիք երեք անսուրբք իբրև գորտս։
* Քանզի նոքա էին՝ ոգիք դիւականք որք առնէին զնշ- 14
խանս՝ և երթային առ թագաւորս ամ երկրի՝ ժողո-
վել զնս ՚ի պատերազմ, յօրն մեծ Այ ամենակալի։ Քան-
զի այսպէս ասաց Տր. * Ահա գամ իբրև զգող, երա- 15
նի որ լինի արթուն, և պահեսցէ զհանդերձս իւր-
եանց. զի մի մերկ շրջեսցին, և երևեսցին ամօթանք
իւրեանց։ * Եւ ժողովեցից զնոսա ՚ի տեղի մի, որ կոչի 16
եբրայեցերէն արմագեդոն։

ԾԲ. * Եւ եւթներորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւր- 17
մէ ՚ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ յերկնից՝ և յաթո-
ռոյն՝ ասելով. եղև։ * Եւ եղեն փայլատակմունք և 18
ձայնք և որոտմունք. և եղև շարժումն մեծ՝ որպիսի

չէր

---

(5) Ոսկան. ՚ի հրեշտակէն որ ասէր.. և է սուրբ ՚ի գործս։ (7) Ոմանք. Եւ լուայ ձայն ՚ի սեղանոյն զի ասէր։ (10) Ոմանք. ՚ի յախտէ ցաւոցն։ (11) Ոմանք. Եւ հայհոյէին զԱծ երկնից ՚ի ցաւոցն իւ՛՛։ (12) Ոսկան. Յելիցն արևու։ (14) Ոմանք. Առ ամ թգրս երկ՛՛... Այն Այ ամենակալի։ (15) Ոմանք. Մերկս շրջեսցին։ (16) Ոմանք. Եւ ժողովեսցէն զնս ՚ի տե՛՛։ (16) Ոսկան. Արմագեդոն։

Digitized by Google

չէ եղեալ իսկզբանէ՝ յորմէհետէ եղեւ մարդ 'ի վերայ
19 երկրի՝ այնպիսի շարժումն մեծ: * Եւ եղեւ քաղաքն
մեծ յերիս մասն, եւ քաղաքք ազգացն անկան. եւ բա_
բելոն մեծ յիշեցաւ առաջի այ, տալ նմա զբաժակն
20 գինւոյ ցասման բարկութեան նր: * Եւ ամ կղզիք փա_
21 խեան, եւ լերինք 'ի միջոյ բարձան: * Եւ կարկուտ մեծ
իբրեւ կշիռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից 'ի վր մարդ_
կան. եւ հայհոյեցին մարդիկ զած յերկինս՝ վս հարուա_
ծոյ կարկտին, զի մեծ էր հարուածն եւ սաստիկ:

ԳԼ: ԺԷ.

1 Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն՝ որք ունէին զեւ_ ԾԳ
թն սկաւառակն. խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ. Եկ
այսր եւ ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռնկին՝ որ
2 նստի 'ի վերայ ջուրց բազմաց: * Ընդ որում պոռն_
կեցան թագաւորք երկրի, եւ արբեցան բնակիչք երկ_
3 րի 'ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նր: * Եւ տա_
րաւ զիս յանապատ հոգւովն. եւ տեսի կին մի՝ զի
նստէր 'ի վերայ կարմիր գազանի, եւ լի էր անուամբք
հայհոյութեան. եւ գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս
4 եւթն եւ եղջիւրս տասն: * Եւ կինն զգեցեալ էր ծի_
րանիս եւ կարմիրս, եւ զարդարեալ ոսկւով եւ մարգար_
տով եւ ակամբք պատուականօք, ունելով բաժակ ոս_
կի 'ի ձեռին իւրում, եւ լի էր գարշելի եւ անմաքուր պո_
5 ռնկութբ: * Եւ 'ի ճակատն նր գրեալ անուն՝ խորհրդով.
Մեծն բաբելոն՝ մայր պոռնկաց եւ գարշելեաց երկրի:
6 * Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոց՝ եւ յա_ ԾԴ
րենէ ամ վկայիցն. եւ զարմացայ՝ տեսեալ զնա՝ զար_
7 մացումն մեծ: * Եւ ասէ ցիս հրեշտակն. ընդէ՞ր զար_
մացար, ես ասացից քեզ զխորհուրդս կնոջն, եւ գա_
զանին որ բարձեալ ունի զնա. որ ունի զեւթն գլուխն
8 եւ տասն եղջիւր: * Եւ գազանդ զոր տեսեր՝ որ էր,
եւ չէր, եւ հանդերձեալ է ելանել 'ի դժոխոց՝ եւ 'ի կո_
րուստ

---

(19) Ոմանք. Յերիս մասունս... եւ բաբելոնն մեծն յիշէ՛: (21) Ոմանք. Կշիռ տաղանդի միոյ.. վասն հարուածոց կարկտի:

Գլ. ԺԷ. (1) Ոսկան. Զդատաստան մեծ: (3) Ոմանք. Յանապատ հոգւով: (3) Ոսկան յանէլիս. Հայհոյութեան բերան նր: (5) Ոսկան. Անուն. խորհուրդ. բաբելոն մեծ՝ մայր պոռնկութեց եւ գարշութեց երկրի: (6) Ոմանք. 'Ի յարենէ սրբոցն: (6) Ոսկան. Վկայիցն քնի.. տեսեալ զնա զարմացմամբ մեծաւ: (7) Ոմանք. Եւ զգազանին.. զեւթն գլուխս եւ տասն եղջիւրս: (8) Ոսկան. Որոց ոչ են գրեալք: (8) Ոմանք. Անուանք իւրեանց

Digitized by Google

մունք եւ ձայնք եւ որոտմունք եւ շարժումն, եւ կար-
կուտ մեծամեծ:

Գլ. ԺԲ.

Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ 1
զիւրեւ զարեգակն, եւ լուսին 'ի ներքոյ ոտից նր̄.
եւ 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղաց յերկոտասա-
նից: * Եւ էր յղի. եւ ճչէր յերկնելն, եւ բազում վշտօք 2
մերձ էր 'ի ծնանել: * Եւ երեւեցաւ այլ նշան յեր- 3
կինս՝ եւ ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին
գլուխք եւթն՝ եւ եղջեւրք տասն. եւ 'ի վերայ գլխոյ
նր̄ եւթն խոյրք: * Եւ ագին նորա քարշէր զերրորդ 4
մասն աստեղաց երկնից, եւ արկ զնս յերկիր. եւ վի-
շապն կայր առաջի կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել,
զի յորժամ ծնցի կինն զորդին իւր՝ կլցէ զնա վիշապն:
* Եւ ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հովուել 5
զա̄մ հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ. եւ յափշտա-
կեցաւ որդին նորա առ ա̄ծ, եւ առ աթոռ նորա: * Եւ 6
կինն փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմա պատ-
րաստեալ յա̄յ, զի կերակրեսցեն անդ աւուրս հազար
երկերիւր եւ վաթսուն:
ԱԴ * Եւ եղեւ պատերազմ յերկինս, միքայէլ եւ հրեշտակք 7
իւր կռուէին ընդ վիշապին. եւ վիշապն պատերազմէր
զօրօք իւրովք: * Եւ ոչ կարացին կալ ընդդէմ, եւ տե- 8
ղի ոչ գտաւ նոցա յերկինս: * Եւ անկաւ վիշապն մեծ՝ 9
օձն առաջին, որ անուանեալ կոչի բէեղզեբուղ եւ սա-
տանայ, որ մոլորեցոյց զա̄մ աշխարհս երկրի. եւ հրեշ-
տակք նորա ընդ նմա անկան: * Եւ լուայ ձայն մեծ 10
յերկնից՝ որ ասէր. արդ եղեւ զօրութիւն եւ փրկութիւն
եւ արքայութիւն ա̄յ մերոյ, եւ իշխանութիւն օծելոյ նր̄. զի
անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր ըղ-
նոցանէ առաջի ա̄յ՝ զտիւ եւ զգիշեր: * Եւ նոքա յաղ- 11
թեցին նմա արեամբ գառինն, եւ բանիւ վկայութեան նր̄.
եւ ոչ հաճեցան ընդ վիշապն մինչեւ 'ի մահ: * Վ̄ս այսո- 12
րիկ ուրախ լիցին երկինք՝ եւ ա̄մ որ բնակեալ են 'ի
նմա: Վայ երկրի եւ ծովու, զի անկաւ բանսարկուն
առ

Գլ. ԺԲ. (1) Ոսկան. Արկեալ զիւրեաւ: (1) Օրինակ. Պսակ յաստեղաց երկոտասանից: (3) Օրինակ. 'Ի վր̄ գլխոց նր̄: (5) Օրինակ. Ծնաւ կինն որդի արու: (5) Ոսկան. Հանդերձեալ էր: (5) Յօրինակին չիք. Եւ առ աթոռ նր̄: (10) Օրինակ. Որ չարախօսէրն: (10) Ոսկան. Ա̄յ 'ի տուէ եւ 'ի գիշերի: (11) Ոսկան. Ընդ վիշապին: (12) Ոսկան. Ամենայն որք բնակեալ էք 'ի նմա: (12) Օրինակ. Եւ կայցէ առ սակաւ մի ժամ:

Digitized by Google

տա ձեռք ; որ ունի զպատուածն բազում · և կացցէ առ
սակաւ մի ժամանակս ։
13 * Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր, ըղ- ԼԵ
14 հետ 'եղև կնոջն որ ծնաւ զմանուկն արու ։ * Եւ տուաւ
կնոջն երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանա-
պատ 'ի տեղի իւր · ուր կերակրեսցի անդ՝ ժամանակս և
15 ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օձին ։ * Եւ
եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղ-
16 մեսցէ զնա ։ * Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց եր-
կիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն
17 'ի բերանոյ իւրմէ ։ * Եւ ցասուցաւ վիշապն ընդ կնոջն,
և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա որք պա-
հեն զպատուիրանս այ, և ունէին զվկայութիւն յի ։
18 * Եւ կայր 'ի վերայ աւազոյ ծովու ։

ԳԼ․ ԺԳ․

1 Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր գը- ԼԶ
լուխս եւթն՝ և եղջիւրս տասն, և 'ի վերայ եղջե-
րաց նր տասն խոյր, և 'ի վերայ գլխոյ նր անուն հայ-
2 հոյութե ։ * Եւ գազանն զոր տեսի՝ նման ընծու, և
ոտք նր իբրև զարջու, և բերան նր որպ զառիւծու ·
և ետ նմա վիշապն զզօրութի իւր՝ և զաթոռ իւր և
3 զիշխանութի մեծ ։ * և մի 'ի գլխոց նր վիրաւորեալ
էր 'ի մահ · և վէր մահուան նր ողջանայր ։ Եւ զար-
մացաւ ամ երկիր ընդ գազանն, զի ետ նմա վիշապն
4 զթագաւորութի իւր ։ * և երկիր պագին վիշապին՝
որ ետ զիշխանութիւն գազանին, և ասէին · ով իցէ նման
գազանիս · կամ ով կարիցէ պատերազմել ընդ դա ։
5 * Եւ տուաւ նմա բերան խօսել զմեծամեծս, և ըղ-
հայհոյութի · և տուաւ նմա իշխանութի զամիսս քա-
6 ռասուն և երկու ։ * Եւ եբաց զբերան իւր հայհոյ-
ութե առ այ, և հայհոյեաց զանուն նր և զխորանն
7 նր, և զերկնայինն խորանն ։ * Եւ տուաւ նմ իշխանու-
թի 'ի վերայ ամ ազգաց և լեզուաց և ժողովրդոց ։
8 * զի երկրպագեսցեն նմա ամ որ բնակեալ են ընդ
երեսս

---

(14) Ոսկան · Եւ տուեան կնոջն ։ (14) Ոմանք · Որ կերակ-
րեր անդ ։ (17) Ոսկան յաւելու · Յսի ։ (18) Օրինակ
Գ․ Եւ կացի 'ի վր աւազոյ ծովու · և տեսի ։
ԳԼ․ ԺԳ․ (2) Ոմանք · Ընձու ։ (2) Ոսկան · Զիշխանութի
իւր մեծ ։ (3) Ոսկան · Մահու նր ող․ ։ (4) Ոմանք · Ընդ
դմա ։ Այլ ոսկան · գազանին . . . Է նմա ։ (6)(7) Ոսկան ·
Եւ զխորան նր, և զայնոսիկ որք յերկինս բնակեն ։
Եւ տուաւ նմա պատերազմել Է սրբս և յաղթել նց ·
և տուաւ նմա իշխանութի ։ (8) Ոմանք · Զի երկրպագ․

Digitized by Google

երեսս երկրի. որոց ոչ են գրեալ անուանք նոցա 'ի
դպրութիւն կենաց գառինն զենլոյ իսկզբանէ աշխար-
հի։ * Այք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ * Զի են 9
ոմանք՝ որք 'ի գերութիւն վարեսցին, եւ են ոմանք՝ որ 10
սրով մեռցին, եւ են ոմանք՝ որ անձամբ զանձինս սպա-
նանեն. աստ է համբերութիւն եւ հաւատ սրբոց։

ԼԷ * Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, եւ ունէր 11
եղջեւրս երկու՝ նման գառինն, եւ խօսէր իբրեւ զվի-
շապն։ * Եւ զիշխանութիւն զամ զառաջնոյ գազանին գոր- 12
ծէր առաջի նորա։ Եւ առնէր զերկիր եւ զամ բնակիչս
նր՝ զի երկիր պագանիցեն գազանին առաջնոյ՝ մինչ-
ողջացի վէր մահու նր։ * Եւ առնէր նշանս բազումս, 13
եւ տայր հրոյ իջանել յերկնից յերկիր՝ առաջի մարդ-
կան, * եւ մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկիր 14
նշանօքն, որ տուեալ են 'ի ձեռս նր՝ առնել առաջի
գազանին։ ասէ ցնա բնակիչս երկրի. առնել զպատկեր
գազանին, որ 'ի վերայ սրոյն եկեաց։ * Եւ տուաւ 15
նմա իշխանութիւն, զի տացէ հոգի պատկերի գազանին,
եւ զի խօսեսցի պատկերն. եւ երկիր պագցեն նմա ամ
բնակիչք երկրի. եւ որ ոչ պագցէ երկիր պատկերի գա-
զանին, սպանցէ զնա։ * Եւ արասցէ զամ՝ փոքունս 16
եւ զմեծամեծս եւ զմեծատունս եւ զաղքատս եւ զազատս
եւ զծառայս, զի տացէ նց դրոշմ յաջու ձեռին՝ եւ 'ի
վերայ ճակատու նոցա։ * Եւ ոչ ոք կարասցէ գնել 17
եւ վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ գրոյն՝ եւ զանուն
գազանին եւ զթիւ անուան նորա։

ԼԸ * Աստ է իմաստութիւն. որ ունի միտս՝ համարեսցի 18
զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ, եւ թիւ ան-
ուան նր՝ է այս. վեց հարիւր վաթսուն եւ վեց։

ԳԼ

ցեն նմ աշխարհն որ ... 'ի դպրութեան կե"։ (8) Ոսկան. Գառինն զենելոյ։ (10) Ոսկան. 'Ի գերութիւն վարես"։ (10) Ոմանք. Զանձինս սպանանիցեն։ (13) Յօրինակին. Եւ առնէ նշանս։ (13) Ոմանք. Յերկնից 'ի յերկիր։ (14) Ոսկան. Բնակեալ են յերկրի։ (14) 'Ի լուս". Որ 'ի վերայ սրոյն եկաց։ համաձայն ոմանց 'ի բնաբ"։ (15) Ոմանք. Եւ որ ոչն պագցէ։ (15) Ոսկան. Սպանցեն զնա։ (16) Ոսկան. Եւ զծառայս ունել զդրոշմ յաջոյ ձե"։ (16) Ոմանք. Ճակատուց նց։ (18) Ոմանք. Որ ունիցի միտս ... եւ թիւ նր է այս։ (18) 'Ի բազում գրչագիրս մեր բնաբ՝ վեց հարիւր վաթսուն եւ վեց, բառագրով գրեն այս-պէս՝ ոկԶ. զոր յարմարել յաւելուս օրինակս մեր նաեւ նշանագիրս ինչ մասնաւոր այսպիսի ձեւով. [illegible]. զոր ընդօրինակողն բազմոյ յօ նս յեղյուցանեն փոխել ղշագրութ՝ ճկզ.

Digitized by Google

ԳԼ. ԺԴ.

1 Եւ տեսի՝ և ահա գառն կայր 'ի վերայ լերինն Սիով- ԼԹ
նի. և ընդ նմա հարիւր քառասուն և չորս հազարք.
որ ունէին զանուն նորա, և անուն հօր նորա գրեալ
2 'ի վերայ ճակատուց նոցա: * Եւ լուայ ձայն յերկնից՝
իբր զձայն ջուրց բազմաց՝ և ձայն որոտման մեծի. և
լուայ իբրև զձայն քնարահարաց, զի հարկանէին ըզ-
3 'քնարս իւրեանց: * և երգէին զերգս նորս առաջի ա-
թոռոյն՝ և առաջի չորից կենդանեացն՝ և առաջի ե-
րիցանցն. և ոչ ոք կարէ ուսանել զերգս նց: բայց միայն
հարիւր քառասուն և չորս հազարքն, որք ազատեալ
4 են յերկրէ: * Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնա-
կեցան, և են կուսանք. սոքա զհետ երթան գառինն
ուր և երթիցէ. սոքա ընտրեցան 'ի մարդկանէ առա-
5 ջի այ և գառինն: * և 'ի բերան նոցա ոչ գտաւ սուտ,
զի անբիծք են:
6 * Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ երկնից. Խ
և ունէր աւետարան յաւիտենական՝ աւետարանել ամ
7 ազգաց, և լեզուաց որ բնակեալ են յերկրի: * և ա-
սէր 'ի ձայն մեծ. երկերուք յայ՝ և տուք փառս նմա,
զի եկն ժամ դատաստանի նորա. և երկիր պագէք ա-
րարչին երկնի և երկրի և ծովու և աղբերաց ջուրց:
8 * Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նորա և ա- ԽԱ
սէր. անկաւ անկաւ բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ արբե-
ցութէ՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնկութէ իւրմէ, որ արբե-
ցոյց զամենայն հեթանոս:
9 * Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նց՝ և 'ի ձայն ԽԲ
մեծ ասէր. ով ոք երկրպագեաց գազանին և պատկե-
րի նորա, և կամ զդրոշմ նշանի նորա առ 'ի ճակատ
10 իւր, և կամ 'ի վերայ աջու ձեռին իւրոյ, * այնպի-
սին արբցէ 'ի բաժակէ ցասմանն այ՝ արկելոյ յանա-
պակէ բարկութե բաժակին. և տանջեսցի հրով և ծծըմ-
11 բով առաջի այ և գառինն: * և ծուխ նոցա ելցէ յա-
ւիտեանս յաւիտենից. և ոչ ունին հանգիստ՝ որք եր-
կիր պագին գազանին 'ի տուէ և 'ի գիշերի. և որք եր-
կիր

ԳԼ. ԺԴ. (1) Ոսկան. Եւ զանուն հօր: (2) Ոմանք. Իբրև զձայն ջուրց.. զձայն զքնարս": (2) Ոսկան. Զձայն իբրև զքնարս". զի հարկանիցեն զքնարս: (3) Ոմանք. Զերգս նորա առաջի... գնեալք են յերկ": (3) Ոսկան. Աթոռոյն այ և ա": (4) Ոմանք. Ուր և երթայցէ: (5) Ոսկան յաւելու. Անբիծք են առաջի աթոռոյն այ: (6) Ոմանք. Յերկիր: (8) Ոսկան. Որ արբոյց զամ հե": (9) Ոմանք. Եւ ասէր 'ի ձայն մեծ... և կմ պատկերի նր...

Digitized by Google

կէր պագին պատկերին, և առին զդրոշմ և զանուան
նորա։ * Եւ համբերութիւն սրբոցն աստ է. այս որք 12
պահեն զպատուիրանս այ, և զհաւատս յսի։ * Եւ 13
լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. գրեա, երանեալ մե-
ռելոցն որք 'ի տր ննջեցին այժմիկ վաղվաղակի. զայս
ասէ հոգին, քանզի հանգեան յաշխատութե իւրեանց.
բայց միայն գործք իւրեանց շրջան զհետ նոցա։

ԽԳ* Եւ տեսի՝ և ահա ամպ սպիտակ, և 'ի վերայ ամ- 14
պոյն նստէր նման որդւոյ մարդոյ, և 'ի գլուխ իւր
պսակ ոսկի, և 'ի ձեռին իւրում ունէր գերանդի սրը-
եալ։ * Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից., աղաղա- 15
կէր 'ի ձայն մեծ՝ և ասէր. որ նստիդ 'ի վերայ ամ-
պոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՝ և հնձեա, զի եկն ժա-
մանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի։

ԽԴ* Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի տաճարէն որ յերկինս, 17
և ունէր և նա գերանդի սրեալ։ * Եւ այլ հրեշտակ 18
ելանէր 'ի սեղանոյն, որ ունէր իշխանութի 'ի վերայ
հրոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ
ունէր զգերանդին սրեալ՝ և ասէր. կթեա զողկոյզս
յայգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի գմա։ * Եւ 19
արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, և կթէր զխա-
ղող նորա, և արկանէր 'ի հնձանն այ 'ի մեծ։ * Եւ 20
կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, և ելանէր 'ի հըն-
ձանէն արիւն մինչև 'ի սանձս ձիոյն. և երկայնութի
նորա հազար և վեց հարիւր ասպարէս։

ԳԼ. ԺԵ.

ԽԵ Եւ տեսի այլ նշան մեծ և սքանչելի. հրեշտակս եւ- 1
թըն՝ որք ունէին եւթն վէրս զկնի. զի նոքօք կա-
տարէր բարկութի այ։ * Եւ տեսի ոպ ծով ապակե- 2
ղէն

ալոյ ձեռին իւրում։ (13) Ոսկան. Զի միայն գործք իւ"։
(14) Ոսկան. Եւ 'ի գլուխ նր պս"։ (15) Օրինակ մ յանե-
յա. Հունձք երկրի։ Եւ ասէ որ նստէր 'ի վր ամպոյն՝ զգե-
րանդին իւր յերկիր, և հնձեր զամ բնակիչս երկրի։ Զոր ոսկան
ևս ունի այսպէս. հմր. (16) Եւ առաքեաց որ նստէրն 'ի վր
ամպոյն զգերանդի իւր, և հնձեցաւ երկիր։ (17) Եւ այլ
հրեշ"։ (18) Ոմանք. Հրեշտակ ել 'ի սեղա"... զող-
կոյզս յայգւոյ երկրի։ (18) Ոսկան յաւելու. Եւ ասէր,
առաքեա զգերանդիդ քո սուր և կթեա զող"։ (19) Ոմանք.
Եւ կթէր զխաղողն 'ի նմա և արկանէր 'ի հնձանն այ։
(20) Ոսկան. 'ի սանձս ձիոցն.. հազար հարիւր և վեց
ասպարէզ։
ԳԼ. ԺԵ. (1) Ոմանք յաւելուն. Նշան յերկինս մեծ...
բարկութիւնն այ։ (2) Ոմանք. Եւ պատկերի նր, և թիւ-

Digitized by Google

զենի խառնեալ հրով· եւ որք յաղթեցին գազանին՝ եւ
թուոյ անուան նր՝ եւ պատկերի նր՝ եւ դրոշմի նորա,
նոքա կային ՚ի վերայ ծովուն ապակեղինի· եւ ունէին
3 զքնարս այ· * եւ երգէին զերգս մովսիսի ծառայի այ,
եւ զերգս գառինն՝ ասելով· Թէ մեծամեծ եւ սքանչե-
լի են գործք քո՝ տր ած ամենակալ, արդար՝ եւ ճշմա-
րիտ են ճանապարհք քո, թագաւոր ամ հեթանոսաց:
4 * եւ ո՞վ ոք ոչ երկիցէ՝ եւ փառաւորեսցէ զտր անուն
քո· զի դու միայն սբ, եւ արժանի երկրպագելոյ· զի
ամ հեթանոսք եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի քո
5 տր, յորժամ արդարութի՛ք քո յայտնեսցին: * Եւ յետ
այսորիկ տեսի՝ եւ բացաւ տաճարն խորանին վկայու-
6 թե՛՝ որ էր ՚ի յերկինս: * եւ ելանէին եւթն հրեշտա-
կըք՝ որ ունէին եւթն հարուածս, եւ զգեցեալ էին ՚ի
տաճարին կտաւս մաքուրս՝ եւ պայծառս· եւ գօտե-
ւորեալք էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս:
7 *Եւ ՚ի չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշտակացն՝
եւթն սկաւառակս լի ցասմամբքն այ կենդանւոյն յա-
8 ւիտեանս յաւիտենից: *Եւ լցաւ տաճարն ծխով փա-
ռացն այ՝ եւ զօրութեան նորա· եւ ո՛չ ոք կարէ մտա-
նել ՚ի տաճարն՝ մինչեւ կատարեսցին եւթն հարուածքն
յեւթն հրեշտակացն:

ԳԼ· ԺԶ:

1 Եւ լուա՛յ ձայն մեծ ՚ի տաճարէն՝ զի ասէր ցեւթն
հրեշտակսն, երթա՛յք հեղէք զեւթն սկաւառակսդ
ցասմամբքն այ յերկիր:
2 * Եւ գնա՛ց առաջինն հրեշտակն, եւ եհեղ զսկաւառակ ԽԶ
իւր յերկիր, եւ եղեւ հարուածք չարաչա՛ր ՚ի վր մարդ-
կանն, որ ունէին զդրոշմ գազանին, եւ երկիր պագին
պատկերի նորա:
3 * Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ՚ի ԽԷ
ծով, եւ դարձան ջուրքն յարիւն մեռելոյ· եւ ամենայն
շունչ կենդանի որ էր ՚ի ծովու՝ սատակեցաւ:
4 * Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ՚ի ԽԸ
գե-

ղոյ: (3) Ոսկան· Զերգս մօսէսի ծառայի այ... մեծա-
մեծք եւ սքանչելիք են: (3) ՚Ի լուս''· Արդարեւ ճշմա-
րիտ: (3) Ոմանք· Եւ ճշմարտութի է ճանապարհք քո:
(4) Ոմանք· Փառաւորեսցէ զսբ անուն քո... միայն ես
սբ: (5) Ոմանք· Որ է յերկինս: (6) Ոմանք· ՚Ի տաճա-
րէն՝ կտաւս: (8) Ոմանք· Եւ զօրութենն նր:
Գլ· ԺԶ· (1) Ոմանք· Ցասմանն այ: (2) Ոսկան· Եղեն
հարուածք չարաչարք ՚ի ... զդրոշմն գա'': (2) Ոմանք·
՚Ի վր մարդկանն.. պատկերին նր:

Digitized by Google

գետս՝ և յաղբերս ջուրց, և եղև արիւն։ * Եւ լուայ 5
'ի հրեշտակէն՝ զի ասէր. արդա՛ր ես՝ որ էինն և ես, և
սուրբ 'ի գործս քո՝ զի այսպէս դատեցար. * Վա՛սն զի 6
զարիւն սրբոց՝ և զարիւն մարգարէիցն հեղին անպա-
րիշտք. վա՛ն այնորիկ արիւն ետ ըմպել նց ըստ արժան-
ւոյն։ * Եւ լուա՛յ 'ի սեղանոյ անտի զի ասէր. այո՛ տէր ած 7
ամենակալ, արդա՛ր և ճշմարիտ են դատաստանք քո։

ԽԸ * Եւ չորրորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւր- 8
մէ 'ի վերայ արեգական։ * Եւ տուաւ նմա խորշակա- 9
հա՛ր առնել զմարդիկ հրով. և տապացան մարդիկ 'ի
տօթոյ մեծ, և հայհոյեցին զած՝ որ ունի իշխանութի՛
'ի վերայ հարուածոցս այսոցիկ. և ո՛չ ապաշխարեցին
'ի փառս նմա։

Ծ * Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւր- 10
մէ 'ի վերայ աթոռոյ գազանին, և եղև թագաւորու-
թի նր խաւարեալ. և ծամէին զլեզուս իւրեանց յախ-
տէ ցաւոցն, * և հայհոյեցին զած երկնից 'ի ցաւոց 11
իւրեանց՝ և յախտէ դառնութեան, և ո՛չ ապաշխարե-
ցին 'ի գործոց իւրեանց։

ԾԱ * Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւր- 12
մէ 'ի վերայ գետոյն մեծի Եփրատայ, և ցամաքեցան
ջուրք նր, զի պատրաստեսցի ճանապարհ թագաւո-
րի ելիցն արևու։ * Եւ տեսի՝ զի ելանէր 'ի բերա- 13
նոյ վիշապին՝ և 'ի բերանոյ գազանին՝ և 'ի բերանոյ
սուտ մարգարէին ոգիք երեք անսուրբք իբրև գորտս։
* Քանզի նոքա էին՝ ոգիք դիւականք որք առնէին զնշ- 14
շանս՝ և երթային առ թագաւորս ամ երկրի՝ ժողո-
վել զնս 'ի պատերազմ, յօրն մեծ տն ամենակալի։ Քան-
զի այսպէս ասաց տր. * Ահա՛ գամ իբրև զգող, երա- 15
նի որ իցեն արթունք, և պահեսցեն զհանդերձս իւր-
եանց. զի մի՛ մերկ շրջեսցին, և երևեսցին ամօթանք
իւրեանց։ * Եւ ժողովեցից զնոսա 'ի տեղի մի, որ կոչի 16
եբրայեցերէն արմագեդոն։

ԾԲ * Եւ եւթներորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւր- 17
մէ 'ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ յերկնից՝ և յաթո-
ռոյն՝ ասելով. եղև։ * Եւ եղեն փայլատակմունք և 18
ձայնք և որոտմունք. և եղև շարժումն մեծ՝ որպիսի

չէր

---

(5) Ոսկան. 'ի հրեշտակէն որ ասէր. . և է սուրբ 'ի գործս։ (7) Ոմանք. Եւ լուայ ձայն 'ի սեղանոյն զի ասէր։ (10) Ոմանք. 'ի յախտէ ցաւոցն։ (11) Ոմանք. Եւ հայհոյէին զած երկնից 'ի ցաւոցն իւ"։ (12) Ոսկան. Յելիցն արևու։ (14) Ոմանք. Առ ամ թգրս երկ". . . տն ամենակալի։ (15) Ոմանք. Մերկս շրջեսցին։ (16) Ոմանք. Եւ ժողովեցէին զնս 'ի տե"։ (16) Ոսկան. Արմագեդոն.

Digitized by Google

չէր եղեալ ի սկզբանէ՝ յորմէհետէ եղեւ մարդ ՚ի վերայ
19 երկրի՝ այնպիսի շարժումն մեծ: * Եւ եղեւ քաղաքն
մեծ յերիս մասն, եւ քաղաքք ազգացն անկան. եւ բա-
բելոն մեծ յիշեցաւ առաջի այ, տալ նմա զբաժակն
20 գինւոյ ցասման բարկութե նր: * Եւ ամ կղզիք փա-
21 խեան, եւ լերինք ՚ի միջոյ բարձան: * Եւ կարկուտ մեծ
իբրեւ կշիռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից ՚ի վր մարդ-
կան. եւ հայհոյեցին մարդիկ զած յերկինս՝ վս հարուա-
ծոյ կարկտին, զի մեծ էր հարուածն եւ սաստիկ:

ԳԼ. ԺԷ.

1 Եւ եկն մի ՚ի յեւթն հրեշտակացն՝ որք ունէին զեւ- ԾԳ.
թն սկաւառակսն. խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ. Եկ
այսր եւ ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռնկին՝ որ
2 նստի ՚ի վերայ ջուրց բազմաց: * ընդ որում պոռն-
կեցան թագաւորք երկրի, եւ արբեցան բնակիչք երկ-
3 րի ՚ի գինւոյ արբեցութե պոռնկութե նր: * Եւ տա-
րաւ զիս յանապատ հոգւովն. եւ տեսի կին մի՝ զի
նստէր ՚ի վերայ կարմիր գազանի, եւ լի էր անուամբ
հայհոյութե. եւ գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս
4 եւթն եւ եղջերս տասն: * Եւ կինն զգեցեալ էր ծի-
րանիս եւ կարմիրս, եւ զարդարեալ ոսկով եւ մարգար-
տով եւ ակամբք պատուականօք, ունելով բաժակ ոս-
կի ՚ի ձեռին իւրում, եւ լի էր գարշելի եւ անմաքուր պո-
5 ռնկութ: * Եւ ՚ի ճակատն նր գրեալ անուն՝ խորհրդով.
մեծն բաբելոն՝ մայր պոռնկաց եւ գարշելեաց երկրի:
6 * Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոց՝ եւ յա- ԾԴ.
րենէ ամ վկայիցն. եւ զարմացայ՝ տեսեալ զնա՝ զար-
7 մացումն մեծ: * Եւ ասէ ցիս հրեշտակն. ընդէ՞ր զար-
մացար, ես ասացից քեզ զխորհուրդս կնոջն, եւ գա-
զանին որ բարձեալ ունի զնա. որ ունի զեւթն գլուխն՝
8 եւ տասն եղջեւր: * Եւ գազանդ զոր տեսեր՝ որ էր,
եւ չէր, եւ հանդերձեալ է ելանել ՚ի դժոխոց՝ եւ ՚ի կո-
րուստ

---

(19) Օրինակ. Յերիս մասունս... եւ բաբելոնն մեծն յիշի": (21) Օրինակ. Կշիռ տաղանդի միոջ.. վասն հարուածոց կարկտի:

Գլ. ԺԷ. (1) Օրինակ. Զդատաստան մեծ: (3) Օրինակ. Յանապատ հոգւով: (3) Օրինակ յոմանս. Հայհոյութե բերան նր: (5) Օրինակ. Անուն. խորհուրդ. բաբիլոն մեծ՝ մայր պոռնկութեց եւ գարշութեց երկրի: (6) Օրինակ. ՚Ի յարենէ սրբոցն: (6) Օրինակ. Վկայիցն քի.. տեսեալ զնա զարմացմամբ մեծաւ: (7) Օրինակ. Եւ զգազանին.. զեւթն գլուխս եւ տասն եղջերս: (8) Օրինակ. Որոյ ոչ են գրեալք: (8) Օրինակ. Անուանք իւրեանց

Digitized by Google

րուստ երթալ ։ և զարմասցին ամենեքեան որ բնակեալ-
են ՚ի վերայ երկրի․ որոց ոչ էր գրեալ անուանք նց
՚ի դպիր կենաց ՚ի սկզբանէ աշխարհի․ զոր տեսանէին զգա-
զանն, զի էր՝ և չէ, և մերձ է ։ * Աստ է իմաս- 9
տութիւն՝ որ ունի միտս ։ և եւթն գլուխն՝ եւթն լե-
րինք են, ուր կինն նստեալ էր ՚ի վերայ նց․ և նոքին
թագաւորք են եւթն․ և թագաւորք եւթն գոլով ։
* հինգն անկան, և մին եկաց, և միւսն ոչ է եկեալ․ 10
և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ ունի ։ * և գա- 11
զանն՝ որ էր՝ և չէ, և նա ութերորդ է․ և է յեւթանց
անտի, և ՚ի կորուստ երթալոց է ։ * Եւ տասն եղ- 12
ջեւրն զոր տեսեր՝ տասն թագաւորք են․ որոց չև՛ ևս
է առեալ զթագաւորութի, այլ անդուստ՝ և կան իշխանք
՚ի մի ժամ․ և առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազա-
նին ։ * Սոքա մի կամս ունին, և զզօրութիւն և զիշխա- 13
նութիւն գազանին տան ։ * և ընդ գառինն պատերազ- 14
մին․ և գառնն յաղթէ նց, զի տէր է նց, և թագա-
ւոր թագաւորաց․ և որք ընդ նմա՝ կոչեցեալք են,
ընտրեալք և հաւատացեալք ։ * Եւ ասաց ցիս․ և զջ- 15
ջուրսն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք
են, և բազմութիւնք և ազգք և լեզուք ։ * և տասն եղ- 16
ջեւրքն՝ զոր տեսեր գազանին, նոքա ատեսցեն զպոռ-
նիկն՝ և աւերեսցեն զնա, և զմարմին նորա կերիցեն՝ և
այրեսցեն զնա հրով ։ * քանզի ած ետ ՚ի սիրտս նոցա 17
առ ՚ի լինել նոցա մի կամս, և տալ զթագաւորութիւն
գազանին՝ մինչև կատարեսցին բանն այ ։ * Եւ կինն 18
զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի զթագաւորու-
թի ՚ի վերայ թագաւորութեանց երկրի ։

ԳԼ. ԺԸ.

ծե Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկ- 1
նից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, և երկիր լուսա-
ւորեցաւ ՚ի փառաց նր ։ * և աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ 2
ասելով․ անկաւ բաբելոն մեծն, որ եղեալ էր բնա-
կութիւն դիւաց, և արգել ամ այսոց պղծոց, և բանտ
պահպանութե ամ ռչւոց անմաքրից և ատեցելոց ։ * Վս 3
զի

՚ի դիր ։ (9) Ոմանք․ Միտս ։ եւթն գլ՛՛ ։ (10) Ոմանք․ Եւ մինն եկաց․․․ սակաւ մի ժմկ ։ (13) Ոսկան․ Եւ զիշխանութիւն իւրեանց գազա՛՛ ։ (14) Ոսկան․ Եւ գառն յաղթեսցէ ։ (15) Ոմանք․ Եւ ասէ ցիս, և զջուրսն ։ Ոսկ ոսկան․ Ջուրքն զորս տես՛՛ ։ (17) Ոմանք․ Քանզի ետ ած ՚ի սիրտս․․ նց ՚ի մի կամս ։
Գլ․ ԺԸ․ (1) Ոմանք․ Եւ երկիրս լուսաւ՛՛ ։ (2) Ոմանք․ Մեծ՝ ասել․ անկաւ բաբելոնն մեծ ։ Ոսկ ոսկան․ Աս․

Digitized by Google

զի 'ի բարկութենէ գինւոյ պոռնկութեան նորա արբին ամե-
նայն ազգք. և թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան.
և վաճառականք երկրի՝ 'ի նորա զօրութենէ յօրանալոյ մե-
4 ծացան: * Եւ լուայ ձայն յերկնից զի ասէր. ելէք 'ի
միջոյ դորա՝ ժողովուրդ իմ, զի մի հաղորդ լիցիք մե-
5 ղաց դորա, և մի 'ի հարուածս դորա ընդունիցիք. * զի
հասին կցեցան մեղք դորա մինչև յերկինս. և յիշեաց
6 ած զամպարշտութիւնս դորա: * Եւ հատուցանէք դմա՝
ըստ և հատոյցն մեզ, և առցէ դա երկպատիկ ըստ գոր-
ծոց իւրոց. և ըմպանակին որով խառնեաց՝ խառնեցէք
7 դմա կրկին: * Եւ որչափ փառաւորեաց զինքն և խայ-
տաց, այնչափ հատուցէք սմա սուգ. զի 'ի սրտի իւ-
րում ասէր՝ թէ յամ ժամ նստայց ես թագուհի՝ և
8 այրի ոչ եւս եղէց: * Վասն այնորիկ 'ի միում աւուր
եկեսցեն 'ի վերայ դորա հարուածք՝ մահ, և սուգ,
և սով, և 'ի հուր այրեսցի. զի հզօր է տէր ած՝ որ
9 դատեցաւն զդա. * և լալցեն՝ և կոծեսցին 'ի վերայ
դորա թագաւորք երկրի՝ որք ընդ դմա պոռնկեցան և
խաղացին. և հեծեսցեն յորժամ տեսցեն զծուխ կիզ-
10 ման տանջանաց դորա: * 'Ի հեռաստանէ կայցեն վն
երկիւղի տանջանաց դորա՝ և ասասցեն. վայ քաղա-
քիդ մեծի բաբելոնի. քաղաք հզօր՝ զի 'ի միում ժա-
11 մու եկին հասին դատաստանք քո: * Եւ վաճառականք
երկրի ողբասցեն և սգասցեն 'ի վերայ քո, զի ըզ-
12 բեռն նց ոչ ոք գնէ: * և շահք որ 'ի քէն՝ ոչ եւս ի-
ցէ, ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ և
մարգարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և որ-
դան, և ամ փայտ խնկոյ՝ և ամ անօթ փղոսկրեայ, և
ամ անօթ 'ի փայտէ պատուականէ և 'ի պղնձոյ և յեր-
13 կաթոյ և 'ի կճոյ. * և կինամոմոն, և ամ խունկ, և
իւղ և կնդրուկ, և գինի և ձէթ, և նաշիհ և ցորեան,
և անասունք ամ, արջառ և ոչխար. և երիվարաց
և կառաց՝ որ վայել է մարմնոց և ոգւոց մարդկան:

* և

կատ անկաւ բաբելոն": (4) Ոսկան. ելէք 'ի դորա. Ժողովուրդ, և մի
պհարուածս դորա ընդունիցիք: (5) Ոսկան. Քզի հասին մեղք
նր մինչ".. և յիշեաց տր զանօրէնութիւս նր: (7) 'Ի լուսն".
Եւ խայտաց, այնչափ հատուցէք դմա: (7) Ոսկան յաւե-
լու. Ոչ եւս եղէց. և զսուգ ոչ տեսից: (8) Ոմանք. Դա-
տեցաւն զնա: (9) Ոմանք. Եւ լալցեն և կոծեսցին թգրք
երկրի 'ի վր դորա... կիզման դորա: (10) Ոմանք. 'Ի
հեռաստանէ կացցեն: (10) Ոսկան. Վայ վայ քաղա":
(11) Ոմանք. Զի զբեռինս նց ոչ ոք է որ գնէ: (12) Ոս-
կան. Եւ շահ որ 'ի քէն: (12) Ոմանք. Փայտ խնկոց:
(13) Ոսկան. Եւ արջառ և ոչխար, երիվարաց և կա":

Digitized by Google

* Եւ ամ ցանկութեան անձին քոյ գնաց 'ի քէն, եւ ամ 14
լուսափայլ վայելչութիւն, պարարտն եւ գէրն եւ ազն
ուականն գնաց 'ի քէն, եւ ոչ եւս գտցես զայդ։ * Եւ ամ 15
բաժանավաճառք այսորիկք մեծացեալք 'ի քէն 'ի բաց կաց-
ցեն վն երկիւղի տանջանաց քոց լալով՝ եւ սուգ առ-
նելով, * աղաղակեն. վա՜յ վա՜յ քաղաքդ մեծ, որ զգեցեալ 16
էիր բեհեզս եւ ծիրանիս եւ որդան, ոսկեզօծս՝ եւ քա-
րինս պատուականս՝ եւ մարգարիտս. * զի 'ի միում 17
ժամու ապականեցաւ այնչափ մեծութիւն քո. եւ ամ. նա-
ւավար՝ եւ ամ որ 'ի տեղիս տեղիս նաւէին, եւ նաւորդք,
եւ որք միանգամ ծովականաւ գործէին՝ 'ի հեռաստանէ
կայցեն լալով, * եւ աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ 18
հրդեհին նր, ասելով. ո՞ նման է քաղաքիս այսմիկ մեծի։
* Եւ արկցեն հող 'ի վերայ գլխոց իւրեանց, եւ գո- 19
չելով ձայնիւ մեծաւ՝ լալով եւ սգալով աղաղակեն.
վա՜յ վա՜յ քաղաքդ մեծ, որով ամենեքեան մեծատունք՝
որք ունէաք զնաւս 'ի ծովս՝ վասն պատուականութեն
քոյ. զի 'ի միում ժամու ապականեալ կործանեցար։
* Ուրախ լերուք 'ի վերայ նորա երկինք՝ եւ սբ առա- 20
քեալք եւ մարգարէք. զի դատեցաւ ած զդատաստանս
ձեր 'ի դմանէ։ * Եւ առ հրեշտակին հզօր՝ քար մի իբ- 21
րեւ զերկան մեծ, եւ ընկէց 'ի ծով՝ ասելով. սոյնպէս
յարձակմամբ անկցի բաբելոնի քաղաքդ մեծ, եւ այլ ոչ
եւս գտցի։ * Եւ ձայն քնարերգաց եւ երաժշտականաց՝ 22
արուեստականաց՝ եւ փողահարաց՝ եւ թմբկի, այլ ոչ
եւս լուիցի 'ի քեզ։ * Եւ լոյս ճրագի եւ ձայն երկանի՝ 23
այլ ոչ եւս երեւեսցի 'ի քեզ. եւ ձայն փեսայի եւ ձայն
հարսին՝ այլ ոչ եւս լուիցի 'ի քեզ. եւ ոչ վաճառականք
քո փառաւորք եւ մեծամեծք երկրի, որ զուարճացեալ
էին 'ի քեզ. վն զի կախարդութեամբ դեղատուութէ քոյ
մոլորեցան ամենայն ազգք։ * Եւ 'ի քեզ ամենայն ա- 24
րիւն մարգարէից եւ սրբոց գտաւ, եւ ամենայն զենե-
լոց յերկրին կենդանեաց։

ԳԼ.

---

(14) Օրինակ. Եւ ոչ եւս այլ գտցես։ (15) Օրինակ. Եւ սուգ առնելով ա՛՛։ (16) Ոմանք. Եւ աղաղակեն. վայ։ (16) Օրինակ. Եւ ոսկեզօծս։ (17) Օրինակ. 'Ի միում ժամու ապականեցաւ այսչափ մե՛՛... նաւէին նաւավարք... կացցեն լալով։ (18) Ոմանք. Եւ ասելով։ (19) Ոմանք. մեծանայցին որք ունէին զնաւս 'ի ծովս։ (20) Ոմանք. Զի դատեաց... ձեր 'ի նմանէ։ (21) Ոմանք. Եւ էառ հրեշտակ մի հզօր զքար։ (21) Օրինակ. Քար մի մեծ իբրեւ զերկան, եւ ընկէց։ (23) Օրինակ. Փեսայի եւ հարսին ոչ եւս լուիցի 'ի քեզ... դեղատուութէ քո. մոլորեցան ամենայն ազինք։

Digitized by Google

Գլ. ԺԹ.

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յեր ծ.Ջ.
կինս՝ ասելով. ալէլուիա, փրկութիւն և փառք և
2 պատիւ և զօրութիւն այ մերում. * զի ճշմարիտ և ար-
դար են դատաստանք նր. զի դատեաց զպոռնիկն մեծ
'ի պոռնկութեան իւրում, և խնդրեաց զվրէժ արեան ծա-
3 ռայից իւրոց 'ի ձեռաց նր: * Եւ կրկին անգամ օրհ-
նեցին՝ և ասացին, ալէլուիա. և ծուխ նորա ելանէր
4 յաւիտեանս յաւիտենից: * և անկան քսան և չորք ե-
րիցունքն՝ և չորք կենդանիքն, և երկիր պագին այ՝
որ նստէրն յաթոռ փառաց, ասելով. ամէն՝ ալէլուիա:
5 * Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. օրհնեցէք
զած ամ ծառայք նր, և որք երկնչիք 'ի նմանէ՝ փո-
6 քունք և մեծամեծք: * և լուայ ձայն բազմութեան մե-
ծի՝ իբրև զձայն ջուրց բազմաց, և իբրև զձայն հզօր
որոտմանց, ասելով դարձեալ. ալէլուիա, զի թա-
7 գաւորեաց տր ամենակալ: * Խնդասցուք՝ և տասցուք փառս
նմա, զի եկին հարսանիք գառինն:
8 Եւ կինն հարսն նր պատրաստեաց զինքն. * և տուաւ ծ.Ե.
նմա զգենուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս.
9 որ է բեհեզն արդարութիւն սրբոցն: * Եւ մի յերի-
ցանցն ասէր ցիս: գրեա՛ զայդ, երանելիք են ամենե-
քեան՝ որ կոչեցեալքն յընթրիս հարսանեաց գառինն:
10 * Եւ ես անկեալ առաջի ոտից նորա, երկիր պագի
նմա: և ասէ ցիս. անսա՛ մի անկանիր առաջի իմ, քան-
զի և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝ որք ու-
նին զվկայութիւնն յի քի. ած այ միայն երկրպագեա.
քանզի հաստատութիւն յի է տեսիլդ, և հոգի մար-
գարէութեանց. զի վկայութիւն յի է՝ հոգւովն սրբով՝
որ 'ի մարգարէսն էր:
11 * Եւ տեսի զերկինս բացեալ, և ահա ձի սպիտակ, ծ.Ը.
որ հեծեալն էր 'ի նմա՝ հաւատարիմ և ճշմարիտ, և
12 արդարութեամբ դատի՝ և պատերազմի: * և աչք նորա
բոց հրոյ, և 'ի վերայ գլխոյ նր պսակս բազումս. և
ու-

Գլ. ԺԹ. (1) Ոմանք. Եւ յետ այսորիկ լուայ: (1) Ոս-կան. ԱԾ մերոյ: (4) Ոմանք. Քսան և չորս երէ''... և երկրպագեցին այ որ .. յաթոռն: (5) Ոմանք. Զած մեր ամ ծա'': (6) Ոմանք. Հզօր որոտմանց .. ած մեր ամե-նա'': Ոսկ. Տր ած մեր. ա'': (7) Ոմանք. Խնդասցուք և ցնծասցուք, և տասցուք: (7) Ոսկան. Եւ կին նր պատրաստա'': (9) Ոմանք. Ասէ ցիս. գրեա՛: (10) Ոսկան. Ոտից նր, զի երկրպագից նմ: և ասէ ցիս: (10) Ոմանք. Յիսի է, և հոգւովն սրբով: (11) Ոմանք. Եւ որ հեծեալն էր:

Digitized by Google

ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ին-
քըն: * Եւ արկեալ զիւրեւ հանդերձ ներկեալ արեամբ. 13
և կոչէր անուն նր Բան Այ: * Եւ զօրականք երկնից՝ 14
և զօրք երկնից զհետ երթային նր ձիովք՝ զգեցեալք
բեհեզս սուրբս և սպիտակս: * Եւ 'ի բերանոյ նորա 15
ելանէր սուր սրեալ. զի նովաւ հարցէ զազգս. և նա
հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ. և նա կոխես-
ցէ զհնձան գինւոյ՝ ցասման բարկութեան Այ ամենակա-
լի: * Եւ ունէր 'ի վերայ պատմուճանի իւրոյ, և 'ի վ̃ր 16
անդամոց իւրոց գիր գրեալ. Թագաւոր թագաւորաց,
և Տէր տերանց:

Ծմթ* Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր 'ի վերայ արեգա- 17
կան, զի աղաղակեաց 'ի ձայն մեծ առ համայն թռչ-
չելոց ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկայք ժողովեցա-
րուք յընթրիս մեծին Այ. * և կերիջիք զմարմինս թա- 18
գաւորաց, և զմարմինս երիվարաց՝ և առ հեծելոց 'ի
նոսա, և զմարմինս ազատաց և ծառայից՝ մեծի և փո-
քու: * Եւ տեսի զգազանն՝ և զթագաւորս երկրի՝ 19
և զզօրս նց ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ,
որ հեծեալն էր 'ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նր: * Եւ 20
ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա սուտ մարգարէն,
որ առնէր զնշանս առաջի նր, և զորս մոլորեցոյց և
ետ առնուլ զգրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատ-
կերի նր. և կենդանւոյն արկին զնս 'ի լիճ հրոյ այրե-
ցելոյ ծծմբով. * և այլքն մեռան 'ի սրոյ հեծելոյն 21
'ի վերայ ձիոյն՝ յորոյ բերանոյ ելանէր սուրն. և ամ
թռչունք յագեցան 'ի մարմնոց նոցա:

ԳԼ. Ի.

Կ Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից, և ու- 1
նէր զփականս դժոխոց, և շղթայ մեծ 'ի ձեռին
իւրում. * և ըմբռնեաց զվիշապն զառաջին, որ է բան- 2
սարկուն և սատանայ, և կապեաց զնա հազար ամ.
* և արկ զնա յանդունդս դժոխոց, և փակեաց և կնի- 3
քեաց զնա՝ զի այլ մի եւս մոլորեցուսցէ զազգս, մին-
չև կատարեսցի հազարամեակն. և յետ այնորիկ պարտ է
լուծանել նմա սակաւ մի ժամանակ:

* Եւ

---

(13) Ոմանք. Արկեալ զիւրեւ հանդ": (14) Ոսկան յա-
ռելու. Ձիովք սպիտակօք: (17) Ոսկան. Եւ ժողովեցա-
րուք: (18) Ոմանք յաւելուն. Քիլիարքաց, և զմարմինս հզօրաց.
և զմարմինս երիվարա": (20) Ոմանք. Եւ ընդ նմա սուտ:
(20) Յօրինակին. Արկին զնա 'ի լիճ:
Գլ. Ի. (2) Ոմանք. Զվիշապն զօձն առաջին . . . զնա
զհազար ամ: (3) Ոմանք. Լուծանիլ նմա սակաւ ժա

Digitized by Google

4 * Եւ տեսի աթոռս, եւ նստան 'ի վերայ նոցա. եւ դա- ԿԱ
տաստանութիւն տուաւ նոցա՝ ընտրել զհոգիս չարչարելոցն
վասն վկայութեանն յիի՝ եւ վասն բանին այ. եւ զորս ոչ
երկիր պագին գազանին, եւ ոչ առին զդրոշմ նորա 'ի
ճակատս իւրեանց՝ եւ ոչ 'ի վերայ աջոյ ձեռին իւ-
րեանց. եւ կեցին՝ եւ թագաւորեցին ընդ քի հազար ամ:
5 * Եւ յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ ոք եկաց, մինչեւ 'ի ԿԲ
6 կատարել հազարն ամին: այս է յարութիւն առաջին: * Եր-
անի սրբոցն, որք ունին բաժին 'ի յարութեանն առաջ-
նում. 'ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխա-
նութիւն. այլ եղիցին քահանայք այ՝ եւ նն յիի քի.
եւ թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ:
7 * Եւ յետ հազար ամին լուծցի սատանայ՝ եւ հանցէ ԿԳ
'ի բանտէ անտի. ելցէ եւ մոլորեցուսցէ զազգս որ է
չորս կողմանս երկրի. եւ զգոգ եւ զմագոգ, ածցէ 'ի ձեռս՝
ժողովել նոցա զամ զօրս 'ի պատերազմ. որոց թիւ նոցա
8 իբրեւ զաւազ ծովու: * Եւ ելցեն 'ի լայնութիւն երկրի,
եւ պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն, եւ զքաղաքն
9 սիրելայ: * Եւ իջցէ հուր յերկնից առ 'ի յայ՝ եւ կե-
րիցէ զնս, եւ զզօրապետութիւն նոցա զսատանայ՝ որ մոլո-
րեցուցիչ զնս. եւ արկցէ զնս 'ի ծովն հրոյ եւ ծծմբոյ
10 ուր եւ գազանն՝ * եւ սուտ մարգարէն: եւ չարչարես-
ցին զտիւ եւ զգիշեր:
11 * Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, եւ 'ի վերայ նր նստ- ԿԴ
եալ՝ յորոյ երեսացն երկնչէին եւ փախչէին երկինք եւ
12 երկիր. եւ տեղի ոչ գտաւ նց: * Եւ տեսի զմեռեալս
մեծամեծս եւ զփոքունս որ կային առաջի աթոռոյն.
եւ գրեանք բանային. եւ այլ գիրք բացաւ կենաց, եւ
դատեցան մեռեալք 'ի գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց:
13 * Եւ ետ ծով զմեռեալս իւր, եւ մահ եւ դժոխք զիւր-
եանց մեռեալս. եւ դատեցան իւրաքանչիւր ըստ գոր-
14 ծոց իւրեանց: * մահ՝ եւ դժոխք մատնեցան 'ի լիճ հր-
15 րոյն: * եւ որ ոչ ոք գտաւ 'ի գիրն կենաց գրեալ՝ ար-
կաւ 'ի լիճ հրոյն:

ԳԼ.

մանակս: (4) Ոմանք. Զդրոշմն նր... ընդ քի մինչեւ 'ի հազար ամ: (6) Ոմանք. Երկ մահ ոչ: (6) Յօրինակին. Ընդ նմա հազար ամ: (7) Ոմանք. Որոց թիւ նոցա իբ": (8) Ոմանք. 'Ի լայնութիւս երկ": (8) Ոսկան. Պատեսցեն զբանակս սրբոց եւ զքաղաքն սիրելի: (9) Ոմանք. 'Ի յերկնից առ յայ. եւ կերիցէ զնս. եւ արկցէ զնս: (12) Ոմանք. Զմեծամեծս եւ: (14) Ոսկան յաւելու. Եւ մահ եւ դժոխք մատնեցան 'ի լիճն հրոյ. այս է մահն երկրորդ: (15) Ոմանք. Եւ որ ոք ոչ գտաւ 'ի:

Digitized by Google

ԳԼ. ԻԱ.

ԿԵ Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր. քանզի առա- 1
ջինն երկինք և երկիր անցին. և ծով ոչ գոյր։ * Եւ 2
զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի իջանէր յԱյ ի յերկ-
նից՝ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն՝ առն
իւրոյ։ * Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր. ահաւա- 3
սիկ խորանն Այ 'ի մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա։
և նոքա ժողովուրդ նմա. և սա Ած նոցա։ * Եւ ջնջեսցէ 4
զամ արտասուս յաչաց նոցա. և մահ ոչ ևս գոյ, ոչ սուգ՝
և ոչ աղաղակ, ոչ ցաւք՝ և ոչ աշխատութիւնք ոչ ևս գոյ,
զի առաջինն անցին։

ԿԶ * Եւ ասաց ցիս՝ որ նստէր 'ի վերայ աթոռոյն. ահա- 5
ւասիկ առնեմ զամ նոր. և ասաց ցիս., գրեա. զի այս
բանք ճշմարիտ և հաւատարիմք են։ * Եւ ասէ ցիս. ե- 6
ղէ՛. ես ալփան և ով, սկիզբն և կատարած. ես ծարա-
ւելոցն տաց յաղբերէ ջրոյ կենաց ձրի։ * Որ յաղթէ, 7
ժառանգեսցէ զայս ամ. և ես եղէց նմա Ած, և նոքա
եղիցին ինձ որդիք։ * Եւ ծուլացն և անհաւատից՝ սպա- 8
նողաց և պոռնկաց՝ և կախարդաց և կռապաշտից՝ և
գեղատուաց, և ամենայն ստոց՝ անպարկեշտաց, որոց
բաժինն իւրեանց 'ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով.
որ է մահն երկրորդ։

ԿԷ * Եւ եկն առ իս մի յեւթն հրեշտակացն, որք ունէին 9
զեւթն սկաւառակսն լցեալս եւթն վախճանաւ կա-
տարածովք, խօսեցաւ ընդ իս և ասէ. եկ՝ ցուցից քեզ
զհարսնն և զկին գառինն։ * Եւ առ տարաւ զիս 'ի լե- 10
առն մի բարձր և մեծ՝ հոգւովն, և եցոյց ինձ զքա-
ղաքն մեծ և սբ՝ Եչմ, զի իջեալ էր յերկնից առ 'ի յԱյ.
* Եւ ունէր զփառս Այ։ և էր 'ի նմա լուսաւորութիւն 11
նմանեալ ականց պատուականաց՝ քար յասպիս սառ-
նատեսակ և կենդանի։ * Եւ էին պարիսպք նորա մեծ 12
և բարձր, և ունէր դրունս երկոտասան. և յերկոտա-
սան դրունսն երկոտասան հրեշտակս, և անուանք իւ-
րաքանչիւրոցն 'ի վր դրանցն գրեալ էին՝ ըստ երկոտա-
սան

Գլ. իա. (1) Ոսկան. Առաջին երկին և եր"։ (2) Ոմանք. Որպ և հարսն առն։ (3) Ոսկան. Ձայն մեծ յերկնից որ ա"։ (4) Ոսկան. Ոչ աշխատանք ևս գոյ։ (5) Ոմանք. Նստէրն 'ի վր... և ասէ ցիս. գրեա։ (5) Ոսկան. Ճշմարիտք են և հաւ"։ (6) 'Ի լուս". Նշանակէ՝ այբ և քէ։ (9) Ոսկան. Մի յեօթանից հրեշտա"... վախճանովք կատարելովք։ (10) Ոմանք. Եւ մեծ՝ հոգւով... զի իջեալ յերկնից առ յԱյ։ (11) Ոսկան. Եւ 'ի նմա լուսաւ"։ (12) Ոմանք. Իւրաքանչիւր 'ի վր դր"։

Digitized by Google

13 սան ցեղիցն Իլի։ * Յարեւելից կողմանէ դրունք երեք
և 'ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք, և 'ի հարա-
ւոյ կողմանէ դրունք երեք, և յարեւմտից կողմանէ
14 դրունք երեք։ * Եւ պարիսպք քաղաքին՝ ունէր հիմ-
մունս երկոտասան, և 'ի նոսա երկոտասան անուանք՝
15 երկոտասան առաքելոց գառինն։ * Եւ որ խօսէրն ընդ
իս՝ ունէր եղէգն ոսկի 'ի ձեռին իւրում, զի չափեսցէ
16 զքաղաքն՝ և զդրունս նր՝ և զպարիսպս նր։ * Եւ էր
քաղաքն քառակուսի. և որչափ երկայնութի նր՝ նոյն
չափ և լայնութի՝ և բարձրութի՝ հաւասար։ և էր չափ
երկայնութե նր՝ երկոտասան հազար ասպարէզս. և
17 լայնութի նր և բարձրութի միաչափ՝ կիվաւս։ * Եւ
չափեաց զպարիսպն նր հարիւր և քառասուն և չորս
18 ասպարէզս. չափ մարդոյ՝ որ է հրեշտակի։ * և էր շի-
նուած պարսպաց քաղաքին յասպիսե. և քաղաքն էր
19 ոսկի մաքուր՝ նման ապ և սպիտակ ապակւոյ։ * Եւ
հիմունք քաղաքին յամ ականց պատուականաց. հիմն
առաջին պարսպին յասպիս, երկրորդն՝ շափիղայ, եր-
20 րորդն՝ պղնձագոյն, չորրորդն՝ զմրուխտ, * հինգե-
րորդն՝ եղեգնաքար, վեցերորդն՝ սարդիոն, եւթնե-
րորդն՝ ոսկեքար, ութերորդն՝ բեւրեղ, իններորդն՝
տպազիոն, տասներորդն՝ քրիսոպրասաւս, մետասանն՝
21 յակինթ, երկոտասանն՝ ամեթուիս։ * Եւ էին երկոտա-
սան դրունք յերկոտասան մարգարտաց՝ միաձև. և իւ-
րաքանչիւրոցն դրունքն էին մի մի դուռն 'ի միոյ միոյ
մարգարտէ. և ընդարձակութի քաղաքին ոսկի մաքուր՝
22 ապ զապակի պայծառ։ * և տաճար ոչ տեսի 'ի նմա,
քանզի տր ած ամենակալ տաճար էր 'ի նմա՝ և գառնն։
23 * Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի, զի
լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն այ լուսաւորէին
24 զնա յամ ժամ. և ճրագ 'ի նմ գառնն։ * և գնասցեն հե-
թանոսք 'ի լոյս նր. և թագաւորք երկրի լուսազգեստ
25 լինէին 'ի փառաց նր։ * Եւ դրունք նր ոչ փակէին 'ի
տուէ և 'ի գիշերի, այլ բաց կային հանապազորդ.
26 և գիշեր՝ ոչ ևս լինէր 'ի նմա. * այլ փառք և պատիւ
27 ազգաց։ * և ոչ մտցէ անդ ամենայն չարակամ՝ և պիղծ
և

---

(14) Բղձ. Եւ պարիսպ քաղաքին։ (16) Ոմանք. Երկայ-
նութիւն և բարձրութիւն ... հազար ասպարէզ։ (19) Օ-
րինակ մի. Եւ էր հիմունք քա"։ (20) Ոմանք. Եղեգնաքա-
քար ... բիւրեղ։ (20) 'Ի լուսո". Քրիսոպրասաւս։ Հա-
մաձայն ամանց։ այլ ամ գրչագիրք ունին Խռիզոմպրասոն։
(20) Ոմանք. Քրիսոպրա. մետասաներորդն յակինթ. եր-
կոտասաներորդն ամեթոս։ (21) Ոմանք. 'Ի միոյ միոյ մար-
գարտոյ։ (26) Ոմանք. Եւ պատիւ ազգաց 'ի նմա։

Digitized by Google

սառնատեսակ, որ ելանէր յաթոռոյն Այ եւ գառինն։

ԳԼ. ԻԲ.

ԿԸ Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ՝ սառնա- 1
տեսակ, որ ելանէր յաթոռոյն Այ եւ գառինն։
* Եւ գնայր ՚ի մէջ հրապարակաց քաղաքին. եւ զեզերբ 2
գետոյն աստի եւ անտի ծառ կենաց՝ որ բերէր պտուղս
երկոտասան. ըստ միոյ միոյ ամսոց տայր զպտուղս իւ-
րեանց. եւ տերեւ ծառոյն՝ էր բժշկութիւն հեթանոսաց։
* Եւ նզովք անդ՝ ոչ եւս էին. եւ աթոռն Այ եւ գառինն 3
նր էր ՚ի նմա. եւ ծառայք նր պաշտէին զնա. * եւ տե- 4
սանէին զերեսս նր. եւ անուն նր գրեալ էր ՚ի ճա-
կատս նց։ * Եւ գիշեր ոչ անդ, եւ չէր ինչ անդ պէտք 5
ճրագի եւ լուսոյ արեգական. զի Տր Այ լուսաւորէր
զնս. եւ թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։
ԿԹ * Եւ ասէ ցիս. այս բանք հաւատարիմ են եւ ճշմարիտ. 6
եւ Տր Այ մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր՝
ծառայից իւրոց ցուցանել զոր լինելոց է վաղվաղա-
կի։ * Երանի որ պահէ զբանս մարգարէութեանս գրոյս։ 7
Հ * Եւ ես Յովհաննէս լուայ՝ եւ տեսի զայս ամ. եւ յոր- 8
ժամ լուայ եւ տեսի, անկայ եւ երկիր պագի հրեշտա-
կին՝ որ ցուցանէր ինձ զայս ամ։ * Եւ ասէ ցիս. մի՛ 9
անկանիր առաջի իմ՝ եւ երկիր պագաներ. քանզի եւ
ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց՝ որ պահեսցեն
զբանս մարգարէութեան գրոյս այսորիկ. Այ երկիր պագ։
ՀԱ * Եւ ասէ ցիս դարձեալ. մի՛ կնքեր զբանս մարգա- 10
րէական գրոցս այսմիկ. քանզի ժամանակս մերձ է։
* Որ անպարշտելոցն է՝ անպարշտեսցի, եւ որ աղտե- 11
ղանալոցն է՝ աղտեղասցի, եւ որ արդարանալոցն է՝ ար-
դարասցի, եւ որ սրբելոցն է՝ սրբեսցի։ * Ահա՝ գամ 12
վաղվաղակի՝ եւ վարձք իմ ը̅ իս, հատուցանել իւրա-
քան

Գլ. Իբ. (2) Ոմանք. Եւ գնայր ընդ մէջ.. եւ զեզերբք գետոյն.. ծառս կենաց, որք բերէին պտ".. միոյ ամսոյ... եւ տերեւ ծառոցն էր։ (5) Ոսկան. Գիշեր ոչ էր անդ, եւ ոչ էին անդ պէտք։ (5) Ոմանք. Եւ չէին անդ պէտք։ (6) Ոսկան. Հաւատարիմք են եւ ճշմարիտք... որ լինելոց է։ (7) Ոմանք յաւելուն. * Ահա գամ վաղվաղակի երանի որ պահէ։ (7) Ոսկան. Մարգարէութեանս այսորիկ։ (8) Ոսկան. Ես Յօհաննէս։ (9) Ոմանք. Ծառայակից եմ քո։ (9) Ոսկան. Որք պահեն զբանս։ (10) Ոսկան. Մրգրէական գրոյս այսորիկ։ (12) Ոմանք. Ահա ես գամ վաղ"։ (12) Ոսկան. Ընդ իս է.. իւրաքանչիւր զգործս իւրեանց։

Digitized by Google

13 քանչիւր ըստ գործս իւրեանց։ * Ե՛ս եմ ալփա եւ ով,
14 սկիզբն եւ կատարած, առաջին եւ վերջին։ * Երանե-
լիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա. նոքա ունին
իշխանութիւն ուտել 'ի փայտէն կենաց՝ եւ մտանել ընդ
15 դրունս քաղաքին։ * Այլ ելցեն արտաքս շունք, եւ
դեղատուք, սպանօղք, եւ կռապաշտք, եւ ամենեքեան
որ սիրեն զստութիւն։
16 * Ես յս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եւ կե-
կեղեցեացդ. Ես արմատ եւ սեռ 'ի Դաւթայ, եւ աստղ
17 պայծառ առաւօտին։ * Եւ հոգի՝ եւ փեսայն՝ որ գա-
լոցն եմ. եւ որ լսէ՝ ասելով թէ եկ, եւ որ ծարաւի ի-
ցէ՝ եկեսցէ, եւ որ ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի։
18 * Վկայեմ եւ ես ամի՝ որ լսէ զբանս մարգարէութեան
գրոցս այսմիկ. թէ ոք յաւելցէ 'ի սա՝ յաւելցէ ած
'ի վր նր զեւթն հարուածսն գրեալս 'ի գիրս յայս։
19 * Եւ եթէ ոք պակասեցուսցէ 'ի բանից մարգարէութե
գրոցս այսմիկ՝ պակասեցուսցէ եւ հատցէ ած զբաժին
նր 'ի ծառոյն կենաց, եւ 'ի քաղաքէն սրբոց՝ որ գրեալ
20 է 'ի գիրս յայս։ * Ասաց՝ որ վկայեացն զայս. գամ ես
21 վաղվաղակի. ամէն։ Ե՛կն տր յս քս։ * Շնորհք տն
մերոյ յսի քսի 'ի վերայ ամ սրբոց։ Ա՛մէն։

---

(13) 'Ի լուս''. 'Ի ՀՐ՝ ալփա եւ ով. Նշանակի. այբ եւ քէ։ (15) Ոմանք. Եւ սպանողք.. ոյք սիրեն զստ''։ (16) Ոմանք. Ես եմ յարմատոյ եւ 'ի սեռէ Դաւթայ։ (16) Ոսկան. 'Ի սեռէ Դաւթի.. առաւօտու։ (17) Ոսկան յաւելու. Գալոցն եմ. Եւ հարսնացն ասէն՝ եկ։ եւ որ լսէ ասասցէ թէ եկ։ (17) Ոմանք. Ծարաւի է։ (18) Ոմանք. Վկայեմ ես։ (18) Ոսկան. Գրոցս այսորիկ։ (19) Ոմանք. Գրոցս այսմիկ... եւ 'ի քաղաքէն սրբոց։ (20) Ոսկան. Ասէ որ վկայեաց զայսոսիկ... եկ տր յս։ (20) Ոմանք. Տր մեր յս քս։ (21) Ոմանք. Տն յսի քսի։

* 'Ի ձախմանի Գրոցս յայտնութե՝ քՂմ յարէն զՀանգիստն յովհ-աւետարանչի. զորմէ զանց արարեալ օրինակս մեր՝ զոր ասէ ... րան ներքոյ ... Յորում ցուցեալ նախնեացն 'ի վկայութիւն հարց՝ թէ ընկալեալ է Գիրս այս յեկեղեցւոյ 'ի կարգ աստուածաշունչ նոցա ..., յարէ, * Որոց եղեալ եւ մեք ընթացակից՝ 'ի մէջ եկեղեցւոյ մանկանս ... զայսն 'ի տպագրութե աստուածաշնչական մատենիցս, ոչ արդարեւ աստուածաշնչական յայտնութե, եւ ... արարքս ... 'ի հեղինակութեան ի-մաստասիրութեան ներքոյ թարգմանութե, ընդ որ եւ ընծայութե ... նոցին սուրբն, ամէն յեկեղեցւոյ հայոց ||։ Որք եւ յատուկ ընթացեալ բանիւն՝ ... արարեալ ... թղթոյս ...։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵՆԻՍ

Յորում պարունակի Նոր կտակարան · սկսեալ 'ի Մատթէոսի աւետարանէն մինչև ցՅայտնութիւն ։

որ է

ՎԱԽՃԱՆ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ·

Digitized by Google

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԽԱՑՈՒՆՋ ՄԱՏԵՆԻՍ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ․

Ըստ մերումս խոստման 'ի նախաբանութեան անդ՝ և յընթացս ծանօթութեանց, աստանօր 'ի վախճանի պատշաճ վարկաւ ամփոփել առանձինն, ոչ միայն զթողեալ գրուածս 'ի կարգէ մերումս առաջին եդեալ գաղափարի, զորոց [illegible] եմք․ այլ և զոր միանգամ գտաք յայլ օրինակս վերաբերելս առ նոյն նպատակ ։ Վասն որոյ 'ի սոսա զառաջին փեղկն ըստ արժանւոյն սունիմք առ՝ գրոյն Սերապայ․ զոր ունէին երեք նորագիր օրինակք 'ի բովանդակութեան մատենին՝ յետ գրոյն իմաստութեան դասելոյ․ և արտաքոյ 'ի ձանի մի առանձնական գրչագիրս․ որպէս յուցեալ եմք 'ի յառաջաբանին ։

Երկրորդ կարգեցաք զգիրսն Եղիշէ վրդ, որ ըստ նախնականին համարի Եղիայ վրդ․ զոր և ունէին երեք նորագիր օրինակք․ մի՝ չորրորդն․ հինգերորդն, և եւթներորդն, յետ երկից Եղիշէ գրելոյ․ սակայն առանց յառաջաբանի և ցանկի գլխոց ։ որով՝ և այլևս համգամանօք շարադրութե ոճոյն, յայտնագիւ երևէր յետոյ ուրեմն թարգմանեալ՝ և հաւաքեալ 'ի հնանոն գրոցն․ այլ թէ յորմէ [illegible] գրէ և երբ կամ յոյր ձեռն, չունիմ ասել ստուգապէս ։ Քանզի կամեցեալ մեր բաղդատել զորն զայս ընդ նախնականին, զոր թարգմանեաց Ոսկան, այնչափ զանազանութիւն գտանեմք 'ի նոսա․ մինչև բազում ուրեք չլինել իսկ և ընդունելի համեմատութ․ թէպէտ և այնու [illegible] ջանացաք ըստ կարի զհամաձայնութիւն գլխոց և բանից շարադրեկանին առ ընթեր նշանակել․ զոր և երկոքեան 'ի վերոյ ասացեալ օրինակացն [illegible] էին, և անխափան թողեալ ։

Երրորդ՝ ոչ էր դժուարին արդեօք յայս յաւելուածս ու-

րոյն

Digitized by Google

բոյն դնել և զբրհմաւթեն աստուածաբանին․ Զոր Կիրլակեր կաղափարս Վեր ևեթ ուներ յարեալ ՚ի ձախմեան խաբաչան-չեար յանձնաց աստուածոյն․ որ ծանուցեալ ևս անդանօր։ Այլ պատրաստ չարափառութեան մարենիս նախանձն զեղ զարդա-պետն եղեւութեան քանեց ՚ի Վերայ յառելուլ, ՚ի սակս դառուղնա-ջեայ փարքեբրութեցն որ կրանին ՚ինա։ Եւ ջանալի ՚ի համ-մարի նոցին եր և Աղօթիչն մանաւանդ Թէրին, զայն և եւ ըմբռնեալ հարկեցաւ, որ պահանէր յայլ կրկակերս մարենիս։ Զորդ յաւելուած ՚ի դեղ ձարխաջ ասնել զԹուղթն եւ-րնթացութեան պատուղս առաջեալ, հանդերձ պիտանեան-րին առաջելոյ։ Քանզի այս Թուղթ կրանեին կրեԹէ յամ Կրկակերս օրինակս մարենիս, ՚ի բաղմանս աղե ՚ի Վերամէ ՚ի ձախման ըրբեջպատան Թղթոյն․ և յոմանս ՚ի ԹՂ ի անդ-զնի եկեղ նորնԹացուցն։ Յայսմ պետճառէ Թերթս հաւաք-յանեալ ոմանց մամբեն պեղնումն Թուղթս ՚ի նորգս Ճառե-ըմԹերցուածոց յետ առաձնաորացն զաբաԹա՝ յառաջդ պե-տուտ Թղթոյն․ որք փնտանի ՚ի Ճառոցն կրելով ՚ի առաքրոյն․ ՚ի Թիլին․ զէ․ և յայլ նորակեր օրինակս եւս։ Թերպետ և առ-ներրոցացն մարենակերս անկեալ եղեալ յոնանական օրհնու-Թեան՝ անծանօԹ Ճայց ՚ի նոցանէ ՚ի քաղում դարս, Թէպէտ զո-րօրենն առդ դասեԹ Վիճակս անկչելոց՝ հանդերձեալ ՚ի ուղղերջԹ անհասատ Թէ օրհնակի սոյս, ՚ի հայկական քաղ-քաքս ՚ի լատին Թարգմանեալ հրատարակեցաւ յամին 1715ի զորս և զրաբարագոյս ճարտիս լաւերուզեայ՝ եւր Թէ ՚ի հայոց անդր հնարեալ իւրեց, մարթ է փնտանել առ մաքրենեաց ՚ի հասարջ". անդրագս Կրոց նոր երամ": Այլ բայց առաքել եղբա-ջին Վերադանեան եղեայ յանկղեայ՝ յայլ հառաքելակերպ կա-ղափարէ Վերոյին Թարգմանեալ ՚ի երկին քարքառ, զի՝ ՚ի յունականն և ՚ի լատինական ըստ հայկական ընակրի՝ յարեալ ՚ի զարդմակրուԹԷ խաղենացոյն տպագրեցին ՚ի լոնդոնա յամին 1736․ Թէեւ ՚ինմա ևս ոչ պահասին վերջացեալ։ Հինգերորդ՝ հարկեցաւ զՀոռնկիսայն յոգնաձեռն առաջելոյ․ այս է՝ Վերջին քան զամն նր․ զոր քաց ՚ի Մերձա՝ քաղաքս յարեալ ունէին զնինի յայտնութէ։ Այս ևս կրաւոծ ես-հրքանէ անդր այնչափ ծանուցեալ ՚ի յարգի եղև առ Մեր-Միջև ոչ Միայն յըմԹերցուածս Ճառոցն և մաղթոցն առ-նուլ, այլ և երբե հասարակ պարկոմ ՚ի Վիճակուցն ու-ծոյն քանիս նր ՚ի ձորդացեդոց, և մանաւանդ Միեւտաքե-

Digitized by Google

ցան 'ի լամբրոնացւոյն ։ Զորմանէ ասեն՝ եթէ չէարդ և ող-
րեն յունահայն օգնէնակերնն, որք և նախընթացէնն, անյայտ
եղեն 'ի գիրս, որով և այն այս ոչ էին 'ի ժամանակէ մա-
տենագրաց եւրոպացւոց ։

Այլ և 'ի յառաջաբանս և 'ի ցանկս գործոց և թղթոյն
առաքելոց՝ շարադրեալ այնոքիւք զորս մեծագոյն եդաք՝ ու-
րաբեալս, որք կարծի՝ ողջոյն յեւթաղեայ անդր, թողաք ըն-
թեռլանդահաւութեա համ շղթայական ընթերցուածոց և վեր-
ուեց՝ յղեն կարի են երկարագոյնէն, հնչելով զայս յաւե-
լուած մատենիս յորդորական բանիւն այսու՝ որ մակա-
գրի՝ Անեբոս եւթաղեայ․ զոր և ամ գրչագիրք ընդ մրուա-
օրինակէ յաքեն 'ի վախճան թղթոցն հաթուածնէից ։ Քանզի
և այս գրուած բանի այնքան պատուեալ՝ յաճախեցաւ առ-
մօր, մինչ զի նաև պարզամիտ ոմանք էին առեալ է-
դաւ 'ի ճաշու ընթերցուածս պատարագին՝ 'ի հապարուն
յուդայի թղթոյն, որ պաշտի 'ի նախընթաց շաբաթ պեն-
տեկոստէին․ որք է տեսանել 'ի գրչագիր ճաշոցս և 'ի տօ-
նացոյցս ։ և յետոյ սրբեն անխորհրդաբար․ որք թուի՝
փոխադրեալ եղև 'ի յետնոյ 'ի բաւն օր պենտեկոստէին՝ իբր
երկիր ընթերցուած զինի գործոյն, ըստորում ունին այ-
սօր տպագիր ճաշոցք և տօնացոյցք ։

Յառաջինմայ յաւելուածս մարթ էր թերևս դնել և
զՄահ վերջասան մարգարէից․ զոր ունէին գրչագիրք մեր
յառաջ քան զբաժանել զնոյն մարգարէութիւն, և զայլ ևս
գրուածս ինչ․ զորոց զանց արարաք 'ի հարկի անդ, որք
և զկարձ երկրորդան նմանակերպ յանդերձ պատմութեան
յուշեցից կեղեցեան և ամանէթ․ զորս յառաջէթ երա-
նաք 'ի վերոյիշատակեալ գրչագրաց ։ Մանաւանդ զարարելոց
երկարագոյն մատենիս՝ որպէս տեսցէք, յայլ տեղողակոյն
առ թեթև հաւանեցուցանէ զմեզ թողուլ զայնոսիկ՝ առանձին
տպագրութեան 'ի լոյս ընծայելոյ․ մինչ երաշխաւոր լինե-
լով այսու նոյին ճշմարտութեան, այլ միայն պատճառս իմն
փափուկ մտաց ուսումնասիրաց, որոց կամք իցեն հետա-
զօտել նախնի մատենագրութեան ։

ԳԻՐՔ

Digitized by Google

ԳԻՐՔ ՍԻՐԱՔԱՅ

Որ կոչեցաւ Յեսու.

Գլ. Ա.

Ամենայն իմաստութիւն 'ի Տեառնէ է. կայ եւ 1
մնայ ընդ նմա յաւիտեան: * Զաւազ 2
ծովու, եւ զշիթս անձրեւաց եւ զաւուրս
ժամկաց ո՞ թուեսցէ երբէք: * Զբարձ- 3
րութիւն երկնից եւ զլայնութիւն երկրի, եւ զանդընդոց
իմաստութիւն՝ զայն ո՞ քննեսցէ: * Յառաջ քան զամ 4
հաստատեցաւ իմաստութիւն՝ զգօնութիւն եւ հանճար յաւի-
տենից էին: * Աղբիւր իմաստութեան 'ի նմա յաւիտենե- 5
ցան: * Մի է իմաստութիւն ահեղ յոյժ՝ որ նստի 'ի վր 8
աթոռոց զօրութեան իւրոյ: * Ինքն Տէր հաստատեաց զնա, 9
* եւ տեսեալ զնա յարարածս իւր, եւ յետ մնացեալ ընդ 10
պարգեւաց իւրոց: * Երկիւղ Տեառն փառք եւ պարծանք, 11
եւ ցնծութիւն եւ ուրախութեան պսակ: * Երկիւղ Տեառն ու- 12
րախ առնէ զսիրտ՝ եւ շնորհս եւ խնդութիւն եւ երկայն
աւուրս մատուցանէ: * Որ երկնչի 'ի Տեառնէ՝ բարի գտցէ 13
'ի վախճանի, եւ յաւուր կատարածի իւրոյ օրհնեսցի:
* Սկիզբն զգօնութեան երկնչել 'ի Տեառնէ: ընդ հաւատա- 16
ցելոյս յարգանդի ստեղծաւ. եւ 'ի վր զաւակի նոցա հա-
ւատարիմ ողորմութեան լինէր: * Կատար իմաստութեան 20
երկնչել 'ի Տեառնէ, եւ լցուցանէ զնոս յարմտեաց իւրոց.
* եւ զամ տունս նոցա լցցէ ամենայն ցանկութեամբ իւրով: * Պսակ 21
զգօնութեան երկիւղ Տեառն, ծաղկեցուցանէ խաղաղութիւն եւ 22
ողջութիւն հանդերձ: * Ինքն հայեցաւ եւ համբարեաց 23
զնա. * զհանճար եւ զիմաստութիւն աւանդապահաց նոր 24
բարձրացոյց: * Արմատք իմաստութեան երկնչել 'ի Տեառնէ. 25
եւ շառաւիղք նորա երկայնակեաց ժամանակաց: * Ոչ է 28
մարթ՝ եթէ արդարացի ցասումն անիրաւութեան,
զի մի չէթ բարկութեան կործանումն անձին իւրում լի-
նիցի: * Առ ժամանակ մի ամբրնե կալ է համբերողի. 29

Գլ. Ա. (2) Ոմանք. Ո՞ թուեսցէ երբէք: (13) Ոմանք. Եւ յաւուրս կատարման: (20) Ոմանք. Պատար իմաստութեան երկնչ: (25) Ոմանք. Երկայնակեաց ժամանակի.

Digitized by Google

20 և մինչև 'ի վախճանն 'ի միջի կալ տամ ուրախութիւն. * և
առ' ժամանակ մի ունել զխորս և պահել զբանս իւր.
և բազում շրթունք պատմեսցեն զգործս իմաստու-
21 թեան նր. * 'Ի գանձս իմաստութեան նր առակք զգօնու-
22 թեան. * Անարգ թուի յաչս ամբարշտին աստուածպաշտութիւն.
23 * Դու ով որդեակ ցանկաս իմաստութեան՝ և պահեա
զնա, և տր սփռեսցէ 'ի քեզ զհանճար և զիմաստու-
24 թիւն. * Զի զգօնութիւն իմաստութեան երկիւղ տն է, * և
25 հաճոյ նմա հաւատք և հեզութիւն. * Մի անհնազանդ
26 լինիր յերկիւղ տն, և մի գնար դու առ նա 'ի միտս
27 երկմտս. * Եւ մի կեղծաւորիր առաջի մարդկան, և
շրթանց քոց զգոյշ լինիջիր.

Գ.Լ. Բ.

1 Որդեակ իմ եթէ մերձենաս ծառայել տն՝ պատրաս-
2 տեա զանձն քո ամ փորձութիւն. * Ուղղեա զսիրտ
զխորս քո. և զմիտս քո հաստատեա համբերութբ. 'Ի
3 ժամանակի յորժամ փորձանք հասանիցեն, * մերձ լեր
'ի տր՝ և մի անհաւատար, զի բարձրասցիս 'ի վախճա-
4 նի. * Ամենայն փորձանք որ գան քեզ՝ ուրախութբ ըն-
կալ, և 'ի ցաւս տառապանաց գոհութբ երկայնամիտ
5 լեցիս. * Զի 'ի հուր փորձի ոսկի, իսկ մարդ փորձի
6 'ի բովս խոնարհութեն. * Հաւատա 'ի տր և օգնեսցէ
քեզ. Ուղիղ կալ զճանապարհս քո և յուսասջիր 'ի նա.
7 * Երկիւղածք տն ակն կալջիք ողորմութեն նր, և մի խո-
9 տորիք, զի մի կործանեսջիք. * Երկիւղածք տն ակըն-
կալարուք բարեաց, և ողորմութեն և ուրախութեան յաւի-
11 տենից. * Հայեցարուք յազգս առաջինս և տեսէք, ո՞վ
12 հաւատաց 'ի տր՝ և յամօթ եղև. * և ո՞վ է որ եկաց յա-
հի նր՝ և նա եթող զնա. և կամ ո՞վ է որ կարդաց առ
13 նա՝ և յապաղեաց, * զի գթած և ողորմած է տր, և
14 թողու զմեղս, և փրկէ 'ի ժամանակի նեղութեն. * Վայ
սրտից վատաց և ձեռաց լքելոց, և մեղաւորի՝ որ հա-
15 նեալ իցէ 'ի վր երկուց ճանապարհաց. * վա այնորիկ
16 մի աւերեսցին. * Վայ որ կորուսեալ է զհամբերութի.
17 * Թէ զինչ հասցէ նմա յաւուր այցելութեան տն. * Եր-
18 կիւղածք տն հնազանդ լիցին բանից նր. և որ սիրեն
19 զնա՝ պահեսցեն զպատուիրանս նորա. * Երկիւղածք տն
խնդրեսցեն զհաճոյս նր, և որ սիրեն զնա լցցին յօրէ-
20 նաց նր. * Երկիւղածք տն պատրաստեսցեն զսիրտս
իւրեանց, և առաջի տն խոնարհեցուսցեն զանձինս իւր-
եանց.

Գլ. Բ. (1) Ոմանք. Յամ փորձութե. (5) Ոմանք. Եւ մարդ փորձի. (14) Ոմանք. Եւ ձեռաց լքացելոց. և մեղաւորաց. (17) Ոմանք. Եւ թէ զինչ հասա".

Digitized by Google

եանց, * և տառապեն. անկցուք մեք 'ի ձեռս Տն, և ոչ 22
'ի ձեռս մարդկան. * զի որպէս մեծութիւն նր՝ այնպէս և 23
ողորմութիւն, և որպէս անուն նր՝ այնպէս և գործք:

ԳԼ. Գ.

Ինձ հօրս լուարուք որդեակք, և զայս արարէք զի 2
ապրեսջիք: * Զի Տր փառաւորեաց զհայր 'ի վր 3
որդւոյ, և զիրաւունս հօր հաստատեաց յորդիս. * Որ 4
պատուէ զհայր՝ քաւէ զմեղս, և անձին իւրում գան-
ձէ գանձս: * Փառաւոր առնէ զմայր իւր՝ * որ պա- 5
տուէ զնա, և ուրախ լիցի յորդիս իւր: * Մեծարեա 6
դու զհայր քո, * զի ծաղկեսցէ 'ի վր քո օրհնութիւն 9
նր: * Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոց՝ և ա- 10
նէծք մօր խախտեն 'ի հիմանէ: * Որդեակ՝ մի մեծա- 11
բեր 'ի վր հօր անարգանաց, զի չէ քեզ փառք 'ի վր 12
անարգանաց նր: * Զի փառք մարդոյ 'ի վր մեծարա- 13
նաց հօր իւրոյ. և նախատինք որդւոյ՝ անարգանք մօր:
* Որդեակ՝ զօրավիգն լեր ծերութեան հօր քո. և մի 14
տրտմեցուցաներ զնա 'ի կեանս իւր: * Հայհոյիչ է՝ 18
որ թողու զհայր, և անիծեալ է 'ի Տնէ՝ որ զայրացու-
նէ զմայր: * Որդեակ իմ, զիրանս քո հեզութբ առնջիր, 19
և ընդունելի մարդոյ սիրելի լիցիս: * Որչափ մեծ ի- 20
ցես՝ խոնարհ կալջիր զանձն քո, զի առաջի Տն գտցես
շնորհս: * Մեծ է զօրութիւն Տն՝ և փառաւորեսցի 'ի 21
խոնարհաց իւրոց: * Որդեակ իմ՝ որ մեծ է քան զք- 22
քեզ, զայն մի քններ. այլ որ ինչ հրամայեցաւ քեզ՝
զայն խորհեաց: * Որ ինչ աւելին է քն զպէտս քո՝ զայն 24
մի զններ. * և մի մոլորեսցիս կարծեօք, զի զբազում 26
հանճարեղաց խորհուրդս կարծօք միտք գայթակղեցու-
ցին: * Որ սիրէ զչար՝ 'ի նմին տառապեսցի: * Սիրտ 27
խիստ ծանրասցի ցաւօք: * Չիք ինչ բժշկութիւն ամբ- 29
րտանաց ամբարտաւանին, զի զարմատ դառնութեան անկ- 30
եաց յանձն իւր: * Սիրտ իմաստնոյ խորհեսցի յառակս, 31
և ունկն լսելեաց ցանկասցի իմաստութե: * Զվառեալ 33
հուր՝ ջուր շիջուցանէ, և զմեղս բազումս քաւեն ո-
ղորմութիւնք. * և 'ի ժամանակի կործանման նր գտցէ 34
ձեռնկալութիւն:

ԳԼ.

Գլ. Գ. (2) Ոմանք. Լուարուք որդիք: (5)(6) Ոմանք. Որ պատուէ զմայր իւր. և ուրախ եղիցի: (22) Ոմանք. Ձեռս զոր ինչ հրամ'ս: (24) Ոմանք. Որ առաւել է քան: (30) Ոմանք. Զարմատս դառնութե: (33) Ոմանք. Շիջուցանէ ջուր: (34) Ոմանք. Գտցեն ձեռնկալութիւն:

Digitized by Google

ԳԼ. Դ.

1 Որդեակ մի զրկեր զկեանս աղքատին. * և մի զան-
2 ձինս քաղցելոյ տրտմեցուցաներ : Մի զայրացու-
3 ցաներ զմարդ 'ի տնանկութեան իւրում : * Զսիրտ տա-
ռապելոյ մի զայրացուցաներ. մի յապաղեր զտուրս կա-
րօտելոյն : * Մի անտես առներ զծառայ 'ի նեղութե.
մի դարձուցաներ զերեսս քո յաղքատաց : * Մի տար
տեղի անիծանել զքեզ, * զի յորժամ դառնացեալ
մտօք անիծանեն զքեզ, վաղվաղակի լսէ աղօթից նորա
որ արար զնա : * Որդեակ՝ սիրելի արա՛ զանձն քո ժո-
ղովրդեան, * և առաջի իշխանի խոնարհեցո՛ զգլուխ
քո. և խօսեաց առաջի նորա հեզութեամբ 'ի խաղաղութեան :
* Փրկեա՛ զզրկեալս 'ի ձեռաց զրկողաց, և մի զայրա-
նար 'ի դատաստանի : * Լե՛ր իբրև զհայր որբոց, * և
եղիցես որդի բարձրելոյն : * Որդեակ՝ իմաստութիւն
զորդիս բարձրացոյց, * և որ սիրեն զնա՝ սիրեն ըզ-
կեանս. և որ կանխէ առ նա՝ լցցի նմա բարութեամբ : * Որ
ընդունի զնա՝ ժառանգէ զփառս, և ուր մտանէ՝ օրհ-
նէ զնա Տէր. * և որ նմա լսէ՝ դատի զհեթանոսս : * Ե-
թէ հաւատասցես՝ ժառանգեսցես զնա, և 'ի ժառան-
գութեան քում եղիցին ստացուածք նորա : * Պահեա՛ զժա-
մանակին իրս, և երկի՛ր 'ի չարէ. * և մի կրեր ամօթ
յանձն քո. * զի է ամօթ՝ որ ածէ մեղս, և է ամօթ՝
որ ածէ զփառս և զուրախութիւն : * Որդեակ՝ մի ակն
առնուր յանձին քում, * զի մի ամաչեսցես 'ի կործան-
ման քում : * Մի արգելուր զբան 'ի ժամանակի փրկ-
կութեան : Մի թագուցաներ զիմաստութիւն քո. * զի բան
յայտնէ զիմաստութիւն, և խրատ իմաստութեան 'ի խօսս
լեզուի : * Մի դառնար ընդդէմ ճշմարտութեան՝ մի և մի
իւիք : Զոր ոչ գիտես և հարցանեն զքեզ, դու մի ա-
մօթ համարիր զչգիտելն. * և վասն մեղաց քոց մի ամա-
չեր խոստովանել : * Որդեակ՝ մի ակն առնուր 'ի հզօ-
րէ, * և մինչև 'ի մահ մարտեաց վասն ճշմարտութեան,
և Տէր Աստուած քո օգնեսցէ քեզ : * Մի շուտախօս լինիր՝
և խօթասիրտ և լքեալ 'ի գործս քո : * Մի առանձին
առիւծանար 'ի տան քում, և օձտող 'ի մէջ ծառայից
քոց : * Մի լիցի յօժար յառնուլն ձեռաց, և 'ի տալն
կարկամեալ :

ԳԼ.

Իղ. Է. (3) Ոմանք. Եւ զսիրտ տառապելոց : (8) Ո-
մանք. Եւ առաջի իշխանաց : (16) Ոմանք. Դատիցի զհե-
թանոսս : (17) Ոմանք. Ստացուածք նորա քեզ : (34) Ոմանք.
Մի շատախօս լինիր :

Digitized by Google

Գլ. Ե.

Լու 'ի վե՛ր ընչից քոց մի՛ ծանրանար ։ * Մի՛ երթար 1
զհետ անձին և զօրութեան քո, և մի՛ հպարտանար 2
'ի գանձս քո ։ Մի՛ լիներ յանձնապաստան՝ և ասեր, ե-
թէ բազում են ինչք իմ ։ * Մի՛ ասեր, թէ չար ինձ 3
մի՛ առնէ, զի Տէր խնդրեսցէ զվրէժս 'ի քէն ։ * Մի՛ ա- 4
սեր, թէ չար գործեցի մեղայ, արդ զի՞նչ եղև ինձ.
զի Տէր երկայնամիտ է * վա՛ս դարձի քո և քաւութեան. 5
* զի ողորմութիւն և բարկութիւն 'ի ձեռին նորա է, և 'ի մե- 7
ղաւորս յագեցուցանէ զսրտմտութիւն իւր ։ * Ո՛րդեակ՝ 8
մի՛ յապաղիցես դառնալ 'ի մեղաց առ Տէր, * զի մի՛ առ 9
մեղս քո սատակիցիս ։ * Մի՛ յանիրաւ գանձս յուսար, 10
զի ոչ օգնեսցեն քեզ յաւուր բարկութեան ։ * Մի՛ տա- 11
տամ չափիր ամենայն զգնացս քո ։ զի այս մեղաւորի բա-
ժին և երկլեզու մարդոյ է ։ * Խորհուրդ բարի հաստատ- 12
տեսցի 'ի միտս քո, և նոյն բան կացցէ 'ի բերան քո ։
* Լե՛ր դու երագ լսելեօք, և երկայնամիտ 'ի պատաս- 13
խանիս ։ * Եթէ իմաստութիւն եկեսցէ 'ի քեզ՝ տո՛ւր պա- 14
տասխանի ընկերին քում, ապա թէ ոչ՝ ափիբերան լե-
ցիս ։ * Փառք և անարգանք 'ի ձեռս լեզուի, և կոր- 15
ծանումն մարդոյ 'ի ձեռն անարգ լեզուի իւրում ։ * Մի՛ 16
սիրեր լինել բանսարկու, և լեզուաւ մի՛ դայթաքեր ։
* Խրատ, ամօթ, և անարգանք են 'ի վե՛ր դայթաք- 17
ղութեան, և քան զայս 'ի վե՛ր երկխօս լեզուի ։

Գլ. Զ.

Անուն վատ՝ ամօթ և անարգանք ժառանգէ, և 1
մարդ մեղաւոր զերկխօսութիւն ։ * Մի՛ հպարտանար 2
յանձին քո խորհուրդ՝ * զի մի՛ ապականիցես զպը- 3
տուղ քո, և անարգեսցիս իբրև զփայտ անպտուղ ։
* Անձն չար կորուսանէ զստացիչս իւր, և ոտնհար 4
լիցի անձն իւր թշնամեաց իւրոց ։ * Քաղցրախօս մարդ՝ 5
բազում բարեկամս առնէ, և լեզու քաղցր՝ 'ի բազմաց
յաճախ առնու գոհութիւն ։ * Ո՛րդեակ՝ բազումք եղի- 6
ցին բարեկամք քո, բայց 'ի հազարաց եղիցի քեզ մի խոր-
հրդակից ։ * Եթէ ստանաս քեզ բարեկամ՝ 'ի ժամա- 7
նակի նեղութեան ստասցիր, բայց մի՛ փութանակի հաւա-
տար 'ի նա. * զի են բարեկամք ըստ ժամանակի, բայց 8
յաւուր բարկութեան ոչինչ են ։ * և է՛ բարեկամ՝ որ լի- 9
նի

Գլ. Ե. (7) Ոմանք. Եւ 'ի մեղս յագեցուցանէ ։ (8) Ո-
մանք. Մի՛ յապաղեր դառնալ ։ (9) Ոմանք. Առ մեղս քո
մեռանիցիս ։ (17) Ոմանք. Խրատ անամօթ և անարգ՞ ։
Գլ. Զ. (4) Ոմանք. Զստացիչ իւր ։

Digitized by Google

նի 'ի մեղս թշնամւոյ, և առ կայ զթշնամութին իւր
10 յայտնէ նախատինս զքեզ : * Բարեկամ հաղորդ սեղա-
11 նոյ՝ ոչ մնայ քեզ 'ի նեղութեան . * և բարեաց քոց լիցի
12 բաժանորդ՝ որպէս և դու . * և թէ նեղութիւն հասանէ քեզ՝
ապստամբեալ լիցի զքէն, և յերեսաց քոց թագուցանէ զոլի :
13 * Զատ կաց 'ի թշնամեաց քոց, և 'ի սուտակապապաս
14 բարեկամէ և յերկիւղէ զգոյշ լեր : * Բարեկամ հա-
ւատարիմ՝ ապաստարան ամուր, և որ եգիտ զնա՝ եգիտ
15 գանձ : * Հաւատարիմ բարեկամի չիք գինք, * և որ
17 'ի տէր երկնչի՝ բարեկամ բարի յաջողի նմա, զի որպէս
18 և նա է՝ նոյնպէս և բարեկամն : * Որդեակ՝ 'ի մանկ-
կութեան քում ընտրեա զիմաստութիւն, և մինչև 'ի ծերու-
:1 թիւն գտանես զհանգիստ : * Եւ զի դժուարին է հան-
:3 դէպ ապիկարաց, զի ոչ կարեն նմա հասու լինել : * Զգօ-
նութիւն ըստ անուան իւրում կայ, և յայտնի բազմաց ոչ
4 է : * Լուր ինձ որդեակ, և ընկալ զխրատ իմ, և մի
5 լքանիր 'ի բաց 'ի հանդիմանէ իմմէ : * Արկ դու զոտս քո
7 'ի կապս նորա, և 'ի լծանուր նր զպարանոց քո : * Յամ-
մենայն մտաց մատիր դու առ նա, և յամ զօրութէ պահեա
8 զճանապարհս նր : * Խնդրեա դու և քններ և յայտ-
9 նեսցի 'ի քեզ, * և 'ի վախճանի գտցես զհանգիստ նր :
0 * Եւ կապանք իմաստութեան եղիցին քեզ ապաստանս
2 զօրութեան, և անուրք նր 'ի զարդ ոսկւոյ : * և պսակ
3 ցնծութեան դիցի 'ի գլուխ քո : * Որդեակ՝ եթէ կամիս
5 խրատեալ լինել՝ * 'ի մէջ ծերոց կացցես, և որ իմաս-
տուն իցէ՝ 'ի նա մերձեսցիս : Զօր ամ զպատգամս Այ
կամեսցիս դու լսել, և առակք իմաստութեան 'ի քէն մի անց-
5 ցեն : * Եթէ զոք 'ի հանճարեղաց գտցես, առաւօտ կան-
7 խեա առ նա : * Խորհեաս դու 'ի հրամանս Տն, և նա
հաստատեսցէ զսիրտ քո, և զիմաստութեան ցանկութիւն
տացէ քեզ :

ԳԼ. Է.

Որդեակ՝ մի չար գործեր, և չար ոչ հասցէ քեզ : * Յա-
նիրաւաց 'ի բաց լեր, և նք մերժեսցին 'ի քէն : * Յա-
կօսս անիրաւ մի սերմաներ, զի մի հնձեսցես եւթնա-
պատիկ չար 'ի նմանէ : * Իշխանութիւն 'ի Տնէ մի խնդրե-
րեր, եթէ ոչ գտանիցես ըստ կամաց նր : Զաթոռ փառաց
'ի թագաւորէ մի խնդրեր, եթէ հպատակ հնազանդ
ոչ իցես կամաց նր : * Առաջի թագաւորաց ձև բա-
նից մի առներ : * Իմաստուն մի զքեզ կամիր, եթէ ոչ
կա-

(11) Ոմանք . Լինի ժողովանդորդ որպ դու : (14) Ոմանք .
Ապաստարան հզօր : (28) Ոմանք . Ընտրեա դու և քններ :
Գլ. Է. (4) Ոմանք . Հպատակ զքեզ ոչ իցես հրամանաց

Digitized by Google

կարես կործել զիրաւն յանիրաւէն ։ Մի՛ զանգիտեսցես
դու յերեսաց իշխանին, զի մի՛ գնիցես գայթագղութիւն
յիրաւունս ։ * 'Ի բազմութեան քաղաքաց մի՛ յանցանիցես, 7
և յամբոխ զանձն քո մի՛ տայցես ։ * Յաղօթս քո կար- 9
ճամիտ մի՛ լինիր, և ողորմութեան մի՛ յապաղեր առնել ։
Զաշխատութիւնս այ. մի՛ յատեր անձին, * և զմշակութիւն 12
'ի դառնութեան սրտի նր̃ մի՛ ծիծաղիր ։ Զի որ խոնարհ-
եցուցանէ՝ նոյն և բարձր առնէ ։ * Ս'րգեաւ՝ յեղբայր 13
և 'ի բարեկամս սատութեան մի՛ սերմաներ ։ * 'Ի մէջ ծե- 15
րոց մի՛ ճոխանար, և յաղօթս քում զբանս մի՛ կրկներ ։
* Առ արդարս զանձն քո մի՛ ունիր, և առ մեղաւորս 17
անկեալ զքեզ մի՛ համարիր ։ * Դահիճ ամբարշտաց և 19
մեղաւորաց՝ յաւիտենից հուրն և որդն անմահ ։ * Որդ- 20
եակ՝ զբարեկամս ը̃ կաշառոյ մի՛ փոխանակեր, և զեղ-
բայր հարազատ ընդ ոսկւոյ օփիրայ ։ * Մի՛ վրիպեր 21
'ի բարեկամէ և 'ի հանճարեղ կնոջէ, զի լաւ է շնորհք նո-
րա քան զոսկի ։ * Զծառայ ճշմարիտ որ վաստակիցէ քեզ՝ 22
մի՛ զայրացուսցես ։ Եւ զվարձկան որ տուեալ իցէ զանձն
իւր 'ի վ̃ր քո՝ մի՛ զզուեր ։ * Զծառայ ժիր սիրեա՛ դու, 23
և յազատութենէ կարօտ զնա մի՛ առներ ։ * Գրաստ քո 24
իցէ աչերանի՝ խնամ տար նմա և զարմանեա՛ ։ * Որ- 25
դիք իցեն քո՝ խրատեա՛, և զպարանոց նց̃ խոնարհեցո՛ ։
* Դստերք իցեն քո՝ զգո՛յշ կաց, և մի՛ զգուեր զնո՛ց ե- 26
համարձակեցուցաներ ։ * Արա՛ իմաստնոյ տո՛ւր զնա, 27
և քո գործ մեծ գտանի կատարեալ ։ * Եթէ լաւ կա- 28
մաց քոց իցէ կին՝ մի՛ հաներ զնա 'ի քէն, և զքեզ 'ի նա
մի՛ հաւատար՝ եթէ նա զքեզ ատիցէ ։ * Ո՛րդեակ՝ ըզ- 29
հայր քո պատուեսջիր յամ՛ զօրութէ, և զմօր երկունս
մի՛ մոռանար ։ * Հատո՛ նց̃ սղնէք քեզ, զի նոքօք ծնար ։ 30
* Երկի՛ր 'ի տ̃ն է յամ՛ սրտէ քումմէ, և մեծարեա՛ զքա- 31
հանայս նր̃ ։ * Սիրեա՛ զարարիչն քո, և զպաշտօնեայս 32
նր̃ մի՛ արհամարհեր ։ * Պատուեա՛ զքահանայս, և տո՛ւր 33
զմասն նց̃ զերախայրոյն և զերինկամունս ճարպոյն ։
* Բարի արա՛ աղքատաց, զի օրհնութիւն քո կատարեալ 36
լիցի ։ * 'Ի վ̃ր մեռելոց մի՛ կարօտ առներ զարտասուս 38
քո ։ * և վախճան քո յուշ լիցի քեզ ։ 40

ԳԼ. Ը.

Մի՛ հակառակիր ընդ առն հզօրի, դուցէ անկցիս 'ի 1
ձեռս նորա ։ * Ընդ մեծատան մի՛ հակառակեր, 2
* զի ոսկի և մեծութի̃ թիւրեաց զմիտս թագաւորաց ։ 3
* Ընդ առն լեզուանւոյ մի՛ կռուիր, զի 'ի վ̃ր հրոյ փայտ 4
դէ-

նր̃ ։ (9) Օրին. ․ Մի՛ յապաղեր առնել ։ (29) Օրին. ․ Պա-
տուեա՛ յամ՛ ։ (38) Օրին. ․ 'Ի վերայ մեռելոյ ։

Digitized by Google

5 պիղծս: * Ընդ առն անմտի մի խաղար՝ գուցէ զնախա-
6 նիս քո նախատէ: * Մի գարշեալ լիցիս 'ի մեղուցելոյ՝ մի զնա-
7 խատեր, զի և մեք ամենեքեան մեղաց պարտաւոր եմք: * 'Ի ծե-
14 րութեան զմարդ մի անարգեր, զի և քո ծերանալ է: * Որդ-
եակ՝ ընդ առն թշնամանողի զբերան քո մի բանար, զի
15 միթէ զդարանակալ արշաւեսցէ 'ի վ~ քո: * Առն հզօ-
րի փոխ մի տար, և թէ տաս՝ համարեալ թէ կորուսեր:
16 * Առն հարուստի երաշխաւոր մի մտցես, ապա թէ ոչ
17 տուժել հոգասջիր: * Ընդ դէմ դատաւորի ատեան մի
18 կա՛ր զի ըստ փառաց նորա դատեսցեն զքեզ: * Ճանա-
պարհ ընդ համարձակ մարդոյ մի երթար, զի մի զչար խոր-
'ի վ~ քո ծանրացուսցէ. զի նա զորպէսնէ՝ ըստ կամս իւր
19 առնէ, և դու յանմտութեան նորա կորնչիս: * Մի գնայ
ընդ առն բարկացողի, և մի կացցես ընդ նմա. զի յաչս
20 նորա թեթև թուի արիւն: * Որդեակ՝ 'ի խորհուրդ մի
մտաներ ընդ առն անմտի, զի յիմարն ոչ կարէ պահել ըզ-
21 բանս քո: * Օտարաց առաջի զգաղտնի գործ մի գոր-
22 ծեր, զի զպատահումն քո 'ի նմէ ոչ գիտես: * Զսիրտ
քո ամ՛ մարդոյ մի տարածաներ, զի մի տարապարտուց
շնորհս վարկանիցեն քեզ:

ԳԼ. Թ.

2 Որդեակ՝ 'ի կին մարդ գանձն քո մի համարձակիր,
3 զի մի հասցէ 'ի վ~ զօրութեան քո: * Ցերեկոս կնոջ
4 պոռնկի մի լինիր՝ զի մի յորոգայթս նորա անկցիս: * Ա-
կանայս երգեցիկս մի կանխիր, զի մի ըմբռնիցիս 'ի ցանցս:
5 * Ընդ կոյս մի աշխուր՝ զի մի գայթագղեսցիս 'ի գեղ
6 նորա: * Զանձն քո պոռնկութեան մի մատներ, զի մի ըզ-
7 ժառանգութիւն քո կորուսցես: * Ընդ փողոցս քաղա-
քաց մի շրջիր, և 'ի գնացս ճանապարհաց նորա ոչ մոլո-
րիս: * Որդեակ՝ ըստ ամենայն կնոջ ամենևին մի ընդելա-
նար, և ընդ նմա 'ի գինի մի հանդստանակիր, * զի մի սիրտ
քո խոտորեսցի, և անձամբ կործանեսցիս: * Զբարե-
կամ հին մի թողուր, գուցէ որ նորն է՝ չիցէ նմա հա-
ւասար: * Նոր գինի բարեկամ նոր, եթէ հնասցի՝ ու-
րախութեամբ արբջիր: * Ընդ փառս առն մեղաւորի մի
նախանձիր, զի զկատարած նորա ոչ գիտես: * Ընդ հա-
ճոյս ամբարշտաց մի միաբանիր, զի ոչ արդարասցիս:
* Որոյ 'ի ձեռս իւր է իշխանութիւն սպանանելոյ՝ հեռի
լեր 'ի նմանէ, և եթէ մերձենաս՝ մի մեղանչիր: * Զօ-
րութեան քում չափ առ՝ և ըստ կարի քում կշռեա զբանս
քո

Գլ. Թ. (3) Ոմանք. Պոռնկի մի աշխուր․․ յորոգայթս նորա:
4) Ոմանք. Մի կանխիր զի յորոգայթս նոյ մի անկցիս:
5) Ոմանք. Ընդ ճկոյս մի նայիր: (18) Ոմանք. Եւ թէ մեռ՛:

Digitized by Google

քո. և զմերձաւորս, և զխորհուրդս քո ը̄ հանճարեղս
արասջիր : * Արդարք եղիցին հացակիցք քո, և եր- 22
կիւղածք տ̄ն պարծանք քո : * 'Ի ճարտարութեան ձեռաց 24
գովեսցին գործք, և որ իմաստուն է բանիւք, առաջ-
նորդն ժողովրդեան, ահեղ է 'ի մէջ ընկերաց :

Գլ. Ժ.

Դատաւոր իմաստուն խրատէ ժողովրդեան, * ը̄ հրա- 1
մանի նր̄ և հնարկահանքն : * Թագաւոր անխրատ՝ 2
կորուսանէ զզօրս. քաղաք շինեսցի յիմաստութէ իշխա- 3
նաց : * Իշխանութիւն երկրի 'ի ձեռս այ, և զպիտանին 4
յարուսցէ 'ի ժամանակի : * 'Ի ձեռս տ̄ն է առնն աջ- 5
ողուն, և 'ի վր̄ երեսաց դպրոյ դիցէ զփառս իւր : * Ոխս 6
ընկերի վասն ամ̄ յանցանաց մի՛ ունիցիս : Ատելեալ 'ի
ստութէ և 'ի մեղաց հեռացիր : * Ամբարտաւանու- 7
թի ատելի է այ և մարդկան : * Թագաւորութի ազ- 8
գէ յազգ փոխի, և վս̄ անիրաւութե և հպարտութե
կորնչին : * Թագաւոր այսօր. է՝ և վաղիւ մեռանի : 11
* Ամբարտաւանութե սկիզբն՝ հեռանալ 'ի տ̄նէ. զի 14
յարարչէն խոտորեցաւ սիրտ նր̄ : * Զաթոռս ամբար- 17
տաւանից կործանեսցէ տ̄ր : * Զարմատս հեթանոսաց 18
խլեաց տ̄ր, և փոխանակ նց̄ անկեաց զհնազանդս, և
զբարեպաշտս : * Ամբարտաւանութի ոչ ը̄ մարդկան 22
ստեղծաւ. վս̄ այնորիկ զօրացոյց տ̄ր զբարկութե և կոր-
ծանեաց զնա : * Ո՞ր է պատուական զաւակ մարդկան, 23
երկիւղածաց տ̄ն զաւակ պատուական : զաւակ անարգ
է որ անցանէ զպատուիրանաւ ծնողաց : * 'Ի մէջ եղ- 24
բարց երէցն է պատուական, իսկ որ 'ի տ̄նէ երկնչի՝
պատուական է քան զնա : * Փառաւորին մեծքն և աղ- 25
քատքն պարծանք՝ երկիւղ տ̄ն : * Զայր աղքատ և ի- 26
մաստուն անարգել չէ պարտ : * Հզօրն և իշխանն պա- 27
տուեսցի : * Որդեակ՝ անձին քում հեզութբ̄ շուք 31
դիր. * զի որ անձամբ յանձն մեղանչէ՝ ո՞վ արդարա- 32
ցուսցէ զնա : Որ զկեանս իւր. անարգէ՝ ո՞վ մեծարէ
զնա : * Մեծն 'ի մեծութե փառաւորի, և աղքատն 'ի 33
հանճար իւր :

Գլ.

(24) Ոմանք. 'Ի ճարտարութէ ձեռաց գովեսցի գործ, և որ իմաստուն ձեռօք առաջնորդէ ժողովրդեանն, օրհնեալ է 'ի մէջ :
Գլ. Ժ. (4) Ոմանք. Իշխանութիւնք 'ի ձեռս այ.. յարուցանէ : (22) Ոմանք. Եւ կործանեաց զնս : (23) Ոմանք. Որ անցանէ զպատուիրանս ծնողաց : (24) Ոմանք. Եւ որ 'ի տ̄նէ երկնչի :

Digitized by Google

ԳԼ: ԺԱ:

1 [illegible]անձար 'իմաստութեան խոնարհաց զգլուխս բարձր
2 առնէ, և նստուցանէ ընդ իշխանս: * Ընդ գեղ մար-
3 դոյ մի գովեսցես, և զայր յականէ մի խոտեր: * 'Ի
4 թռչունս փոքր է մեղու, և պտուղ նր գեղեցիկ: * Գե-
ղեցկագոյն հան. դերձիւք մի պարծիր, և յաւուր փա-
5 ռաց մի հպարտանար: * Բազում իշխանք անկան 'ի գե-
տին, և որում ակն ոչ ոք ունէր՝ կապեցաւ նմա թագ:
7 * Հարց նախ՝ և մի բամբասեր. իմա և ապա խօսիր:
8 * Զիրս որ ոչ գիտես՝ մի զրուցեր, և 'ի մէջ բանից մի
10 անկանիր: * Որդեակ՝ մի բազմօք անկանիր 'ի գործ,
զի թէ յաճախես՝ ոչ կարես բաւել. և թէ զհետ եր-
11 թաս՝ չհասանիս, և թէ խոյս տաս՝ չապրիս: * Զի է
ոք որ չխնայ՝ վաստակէ, և առաւել ևս կարօտ գտա-
12 նի: * Եւ է ոք նուաղեալ 'ի զօրութենէ, և լի աղքա-
13 տութեամբ, և տկար և կարօտ օգնականի. * և յանկար-
ծակի հայեցաւ 'ի նա Տր բարութեամբ, կանգնեաց զնա
4 'ի տկարութենէ. և բարձրացոյց զգլուխ նր: * Բարիք
և մահ, բարի և չար, մեծութի և աղքատութի, առաջի
5 Տն հաւասար են: * Սէր և իմաստութի և ճանապարհ
6 գործոց բարեաց 'ի նմանէ է: * Մոլորութի և խա-
ւար մեղաւորաց հաստատեցաւ: Չարութի ընդ նոսին
7 հնանայ՝ որ գնան չարութբ: * Պարգևք Տն 'ի վր ար-
8 դարոց հաստատեալ են: * Մեծութի է՝ որ 'ի պնդութենէ
9 լինի: և այն է մասն նր, * յորժամ ասիցէ 'ի բարութե
0 իմմէ կերայց և արբից. * և ոչ գիտէ զպատահումն ժա-
2 մու թողուցու զայն օտարաց՝ և ինքն մեռանիցի: * Որդ-
եակ՝ ընդ գործս անձանց մի զարմանար, զի եղծանե-
3 լեաւ զեղծանելին ստանայ: Այլ հաւատա 'ի Տր՝ * զի
7 դիւրին է յաչս Տն մեծ առնել զաղքատն: * Մի յա-
ւուրս չարեաց մոռանար զբարի, և մի յաւուրս բար-
9 եաց մոռանար զչար: * Մոռացուցանէ վիշտք զփափկու-
թին և զցեղ: և յայտնութի գործոց կատարած մարդոյ:
0 * Մի ումեք երաներ յառաջ քան զվախճան՝ զի որդ-
1 ւոց մարդոյ մարթեսցես ծանուցանել զչափ նր: * Մի զամ
մարդ 'ի տուն քո ածանիր, զի դարանք սատանայի պատ-
2 րաստեն 'ի նմա նենգութի: * Զայր իմաստուն և զող-
ջախոհ յամ ժամ սիրեսցես. զի ամբարշտութեան որոգայ-
և

Գլ. ժա. (1) Օրին. Իմաստութի, զգլուխս խոնար-
հաց բարձր առնէ: (10) Օրին. Մի անկանիր 'ի բազմ
գործ. զի թէ յաճախեսն ոչ արդարանաս: (11) Օրին.
Կարօտ լինի: (30) Օրին. Մարթես առնել: (31) Օ-
րին. Դարանք սատանին 'ի նմանէ նէն":

Digitized by Google

և նենգաւոր խորհի զդէտ դիտէ զխենդութիւն, զի բազ-
մադիմի է չարիք նր : * Որպէս շուն՝ զի ուր մտանէ յափշտ- 33
տակէ, այնպէս և անօրէնն ուր հասանէ՝ աւերանէ և
խռովէ : * 'Ի փոքր մրոյ վառի հուր, այնպէս և ան- 34
օրէնն 'ի փոքր ինչ իրաց հեղու զարիւն կրկին մեծս :
* 'Ի չարագործէ զգոյշ լեր՝ գուցէ 'ի յաւիտենական ան- 35
ցէ զքեզ :

ԳԼ. ԺԲ.

Որ գտանես՝ ընտրութեամբ արա բարի մարդոյ, զի 'ի նմա- 1
նէ շնորհս բարեաց գտցես : * Բարիս արա բարեաց՝ 2
զի փոխարէն լիցի քեզ. և թէ 'ի նմանէ ոչ՝ առ կողմն 'ի
բարձրելոյն : * Բարի արա խոնարհին՝ և մի ձեռնտու 5
ամպարշտին * զի մի կրկին չար փոխարէնս բարեացն 'ի 7
նմանէ գտցես : Ահա և բարձրեալն ատեաց զմեղաւորս,
և ամպարշտի հատուցանէ հատուցումն : * 'Ի ժամ բա- 8
րեաց բարեկամ ոչ երևի, և 'ի ժամ չարեաց թշնամի ոչ
թաքչի : * Մի հաւատար թշնամեաց քո յաւիտեան՝ զի 10
որպէս պղինձ զունդ կայց ձեռս ժանգոտէ : * Զգոյշ լեր՝ 11
զանձն քո պահեա 'ի նմանէ, և եղիցիս դու նմանեն քաւեա-
լոյ հայելի լնլեալ : * Յաջմէ քո մի նստուցաներ զնա՝ 12
զի մի խնդրեսցէ զաթոռ քո. և յետոյ յիշեսցես զբանս
իմ : * Զի զթողլից օձահարն՝ ով ապաշաւէ. և կամ զայն՝
որ մտանէ զձեռն իւր 'ի բերան գազանաց. այնպէս և որ
մերձենայ յանօրէնն՝ թաթաւի 'ի մեղս նր : * և թէ առ 14
ժամ մի խոյս տայ գործոյն, կամակցին ոչ համբերէ :
* Այնպէս թշնամի քաղցր է շրթամբք, և 'ի սրտի իւ- 15
րում խորհի կործանել զքեզ : * Մի զէ զարտասուօք ա- 16
ռաջի քո, այլ թէ ժամ գտանէ՝ արեամբ քո ոչ յագի :
* Եթէ քեզ չար դիպի՝ առաջի քո չար գտանիցես զնա : 17
Կարծիս տայ օգնել քեզ, * և շարժէ զգլուխ իւր՝ թէ 18
նրք գտից ժամանակ կործանել զբարեկամս : * Եւ զե- 19
րեսս իւր շրջէ յոգւոց հանելով, այլ ոչ ևս տեսանել
զքեզ կենդանի :

ԳԼ. ԺԳ.

Ով որ մերձենայ 'ի ձիւթ՝ շաղախի. և որ հաղորդ 1
այնպիսւոյն՝ ապականի : * Որդեակ՝ ծանր ինչ 2
քան զքեզ 'ի վեր մի առնուր, և որ մեծատուն է և
հզօր՝ ընդ նմա մի հաղորդակից լինիր : * Զի՞նչ հաւասար է 3
պղինձ ընդ կաթսայի, զի 'ի բախել առ իրերաց՝ 'ի կոտ-
րայ :

---

(34) Ոմանք. 'Ի փոքր բանի ինչ իրաց :
ԳԼ. ԺԲ. (10) Ոմանք. ժանգոտէ : (12) Ոմանք. Յաջմէ
քումմէ : (13) Ոմանք. Այնպէս որ.. և թաթաւի :

Digitized by Google

4 ազգին նմանի հաւան ։ * Մեծն զզուի զաղքատն՝ և դառ-
ձեալ մռնչէ ․ 'ի մեծէն աղքատն զզուի , և 'ի նմանէ սա-
0 սանի ։ * Զգո՛յշ լեր մի՛ մոլորեցիս , և յուրախութե մի՛
1 կործանեսցես ։ * Յորժամ ուրախութեան միջի իցես՝ չա-
2 բաց զգո՛յշ կաց , զի չարին Է բարին շոյա խառնի ։ * Ե-
Թէ համդիպեսցիս չարաց մարդոց՝ և կոչեսցեն զքեզ
'ի խրախութի , հեռացիր 'ի նոցանէ՝ և մի՛ հաւանեսցին քեզ ։
3 * Մի՛ անձամբ 'ի ներքս անկաներ՝ զի մի՛ կործանես-
4 ցիս , * և բազմադէմ խօսից նց մի՛ հաւատար , զի 'ի
բազում խօսից փորձէ քննէ՝ և ծիծաղի զքեզ ։ * Որդի-
եակ՝ որ ոչ պահեսցէ զբանս բարեկամի՝ անխիղճ է ․
* զի սիրէ անաստուածն զնմանիս իւր , և մարդ զհաւա-
սար իւր ։ * Ազգ յազգ երթայ , և մարդ 'ի նմանիս
իւր ։ * Գայլոյ ընդ գառին զի՞նչ նմանութի , այնպէս
չիք մեղաւորի ընդ արդարոյ ։ * Բորենի ընդ շան զի՞նչ
հաւասարութի , այնպէս չիք խաղաղութի աղքատաց
ընդ մեծատան ։ * Որս առիւծու յանապատի՝ էշ վայ-
րենի , այնպէս ճարակք մեծատանց՝ աղքատք ։ * Գար-
շելի ամբարտաւանն 'ի խոնարհէն , այնպէս մեծատունն
յաղքատէն ։ * Եթէ շարժի մեծն՝ 'ի բարեկամաց իւ-
րոց հաստատի , իսկ աղքատն յիւրոց բարեկամաց ան-
կանի ։ * Եթէ յանցանէ մեծն՝ օգնականք նմա բազում
ն , և թէ անարժան խօսի՝ արդարացուցանեն զնա ։
Եւ թէ յանցանէ աղքատն՝ յարուցեալ 'ի վ՜ա սա-
ուհաստակոծ առնեն զնա , և եթէ իմաստուն բան խօ-
սի՝ ծիծաղին և չտան թոյլ նմա ։ * Խօսեցաւ մեծն՝ և
ամենեքին լռեցին , և բարձրացուցին զբանն նր մինչև յամպս ։
Բայց զաղքատ գիտասջիր՝ զի սոցա և նշ հասուցումն կայ՝
մր ։ * Մեծութի բարի է՝ ուր ոչ գոն մեղք , և աղքա-
տութի չար 'ի բերան ամբարշտաց ։ * Եթէ չար և եթէ
բարի՝ * դէմք մարդոյ ցուցանեն զուրախութի և զբարկին ։

ԳԼ. ԺԴ.

Այր ոչ գայթագղեցաւ բերանով՝ * երանի նմա ․ և որ
անձամբ զանձն ոչ վրիպեաց 'ի յուսոյ ամն իւրոյ ․
Մեծութի առն կարճամտի ոչ վայելէ , և նախան-
ձ մարդոյ ընդէ՞ր է մեծութի ։ * Որ անձին չար է՝
ւոյ բարի ոչ լինի ։ * Զի՞նչ չար քան զայն որ նա-
խանձի Է անձն իւր , * և 'ի վախճանի յայտնեսցի չա-
րութե նր ։ * Ակն ագահի մասամբ ոչ յագի , * զի անի-
րաւութե զայրացեալ 'ի վ՜ր անձանց ցամաքեցուցանէ
զանձն ։

ԺԳ. (23) Ոմանք. Էշ վայրի ։ (25) Ոմանք. Յիւրոց բարեկամաց անկանի ։ (27) Եւ թէ երբեմ յանցանէ ։
ԺԴ. (10) Ոմանք. Չարութե զայրացեալ ։

զանձն ։ * Որդեակ՝ մինչդեռ ձեռնհաս ես՝ բարիս գործ 11
է անձին քում․ * յիշեա զի մահ ոչ յամեսցէ ։ * Ընդ 12
բարեկամս քո բարի՛ գնա, և ըստ կարի՛ ձեռնտու լե՛ր 13
նմ մինչչև մեռեալ իցես ։ * Յաւուրց բարեաց մի՛ նուա- 14
զիր, և մասն իմաստութեան մի՛ անցցէ զքև ։ * Յառաջ 16
քան զմահ զարդարութիւն գործեա․ * և յառ և 'ի տուր 17
անարատ և ո՛ւր պահեա զանձն քո ։ * Իբրև զձորձս մա- 18
շի ամ մարմին, և 'ի դժոխս չիք գիւտութիւն, զի ուխտ
մահու. խնկզանէ է ։ * Որպէս զտերև 'ի վե՛ր վարսաւոր 19
ծառոց, է որ թօթափի՝ և է որ բուսանի․ նոյնպէս
և մարդիկ՝ է որ ծնանի, և է որ մեռանի ։ * Ամենայն 20
գործ անցանէ, և որ գործէ զնա՝ ընդ նմին գնասցէ ։
* Երանեալ է այր՝ որ իմաստութեամբ խորհի, և 'ի խոր- 21
հուրդս հանճարոյ իւրոյ խօսի ։

ԳԼ․ ԺԵ․

Որդեակ զմարդն խսկզբանէ յանձնիշխան կացոյց եւ- 14
տեղն եծ, * զհուր և զջուր եդ առաջի, զի յոր 17
կամեսցի մխեսցէ զձեռս իւր․ * զի առաջի մարդոյ է 18
մահ և կեանք ։ * Տէր հզօր է զօրութ՝ տեսանէ զամ, և 19
իւքն ոչ տեսանի ։ * Ումեք նա ո՛չ հրամայեաց ամբարշ- 21
տել, և զանօրէնութիւն 'ի մէջ մարդկան ո՛չ կամեցաւ․
զի և զանուն իւր ո՛ք 'ի սէր հաստատեաց ։ * Զի լաւ 3
է մին արդար որ առնէ զկամս ւ՛յ, քան բիւր անօրէնն ։

ԳԼ․ ԺԶ․

Որդեակ՝ մի՛ ցանկար բազմութեան անպիտան որդւոց։ 1
եթէ առ նմ երկիւղ ւ՛յ ոչ է, * զկեանս քո մի՛ հա- 3
ւատար 'ի նմ, և մի՛ զմասն հօգւոյ քո, այլ դու ա՛ռ
յաւանդ պահեստի․ * և լաւ համարեսջիր լինել անորդ- 4
գի, քան սատանայ որդւոց ամբարշտաց ։ * 'Ի ժողովս մե- 7
ղաւորաց հուր բորբոքեսցի, և յազգ անօրէն բարկու-
թիւն վառեսցի ։ * Զայր 'ի գործս իւր դատեսցի․ * զի 13
մեղաւորն 'ի յափշտակութեան իւրում ոչ ապրեսցի, և 14
արդարն 'ի համբերութեան իւրում ո՛չ նպաստի ։ * 'Ի պա- 9
դխտութիւս զօրաւոյ խնայեաց․ * և զվեցհարիւր հա- 11
զարն սատանայեաց, * զի 'ի նմանէ է արդարութիւն և 12
ողորմութիւն ։ Քաւել կարօղ է, * և կշտամբանս բազ- 13
մապատիկս հատուցանել ։ * Ամենայն ողորմած արդա- 15
րութիւն դացէ, զի հատուցանօղն արդար ըստ գործոց
դատեսցի ։ Զսիրտ փարաւոնի ո՛ք խստացոյց, զի 'ի
նէր․

---

(19) Ոմանք․ ՚Որպէս և մարդիկ ։ (21) Եւ 'ի խորհուրդս
հանճարոյ իւրոյ ։
ԳԼ․ ԺԶ․ (14) Ոմանք․ Ոչ ապաւեսցի ։ (15) Ոմանք․ Զերիրաւ

նորքոյ երկնից երեւեսցին գործք նորա։ Որդեակ՝ ամ ա-
րարածոց յայտնի է ողորմութի նորա, մինչ զի զլոյս եւ
16 զխաւար բաշխեաց 'ի մէջ մարդկան։ * Մի ասիցես՝
17 'ի Տեառնէ թաքեայց, եւ զիս 'ի բարձանց ո՞վ յիշեսցէ. * եւ
18 կա՞ զի՞նչ է անձն իմ 'ի մէջ այսչափ արարածոց։ * Զայս
գիտասջի՛ր՝ զի երկինք եւ երկնից երկինք, եւ երկիր ամ
19 անդընդոց հաստատութբ, * միանգամայն 'ի հայել նորա
դողացեալ շարժի. զի բազմ են գործք նորա կամելն մի-
այն, որ 'ի ծածուկ են սքանչելեօք. ապ զի եւ զարժա-
նաւէս օրհնութին յուրմէ օրհնի, զի 'ի մերմէ նուաստ
24 օրհնութենէս՝ ո՛չ թերանայ եւ ո՛չ լիանայ։ * Որդեակ՝
25 լո՛ւր ինձ, եւ ընկալ զխրատ իմ. * զի յայտնեցից * ըղ-
26 գործս ամն իսկզբանէ արարածոց իւրոց։

ԳԼ. ԺԷ.

